

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՄՊԱՆ
ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒԻ
ՀՈՒՇԵՐԸ
ԵՎ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՂԵՌՆԻ
ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Թարգմանիչ Ենուջ Արմեն

Ֆազսիմիլային հրատարակություն

ԹԱՐԳՄԱՆԻՉԻՆ ԽՕՍԲԸ



Մորգենթաու Հ.

Մ920 Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները: Թարգմ.՝ Ենովք Արմեն [—Ֆաբս. հրատ.] — Եր.: Լույս, 1990. 356 էջ.

Ամերիկյան նշանավոր հասարակական և քաղաքական գործիչ Հենրի Մորգենթաուն 1913 — 16-ին ԱՄՆ-ի դեսպանն էր Թուրքիայում: Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն մեծարժեք երկում փաստական նյութերի հիման վրա հեղինակը նկարագրում է 1915 թվականի Մեծ եղեռնը՝ այն համարելով «պատմության ամենամեծ ոճիրը»:

ԳՄԴ 63.3(22)52

Մ — 4700000000(1) չհայտարարված 1990
702(01)1990


Воспоминания американского
посла Генри Моргентау и тайны геноцида армян
(на армянском языке)
Ереван «Луйс» 1990

Այն պահուն՝ երբ Հայ Ցեղին բնաջնջումի շիեզերասասանօրեն հրեշային նդեռնը կը գործադրուի Օսմ Կայսրութեան ամէն սահմաններուն մէջ, Սուլթաններու մայրաքաղաքին խորը՝ հոն՝ ուր գեհննային ահաւոր Ռճիւրը դարբնուած կը միակ զգայուն սիրտ մը զտնուցաւ, որ սարսուռաց Հայ Ազգը խոդխոդող դիւային ծրագրիին կակիծեն, եւ բողոքի ձայն բարձրացուց զարհուրեցի Դաւիթ հեղինակներուն դէմ: **Պոլիսի ամերիկեան դեսպան Մր. ՀԷՆՐԻ ՄՕՐԳԵՆԹԱՈՒՆ [Mr. HENRY MORGENTHAU]** կը մարդասէր այդ ազնիւ անհասակաւորիւնը, — հեղինակը այս երկին, որ դարեւու մեծ Արհաւիրքին տաւերգութեան պատմութիւնը պատրաստ կը նկատէ աշխարհի նկարագրեչ: Անոր՝ աշխարհի՝ զարդակը եւ իր գրիչով ու խօսքով առաջ բերաւ՝ եղաւ ցնցող ազդակներէն մէկը՝ Հին կրօնքիւնը Հայ Դաւիթ դարձնող:

Հայ Ժողովուրդին նարկայ. . . նութիւնը այն Տոսանին՝ որ Ցեղին սիրտը խոցեց արիւնոտ դաշտ, . . . սարսափով, նուիրական ծառայութիւն մը կը նկատեն: Նոյնքան արժանաւոր պատրաստ մը կը դառնան, ազատութեան փառապանծ հայրենիքին՝ Ամերիկայի չքնաղ զաւկին սխալեցի այս աշխատասիրութեան հայերէն բարգմանութիւնը ձօնեչ Մարդկութեան ազատագրութեան դասին նուիրուած մեծազոյն առաջնորդներէն՝ Ամերիկեան Հանրապետութեան Նախագահ իտալիացի Մր. ՌՈՒԼԹՔԵՒ, որ եռանդուն ու հզօրազոյն ախոյեաններէն մէկն է նաեւ Հայկական Դաւիթ:

ԹԱՐԳՄԱՆԻՉԸ
ԵՆՈՎՔ ԱՐՄԵՆ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Ամերիկեան Ժողովուրդը կազմած է այն համոզումը որ՝ Գերմանները համարձակօրէն ծրագրած էին աշխարհի նուաճումը : Սակայն ,
ան կը վարանի զսկոնկ դասապարտել անուղղակի ապացոյցներով .
ասոր համար է որ՝ Պատմութեան ամենեւնի մեծ ոճիրին սկանասես վկա-
ները պէտք են զայն հաստատել իրենց խոստովանութիւններով :

Ես ամեն արգելք մեկ կողմ վանեցի՝ ինծի ծանօթ իրողութիւնները
հայրենակիցներու յայտնելու առիթը ներկայանալուն , երբ Պոլիս
անոնց ներկայաշուքիչն էի : Ինչ որ պաշտօնիս բնուեմով տեղեկացայ ,
ա՛յնչափ իրենց սեփականութիւնն է , որչափ իմս :

Սեծապէս կը ցախիմ որ , ստիպուած եմ շոտթիւնով անցնիլ մեր
պաշտօնատարներուն եւ պաշտօնակիցներուն հրաշալի գործին վրային ,
որովհետեւ իրենց հանդէպ արդար զտնուելու համար՝ անբողջ զիրք մը
անհրաժեշտ պիտի ըլլար :

Պատճառորոտեցայ նոյնպէս զանց ընել , նոյն պատճառներով , այս
երկիրին Հրեաներուն պատմութիւնը :

Իմ բողոք շնորհակալութիւններս կ'ուղղեմ բարեկամիս՝ Մր. Պրո-
քըն Փ. Հենտիֆի , այն քանկագին աշակցութեան համար՝ զոր ընծայեց
ինծի , այս երկիրն պատրաստութեանը մէջ :

ՀԷՆՐԻ ՄՕՐԿԵՆՔԱՌ

Հոկտեմբեր 1918

To the Illustrious Idealist,
Reformer of humanity for centuries to come,
and,
Eminent Champion of the Armenian Cause,

Mr. WOODROW WILSON,

President of the United States of America,


The Armenian edition of this book,

which vibrates with sentiments of deep sympathy towards the Armenians,
is most respectfully


INSCRIBED

by the Translator

YÉNOVK ARMÈN



MR. HENRY MORGENTHAU
FORMERLY AMERICAN AMBASSADOR TO TURKEY
ՄՐ. ՀԷՆՐԻ ՄՕՐԿԸՆԹԱՈՒ



MR. WOODROW WILSON
PRESIDENT OF THE UNITED STATES OF AMERICA
ՄՐ. ՈՒՅՈՒ ՈՒՒԼԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆ
ՄՐ. ՄՕՐԿԸՆԹԱՈՒԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

Ե Ի

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՂԵՌՆԻՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ



ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԳԵՐԱՋԱՆՑ ԳԵՐՄԱՆ ՄԸ ՊՈԼԻՍԻ ՄԷՋ

Այն պահուն՝ երբ կը ձեռնարկէի խմբագրել «Լամ Դեսպանութեան Յիշատակները Պոլիսի մէջ», Դերմանիայի փառատենչ դիտաւորութիւնները՝ Թիւրքիայի եւ Նայրազոյն Արեւելքի մէջ՝ կը թուէին պսակուած ըլլալ : Կեդրոնական Տէրութիւնները յաջողած էին Ռուսիան անջատել, Պալթիկը եւ Սև-Մովր փոխակերպել գերման լիճերու, նոր ելք մը բանալ դէպի Արեւելք՝ Կովկասի նամբով : Դերմանիա այն ատեն իր տիրապետութիւնը կը պարտադէր Աերպիայի, Պուլկարիայի, Ռումանիայի, Թիւրքիայի . ան՝ գործնականապէս իրականացած կրնար նկատել՝ Հիւսիսային Մովէն մինչեւ Պարսկական Մոցը տարածուող գերմանական նոր կայսրութեան մը իր յղացումը : Տիւզերը գիտէ հիմա, — եթէ յստակօրէն չէր հասկցած այդ բանը 1914ին, — թէ Դերմանիա փութացուց պատերազմը՝ Սերպիան փճացնելու, պալքանեան ազգերուն հսկողութիւնը ձեռք անցընելու, Թիւրքիան հարկատու Պետութիւն մը դարձնելու եւ այդպէսով կանգնելու համար արեւելեան ընդարձակ կայսրութիւն մը, որ հիմը պիտի ըլլար տիեզերական անասնման վեհապետութեան մը :

Այդ շրջանին մէջ, գերմանական զինուորական եւ դիւան-գիտական յաղթանակներուն արդիւնքը նոյող քարտէսին վրայ եթէ աչք մը նետեմ, նշանակալից կարևորութիւն մը կը ստանայ ինչ որ կրցայ նշմարել Պոլիսի մէջ : Այդ պարագային, կը տեսնեմ որ՝ այդ քսանըվեց ամիսներու դէպքերը իրարու կապակցուած էին իբր որոշուած պատմութեան մը իրադարձութիւնները. զանազան անհատներ՝ որոնք կը շարժէին տեսարանին վրայ, կը թուին

ինծի՝ խնամուած կերպով եւ սքանչելապէս կազմակերպուած «տուամ»ի մը դերակատարները: Գիտակցօրէն կ'ըմբռնեմ թէ՛ ինչպէս Գերմանիա լատակերտած էր իր տիեզերական գերակշռութեան յատակագիծները եւ թէ՛ ինչպէս այն երկիրը՝ ուր ամերիկեան դեսպան կարգուած էի՝ իբր հիմ պիտի ծառայէր կայսերական հեռանկարին ամբողջ քաղաքական եւ զինուորական յորինուածքին: Եթէ Գերմանիա պատերազմին առաջին օրէն իսկ, ապահովուած չլլար Պոլիսի հպատակութեանը, անճշմարտանման չէ որ թշնամութիւնները դադրէին մառնի ճակատամարտէն քանի մը ամիս ետքը: Տարօրինակ ճակատագիրով մը, դաւերու ընդհանուր բանակատեղիին կապուեցայ ճիշդ այն պահուն՝ երբ Քայզերին ծրագիրները, մանրախիղճօրէն նետապնդուած քառորդ դարէ մը իվեր, վերջնական յաջողութեան յանգելու մօտ էին:

Թիւրքիան հպատակեցնելու եւ անոր բանակները եւ հողերը Գերմանիայի գործիքները դարձնելու նպատակով, Կայսրը Պոլիս իրեն ներկայացուցի կարգած էր դեսպան մը՝ որ իտէլայօրէն օժտուած էր այդ պաշտօնին համար: Այն պարզ իրողութիւնը որ՝ Վիլհէլմ անձնապէս ընտրած էր պառոն Փօն Վանկէնհայմը այդ պաշտօնին, կ'ապացուցանէ որ՝ ան ճշդօրէն չափած էր՝ դիւանագիտական այդ ընդարձակ ձեռնարկին իրականացումին համար անհրաժեշտ մարդկային յատկութիւնները: Կայսրը կանուխէն զայն որոշած էր՝ իբր իր կամքին սքանչելապէս գործիքը ըլլալ սահմանուած անձը: Կայսրը զայն մէկէ աւելի անգամներ Քօրֆու կանչած էր իր արձակուրդներուն միջոցին, եւ հոն, կրնանք ատոր վստահ ըլլալ, այս երկու նոյնասեռ միտքերը օրեր անցուցած էին խորհրդակցելով Արեւելքի մէջ գերման ցանկութիւններուն յաջողութեան առիթներուն վրայ:

Առաջին անգամ որ կը հանդիպէի Վանկէնհայմի, թէեւ ան հագիւ քառասունըորս տարեկան, քսանըհինգ տարիներու ասպարէզը ունէր իր ետեւը. կեցած էր Փեթրոկրատ, Քօփէնհակ, Մատրիտ, Աթէնք եւ Մեքսիքօ. նաեւ Պոլիս կցորդի պաշտօն վարած էր, իբր դեսպան հոն գալէ առաջ: Հաւասարապէս լաւ կը ճանչնար բոլոր երկիրները, մէջը ըլլալով Միաց.-Նահանգները (իր առաջին կինն ալ Ամերիկուհի էր): Մեքսիքօ դեսպան եղած միջոցին, մտերմօրէն թափանցած էր մեր երկիրին, եւ այդ օրէն, խորունկ հիացում մը կրած՝ մեր կորովին եւ մեր զարգացումին համար, հիացում՝ զոր բացարձակապէս կը խոստովանէր: Դիւանագէտին անհրաժեշտ եղող ծրարով օժտուած, հաւասար դիրութիւնով կը խօսէր գերմաներէնը, անգլիերէնը եւ ֆրանսերէնը: Վերջապէս խորապէս կը ճանչնար Արեւելքը, ուր

մօտ յարաբերութիւններ հաստատած էր քաղաքական գլխաւոր անձնաւորութիւններու հետ: Ֆիզիքապէս ամէնէն աչքառու անձնաւորութիւններէն մէկն է՝ որուն մօտեցած ըլլամ: Երբ տղայ ատեն, Գերմանիա կ'ապրէի, Հայրենիքը ընդհանրապէս կը խորհրդանշուէր զեղեցիկ եւ հօգօր կնոջ մը դիմագծութիւնով, տեսակ մը շացուցիչ Վալքիրի: Երբ միտք կը բերեմ արդի Գերմանիան, Վանկէնհայմի զանգուածեղ, մարմնեղ ուրուագիծը կը ներկայանայ բնականաբար միտքիս: Իր բարձր հասակը (մէկ ութսունէն աւելի), իր ամուր կառուցուածքը, հսկայի իր ուսերը՝ ուրկէ կը ցցուէր իր ուղիղ ու ամբարտաւան գլուխը, իր սկնարկին կայծը, բովանդակ անծին՝ կեանքով ու գործունէութիւնով զեղուն պատկերը ինծի կը յիշեցնէ Գերմանիան — հոս բաղդատութիւնս կանգ կ'առնէ ո՛չ այն Գերմանիան՝ զոր ճանչցած եմ, այլ այն Գերմանիան՝ որուն անչափ ցանկութիւնները բովանդակ աշխարհը սոսկումով համակեցին: Եւ Վանկէնհայմի իւրաքանչիւր բառը եւ շարժումը՝ այդ ձգտումը միայն երեւան կը բերէր ճշդօրէն: Համագերմանութիւնը կ'ոգեւորէր իր ամբողջ մտածումները եւ կը ղեկավարէր իր ամբողջ գործքերը: Իր Կայսրին աստուածացումը միակ կրօնական բնագրն էր՝ որով յափշտակուած էր: Ազնուապետական, կամ նոյն իսկ միապետական, գերման ընկերութեան կազմակերպութիւնը, որ կը խտացնէ բրուսիական «սիսթէմ»ը, իր աչքին յարգանքի եւ պաշտելութեան արժանի բան մըն էր: Տրուած ըլլալով այս մեկնակէտը, կը կարծէր թէ՛ Գերմանիա անվրիպելիօրէն սահմանուած էր աշխարհը կառավարելու: Ժունքըր մեծ կալուածատէրը իրեն համար կը ներկայացնէր մարդկային սեռին կատարելութիւնը: «Նս ինքզինքս պիտի արհամարհէի, ըսաւ ինծի օր մը իր ամէնէն մտերիմ մէկ բարեկամը, եթէ քաղաքի մը մէջ ծնած ըլլայի»:

Վանկէնհայմի համար, մարդկութիւնը երկու դասակարգի կը բաժնուէր. կառավարողները՝ եւ կառավարուողները. եւ կը ծաղրաբանէր այն մտածումը որ՝ կառավարողները կարենային ընտրուիլ կառավարուողներուն մէջէն: Կը յիշեմ թէ՛ ինչ հոգեգմայլօրէն եւ խանդավառութիւնով սովոր էր նկարագրել գերման կալուածատուրքի կազմակերպութիւնը՝ դասակարգի համեմատ, այնպէս ինչպէս յղացած էր Կայսրը. թէ՛ ինչպէս ան ուզած էր որ մեծ հողերը առանց իր հաճութեանը փոխանցելի ըլլան եւ նոյնպէս կարգադրած էր որ՝ անոնց տէրերը կամ մօտաւորագոյն ժառանգորդները չկարենան առանց իր հաւանութեանը ամուսնանալ: «Այս պայմաններուն մէջ, կ'ըսէր Վանկէնհայմ, մենք կը պահպանենք մեր կառավարողներուն ցեղային մաքրութիւնը եւ զայն

գերծ կ'ընենք ամէն յոռի խնամիութենէ»։ Ինչպէս իր ընկերա-
 յին դասակարգին բոլոր մարդիկը, ինքն ալ կը յարգէր բրուսիա-
 կան զինուորական դրութիւնը։ Իր շքեղ ծանրաշքութիւնը կը
 մատնէր որ՝ անծնապէս ծառայած էր բանակին մէջ. եւ գերման
 հասկացողութեան համեմատ՝ կեանքի ամէն պարագաները ան
 նկատի կ'առնէր զինուորական հայեցակէտէ մը։ Անգամ մը ատոր
 հետաքրքրական մէկ օրինակը ունեցայ, երբ իրեն հարցուցի թէ՛
 ինչո՞ւ Քայզերը Միաց.-Նահանգները չէր երթար։ «Շատ կ'ուզէ
 այդ բանը, պատասխանեց, բայց շատ վտանգաւոր պիտի ըլլար
 ադ։ Իր ճամբորդութենէ վերադարձի միջոցին՝ պատերազմը
 կրնար պայթիլ եւ թշնամին կրնար զինքը ձեռք անցընել»։ Բողոքե-
 ցի թէ՛ ատիկա չէր կրնար պատահիլ, որովհետեւ ամերիկեան կա-
 ռավարութիւնը իր հիւրին կրնար ընկերացնել իր ռազմանաւերը
 եւ ո՛չ մէկ ազգ մտածու մը չպիտի ունենար Միաց.-Նահանգներուն
 հետ աւրուելով Գերմանիայի դաշնակիցը դառնալ։ Բայց Վանկէն-
 հայմ համոզուած մնաց որ՝ պատերազմի վտանգները այդ տե-
 սակ այցելութիւն մը անկարելի կը դարձնէին։

Գերմանիայի ուրիշ ամէն դիւանագիտական ներկայացուցիչ
 աւելի, իրմէ՛ կախում ունէր տիեզերական տիրապետութեան հա-
 մար գերմանական ցանկութիւններուն յաջողութիւնը։ Արդէն այդ
 նպատակով էր որ Պոլս եկած էր։ Աւելի քան քսան տարիէ
 իվեր, Գերման Կառավարութիւնը Օսմանեան Կայսրութեան հետ
 լաւագոյն յարաբերութիւններ մշակած էր. նոյն ժամանակամի-
 ջոցին՝ Քայզերը պատրաստած էր ընդհանուր պատերազմը, եւ
 այդ նախատեսութիւնով, կարգադրած էր որ՝ Թիւրքիա վե՛ռական
 դեր մը խաղար, որովհետեւ եթէ Գերմանիա չապահովէր Թիւրք
 զինակցութիւնը, իրեն համար յաջողութեան քիչ հաւանականու-
 թիւն կար եւրոպական ընդհանուր բռնկումի մը մէջ։ Ռուսիայի
 միանալով, Ֆրանսա իր կողմը համախմբած էր, Գերմանիայի հետ
 պատերազմի մը պարագային, 70 միլիոն ժողովուրդի բազմու-
 թիւն մը։ Աւելի քան քսան տարիներու ընթացքին, Գերմանիա
 դիւանագիտորէն ճգնեցաւ, առանց յաջողելու, Ռուսիան անջա-
 տել Ֆրանսայէն։ Միակ միջոց մը կար իրեն՝ այդ դաշնակցու-
 թիւնը անարժէք դարձնելու. միանալ Թիւրքիայի։ Այդ ազգը իր
 կողքին ունենալով, Գերմանիա կրնար փակել Տարտանները, գոր-
 ծածծելի միակ հաղորդակցութեան գիծը Ռուսիայի եւ Արեւմուտ-
 քի իր դաշնակիցներուն հետ։ Այս պարզ գործողութիւնը Չարին
 բանակը կը զրկէր ռազմանիւթէ, տնտեսապէս կը կործանէր
 Ռուսիան, դադրեցնելով հացահատիկի իր արտածութիւնը — իր
 հարստութեան գլխաւոր աղբիւրը — եւ հետեւաբար զայն կը չէզո-

քացնէր իր ընկերակիցներէն, աշխարհային պատերազմին մէջ։
 Այսպէս, Վանկէնհայմի առաքելութիւնը կը կայանար՝ Թիւրքիան
 գերման դատին շահելուն մէջ, ակնկալուած մեծ պայքարին
 միջոցին։

Յաջողելու պարագային, Վանկէնհայմ կը յուսար տիրանալ
 այն վարձատրութեան՝ որուն տարիներէ իվեր կ'անձկար. Գեր-
 մանիայի նախարարապետ ըլլալ։ Թիւրքերու հետ բարեկամու-
 թեան անձնական յարաբերութիւններ հաստատելու իր նար-
 պիկութիւնը՝ իր հակառակորդներուն վրայ մեծ առաւելութիւն
 մը կու տար իրեն, որովհետեւ ճշդօրէն իր վրայ կը միացնէր ան-
 հրաժեշտ ուժը, համոզութիւնը, բնականութիւնը եւ բրտու-
 թիւնը անոնց՝ որոնք արեւելեան նկարագիրը վարել սահմանուած
 են։ Ես ուժգնօրէն ծանրացայ իր բրուսիական յատկութիւննե-
 րուն վրայ. սակայն Վանկէնհայմ ծնունդով բրուսիացի չէր, այլ
 դաստիարակութիւնով, ծագումով Թուրքիացի ըլլալով. այդ ցեղին
 մտայնութեանը ցցուն գիծերուն — փառատնչութիւն, նախան-
 ծագագութիւն կը միացնէր այն քանի մը ամենարնքուշ յատ-
 կանիչները՝ զորս կը վերագրենք Հարաւային Գերմաններուն։ Վան-
 կէնհայմ նշանաւոր յատկութիւն մը ունէր, որ երբևէ բրուսիա-
 կան չէր. նրբադատութիւն [tact]։ Իր յաջողութիւններուն մեծ
 մասը շահեցաւ այն պատճառով որ՝ գիտցաւ քոյարկել իր նուազ
 համակրելի հակումները եւ ցուցնել միայն իր բնաւորութեան
 ողորջ կողմերը։ Ան չէր տիրեր այնչափ բիրտ ուժով, որչափ
 կորովամտութեան եւ սիրալիրութեան խառնուրդով մը։ Արտա-
 քին տեսքով՝ պարծուկ մը չէր ան. իր շարժուձեւերը աւելի հաշ-
 տասէր էին, քան բռնասէր. ան կը գրաւէր իր քաղցրութիւնովը,
 ո՛չ թէ՛ «երկաթէ ձեռնոցով բռունցքովը»։ Մենք որ զինքը լաւ կը
 ճանչնայինք, մենք կը հասկնայինք որ՝ իր բոլոր նախայարձա-
 կութիւններուն ետեւ կը ծածկուէր զարհուրելի փառամոլութիւն
 մը, որ ո՛չ արգելք, ո՛չ սահման կը հանչնար։ Սակայն, առաջին
 տպաւորութիւնը բրտութեան տպաւորութիւն մը չէր, այլ տպա-
 ւորութիւնը ծայրայեղ նիւթապաշտութեան մը եւ վեհանձն բնա-
 ւորութեան մը։ Իրապէս, ան կրնար միացնել ուսանողի զուար-
 թագին խանդավառութիւնը բրուսիացի պաշտօնատարի գիշա-
 տիլութեան եւ աշխարհիկ մաշտու անիլութեան։ Դեռ կը
 տեսնեմ զինքը, նստած դաշնակիւն առ ջեւ, յօրինանուագելով քանի
 մը դասական գեղեցիկ եղանակներու հետեւողութիւնով, յետոյ
 յանկարծ բազուկին բոլոր ուժովը զարնելով ուսանողի արբեցական
 ամէնէն հերարծակ երգերէն մէկը, կամ ժողովրդական ռամիկ
 մեղեդի մը։ Կը յեշեմ նաեւ զինքը «փօջօ» խաղացած ատեն,

խթանելով իր շքեղ ձին, զայն մղելով ամէնէն սրարշաւ ճիգերուն — որոնք երբեք բաւական արագ չէին իր մարզական փառատենչութիւններուն համար: Իրապէս, իր բոլոր գործերուն մէջ, կարեւոր կամ ունայն, կատաղութեան նոյն ոգին կը տիրէր: Նոյնպէս, երբ կը սիրաբանէր Բերայի գեղանի Հելլէնուհիներուն հետ, կամ ժամեր կ'անցընէր Սէրբլը տ'Օռիանի մէջ «պաքառա»ի սեղաններուն շուրջը, կամ իր Հայրենիքին շահերուն համեմատ՝ իր կամրին կը հպատակեցնէր Թիւրքիայի պաշտօնական ներկայացուցիչները, իր բովանդակ կեանքը խաղ մըն էր միայն, զոր պէտք էր վտանգել քիչ կամ շատ անհոգութիւնով, որովհետեւ բաղդը պիտի նպաստաւորէր յանդուգնը, խիզախը, բաղդը՝ որ կարող էր գնել յաջողութիւնը կամ պարտութիւնը՝ խաղաքարի մը նետուածքով: Եւ ամէնէն աւելի կարեւոր խաղը — ան՝ որուն համար «ստակ դրուած» էր, Պէռնաուտի բացատրութեան համեմատ՝ «աշխարհի կայսրութիւնը կամ կործանումը»՝ Վանկէնհայմ թուրքէն չէր խաղար, թէև առ պարզագոյն պարտականութիւնը ըլլար իրեն յատկացուած: Գերման բացատրութիւնը գործածելով, ան ամբողջովին կրակ ու բոց էր, լիովին զիտակից սր՝ իր տաղանդէն կախում ունէր հսկայական աշխատանքի մը լրացումը: Իր վրայ խօսած ատեն, տակաւին ինքզինքս կը զգամ վարակուած իր խառնուածքին կոյովէն, որովհետեւ միշտ զինքը ճանչցայ — ինչպէս իր կառավարութիւնը՝ որուն կը ծառայէր ա՛յնչափ օրինապաշտօրէն — հիմնովին անմարդկային, անպատկառ, անզուժ: Գոհ էր ընդունելով իր քաղաքագիտութեան բոլոր հետեւանքները, ո՛րչափ ալ ատելի ըլլային, մի՛այն նկատի ունենալով հասնուելիք նպատակը. եւ այն իրապաշտութիւնով եւ տրամախոհութիւնով՝ որոնք ա՛յնչափ յատկանշականօրէն գերմանական են, ան կը վանէր իր յաջողութիւնները արգիլել կրցող մարդկութեան եւ պատշաճութեան զգացումները: Ան իւրացուցած էր Պիզմարքի համբաււոր պատուիրանը. «Գերմանացի մը պէտք է պատրաստ ըլլայ Բայզէրին եւ Հայրենիքին զոհելու՝ ինչպէս իր կեանքը, նոյնպէս պատիւը»:

Ինչպէս որ Վանկէնհայմ կը խորհրդանշէր Գերմանիան, նոյնպէս իր պաշտօնակիցը Փալլավիչինի կ'անձնաւորէր Աւստրիան: Վանկէնհայմի ուշադրութիւնը կը կազմէր բիրտ Եսապաշտութիւն մը, մինչդեռ ընդհակառակը Փալլավիչինի խաղաղ էր, քաղցրաբարոյ, կատարելապէս լաւ դաստիարակուած: Մէկը կը դառնար միշտ դէպի ապագան, միւսը դէպի անցեալը: Եթէ Վանկէնհայմ սքանչելապէս կը միացնէր առեւտրականութեան եւ նուաճումի միջնադարեան ախորժակին խառնուրդը, ինչ որ բրուսիական աշխար-

հային քաղաքականութիւնը [Veltpolitik] կը կազմէ. Փալլավիչինի Մէթէրնիխի դպրոցէն դիւանագէտ մըն էր: Եթէ պէտք ըլլար կարելուր խնդիր մը վնասելու, Վանկէնհայմ պիտի յայտարարէր. «Գերմանիա ասանկ կ'ուզէ»: Նման պարագայի մը մէջ, շրջահայեաց Փալլավիչինի պիտի ըսէր. «Սորհուրդ պիտի հարցնեմ տէրութիւնէս»:

Աւստրիացի Դեսպանը, իր գորշ, ոլորուած պեխերովը, իր ցից եւ նոյն իսկ մեղմովին բարձրահով քալուածքովը, կը նմանէր հին ռէժիմի դասական «ռէփրէնթուառ»ի ազնուականին: Ես պիտի կրնայի Վանկէնհայմը բաղդատել առեւտրական մեծ ձեռնարկի մը ներկայացուցիչին հետ, շուայ իր ծախսերուն մէջ, որ իր շահերը կ'իրականացնէ իր ընդունելութիւններուն պերճանքովը. մինչդեռ իր պաշտօնակիցը պիտի նմանէր ներկայացուցիչին տունի մը՝ որ հպարտ է իր անցեալով եւ լիովին գոհ իր հին համբաւէն: Եյն հանոյքը՝ զոր Վիլհէլմ Բ-ի պատուիրակը կը զգար համագերմանութեան ծրագիրները կառուցանելով, Փալլավիչինի զայն կը գտնէր դիւանագիտութեան «թէքնիք» նրբութիւններուն եւ մթութիւններուն մէջ: Բազմաթիւ տարիներէ ի վեր, Պոլիսի մէջ իր երկիրին ներկայացուցիչն էր ան եւ դիւանագիտական մարմինին երէց անդամն էր, արժանիք՝ որուն համար ծայրայեղօրէն հպարտ էր, իրեն հանոյք մը դարձնելով իր դիրքին յատուկ պատիւները լրացնելը. ո՛չ մէկը զինքը կը գերազանցէր պաշտօնական խնջոյքներու ատեն՝ առաջնութեան կարգը գործածելու արուեստին մէջ, որովհետեւ չի կար քաղաքավարութեան միակ մանրամասնութիւն մը՝ զոր չի գիտնար զոցի պէս: Հակադարձօրէն, պետական գործերու գալով, ատոնց մէջ ուրիշ բան չէր, բայց եթէ Վանկէնհայմի խաղաղիքը. անոր հանդէպ, իրապէս, իր դիրքը կը թուէր դիրքը դիւանագէտի մը՝ որ քիչ կամ շատ ենթարկուած է աւելի զօրաւոր ընկերակիցի մը կամքին: Իրերու այս դրութեան մէջ, իր դերը, իր պաշտօնակիցին հետ բաղդատուելով, ձեռուած էր իր երկիրին դերին համեմատ՝ հանդէպ Գերման կայսրութեան: Պատերազմին առաջին ամիսներուն մէջ, այս երկու մարդերուն ընթացքը կատարելապէս ցուցուց իրենց երկուքին հայրենիքներուն յաջողութիւնները եւ անյաջողութիւնները. գերմանական իւրաքանչիւր նոր յաղթանակի, Վանկէնհայմի դիրքը հետզհետէ աւելի ամրարտաւան եւ անհանդուրժելի կը դառնար, մինչդեռ Փալլավիչինի՝ իր երկիրին ունեցած ծախողութիւններուն հետ՝ աւելի պզտիկ, աւելի՛ անյայտ կը դառնար:

Այդ տագնապալի ամիսներուն մէջ, Պոլիսի կացութիւնը կը կը թուէր յատկապէս ստեղծուած ըլլալ՝ Վանկէնհայմի տեսակէն

մարդու մը տայու համար առիթը՝ իր տաղանդին բոլոր աղբիւրները զարգացնելու: Տասը տարիէ ի վեր, Օսմանեան Կայսրութիւնը կենթարկուէր կազմալուծումի աւերներուն եւ հասած էր զառամու թեան անանկ կացութեան մը՝ որ զիւրին որս մըն էր գերման դիւանագիտութեան: Եթէ մարդ կ'ուզէ հասկնալ այդ կացութիւնը, պէտք է յիշել որ՝ այդ շրջանին թիւրքիայի մէջ կանոնաորակա կազմուած ո՛ր մէկ կառավարութիւն կար, որովհետեւ երիտասարդ թիւրքերը կառավարութիւն մը չէին. իրականութեան մէջ, անոնք անպատասխանատու կուսակցութիւն մըն էին, տեսակ մը զապտնի ընկերութիւն, որ դաւով, ահաբեկումով՝ եւ սպանութիւնով իշխանութեան տէր դարձած էր: Երբ երիտասարդ թիւրքերուն համար այս ձեւով կը խօսիմ, թերեւս կը վանեմ կարգ մը պատրանքներ՝ որոնք իմս եղան, որովհետեւ, զանոնք գործի գլուխ տեսնելէ առաջ, իրենց մասին բոլորովին տարբեր գաղափարներ կազմած էի: Մինչև 1908ին դառնալով, կը յիշեմ թէ ինչպէս իմ հանրապետական համակրութիւններս ջերմօրէն արթնցեր էին՝ կարգալով թիւրքիայի վրայ յուրեր. կը տեղեկանային որ՝ խումբ մը երիտասարդ յեղափոխականներ Մակեդոնիայի լեռներէն իջած էին. Պոլիսի վրայ քալած էին, գահընկէց ըրած էին արիւնարբու սուլթան Ապաիւլ-Համիտը եւ կառավարութեան սահմանադրական «ռէժիմ» մը հաստատած էին: Թերթերու այս զգայացուցց յիշատակութիւններուն համեմատ, թիւրքիա ռամկավարութիւն մը դարձած էր, խորհրդարանով մը, պատասխանատու նախարարութիւնով մը, ընդհանուր բուէարկութիւնով, օրէնքին առջեւ բոլոր քաղաքացիներուն հաւասարութիւնով, խօսքի եւ մամուլի ազատութիւնով եւ ազատ հանրապետութեան մը գոյութեանը համար ուրիշ բոլոր էական երաշխաւորութիւններով: Լաւ գիտէի թէ՛ թիւրք կուսակցութիւն մը երկար տարիներ պայքարած էր այդ տեսակ բարեկարգութիւններ ձեռք բերելու համար. եւ իր ցանկութիւններուն իրականացած ըլլալը՝ ինձի կը թուէր վերջապէս ցուցնել որ՝ այդ տեսակ բան մը մարդկային հնարաւոր առաջդիմութիւն մըն էր: Օսմանեան Կայսրութեան ջարդերու եւ անկարգութիւններու երկար շրջանը յայտնապէս փակուած էր. մեծ մարդասպանը Ապաիւլ-Համիտ, փտարուած, բշուած էր Սելանիկ՝ առանձնութեան մէջ, եւ իր եղբայրը, համակրելի Մօհամմէտ Ե. զահ բարձրացած էր, իբր առաջին սահմանադրական վեհապետ:

Յեղափոխութեան երախայրիքները ասոնք եղած էին. բայց երբ 1913ին Պոլիս հասայ, բազմաթիւ փոփոխութիւններ տեղի ունեցած էին:

Աւտորիա երկու թրրական նահանգներ կցած էր, Պոսնան եւ Հերսէքը. Իտալիա գրաւած էր Տրիպոլիսը. Թիւրքիա ենթարկուած էր Պայքանեան Պետութիւններու դէմ երկու պատերազմներու եւ կորսնցուցած էր Եւրոպայի իր բոլոր ստացուածքները, բացի Պոլսէն եւ պզտիկ անդրահողամասէ մը: Օսմանեան Կայսրութեան վերածնունդին փորձերը, որոնք ներշնչած էին Յեղափոխութիւնը, յայտնապէս վիժած էին եւ շուտով տեսայ որ՝ չորս տարիներու ինքնակոչ ռամկավարական կառավարութեան նտքը, ազգը աւելի գէշցած էր, աւելի՛ աղքատացած եւ աւելի անդամահատուած՝ քան որչափ չէր եղած երբեք նախապէս: Իրականապէս, այդ անյաջողութիւնը իմ ժամանու մէս աւելի՛ կանխագոյն շրջանի մը տեղի ունեցած էր եւ այդ անյաջողութիւնը՝ քաղաքական պայքարներու երկար պատմութեան մէջ ամէնէն կատարեալը եւ ամէնէն յուսահատուցուցիչն էր: Պէտք չուիմ մանրամասնօրէն անոր պատճառները ցուցնելու: Շատ խստօրէն չքննադատներ երիտասարդ թիւրքերը, որովհետեւ չի կրնար տարակոյսի ենթարկուել սա պարագան որ, սկիզբները անոնք անկեղծ եղան: 1908 Յուլիսին, Սելանիկ՝ Ազատութեան Պողոտային վրայ արտասանուած ճառի մը մէջ, Էնվէր Փաշա, զոր ժողովուրդը կը նկատէր դարաւոր բռնակալութեան դէմ ըմբոստութեան երիտասարդ ասպետական առաջնորդը, պերճախօսաբար յայտարարած էր սա.

«Այսօր, բռնապետական կառավարութիւնը անհետացած է: Մենք ամէնքս եղբայր ենք: Թիւրքիայի մէջ ասկէ ետքը ո՛չ Պուլկար կայ, ո՛չ Յոյն, ո՛չ Սերպ, ո՛չ Ռուսէն, ո՛չ Իտալիա, ո՛չ Հրեայ. նոյն կապոյտ երկիրքին տակ՝ մենք ամէնքս հպարտ ենք օսմանցի ըլլալնուս»:

Այս պատկերացումը՝ իրենց հայրենիքին կառավարութեան նոր ձեւին հանդէպ՝ երիտասարդ թիւրք իտէալը կը ներկայացնէր. բայց այդ իտէալը իրականութեան փոխակերպել դուրս էր իրենց կարողութենէն: Այն ցեղերը, որոնք ամբողջ դարերով խոշտանգուած եւ ջարդուած էին, չէին կրնար մէկ օրէն միւսը եղբայրական զգացումներ սնուցանել իրենց հարստահարիչներուն հանդէպ: Վաղեմի կրօնական ատելութիւնները, նախանձոտութիւնները եւ անհաշուութիւնները տակաւին թիւրքիան կը բաժնէին հակընդդէմ ցեղերու խառնիճաղանճ զանգուածի մը մէջ: Ամէն բանէ աւելի, վերջին չարաշուք պատերազմները եւ Կայսրութեան խոշոր մէկ մասին կորուստը փնացուցած էին երիտասարդ ռամկավարութեան հեղինակութիւնը: Կային դեռ անյաջողութեան ուրիշ շատ պատճառներ՝ զորս անօգուտ է ներկային պարզաբանել:

Եթէ «երիտասարդ թիւրք»երը դադրած էին գոյութիւն ունենալէ՝ իբր վերածնունդի դրական ուժ, անոնք միշտ գոյութիւն ունէին իբր քաղաքական կազմակերպութիւն: Իրենց պետերը՝ Թալէաթ, Էնվէր եւ ձէմալ, երկար ատենէ ի վեր հրաժարած էին իրենց երկիրը բարեկարգելու ամէն յոյսէ. բայց անոնք անձնատուր էին անձնական իշխանութեան անյազուրդ ախորժակի մը: Փոխանակ գտնելու գրեթէ 20,000,000 բնակիչով ազգ մը, ազատական ծրագիրով մը կատարելագործուող, ընդհանուր ընտրութիւն վայելող, իր ճարտարարուեստը ու երկրագործութիւնը կերտող, իբր ղիմ ծառայեցնելով դաստիարակութիւնը, առողջութիւնը եւ հանրային առաջդիմութիւնը, գտայ որ՝ Թիւրքիա պարզապէս կը բաղկանար անկենդան, տգէտ ու խեղճ ճնշուած գերիներու խառնուրդէ մը, իրենց գլուխը ունենալով անզօր ու տկար սակաւապետութիւն մը, որ պատրաստուած էր զանոնք գործածելու անանկ ձեւով մը՝ որ լաւագոյն կերպով գոհացնէր իր ներկայացուցիչներուն շահերը: Եւ ասոնք ճիշդ այն մարդիկն էին՝ որոնք քանի մը տարի առաջ իրենց հայրենիքը օժտած էին սահմանադրական վարչութիւնով մը: Կարելի չէր երեւակայել աւելի ապշեցուցիչ անկում, ամէնէն ազնիւ գաղափարապաշտութենէն ամէնէն անարգ նիւթապաշտութեան:

Թալէաթ, Էնվէր եւ ձէմալ յայտնի ներկայացուցիչներն էին: Բայց իրենց ետեւը կը գտնուէր «Միութիւն եւ Առաջդիմութիւն» Կուսակցութիւնը, բաղկացած մօտաւ որապէս քառասուն անդամէ: Այս կուսակցութիւնը կը հաւաքուէր գաղտնապէս, կը պատրաստէր ընտրութիւնները եւ հանրային պաշտօնները կը վերապահէր իր մարդերուն. Կուսակցութեան կեդրոնը կը գտնուէր Պոլիս եւ իր գերագոյն պետը, որ անոր կը նուիրէր իր ամբողջ գործունէութիւնը, իր հրահանգները կը հաղորդէր իր ստորադասներուն: Այդ պաշտօնատարները, իրենց կարգին, կը կառավարէին կուսակցութիւնը եւ երկիրը, մեր ամերիկեան քաղաքներու քաղաքական ամէնէն բացորոշ զեղծագործութիւններու շրջանին գործող «գործապետ»ներուն [Boss*] պատուիրաններուն համաձայն: Այսպէս, ամբողջական կազմակերպութիւնը սքանչելի պատկեր մը կը ներկայացնէր այն բանին զոր մենք յաճախ կը կոչենք «անտեսանելի կառավարութիւն» անունով: Այս տեսակ անպատասխանատու

* Տեսակ մը ընտրական գործակալ, որ իր ազդեցութիւնը կը բանեցնէ իբր՝ կախում ունեցող զբոծաւորներու և ուրիշ անձերու վրայ, իր ընտրանքով ընտրել տալու համար թեկնածուն, զոր ետքէն կը ծառայեցնէ իր անհատական շահերուն:

վերահսկողութիւնը ատենով ծաղկած է մեր քաղաքներուն մէջ, որովհետեւ քաղաքացիները միայն իրենց անձնական գործերովը կը զբաղէին եւ զանց կ'ընէին հանրային գործերը: Բայց Թիւրքիայի մէջ, մէկ կողմէ ամբոխները խորապէս տգէտ էին՝ ռամկավարական վարչութեան մը արժէքը գնահատելու համար, եւ միւս կողմէ երկիրին ընհանուր աւերումը եւ շրջափոխութիւնները ազգը գործնականապէս առանց կառավարութեան ձգած էին, հետեւաբար դիւրին որս մը՝ հաստատամիտ արկածախնդիրներու հրոսախումբի մը: Միութիւն եւ Առաջդիմութիւն Կուսակցութեան մարդերը, գլուխ ունենալով Թալէադ պէյը, իզան այդ տխուր հերոսները: Պոլիս գտնուող քառասուն անդամներէն անկախաբար, Կայսրութեան բոլոր կարեւոր քաղաքներուն մէջ կազմակերպուեցան ենթա-կուսակցութիւններ. անոնց համախոհները կը հաւաքուէին գաղտնապէս, կու տային անհրաժեշտ որոշումները եւ անոնց գործադրութիւնը կը վստահէին իրենց կուսակիցներէն անոնց՝ որոնք կը վարէին հանրային պաշտօններէն մեծ մասը: Այդ մարդիկը՝ նման մեր շէնական քաղաքականութեան գէշ օրերուն մէջ տիրող մեր վարչութիւններուն սովորական պետերուն, «որոշումներ կու տային» եւ զանոնք կը հաղորդէին իրենց ստորադասներուն: Ո՛չ մէկը որեւէ պաշտօնական դիրք չէր կրնար ձեռք բերել, առանց պատկանելու այս կուսակցութիւններէն մէկուն:

Ես պէտք է ընդունիմ որ անարդար եմ մեր ամերիկեան կաշառակերներու խմբակին հանդէպ, զանոնք բաղդատելով «Միութիւն եւ Առաջդիմութիւն» թիւրք կառավարութեան հետ: Թալէադ, Էնվէր եւ ձէմալ իրենց «սիսթէմ»ին աւելցուցած էին մանրամասնութիւն մը՝ որ մեր քաղաքագէտներուն ծրագիրին մէջ գոյութիւն չունէր. այդ մանրամասնութիւնն էր սպանութիւնը եւ խմբական մահապատիժը: Անոնք իրենց իշխանութիւնը շահած էին՝ միւս հերձուածներուն վրայ՝ գործածելով այս ընթացքը:

Խնդրի առարկայ պէտական հարուածը տեղի ունեցաւ 1913 Յունվար 26ին, իմ ժամանումէս ամիսէ մը քիչ առաջ: Այդ շրջանին, քաղաքական խուճար մը, առաջնորդուած յարգելի Բեամիլ Փաշայէն՝ իբր Եպարթոս, եւ Նազըմ Փաշայէն՝ իբր պատերազմական նախարար, կը վարէր կառավարութիւնը. ան կը ներկայացնէր «Ազատական Կուսակցութիւն» կոչուածը. որ մասնաւորապէս նշանակելի դարձած էր՝ իր հակառակութիւնովը ժէօն Թիւրքերուն դէմ: Այս մարդիկը կրած էին Պալքաններուն չարաղէտ պատերազմը. Յունվարին, անոնք ինքզինքնին նեղ դրուած գտած էին՝ ընդունելու եւրոպական մեծ պետութիւններու

լու հրամանը եւ պարտաւորուած էին Պուլկարիայի լքելու Ադրիանուպոլիսը : Ժէօն Թիւրքերը , վեց ամիսէ իվեր զգոյշ դիրքի մէջ, պատահութիւն մը կը փնտռէին իշխանութիւնը կրկին ձեռք անցրնելու : Ադրիանուպոլիսի ծրագրուած յանձնումը՝ այդ պատահութիւնը ընծայեց անոնց : Ադրիանուպոլիս կարեւոր քաղաք մըն էր, որուն թողումը Թիւրք ժողովուրդին կողմէ նկատուած էր իբր իր ազգային անկումին մէկ նոր հանգրուանը : Թաւլաղ եւ Էնվէր փութով հաւաքեցին երկու հարիւր հետեւորդներ եւ առաջացան դէպի Երծ : Դուռ, ուր նախարարութիւնը նիստ ունէր : Նազրմ . լսելով խաժամուժը, կու գայ մինչեւ գաւիթը . քաջարար դէմ կ'ելլէ ամբոխին, շրթունքներուն վրայ սիկառէթ մը , ձեռքերը զրպաններուն մէջ մխրճած :

- Ինչ է ան, ինչ կայ, կ'ըսէ ան զուարթագին, լինչ է պատուանք այս աղմուկին : Չէք գիտեր որ այդ աղմուկը կը խանգարէ մեր խորհրդակցութիւնները :

Հազիւ բառերը բերնէն ելած, ան կ'իյնար . զնդակ մը հասեր էր կենսական գործարանի մը : Ասոր վրայ ամբոխը առաջնորդուած Թաւլաղէն ու Էնվէրէն, նամբայ կը բանայ մինչեւ ժողովին սրահը : Եպարբոս Քեամիլ, ամէն կողմէ ճնշումի ենթարկուած — ու թատն տարեկանէն աւելի կար — կը ստիպուի հրաժարիլ, Նազրմի ճակատագիրը կրելուն վախովը :

Ինչպէս որ ոճիրը եղած էր այն միջոցը՝ որով այդ մարդիկը գերազոյն իշխանութեան տիրացած էին . նոյնպէս ոճիրը մնաց իրենց գործիքը՝ այդ իշխանութեան մէջ դիրքերնին պահպանելու համար : Ընկալ , բացի իր պաշտօններէն, Պոլիսի զինուորական կառավարիչ էր, եւ այդ պատճառով՝ ոստիկանութեան վերահսկողութիւնը կը կատարէր . այդ դերին մէջ, ան կատարելագործեց Ֆուշէի մը բոլոր ձիրքերը եւ այնչափ լաւ կատարեց իր առաքելութիւնը որ՝ ամէն անձ որ կը դաւաճանէր Ժէօն Թիւրքերուն, ստիպուեցաւ քաշուիլ Փարիզ կամ Սթէնք : Իմ ժամանումէս առջի քանի մը ամիսները՝ սարսափի ճշմարիտ տիրապետութիւն մը եղած էին : «Ժէօն Թիւրք»երը քանդած էին Ապտիւլ-Համիտի վարչութիւնը, բայց որդեգրած էին Սուլթանին սիրելի «մթնոտ»ները՝ լուեցնելու համար ընդդիմադիրները : Թիւրքիա փոխանակ մէկ Ապտիւլ-Համիտ մը ունենալու, հիմա կը տեսնէր որ բազմաթիւ Համիտներ ունէր . ձերբակալութիւնները եւ արսուրները քանակներով կը հաշուէին, եւ կախուիլը քաղաքական յանցապարտներուն — այսինքն կառավարական հրոսախուժքին դէմ ելլողներուն — ռամիկ միջադէպ մըն էր միայն : Սուլթանին անկարողութիւնը Քոմիլիէին գործին շատ կը յարմարէր : Պէտք է

յիշել որ՝ Մօհամմէտ Ե. միայն Սուլթան չէր, այլ նաեւ Ուայիֆա էր . ո՛չ միայն աշխարհական վեհապետը, այլ նաեւ մահմետական եկեղեցիին պետը : Այս պատճառով, միլիտանոր իսլամ ջերմեռանդներու պաշտելութեան առարկան էր : Ասիկա՝ իր տեղը գտնուող որեւէ վեհական մարդու՝ պիտի բաւէր տալու բաւական ազդեցութիւն՝ Թիւրքիան ազատելու համար իր բռնաւորներուն լուծէն : Կ'ենթադրեմ որ՝ նոյն իսկ անոնք՝ որոնք ամէնէն շատ համակրանքը ունեցած են իրեն հանդէպ . զայն չպիտի նկարագրեն երբեք կորովի մարդու մը, խրոխտ տէրոջ մը դիմագծութիւնով : Հրաշք մըն է որ՝ այն պարագաներուն մէջ՝ ուր ճակատագիրը ծանրացած էր իր վրայ, ամբողջովին չէ փնացած : Իր եղբայրն էր Ապտիւլ-Համիտ, գոր Կլէտսթըն կը կոչէր «Սեծ Ոճրագործը», մարդ մը՝ որ կառավարեց լրտեսութիւնով եւ արիւն թափելով եւ որ իր իսկական ազգականներուն հանդէպ չունէր աւելի յարգանք, քան իր հայ դժբաղդ հպատակներուն : Դահ բարձրանալուն, իր առաջին գործերէն մէկը եղած էր՝ պալատի մը մէջ խցարդիւել իր հաւանական յաջորդը, զայն շրջապատել լրտեսներով, սահմանափակել իր ընկերական կեանքը՝ իր հարէմին եւ քանի մը հետեւորդ պաշտօնատարներու շրջանակին մէջ . եւ իր գլխուն վրայ մշտապէս կախել սպաննուելու վախը : Մօհամմէտի դաստիարակութիւնը սահմանափակ եղած էր . միայն իր մայրնի լեզուն կը խօսէր եւ արտաքին աշխարհի վերաբերող որեւէ բանի տեղեկանալու իր միակ միջոցն էր Թիւրքերէն թերթի մը պատահական ընթերցումը : Որչափ ատեն որ հանդուրժէր այս «ուէժիմ»ին, գահաժառանգը որեւէ վտանգի չէր ենթարկուեր . բայց գիտէր որ ըմբոստացումի առաջին նշանը կամ նոյն իսկ դէպքերու մասին իր չափազանց անժամանակ հետաքրքրութիւնը — իր մահուանը ազդանշանը պիտի ըլլար : Այս պատանդումը ո՛րչափ ալ կատարեալ ըլլար, ան չի խաթարեց այն էսպէս բարեացակամ եւ համակրող բնաւորութիւնը, որ կատարեալ հակադրութիւն մը կը կազմէր այն բնութեան հետ՝ գոր կը վերագրենք «Սոսկալի Թիւրք»ին : Ան հանդարտաբարոյ եւ դիւրրնտել ծերունի մըն էր՝ գոր ամէն մարդ կը սիրէր եւ որ, համոզուած եմ ատոր, չար զգացում չէր սնուցաներ ապրող որեւէ հոգիի : Անկարող կառավարելու իր Կայսրութիւնը , — որովհետեւ պատրաստուած չէր այդչափ կնճռոտ գործ մը կատարելու կը գոհանար վայելելով իր վեհապետութեան առանձնաշնորհները , վստահ մեծ Օսմանին ուղղակի շառաւիղը ըլլալուն :

Հետեւաբար չէր կրնար դիմակայել ծրագիրներուն անոնց՝ որոնք այն ատեն կը պայքարէին Թիւրքիան վարելու համար : Իր

տէրը՝ Ապտիւլ-Համիտը փոխանակելով Թալէադի, Էնվէրի եւ ձէ-
մալի հետ, հաւատացեալներու պետք իր անձնական կացութիւնը
էջ բարուքած երբևք . Միութիւն եւ Առաջդիմութիւն Բոմի-
թէն զայն կը պահէր, — ինչպէս կը պահէր Թիւրքիայի մնա-
ցած մասը, — ահաբեկումով : Բոմիթէին պետերը [leader]
անոր ցուցուցած էին իրենց կարողութեան չափը՝ գահընկէց ընե-
լով Ապտիւլ-Համիտը, զայն բանտարկելով պալատի մը մէջ . եւ
խնդհ Մօհամմէտ բնականաբար կ'ապրէր նման վարմունքի մը
մշտական վախին մէջ : Ըշմարտապէս, անոնք իրեն տուած էին
արդէն իրենց զօրութեան մէկ նմուշը, եւ եթէ Սուլթանը այդ
առիթով փորձած ըլլար հաստատել իր անկախութիւնը, դէպքին
վախճանը սքանչելապէս պիտի ապացուցանէր միայն որ՝ ո՛վ էր
տէրը : Տասերեր «դաւանան»ներու խմբակ մը եւ ուրիշ ոճրա-
գործներ, — ոմանք իրական, մնացածները քաղաքական պարզ
յանցաւորներ, — դատապարտուած էին կախուելու . անոնց մէջ
կը գտնուէր կայսերական փեսան : Մահավճիռին գործադրու-
թենէն առաջ Մօհամմէտ պէտք էր ստորագրել մահուան հրա-
մանագիրները . ան թախանձեց որ թոյլ տային իրեն ներել իր
ազգականին, որեւէ առարկութիւն չյարուցանելով միւս տաս-
երկու դատապարտուածներուն մահավճիռը, ստորագրելու 20
միլիոն հպատակներու անուանական վեհապետը ծունկի եկաւ իր
նախարարին առջեւ, բայց ուր եւ է թախանձանք չի ողորեց անոր
որոշումը : Աս առիթ մըն էր, դատեց Թալէադ, վճռապէս որո-
շելու համար որ ո՛վ է տէրը . Սուլթանը թէ Բոմիթէն : Քանի մը
օր ետքը, հոյապանձ մահապատժուածին մեղամաղձոտ դէմքը
կառափնատի մը ծայրէն կ'օրօրուէր, ժողովուրդին աչքին դէմ,
եւ յայտնապէս կ'ապացուցանէր որ՝ Թալէադը եւ Բոմիթէն կը
վարէին թիւրք կայսրութեան ճակատագիրը : Անկախութեան այս
նդերական կամէութենէն ետքը Մօհամմէտ ա՛լ չփորձեց երբեք
միջամտել գործերու ընթացքին . ան գիտէր թէ ի՛նչ պատահած
էր Ապտիւլ-Համիտի եւ իրեն համար աւելի՛ գէշ վախճանէ մը կը
վախնար :

Այն շրջանին երբ հասայ Պոլիս, Սուլթանը կատարելա-
պէս ժէժն Թիւրքերու ձեռքին տակ էր . զայն ընդհանրապէս
«Իրատէ-մեքենայ» մը կը նկատէին, որակում մը՝ համազօր այն
որակումին՝ որ մեզի կը ծառայէ անհատ մը իբր «մեքենական
խցան» որակելու : Իր պետական պարտականութիւնները կը կա-
յանային պարզապէս զանազան պաշտօնական արարողութիւն-
ներու նախագահելուն մէջ, — ինչպէս դեսպաններու ընդունե-
լութիւն, — իր ստորագրութիւնը դնելու մէջ պաշտօնաթուղթե-

րու վրայ՝ զորս Թալէադ եւ իր ընկերակիցները \այդ առիթով
իրեն կը ներկայացնէին :

Ասիկա, անվիճելիօրէն, Թիւրքիայի կառավարական օրինա-
կարգերուն մէջ մեծ փոփոխութիւն մըն էր, այս երկիրին մէջ ուր
դարերէ իվիր, Սալիֆան բացարձակ միապետ մըն էր, որուն կամքը
միայն օրէնքի ուժ ունէր եւ որ իր ձեռքին մէջ կեդրոնացուցած
էր բոլոր իշխանութիւնները : Մ'չ միայն վեհապետը, այլ նաեւ խոր-
հրդարանին անդամները Բոմիթէին խոնարհ արարածներն էին,
գործնականապէս ընտրուած ըլլալով իրմէ եւ քուէարկելով ամէ-
նէն ազդեցիկ «կուզ»երուն հրամաններուն համեմատ : Ասոնք,
նաեւ յաջողած էին հանրային գլխաւոր պաշտօնները յանձնելու
իրենց հաւատարիմներուն եւ կը ջանային ձեռք անցընել յետին
պաշտօնները, որոնք զանազան պատճառներով կը խուսափէին
իրենց վերհսկողութենէն :

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

«ԳՈՐԾԱՊԵՏԻ ԳՐՈՒԹԻՒՆ»Ը ՕՍՄ. ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԻՆՉՈ՞Վ ՕԳՏԱԿԱՐ ԵՂԱԻ ԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ

Թալէադ, աւագակներու այս խմբակին պետը, հուշակաւոր անձնաւորութիւն մըն էր. իր կեանքը եւ նկարագիրը բնականաբար իմ շահագրգռութիւնս արթնցուցին, որովհետեւ երկար ատենէ իվեր իմ երկիրիս մէջ ընտանեցած էի «գործապետի դրութեան» [Boss System]. եւ անոր քով կը գտնէի մէկէ աւելի նմանութիւններ հին-օրէնքներուն հետ, թէեւ կարող, քաղաքացիներ՝ որոնք ատենով այնչափ յաճախ ղեկավարած էին մեր տեղական եւ նոյն իսկ կառավարական քաղաքականութիւնը:

Թալէադի ծագումը այնչափ մթին էր որ՝ բազմատեսակ պատմութիւններ կը շրջաբերէին իր հաշիւին: Ոմանք կը պատմէին թէ՛ պուլկար գնչու մըն էր. ուրիշներ զայն կը կոչէին Փոմաբ (այս անունով կը կոչուի պուլկար արիւնով անհատ մը, որուն նախանայրերը. դարեր առաջ, մահմետական կրօնըը ընդունած են): Այսպէս, այս վերջին բացատրութեան համեմատ, որ կը կարծեմ թէ շիտակն է, Թիւրք Կայսրութեան այս ճշմարիտ տէրը երբեք Թիւրք չէր:

Կրնամ նաեւ հաստատել թէ՛ չափազանց քիչ կը մտահոգուէր Մահմետականութիւնով, որովհետեւ իր կուսակցութեան պետերուն մեծամասնութեան նման՝ բոլոր կրօններուն անհաշտ էր: «Կ'ատեմ բոլոր կղերականները. բապտիստ, հօճա», ըսաւ օր մը ինծի (հօճա այն եզրն է՝ զոր Մահմետականները կը գործածեն կրօնի նախարարները անուանելու): Կրնամ նաեւ վստահեցնել թէ՛ Թալէադ ո՛րեւէ ուշադրութիւն չէր ընծայեր իր կրօնին զանազան պատուիրաններուն, մասնաւորաբար ըմպելիի վերաբերողներուն. ան հոգին էր սկուճի մը, որ հաստատուած էր ամերիկեան Դեսպանատունէն ոչ հեռու եւ որուն հաւարոյթները երբեմն կրնային Բաքոսեան համարուիլ:

Ամերիկայի մէջ՝ հազուադէպ չէ տեսնել պարզ ընչազուրկ մը՝ որ իբր նարտար քաղաքագէտ մը կը յայտնուի. նոյնպէս, Թալէադ կեանքի մէջ իր սկզբնաւորութիւնը կատարած էր իբր ցրուիչ. յետոյ Աղրիանուպոլիսի մէջ, հեռագրիչի պաշտօնին մէջ մեծցած էր եւ ծայրայեղօրէն հպարտ էր իր խոնարհ սկզբնաւորութեանը համար: Իր տունը այցելութեան գացի երկու-երեք անգամ, եւ

թէեւ այն ատեն Օսմ. Կայսրութեան մէջ ամէնէն ազդեցիկ մարդը ըլլար, իր տունը ժողովուրդի մարդու մը տունն էր, սահմանափակօրէն զարդարուած աժանագին կահ-կարասիներով, որոնց ամբողջութիւնը նիւ-Յօրթի մէջ վարձու «ախառթըման»ի մը տպաւորութիւնը կը գործէր: Իր նախասիրած առարկան էր հեռագրական գործիքը, որուն շնորհովը ատենով իր կեանքը փրկած էր: Տեսայ անոր հեռագիր գործածելը, կանչելու համար իր մտերիւմ բարեկամներէն մէկը:

Գիշեր մը, Թալէադ ինծի ըսաւ որ՝ այդ օրը իրեն վճարած էին ներքին գործերու նախարարի իր ամսաթօշակը: Աւելցուց թէ՛ իր պարտքերը վճարելէ ետքը, միայն հարիւր տոյար դրամ մնացած էր իրեն: Իր հաճոյքի ժամերուն մեծագոյն մասը կը սիրէր անցընել այն կոպիտ մարդերուն հետ՝ որոնք կը կազմէին Միութիւն եւ Աւաջդիւմութիւն Քօմիթէն. նախարարութեան պահերէն զատ ժամերուն, ամէն օր ժամանակ կ'անցընէր կեղբուհատեղիին գրասենեակին մէջ իր կուսակցութեան. որուն գործունէութիւնը կը վարէր անձնապէս: Հակառակ իր խոնարհ ծագումին, տիրացած էր աշխարհիկ մարդու յատկութիւններէն մէկ քանիին: Թէեւ, իր նախնական կրթութեան պատճառով, իրեն սորվեցուցած չէին երբեք պատառաքաղ կամ դանակ գործածել, — որոնք Թիւրքիայի ստորին դասակարգերուն մէջ բոլորովին անծանօթ գործիքներ էին, — սակայն կրնար ներկայ ըլլալ դիւանագիտական սեղաններու եւ կրնար իր երկիրը ներկայացնել մեծ արժանաւորութիւնով եւ կատարեալ դիւրաթեքութիւնով մը: Ես միշտ իր ընդոժին տաղանդին նշան մը նկատած եմ այն իրողութիւնը որ՝ հակառակ իր աննշան դաստիարակութեան՝ բաւականաչափ ֆրանսերէն սորված էր, այդ լեզուով խօսակցութիւն մը վարելու համար պատշաճապէս: Ֆիզիքապէս, նուազ ուշագրաւ չէր. իր զօրեղ կազմուածքը, իր լայն եւ քառակուսի կունակը, ժայռի պէս կարծր իր դնդերները, կը մեծցնէին այն մտային ուժը եւ բնական կորովը, որոնք դիւրացուցած էին իր ասպարէզը: Վիճաբանելու համար, կը սիրէր նստիլ իր գրասեղանին առջեւ, ուսերը ցցուած, գլուխը ետեւ նետուած, դաստակները — սովորական մարդու մը դաստակներէն երկու անգամ խոշոր — ամրապէս տնկուած սեղանին վրայ: Ինծի թուած է միշտ որ՝ լծակ մը պէտք պիտի ըլլար այդ դաստակները խախտելու համար այն տեղէն՝ ուր Թալէադի բռնաւոր ուժը եւ ոգին գամած էին զանոնք: Հիմա, երբ կը ոգեկոչեմ իր յիշատակը, նախ չեմ յիշեր իր զուարթագին խնդուքը, աղուոր պատմութիւն մը պատմուած ատեն իր յոր-

դազեղ զուարթութիւնը, արագ քայլերով սենեակէ մը անցնելու իր կերպը, իր եռանդը, իր կամքը, իր անգթութիւնը. մարդուն ամբողջ կեանքը եւ բնաւորութիւնը՝ ինծի համար՝ կը խորհրդանշուին այդ հսկայական դաստակներուն մէջ :

Թալէադ, ինչպէս զօրեղ մարդոց շատերը, ունէր իր դաժան եւ երբեմն նոյն իսկ վայրագ զուարթախոհութեան նոպաները: Օր մը, զինքը կը գտնէի նստած իր սովորական տեղը, իր զանգուածեղ ուսերը ցցուած, իր դաստակները գամուած զրասեղանին վրայ. զինքը այդ դիրքին մէջ տեսած ատենս՝ միշտ դժուարութիւն մը կը նախագգայի: Թալէադ, սիկառէթի ծուխի երկու փչուածքի միջեւ, կը պատասխանէր անփոփոխելիօրէն. «Ո՛չ, ո՛չ, ո՛չ»: Իրեն մօտ սահեցայ. «Վսեմաշուք, ըսի, ինծի կը թուի որ ամէն բանին պատճառը այդ դաստակներն են: Ձէքք ուզեր զանոնք սեղանին վրայէն վերցնել»: Թալէադի ճիւղի դէմքը սկսաւ կծկուիլ. վեր առաւ բազուկները, կռնակի վրայ գնաց եւ մռնչիւնի նման խնդուք մը ունեցաւ: Իմ վարուելակերպս այնչափ զուարճացուցած էր զինքը որ՝ բոլոր խնդրանքներուս զիջում ըրաւ :

Ուրիշ անգամ մը, մտայ իր գրասենեակը, ուր արդէն կային երկու արաք իշխաններ: Նախարարը վեհաշուք էր, անձնարժանութիւնով փրուած եւ ամէն շնորհ մերժեց ինծի. «Ո՛չ, չպիտի կատարեմ: Ո՛չ, ամենաչնչին մտադրութիւնը չունիմ կատարելու», պատասխանեց: Հասկցայ որ՝ կ'ուզէր իր իշխանական հիւրերուն վրայ տպաւորութիւն գործել եւ անոնց ցուցնել թէ՛ այնչափ արժէքաւոր դարձած էր որ՝ չէր վարաներ Դեսպանի մը հետ «զէշ վարուիլ»: Այն ատեն, իրեն մօտենալով, խաղաղ շեշտով մը ըսի իրեն. «Կը տեսնեմ որ կը ջանաք այս իշխաններուն աչքին երեւալ. եթէ ինքզինքնիդ արժեցնել պէտք է, արժեցուցէք աւստրիական Դեսպանին, որ ունկնդրութեան կը սպասէ: Իմ գործերս չափազանց կարեւոր են. անոնցմով չի զուարճացիր»: Թալէադ սկսաւ խնդալ: «Ժամէ մը եկէք», ըսաւ ինծի: Վերադարձայ. արաք իշխանները մեկնած էին եւ ո՛չ մէկ դժուարութիւն չունեցանք գործերը ինծի գոհացուցիչ ձեւով կարգադրելու:

— Պէտք է որ մէկը կառավարէ Թիւրքիան, ինչո՞ւ մենք ըլլանք, ըսաւ ինծի օր մը: (Կացութիւնը, իրապէս, գրեթէ այդ կէտին հասած էր): Ես՝ մեծապէս յուսախաբ եղած եմ որ, շարունակեց, Թիւրքերը չկրցան զնահատել մեր ռամկավաճառական հիմնարկութիւնները: Ատենով ատոր յոյսը ունեցած էի եւ ուժգնօրէն աշխատած, բայց Թիւրքերը երբեք պատրաստուած չէին ռամկավարութեան:

Կարծեց որ առաջին եկողը, որչափ ալ քիչ ձեռներէց ըլլար, կրնար տիրանալ կառավարութեան եւ ուզեց այդ մարդը ըլլալ: Այն բոլոր քաղաքագէտներուն մէջ, որոնց հանդիպած եմ, զինքը նկատեցի միակը՝ որ ճշմարտապէս բնածին, արտասովոր կարողութիւններ ունէր: Ունէր տիրողական լայն կարողութիւն մը, արագօրէն եւ շիտակ խորհելու յատկութիւնը եւ զրեթէ զերբնական գուշակութիւն մը՝ ուրիշներու շարժառիթներուն: Միւս կողմէ, իր անկեղծ զուարթութիւնը եւ իր զուարթախոհութեան զգացումը՝ զինքը մարդ կառավարող մը կը դարձնէին: Նազըմի սպանութենէն ետքը, խռովուած Կայսրութեան ղեկավարութիւնը սանձելու համար իր թափած ջանքերուն մէջ իմաստութեան անհուն փորձեր տուաւ: Մէկ ուսումնով չտիրացաւ անոր, այլ առաջացաւ աստիճանաբար, շօշափելով հողը: Հասկցաւ իր դիրքին տկար կողմերը, կռեց այն ուժերը՝ որոնց դէմ պայքարիլ պիտի պարտաւորուէր, ինչպէս նախանձը յեղափոխական Քօմիթէի իր ընկերակիցներուն, որոնք զինքը պաշտպանած էին. հնարաւոր ընդիմութիւնը բանակին. օտար կառավարութիւններուն եւ զանազան հերձուածներուն, որոնք կը կազմէին այն՝ ինչ որ Թիւրքիայի մէջ հանրային կարծիք կը նկատուի: Այս տարրերէն ո՛րը կ'ուզէր ըլլար՝ կրնար զինքը փնացնել. քաղաքականապէս եւ նիւթապէս: Ան գիտէր որ վտանգաւոր ճամբու մը մէջ մտած էր եւ կը սպասէր բուն կերպով անհետանալ: «Ձեմ յուսար անկողինս մէջ մեռնիլ», ըսաւ ինծի: Ներքին գործերու նախարար ըլլալով, Թալէադ ձեռք առաւ ոստիկանութեան եւ նահանգներու կամ «վիլայէթ»ներու վերհսկողութիւնը որմէ ազդեցութեան վերանում մը, որ ամրապնդեց իր դիրքը Քօմիթէին մէջ: Ան դիմեց օժանդակութեանը բոլոր կարեւոր կուսակցութիւններուն, կամացկամաց անոնց ներկայացուցիչները նախարարութեան ուրիշ պաշտօններու կոչելով: Թէեւ ինք ետքէն ըլլար հարիւր հազարաւոր Հայերու ջարդին պատասխանատու կազմակերպիչը, այդ թուականին Թալէադ կը պնդէր որ՝ Քօմիթէն կողմնակից էր Կայսրութեան բոլոր ցեղերուն միացումին, եւ, այդ ծրագիրով, իր առաջին Դահլիճը կազմուեցաւ քրիստոնեայ արաբով մը, Տէօնմէով մը (ցեղով Հրեայ բայց կրօնքով մահմետական անձնաւորութիւն), Ձէրքէզով մը, Հայով մը եւ Եգիպտացիով մը: Այս վերջինը Եպարթոս ըրաւ, Կառավարութեան ամէնէն բարձր պաշտօնը, որ մօտաւորապէս կը համապատասխանէ Գերման Կայսրութեան Վարչապետի պաշտօնին: Մարդը՝ զոր ընտրեց այդ դերին համար, որ սովորական ժամանակ ամէնէն պատուաբեր եւ ամէնէն կարեւոր ռեժիմէն էր. կո աստեանէն ոնկեռութեան մէջ իրենինէն բոլորովին

տարբեր դասակարգի մը: Ամերիկայի մէջ, յաճախ կը պատահի որ՝ «գործապետներ» ընտրեն բարձր աստիճանէ անձնաւորութիւններ՝ կատարելու համար քաղաքապետի կամ նոյն իսկ կառավարիչի պաշտօնները, մարդիկ՝ որոնց պատուաւորութիւնը պիտի անդրադառնայ իրենց հերժուածին վրայ եւ զոր սակայն իրենք կրնան առաջնորդել: Այս կարգէն շարժառիթներու համար էր որ՝ Քալէադ եւ իր պաշտօնակիցները՝ Սախտ Հալիմը Եպարքոսի պաշտօնին բարձրացուցին: Սախտ Հալիմ եկիպտացի իշխան մըն էր, Եգիպտոսի Խտիվին ազգական, խիստ հարուստ եւ շատ զարգացած: Ան անգլիերէնը եւ ֆրանսերէնը կը խօսէր այնչափ սահուն կերպով, որչափ իր մայրենի լեզուն եւ կրնար պատիւ բերել աշխարհի օրեւէ ընկերութեան: Բայց իր ունայնամտութիւնը եւ փառատենչութիւնը սահման չունէին: Իր մեծազոյն փառաբան էր Եգիպտոսի Խտիվ ըլլալ, փառաբար՝ որ զինքը առաջնորդած էր իր քաղաքական բաղդը միացնելու այն խմբակին, որ այն ատեն կը կառավարէր Քիւրքիան: Ան մեծազոյն «յանձնարարողն էր անոնց ձեռնարկին» եւ նշմարտապէս շատ օժանդակած էր ժէօն Թիւրքերուն, իրենց սկզբնաւորութեանը ատեն: Փոխադարձապէս, ասոնք ալ անոր ընծայած էին Կայսրութեան ամէնէն բարձր պաշտօնը, բայց այն լուռ պայմանով որ՝ ան չպիտի փորձէր կրքեր գործածել իրական իշխանութիւնը, պիտի բաւականանար վայելելով իրեն յատուկ պատիւները եւ մեծարանքները եւ պատրաստ պիտի ըլլար Խտիվի պաշտօնը ստանձնելու, երբ իրենց բոլոր ծրագիրները իրականանային:

Քայգէրին պատերազմի պատրաստութիւնները, տարիներէ իվեր, ընդգրկած էին ուրիշ երկիրներու ներքին պայմաններուն ուսումնասիրութիւնը. կայսերական ծրագիրին անհրաժեշտ մէկ մասը կը բաղկանար՝ նպաստաւորութիւն գոյութիւն ունեցող ամէն անկազմակերպութենէ, զուիս հանելու համար գերմանական թափանցումի եւ նուաճումի ծրագիրները: Իմաստ է Պերլինի գործակալներուն գործը՝ Ֆրանսայի, Իտալիայի եւ նոյն իսկ Միաց.-Նահանգներու, Ռուսիայի մէջ, ուր յաջողեցան փոխել պատերազմին ընթացքը: Յայտնի է որ, 1913ին եւ 1914ին, Քիւրքիայի Կայսրութիւնը խոչալ առիթ մը կը հայթայթէր այս տեսակ «մանէօվր»ներու եւ Գերմանիա այս դժբաղդ երկիրին մէջ իրական շահեր կը գտնէր, որոնք ուրիշ ո՛չ մէկ կողմ այնչափ բացարձակ կերպով գոյութիւն չունէին: Քալէադ եւ իր պաշտօնակիցները պէտք ունէին Դերմանիայի, գրեթէ այնչափ որչափ Գերմանիա պէտք ունէր անոնց: Անոնք կատարելապէս համբակ էին Կայսրութիւն մը կառավարելու արուեստին մէջ. իրենց ելեւմտա-

կան աղբիւրները սպառած էին. իրենց բանակը եւ ծովային ուժը գրեթէ լուծուած էր. անոնք պաշարուած էին թշնամիներով՝ որոնք անդադար կը ջանային անոնց վարկը կտորել՝ իրենց հայրենակիցներուն աչքին. վերջապէս մեծ տէրութիւնները զանոնք կը նկատէին կարօտ բաղդախնդիրներ՝ որոնց ասպարէզը դատապարտուած էր կարճ տեւողութեան մը: Հարց էր թէ՛ դուրսէն պաշտպանուելով՝ նոր «ռէժիմ»ը ո՛րչափ ատեն պիտի տեւէր: Քալէադ եւ իր Քօմիթէն կ'ըզձային աջակցութիւնը օտար տէրութեան մը, կազմակերպելու համար բանակը եւ ծովային զօրութիւնը, վերականգնելու երկիրին ելեւմուտքը, իրենց օգնելու՝ վերակերտելու համար նարտարարուեստական դրութիւնը եւ զիրենք պաշտպանելու շրջապատող ազգերու ուսնձգութիւններուն դէմ: Օտար երկիրներու հանդէպ խորապէս տղէտ, իրենց պէտք էր նարպիկ խորհրդական մը՝ զիրենք առաջնորդելու համար միջազգային «էնթրիկ»ներու մէջէն: Ո՛ւր կրնային գտնել ատանկ պաշտպան: Յայտնապէս, Եւրոպայի մ.ժ տէրութիւններէն մէկը միայն կրնար կատարել այդ դերը: Բայց ո՞րը: Տասը տարի առաջ, Քիւրքիա բնականաբար դէպի Անգլիա պիտի դառնար: Բայց այդ ատեն, Քիւրքերը պարզապէս կը խորհէին որ՝ այդ ազգը այն ազգն էր, որ իրենցմէ կողոպտած էր Եգիպտոսը, եւ չէր կրցած իրենց անդամահատումը արգիլել Պալքաններու պատերազմէն ետքը: Ռուսիայի հետ համախորհուրդ, Մեծ Բրիտանիա հիմա կը կառավարէր Պարսկաստանը, եւ ասիկա կը կազմէր մշտական սպառնալիք մը՝ իրենց ասիական Կայսրութեան դէմ, — գէթ ա՛ս էր իրենց համոզումը: Անգլիա կամաց-կամաց կը քաշէր Քիւրքիայի մէջ ունեցած իր դրամագլուխները: Իր պետական մարդերը կը խորհէին որ՝ Օսմանցիները Եւրոպայէն վերջնականապէս վտարուելու կէտին վրայ էին, եւ Մայրագոյն-Սրբելիքի մէջ անգլիական բովանդակ քաղաքականութիւնը կը հիմնուէր Պալքաններու կազմակերպութեան պահպանումին վրայ, այնպէս ինչպէս նշողուած էր Պուրթէշի դաշնագիրով, դաշնագիր՝ որուն հպատակի կը մերժէր Քիւրքիա, որոշած ըլլալով զայն ջնջել: Ամէն բանէ առաջ, Քիւրքերը 1914ին կը վախնային Ռուսիայէն, այնչափ որչափ անկէ սոսկացած էին Մեծ Պետրոսի գահակալութենէն իվեր: Ռուսիան իրենց համար հին թշնամին էր, այն երկիրը՝ որ ազատագրած էր Պուլկարիան եւ Ռուսանիան, — որոնք ամէնէն գործօն դերը խաղացած էին իրենց Հայրենիքին պատառուելուն, — եւ որ արդէն իսկ զինքը Պոլսի տէր կը նկատէր: Այս վախը, չպիտի ուզէի զայն շատ կրկնել, զլիաւոր ազդակը եղաւ, որ գերազանցելով միւսները, Քիւրքիան առաջնոր-

դեց Գերմանիայի բազուկներուն մէջ նետուելու : Թիւրքիա , յիտուն տարիէ աւելի ատեն, Անգլիայի աջակցութիւնը նկատած էր իր լաւագոյն փրկարարը ռուսական յարձակումին դէմ, եւ հիմա Մեծ Բրիտանիա Ռուսիայի իրական դաշնակիցը . եղած էր ! Այդ ատեն, Թիւրքիայի մէջ, մինչեւ անգամ ցեղապետները, կը կարծէին որ՝ այդ երկու տէրութիւնները կատարելապէս համաձայն էին Ռուսիայի վերապահելու Պոլիսի եւ Տարտանելի ժառանգութիւնը :

Թէեւ 1914ին, Փեթրոկրատի Կառավարութիւնը գոնէ բացառապէս երբեք այդ տեսակ յաւակնութիւն չի սնուցանէր , այն իրողութիւնը որ ռուս կառավարութիւնը Բ. Դուռը կը ճնշէր ուրիշ պատճառներով, Թալէադի եւ Էնվէրի անհնար կը դարձնէր այդ կողմէն պաշտպան մը փնտռել : Իտալիա նոր տիրացած էր Ափրիկէի մէջ վերջին թրքական նահանգին՝ Տրիպոլիսի եւ այդ թուականին կը գրաւէր Հոռոտը եւ թրքական ուրիշ կղզիներ եւ Փոքր Ասիայի մէջ նուաճողական ծրագիրներ կը սնուցանէր : Ֆրանսա դաշնակիցն էր Ռուսիայի եւ Մեծ Բրիտանիայի . Ֆրանսա անդադար իր ազդեցութիւնը կը տարածէր Սուրիայի մէջ , ուր , ճշմարտապէս, թափանցումի ընդարձակ ծրագիրներ յղացած էր, երկաթուղիի , գաղթականութիւններու եւ մեծաշորհներու միջոցով : Անհատներու նկատումներն ալ կարեւոր դեր մը խաղացին այն «տռամ»ին մէջ, որ յաջորդեց : Երեսակ Համաձայնութեան դեսպանները հազիւ կը քօղարկէին իշխանութեան գլուխ գտնուող թիւրք քաղաքագէտներուն եւ անոնց «մէթոտ»ներուն հանդէպ իրենց նողկեանքը : Սրբ Լուի Մալէդ, անգլիական դեսպանը, զարգացած եւ բարձր գաղափարներով «ճէնթլմէն» մըն էր : Պօնտիա՝ փրանսական դեսպանը, նոյնչափ հաճելի եւ ամէն կերպով պատուաւոր էր : Երկուքն ալ, իրենց խառնուածքին բերումով, ընդունակ չէին մասնակցելու այն ոճրական «էնթրիկներուն» որոնք այդ ատեն թիւրք քաղաքականութեան մաս կը կազմէին : Կիրս, ռուսական դեսպանը, հին «ռէժիմ»ի դեսպան մըն էր, ինքնահաւան եւ արհամարհոտ . ծայրայեղօրէն նենգաժէտ էր, բայց Թիւրքերուն հետ կը վարուէր արհամարհողաբար, երկիրին համար գրեթէ սեփականատիրոջ շահագրգռութիւն մը ցուցնելով եւ արդէն կը թուէր խարազանը գործածել՝ այդ ամօթապարտ կառավարութեան գլխուն վրայ : Յայտնի էր որ՝ Համաձայնութեան երեք դեսպանները չէին խորհեր որ Թալէադի եւ Էնվէրի «ռէժիմ»ը պիտի տեւէր . չէին խորհեր նաեւ որ անով շահագրգռուելու հոգը կ'արժէր : Ինչպէս որ վերջին տասը տարիներու ընթացքին իշխանութեան մէջ բազմաթիւ հերձուածներ առաջ եկած էին եւ յետոյ

տապալած, կը խորհէին որ այդպէս ալ այս վերջին աւազակութիւնը քանի մը ամիսէն պիտի անհետանար : Բայց այդ ատեն, Պոլիսի մէջ, խիղճ ունեցող եւ իր ծրագիրներուն ծառայող ո՛չ մէկ միջոցի առջեւ չընկրկող մարդ մը կար . Վանկէնհայմը : Ան յստակօրէն տեսաւ ինչ որ իր պաշտօնակիցները նշմարած էին միայն . թէ Թալէադ եւ իր ընկերակիցները Թիւրքիայի մէջ օրէօր աւելի մեծցող հեղինակութեան մը կը տիրանային եւ ասոնք կը փնտռէին ազդեցիկ տէրութիւն մը՝ որ ուզէր ճանչնալ իրենց դիրքը եւ իրենց օժանդակէր զայն պահպանելու : Կացութեան վրայ աւելի ճիշդ գաղափար մը կազմելու համար, վայրկեան մը փոխադրուինք մեզի աւելի մօտ երկիր մը :

1913ին, Վիթթօրիանօ Հիւէնթա եւ իր մեղսակիցները յաջողած էին իրենց տիրադատութիւնը պարտադրել Մեքսիկայի, այն նոյն միջոցներով՝ զորս Թալէադ եւ իր Քօմիթէն գործածած էին գերագոյն իշխանութեան հասնելու համար : Ինչպէս որ Հիւէնթա սպաննած էր Մատէոսն, նոյնպէս ժէօն Թիւրքերը մեռցուցած էին Նազըմը . եւ երկու պարագաներուն մէջ ալ, սպանութիւնը քաղաքական ընթացիկ զէնք մը կը դառնար : Հիւէնթա կը դեկավրէր մեքսիկեան Խորհրդարանը եւ հանրային հաստատութիւնները, ճիշդ ինչպէս Թալէադ կը ղեկավարէր թիւրք Խորհրդարանը եւ պետական գլխաւոր պաշտօնատուները : Հիւէնթայի տիրապետութեան տակ, Մեքսիկա անհունապէս աղքատ երկիր մըն էր, առանց ելեւմտական աղբիւրներու, առանց ճարտարարուեստի, ո՛չ ալ երկրագործութեան, նման Թիւրքիայի՝ Թալէադի վարչութեան տակ : Ինչպէս Հիւէնթա ջանաց ամրապնդել իր կացութիւնը եւ վերականգնել իր կազմալուծուած երկիրը : Մէկ միջոց ունէր միայն . ապահովել օտար որեւէ տէրութեան աջակցութիւնը : Այս նպատակով, քանի-քանի անգամներ փորձեց Միաց.-Նահանգներուն կողմէ վերանանցուիլ : Բայց որովհետեւ Միաց.-Նահանգները մերժեցին գործ ունենալ մարդասպանի մը հետ, Հիւէնթա Գերմանիայի դարձաւ : Եթէ Քայզերը այդ կոչին պատասխանէր, ան կարող պիտի ըլլար մեքսիկեան ելեւմուտքին մէջ կարգը վերահաստատել, երկաթուղիի գիծերը վերաշինել, ճարտարարուեստը բարձրացնել, բանակը արդիականացնել եւ այսպէս ձեռքը դնել երկիրին վրայ, որ ատանկով կը դառնար գերմանական ստացուածք մը :

Միակ պատճառ մը արգելեց Քայզերը այդ բանը ընել . Մօնրօէի վարդապետութիւնը : Արդ. այդ վարդապետութիւնը գոյութիւն չունէր Թիւրքիայի մէջ, եւ ինչ որ պիտի կրնար պատահիլ Մեքսիկայի, ուրիշ բան չէր, բայց եթէ կոշտ սակայն ճիշդ

պատկերը այն բանին՝ որ առաջ եկաւ Օսմ. Կայսրութեան մէջ: Եւ սակայն, երբ կացութեան վրայ դէպի ետ ակնարկ մը կը նետեմ, ամէն բան ինծի կ'երեւայ այնչափ յստակ, այնչափ պարզ, այնչափ անխուսափելի: Գերմանիա մինչեւ այդ ատենը եղած էր գրեթէ այն միակ տէրութիւնը՝ որ իւրացուցած չըլլար թիւրք հողամասէն խոշոր պատառ մը, իրողութիւն մը՝ որ իրեն նշանակելի առաւելութիւն մը կու տար: Ատկէ զատ, Պոլսի իր ներկայացուցիչները, իրենց խիղճ չունենալնան, իրենց ճարպիկութեանը եւ փորձառութեանը շնորհով, աւելի ընդունակ էին այդ դժուար կացութիւնը վարելու, քան ուրիշ ամէն երկիրի ներկայացուցիչները: Սակայն Վանկէնհայմ արդէն հրապարակ հանուած միակ կարող Գերմանացին չէր: Կ'ուզեմ յիշել Փոլ Վայցը, համագերմանութեան կարեւոր ռահիւիրայ, որ երեսուն տարուան ընթացքին՝ Ֆրանկֆուրթը Զայրունկի Թիւրքիայի թղթակիցն էր: Ան հիմնապէս կը ճանչնար Թիւրքերը եւ երկիրին գործերը, մուտք ունէր ամէն տեղ, նոյն իսկ ամէնէն նուազ մատչելի տեղերը եւ մշտապէս Վանկէնհայմի քովն էր, որուն դաս, խորհուրդ եւ տեղեկութիւն կը շուայէր: Կար նաեւ գերման ծովային կցորդ Հիւմանը, գերման հռչակաւոր հնէաբանի մը զաւակը, ծնած Իզմիր, եւ որ գրեթէ իր ամբողջ կեանքը անցուցած էր Թիւրքիայի մէջ. կը խօսէր ո՛չ միայն թիւրքերէն, այլ կրնար նաեւ խորհիլ Թիւրքերուն պէս, որոնց մտայնութիւնը կատարելապէս կը ճանչնար: Նաեւ էնվէրը, Քոմիթէին երկու գլխաւոր պետերէն մէկը, մտերիմ բարեկամն էր Վանկէնհայմի: Երբ կը խորհիմ այս երրորդութեան վրայ. — միանգամայն ճարպիկ ու փորձագէտ Վանկէնհայմին, Վայցին եւ Հիւմանին, եւ անոնց հակառակորդներուն՝ Մայէթի, Պոնփաուի եւ Կիրսի, անհունապէս արժանայարգ համակրելի «ճէնթլմէն»ներ, ինծի կը թուի որ՝ անկարելի պիտի ըլլար խափանել դէպքերու ընթացքը, որ այն ատեն գահավիժեցաւ, արագ եւ ճակատագրականապէս, իբր բնութեան պարզ երեւոյթ մը:

1914ի գարունին. Թայէադ եւ էնվէրը, Միութիւն եւ Առաջդիմութեան Քոմիթէին ներկայացուցիչները, Օսմ. Կայսրութեան տէրերն էին, եւ Վանկէնհայմ նկատի ունենալով մօտաւոր պատերազմ մը, մէկ բաղձանք միայն ունեցաւ. — զանոնք իր կամքին գործիքները դարձնել:

1914ի Յունվարին, էնվէր պատերազմական նախարար եղաւ: Երեսուններկու տարեկան էր եւ համեստ ծագում ունէր, ինչպէս արդէն այդ ատենի թիւրք քաղաքականութեան բոլոր պետերը: Իր «Յեղափոխութեան դիւցազն» ժողովրդական մակդիրը կը

բացատրէ թէ՛ ինչո՛ւ Թայէադ եւ Քոմիթէն իրեն վստահած էին այդ կարեւոր պաշտօնը: Ան զինուորական որոշ համբաւ կը վայելէր, թէեւ՝ իմ գիտցածիս համեմատ՝ ռազմական ճշմարիտ յաջողութիւն մը չահած չըլլար: 1908ի Յեղափոխութիւնը, որուն գլխաւոր պարագլուխներէն մէկը եղած էր, մարդկային շատ քիչ կեանք արժած էր 1912ին, Տրիպոլիսի մէջ Իտալացիներու դէմ բանակի մը հրամանատար եղած էր, բայց, իրապէս, այդ պայքարը նախօլէոնեան ոչինչ ունեցած էր: Ինքն իսկ պատմեց ինծի թէ՛ ինչպէս Պալքաններու երկրորդ պատերազմին. գիշեր մը զօրաչուէն հտքը, իր բանակին գլուխը անցած էր Ադրիանուպոլիսը զրաւելու համար եւ թէ ինչպէս Պուլկարները՝ իր մօտենալուն՝ քաղաքը լքած ըլլալով, ինք յաղթանակը շահած էր այդպէս անզանօրէն:

Իր քով տիրական էր յատկանիշ մը. — յանդգնութիւնը, որ ճակատագրապէս զինքը յաջողութեան պիտի առաջնորդէր Թիւրքիայի պէս անկազմակերպ երկիրի մը միջ: Սրագ որոշող, միշտ պատրաստ իր կեանքը եւ ապագան խաղի ենթարկելու՝ պարզ բաղդախնդրութեան մը յաջողութեանը համար, մինչեւ այդ ատեն մարդուած էր բաղդէն նպաստաւորուած տագնապններու շարքի մը մէջ: Եւ թէեւ ըլլար վայրագ, անգութ, կամքով անընկճելի, իր կանոնաւոր գիծերով դէմքը, իր պզտիկ՝ բայց կորովի մարմինը, իր հանելի կերպերը, վերջապէս ոչինչ չէր մատնէր իր իսկական բնաւորութիւնը: Նոյնպէս, ան որ զինքը միայն ճամբան տեսած ըլլար, չպիտի կռահէր այն անսանձ փառատենչութիւնը՝ որմէ կը զրդուէր: Իր բարեկամները զինքը «Նախօլէոնիք» կը կոչէին, պզտիկ Նախօլէոն, մակդիր՝ որ կատարելապէս կը խորհրդանշէր իր յաւակնութիւնները: Կը յիշեմ գիշեր մը, իր տունը, զինքը դիտած ըլլալս, երբ նստած էր երկու նկարներու մէջտեղը, մէկը Նախօլէոնին նկարը, միւսը Ֆրետէրիք Մեծինը, պարզ իրողութիւն մը՝ որ կրնայ գաղափար մը տալ իր ունայնամտութեան վրայ: Ան խոր հիացում մը ունէր իր երկու հերոսներուն վրայ, որոնք թէ՛ պատերազմիկ էին եւ թէ՛ պետական մարդ եւ կը կարծեմ որ էնվէր կը սիրէր խորհիլ որ՝ ճակատագիրը իրեն վերապահած էր անոնց ասպարէզին նման ասպարէզ մը: Մնաց որ, այն գործօն մասնակցութիւնը, զոր քանրվեց տարեկանին ունեցած էր Ապտիւլ-Համիտը զահրնկէց ընող յեղափոխութեան մէջ, զայն բնականաբար կը մղէր ինքզինքը Պոնփաուի հետ բաղդատելու, եւ քանի-քանի անգամներ ինծի խոստովանեցաւ որ՝ ինքզինքը «մեծ ապագայի մը կոչուած» կը նկատէր: Կը սնուցանէր հաւատքը թէ՛ երկնային առաքելութիւն ստացած էր

Թիւրքիայի փառքը վերակենդանացնելու եւ ինքն իսկ ըլլալու թիկդադորը: Ճիշդ է որ, ինչպէս վերը ըսի, իր արտաքինը փափուկ եւ գրեթէ կանացի բան մը ունէր: Կը պատկանէր մարդերու այն տիպարին, զոր Ամերիկայի մէջ երբեմն կը կոչեն «սիրտերու դահիճ» անունով եւ կ'ինները զինքը ընթացիկ կերպով կ'որակէին «անդիմադրելի»: Ոչ մէկ խորշում չէր ակօսեր իր դէմքը, ճշմարիտ դիմակ. որ չէր մատնէր ոչ իր յուզումները, ոչ իր մտածումները. միշտ խաղաղ էր. սառնային. անխուով: Բայց վստահարար չունէր նախօլէտնի թափանցողութեան կարողութիւնը, ինչ որ ապացուցուց այն շարժումով՝ որով գերագոյն իշխանութիւնը ձեռք անցուց, ինչպէս նաեւ կանուխէն իր նակատագրերը միացնելով Գերմանիայի ճակատագիրին:

Տարիներէ ի վեր, իր համակրութիւնները հակած էին Բայզէրին: Գերմանական Կայսրութիւնը, անոր բանակը եւ նաւատորմիդը, անոր լեզուն, անոր միապետական կառավարութիւնը, վերջապէս ամէն բան, նակատագրական հմայք մը գործեցին թիւրք ռամկավարութեան այս հիմնադիրին վրայ: Ապտուլ-Համիտի անկումին ատեն, էնվէր պաշտօնով Պերլին կը գտնուէր, ուր Բայզէրը, որ անոր մէջ անմիջապէս ճանչցած էր՝ Արեւելքի մէջ իր ծրագիրներուն ուժ տալու կարող գործիք մը, զանազան կերպերով կ'ապուեցաւ անոր: Ան երկար ատեն Պերլին ապրեցաւ, զինուորական կցորդի հանգամանքով, ինչ որ զինքը ալ աւելի մօտեցուց Գերմանիայի, այնպէս որ երբ էնվէր վերադարձաւ Պոլիս, գրեթէ աւելի Գերման էր, քան Թիւրք: Էնվէր սահուն կերպով կը խօսէր գերմաներէն լեզուն, կ'ընդօրինակէր ամէն ինչ որ սովորական էր Սփրէի ափունքներուն վրայ, մինչեւ պիտերուն ծայրերը թեթեւօրէն վերասլացիկ ոլորելով. մէկ խօսքով, բրուսիականութիւնը անոր տիրած էր ամբողջովին:

Երբ պատերազմական նախարար եղաւ, Վանկէնհայմ զայն շոյեց, շողմեց, զուարճացաւ անոր երիտասարդական փառատենչութիւններով եւ առանց որեւէ կասկածի, պարտաւորուեցաւ անոր խոստանալ Գերմանիայի բացարձակ աջակցութիւնը՝ այդ փառասիրութիւնները իրականացնելու համար: Ս. Ե. ին կայ. անհատական տեսակցութիւններու մէջ, էնվէր չէր ծածկեր հիացումը՝ այդ երկիրին համար: Այնպէս որ, իր պատերազմական նախարար անուանումը ճշմարտապէս գերմանական յաղթանակ մը եղաւ: Էնվէր անմիջապէս որոշեց կատարեալ եւ արմատական վերակազմութիւն չը՝ բանակին համար: Ինծի խոստովանեցաւ որ՝ այդ պաշտօնը ընդունած էր իր գործերուն մէջ ազատ ըլլալու պայմանով եւ կը յուսար ատկէ օգտուիլ: Տակաւին բանակին շար

քերուն մէջ կային մեծ թիւով սպաններ, որոնց հակումները կը թերէին աւելի դէպի հին «ռէժիմ»ը, քան դէպի Ժէօն Թիւրքերը: Ասկէ զատ, անոնց մէջէն շատերը սպաննուած նախարարին՝ Նազըմի կողմնակիցներ էին: Առանց վարանելու, էնվէր անոնցմէ երկու հարիւր վաթսուներու թիւը հատը պաշտօնանկ ըրաւ եւ անոնց տեղը դրաւ Միութիւն եւ Առաջդիմութիւն Բամիթէին որոշապէս կապակցուած Թիւրքեր եւ քանի մը Գերմաններ: Սակայն, էնվէր-Թալէադ խմբակը միշտ կը կասկածէր հակա-յեղափոխութեանէ մը, որ զիրենք պիտի տապալէր, ինչպէս իրենք պաշտօնազուրկ ըրած էին իրենց նախորդները: Քանի՛ անգամներ ինծի չեն կրկնած թէ՛ իրենց յեղափոխական յաղթանակները իրենց ստրվեցուցած էին որ՝ վճռական եւ կորովի մարդերու պզտիկ խումբի մը որչա՛փ դիւրին էր երկիրի մը ղեկավարութեանը տիրանալ: Հետեւաբար, կ'ըսէին, մտադիր չէին քանի մը սպաններու հնարաւորութիւն տալ՝ իրենց դէմ կազմակերպելու նման պէտական հարուած: Էնվէրի յանդուգն բարենորոգչութիւնը առանց Թալէադը վրդովելու տեղի չունեցաւ: Բայց երիտասարդ նախարարը անրկեցելի մնաց եւ մերժեց ետ առնել իր հրամանագիրը, թէեւ պաշտօնանկ սպաններէն մէկը՝ Շիքրի փաշա՝ Պալքաններու պատերազմին ատեն պաշտպանած ըլլար Ադրիանուպոլիսը: Ատկէ զատ, շրջաբերական մը պտուղոց ու թիւրք սպաններու մէջ, ծանուցանելով անոնց որ՝ իրմէ միայն պէտք էին առաջացում ակնկալել, ինչ որ սակայն պիտի ստանային միայն՝ Ժէօն Թիւրք քաղաքականութեան միանալով:

Այսպէս, օսմանեան բանակին բրուսիականացումը սկսաւ էնվէրի կողմէ հրամանագրուած միջոցներով, թէեւ Թալէադ, իր պաշտօնակիցը, այդ մասին երբեք նոյնչափ եռանդոտ չեղաւ: Թալէադ երբեք միտքէ չէր անցըներ Գերմանիայի խաղալիքը ըլլալ, եւ է՛ն առաջ կ'աշխատէր Բամիթէին եւ ինքզինքին համար. բայց չէր կրնար իր ծրագիրները իրականացնել՝ առանց բանակին օժանդակութեանը, եւ ատոր համար է որ՝ Պատերազմական նախարարութեան պաշտօնին բարձրացուց էնվէրը, որ տարիներով իր ամէնէն մտերիմ ընկերը եղած էր Բամիթէին քաղաքականութեանը մէջ: Որովհետեւ իրեն պէտք էր զօրաւոր բանակ մը, այդ նպատակով ան դարձաւ Գերմանիայի կողմը, որ իր կարծիքով կարող էր իրեն օժանդակութիւն ընծայել: 1912ի վերջերուն մօտ, Վանկէնհայմի հետ կարգադրութիւն ըրաւ որ՝ Բայզէրը զինուորական պատգամաւորութիւն մը դրկէ՝ Թիւրք բանակը վերակազմելու համար: Ինծի խոստովանեցաւ որ՝ այդ օժանդակութիւնը խնդրելով, կը նպաստաւորուէր Գերմանիայէն,

թէև Գերմանիա ընդհակառակը կը կարծէր որ՝ ինք պատուիրակութեան ձեռքին տակ գործիք մը պիտի ըլլար միայն: Կատարելապէս ըմբռնեց այդ տեսակ բարեկարգութեան մը վտանգները: Երեսփոխան մը՝ որ 1914 Յունվարին իրեն հետ խորհրդակցեցաւ կացութեան վրայ, իրենց տեսակցութեան մասին ինծի հաղորդեց կարգ մը մանրամասնութիւններ, որոնք կը ցուցնեն թէ ինչ կ'անցնէր այն ատեն Նախարարին միտքէն:

— Ինչո՞ւ երկիրին ղեկավարութիւնը կը յանձնէր Գերմանիայի, կը հարցնէ երեսփոխանը, ակնարկելով զինուորական պատգամաւորութեան: Տեղեկութիւն չունի՞ք որ Գերմանիա ծրագրած է Թիւրքիան զաղթավայրի մը վերածել, — ուրիշ եգիպտոս մը:

— Շատ լաւ գիտնիր ստիկա, կը պատասխանէ Թալէադ, բայց գիտնա՞նք նաև որ՝ անկարող ենք՝ մեր աղբիւրներուն ապաւինած՝ վերականգնելու Հայրենիքը: Հետեւաբար, պիտի օգտուինք այն մասնագիտական եւ գործնական ուսուցումներէն՝ զորս Գերմանները կրնան մեզի ընծայել: Մենք անոնցմէ պիտի խնդրենք մեզի օժանդակել՝ ազգը վերակազմելու եւ պաշտպանելու, մինչև որ մենք կարող ըլլանք մենք իսկ կառավարել զայն, եւ այն ատեն քսանըջորս ժամուան մէջ անոնց երթաք-բարով պիտի ըսննք եւ շնորհակալ պիտի ըլլանք [sic]:

Յայտնի էր որ՝ թիւրք բանակին նիւթական կացութիւնը օտար օժանդակութեան մը պահանջքը կը զգացնէր, եւ բանակը իմ աչքիս կը խորհրդանշէր բովանդակ Կայսրութեան կացութիւնը, որուն մէջ կը գտնուէր Գերմաններուն գալէն առաջ: Երբ իմ առաջին ընդունելութեանս հրաւերները ցրուեցի, բազմաթիւ թիւրք սպաներ ինձմէ արտօնութիւն խնդրեցին երեկոյթի զգեստով ներկայ ըլլալ անոր, ըսելով որ համազգեստ զնելու կամ վարձելու միջոցէ զուրկ էին. երեքուկէս ամիսէ իվեր անոնց վճարած չէին իրենց թօշակը. եւ որովհետեւ Եպարքոսը՝ վայելչութեան բժախնդիբ ըլլալուն՝ զինուորական զգեստին համար կը պնդէր, այդ սպաներէն շատերը պարտաւորուեցան չմասնակցիլ: Գրեթէ այդ շրջանին, գերման նոր պատգամաւորութիւնը խնդրեց երկրորդ զօրաբանակի հրամանատարէն՝ նորագիրներուն կատարել տալ կանոնագիրով նախատեսուած զօրաշարժները, եւ հրամանատարը պատասխանեց թէ՛ ատիկա անկարելի էր. որովհետեւ իր զինուորները կօշիկ չունէին!

Սակայն կը յամառիմ կարծել որ՝ Թալէադ, պինդգլուխ եւ նենգամիտ՝ ինչպէս կողքէն յայտնուեցաւ՝ Պերլինի հաճոյակատար գործիքը չէր: Ատոր ապացոյցը ունեցայ միջադէպի մը մէջ, որուն ևս ալ խառնուեցայ: Մինչև հոս ոչինչ չըսի Միաց.-Նահանգներու

դերին մասին՝ հանդէպ Թիւրքիայի եւ մեծ տէրութիւններու յարաբերութիւններուն: Իրաւ է որ՝ մենք տնտեսական կարեւոր կապակցութիւններ չունէինք: Թիւրքերը մեզ կը նկատէին գաղափարապաշտներու եւ այլասէրներու ժողովուրդ մը, զուտ մարդասիրական նպատակի մը համար միխոններ վատնող, ինչպէս սքանչելի վարժարաններ շինել իրենց երկիրին մէջ, ինչ որ իրենց զարմացում եւ թերեւս հիացում կը պատճառէր: Անոնք մեզ կը սիրէին եւ մեր մէջ կը տեսնէին իրենց միակ անկեղծ բարեկամները: Բայց Թիւրքիայի մէջ մեր շահերը աննշան էին: Ճիշդ է որ՝ «Standard Oil Company»-ն մեծ գործեր կը կատարէր. Սինկէր Ընկերութիւնը կարի մեքենաներ կը ծախէր Հայերուն եւ Յոյներուն: Մենք ալ՝ կը գնէինք իրենց ծխախոտը, գորգերը եւ կը ժողվէինք մարուխի տունկերը: Ասոնց մէջ կը սահմանափակուէին մեր առեւտրական յարաբերութիւնները. մինչդեռ ամէնքը քանի մը «միսիոնար»ներ եւ ուսուցիչներ կը կազմէին՝ մեր իրական շփումի կապերը՝ բնիկներուն հետ: Անոնք գիտէին որ՝ մենք դիտաւորութիւն չունէինք իրենց երկիրը պատառելու կամ Պալքաններու քաղաքականութեան միջամտելու, իրողութիւն մը՝ որ անշուշտ կրնայ բացատրել թէ՛ Թալէադ ինչու այնչափ ճշատորէն կը խորհրդակցէր ինծի հետ՝ իր երկիրին կառավարութեան մասին: Իր տեսակցութիւններուն միջոցին, ես յաճախ փափաք յայտնած էի ծառայութիւն մատուցանել, այնպէս որ ինք եւ Դահլիճին անդամներէն ոմանք սովորութիւն ըրին իմ կարծիքիս դիմելու: Իմ ժամանումէս քիչ ետքը, Պոլիսի Ամերիկեան Առեւտրական Սենեակին մէջ ճառ մը արտասանեցի, ներկայութեանը Թալէադի, ձէմալի եւ ուրիշ ազդեցիկ պետերու: Անոնց ցուցուցի թէ՛ Թիւրքիայի տնտեսական կացութիւնը որչափ ետամնաց էր եւ իրենց խորհուրդ տուի զայն բարւոքելու համար գործածել այնչափ կորով, որչափ յարատեւութիւն: Յետոյ, քաղաքային պատերազմէ ետքի Ամերիկայի մէկ համադրական պատկերը պարզեցի, եւ իրենց երկիրին հետ բաղդատեցի մեր աւերուած Հարաւի Պետութիւնները. վերջապէս, պատմեցի թէ՛ ինչպէս աշխատութեան նուիրուած էինք եւ միայն մեր ձեռներէցութիւնովը մեր երկիրը կամաց-կամաց հասցուցած էինք ներկայի բարգաւաճութեան: Իմ ճառս թուեցաւ իրենց վրայ խոր տպաւորութիւն մը գործել, մանաւանդ երբ յայտարարեցի որ՝ քաղաքային պատերազմէն ետքը, Միաց.-Նահանգները արտասահմանէն հսկայ փոխառութիւններ կնքած էին եւ աշխարհի ամէն մասերէն զաղթողներ քաշած էին: Թալէադ թուեցաւ նոր զաղափար մը քաղել իմ ցուցումներէս: Ուրեմն անկարելի չպիտի ըլլար որ՝ Միաց.-Նահանգ-

նենը կարենային իրեն հայթայթել այն նիւթական աջակցութիւնը՝ զոր եւրոպայի մէջ փնտռած էր : Ես արդէն առաջարկած էի որ՝ ամերիկացի փորձագէտ մը ղրկէին , ուսումնասիրելու համար թիւրք ելեւմուտքը եւ այդ նպատակով ակնարկութիւն ըրած էի Նիւ-Եօրքի Մր. Հէնրի Պուլէէռի, գաղափար՝ զոր շատ նպաստաւոր կերպով ողջունեցին Թիւրքերը, որովհետեւ , այդ շրջանին, դրամի ամենամեծ կարօտութիւն ունէին : Ֆրանսա տարիներով անոնց դրամ հայթայթած էր, եւ 1914ի գարունին , իր գլխաւոր սեղանաւորները կը բանակցէին փոխատուութեան մը պայմաններուն վրայ : Գերմանիա ալ անոնց օգնած էր, բայց այդ պահուն, Պերլինի Սակարանի զինները՝ երբև թող չէին տար իրենց այդ կողմէն բաւականաչափ օժանդակութիւն մը յուսալ :

Վերջապէս, 1913 Գեկտեմբերի վերջերը, Պուսթանի Էֆէնտի, քրիստոնեայ արար մը եւ սուեւտրական ու երկրագործական նախարար , որ սահուն կերպով անգլիերէն կը խօսէր (1893ին, Շիքակօի Տիեզերական Ցուցահանդէսին՝ Թիւրքիայի ընդհանուր Պատուիրակը եղած էր) եկաւ զիս տեսնելի ու խորհուրդ հարցուց Ամերիկայի մէջ փոխառութեան մը մասին : Ինծի հարցուց թէ՛ կը ճանչնայի՞ ելեւմտագէտներ՝ որոնք թիւրք ելեւմուտքը վերակազմելու ամբողջ պատասխանատուութիւնը ստանձնէին : Իր աղերսը տազնապի ճշմարիտ աղաղակ մըն էր, որմէ խորապէս յուզուեցայ, ինչպէս որ գրեցի ատիկա օրագիրիս մէջ . «կարծեմ վերջին ճարերնին հատած է» :

Արդ. վեց շաբաթէ իվեր է որ եկած էի եւ անշուշտ զուրկ էի ծանօթութիւններէ՝ որպէսզի այսչափ կարեւոր գործ մը յանձնարարէի ամերիկեան սեղանաւորներու : Հետեւաբար, առարկեցի խօսակիցիս որ՝ իմ առաջարկս Նիւ-Եօրքի մէջ յաջողութեան հաւանականութիւն չպիտի ունենար , եթէ հիմնուած չըլլար Թիւրքիայի նիւթական աղբիւրներուն մասին խոր ծանօթութեան մը վրայ :

Թալէադ քանի մը օր ետքը եկաւ զիս տեսնել եւ Կայսրութեան մէջ այցելութիւն մը կատարելու եւ կացութիւնը ինքս ուսումնասիրելու գաղափարը թելադրեց ինծի : Ատկէ զատ, ինծի հարցուց թէ՛ չպիտի՞ կրնայի իրենց համար դիւրացնել ժամանակաւոր փոխառութիւն մը, որ կարող ընէր զիրենք զօր [լեհիմ] կատարելու, որովհետեւ, կ'ըսէր, թիւրք գանձօր դատարկ էր եւ 5,000,000 տօլարով պիտի գոհանային : Ապահովուցուցի զինքը ոչ պիտի զբաղէի ատով եւ իր փափաքին համեմատ, նոյն ատեւ պիտի քննայցելէի երկիրը, հաւաքելու համար ամերիկացի դրամատէրները շահագրգռել կրցող բոլոր տեղեկութիւնները :

Յետոյ, կառավարութեանս պաշտօնական հաւանութիւնովը, գրեցի քեռորդիս եւ ընկերիս Մր. Ռօպրդ-Ի. Սայմընի, խնդրելով իրմէ Նիւ-Եօրքի գանազան ընկերութիւններու եւ դրամատուներու մօտ հողը շօշափել, կարճ պայմանաժամով աջակցական փոխատուութիւն մը ընկելու համար Թիւրքիայի : Բայց Մր. Սայմընի հետազօտութիւնները շուտով յայտնեցին որ՝ ձեռնարկը չէր թուեր հրապուրել Ուօլ Սթրիթի ժողովը : Սակայն կ'աւելցնէր որ՝ Մր. Ք.-Ք.- Կ. Պիլինկս [Billings] շահագրգռուելի թուած էր այդ գործով, եւ եթէ փափաքէի, իր զբօսանաւով մինչեւ հոս պիտի գար այդ մասին խորհրդակցելու համար թիւրք Դահլիճին եւ ինծի հետ : Քանի մը օր ետքը, Մր. Պիլինկս նաև կը նստէր դէպի Պոլիս :

Իր մօտաւոր ժամանումին լուրը արագօրէն տարածուած էր մայրաքաղաքին մէջ, եւ այն մասնայատուկ պարագան որ՝ իր սեփական զբօսանաւովը կու գար, կը թուէր աւելի՞ բարձրացնել այս դէպքին կարեւորութիւնը եւ շուքը : Ասկէ զատ, այն գաղափարը թէ՛ ամերիկացի միլիտաւտէր մը տրամադիր էր թրքական սպառած գանձը վերականգնելու, եւ թէ՛ այդ օժանդակութիւնը առաջին քայլ մըն էր դէպի ելեւմտական կացութեան վերակազմութիւնը՝ Նիւ-Եօրքի դրամատէրներու միջոցով. օտար դեսպանատուներու մէջ ունեցաւ նշանակելի անդրադարձում մը : Լուրը այնչափ շուտով տարածուեցաւ որ՝ ճիշդը ըսելու համար՝ շատ կասկածեցայ թէ՛ թիւրք Դահլիճը ատոր քիչ մը պատասխանատու էր, կասկած՝ որ սակայն հաստատուեցաւ : Մահում Բաբունապետին կողմէ իմ մօտ կատարուած դիմումով մը. ան յայտնեց թէ՛ ինծի կը ներկայանար Թալէադի անունով :

— Զրոյց կը շրջի թէ, ըսաւ ինծի, Ամերիկացիները փոխատուութիւն պիտի ընեն Թիւրքիայի եւ Թալէադ շատ գոհ էր որ՝ դուք ալ այդ լուրը հերքելու փորձ չէք ընել :

Վանկէնհայմ ալ, յայտնեց գրեթէ հիւանդագին հետաքրքրութիւն մը. այն իրողութիւնը որ՝ Ամերիկա դրամական օգնութեան պիտի փութար թիւրք Կայսրութեան, ընաւ չէր հաշուեր իր ծրագիրներուն հետ, որովհետեւ իր աչքին՝ ներկիրին աղքատութիւնը թանկագին միջոց մըն էր՝ զայն Գերմանիայի բազուկներուն մէջ նետելու : Իր այցելութիւններէն մէկուն միջոցին, անոր ցուցուցի նկարներու զիրք մը, որ կը պատկերացնէր Մր. Պիլինկսի ստացուածքները, հաւաքածոները եւ ձիանները. ամբողջութիւնը թուեցաւ զայն բուռն կերպով ցնցել, ոչ միայն ձիերը (ինքն ալ վաստակաւոր ձիավարժ մըն էր), այլ նաեւ հայրենակիցիս հսկայ հարստութեան ուրիշ ապացոյցներուն իւրաքանչիւրը : Յաջորդող օրերուն, իմ աշխատանոցիս մէջ տեղի ունեցաւ տողանցք մը

դեպքաններու եւ նախարարներու, որոնք պատկառանքով ինձմէ կը խնդրէին այդ համբաւաւոր գիրքը տեսնել!

Մր. Պիլինկսի մօտենալուն, Թալէադ սկսաւ ընդունելութեան ծրագիրներ մշակել, ընթրիքի, ճաշի եւ ընդունելութեան հրաւիրուելիք անձերուն մասին իմ կարծիքս ուզելով: Սովորականին համեմատ, Վանկէնհայմ ամէնքը կանխելու փութաց, ինձմէ խնդրելով որ իմ հիւրիս ցամաք ելած օրը իսկ՝ զայն ճաշի ունենայ, որովհետեւ չէր կրնար ներկայ ըլլալ իրիկուան կազմակերպուած ընթրիքին, այնպէս որ՝ միւս դիւանագէտներէն ժամեր առաջ ծանօթացաւ Մր. Պիլինկսի: Այս վերջինը անկեղծապէս խոստովանեցաւ անոր որ՝ Թիւրքիայով շատ կը շահագրգռուէր եւ շատ կարելի էր որ՝ յանձնառու ըլլար խնդիրի առարկայ փոխատուութեան:

Իրիկունը, Մր. Պիլինկսի եւ իր բարեկամներուն պատիւին ընթրիք մը տուինք՝ ընթրիք, որուն ներկայ էին Թիւրք Դահլիճին բոլոր ազդեցիկ անդամները: Մենք, Թալէադը, Մր. Պէլինկսը եւ ես, նախապէս երկարօրէն խօսած էինք այս փոխառութեան մասին, եւ այդ ատեն է որ նախարարը մեզի տեղեկացուց թէ՛ Փրանսացի սեղանաւորները վերջին քսանչորս ժամուան մէջ ընդունած էին Թրքական պայմանները եւ թէ հետեւաբար իր կառավարութիւնը ներկային ամերիկեան դրամի ո՛չ մէկ կարօտութիւն չունէր: Թալէադ Մր. Պիլինկսը խեղդեց մեծարանքներով, անոր յայտնելով իր երախտագիտութիւնը եւ շուայելով իր շնորհակալութիւնները, որոնք, ճիշդը ըսելու համար, կրնային անկեղծ ըլլալ, որովհետեւ միլիառատէրին զալը վերջապէս ժէօն Թիւրք Դահլիճին առիթ տուած էր՝ ֆրանսացի դրամատէրներու հետ իր բանակցութիւնները յաջողցնելու:

Ասկէ զատ, իր երախտագիտութիւնը արտայայտեց տարօրինակ կերպով մըն ալ: Էնվէր, Թալէադէ ետքը՝ նախարարական նորհուրդին ամէնէն ազդեցիկ անդամը, իր ամուսնութիւնը կը կատարէր՝ երբ հասաւ Մր. Պիլինկս, որովհետեւ Էնվէր ա՛յնչափ տիրած էր Թիւրք ընկերութեան որ, հակառակ իր խոնարհ ծագումին, որուն վրայ խօսեցայ այլուր, կայսերական գերզաստանէ իշխանուհիի մը հետ կ'ամուսնանար: Այս երկիրին մէջ, ամուսնութիւն մը պզտիկ գործ մը չէ եւ կը տեսէ երկու-երեք օր: Ամերիկեան Դեպքանատունը տրուած սեղանին յաջորդ օրը, Թալէադ մեզ ամէնքս, Պիլինկսը եւ իր հետեւորդները ճաշի հրաւիրեց Սէնքլր տ'Օռիանի մէջ եւ պնդեց որ Էնվէր ներկայ ըլլայ ընդունելութեան: Իրաւ ալ Էնվէր եկաւ ճաշին. մինչեւ վերջը լսեց բոլոր ճառերը. յետոյ վերադարձաւ իր հարսանեկան հանդէսին:

Այն համոզումը ունիմ որ՝ Թալէադի աչքին՝ Պիլինկսի այցելութիւնը մէկ դրուագն էր միայն իրենց ապագայ յարաբերութիւններուն. իրա՛ւ ալ, եթէ այս խնդիրին առիթով վերադարձ մը ընեմ, յստակօրէն կը տեսնեմ որ՝ Թալէադ կը ջանար փրկել երկիրը եւ աչքէ չէր հեռացնել ատոր մէջ Միաց.-Նահանգներուն կողմէ օժանդակուելու յոյսը: Յաճախ կը խօսէր ինձի Մր. «Beelings»ի մասին, ինչպէս կը կոչէր զայն, եւ նոյն իսկ, Թիւրքիայի՝ Ֆրանսայէն եւ Անգլիայէն խզուելէն եւ Դերմանիայի հարկատուն դառնալէն ետքը, կը սիրէր ոգեկոչել այդ տեսակցութեան յիշատակը. Թերեւս մեր երկիրը կը նկատէր՝ դրամական գերագոյն ապաստանարան մը՝ այն պարագային երբ պիտի յաջողէր Դերմանները Թիւրքիայէն վտարելու իր ծրագիրը իրականացնել: Ոչ նուազ համոզուած եմ որ՝ այդ հեռանկարը զինքը քաջալերեց՝ պատերազմի ընթացքին ինձի մատուցանելու բազմաթիւ ծառայութիւններ, զորս այլապէս չպիտի մատուցանելու երբք: «Մր. Beelingsի յիշեցուցէ՛ք զիս», եղան զրեթէ իր վերջին խօսքերը, երբ մեկնեցայ Պոլիսէն:

Այսպէս, զբօսանաւով այդ այցելութիւնը, որ ան ատեն կատակերգական կողմեր ունեցաւ, ետքէն, վստա՛հ եմ ատոր, բազմաթիւ մարդկային կեանքեր փրկեց անօթութիւնէն եւ ջարդէն:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՔԱՅՋԷՐԻՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

ՎԱՆԿԵՆԼԱՅՄ ԿԸՆԴԻԻՄԱՆԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՌԱԶՄԱՆԱԻՐՈՒՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԾԱԽՈՒԵԼՈՒՆ

1914ին, Գերմանները արդէն ամրապէս հաստատած էին իրենց տիրապետութիւնը Քիւրքիայի վրայ: Լիման ֆօն Չանտէրս, որ հասած էր 1913 Դեկտեմբերին, բանակին մէջ գերակշիռ ազդեցութիւն մը կը վայելէր: Սկիզբները իր անուանումը մասնաւորաբար թշնամական զգացումներ չարթնցուց, որովհետեւ նախապէս ուրիշ գերման պատուիրակութիւններ կանչուած էին Քիւրքիա, բանակը կրթելու համար, գլխաւորաբար ֆօն տէր Կօյցի պատուիրակութիւնը. նոյնպէս անգլիական ծովային պատուիրակութիւն մը, հրամանատարութիւնով ծովակալ Լիւփըսի, տքնատանջօրէն կը ջանար վերակազմելու օսմանեան նաւատորմիդը: Սակայն, շուտով նշմարեցինք որ՝ ֆօն Չանտէրսի «մանտա»ն բոլորովին ուրիշ էր:

Իրաւ ալ, Զօրավարին հասնելէն իսկ առաջ, ծանուցուեցաւ որ՝ ան պիտի ստանձնէր Քիւրք առաջին զօրաբանակին հրամանատարութիւնը եւ թէ՛ զօրավար Պրօնսարդ տը Շնէլէնտօրֆ սպայակոյտի պետ պիտի ըլլար: Այս անուանումները ուրիշ բան չէին նշանակեր, բայց եթէ Քայզերին ծրագիրներուն յաջողութիւնը. Քիւրք բանակը իր բանակներուն կցել. իբր ապացոյց ֆօն Չանտէրսի պարտականութենէն անբաժան իշխանութեանը՝ ըսենք որ՝ առաջին զօրաբանակը գործնականապէս Պոլսի վերաւոնսչուութիւնը կը կատարէր: Այս փոփոխութիւնները կը ցուցնէին որ՝ էնվէր Փաշա ո՛ր աստիճան նուաճուած էր բրուսիական «սիսթէմ»էն: Համաձայնութեան ներկայացուցիչները բնականաբար չէին կրնար հանդուրժել Գերմանիայի կողմէ նման ոտնձգութեան: Բրիտանական, Ֆրանսական եւ ռուսական ղեսպանները անմիջապէս գացին Եպարքոսին եւ բողոքեցին, աւելի բուռնօրէն քան քաղաքավարօրէն, ֆօն Չանտէրսի այդ տեսակ պաշտօնի մը բարձրացումին դէմ: Նախարարը սովորականին համեմատ թոթոզեց եւ կմկմաց. ձեւացուց որ խնդիրի առարկայ իրողութիւնը որեւէ կարեւորութիւն չունէր, բայց վերջապէս ֆօն Չանտէրսէն

ետ առաւ առաջին զօրաբանակի իր պաշտօնը, անոր յանձնելով ընդհանուր քննիչի պաշտօնը: Ասիկա կացութիւնը չի բարեոքեց բնաւ, որովհետեւ այս նոր պաշտօնատուութիւնը իրականութեան մէջ աւելի իշխանութիւն կու տար պաշտօնակիրին, քան նախկինը:

Այսպէս, 1914 Յունվարին, Մեծ Պատերազմին պայթելէն եօթը ամիս առաջ, Գերմանիա Քիւրք բանակին մէջ տէր էր հետեւեալ դիրքին.— իր զօրավարներէն մէկը Սպայակոյտին պետ էր, ուրիշ մը ընդհանուր քննիչ, քսանեակ սպաներ ամենաբարձր կարեւորութիւնով հրամանատարութիւններ ստացած էին եւ Քիւրք քաղաքագէտը, էնվէր Պէյ, այն ատեն արդէն Գերմանիայի բացառապաշտ պաշտպան, պատերազմական նախարար էր:

Այս դիւանագիտական յաղթանակը շահելէ ետքը, Վանկէնհայմ արծակուրդ մը ստացաւ, որուն անշուշտ արդարապէս արժանի էր, եւ ռուսական ղեսպան Կիրս ալ արծակուրդով մեկնեցաւ: Պառոնուհի Վանկէնհայմ ինծի բացատրեց — որովհետեւ այդ ատեն ատանկ նրբութիւններու չէի թափանցեր! այդ բացակայութիւններուն իրական նշանակութիւնը: «Իմ ամուսինիս բացակայութիւնը, ըսաւ, կ'ապացուցանէ որ՝ Գերմանիայի արտաքին գործերու նախարարութեան մէջ կը խորհին որ՝ ֆօն Չանտէրսի դէպքը փակուած է, փակուած՝ գերմանական յաղթանակով մը: Կիրսի արծակուրդը, շարունակեց. կը ցուցնէ որ Թուսիա կը մերժէ ընդունիլ այդ տեսակէտը եւ թէ՛ իր մասին «ֆօն Չանտէրս» հարցը վերջացած չէ»:

Կը յիշեմ իմ ընտանիքիս գրած ըլլալս թէ՛ Պալքաններու այդ խորհրդաւոր դիւանագիտութեան մէջ՝ ազգերը իրարու հետ կը խօսէին գործքերով եւ ոչ թէ՛ բառերով, եւ իբր պաշտպանողական ապացոյց՝ յիշեցի Պառոնուհի Վանկէնհայմի մեկնութիւնը, այդ դիւանագիտական արծակուրդներուն մասին:

Միջադէպ մը, որ տեղի ունեցաւ իր իսկ տունին մէջ, մեզի ամէնուս ցուցուց այն կարեւորութիւնը՝ զոր ֆօն Չանտէրս կ'ընծայէր իր զինուորական պաշտօնին:

Փետրվար 18ին, առաջին պաշտօնական սեղանս տուի: Զօրավար ֆօն Չանտէրս եւ իր երկու աղջիկները հրաւիրեալներուն մէջ էին. զօրավարը սեղանի դաւաջին եղաւ իմ Ռըթ աղջկանս, որ շատ հանելի երեկոյթ մը չանցուց, որովհետեւ Մարաշխտը, սեղմուած իր պերճաշուք համազգեստին մէջ, կուրծքը շքանշաններով աստեղազարդուած, ամբողջ ճաշի միջոցին բա՛ռ մը չարտասանեց: Դժնէ դէմքով մը՝ լուռ ու մունջ կերաւ, եւ խօսակցութիւն մը բանալու համար աղջկանս բոլոր ջանքերը ուրիշ բանի չի յանգեցան, բայց եթէ ատեն-ատեն անկէ խլելու նեղսիրտ

շեշտով արտաբերուած միավանկ մը: Իր վարմունքը շիացած տղու մը վարմունքը եղաւ: Ճաշէն ետքը, գերման գործակատար ֆօն Ունիթուս, եկաւ զիս տեսնել: Չափազանց գերագրգռուած կը թուէր եւ քանի մը վայրկեաններ անցան մինչեւ որ բաւական հանդարտութիւն վերստացաւ՝ իր պաշտօնը կատարելու համար:

— Սոսկալի սխալ մը գործած էք, Պրն. Դեսպան, ըսաւ ինձի:

— Ո՛րն է ադ, հարցուցի, բռնազբօսիկ կերպով շփոթած:

— Չափազանց վիրաւորեցիք Մարաջախտ ֆօն Չանտէրսը, օտար Դեսպաններու աստիճանէն վար աթոռ մը յատկացնելով իրեն: Ան Բայզէրին անձնական ներկայացուցիչն է, եւ, իբր ադ, դեսպաններուն հաւասար ձեւով պէտք է վարուիլ իրեն հետ: Դահլիճին անդամներուն եւ օտար Դեսպաններուն վրայ գերադասութիւն պէտք էր ունենալ ան:

Այսպէս, նոյն ինքն կայսեր նախատինք մը ըրած էի ես! Ա՛ս էր ֆօն Չանտէրսի կոշտ վարմունքին բացատրութիւնը: Բարեբաղդաբար ապահով դիրքի մէջ էի ես: Սեղանին կարգը ես չէի կարգադրած. հիւրերուս ցանկը ղրկած էի աւստրիական դեսպան եւ դիւանագիտական մարմինին երէց-անդամ մարի ֆալլափիլինիի, որ ասոր նման փափուկ խնդիրներու համար Պոլիսի մէջ անվիճելի հեղինակութիւն մըն էր: Մարքին թերթը ինձի վերադարձուցած էր, իւրաքանչիւր անուն՝ կարեւորութեան աստիճանի նախնամտ՝ կարմիր մատիտով նշանակուած. 1, 2, 3, 4, 5 եւ այլն: Տակաւին բովս է այդ վաւերաթուղթը, Աւստրիայի Դեսպանին կողմէ ինձի ղրկուած ձեւովը եւ զօրավար ֆօն Չանտէրսի անունը կը կրէ «13» թիւը: Կ'ընդունիմ սակայն որ «13»-ը թիւը զօրավարը սեղանին շատ ծայրը կը գետնողէր:

Կացութիւնը պարզեցի ֆօն Ունիթուսի, եւ Աւստրիայի Դեսպանատունի խորհրդական Պրն. Փանֆիլիէն, որ սեղանին ներկայ էր, խնդրեցի իր վշտացած պաշտօնակիցին ներկայանալ եւ բացատրել իրեն այս բոլորը: Աւստրիացիները եւ Դերմանները դաշնակից ըլլալով, յայտնի էր որ վիրաւորանքը (եթէ վիրաւորանք կար) ակամայ էր: Փանֆիլի բացատրեց որ՝ խնդիրը զինքը շփոթեցուցած ըլլալով, ինք զայն մարքին դատողութեանը յանձնած էր, եւ ասանկով կ'երեւար որ՝ 13 թիւը նոյն ինքն Դեսպանին կողմէ նշանակուած էր, ֆօն Չանտէրսի աստիճանը յատկորոշելու համար:

Միջադէպը հող չի մնաց, որովհետեւ ետքէն Վանկէնհայմ տեսնել եկաւ ֆալլափիլինին եւ խնդիրը ծեծեց խստօրէն: «Եթէ

Լիման ֆօն Չանտէրս Բայզէրը կը ներկայացնէ, զո՞վ կը ներկայացնէք դուք», բողոքեց Փալլափիլինի: (Պատճառաբանութիւնը իրաւացի էր, որովհետեւ Դեսպանը միշտ իր վեհապետին միւս ետը նկատուած էր): «Սովորութիւն չէ որ, շարունակեց վեհապետ մը երկու ներկայացուցիչներ ունենայ նոյն արքունիքին մէջ»:

Որովհետեւ մարքին տեղի չտուաւ, Վանկէնհայմ կացութիւնը ներկայացուց Եպարքոսին. Սախտ Հալիմ ա՛յդչափ կարեւոր վեհապետ մը պատասխանատուութիւնը ստանձնել մերժելուն համար, վեճը յղուեցաւ Նախարարական Խորհուրդին, որ հանդիսաւորապէս խորհրդակցութիւն կատարեց այս մասին եւ սա վեհապետ տուաւ. — ֆօն Չանտէրս օտար երկիրներու դեսպաններուն վրայ պէտք է գերադասութիւն ունենայ, բայց պէտք է թիւրք Դահլիճի անդամներէն ետքը գայ: Այն ատեն, օտար լիազօրները բացայայտօրէն բողոքեցին եւ յայտարարեցին որ՝ եթէ երբեք նման պարագայի մը մէջ գերադասութիւնը ֆօն Չանտէրսի տրուէր, ամէնքը խմբովին պիտի մեկնէին սեղանէն: Ո՛չ միայն ֆօն Չանտէրս չափազանց անժողովրդական դարձաւ այս միջադէպը յարուցած ըլլալուն համար, այլ միաձայնօրէն դատապարտուեցաւ իր ընթացքին ինքնակալական եւ թիկզադորական հանգամանքը: Պարզ հետեւանք. — ա՛լ երբեք զօրավարը դիւանագիտական սեղանի մը չհրաւիրուեցաւ:

Այս դէպքը բուռն կերպով շահագրգռութիւնը արթնցուց անգլիական դեսպան՝ Սըր Լուի Մալէրի: Ուրախալի է որ, կ'ըսէր, ատիկա տեղի չէր ունեցած իր սուներ, այլապէս, թերթերը ամբողջ սիւնակներ պիտի յատկացնէին Անգլիայի եւ Դերմանիայի ձգտուած յարաբերութիւններուն!

Վերջապէս, այս խնդիրը միջազգային մեծ նշանակութիւն մը ունէր: Անձնական սնափառութիւնով, ֆօն Չանտէրս պետական գաղտնիք մը մատնած էր. ան պարզ ուսուցչապետ մը չէր՝ օսմանեան զինուորական հեղինակութիւնը վերահաստատելու ղրկուած. ան ճշդապէս էր ինչ որ ըլլալ յաւակնած էր, — անձնական ներկայացուցիչը Բայզէրին, որ զայն ընտրած էր, ճիշդ ինչպէս Վանկէնհայմը, Թիւրքիայի մէջ իր կամքին գործիքը ըլլալու համար:

Ետքէն, ֆօն Չանտէրս ինձի պատմեց, այն հպարտութիւնով զոր կ'արտայայտեն գերման ազնուապետականները՝ երբ կը խօսին իրենց վեհապետին վրայ, — թէ Կայսրը իրեն հետ երկու ժամ խօսած էր այն օրը՝ երբ զինքը այդ պաշտօնին կարգած էր, եւ ուրիշ ժամ մըն ալ իբր մեկնումի պահուն, տալու համար իր վերջին հրահանգները:

Ես կառավարութեանս տեղեկացուցի ճաշին միջադէպը, իբր ցուցում այս երկիրին մէջ Գերմանիայի յարաճուն ազդեցութեանը, եւ կ'ենթադրեմ թէ՛ միւս դեսպաններն ալ իրենց կողմէնոյն բանը ըրին: Ամերիկեան զինուորական կցորդը, մաժօն ծօն Թ. Քէյլըրը, որ դէպքին վկայ եղաւ, արտասովոր նշանակութիւն մը կ'ընծայէր անոր: Այս դէպքէն ամիս մը ետքը, ինք եւ նաւապետ Մաք Գոլի, Պոլիս գտնուող ամերիկեան Սֆօրփիշն պահականաւին հրամանատարը, Գահիրէի մէջ կը ճաշէր Լօուտ Քիչնէրի հետ, մտերմական պզտիկ հաւաքոյթ, ուր կային իմ երկու հայրենակիցներս, Լօուտ Քիչնէր, իր քոյրը եւ համհարզ մը: Մաժօն Քէյլըր պատմեց խնդիրի առարկայ մանրավէպը եւ Քիչնէր չի ծածկեց իր շահագրգռուիլը.

— Ի՞նչ կը խորհիք այդ մասին, հարցուց:

— Իմ կարծիքովս, ադ կը նշանակէ որ, պատասխանեց մաժօն Քէյլըր, Մեծ Պատերազմի պահուն, Թիւրքիա հաւանօրէն Գերմանիայի դաշնակիցը պիտի ըլլայ: Եթէ ուղղակի դաշնակից չըլլայ, կը կարծեմ որ գոնէ Կովկասի մէջ զօրաշարժ պիտի կատարէ, ինչ որ զինուորական գործողութիւններու եւրոպական թատերաբեմէն երեք զօրաբանակ պիտի գբաղեցնէ:

— Ձեր կարծիքէն եմ, ըսաւ Քիչնէր, վայրկեան մը նոսածելէ ետքը:

Եւ ատկէ ետքը, բազմաթիւ ամիսներու ընթացքին, Գերմանիայի խնամակալութեանը ենթարկուած թիւրք բանակին տեսարանը դիտեցինք: Գերման սպաներ ամէն օր կը կրթէին զինուորները. այս բոլորը, այսօր համոզուած եմ ատոր, իբր նախատեսութիւն վերահաս պատերազմին:

Այն մեծ զօրահանդէսը, որ տեղի ունեցաւ Յուլիս ամիսին, փայլուն կերպով ապացուցուց ձեռք բերուած արդիւնքները: Անիկա սքանչելի ցոյց մը, խրախճանքի արարողութիւն մը եղաւ: Սուլթանը անոր ներկայ եղաւ մեծ շուքով. ան դիւրք գրաւած էր սքանչելի վրանի մը տակ, ուր պզտիկ արքունիք մը կը կազմէր, համախմբելով Եգիպտոսի նտիվը, Թիւրքիայի զահաժառանգ իշխանը, արքայազն իշխանները եւ ամբողջ դահլիճը: Այն ատեն, տեսանք որ, անցնող վեց ամիսներու ընթացքին, թիւրք բանակը կատարելապէս բրուսիականացած էր: Ինչ որ, Յունվարին, ցնցտիխուոր թշուառներու անկարգապահ զանգուած մըն էր, հիմա «սագիրու քայլ»ով զօրանցք կը կատարէր. զինուորները feldgrau հագած էին եւ նոյն իսկ սաղաւարտի ձեւով գլխանոց մը կը կրէին, որ աւարտամօրէն Գերմաններուն pickelhaubeն

[սրածայր սաղաւարտ] էր: Մարզիչ սպաները այս տեսարանին հանդէպ անսահման հպարտութիւն մը կը զգային. եւ հպարտօրէն քայլ դրոշմելով՝ սքանչելապէս զօրաշարժող ու խնամքով հազուած այս զօրախումբերուն պարզած տեսարանը՝ գովեստի արժանի յաջողութիւն մը կը կազմէր իրապէս:

Երբ Սուլթանը զիս իր վրանը կանչեց, բնականաբար շնորհաւորեցի զինքը իր զինուորներուն սքանչելի տեսքին համար: Մեծ խանդավառութիւն չի ցուցուց. պատերազմին հեռանկարը զինքը չէր գրաւեր, ըսաւ, համոզուած խաղաղասէր մը ըլլալուն:

Այս գերմանական հանդէսին մէջ զանազան ականաւոր անձնաւորութիւններու բացակայութիւնը նշմարեցի. իբրանսական, անգլիական, ռուսական, իտալական դեսպաններուն բացակայութիւնը: Պօնիառ մուտքի տասը տոմս ստացած էր, բայց զանոնք հրաւէր չէր նկատած: Վանկէնհայմ, որոշ գոհունակութիւնով մը ինծի խոստովանեցաւ որ՝ միւս դեսպանները չարացող էին եւ չէին փափաքեր տեսնել թիւրք բանակին առաջդիմութիւնները, տրուած ըլլալով մտայնութիւնը անոնց՝ որոնցմէ ծնած էին այդ յաջողութիւնները: Ես համոզուած էի որ՝ իմ պաշտօնակիցներս մերժեցին գալ, որովհետեւ չէին փափաքեր իրենց ներկայութիւնովը պատուել գերմանական հանդէս մը. եւ զանոնք զնահատեցի:

ժամանակին հետ, թիւրք քաղաքականութեան մէջ Գերմանիայի ծաւալուն միջամտութեանը ուրիշ ապացոյցներ ունեցայ:

Յունիսին, Թիւրքիայի եւ Յունաստանի միջեւ յարաբերութիւնները խզուելու մօտեցան: Լոնտոնի դաշնագիրը [30 Մայիս 1913] Քիոս եւ Միտիլի կղզիները այս վերջինին ձեռքը թողած էր: Քարտէսին վրայ նստուած պարզ ակնարկ մը պիտի բաւէ ապացուցանելու այդ կղզիներուն ռազմական կարեւորութիւնը. հաստատուած Եգէական կղզիին մէջ, ժրարթուն պահապաններու պէս, անոնք կը պաշտպանեն ծոցը եւ Իգմիրի մեծ նաւահանգիստը, եւ բացորոշապէս կը հաստատեն որ՝ Եգէական ծովով եւ Արշիպելագոսով եգերուած Իգմիրի եւ ամբողջ Փոքր-Ասիայի ծովափունքին ապահով վերատեսչութիւնը չէր կրնար զինուորական հզօր ազգի մը ձեռքէն խլուիլ, որ զանոնք տեւականօրէն գրաւած ըլլար: Այս կղզիներուն ցեղագրական պայմանները՝ այդ տեսակ վարկած մը գերազանցապէս վտանգաւոր կը դարձնեն Թիւրքիայի համար, զինուորական տեսահէտով: Անոնց բնակչութիւնը Յոյն է եւ Յոյն է Հոմբրոսի շրջանէն իվեր. Փոքր-Ասիայի ծովափն ալ նոյնպէս յունական է. Թիւրքիայի միջերկ-

րականեան ամէնէն մեծ նաւահանգիստին՝ Իզմիրի բնակութեան կէսէն տւելին, նոյնպէս Յոյն է, գերակշռութիւն, որ ճարտարարուեստի, ինչպէս նաեւ վաճանականութեան եւ մշակոյթի մէջ այնչափ ամրացած է որ՝ Օսմանցիները այս քաղաքին վրայ հասարակօրէն խօսած ատեն՝ զայն կը կոչեն. «Կեաւուր Իզմիր», «Անհաւատ Չմիւռնիա»: Նաեւ այս ժողովուրդները չէին ծածկեր իրենց յարուսը մայր-հայրենիքին. եւ թէեւ ասիական Հելլէնները ազգութիւնով անուանապէս թրքական, բայց իրենց դրամովը կ'օգնէին աթենական կառավարութեան:

Իրապէս, եզակական ծովին կղզիները եւ ցամաքի մասը կը կազմէին Եսաղարձեղի Յունաստանը (Graecia Irredenta — կցում) : Թէ ինչո՞ւ Յունաստան ստիպուած էր զանոնք ազատագրելու, ճիշդ ինչպէս վերջերս փրկած էր Կրետէն, դիւանազիտական գաղտնիք մը չէր. եթէ երբեք բանակ մը ցամաք հանէր, տարակուսելի չէր որ բնիկները զայն խանդավառութիւնով պիտի ողջունէին եւ անոր պիտի օժանդակէին:

Սակայն, այն օրէն իվեր որ Գերմանիա Փոքր-Ասիայի մէջ տարածուելու իր ծրագիրները դարձնած էր, այդ երկրամասին Յոյները բնականաբար արգելք մը կը կազմէին իր տենչանքներուն, արգելք՝ որ իբր բնական պատուէշ կը ցցուէր Պարսկական ծոցի ճամբուն վրայ, ինչպէս միւս կողմէ Սերպիան, Եւրոպայի մէջ:

Ո՞վ որ, նոյն իսկ մակերեւութային կերպով կարդացած է համագերմանական գրականութիւնը, կը ճանչնայ Գերմանիան նեղող ժողովուրդներու մասին քարոզուած մեթոքը. — պարզապէս տեղահանութիւնն է ադ : Ամբողջ ժողովուրդներու բռնի տեղափոխութիւնը, Եւրոպայի մէկ ծայրէն միւսը փոխադրուելով, ինչպէս արջառի հօտեր, տարիներէ իվեր Գերմանիայի երկրակալութեան ծրագիրներուն մաս կը կազմէր : Այս վերաբերմունքը՝ որ պատերազմի սկիզբէն իվեր կիրարկուած էր Պելճիքայի, Լեհաստանի, Սերպիայի, սկզբնաւորուած էր Հայաստանի մէջ. հոն, ինչպէս պիտի ապացուցանեմ, այդ վերաբերմունքը ամէնէն նողկալի ցոյցը եղաւ սկզբունքին իսկ, որովհետեւ Գերմանիայի դրդումովն է որ Թիւրքիա սկսաւ արտաքսել Փոքր-Ասիայի իր յոյն հպատակները: Երեք տարի ետքը, գերման ծովակալ Իւզէտօմ, որ կռուած էր Տարտանէլի մէջ, պատմեց ինձի թէ՛ Գերմանները ստիպողաբար թելադրած էին ծովեզերքէն հեռացնել այդ դժբաղդները: «Մեր պատճառը՝ էապէս ռազմական նկատողութեան մէջ կը կայանար», աւելցուց ծովակալը: Չեմ գիտեր թէ Թալէադ եւ իր ընկերակիցները տեղեմակ էին թէ՛ այդպէսով Գերմանիայի

խաղալիքը դարձած էին, բայց ամենաչնչին տարակոյս իսկ չկայ թէ՛ Գերմանիա զանոնք մշտապէս մղեց այդ գործը կատարելու:

Յաջորդող դէպքերը խորհրդանշեցին հայկական ջարդերու համար որդեգրուած դրութիւնը: Թիւրք պաշտօնատարները բառին բովանդակ նշանակութիւնովը յարձակեցան զոհերուն վրայ, անոնցմով խուճբեր կազմեցին եւ զանոնք նաւ առաջնորդեցին, առանց անոնց ժամանակ թողելու իրենց անձնական գործերը կարգադրելու եւ ջանք չընելով արգիլելու նոյն ընտանիքին անդամներուն զատուիլը: Շինուած ծրագիրն էր եզակական ծովի կղզիներուն ազգութեան մէջ տեղափոխել Յոյները. բնականաբար այդ դժբաղդները ըմբոստացան այդ վարմունքին դէմ եւ տեղի ունեցան դիպուածական ջարդեր, մասնաւորաբար Ֆօշայի մէջ, ուր յիսունէ աւելի անձեր սպանուեցան:

Թիւրքերը ատկէ զատ պահանջեցին Իզմիրի բոլոր հաստատութիւններէն ճամբել իրենց պաշտօնեաները եւ անոնց տեղ առնել Խալամներ: Ամերիկեան ուրիշ «Ֆիրմա»ներուն մէջէն, ատանկ հրահանգ ստացաւ «Սինկէր Մէնիֆէքչըրինկ Գրմփէնի»ն. եւ թէեւ իմ խնդրանքիս վրայ վաթսուն օրուան ետաձգում մը ստացաւ, բայց վերջապէս պարտաւորուեցաւ համակերպիլ: Պաշտօնական պոյֆօրսածի մը ձեռնարկուեցաւ բոլոր քրիստոնեաներուն դէմ, ինչպէս Փոքր-Ասիայի մէջ, այլ նաեւ Պոլիս, սակայն ան չկիրարկուեցաւ Հրեաներուն, որոնք միշտ աւելի ժողովրդական եղած էին Թիւրքերուն մէջ. իրաւ է որ պաշտօնեաները պահանջեցին որ ասոնք իրենց ազգութիւնը եւ գործը նշանակեն իրենց դուռներուն վրայ, հետեւեալին պէս արձանագրութիւններով. «Հրեայ Ապրահամ, դերձակ», «Հրեայ Իսաաք, կօշկակար», եւ այսպէս յաջորդաբար: Այս միջոցները բացորոշապէս կը ցուցնէին թէ՛ ո՞ր հասած էր կառավարական խառնակութիւնը, որովհետեւ ասոր մէջ մենք կը տեսնենք ազգի մը իր հպատակները փճացնելը:

Յոյներուն հանդէպ վարմունքի այս կերպը զիս ըմբոստացուց: Այդ ատեն բացարձակապէս տեղեակ չէի որ ատոր դրդիչները Գերմանները ըլլային. ես այդ վարմունքը նկատեցի Թիւրք վայրագութեան եւ ազգայնամոլութեան պարզ մէկ ցուցարարութիւնը: Այդ ատեն Թալէադը լաւ կը ճանչնայի. գրեթէ ամէն օր զայն կը տեսնէի եւ ան սովոր էր ինձի հետ գործնականապէս խորհրդակցելու միջազգային յարաբերութիւններու իւրաքանչիւր փուլին վրայ: Բուռն դիտողութիւններ ըրի Յոյներուն դէմ գործադրուած վարմունքին մասին. ըսի իրեն թէ՛ արտասահմանի մէջ այդ ընթացքները աղէտալի տպաւորութիւն մը առաջ պիտի

բերէին և թէ ատոնց հետեւանքով ամերիկեան համակրութիւնը պիտի խաթարուէր:

Թախաղ ինծի բացատրեց իր ազգային քաղաքականութիւնը: Երկիրին ծոցին մէջ, այս զանազան հատուածները միշտ դաւած են Թիւրքիայի դէմ. իր բնիկ ազգաբնակչութիւններուն թշնամութիւնովը՝ Թիւրքիա իրարու վրայ նահանգներ կորսնցուց. — Յունաստանը, Սերպիան, Ռումանիան, Պուլկարիան, Պօսնան, Հերսէքը. Եգիպտոսը եւ Տրիպոլիսը: Այսպէս, Օսմանեան Կայսրութիւնը պզտիկցաւ՝ մինչեւ անհետանալու աստիճան: «Որպէսզի մեր Հայրենիքին այս վերջին մասը ապրի, աւելցուց, մենք պէտք է ազատինք օտար ժողովուրդներէն»: «Թիւրքիան Թիւրքերուն», ա՛ս էր հիմա իր տիրական զաղափարը: Հետեւաբար, կը պահանջէր որ՝ Իզմիր եւ մերձակայ կղզիները թրքական դառնան Արդէն 40,000 Յոյներ հեռացած էին, եւ ինծմէ խնդրեց կրկին առեւտրական տաւներէն պահանջել որ միայն Թիւրքեր գործածեն: Ինծի վստահեցուց որ՝ բռնութեան եւ սպաննութիւններու վրայ խօսող պատմութիւնները խիստ չափազանցուած էին եւ թելադրեց ինծի բնիկ յանձնախումբ մը դրկել: «Այդ առաջարկը կ'ընեն չքմեղանալու համար», ըսաւ ինծի անգլիական դեսպան՝ Սըր Լուի Մալէր: Ճիշդ էր ադ, որովհետեւ այդ յանձնախումբին տեղեկագիրը իրապէս մէկ ծայրէն միւսը թրքական վարմունքին արդարացումը եղաւ:

Թիւրքիայի մէջ, Յոյները Հայերուն վրայ մեծ առաւելութիւն մը ունէին. կար յունական կառավարութիւն մը՝ որուն բնական պարտքն էր անոնց պաշտպանութիւն ընծայել: Թիւրքերը գիտէին որ՝ այդ տարագրութիւնները Յունաստանի հետ խզում առաջ պիտի բերէին. իրապէս, Թիւրքերը ատոր կը բաղձային եւ կը սպասէին: Ազգը ոգևորուած էր այն տեսակ խանդավառութիւնով մը որ՝ հանրային նուիրատուութիւններու միջոցով դրամագլուխ մը գոյացուց՝ այդ ատեն Անգլիա շինուող պրագիլիական տրեքսը մը գնելու համար: Կառավարութիւնը նոյն նաւարանին յանձնարարեց ուրիշ տրեքսը մը, ինչպէս նաեւ Ֆրանսայի ապսպրեց բազմաթիւ ընդժովեաներ եւ թորփիլարձակներ: Այս նաւային պատրաստութիւններուն նպատակը ոչ մէկուն համար զաղտնիք մը չէր Պոլիսի մէջ: Այդ զրահաւորները, կամ նոյն իսկ միայն տրեքսը՝ որ գրեթէ աւարտած էր՝ իրեն յանձնուելուն պէս, Թիւրքիա մտադիր էր յարձակիլ Յունաստանի վրայ եւ ետ առնել կղզիները: Արդիական պարզ ուզմանաւ մը, ինչպէս Սուրան Օսմանը (Թիւրքերը պրագիլիական զրահաւորին այս անունը դրած էին) պիտի կրնար դիւրաւ ոչնչացնել յունական

նաւատորմիդը եւ Եգէական Ծովին տէր պիտի ըլլար: Որովհետեւ այս հզօր զրահաւորը քանի մը ամիսէն աւարտած եւ դրկուած պիտի ըլլար, մենք կը նախատեսէինք որ յոյնեթրքական պատերազմը պիտի պայթէր աշունին: Ի՞նչ կրնար փորձել յունական նաւատորմիդը, արուած ըլլալով սպառնալիքին վերահասութիւնը:

Ա՛ս էր կացութիւնը, երբ Յունիսի սկիզբը, ընդունեցի այցելութիւնը ծովային նախարար ձէմալ փաշայի, որ թիւրք կայսրութեան մէջ գերակշռութեան տէր երեք մարդոցմէն մէկն էր: Շատ յուզուած էր եւ հազուադէպօրէն տեսած եմ մարդ մը աւելի անձկոտ՝ քան որչափ երեւցաւ ան ինծի այդ առիթով. ծայրայեղ ոգևորութիւնով մը ֆրանսերէն խօսելով թարգմանիս հետ, մօրուքը սարսուռով յուզումէն, բոլորովին ինքզինքէն ելած կը թուէր: Բաւական ֆրանսերէն գիտէի՝ հասկնալու համար ի՞նչ որ կ'ըսէր եւ այն լուրերը զորս հաղորդեց (առաջին անգամն էր որ անոնց կը ծանօթանայի) բաւականաչափ կը բացատրէին իր խռովքը: Ամերիկեան կառավարութիւնը, կ'ըսէր, ներկային կը բանակցի Յունաստանի հետ, երկու ուզմանաւի՝ Իսահօն եւ Միսիսիփիի՝ վաճառումին համար: Ինծմէ կը խնդրէր ստիպողաբար՝ միջամտել այդ տեսակ առուծախ մը արգիլելու համար: Հայցողական դիրք մը ունէր, ինծմէ խնդրելով, թախանձելով իրենց նպատին գործել: «Թիւրքերը միշտ իրենց լաւագոյն բարեկամները նկատած են Միաց.-նահանգները, շարունակեց. դուք յաճախ մեզի օգնելու ձեր փափաքը յայտնած էք եւ հիմա առիթն է ցուցնելու ձեր բարի զգացումները: Այն իրողութիւնը թէ՛ Յունաստան եւ Թիւրքիա գործնականապէս պատերազմի նախօրեակին մէջ կը գտնուին, այդ վաճառումը չէ՞տք երկիրի մը համար իրականօրէն անվայելուչ կը դառնայ: Սակայն, եթէ զնումը սոսկ առեւտրական է, Թիւրքիա ալ կը փափաքի զին առաջարկել: Մենք Յունաստանէն աւելի պիտի վճարենք», աւելցուց: Յետոյ վերջացուց թախանձելով ինծի որ՝ անմիջապէս հեռագրեմ կառավարութիւնս, գործը իրեն յանձնելով: Խոստացայ:

Յայտնապէս, Յոյները խորագիտութիւնը ունեցած էին թշնամին իր իսկ զէնքերովը զարնելու. թշնամին՝ տրեքսը ստանալուն պէս՝ Յունաստանի վրայ յարձակելու իր դիտաւորութիւնը յայտնած էր չափազանց անամօթաբար: Արդ. երկու նաւերը՝ զորս հելլենական կառավարութիւնը կ'ուզէր ձեռք բերել՝ կրնային անմիջապէս ճակատամարտիլ: Իսահօն եւ Միսիսիփիին մեզի անհրաժեշտ չէին. առաջնակարգ ուզմանաւեր չէին անոնք, բայց թրքական նաւատորմիդը Եգէական Ծովէն վտարելու չափ զօրաւոր էին: Ոչ նուազ յայտնապէս, պարզ քաղաքավարութեան համար, վերա-

հաս պատերազմը ետաձգելու մտահոգութիւնը չունէին Յոյները, մինչեւ պրազիլիական տեւեռներուն յանձնումը: Դիւրահասկնալի է որ՝ ձէմալի կողմէ յուզուած իրաւունքը ոչինչ էր: Կացութիւնը ո՛րչափ ալ սպառնական ըլլար, երկու երկիրներուն միջեւ խաղաղութիւն գոյութիւն ունէր: Հետեւաբար Թիւրքիա ո՛րչափ որ իրաւունք ունէր Պրազիլիայի կամ Անգլիայի ռազմանաւ յանձնարարելու, նոյնչափ ալ Յունաստան իրաւունք ունէր Միաց.-Նահանգներէն գնելու: ձէմալ միակ պետական-մարդը չեղաւ՝ որ ջանաց այդ վաճառումը արգելել. գերման դեսպանը ցուցուց այն շահագրգռութիւնը՝ զոր ունէր ատոր մէջ:

Խնդրի առարկայ այդ այցելութիւնէն շատ օրեր ետքը, Վանկէնհայմ եւ ես, Պոլիսի հիւսիսակողմը ձիով կը պտրտէինք բլուրներուն վրայ. Վանկէնհայմ սկսաւ խօսիլ ինձի Յոյներուն վրայ, որոնց հանդէպ խոր հակակրօթեան զգացումներ արտայայտեց. ակնարկութիւն բրաւ պատերազմի հեռանկարներուն եւ ամերիկեան նաւերու թողումին: Երկարօրէն պատճառաբանեց այս վերջին ծրագիրին առիթով, տրամաբանելով ճիշդ ձէմալին պէս, ինչ որ ինձի այն մտածումը տուաւ թէ՛ ինքն իսկ ստրվեցուցած էր անոր դասը:

— Նկատեցէք թէ ի՛նչ վտանգաւոր նախընթաց մը պիտի ստեղծէք, ըսաւ ինձի Անհնար չէ որ օր մը Միաց.-Նահանգները Թիւրքիայի գտնուածին նման կացութեան մը մէջ գտնուին: Ենթադրեցէք որ՝ Վափոնի հետ պատերազմի նախօրհակին մէջ ըլլաք եւ Անգլիա ուզէ Վափոնի տեւեռներ ծախել. Միաց.-Նահանգները ինչպէս պիտի գնահատուին այս ծրագիրը:

Եւ ինձի յայտարարութիւն մը բրաւ, որ կը բողոքակէր իր բողոքին ճշմարիտ գաղանամտածումը: Ատոր վրայ քանի՛ անգամներ խորհած եմ այս վերջին տարիներուն: Տեսարանը անջնջելի կերպով քանդակուած մնացած է միտքիս մէջ: Պեկրատի դարաւոր անտառներուն վեհափառ լուսթեանը մէջ, քով-քովի կը ձիւլարէինք: Հեռուէն, Սեւ ծովը կը փալիլար մայրամուտ արևի մը կրակին տակ: Յանկարծ, Վանկէնհայմ կանգ առաւ: Ծանրախոհ էր եւ զիս կը դիտէր շեշտակի. ինձի խոստովանեցաւ.

— Չեմ կարծեր որ Միաց. Նահանգները ըմբռնեն այս խնդիրին ծանրակշռութիւնը: Այս նաւերուն վաճառումը կրնայ աշխարհային պատերազմի մը պատճառը ըլլալ:

Այս խօսակցութիւնը տեղի ունեցած էր Յունիս 13ին, Եւրոպական խառնակութեան պայթումէն շուրջ վեց շաբաթ առաջ: Վանկէնհայմ անզխտակ չէր որ՝ Դերմանիա այդ նախատեսու-

թիւնով կը փութացնէր իր պատրաստութիւնները եւ զիտէր նաեւ թէ՛ այդ պատրաստութիւնները կատարելապէս աւարտած չէին: Ինչպէս իր երկիրին բոլոր դիւանագիտական գործակալներուն, նոյնպէս իրեն՝ որոշ հրահանգներ կը զեկուցանէին չէոյատրել ունէ տագնապի յարուցուիլ՝ որ կարող ըլլար պատերազմ առաջ բերել, ընտրուած վայրկեանէն առաջ: Վանկէնհայմ ո՛չ մէկ առարկութիւն չունէր Յոյներու արտաքսումին դէմ - ադ մաս կը կազմէր վերը յիշուած պատրաստութիւններուն. - ընդհակառակը չէր կրնար ընդունիլ որ՝ այդ նոյն Յոյներուն եղբայրները յաջողէին գէնք վերցնել, կանխահասօրէն խորտակելով Պալքաններու ներկայ գոյավիճակը [statu quo]. ասիկա զինքը շատ կը վրդովէր: Այդ միջոցին, Պալքանները հրաբուխ մըն էին, ուր հրդեհը կը հասուննար: Պալքանները երկու արիւնոտ պատերազմներու թատրը եւ պատճառը եղած էին, առանց որ Եւրոպայի միւս ազգերը անոնց խառնուած ըլլային: Արդ, Վանկէնհայմ զիտէր որ՝ ուրիշ պատերազմ մը պիտի հրդեհէր ամբողջ Եւրոպան. ան զիտէր նոյնպէս որ՝ այդ պատերազմը մօտալուտ էր, բայց չէր փափաքեր որ այդ պահուն պայթէր եւ իր դերը կը կայանար՝ իմ միջոցովս Դերմանիայի քիչ մը պայմանաժամ շահեցնելուն մէջ:

Վանկէնհայմ մինչեւ անգամ ինձմէ խնդրեց որ՝ անձնապէս հեռագրեմ Նախագահ Ուիլսոնի, բացատրելով անոր՝ կացութեան ծանրութիւնը եւ մատնանշելով վաճառումի մասին ամերիկեան կառավարութեան ուղղուած հեռագիրները: Իր առաջարկը անճան գտայ եւ մերժեցի անոր հաւանիլ:

Պորհուրդ տուի ձէմալի եւ ուրիշ Թիւրք պաշտօնատարներու, որոնք կը շարունակէին ինձի ստիպել, խնդրը ուղղակի կարգադրել Նախագահին հետ: Անոնք հետեւեցան այդ կարծիքին. բայց Յոյները կանխեցին զանոնք: Յունիս 22ին, ժամը 2ին, Ուաշինգթոնի Յոյն գործակատարը եւ ծովային սպայ մը՝ հրամանատար Յուբլաս, Նախագահին քով գացին եւ վաճառումը պայմանագրեցին: Երբ անոնք Նախագահին աշխատանոցէն կը մեկնէին, Թիւրք Դեսպանը կը մտնէր, ճիշդ տասներհինգ վայրկեան ուշ մնացած:

Կենթադրեմ որ՝ Մր. Ուիլսոն հաւանեցաւ այդ թողումին, զիտնալով որ Թիւրքիա կը պատրաստուէր յարձակիլ Յունաստանի վրայ, եւ այդ ազգին նաւատորմիդը Իսահով եւ Միսիսիփիով զօրացնելով՝ ան կրնար կանխել ամէն յարձակում եւ հետեւաբար խաղաղութիւնը պահպանել Եւրոպայի մէջ:

Քօնկրէին արտօնութիւնովը՝ ամերիկեան կառավարութիւնը

12,535,276,098 տօլարի* ձեռքէ հանեց այդ նաւերը 1914 Յուլիս Տին, Ֆրէտ. Ժ. Կառւնդէղի միջնորդութիւնովը, եւ զանոնք յանձնեց Հելլէն Կառավարութեան: Քիչիս եւ Լեմնոս անուններով վերամկրտուելով, անոնք անմիջապէս միացան նաւատորմիդին, որուն ամէնէն հզօր միութիւնները կը դառնային: Յոյն ժողովուրդը խելացնոր խանդավառութիւն մը արտայայտեց !

Մեր ամառնային վայրը փոխադրուած էինք, Վոսփորի ափունքներուն վրայ, դիւթական կայք մը՝ ուր կը հաստատուին բոլոր դեսպանութիւնները, խիստ տաքերու եղանակին. երբեք աւելի չքնաղ գեղանկար չէ ընծայուած աչքերուս: Մեր բնակավայրը երեք յարկով շէնք մըն էր, տարտամօրէն վենիտիկեան ոճով, կռնակը տուած սեպ ժայռի մը՝ ուր բազմաթիւ պարտէզ-դարատափներ ձուակերպուած էին. դրեակը գրեթէ ծովափը կ'իջնէր եւ Վոսփորի սրընթաց ջուրերը անոր ա'յնչափ մօտէն կ'անցնէին որ՝ լուսնալոյս գիշեր մը դուրսը նստած, առազատալիբ նաւարկող նաւի մը կամրջակին վրայ գտնուելու պատրանքը ունէինք: Յորեկին, Վոսփորը, որ այդ տեղը մղոնէ մը աւելի լայնք չունէր, կ'ակօսուէր բազմազոյն նաւերով: Այդ կենդանի տեսիլը հարազատօրէն կը պատկերանայ յիշողութեանս մէջ, այն բուն հակադրութեան պատճառով՝ զոր քանի մը ամիս ետքը պիտի ցուցադրէր, այդ նոյն վայրին ամայի տեսարանովը, նեղուցներուն փակուելուն եւ թիւրքիայի պատերազմի մտնելուն հետեւանքով: Ամէն օր, ռուսական հսկայ նաւեր, Իզմիր, Ալեքսանդրիա եւ ուրիշ քաղաքներ ուղղուելու համար Սեւ Մովի նաւահանգիստներէն մեկնելով, որոշակի կ'ապացուցանէին արժէքը այդ նեղ ջրանցքին, եւ ըմբռնելի կը դարձնէին հազարէ աւելի տարիներով անոր տիրացումին համար մղուած բուն կռիւնները:

Այսպէս կամ այնպէս, ամառուան այդ առաջին ամիսները անցան խաղաղութեան մթնոլորտի մը մէջ: Պտոյտներու պատեհութիւնը կը դիւրացնէին՝ դեսպաններու, նախարարներու եւ իրենց ընտանիքներուն յաճախակի հանդիպումները. հո'ն, ամէն օր, ներկայացուցիչները այն տէրութիւններուն, որոնք Պատմութեան ամէնէն արիւնտ պատերազմը մղած էին իրարու դէմ. ամէնքն ալ երեւոյթով բարեկամներ, կը հաւարուէին նոյն սեղաններուն շուրջը, ետքէն ցրուելու համար նրբանցքներուն մէջ: Այնինչ դեսպանը շնորհալիօրէն կ'ընկերանար պաշտօնակիցի մը տիկնոջը, որուն ազգը թերեւս իրենին ամէնէն մեծ հակառակորդն էր:

* Բօնկրէն անմիջապէս քուէարկեց որ՝ այդ դրամը յառկացուի մօտեւ մեծ օւկեանօրի մը՝ Քայիֆօնիաի շինութեանը.

Ընթրիքներէ ետքը, պզտիկ խումբեր կը կազմուէին. Եպարսոսը անկիւն մը անպատրաստից շրջանակ մը կը կազմէր, մինչդեռ ուրիշ անկիւն մը նախարարները կը փսփսային, եւ անդատակին տակ, քանի մը դիւանագէտներ կը վիճէին յունական կացութեան վրայ: Անցնուլ թիւրք պաշտօնատարներն ալ՝ հեզնական ակնարկ մը կը նետէին այս ոգեւոր տեսարանին վրայ, իրենց մայրենի լեզուովը բարձրածայն քննադատելէ չբաշուելով, մինչդեռ ռուսական դեսպանը սրահէն ներս կը սահէր՝ ձեռք անցընելու համար զա'յն՝ որուն հետ գլուխ-գլխի մը ունենայ կ'ուզէր եւ զայն գաղտագողի առանձին տեղ մը կը բաշէր կը տանէր: Այդ միջոցին, մեր տղաքը եւ աղջիկները, դիւանագիտական մարմինին երիտասարդ անդամները եւ զանազան պահականաւերու սպանները, պարելով, սիրաբանելով, կը թուէին կարծել որ՝ այս բոլորը ուրիշ նպատակ չունէին, բայց եթէ իրենց գուարճութիւնը! Եւ կացութիւնը իր բովանդակ լայնութիւնովը գնահատելու համար, պէտք է աւելցնել որ, ո՛չ Եպարսոսը, ո՛չ ալ ուրիշ թիւրք բարձրաստիճան անձնատրութիւն՝ տունէն դուրս չէին կլկեր առանց ընկերի կամ շքախումբի, սպաննուելու վախով: Հասկնալի է որ, ա'յլչափ փափուկ միջավայրի մը մէջ, զկծիչ յուզումներու պահեր ապրած ըլլանք. ինչ որ ալ ըլլայ միւս կողմէ մեր զգայութիւններուն խորութիւնը: Անկարելի էր վրկուիլ երկրորդականութեան հոսանքն՝ որ մեզ կը շրջապատէր. գրեթէ միշտ պատերազմը կը կազմէր մեր խօսակցութիւններուն հիմը. մեր միտքերուն մէջ բանդակելով այդ խաղաղ՝ գրեթէ նանիր պահերուն անցողականութիւնը, եւ յիշեցնելով մեզի որ՝ այն կայծը որ ատոր վերջ պիտի դնէր, պատրաստ էր ցայտելու:

Սակայն, երբ տագնապը ծնաւ, անմիջական արդիւնք առաջ չի բերաւ: Յունիս 29ին, տեղեկացանք Աւստրիայի Մեծ-Իոն քսին եւ իր կնոջը սպաննութեանը. լուրը խաղաղօրէն ընդունուեցաւ. իրականութեան մէջ, հարուածը շանթահարիչ էր եւ ամէն մարդ կը զգար որ՝ կարևոր բան մը պատահած էր, բայց գործնականապէս ո՛չ մէկ տպաւորութիւն չյայտնուեցաւ:

Այդ ողբերգութիւնէն մէկ կամ երկու օր ետքը, դիւանագիտական խնդիրներու առիթով երկար տեսակցութիւն մը ունեցայ Թալէադի հետ. ո՛չ մէկ ակնարկութիւն չըրաւ այս դժբաղդութեան: Ինծի կը թուի այսօր որ՝ մենք յուզումէն անդամալուծուած էինք. այս դէպքին թատերաբեմին ամէն ուրիշէ աւելի մօտ մենք գտնուելով, մենք աւելի յստակօրէն կը տեսնէինք կացութեան վտանգալիութիւնը: Քանի մը օր ետքը, մեր լեզուները կարծես քակուեցան, որովհետեւ սկսանք խօսիլ, եւ խօսիլ պատերազ-

մին վրայ: Երբ տեսայ գերման գործակառար ֆոն Մութիուսը, եւ Ֆրանկֆիրտեր Չայքունկի դիւանագէտ Թդթակիցը, անոնք ալ վիճեցան մօտալուտ պայքարին վրայ, վիճեցան՝ գերմանական յատկորոշութիւնով: Երբ պատերազմը պայթի, ըսին, բնականաբար Միաց.-նահանգները պիտի օգտուին ատկէ, տիրանալով Մեքսիկայի եւ Հարաւային Ամերիկայի բովանդակ վաճառակաթեան:

Դացի Փալլավիչինին, իմ ցաւակցութիւններս յայտնելու՝ Մեծ Դուքսին մահուանը համար. զիս ընդունեց բոլորովին պաշտօնական հանդիսաւորութիւնով մը, կայսերական ընտանիքին ներկայացուցիլը ըլլալուն զիտակ, եւ արտայայտելով այնչափ անձնական վիշտ մը՝ որ իբր թէ իր իսկ տղան կորսնցուցած ըլլար: Իրեն տեղեկացուցի՝ այն սոսկումը, զոր մեզի կը ներշնչէր այս ոճիրը, իմ երկիրիս եւ ինձի. յայտնեցի մեր համակրութիւնը ձերունի կայսեր համար. «Ja, Ja, es ist sehr schrecklich [Այո՛, այո՛, սոսկալի՛ է], պատասխանեց, զրեթէ հառաչի մը մէջէն: Սերպիս պիտի դատաւարտուի այս մահափորձին համար. ան պարտաւոր է հատուցանել:

Երբ, քիչ ետքը, վոխադարձեց իմ այցելութիւնս, խօսեցաւ այն ազգային մասնախումբերուն վրայ՝ որոնց կազմութիւնը արտօնուած էր Սերպիայի կողմէ. խօսեցաւ նաեւ այդ երկիրին՝ Պօսնան եւ Հերսէքը կցելու որոշումին վրայ: Կանխեց ըսել թէ՛ իր Կառավարութիւնը պիտի պահանջէր այդ կազմակերպութիւններուն լուծումը եւ այդ տեսակ յաւակնութիւններէ հրաժարումը. ըսաւ թէ՛ անշուշտ ճնշողական դիմում մը պիտի կատարուէր Սերպիայի մէջ, արգիլելու համար նման մահափորձերու կրկնումը: Առաջին զեկոյցը եղաւ աս՝ զոր լսեցի 22 Յուլիսի հռչակաւոր վերջնագիրէն:

Ամբողջ դիւանագիտական մարմինը ներկայ եղաւ, Յուլիս 4ին, Սէնթ-Մառի եկեղեցիին մէջ. Մեծ Դուքսին եւ կնոջը պատիւին կատարուած հոգեհանգիստի պատարագին: Եկեղեցին կը գտնուի Բերայի Մեծ Պողոտային վրայ, Աւստրիական Դեսպանատունին շատ մօտը: Հոն երթալու համար, քառասուն աստիճանով քարէ սանդուղէ մը իջնելու էինք միայն: Վերջին աստիճանին վրայ, Դեսպանատունի ներկայացուցիչներ, պաշտօնական համագրեւտով եւ թեւերնին շղարշ կապած, կը սպասէին մեզի եւ մեզի ընկերացան մինչեւ մեր տեղերը: Բոլոր դեսպանները տեղ զուսած էին եկեղեցականներու նստարաններուն վրայ, իրողութիւն մը՝ զոր այսօր չեմ կրնար առանց խոր յուզումի չյիշել, որովհետեւ ատիկա մեր վերջին համախմբութիւնը եղաւ! Պաշտօնը հանդիսաւոր

եւ վեհաշուք եղաւ. զայն տեղնիտեղով կը յիշեմ՝ իր հակադրութեանը պատճառով այն տեսարանին հետ՝ որ անմիջապէս յաջորդեց արարողութեան: Երբ կրօնաւորները, իրենց կղերական զգեստներուն շքեղութեանը մէջ վեհափառ, աւարտեցին իրենց աղօթքները, գացինք Պրանսուա-ժօզէֆի ներկայացուցիչին ձեռքը սեղմել, եւ դառնալով մեր ինքնաշարժները, մեկնեցանք ամերիկեան դեսպանատուն, ութը մղոն հեռու, որովհետեւ այդ օրը ո՛չ միայն մեր պարտքը կը հատուցանէինք միջնադարեան միապետութեան մը սպաննուած գահաժառանգին, այլ նաեւ կը տօնէինք 4 Յուլիսը!

Այն տեղը իսկ, ուր կատարուեցան այս երկու արարողութիւնները, կը խորհրդանշէր այս երկու ազգային խաչակները: Դեռ կը տեսնեմ իմ պաշտօնակիցներոյս կազմուած խումբին՝ եկեղեցի առաջնորդող քարէ աստիճաններէն իջնելը, իրենց յարգանքը մատուցանելու համար Մեծ-Դուքսին, յետոյ անոնց դէպի մեր տունը վեր ելլելը, զուարթ կերպով զարդարուած, տօնելու համար Անկախութեան Հռչակումը: Նաւահանգիստին մէջ գտնուող բոլոր օտար նաւերը Վոսիտրի վրայ կը յայտնուէին այդ օրը, իբր մեզի պատիւ՝ զարդարուած եւ զրօշագարդուած, եւ դեսպանները, ինչպէս նախարարները, եկած էին իրենց շքանշաններով պծնուած:

Վերին պարտէզներէն, մենք կ'իշխէինք այն տեղին՝ ուրկէ երկու հազար հինգ հարիւր տարի սուաջ, Դարեհ մեկնեցաւ Ասիայէն՝ իր պարսկական բանակով. Դարեհ՝ մէկը այն յաղթականներէն, որոնց տիպարը դեռ կատարելապէս անհետացած չէ! Կրնայինք նոյնպէս նշմարել Ռօպրոյ Գօհնը, որ թիւրքիայի մէջ «մեր խաղաղ թափանցում»ին կերպը կը ներկայացնէ: Երբ գիշեր եղաւ, պարտէզները լուսազարդեցինք չինական յայտերներով եւ ամերիկեան հրախաղերով, որոնք Վոսիտրը կը լուսաւորէին, մինչդեռ աստեղագարդը դրօշը կը ծփար դեսպանատունին կատարը: Լնչ ուշագրաւ տարբերութիւն առտուան հանդէսին հետ, ուր ամէն բան կը յիշեցնէր ինքնակալութիւնը եւ բռնութիւնը! Վոսիտրին անդիի կողմը, որ հազիւ մղոն մը հեռու է, զինուորական բռնակալութեան հայրենիքը եղող Ասիայի մուայ եւ միլամադոտ բլուրներուն շրջագիծերը մեղմովին կը ծիրաներփնուէին մեր լուսազարդութիւններուն մարգարէական ցոլքէն:

Թէ՛ Սէնթ-Մառի եկեղեցիին եւ թէ՛ ետքէն մեր ընդունելութեան մէջ մեր շրջանակը բնակելով, զարմանքով հաստատեցի մտերիմ դէմքի մը բացակայութիւնը: Վանկլինայմը, Աւստրիայի գաշնակիցը, ներկայ չէր: Նոյն ինքն ենթական ետքէն ատոր բացատրութիւնը տուաւ ինձի. բանի մը օր սուաջ գացած էր Պերլին, ուր Քայզերը զինքը կանչած էր, ներկայ ըլլալու համար կայսերական խորհուրդի մը, որ տեղի ունեցաւ Յուլիս 5ին եւ ուր որոշուեցաւ եւրոպական Պատերազմը:

ԶՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳԵՐՄԱՆԻԱ ԿԸ ԶՕՐԱՇԱՐԺԷ ԹԻՒՐԲ ԲԱՆԱԿԸ

Կարդալով 1914ի Օգոստոս ամսուան թերթերը, որոնք ևսրուպական ազգերու իրարու դէմ զօրաշարժները կը նկարագրէին, զարմանքս զրաւեց այն հիացումը՝ զոր մամուլը կ'արտայայտէր այն սքանչելի թուիչքին համար, որով մէկ օրէն միւսը, քաղաքային բնակչութիւնները բանակի կը փոխակերպուէին: Այդ թուականին, Թիւրքիա տակաւին պատերազմի չէր մասնակցեր եւ իր քաղաքական ներկայացուցիչները բացայայտօրէն կը յայտարարէին՝ խիստ չէզոքութիւն մը պահելու իրենց դիտաւորութիւնը: Բայց հակառակ այս խաղաղասիրական յայտարարութիւններուն, Պոլսի մէջ դէպքերը տեղի ունեցան ա՛յնչափ ռազմատենչ կերպով՝ որչափ ուրիշ մայրաքաղաքներու մէջ. թէեւ խաղաղութիւն կը տիրէր, բայց բանակը զէնքի կոչուեցաւ: Նախազգուշական պարզ միջոց, ըսին մե՛րի:

Սակայն, այն տեսարանները՝ որոնց ամէն օր ականատես էի, քիչ նմանութիւն ունէին այն տեսարաններուն հետ՝ որոնք տեղի կ'ունենային պատերազմիկ ժողովուրդներու մէջ: Այրերու զինւորական հայրենասիրութիւնը, կիներու վսեմ համբերութիւնը եւ անձնուիրութիւնը, երբեմն պատերազմին կրնան տալ դիւցազնական դրոշմ մը. հոս, ընդհանուր տպաւորութիւնը կրնար ամփոփուիլ սա՛պէս. անտարբերութիւն, թշուառութիւն: Ամէն օր, օսմանեան զանազան խումբեր կ'անցնէին փողոցներէն. Արաբներ, բուկոտն, է՛ն պօռոտ գոյները կրող իրենց զգեստներովը զարդարուած, քայուածքնին դանդաղ եւ դէմքերնին սարսափահար, ուսուսի կը քայլէին Պէտէվիներու հետ, որոնք նոյնպէս զէնքի կոչուած էին եւ որոնք (յայտնի էր ադ) փութանակի անապատէն ժողովուած էին: Զանազանակ հաւաքոյթ մը Թիւրքերու, Զէրքէզներու, Յոյներու, Քիւրտերու, Հայերու եւ Հրեաներու՝ որոնք կը հրմշակուէին մեր այքերուն դէմ: Այս մարդոց երեւոյթը կը մատնէր իրենց հապճեպով ժողովուրդը, ոմանք իրենց ագարակներուն մէջ, ոմանք խանութներուն. մեծ մասը՝ միայն ցնցոտիներ կը կրէին եւ անոնց մէջ շատերը անօթութենէ կէս-մեռած կը թուէին. անոնք պատկերն էին յուսահատութեան, հաւակերպութեան — որ ոչխարին համակերպութիւնը կը յիշեցնէր — ճակատագրի մը՝ որմէ գիտէին թէ չէին կրնար փրկուիլ: Մօտալուտ կռիւն կոչուել-

նուն համար ո՛չ ուրախութիւն, ո՛չ ալ ազնիւ դատի մը համար զոհաբերութեան գիտակցութիւնը ունէին. ոչ. ամէ՛ն օր, անոնք կ'անցնէին այսպէս, ակամայ, հպատակներ՝ ինկած կայսրութեան մը, որ յուսահատութեան գերագոյն ճիգով, կը զինուէր կռիւի համար: Այս թշուառ զինուորները չէին գիտեր որքան թէ՛ ո՞ր տէրութիւնը զիրենք այսպէս նրկիրին չորս ծայրերէն կը քաշէր:

Մենք իսկ, դիւանագիտական մարմինի անդամներս, այն ատեն չէինք ըմբռնել իրական կացութիւնը: Ետքէն տեղեկացանք թէ՛ այս զօրաշարժին հրահանգը տրուած չէր, սկզբունքով, էնվէրի կամ Թալէադի, կամ Թիւրք Դալիճին կողմէ, այլ Պերլինի Ընդհանուր Սպայակոյտին եւ Պոլսի իր ներկայացուցիչներուն՝ Լիման Փօն Զանտէրսի եւ Պրօնգարդի կողմէ. որոնք դեկալարեցին գործնականապէս զօրաշարժին զանազան գործողութիւնները: Գերմաններուն գործունէութիւնը կը զգացուէր ամէ՛ն բանի մէջ: Գերմանական բանակները Հռնետք անցնելուն պէս, սկսան Պոլսէն քանի մը մղոն հեռուն՝ անթել հեռագրի հսկայ կայան մը հաստատել: Նիթերը դրկուեցան Գերմանիայէն անցնելով Ռումանիայէն. մեքենաներն ալ, որոնք արշայոյսէն մինչեւ վերջալոյս տեւականապէս կը գործէին, նոյն տեղէն էին: Ընականաբար, միջազգային օրէնքը կ'արգիլէր պատերազմիկի մը համար նման կայանի մը ստեղծումը՝ չէզոք երկիրի մը մէջ, ինչպէս էր Թիւրքիա: Պաշտօնապէս ծանուցուեցաւ որ՝ դէպի երկինք ցցուած այդ մեքենան, գերման ընկերութիւն մը կը շինէր Թիւրք կառավարութեան հաշիւին եւ նոյն ինքն Սուլթանին ստացուածքը եղող տեղի մը վրայ: Բայց այս պատմութենէն ո՛չ մէկը խաբուեցաւ: Վանկէնհայմ այդ կայանին վրայ բացայայտօրէն եւ միշտ կը խօսէր՝ իբր գերման ձեռնարկի մը: «Տեսա՞ք մեր անթելը, կը հարցնէր ինձի: Եկէք, ակնարկ մը նետենք անոր շինութեանը վրայ»: Հպարտութիւնով կը յայտարարէր որ՝ ատիկա աշխարհի ամէնէն զօրաւոր գործիքն էր — Փարիզէն՝ Էյֆէլի Աշտարակէն տրուած հեռագրիները առնելու չափ կարող — որուն միջոցով Պերլինի հետ մշտական հաղորդակցութեան մէջ պիտի գտնուէր: Ա՛յնքան քիչ կը ջանար քօղարկել անոր գերմանական ստացուածք մը ըլլալը որ՝ քանի՛-քանի՛ անգամներ ինձի առաջարկեց զայն գործածել՝ իմ հեռագրիներս դրկելու համար, այն միջոցին երբ սովորական հեռագրական հաղորդակցութիւնները խզուեցան:

Այդ հիմնարկութիւնը՝ Թիւրքիայի եւ Պերլինի միջեւ այն ատեն գոյութիւն ունեցող մտերմական՝ թէեւ չխոստովանուած՝

կապի մը արտաքին խորհրդանշան մըն էր: Որոշ ատեն մը պէտք եղաւ, մինչև որ կայանը կատարելապէս կանգնուեցաւ. այդ միջոցին՝ Վանկէնհայմ կը գործածէր Forsojusio վրայ հաստատուած մեքենան. Forsojusio գերմանական դեսպանատունին դէմը, Վոսիորի ջուրերուն մէջ գտնուող առեւտրական նաւ մըն էր. մինչդեռ գործնական խնդիրներու համար՝ Վանկէնհայմ կը գոհանար հեռածայնելով:

Այս զօրաշարժին միջոցին, գերման սպաները նոյն ինքն թիւրքերու խանդին հաւասարող եռանդ մը ցոյց տուին: Պատրաստութիւններէն ծայրայեղ հաճոյք մը կը զգային. իրապէս, իրենց կեանքին ամէնէն երջանիկ պահերը ապրիլ կը թուէին անոնք! Պոսոսարդ, Նուսան և Լաֆէրց՝ ա՛լ չէին հեռանար Էնվէրի բովէն, հրահանգելով և ղեկավարելով գործողութիւնները: Օրուան ամէն ժամուն, ասոնցմէ ոմանք փողոցէն շանթի պէս կ'անցնէին, քաղաքացիներէ գրաւուած վիթխարի ինքնաշարժներու մէջ. գիշերը, կը կոխէին ճաշարանները և հաճոյքի վայրերը, սպառելով մեծաքանակ շամփանիա — որ նոյնպէս գրաւուած էր — հոչակելու համար դէպքերը: Յատկանշականօրէն թատերական և աղմկայարոյց դէմք մըն էր Իօն տէր Կոյց փաշա! Փոխարքայի մը պէս, ամէն օր Պոլիսը կը պտըտէր խնկաւ արշաւով մը ընթացող և ճամբուն վրայ ամէն բան ցեխաթաթաւող խոշոր ինքնաշարժի մը մէջ, որուն դռնակին վրայ կը բոցափայլէր գերմանական արծիւը: Առջևի կառուղիի նստարանին վրայ, փող մը՝ ինքնաշարժին անցքին՝ աղմկայոյզ և վրդովիչ ազդարարութիւններ կ'արձակէր, պօռչտալով այն ամէնուն դէմ — թիւրք կամ ուրիշ — որ ճամբուն վրայ գտնուելու դժբաղդութիւնը ունեցած էր: Գերմանները ինքզինքնին երկրին տէրը կը նկատէին և չէին ջանար այդ բանը քողարկել: Ինչպէս որ Վանկէնհայմ իր Դեսպանատունին մէջ պլոտիկ Վիլհէլմըթրաս մը հաստատած էր, նոյնպէս սպաները Պերլինի Բնդհ. Սպայակոյտէն կախում ունեցող ընդհ. բանակատեղ մը հաստատած էին. անոնք բերած էին իրենց կիները և ընտանիքները. կը յիշեմ պառտնուհի Վանկէնհայմի սա դիտողութիւնը ընելը լսած ըլլալս թէ «ինք մասնաւոր պլոտիկ արքունիք մը ունէր»:

Սակայն, Գերմանները գրեթէ միայն իրենք է որ հաճոյք կը զգային զօրաշարժէն: Գրաւումը, որ ընկերացաւ զօրաշարժին, քաղաքացիներու կողպատումն էր պարզապէս, հազիւ քողարկուած: Թիւրքերը կը գրաւէին այն բոլոր ձիերը, ջորիները, ուղտերը, ոչխարները, կովերը և ուրիշ անասունները՝ զորս կրնային ձեռք ձգել: Կնկէրը ինձի խոստովանեցաւ որ՝ այդպէսով հաւա-

քած էր 150,000 կենդանի: Այդ անխելք ուղղութիւնով ընթացան, չկանխահոգուելով երբեք ցեղը պահպանելու. օրինակի համար, բազմաթիւ գիւղերու մէջ, երկու կով և երկու զամբիկ միայն թողուցին: Նկարագրուած այս շնորհամիտ անխուսափելի հետեւանքը եղաւ աւերել երկրագործութիւնը, և վերջապէս, հարիւր հազարաւոր անձեր սովի մատնել: Գերմաններուն պէս, Թիւրքերն ալ կը կարծէին որ՝ պատերազմը կարճ պիտի տուէր և իրենք շուտով պիտի հատուցանէին այդ մեքենաներուն կիրարկումովը իրենց գիւղացիներուն պատճառուած վնասները: Ոչ նուազ անխոհեմութիւնով և անմտութիւնով շարժեցաւ նաեւ կառավարութիւնը, երբ գրաւեց վաճառականներու և խանութներու պարէնները. իր արհեստին գիտակցութիւնը ունեցող յելուզակի մը պէս շարժեցաւ գրեթէ. և այդ վաճառականներուն մէջ ոչ մէկ խալամ չի կար. անոնց մեծ մասը քրիստոնեայ էր, ոմանք Հրեայ: Ոչ միայն թիւրք պաշտօնականները բանակին պէտքերը հայթայթեցին և այդ սովի իրենց քսակները պարարտացուցին, այլ նաև անհաւատներուն հաստատութիւնները թալլեցին կրօնական հաճոյք մը զգացին: Անոնք կը մտնէին խանութ մը, դարակներուն մէջ շարուած բոլոր ապրանքները վարժօրէն կ'առնէին և փոխարէն պարզապէս թուղթի կտոր մը կու տային: Որովհետև կառավարութիւնը Խոտախայի և Պայքաններու հետ պատերազմներուն միջոցին պահանջածին համար ոչինչ վճարած չէր, վաճառականները ո՛չ մէկ բան չէին յուսար ստանալ այս նոր «գնում»ներուն փոխարէն: Ետքէն, ատոնցմէ անոնք որ պաշտօնական կապակցութիւններ ունէին կամ քաղաքական ազդեցութիւն կը բանեցնէին, 70% ի հատուցում մը ստացան. զալով մնացած 30% ին, ո՛վ որ կը ճանչնայ արեւելեան պաշտօնէութիւնը. կը գիտնայ թէ ի՛նչ եղաւ ան!

Ժողովուրդին մեծագոյն մասին համար, գրաւումը հոմանիշ էր կործանումի: Որոշապէս զինուորներու պէտքերուն համար բանակին կողմէ գրաւուած ապրանքները կ'ապացուցանեն որ՝ գործադրուած մեքենաները տարօրինապէս կը նմանէին աւազակութեան: Այսպէսով է որ՝ սպաները յափշտակեցին ո՛րչափ այժամազ որ գտան. առիթը ներկայանալուն՝ կնոջական մետաքսէ գուլպաներ, սեղմիրաններ, տղու մուճակներ վերցուցին և ևս գիտեմ պարագայ մը՝ երբ անոնք թիւրք համբարանոցները ձկնկիթ և ուրիշ համեղ ուտելիքներ մթերեցին: Կնոջական ճերմակեղէն ծախող վաճառականէ մը վերմակ-ծածկոցներ կը պահանջէին. վաճառականը պատրաստ չունենալուն, պաշտօնականները անոր ունեցած ապրանքը կը գրաւէին և վաճառականը ետքէն

զայն մրցակից հաստատութիւններու մէջ կը գտնէր: Թիւրքերը ուրիշ շատ մը պարագաներու մէջ նոյն կերպով շարժեցան: Տիրական սիսթեմը կը կայանար՝ ո՛ւր որ կարելի էր՝ ինչք-կարասիները գրաւելուն եւ զանոնք հնչուն դրամի վերածելուն մէջ. չեմ գիտեր թէ ետքէն ի՞նչ կ'ըլլար այդ դրամը, բայց վստահ եմ որ այդ մեքոսին համեմատ բազմաթիւ անձնական հարստութիւններ շինուեցան:

Դիտել տուի Էնվէրի թէ՛ այդ բարբարոս ընթացքները իր երկիրը պիտի կործանէին, ինչ որ շատ չանցած հաստատուեցաւ: 4,000,000 արու չափահաս ժողովուրդէ մը 1,500,000ը զինուորագրուեցան վերջապէս եւ միլիոն մը ընտանիքներ մնացին անպաւէն, ամէնքն ալ ծայրայիզ զրկանքի պայմաններու մէջ: Կառավարութիւնը զինուորներուն ամսական 25 սկեք կը վճարէր եւ ընտանիքներուն կու տար ամսական 20 սօլարի ծախք մը: Իբր արդիւնք, հազարաւոր անձեր զրկանքներու հետեւանքով մեռան, եւ շատ աւելի մեծ թիւով անձեր ալ՝ սնունդի անբաւականութեան պատճառով վատուեցան: Կը կարծեմ որ՝ պատերազմին սկիզբէն իվեր՝ Կայսրութիւնը իր թիւրք ազգաբնակչութեան մէկ քառորդը կորսնցուց: Հարցուցի Էնվէրի թէ՛ ինչո՞ւ թոյլ կու տար որ՝ իր ժողովուրդը այս կերպով ոչնչանայ. բայց այդ տեսակ ցասերէ չէր ազդուեր: Հպարտ էր առանց դրամի կարելոր բանակ մը մէջտեղ հանած ըլլալուն համար, բան մը — ասորը համար կը պարծէր — գոր ուրիշ որեւէ ազգ իրմէ առաջ չէր յաջողած ընել: Այս նպատակով, հրամանագիրներ հրովարտակած էր, որոնք պահուերտիլը դասայրութիւն կը հռչակէին, հետեւաբար մահապատիժ առաջ կը բերէին: Որդեգրեց նաեւ ծրագիր մը՝ որով ամէն Օսմանցի կրնար զերծ ըլլալ զինուորութենէ, վճարելով 190 սօլար: Իր գործը նշանաւոր կը նկատէր: Իրաւ այ, այդ գործը առաջին անգամ ըլլալով իրեն ճաշակել տուաւ բռնակալ իշխանութեան արբեցութիւնը եւ փորձը շատ հաճելի թուեցաւ իրեն:

Թէ Գերմանները այս զօրաշարժը ղեկավարեցին, վիճելի լանդիբ մը չէ. ապացոյցները մէջտեղին են Օրինակի համար, կը բաւէ ըսել որ՝ անոնք իրենց անձնական պէտքերուն համար, իրենց անունով նիւթեր կը գրաւէին: Չուքի տակ ունիմ լուսանկարը այդ տեսակ հրահանգի մը, գերման ծովային կցորդ Հիւմանի կողմէ՝ յանդի բեռցուածքի մը համար կատարուած: Այդ վաւերաթուղթը կը կրէ 29 Սեպտեմբեր 1914 թուականը. «Տեղիմնէ շոգենաւին բեռցած բաժինը, կ'ըսէ այդ թուղթը, գերման Կառավարութեան համար իմ կողմէ գրաւուած է»:

Ասիկա բացայայտօրէն կ'ապացուցանէ որ՝ Թուրքիայի պատերազմի մտնելին ամիս մը առաջ, Գերմանիա Պոլիսի մէջ գերագոյն իշխանութիւնը կը բանեցնէր իրականապէս:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՎԱՌԱԿ

«ԿԵՕՊԷՆ»Ը ԵՒ «ՊԻԵՋԼԱՌԻ»Ն ՏԱՐՏԱՆԵԼԷՆ Կ'ԱՆՅՆԻՆ

Օգոստոս 10ին, նաւակով դիմաւորել գացի Սիսիլիան, իտալական պզտիկ նաւ մը, որ Վենետիկէն կու գար. իր ժամանումը մասնաւորապէս կը շահագրգռէր զիս, որովհետեւ անիկա Պոլիս կը բերէր իմ աղջիկս եւ փեսաս, Պրն. եւ Տկն. Մօռիս Վէռթհայմ եւ իրենց երեք աղջնակները: Մեր դիմաւորումը ակնկալածէս ա՛լ աւելի ոգեւոր եղաւ: Ճամբորդները շատ յուզուած գտայ, որովհետեւ նախընթաց օր Յունիական Մովին մեջ նաւային կռիւի մը հանդիսատես եղած էին.

«Կամրջակին վրայ կը ճաշէինք, բացատրեց ինձի աղջիկս, երբ հորիզոնին վրայ երկու զարմանալի նաւերու երեւումը տեսայ: Վազեցի դիտակս փնտռելու եւ տեսայ երկու խոշոր ռազմանաւեր, առաջինը իր վրայ տարաշխարհիկ դրոշմով զարմանալի աշտարակներ կրող, միւսը սովորական զրահաւոր մը: Դիտելու կեցանք, երբ տեսանք երեւումը ուրիշ նաւի մը, որ ամէնէն արագ չափով երկու առաջիններուն կը հետեւէր: Ան հետզհետէ մօտեցաւ. յետոյ թնդանօթները որոտացին, ջուրի սիւններ ժայթքեցին, մինչդեռ ճերմակ մուխի պզտիկ ամպեր կը պատառուէին երկինքին վրայ: Բանի մը վայրկեաններ անցան, մինչեւ որ աչքերուս ներկայացող տեսարանին բնոյթը հասկցայ. նաւային գործողութեան մը հանդիսատես կ'ըլլայինք: Նաւերը շարունակ կը տեղափոխուէին, շարունակելով նաեւ արագօրէն առաջանալ. վերջապէս երկու մեծերը ետ դարձան եւ կատաղօրէն իրենց թշնամիին վրայ յարձակեցան. ետքէն, կ'երեւայ ծրագիրնին փոխեցին եւ յանկարծ ետ դարձան: Վերջին կուռոզն ալ, իր կարգին, փոխեց ուղղութիւնը եւ խաղաղօրէն մեզի մօտեցաւ, ինչ որ նախ վրդովեց զիս քիչ մը, բայց բան մը չպատահեցաւ. ան մեր շուրջը դարձաւ եւ մենք կրնայինք տեսնել իր յուզուած, ծուխէ սեւցած եւ՝ պարզօրէն հեզնող նաւազները: Անոնք մեր նաւապետին բազմաթիւ հարցումներ ըրին, յետոյ իրենց նաւը հեռացաւ եւ վերջապէս անհետացաւ: Այն ատեն, մեր նաւապետը մեզի բացատրեց թէ՛ երկու մեծ նաւերը գերմանական էին, թէ՛ Միջերկրականի մէջ յանկարծակիի եկած էին, եւ զիրենք

հալածող բրիտանական նաւատորմիդէն խոյս տալու համար, կը ջանային Պոլիս հասնիլ: Տեսա՞ք զանոնք, շարունակեց աղջիկս, ձեր կարծիքովը ո՞ւր է բրիտանական նաւատորմիդը»:

Քանի մը ժամ ետքը, դիպուածով Վանկէնհայմի պատահեցայ: Երբ իրեն պատմեցի ինչ որ Տկն. Վէռթհայմ տեսած էր, շատ յուզուած երեւցաւ եւ ամենամեծ շահագրգռութիւն ցուցուց: Ճաշէն անմիջապէս ետքը, Վանկէնհայմ ամերիկեան Դեսպանատունը եկաւ Փալլապիլիի հետ եւ տեսակցութիւն մը խնդրեց աղջիկէս: Երկու դեսպանները հանդիսաւորապէս նստան Տկն. Վէռթհայմի դէմը, զոր ենթարկեցին — իրաւ է որ քաղաքավարօրէն — մանրակրկիտ հարցապնդումի մը: «Կարեւորութիւնս երբեք այդչափ զգացած չէի», խոստովանեցաւ աղջիկս ետքէն: Ո՛չ մէկ մանրամասնութիւն չէին փախցնէր. կ'ուզէին զիտնայ թէ՛ թնդանօթի քանի՞ հարուած արծակուած էր, գերման նաւերը ինչ ուղղութիւնով գացած էին, նաւին մէջ ամէն մարդ ինչ ըսած էր, եւ այսպէս շարունակաբար:

Այս այցելութիւնը դաշնակից դիւանագէտներուն թուեցաւ հայթաթել սիրտիանք մը եւ մեծ գոհունակութիւն մը, որովհետեւ տունէն մեկնեցան գրեթէ ցնձախինդ, ծանր մտահոգութենէ մը փրկուած ըլլալու երեւոյթով: Եւ անշուշտ իրաւունք ունէին ճառագայթելու: Աղջիկս ճարտարամտօրէն անոնց հաղորդած էր այն լուրը՝ որուն չափազանց եռանդագին տեղեկանալ կ'ըղծային. Կոպկեր եւ Պրեզառն փրկուած էին բրիտանական նաւատորմիդէն եւ Տանտանէլի ուղղութիւնով ճամբայ կ'առնէին!

Որովհետեւ Տկն. Վէռթհայմ զանոնք է որ տեսած էր՝ բրիտանական դիտագործի մը հետ կռիւի բռնուած:

Յաջորդ օրը, պաշտօնական գործ մը զիս գերմանական դեսպանատունը կոչեց. Վանկէնհայմի զրգռութենէն շուտով հասկցայ որ՝ դիւանական խնդիրներով չէ որ շահագրգռուած էր: Զինքը երբեք այդչափ ջլայնացած, ո՛չ ալ այդչափ յուզուած տեսած չէի: Երկու վայրկեան նստած չէր կրնար մնալ. ամէն վայրկեան տեղէն կը ցատկէր, պատուհան կը վազէր եւ անձկագին կը դիտէր Վոսփորի ուղղութիւնով, ուր կրնար տեսնել Քորֆոլասօն, իր Ա. Հի [անթել հեռագիր] մասնաւոր կայանը, շուրջ երեք քառորդ մղոն հեռուն. դէմքը կրակ կտրած էր եւ աչքերը կը փայլէին. սենեակին մէջ կը պտուտքէր խոշոր քայլելքով, պահ մը խօսելով գերմանական վերջին յաղթանակի մը վրայ, Քայզէրին ծրագիրներուն մասին ինծի հակիրճ ամփոփոյթ մը տալու համար ընդմիջուելով, յետոյ նորէն դէպի պատուհանը սուրալով, հսկելու համար Քորֆոլասօն:

— Բան մը կայ որ ձեզ կը զբաղեցնէ տիրապէս, ըսի, ոտքի ելլելով: Ես կը մեկնիմ. ուրիշ ատեն մը կու գամ:

— Ո՛չ, ո՛չ, բողոքեց բուռն կերպով: Կ'ուզեմ որ հոս մնաք: Այսօր մեծ օր մըն է Գերմանիայի համար! Քանի մը վայրկեան սպասեցէք եւ պիտի լսէք զգայացունց լուր մը, որ սերտ առընչութիւն ունի պատերազմի մէջ Թիւրքիայի դերին հետ:

Անպարանքով մեկնեցաւ անդաստակէն եւ կռթնեցաւ վանդակապատին: Նոյն վայրկեանին տեսայ պզտիկ նաւակի մը Քորֆոլասօն մեկնելով դէպի դեսպանատունի աւազանը ուղղուելը: Վանկէնհայմ արագօրէն իջաւ, առաւ նաւագի մը կողմէ երկարուած պահարանը եւ վայրկեան մը ետքը, նորէն սենեակ կը խուժէր:

— Անոնք մերն են! գոչեց:

— Ի՞նչ բան, հարցուցի:

— Կոպկեր եւ Պրեզառն! Անոնք Տարտանէլը անցած են!

Իր անթել հեռագիրի թուղթը օղին մէջ կ'երերցնէր՝ խանդավառութիւնովը գօլէճականի մը՝ որուն խուսքը փոքր-սօքի յաղթանակը շահած ըլլայ: Յետոյ, վայրկեանաբար զսպելով իր բերկրութիւնը, հանդիսաւորապէս քովս եկաւ, հանդարտօրէն բարձրացուց ցուցամատը, պոստեց յօնքերը եւ շարունակեց. «Ֆնականաբար կըմբռնէք որ՝ մենք Թիւրքիայի ծախած ենք այդ նաւերը! Գալով ծովակալ Սուշօնի, աւելցուց՝ աչքի ուրիշ քթթումով մը, Սուլթանին պիտի ծառայէ ան!»

Վանկէնհայմի ցնձութիւնը՝ լոկ հայրենասիրական պատճառներէ զրդուած չէր. այդ նաւերուն ժամանումը՝ դեսպանի իր ասպարէզին յաղթանակն էր, Գերմանիայի կողմէ իրապէս շահուած առաջին դիւանագիտական յաղթականը: Տարիներէ իվեր կ'անձկար, գովելիօրէն, Կայսրութեան Վարչապետութեան պաշտօնին եւ հիմա կը վարուէր այն մարդուն պէս՝ որ նպատակին հասնիլը կը տեսնէ: Կոպկերի եւ Պրեզառնի ճամբորդութիւնը իր անձնական գործն էր. համաձայնելով թիւրք Դահլիճին հետ, պատրաստած էր անոնց Տարտանէլ մուտքը եւ անթել հեռագիրով զանոնք առաջնորդած էր Միջերկրականէն: Վերջապէս, կը կնքէր գերմանութիւրքական դաշինքը: Երեք տարիներու ընթացքին՝ իր լարած բոլոր դաւերը եւ մեքենայութիւնները այդ օրը իրենց տրամաբանական վախճանին կը հասնէին:

Կը տարակուսիմ որ՝ երկու նաւեր նման դեր մը կատարած ըլլան Պատմութեան մէջ: Այդ ատեն, մենք ամէնքս տեղեկութիւն չունէինք ատկէ, բայց յաջորդող դէպքեր՝ լիովին արդարացուցին Վանկէնհայմի յորդագեղ գոհունակութիւնը: Կոպկեր վերջին տի-

պով հզօր յաժանաւ մըն էր . Պրեզրաուն նուազ մեծ էր , բայց ծայրայեղ արագութիւնով մը կը սուբար, ինչ որ այդ ջուրերուն մէջ իր ծառայութիւնը թանկագին կը դարձնէր : Պատերազմէն առջի քանի մը ամիսներուն , անոնք կը յաժէին Միջերկրականի մէջ, անանկ որ՝ պատերազմի յայտարարութիւնը զանոնք հող յանկարծակիի բերաւ, Մեսինայի մէջ ապրանք բեռցած ատեն : Այդ երկու նաւերուն — երկուքն ալ աւելի արագընթաց քան ֆրանսական կամ անգլիական միջերկրականեան նաւատորմի որեւէ նաւ — պատերազմը պայթած ատեն՝ Թիւրքիայի ա՛յնչափ մօտ գտնուելը՝ ինծի միշտ ուրիշ բան մը երեւցած է՝ քան պարզ գուգադիպութիւն : Կոպէնի ընտրանքը յատկանշականօրէն յաջողած էր, որովհետեւ այդ նաւը նախապէս երկու անգամ Պոլիս եկած էր եւ իր սպաները, ինչպէս նաեւ նաւազները, կատարելապէս կը ճաննային Տարտանէլը : Պատերազմի յայտարարութիւնը տեղեկացուելուն պէս՝ այդ նաւերուն բռնած դիրքը՝ կը յատկանշէ այն ոգին՝ որով գերման նաւատորմիը կռիւի սկսաւ . երգելով եւ պօռչտալով՝ նաւազները թելի վրայ բարձրացուցին իրենց ծովակալը յաղթականօրէն եւ անձնատուր եղան տեւտոնեան հշմարիտ շուայտանքի մը : Քանի՛ անգամներ պատմուեցաւ որ՝ այդ տեսարանին իբր սրտայոյզ մէկ յիշատակը՝ ծովակալ Սուշօն կը պահէ նաւազներու աղտոտ ձեռքերովը ալարտուած իր ճերմակ համազգեստը : Հակառակ այն ուրախութեան՝ զոր ակնկալուած պայքարները կ'առթէին անոնց հրամանատարներուն, այս նաւերուն կացութիւնը խախտու էր . անոնք չէին կրնար չափուիլ բրիտանական եւ ֆրանսական այն նաւային մեծ ուժերուն հետ՝ որոնք կը յաժէին Միջերկրականի մէջ : Անոնք հեռու էին իրենց սկզբնական խարիսխներէն . հանքածուխի ծանրակշիռ խնդիրը եւ այն իրողութիւնը որ՝ Անգլիա տէր էր ծովային բոլոր կայաններուն՝ անոնց թոյլ չէին տար ոչ մէկ կողմ ապաստան գտնել : Իտալական բազմաթիւ թորիխարծակներ անոնց հսկած էին Մեսինայի մէջ, յարգել տալով չէզոքութիւնը , եւ անոնց յիշեցնելով որ՝ նաւահանգիստին մէջ քսանըորս ժամէն աւելի չէին կրնար մնալ : Անգլիա, Ադրիականի եւ Յունիական մոլի միացած տեղը, Օթըանթօի ծովածոցին մէջ, ռազմանաւեր պահակ կեցուցած էր, զանոնք բռնելու համար , այն պարագային՝ երբ անոնք աւստրիական Փօլա նաւահանգիստը փախչիլ փորձէին : Բրիտանական նաւատորմիը նոյնպէս պահակ դրած էր ձիւրալթարի եւ Սուէզի մէջ, միակ ելքերը՝ որոնք յայտնապէս փախուստի առիթ կ'ընծայէին : Հետեւաբար, անոնց համար միակ տեղ մը կար՝ ուր կրնային ապահով եւ բարեկամական ընդու-

նելութիւն գտնել . — Պոլիսը : Բրիտանական Մովակալութիւնը կ'երեւայ թէ այդ տեսութիւնը ժխտեց , զայն անկարելի դատելով : Այդ ատեն, Օգոստոսի սկիզբը, միջազգային օրէնքը տակաւին տիեզերականապէս կը յարգուէր : Թիւրքիա չէզոք երկիր մըն էր , եւ , հակառակ գերման տիրապետութեան անհամար ապացոյցներու , այդ դերը պահպանել փափաքիլ կը թուէր ան : 1856ին ստորագրուած Փարիզի դաշնագիրը, ինչպէս նաեւ 1871ին կնքուած Լոնտոնի դաշինքը, պատերազմական նաւերու Տարտանէլ մուտքը կ'արգիլէին , բացի Սուլթանին մասնաւոր թոյլտուութիւնովը եղածներէն, թոյլտուութիւն՝ որ խաղաղութեան ժամանակ կրնար տրուիլ : Գործնականին մէջ, Կառավարութիւնը այդ տրտմութիւնը հագուադէպօրէն տուած էր, բացի պաշտօնական արարողութիւններէն : Դոյութիւն ունեցող պայմաններուն մէջ, խնդիրի առարկայ արգելք խզել՝ Սուլթանին կողմէ նուազ բարեկամական արարք մը պիտի ըլլար էապէս , եւ Կոպէնի ու Պրեզրաուի թոյլատրել որ՝ քսանըորս ժամէ աւելի մնան թրքական ջուրերու մէջ, ուրիշ բան չպիտի նշանակէր , բայց եթէ պատերազմի յայտարարութիւն մը : Թերեւս զարմանալի չէ, եթէ 1914 Օգոստոսի առաջին օրերուն , երբ Գերմանիա տակաւին պաշտօնապէս ծանուցած չէր որ «միջազգային օրէնք»ը ա՛լ գոյութիւն չունէր , Անգլիացիները այդ դաշնագիրները նկատած ըլլային պատնէշներ՝ որոնք գերման նաւերուն Տարտանէլ եւ Պոլիս մուտքը կը փակէին : Միջազգային օրէնքներու անընտրելիութեան վստահելով, բրիտանական նաւատորմիը զրաւած էր — բացի Տարտանէլէն — այն բոլոր կէտերը՝ ուրկէ այդ գերման նաւերը կրնային փախչելով ազատուիլ : Եթէ, ընդհակառակը, պատերազմի յայտարարութեան սկիզբէն, Անգլիա այդ առաջնակարգ կարեւորութիւն ունեցող կէտին յատկացուցած ըլլար զօրաւոր նաւախումբ մը, այս վերջին երեք տարիներու պատմութիւնը յրաշափ կերպարանաւորուած պիտի ըլլար !

«Նորին Վեհափառութիւնը կը վստահի թէ՛ Կոպէն եւ Պրեզրաու պիտի յաջողին ճամբայ մը բանալ !» Աս էր՝ Մեսինա գտնուող այդ նաւերուն հաղորդուած հեռագիրը, 4 Օգոստոս, ժամը գիշերուան 5ին : Իտալական կառավարութեան՝ քսանըորս ժամ մնալու արտօնութիւնը լրանալու մօտ էր : Նաւահանգիստէն դուրս , Օթըանթօի նեղուցին մէջ , կը սպասէին բրիտանական յաժառօրակները՝ որոնք գերմաններուն կեղծ ռաշօներ [անթել հեռագիր] կը դրկէին՝ հրամայելով անոնց Փօլա փախչիլ : Դրօշածուփ ու թմրակաշառաչ , սպաները եւ նաւազները՝ ճառերէ եւ գաւաթ պարպելներէ գերագրգռուած , երկու նաւերը ամբողջ արագու-

Թիւնով ճամբայ առին ջրանցքին վերի կողմէն և ղէպի բրիտանական նաւատորմիդին ուղղութիւնը: Կառույցարար պզտիկ դիտագոր-նաւը անոնց հետ տեւական շփումի մէջ գտնուեցաւ, անոնց շարժումները շարունակ հեռագրելով գլխաւոր նաւախումբին: Յանկարծ, երբ Սփարթիվէնթօ հրուանդանը դարձան, Կոպիկն և Պրեզաու օդը թնդացուցին իրենց անթելներուն դրկել կրցած ամբողջ աններդաշնակ թրթուումներովը, միջոցը լեցնելով անանկ ժխորով մը՝ որ Կառույցարար ընթեռնի ո՛չ մէկ հեռագիր չկրցաւ դրկել: Յետոյ, երկու յածանաւերը ցուկնին հարաւ դարձնելով, ուղղուեցան ղէպի Եգէական Ծով: Քաջամարտ պզտիկ Կառույցարար անոնց հետքին հետեւեցաւ, և ինչպէս աղջիկս կը պատմէ, մինչև անգամ յանդգնօրէն կռիւի մտաւ: Քանի մը ժամ ետքը, բրիտանական նաւախումբը, հետեւեցաւ, թէև առանց արդիւնքի, գերման նաւերուն, որոնք՝ թէև կռիւի մէջ նուազ զօրեղ՝ բայց շատ աւելի սրնթաց էին:

Նոյն իսկ, այդ պահուն, անգլիացի ծովակալը հաւանօրէն հաւատաց Գերմանիայի ծրագիրները ջուրը ձգած ըլլաւ. փախստականները կրնային աւելի կանուխ Տարտանէլ հասնիլ, բայց հող միջազգային օրէնքը կը ցցուէր ճամբուն վրայ և մուտքը կ'արգելէր!

Այդ միջոցին, Վանկէնհայմ իր դիւանագիտական առաջին յաղթանակը տարած էր: Քօրֆուսօն, որ Վոսփորի անթել հեռագրի կայանն էր, Վանկէնհայմ ծովակալ Սուշօնի չափազանց հաճելի լուրեր կը դրկէր: Սնոր կ'ըսէր որ՝ Նեղուց հասնելուն՝ Թրքական դրօշ պարզէ. որովհետև իր յածանաւերը հիմա օսմանեան նաւատորմիդին կը պատկանէին և այդ պատճառով՝ ա՛լ ենթակայ չէին միջազգային օրէնքներու արգելքներուն! Անոնք՝ ա՛լ չէին կոչուեր Կոպիկն և Պրեզաու. արեւելեան կախարդանքով, Վանկէնհայմ զանոնք Սուրբան Ահիմի և Միսիլիի փոխակերպած էր: Իրաւ ալ, գերման դեսպանը, իմաստնօրէն օգտուած էր կացութենէն, շինծու առուծախ մը յաջողցնելով:

Ինչպէս աւելի վերը ըսի, այն պահուն, երբ պատերազմը պայթեցաւ, Թիւրքիա Անգլիայի մէջ շինուելու վրայ եղող երկու տոկոս ունէր: Այդ նաւերը տարամերժօրէն պաշտօնական ստացուածք չէին. անոնց գնումը՝ ժողովրդային խանդավառութենէ ծնած ձեռնարկ մըն էր: Անոնց շնորհով, Թիւրքիա Յունաստանի վրայ պիտի յարձակէր և Եգէական Ծովի կղզիները պիտի փրկէր. անոնց շինութեան դրամը գոյացած էր հանրային նուիրատուութիւններով: Գործակալներ է որ տաժանագին կերպով ժողոված էին այդ հանգանակութիւնները, տունէ-տուն. ատկէ զատ, կազ-

մակերպուած էին հանդէսներ և տօնավաճառներ, և Թիւրք կիները, իրենց խանդավառութեանը մէջ, ծախած էին իրենց մագերը՝ հանրային զանձին նպաստին: Այսպէս, այս երկու նաւերը՝ հայրենասիրական վեհաշուք արտայայտութեան մը պտուղը կը մարմնացնէին, հազուադէպ բան Օսմանցիներուն քով, այնչափ հազուադէպ որ՝ ոմանք ատոր մէջ Կառավարութեան մատը կը տեսնէին: Պատերազմի յայտարարութեան պահուն, Թիւրքիա նաւարաններուն պարտական եղած վերջին զումարները կը վճարէր, և Թիւրք նաւազութիւնը Անգլիա կը ժամանէր՝ աւարտած նաւերը ուզելու. բայց անոնց յանձնումին համար որոշուած պահէն քիչ առաջ, բրիտանական կառավարութիւնը միջամտեց և զանոնք Ծովակալութեան տրամադրութեանը տակ դրաւ:

Անվիճելի է որ, Անգլիա թէ՛ օրինապէս և թէ՛ բարոյապէս իրաւունք ունէր այդպէս շարժելու: Նոյնպէս, տարակուսելի չէ որ, եթէ խնդիրը ուրիշ որեւէ ազգի վերաբերէր, Անգլիայի ընթացքը ոչ մէկ ոխ պիտի յարուցանէր: Թիւրք ժողովուրդը այս զանազանութիւնները չէր ըմբռներ. ան մէկ բան միայն կը տեսնէր. ինք Անգլիայի մէջ երկու նաւ ունէր, որոնց շինութիւնը դրամական ծանր զոհողութիւններ կը ներկայացնէր իրեն համար, և Անգլիա զանոնք զբաւած էր! Նոյն իսկ առանց արտաքին ճնշումի, Թիւրքերը այս պատճառով դառնութիւն մը պիտի զգային. արդ, ճնշում տեղի ունեցաւ և ո՛չ աննշան ճնշում: Այս գործառնութիւնը Վանկէնհայմի սքանչելի առիթ մը ընծայեց իր տաղանդը գործածելու: Թիւրք մամուլը Անգլիայի դէմ յորդեցաւ բուռն յարձակողականներով, որոնք բոլորը ծագում կ'առնէին Գերմանիայի Դեսպանատունէն: Վանկէնհայմ մշտապէս վառ կը պահէր Թիւրք առաջնորդները՝ անգլիական նենգամտութեան մասին: Հասկցուց որ՝ իր հայրենիքը, Թիւրքիայի հաւատարիմ բարեկամը, այս «ապօրէն յափշտակութեան համար իրեն հատուցում մը կ'ընծայէր. Վանկէնհայմ թելադրեց զնել Կոպիկը և Պրեզաուն (որոնք, այս դէպքէն առաջ կը յածէին միջերկրականեան ջուրերուն մէջ). և զանոնք միացնել Թիւրք նաւատորմիդին, փոխան գրաւուած նաւերուն: Այս նաւերուն Տարտանէլ մտած օրը իսկ, Իզսաւ, Թիւրք թերթ մը Պոլիսի մէջ, յաղթանակած տեղեկագիր մը կը հրատարակէր այս «վաճառում»ին վրայ, զոր հսկայ վերտառութիւնով մը՝ կ'որակէր «Կայսերական Կառավարութեան մեծ յաղթանակը»:

Այսպէս, Վանկէնհայմի դարձուածքը կրկնով արդիւնք մը ունեցաւ. այդ դարձուածքը Գերմանիան Թիւրքիայի հետ բարեկամ յայտարարեց և հայթայթեց պահանջուած փախուստի ճամ-

բան՝ նաւերուն առջեւ բանալու համար Տարտանէլը եւ անոնց թոյլատրելու հոն մնալ :

Ասիկա՝ խաբեց ազգին ամէնէն տգէտ դասակարգերը եւ թիւրք Գահլիճին հայթայթեց ընդունելի պատճառ մը՝ Համաձայնութեան դիւանագէտներուն առարկութիւններուն ընդդիմադրելու : Բայց, միւս կողմէ, խելացի ո՛չ մէկ մարդ չի խաբուեցաւ ատկէ : Կոսպէնը եւ Պրեզաուն կրնային անուն փոխել, եւ գերման նաւազները կրնային ֆէս կրել, բայց մենք ամէնքս, առջի վայրկեանէն, այն գիտակցութիւնը ունէինք թէ՛ այդ վաճառումը կեղծիք մըն էր : Թիւրքիայի՝ այդ արդիական նաւերը կարենալ գնելու գաղափարը՝ ծիծաղելի պէտք է թուէր անոնց՝ որոնք երկիրին ելեմտական կացութիւնը կը ճանչնային : Մնաց որ, անոնք երբեք չմիացուեցան թիւրք նաւատորմիդին. ընդհակառակը նաւատորմիդն է որ անոնց միացուեցաւ : Երեւոյթները փրկելու նպատակով, ատենի մը համար սփ մը թիւրք նաւազներ գետնողեցան նախն մէջ. սակայն, գերման սպաները եւ նաւազներն է որ գործօն ծառայութեան մէջ մնացին : Վանկէնհայմ, ինձի հետ իր տեսակցութիւններուն միջոցին, երբեք գաղտնիք չձեւացուց՝ որ այդ նաւերը գերմանական ստացուածք ըլլային : «Չէի ակնկալեր այդչափ կարեւոր վճարագիրներ ստորագրելս», դիտել տուաւ որ մը, ակնարկութիւն ընելով այն ծախքերուն, որոնք կը վերաբերէին Կոսպէնի եւ Պրեզաուի, զորս միշտ «մեր նաւերը» կը կոչէր : Նոյնպէս, Թալէադ երկարօրէն ինձի բացատրեց թէ՛ անոնք իրենց չէին վերաբերեր : «Գերմանները ատանկ կը ձեւացնեն, ըսաւ ինձի, խնդալով իր մասնաւոր կերպովը : Ամէն պարագայի մէջ, մեր մասին ես շատ զօհ եմ որ անոնք հոս գտնուին. պատերազմէն ետքը, եթէ Գերմանները յաղթական ըլլան, անոնց վրայ ա՛լ չպիտի խորհին եւ մեզի պիտի թողուն : Եթէ յաղթուած ըլլան, չպիտի կրնան զանոնք մեր ձեռքէն առնել» :

Կայսերական կառավարութիւնը իրապէս չուզեց այս վաճառումը անկեղծօրէն [bona fide] կատարուած նկատել : Գոնէ, այն միջոցին՝ երբ Պերլինի յունական դեսպանը կը բողոքէր այդ իրաւախտհութեան դէմ, զայն իր երկիրին հանդէպ նուազ բարեկամական որակելով — միամտօրէն կը մոռնար, Յունաստանի կողմէ վերջերս ամերիկեան նաւերու գնումը! — գերման պաշտօնատարներ զայն հանդարտեցուցին՝ ցած ձայնով [sotto voce] ընդունելով որ՝ անոնց ճշմարիտ տէրերը միշտ Գերմանիա կը գտնուէին : Բայց երբ Համաձայնութեան դեսպանները անընդմիջաբար բողոքեցին յիշուած նաւերուն ներկայութեանը դէմ, թիւրք պաշտօնատարները ձեւացուցին թէ՛ անոնք ազգային

նաւատորմիդին ամբողջացուցիչ մաս կը կազմէին! Գերման սպաները եւ նաւազները անկեղծապէս կը ծիծաղէին այդ ծաղրելի յաւակնութեան վրայ. մասնաւոր հաճոյք մը կը զգային թրքական համազգեստ հագնելէն եւ ֆէս կրելէն, այդպէսով՝ աշխարհի ընծայելով այն շոշափելի ապացոյցը թէ՛ Քայգէրին օրինապաշտ զինուորները հիմա օսմանեան Նորին Վեհափառութեան հաւատարիմ հպատակներն էին :

Օր մը, Կոսպէնը Վոսիոր ելաւ, ռուս դեսպանատունին դէմը կանգ առաւ եւ խարխիս նետեց : Սպաները եւ նաւազները կամբջակին վրայ շարուեցան, թշնամի դեսպանին ճիշդ դէմը : Հանդիսաւորապէս հանեցին իրենց ֆէսերը եւ անոնց տեղը գերմանական գրակներ դրին : Նուազախումբը նուազեց. Deutschland über Alles, Die Wacht am Rhein [Գերմանիա ամէն բանէ վեր, Պահպանութիւն Հոռնոսի վրայ] եւ ուրիշ ազգային երգեր, որոնց նաւազները կ'ընկերանային խմբերգով՝ ամբողջ ձայնովն : Մէկ-երկու ժամ ատանկ ցայգանուազ մը հրամցնելէ ետքը դժբաղդ Կիրսի, սպաները եւ նաւազները հանեցին գերմանական գրակնին եւ կրկին դրին իրենց ֆէսերը : Կոսպէնը խարխիսը վերցուց եւ ցուկը հարաւ դարձուց դէպի իր խարխիսի կայանը, մինչդեռ ռուս դիւանագէտին ականջին մէջ կը տեսէր գերմանական ռազմերգներուն նուազող արծազանգը :

Յաճախ միտքէ անցուցած եմ քանի մը տեսութիւններ՝ որոնք հնարաւոր էին, եթէ մինչեւ Տարտանէլի մուտքը Կոսպէնը եւ Պրեզաուն հալածող անգլիական յաճանաւերը միջազգային օրէնքը չի բռնաբարելու համար չափազանց օրինապաշտ եղած չլլային : Ենթադրենք որ, նեղուցը ճեղքելով, յարձակած ըլլային իրենց հակառակորդներուն վրայ եւ զանոնք ընկղմած Մարմարա ծովին մէջ : Անշուշտ կրնային ատանկ շարժած ըլլալ, եւ հիմա մեր բոլոր գիտցածին նայելով՝ այդ ընթացքը օրինաւոր եղած պիտի ըլլար : Հաւանական է որ՝ այդ նաւերուն ոչնչացումը՝ արգիլէր Թիւրքիայի պատերազմի մտնելը, որովհետեւ անոնց տէր ըլլալը՝ կը հարկադրէր թիւրք բանակին միացումը գերման բանակին, երբ ժամանակը գար : Այդ նաւերով Սուլթանին նաւատորմիդը Սեւ Ծովի ռուսական նաւատորմիդէն աւելի զօրաւոր կը դառնար եւ զայն անկարելիութեան կը մատնէր Պոլիսի վրայ յարձակելու : Այսպէս, Կոսպէնը եւ Պրեզաուն՝ թիւրք եւ գերման ուժերուն գործնականապէս կ'ապահովէին Սեւ Ծովի վերհսկողութիւնը : Ատկէ գատ, անոնք Պոլիսը դիւրին կերպով կը զսպէին, եւ գերման նաւային իշխանութեան դիւրութիւնը կ'ընծայէին Թիւրքերը ահաբեկելու, պահանջուած պարագային :

Այս պատերազմը եւ իր հետեւանքները վերլուծող անաչառ պատմաբանը, համոզուած եմ թէ պիտի հաստատէ որ՝ այդ գերման: նաւերուն նեղուցէն անցքը Թիւրքիայի ճակատագիրը ամրացուց Գերմանիայի ճակատագիրին հետ եւ թիւրք Կայսրութեան բաղդը վճռեց:

Թիւրք Դահլիճին անդամներէն ոմանք, նոյն իսկ այն ատեն, զգացին ասիկա: Զրոյց շրջեցաւ որ — թէ եւ այս մանրավէպին վաւերականութիւնը չեմ երաշխաւորեր — նախարարական այն նիստին մէջ, ուր այդ կարեւոր որոշումը տրուեցաւ, համախոհութիւն չի կար: Կ'երեւայ թէ, եպարքոսը եւ ձէմալ ընդվզած են այդ «շինծու» վաճառումին: Ղէմ եւ պահանջած որ՝ ան իրական ըլլայ: Վիճաբանութիւնը իր բարձրագոյն կէտին հասած ըլլալով, էնվէր՝ որ Գերմանիայի գործիքն էր՝ յայտարարած է որ՝ ինք այդ գնումը գործնականապէս իրականացուցած է: Իր յայտարարութեան յաջորդող լուծեան մէջ, այս երիտասառը նափօլէոնը իր ատրճանակը հանած եւ սեղանին վրայ դրած է. «Եթէ հոս մէկը կը փափաքի ընդդիմախօսել այս գնումին, ըսած է խաղաղօրէն եւ սառնային շեշտով մը, պատրաստ եմ անոր պատասխանելու»:

Քանի մը օր ետքը, երբ Կոպկնը եւ Պրեզլաուն Վոսփորի մէջ վերջնականապէս դիրք կը գրաւէին, ելեւմտական նախարար ձափիտ Պէյ, այն ատեն Պոլիս գտնուող պելճիբացի ականաւոր իրաւաբանի մը կը հանդիպի.

«Ձեզի հաղորդելիք սոսկալի լուրեր ունիմ, կ'ըսէ թիւրք պետական-մարդը. — Գերմանները Պրիւսէյը առած են»: Հսկայ կազմուածքով Պելճիբացին, որ վեց ոտքէ աւելի հասակ ունէր, պզտիկ Թիւրքին ուսին վրայ կը դնէ ձեռքը մեղմովին.

«Ես ալ ձեզի համար աւելի սոսկալի լուրեր ունիմ, կ'ըսէ, նեղուցին մէջ Կոպկնը եւ Պրեզլաուն ցուցնելով: Գերմանները գրաւած են Թիւրքիան»:

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՎԱՆԿԷՆՆԱՅՄ ԻՆՍԻ ԿԵ ՊԱՏՄԷ ԹԷ՝ ԻՆՉՊԷՍ ՔԱՅԶԷՐԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ ՏՈՒԱԻ

Այս վաճառումը ամէն կողմ նոյնչափ դժնդակ տպաւորութիւն մը չի գործեց, ինչպէս գերմանական Դեսպանատունին մէջ: Հոն, այս մեծ «յաջողութիւնը» պարզապէս զինովցուց տպաւորական Վանկէնհայմը. յետոյ յետագայ դէպքեր ջղախոտեցին իր Տելտոնեան գայրոյթը [furor Teutonicus]:

Կոպկնը եւ Պրեզլաուն Թիւրքիա կը հասնէին գրեթէ ճիշդ այն պահուն՝ երբ Գերմանները կը գրաւէին Լիէժը, Նամիւրը եւ սահմանակից ուրիշ բաղաքներ: Յետոյ եկաւ դէպի Ֆրանսա արագ արշաւը, եւ երեւոյթովը յաղթական գրոհը՝ Փարիզի վրայ: Վանկէնհայմ, իբր զինուորուած Բրուսիացի՝ ինչպէս էր, այս բոլորին մէջ կը տեսնէր քառասուն տարուան երագի մը իրականացումը:

Դեսպանատուները տակաւին իրենց ամառնային բնակավայրին մէջ կը մնային, Վոսփորի ամուսններուն վրայ, ուր Գերմանիա սքանչելապէս կազմակերպուած զրասնեակներ եւ շքեղ պարտէզ մը պարունակող հոյսպանծ շէնքի մը տէր էր, որ Սուլթանին կողմէ անձնապէս նուիրուած էր կայսերական Կառավարութեան: Որեւէ պատճառով մը, պաշտօնակիցս հաճոյք չզգալ կը թուէր իր պալատէն, եւ ընդհակառակը մեծ նախասիրութիւն մը կը ցուցնէր պահապանի յարկաբաժինին խոնարհ տախտին, որ գլխաւոր շէնքին դէմը կը գտնուէր եւ Վոսփորի սրբնթաց ջուրերէն քսան ոտք վերը գտնուող փողոցին վրայ կը հակէր, տեղ՝ որ իրապէս պահապանին միայն յատկացուած էր: Ես պիտի յիշեմ միշտ արտասովոր տեսարանը՝ զոր մեզի ընծայեց այդպէս, Մառնի ճակատամարտին նախընթաց սրտատրոփող օրերուն, իր քարաշէն տախտէն դեսպանատուն երթալ գալով: Բոլոր անոնք՝ որոնք Պոլիսէն հիւսիսային արուարձանը կը դառնային, այդ ճամբան կը բռնէին, եւ նոյն իսկ ուռս եւ Ֆրանսացի դիւանագէտները յաճախ կ'անցնէին հոնկէ, բնականաբար բրտօրէն անտեսելով դուռին առջեւ կեցող յաղթական դեսպանը:

Երբեմն կը խորհիմ որ՝ յատկապէս հող կը նստէր, դէպի անոնց զրկելու համար իր սիկառոթին ծուխը, եւ ասիկա ինծի կը

յիշեցնէ Շիլլէրի «Կիյեօմ Թէլ»ին այն տեսարանը՝ ուր զուիցն-
րիացի ղիւցազներ, հողի խորշի մը մէջ դարանակալ, իր աղեղը եւ
նետը բովը, իր զոհին՝ Կէյսլէրի մօտենալուն կը սպասէ .

Հոս, այս խոր կիրճէն եւ որ պիտի Կ սնցնի սն .
Ուրիշ ո՛չ մէկ ճամբայ չի օսմիտ Բիււսնայս :

Վանկէնհայմ այսպէս ճամբուն վրայ կը բռնէր իր բարեկամ-
ները — կամ անոնք՝ զորս բարեկամ կը նկատէր — եւ իր հաս-
կցած կերպովը կը տօնէր գերմանական յաղթանակները : Նշմա-
րեցի որ այդ տեղը դիրք կը բռնէր, երբ գերման բանակները
յաղթական էին . բայց անոնց ձախողութիւնը լուսածին պէս,
կատարելապէս անտեսանելի կը դառնար: Ինչպէս որ իրեն դիտել
տուի, իր հնարքը տեսակ մը կապ ունէր նննզուած ջերմաչափ-
ներու խամանիկներուն հետ . խամանիկները իրենց տուփէն
կ'ելլեն՝ երբ օդը աղէկ է . բայց փոթորիկ ծանուցուելուն պէս՝
տուփը կը մանեն : Մեր դիւանագիտական շրջանակին պէս,
ինք ալ գնահատեց զուարմարանութիւնս :

Սկիզբը, մթնոլորտը որոշապէս նպաստաւոր էր գերման
դեսպանին : Իր երկիրին յաջողութիւնները ա՛յնչափ զրգոեցին
զինքը որ՝ ճշմարիտ անխտնեմութիւններ գործելու ելաւ : Օր մը,
իւր յորդագեղութեան մէջ, ինծի խոստովանեցաւ զանազան դէպ-
քեր, որոնք իմ կարծիքովս պատմական մեծ արժէք մը պիտի
կրեն միշտ : Ինծի յայտնեց որոշակի թէ՛ ինչպէս Գերմանիա
պատերազմը փութացնել ջանացած էր, եւ ե՛րբ տեղի ունեցած էր
ադ : Այդ գաղտնիքը ինծի հաղորդելը այսօր այլանդակ անգաղտ-
նապահութիւն մը կը նկատուի, բայց յիշենք Վանկէնհայմի միտ-
քին վիճակը՝ այդ օրերուն մէջ . բովանդակ աշխարհ այդ ատեն
Փարիզը դատապարտուած կը նկատէր, եւ Վիլհէլմ Բ.ի ներկա-
յացուցելը չէր քողարկեր իր համոզումը թէ՛ պատերազմը երկու
կամ երեք ամիսէն աւելի չպիտի տուէր: Գերմանական ձեռնարկը
յայտնապէս կը հասուննար այդ ծրագիրին համեմատ :

Արդէն յիշատակեցի թէ՛ Աւստրիայի Մեծ Դուքսին սպան-
նումէն անմիջապէս հտքը՝ Վանկէնհայմ Պերլին մեկնեցաւ . արդ,
ինծի յայտնեց իր յանկարծակի բացակայութեան պատճառը .
«Պերլին կանչուած էի, ըսաւ ինծի, ներկայ ըլլալու համար կայ-
սերական խորհուրդի մը, որ զուամարուեցաւ Փօցտամի մէջ, Յու-
լիս օին, եւ որուն նախագահեց Քայզէրը»: Կարեւոր պետութիւն-
ներու մօտ ծառայող զրեթէ բոլոր գերման դեսպանները ներկայ
էին այդ խորհուրդին եւ ինքն ալ կանչուած էր ձեռնհասօրէն տեղե-
կութիւններ հաղորդելու Թիւրքիայի մասին եւ լուսաւորելու իր

պաշտօնակիցները՝ ընդհանուր կացութեանը վրայ այդ ազգին, որ
արդէն առանցքը նկատուած էր մօտալուտ պատերազմին :

Այդ ժողովին ներկայ եղող անձնաւորութիւններուն վրայ
խօսելով, Վանկէնհայմ անուններ չթուեց ինծի. բայց մասնաւո-
րապէս յիշեց — եղելութիւնները այնչափ կարեւոր են որ՝ կը
յիշատակեմ գերմանական լեզուով գործածած իր իսկ բացատ-
րութիւնները — «Die Häuper des Generalstab und der Marine»
[զինուորական եւ ծովային Սպայակոյտի պետերը], որմէ ննթադ-
րեցի որ՝ իր խօսքը կ'ուղղուէր ֆօն Մօլթթէի եւ ֆօն Թիւրիբցի:
Նոյնպէս կանչուած էին երկաթուղիներու տնօրէնները եւ գեր-
ման ճարտարարուեստին պետերը եւ բոլոր անոնք՝ որոնց աջակ-
ցութիւնը ա՛յնչափ անհրաժեշտ էր Գերմանիայի պատերազմի
պատրաստութիւններուն՝ որչափ նոյն ինքն բանակը :

Վանկէնհայմ յետոյ ինծի պատմեց թէ՛ Քայզէրը անոնց
իւրաքանչիւրին ըրած է հետեւեալ հարցումը. «պատերազմի
պատրաստ էք»: Բոլորը պատասխանած են. «Այո՛» . բացի դրա-
մատէրներէն՝ որոնք երկու շաբաթ պահանջած են, իրենց օտար
արժեթուղիները ծախելու եւ փոխառուութիւններ կնքելու համար:
Այդ ատեն, քիչ անձեր Սարայէվօի եղերերգութիւնը պատերազմ
յարուցանելու կարող դէպք մը կը նկատէին: Այդ համաժողովին
մէջ, ըսաւ ինծի Վանկէնհայմ, բոլոր նախագգուշութիւնները
ձեռք առնուեցան՝ արգիլելու համար որ այդ մասին կասկած
չունեցուի: Որոշուեցաւ սեղանաւորներուն ժամանակ տալ՝ հեռա-
տեսուած պատերազմին համար կազմակերպուելու . յետոյ այդ
ժողովին զանազան անդամները հանգիստ սիրտով իրենց գործին
գացին կամ արձակուրդի մեկնեցան: Քայզէրը դէպի Նորվեկիա
ճամբայ ելաւ. ֆօն Պէթման-Հօլվէկ զնաց հանգիլ եւ Վանկէն-
հայմ Պոլիս վերադարձաւ :

Այդ խորհուրդին վրայ խօսելով, խօսակիցս բնականաբար
ընդունեց որ՝ Գերմանիա պատերազմը փութացուցած էր :

Կարծեմ շատ հպարտ էր այդ բոլոր գործերուն համար.
հպարտ՝ որ իր երկիրը ա՛յնչափ մեքոսով եւ կանխատեսու-
թիւնով վարուած էր. եւ մասնաւորապէս հպարտ՝ ա՛յնչափ
կարեւոր ժողովի մը մասնակցելու հրաւիրուած ըլլալուն
համար :

Յաճախ զարմանքով մտածած եմ թէ՛ ի՛նչ բան Վանկէն-
հայմը դրդած էր այդ տեսակ խոստովանութիւն մը ընելու ինծի.
կը կարծեմ թէ՛ ատոր ճշմարիտ պատճառը վերագրելի է իր
ձայրայեղ սնափառութեանը, իր փափաքին՝ ինծի ցուցնելու
ի՛նչ ինք ո՛րչափ մտերմօրէն կապուած է իր կայսեր զուամ

րած գաղտնի խորհուրդներուն եւ թէ ի՛նչ դեր կատարած էր ինք՝ պատերազմ յարուցուելուն մէջ: Պատճառը ի՛նչ որ ալ ըլլայ, իր անգաղտնապահութիւնը՝ զարհուրելի ոճիրներուն յանցաւորները ինծի ծանօթացնելու որոշ արդիւնքը ունեցաւ: Այն զանազան կապոյտ, կարմիր եւ դեղին տետրակները, որոնք պատերազմին յաջորդող առաջին ամիսներուն մէջ Ներսիսիսի ողորդեցին, եւ Պերլինի կառավարութիւնը չքանդացնելու համար գերման փոստակահանին կողմէ հրատարակուած հարիւրաւոր վաւերաթուղթերը, երբեք ամենաչնչին տպաւորութիւն չեն գործած իմ վրայ: Որովհետեւ իմ եզրակացութիւններս հիմնուած չեն ենթադրութիւններու կամ կարծիքի մը, կամ պատահական տուիքներու ուսումնասիրութեան վրայ. ես պէտք չունիմ վիճելու այդ խնդիրին վրայ կամ զայն փաստելու: Ես գիտեմ: Այդ դաւաճանութիւնը, որ պատճառ եղած է մարդկային ամէնէն մեծ եղերեքութեան, նիւթուած է Քայզերին եւ իր «քամարիլա»ին կողմէ, Փօցտամի այդ համաժողովին մէջ, 1914 Յուլիս 5ին: Անոր գլխաւոր գործիչներէն մէկը, զինովցած խաբուսիկ յաղթանակի մը յաջողութենէն, անձնապէս ինծի պատմեց բոլոր մանրամասնութիւնները:

Երբ լսեմ պատերազմին պատասխանատուութիւններուն վէճը. կամ կարգամ Գերմանիայի կողմէ բարուրուած ձախաւեր կամ խաբեպատիր արդարացումները, ուրիշ բան չունիմ ընելիք, բայց եթէ յիշել Վանկէնհայմը, ա՛յնպէս ինչպէս ներկայացաւ ինծի այդ Օգոստոսի ցորեկէ-ետքը, խիստ շահագրգիռ՝ ինծի պարզած ստեղծ իր տեղեկագիրը այդ պատմական ժողովին մասին, խոշոր սիկատի մը ծուխը փչելէն: Ի՛նչ օգուտ՝ այս մասին վիճելու համար ժամանակ կորսնցնելէն: Այդ համաժողովը գումարուեցաւ Յուլիս 5ին, եւ Սերպիայի ուղղուած վերջնագիրը դրկուեցաւ Յուլիս 22ին, մօտաւորապէս երկու շաբաթուան այն միջոցը՝ որ խնդրուած էր դրամատէրներուն կողմէ, իրենց գործառնութիւնները կատարելու համար — պայմանաժամ՝ զոր լայնօրէն օգտագործեցին, ինչպէս կը վկայեն աշխարհի գլխաւոր սակարաններուն հաշուեցոյցները, որովհետեւ անոնք կը յայտնագործեն գերման դրամատէրներուն կարեւոր արարքները: Զգալի անկումներ յարուցին եւ այդ շարժումը հրապարակին վրայ զանազան անակնկալներ առաջ բերաւ. բայց Վանկէնհայմի բացատրութիւնը ամէն տարակոյս կը ջրէ. Գերմանիա՝ իբր պատերազմի նախագաղտութիւն՝ իր արժեթուղթերը հնչուն դրամի կը վերածէր:

Եթէ մէկը կը փափաքի ըսածներուս ճշմարտութիւնը ստուգել, կը յանձնարարեմ այդ երկու պատմական շաբաթներուն

Նիւ-Եօքքի Սակարանին արժեթուղթերու զինին ցուցակը քննել: Պիտի տեսնէ որ՝ վրդովիչ անկումներ տեղի ունեցած են, մասնաւորապէս միջազգային արժեթուղթերուն վրայ: Յուլիս 5էն 22, «Եունիըն Փէսիֆիք»ը՝ ինկաւ 155½ էն 127½ ի, «Պէթիսօր էնտ Օհիօ»ն՝ 91½ էն 81 ի, «Եունայթըտ Սթէյթս Սթիլը»՝ 61 էն 50½ ի, «Քէնէտիըն Փէսիֆիք»ը՝ 194 էն 185½ ի եւ «Նօրտըրն Փէսիֆիք»ը՝ 111¾ էն 108 ի: Այդ ատեն, ծայրայեղ մաքսապաշտպանները զինելու անկումին պատասխանատու բռնեցին սակերու վրայ դրուած Սայմընս-Բնորվուտի օրէնքը. մինչդեռ կառավարութեան ուրիշ քննադատներ զայն վերագրեցին «Իաշնակցային Պահեստադրամի Օրէնք»ին [Federal Reserve Act] — որ սակայն գործադրութեան մէջ չէր: Եւ Ուօլ-Սթրիթի դրամափոխները եւ ուրիշ անուանի դրամատէրներ ի՛նչպէս կրնային կասկածիլ որ՝ Քայզերին նախագահութեանը տակ գումարուած խորհուրդի մը մէջ այդ տեսակ մեքենայութիւն մը նիւթուած էր: Վանկէնհայմ ո՛չ միայն այդ բոլոր մանրամասնութիւնները ինծի հաղորդեց, այլ նաեւ ան զանոնք յայտնեց Պոլիսի իտալական դեսպան մառքի Կառօնիի. (Իտալիա տակաւին տեսականապէս Գերմանիայի զինակիցն էր):

Աւստրիական դեսպան Մառքի Փալլավիչինի չէր ջանար քողարկել թէ՛ կեղրոնի Տէրութիւնները փութայուցած էին պատերազմը: Օգոստոս 18ին, Ֆրանսուա-ժօզէֆի ծնունդի տարեդարձին առիթով, պաշտօնակիցիս շնորհաւորական սովորական այցելութեան զացի: Պօսակցութիւնը բնականաբար դարձաւ վեհապետին վրայ՝ որ իր ութսունըհինգերորդ տարիքը կը մտնէր: Փալլավիչինի հպարտութիւնով եւ յարգանքով խօսեցաւ անոր վրայ: Ինծի նկարագրեց անոր միտքի յստակատեսութիւնը եւ պայծառատեսութիւնը, անոր՝ միջազգային խնդիրներու կատարեալ հասկացողութիւնը եւ ամէն գործերու վրայ կատարած անձնական հսկողութիւնը: Բացատրելու համար այն կարեւորութիւնը՝ զոր Ֆրանսուա-ժօզէֆ այժմէական դէպքերուն կ'ընծայէր՝ իր ներկայացուցիչը իբր օրինակ յիշեց ներկայ պատերազմը: Մայիս ամսուն, Փալլավիչինի Վիեննայի մէջ Կայսեր կողմէ ունկնդրութեան ընդունուած էր: Այդ ատեն, միապետը եւրոպական պատերազմը անխուսափելի կը նկատէր: Կեղրոնի տէրութիւնները չէին կրնար Պուքրէշի դաշնագիրը՝ Պալքանեան հարցը վերջնականապէս լուծող նկատել, եւ միայն ընդհանուր պատերազմ մը կրնար յարմար լուծում մը առաջ բերել, յայտարարած էր Կայսրը Փալլավիչինիի: Պուքրէշի դաշնագիրը — չմոռնանք աս — Պալքանեան երկրորդ պատերազմին վերջ

դրաւ : Ան՝ բացի Պոլիսէն եւ շրջակայքի հողի աննշան մասէ մը . Թիւրքիայի եւրոպական հողամասերը կը բաժնէր Պալքանեան ազգերուն միջեւ , մասնաւորաբար Յունաստանի եւ Աերպիայի միջեւ : Այս կարգադրութիւնը նշանակելի կերպով կը մեծցնէր այս վերջին ազգը եւ անոր աղբիւրները կ'աւելցնէր անանկ չափով մը որ՝ Աւստրիա զայն արդէն եւրոպական նոր Պետութիւն մը դարձած կը տեսնէր , բաւական հզօր՝ դիմակալելու համար իր տարածումի ծրագիրներուն , որովհետեւ կրկնակ միապետութիւնը իր լուծին տակ սերպ կարեւոր ժողովուրդ մը կը պահէր Պոսնայի եւ Հերսէօի մէջ , ժողովուրդ՝ որուն գերագոյն բաղձանքն էր իր մայր երկիրին միացումը : Ատկէ զատ , Արեւելքի մէջ համագերմանական նպատակները կը պահանջէին Աերպիայի ոչնչացումը , որ՝ ո՛րչափ ատեն որ անեղծ մնար՝ Գերմաններուն Արեւելքի ճամբան կը խափանէր : Աւստր-եւ-Գերմանները հաշուած էին որ՝ Պալքանեան պատերազմը զայն պիտի ոչնչացնէր՝ իբր ազգ . որ՝ Թիւրքիա պարզապէս պիտի բնաջնջէր Փեթրօ թագաւորին բանակները : Արդ , այս ծրագիրին սպասուած իրականացումը՝ աւստրիական եւ գերմանական ամէն միջամտութիւն արգիւցց նախընթաց երկու պատերազմներուն մէջ : Բայց արդիւնքը ճիշդ հակառակը եղաւ , որովհետեւ այդ պատերազմէն ծնաւ Աերպիա մը՝ աւելի հզօր քան երբեք , պողպատէ պատնէշի մը պէս ցցուելով Գերմանիայի ճամբուն վրայ :

Պատմագէտներուն մեծ մասը կ'ընդունի որ՝ Պուրբէշի դաշնագիրը պատերազմը անխուսափելի դարձուց : Մառքի Փալլափիլինիի արտայայտութիւնը կը վկայէ որ նոյն ինքն Ֆրանսուա-ժօզէֆ ձայնակից էր այս կարծիքին : Այն նիստը , ուր կայսրը այդ յայտարարութիւնը ըրաւ , տեղի ունեցաւ Մայիս ամսուն , Մեծ Դուքսին սպաննուէն ամիսէ մը աւելի առաջ : Այսպէս , մենք Աւստրիայի Կայսեր պաշտօնական խոստովանութիւնը ունինք որ՝ պատերազմը պիտի պայթէր , Սարայէվօի տռամէն անկախաբար : Չափազանց ակներեւ է որ՝ այս ոճիրը պարզապէս իբր հաւանելի պատրուակ ծառայեց պատերազմի մը համար՝ որ անդառնալիօրէն որոշուած էր կեդրոնական Կայսրութիւններուն կողմէ :

ԵՕԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Օգոստոսի եւ Սեպտեմբերի այդ յիշատակելի ամիսներուն , Վանկէնհայմ պահեց իր արտառոց դիրքը . երբեմն քաղցրաբարոյ եւ սնապարծ էր , երբեմն ընկճուած , միշտ ջլային ու անծկոտ , ջանալով լաւ վարուիլ Ամերիկացիի մը հետ՝ ինչպէս էի ես . ատեւալաւ եւ գծուծ էր՝ թշնամի Տէրութիւններու ներկայացուցիչներուն հանդէպ : Ան կը մատնէր իր վախերը եւ անհամբերութիւնը , շարունակելով նստիլ այն համբաւաւոր նստարանին վրայ՝ որուն մասին խօսեցայ աւելի վերը եւ ուրկէ կը ցատկէր , երկու-երեք վայրկեան առաջ Քօրֆօլսօի կողմէ հաղորդուած Պերլինի տեղեկութիւնները քաղելու համար : Ո՛րեւէ առիթ չէր փախցնէր՝ յաղթանակներու լուրերը տարածելու համար . շատ անգամներ — հակառակ սովորութեան — առանց մուտքը ծանուցանելու՝ եկաւ զիս տեսնել , ինծի տեղեկացնելու համար վերջին առաջացումները եւ կարդալու ամփոփոյթները իր ստացած նոր հեռագիրներուն : Միշտ անկեղծ կը թուէր , ուղղամիտ եւ նոյն իսկ անխորհուրդ : Կը յիշեմ իր վիշտը՝ այն օրը՝ երբ Անգլիա պատերազմ յայտարարեց , որովհետեւ միշտ մեծ հիացում մը սնուցած էր անոր հանդէպ , իր այդ համակրութիւնը մինչեւ անգամ Ամերիկայի վրայ տարածելով : «Երեք մեծ ազգեր միայն կան , կը կրկնէր միշտ , Գերմանիան , Անգլիան եւ Միաց.-Նահանգները : Այս երեքը պէտք է միանան՝ աշխարհը կառավարելու համար» : Բրիտանական կայսրութեան հանդէպ իր խանդավառութիւնը յանկարծ պաղեցաւ , երբ ան վճռեց իր դաշնադրութիւններուն խոստումը յարգել եւ պատերազմ յայտարարեց : Վանկէնհայմի կարծիքով , պատերազմը կարճ պիտի տեւէր եւ Սէտանի տարեդարձը (2 Սեպտեմբեր) պիտի տօնուէր Փարիզի մէջ : Բայց երբ Օգոստոս 5ին դեսպանատուն գացի ; զինքը սովորականէն աւելի յուզուած եւ մտախոհ գտայ : Պառոնուհի Վանկէնհայմ , ազնուական եւ գեղանի կին , իր մօրը կողմէ գրուած 1870ի պատերազմի պատմութիւն մը կը կարդար : Երկուքն ալ՝ Անգլիայի որոշումը անձնական սրտցաւութիւն մը կը նկատէին . եւ ինչ որ ամէնէն աւելի գէշ տպաւորութիւն ըրաւ իմ վրաս , հաստատուելս էր հասկացողութեան այն բացարձակ պակասին՝ թէ ի՛նչ էր դրդիչը այդ որոշումին : «Ի՛նչ ողորմելի

քաղաքագլխու թիւն», գոչեց քանի՛-քանի անգամներ : Իր վարքը՝ Պէթման-Հօլվէկի «Թուղթի կտոր»ին առիթով ունեցած վարքը կարժէր !

Օգոստոս 26ին, պտոյտի մը միջոցին, դիպուածով իրեն հանդիպեցայ : Սովորականին համեմատ, սկսաւ Ֆրանսայի մէջ գերմանական յաղթանակները գովարանել, կրկնելով իր սովորական մարզարէութիւնը թէ՛ Քայզերին բանակները շաբաթուան մը միջոցին Փարիզ պիտի ըլլային : «Այս պատերազմին վճռական գործօնը, աւելցուց, Բրուսի հրետանին պիտի ըլլայ : Եւ լաւ յիշեցէք որ՝ այս անգամ մենք պատերազմ կ'ընենք : Եւ պատերազմ պիտի ընենք՝ առանց որեւէ նկատումի [rücksichtslos] : Թոյլ չպիտի տանք որ արգիլուինք՝ ինչպէս 1870ին : Այն ատեն, Վիքթորիա Թագուհին, Չարը եւ Ֆրանսուա-ժօզէֆ միջամտեցին եւ մեզ համոզեցին խնայել Փարիզի : Բայց այսօր, ո՛չ մէկը պիտի միջամտէ : Մենք Պերլին պիտի փոխադրենք՝ Բարիզեան Միւզէներու Պետութեան վերաբերող բոլոր զանձերը, ճիշդ ինչպէս Նաիօլէոն Ֆրանսան հարստացուց իտալական արուեստով» :

Չափազանց բացայայտ է որ՝ Մառնի ճակատամարտը Փարիզը փրկեց Լուվէնի ճակատագիրէն :

Վանկէնհայմ այնչափ դրականապէս համոզուած էր անմիջական յաղթանակի մը՝ որ վիճարանութեան կը մօտենար հաշտութեան պայմաններով : «Երբ Գերմանիա յաղթէ Ֆրանսական բանակներուն, ըսաւ, բովանդակ երկիրին մէջ զօրացրուում եւ վնասի հատուցում պիտի պահանջէ : Ֆրանսա կրնայ այսօր պարտագերծ ըլլալ հինգ միլիառ տօլարով. բայց եթէ յարատեւէ կռիւին մէջ, պարտաւոր պիտի ըլլայ վճարել քսան միլիառ» :

Իր կարծիքով, Գերմանիա ատկէ զատ ամէն կողմ նաւահանգիստներ եւ հանքածուխի մթերանոցներ պիտի պահանջէր : Այդ տեսակ պահանջումներ ընելով, Գերմանիա այդ ատեն նոր հողեր չէր փնտռեր այնչափ, որչափ կը փնտռէր առեւտրական մեծ շահերու տիրացումը :

Գերմանիա որոշած էր աշխարհի առաջին առեւտրական ազգը ըլլալ, եւ ատոր համար՝ պէտք ունէր ազատ նաւահանգիստներու, Պաղտատի երկաթուղիին եւ ընդարձակ առանձնաշնորհումներու՝ Հարաւային Ամերիկայի եւ Ափրիկէի մէջ : Վանկէնհայմ խոստովանեցաւ ինծի թէ՛ իր հայրենքը չէր փափաքեր ձեռք անցընել նահանգներ՝ որոնց բնակիչները գերմաներէն չէին խօսեր, որովհետեւ Ալզաս-Լօռէն, Լեհաստան եւ ուրիշ ոչ-գերման երկիրներ բաւական նեղութիւն կը պատճառէին իրեն : Այս յայտարարութիւնները անշուշտ շահագրգռական են այսօր, նկատի առնելով

Ռուսիայի դէպքերը : Դեսպանը, նաւահանգիստներու եւ ածխային կայաններու վրայ խօսած ատեն՝ չյիշեց Անգլիան. սակայն, ճիշդ անոր վրայ է որ կը խօսէր, որովհետեւ ուրիշ ո՞ր ազգ կարող պիտի ըլլար զանոնք տալ իրեն «ամէն կողմ» :

Բոլոր այս տեսակցութիւնները զիս նուազ չէին լուսաւորեր, ո՛րչափ : 5 Յուլիսի համաժողովին յայտնութիւնները : Այդ վերջին դէպքը բացորոշապէս կ'ապացուցանէր որ՝ Գերմանիա գիտակցօրէն պատերազմ բացած էր, մինչդեռ իր հսկայական ծրագիրները, ինչպէս կը բացատրէր իր դեսպանը. — այնչափ կարող՝ բայց քիչ մը մեծախօս. — կը քօղամերկէին նոյնինքն ձեռնարկին գերագոյն պատճառները : Վանկէնհայմ մանրակրկիտ կերպով ինծի նկարագրեց ծովահէններու արշաւանքը, Գերման Կայսրութեան կողմէ ընդարձակ սահմանի մը վրայ տարածուած, արշաւանք՝ որուն մէջ յաղթականներուն աւարը պիտի գոյանար՝ իրենց դրացիներուն կողմէ դիզուած հարստութիւններով . բացատրեց նաեւ այդ նոյն դրացիներուն կողմէ դիզուած դրամներով եւ ճարտարարուեստով դարերէ իվեր կառուցուած տիեզերական դիրքը :

Եթէ Անգլիա ջանայ մեզ սովի մատնել, ըսաւ, մեր պատասխանը շատ պարզ պիտի ըլլայ . մենք ալ սովի պիտի մատնենք Ֆրանսան : Յիշեցէ՛ք որ՝ այդ ատեն Գերմանիա մէկ շաբաթուան մէջ Փարիզը առնել կը յուսար, ինչ որ, իր կարծիքով, բոլոր երկիրին վերջնական վերատեսչութիւնը պիտի ապահովէր : Իր սկզբնական ծրագիրին համեմատ — այնպէս՝ ինչպէս Կայսեր ներկայացուցիչը կ'ըմբռնէր — այդ ազգը անշուշտ պէտք էր իբր գրաւ ծառայել՝ Անգլիայի հանդէպ . այդ ազգը տեսակ մը պատանդ պիտի կազմէր եւ եթէ Մեծ Բրիտանիա զինուորական եւ ծովային առաւելութիւններ շահէր, Գերմանիա անմիջապէս հակա-յարձակում պիտի գործէր՝ նեղելով Ֆրանսական ժողովուրդը : Այդ միջոցին, Քայզերին զինուորները Պելճիքացի անմեղներ կը սպաննէին, զանոնք պատժելու նպատակով իրենց յուր վարմունքին համար, եւ բացայայտ է որ՝ Գերմանիա մտադիր էր այդ սկզբունքը գործադրել ամբողջ ազգերու, ինչպէս նաեւ անհատներու :

Այդ տեսակցութեան միջոցին, ինչպէս ուրիշ խօսակցութիւններու մէջ, Վանկէնհայմ կատաղի զայրոյթ մը յայտնեց Ռուսիայի հանդէպ .

«Մենք Ռուսիայի կոշիւն (sic !) վրայ կոխեցինք, ըսաւ ինծի անխնայօրէն, եւ ոտքերնիս չպիտի վերցնենք» : Ատով, կամաց մը կը հասկցնէր որ Գերմանիա Կոպկեր եւ Պրեզաւոն Տարտանէլ

զրկած էր, որպէսզի կացութեան տէր ըլլայ Պոլիսի մէջ . որովհետեւ . Վանկէնիայսի կարծիքով, հին բիւզանդական մայրաքաղաքը յաղթական Ռուսիայի մը պահանջելիք մրցանակը եւ տեւականապէս բաց նաւահանգիստ մը ունենալու առիթը պիտի ըլլար, բան մը՝ որուն հրամայական պահանջքը ունէր. ա՞դ էր Ռուսիայի զգայուն կէտը — իր կոչքը :

Ատկէ զատ, կը պարծէր որ՝ 174 թնդանօթներ զետեղուած էին Տարտանէլի մէջ . որ՝ նեղուցը կրնար 30 վայրկեան չեղած գոցուիլ . կըսէր նաեւ որ՝ ծովակալ Սուշոն իրեն ծանուցած էր որ՝ նեղուցին մուտքը չէր կրնար բռնաբարուիլ : «Սակայն , մենք Տարտանէլը չպիտի գոցենք , հաստատեց , միայն թէ Անգլիա չի ջանայ այդ կողմէն յարձակիլ» :

Թէեւ այդ ազգը Գերմանիայի դէմ պատերազմ- հռչակած ըլլար , սակայն դեռ զինուորական գործողութիւններուն մէջ կարեւոր մասնակցութիւն մը չէր առած . իր «ողորմելի պզտիկ բանակը»՝ Մօսիի դիւցազնական նահանջը կը կատարէր : Վանկէնիայմ բացարձակապէս կ'արհամարհէր այդ թշնամին : «Մենք մտադիր ենք , բացատրեց ինձի , մեր խոշոր թնդանօթները Քալէ զետեղել եւ ռմբակոծել Անգլիայի ծովափերը , Մանչի վրայէն» : Քալէի տասը օրէ աւելի իրենց պայքարին դիմանալը՝ անկարելիութիւն մը կը թուէր իրեն : Ինչպէս այս տեսակցութեան, նոյնպէս զրեթէ այդ թուականին տեղի ունեցած ուրիշ տեսակցութիւններու մէջ , կը խնդար այն գաղափարին վրայ թէ՛ Միացած - Թագաւորութիւնը կարենայ անկախ մեծ բանակ մը ստեղծել : «Այդ յաւակնութիւնը անիմաստ է, ըսաւ : Մերինին նման բանակ մը մէջտեղ հանելը՝ զօրապաշտութեան բազմաթիւ սերունդներու կը կարօտի : Մենք զայն երկու հարիւր տարուան մէջ կազմեցինք : Երևուն տարուան յարատեւ դաստիարակութիւն պէտք է՝ մերինին նման զօրավարներ պատրաստելու համար : Մեր բանակը միշտ պիտի մնայ իր կարմակերպուած ձեւովը : Ամէն տարի 500,000 նորագիրներ զինուորական տարիքի կը հասնին մեր մէջ եւ այս թիւը տառապէս չի կրնար նուազիլ. այնպէս որ՝ մեր զինուորական զօրութիւնը անեղծ պիտի մնայ» :

Քանի մը շաբաթ ետքը , — նախատինք քաղաքակրթութեան , — Գերմանները կը ռմբակոծէին բրիտանական ծովափունքի քաղաքներ՝ ինչպէս Աքառպօրու եւ Հառթլիփուլ , ինչ որ յանկարծակի ներշնչում մը չէր , այլ խնամքով մշակուած ծրագիրներու որոշուած մաս մը : Աւելի ըլլալով, 1914 Սեպտեմբեր ծին, պաշտօնակիցս ինձի ծանուց որ՝ Գերմանիա դիտաւորութիւն ունէր ռմբակոծելու անգլիական բոլոր նաւահանգիստները ,

խափանելու համար երկիրին պարենաւորումը : Նոյնպէս յայտնի է որ՝ այն վայրագութիւնը՝ որուն ապացոյցը տուաւ Կայսրը Ամերիկայի ծովային վաճառականութեան հանդէպ՝ ֆօն Թիրփիցի յանկարծակի որոշումին արդիւնքը չէր , որովհետեւ նոյն թուականին Վանկէնիայմ կը կանխէր ինձի ըսել թէ՛ Միաց.-Նահանգներուն շա՛տ վտանգաւոր պիտի ըլլար Անգլիա նաւ զրկել :

Մօրկընքաուի այս գիրքը հրատարակած ըլլալը լսելուս, որոշե՛ր ե՛ր անոր հայերէն քարգմանութիւնը ներկայացնել հայ հասարակութեան : Բայց, ամիսներով կարելի չեղաւ ունենալ գիրքը : Վերջեւ, երբ քանի մը օրինակներ հասան Պոլիս՝ Փրանս. քարգմանութեան, անմիջապէս մեռնարկեցի իրագործել վաղեմի նպատակս, սեղծելով անոր հրատարակութեանը անհրժեշտ նիւթական հսկայ ծախիք, զոր կը վստահիմ թէ՛ հայ հասարակութիւնը կը գիտնայ իր ընթերցասիրութիւնովը փոխատիւնը, ազգային պարտք մը նկատելով ծանօթանալ հայաստ Ամերիկացիին պատմական մեծ արժեքով այս երկին, որ Հայկական Դատին ուժգին շատագնապակն մըն է, հայ զգացումներով բրբռուն սրտերու բոյր համակրութիւններուն արժանի : Հիմա վերջապէս գտած ըլլալով անգլիերէն թնագիրը, այս օրդ պրակին 85րդ էջէն՝ քարգմանութիւնը կը շարունակեմ անգլիերէն իսկական թնագիրէն : Հատորը աւարտեցուն, վերջին պրակին մէջ, առանձին փայլուն բուրբի վրայ, ընթերցողները պիտի գտնեն նաեւ գեղափայ նկարները Մր. Ուիլյամի, Մր. Մօրկընքաուի եւ Տկն. Մօրկընքաուի :

Մանօք. Թարգմանիչիմ

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ „ՓՈԹՓԱԿԱՆՏ՝Ի ԴԱՍԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ

Օգոստոսին եւ Սեպտեմբերին, Գերմանիա դիտաւորութիւն չունէր Թիւրքիան անմիջապէս պատերազմին մէջ մտցնելու: Այս երկիրին բարօրութիւնովը եւ խաղաղութեան պահպանումովը իրականապէս շահագրգռուելուս, Ուաշինկընը հեռագրեցի, հարցնելով թէ՛ կրնայի՞ Թիւրքիայի վրայ ազդեցութիւնս բանեցնել, որպէսզի չէզոքութիւն պահէ: Կառավարութիւնը արտօնեց զիս, պայմանով որ՝ իմ գործերս պաշտօնական չըլլային, այլ էապէս մարդկայնական շարժառիթներու վրայ հիմնուած: Իմ անզլիացի եւ ֆրանսացի պաշտօնակիցներս նոյն նպատակով իրենց ջանքերը կը մատուցանէին եւ զիսէի որ՝ իմ միջամտութիւնս բրիտանական Կառավարութեան անհաճոյ չպիտի թուէր, մինչդեռ Գերմանիա կրնար զայն չէզոքի մը համար անյարմար ընթացք մը նկատել, եւ Վանկէնհայմի հարցուցի թէ՛ այդ կողմէն որեւէ դիտողութիւն կրնա՞ր տեղի ունենալ: Իր պատասխանը քիչ մը զարմացուց զիս, թէ եւ ետքէն թափանցէի անոր նշանակութեանը:

— Ո՛չ մէկ դիտողութիւն, պատասխանեց: Գերմանիա կը կը փափաքի մանուաւեղ որ՝ Թիւրքիա չէզոք մնայ: Անվիճելի է որ՝ օսմանեան քաղաքականութիւնը ճշդապէս կը պատշաճէր գերման ծրագիրներուն: Այն ազդեցութիւնը՝ զոր Վանկէնհայմ կը բանեցնէր Դաիլիճին վրայ, օրէ-օր կ'աւելնար, եւ ազգը կը հետեւէր այն ճամբուն՝ որ ամէնէն աւելի կը ծառայէր այդ տեսակ ծրագիրներու: Համաձայնութիւնը մշտական սրտադողի մէջ էր՝ անտեղեակ ըլլալով Թիւրքիայի մէկ օրէն միւսը հետապնդելիք ծրագիրներուն եւ չգիտնալով երբեք թէ՛ ան Գերմանիայի կողքին պատերազմի պիտի մտնէ՞ր, թէ ոչ: Այս կացութեան հանդէպ, Ռուսիա պարտաւորուած էր Կովկասի մէջ կարեւոր ուժեր պահել. Անզլիա կը զօրացնէր իր բանակները Եգիպտոսի եւ Հնդկաստանի մէջ եւ զօրաւոր նաւախումբ մը կը պահէր Տարտանէլի բերանը: Այս բոլորը սքանչելապէս նպատաւոր էր գերման ծրագիրներուն, որովհետեւ Արեւելքի մէջ պահուած այդ զօրախումբերուն հեռացումը այնչափ կը տկարացնէր Անզլիան եւ Ռուսիան, արեւմտեան ճակատին վրայ: Այս պահուն կը խօսիմ Մառնի նախօրեակի շրջանին վրայ,

այն ատենը՝ երբ Գերմանիա իր զինակիցին՝ Աւստրիայի հետ կը հաւատար յաղթել Ֆրանսայի եւ Ռուսիայի եւ այդպէսով ձեռք բերել յաղթանակ մը՝ որ իրեն թոյլ տար Եւրոպայի նակատագիրը վարելու: Եթէ Թիւրքիա այդ ատենէն մասնակցէր՝ զինուորական գործողութիւններուն, այդ յաղթանակին ուրիշ կերպով չպիտի կրնար նպաստել, բայց եթէ ներկային ըրածին պէս, զլսաւոր ճակատներէ ռուսական եւ անգլիական բանակներու կարեւոր զօրամասեր զբաղեցնելով: Բայց այն պարագային՝ երբ Գերմանիա Թիւրքիայի աջակցութիւնովը ապահովէր այդ դիւրին յաղթանակը, իր նոր զինակիցը շատ չանցած վրդովիչ պիտի թուէր իրեն, որովհետեւ ան վստահաբար փոխարինութիւններ պիտի պահանջէր եւ մասնաւորաբար համեստ չպիտի ըլլար իր բաղձանքներուն մէջ՝ որոնք պիտի ընդգրկէին Եգիպտոսի վերստացումը եւ թերեւս Պալքանեան հողամասերու վերադարձումը: Այդ տեսակ պատահականութիւն մը՝ Քայգէրին ծրագիրներուն դէմ պիտի ելլէր: Այնպէս որ, Քայգէրը շահ չունէր Թիւրքիայի գործօն զինակցութենէն. բացի այն պարագայէն, երբ այնչափ արագ հաշուուած յաջողութիւնը չի շահէր: Հակադարձօրէն, եթէ Ռուսիա աւստրիական բանակները ետ նետէր, թրքական համագործակցութիւնը զինուորական մեծ արժէք մը կը ստանար, մասնաւորաբար եթէ այդ համագործակցութիւնը տեղի ունենար բաւական պատեհ ժամանակին՝ առաջ բերելու համար նաեւ Պուլկարիայի եւ Ռումանիայի համագործակցութիւնը: Այս միջոցին, Վանկէնհայմ վերապահ ընթացքով կը շարժէր, Թիւրքիան էապէս իր Հայրենիքին զինակիցը կը դարձնէր, կը զօրացնէր անոր բանակը եւ նաւատորմիդը, եւ կը պատրաստուէր ուզուած վայրկեանին Թիւրքիան գործածելու, որովհետեւ եթէ յաղթանակը առանց իր աջակցութեանը չկարենար շահուիլ, անոր դիմում պիտի ըլլուէր. մինչդեռ հակառակ պարագային, Գերմանիա Թիւրք Կայսրութեան հատուցանելիք ոչինչ չպիտի ունենար: Հետեւաբար, դէպքերու սպասողականին մէջ, տրամաբանութիւնը կը հրամայէր օսմանեան ուժերը կազմակերպել, պարագան ներկայանալուն, զանոնք գործածելու համար:

Այն ատեն, Թիւրքիան շահելու համար Կեդրոնական Տէրութիւններու եւ Համաձայնութեան միջեւ մղուած հակամարտութիւնը յատկանշականօրէն անսովոր եղաւ: Գործնականին մէջ, Գերմանիա շահած էր յաղթանակը, գաղտնաբար Մարմարա ծովը մտցնելով Կոպէնը եւ Պրեզբուրն: Անգլիական, ֆրանսական եւ ռուսական ղեսպանները ատանկ նկատեցին, եւ անոնք գիտէին թէ՛ Թիւրքիա իրենց դատին չպիտի միանար. անտարակոյս,

ատոր չէին սպասեր, յուսալով միայն որ՝ ան իր չէզոքութիւնը պահէր: Անոնք իրենց բոլոր ջանքերը այդ նպատակին ուղղեցին: «Դուք բաւական պատերազմներ ունեցաք, կ'ըսէին Քալէադի եւ Էնվէրի: Այս վերջին չորս տարիներուն մէջ, դուք երեք պատուրազմ մղեցիք. քայքայումը կը սպառնայ ձեր երկիրին, եթէ քշուիք այս պատերազմին մէջ սը»: Համաձայնութիւնը թիւրքիայի միակ փոխարինութիւն մը միայն կրնար ընծայել, իբր վարձք իր ձեռնպահութեան. — իր հողին անվթարութիւնը երաշխաւորելու խոստումը: Պաշտօնակիցներս իրենց խոր փափաքը յայտնեցին թիւրքիան պայքարէն զերծ պահելու, խորշելով ծանրանալ Պրեզաուի եւ Կոպկնի խնդիրին վրայ, ինչ որ իրաւունք ունէին ընելու. ճիշդ է որ՝ յամախակի բողոքեցին անոնց մշտական ներկայութեանը դէմ, բայց պաշտօնատարները միշտ կը կարծեցնէին թէ՛ այդ նաւերը թրքական են:

— Եթէ ատանկ է, կ'առարկէր Սըր Լուի Մալէդ, — եւ իր քեզը անքննադատելի էր, — ինչո՞ւ չէք ճամբեր գերման սպաները եւ նաւազները:

— Միտք ունինք ճամբելու, կը պատասխանէր Եպարքոսը. Անգլիա շինուող նաւերուն համար իբր պաշտօնեայ դրկուած նաւազները շուտով պիտի վերադառնան, եւ անոնք հասնելուն պէս՝ Կոպկն եւ Պրեզաու նաւերուն մէջ պիտի զետեղուին:

Անցան օրեր եւ շաբաթներ. նաւազները դարձան, բայց այդ գրահաւորներուն սպաները եւ նաւազները միշտ Գերմաններ էին: Այս խուսափողականները եւ փախուստի ճամբաները բնականաբար չէին խաբեր բրիտանական եւ ֆրանսական դիւանագիտութիւնը: Կոպկնի եւ Պրեզաուի ներկայութիւնը մշտական կուռապատճառ [casus belli] մը կը կազմէր, բայց Համաձայնութեան դեպքանները իրենց անցագիրները չէին պահանջեր, ձեռնարկ՝ որ կրնար փութացնել այն տազնապը՝ զոր կը ջանային յապաղեցնել, եւ եթէ կարելի էր, խուսափել անկէ. — թիւրքիայի պատերազմի մտնելը՝ Գերմանիայի կողմին: Դժբաղդաբար թիւրքիայի ամբողջականութիւնը երաշխաւորելու համար Համաձայնութեան խոստումը՝ չապահովեց իրեն այդ ազգին համագործակցութիւնը՝ պատերազմին մէջ: «Դաշնակիցները նման խոստում մը ըրած էին մեզի Պալքանեան պատերազմներուն միջոցին, կ'ըսէր ինձի Քալէադ, եւ ահա տեսէք մեր երկիրին ճակատագիրը Եւրոպայի մէջ»:

Վանկէնհայմ միշտ կ'անդրադառնար այդ խնդիրին.

— Դուք չէք կրնար վստահիլ անոնց խօսքին. կը կրկնէր Էնվէրին եւ Քալէադին: Տարի մը առաջ անոնք ամէնքը ձեր վրայ ինկած չէին:

Յետոյ, մեծ ճարտարութիւնով մը, կը հնչեցնէր այն միակ լարը՝ որուն համար թիւրքը իրապէս զգայուն է:

Օսմանի շառաւիղները ուրիշ ո՛չ մէկ ժողովուրդի չեն նմանիր. անոնք չեն ատեր. չեն սիրեր. իրենց քով, ո՛չ թշնամութիւնը, ո՛չ սէրը տեւական չեն. անոնք միայն վախը կը ճանչնան: Եւ բնականաբար, ուրիշներու կը վերագրեն այն պատճառները՝ որոնք իրենց ընթացքը կը ղեկավարեն:

— Ո՛րչափ անխելք էք դուք, կ'ըսէր Վանկէնհայմ Քալէադի եւ Էնվէրի, խօսելով Անգլիայի դիրքին վրայ: Չէ՞ք տեսներ որ՝ Անգլիացիները պատերազմին չմասնակցելնիդ կ'ուզեն: Պատճառը ան է որ՝ ձեզմէ կը վախնան: Չէ՞ք տեսներ որ Գերմանիայի օժանդակութիւնովը՝ կրկին զինուորական մեծ տէրութիւն մը դարձաք: Մի՛ գարմանաք ուրեմն որ Անգլիա ձեզի հետ պատերազմիլ չուզեր:

Ասիկա ա՛յնչափ անդուլ կերպով հնչեցուց անոնց ականջին որ՝ վերջապէս հաւատացին ատոր, որովհետեւ այս փաստը ո՛չ միայն լիովին կը բացատրէր անոնց՝ Համաձայնութեան քաղաքականութիւնը, այլ նաեւ կը զգուէր անոնց թրքական գոռոթութիւնը:

Ինչ որ ալ եղած ըլլայ Էնվէրի եւ Քալէադի դիրքը, կը կարծեմ որ՝ Անգլիա եւ Ֆրանսա թիւրքիայի բոլոր դասակարգերուն մէջ աւելի ժողովրդական էին, քան Գերմանիա էր: Սուրթանը պատերազմի հակառակ էր. զահաժառանգը՝ Եուսուֆ Իզզէտինը՝ բացորոշապէս Համաձայնասէր էր. Եպարքոսը՝ Սաիտ Հալիմ՝ աւելի համակիր էր Անգլիայի, քան Գերմանիայի. ձէմալ՝ վարիչ եռապետութեան երրորդ անդամը՝ Ֆրանսասէր ըլլալու համբաւը ունէր, — նոր դարձած էր Փարիզէն, ուր գտած ընդունելութիւնը մեծապէս փայլալայած էր զինքը. Դահլիճին մեծամասնութիւնը Գերմանիայի հանդէպ տաքսրտութիւն չուէր. եւ հանրային կարծիքը, — ա՛յն չափով՝ որ գոյութիւն ունի թիւրքիա, — Անգլիան կը նկատէր իր պատմական բարեկամը, ո՛չ թէ Գերմանիան: Հետեւաբար, Վանկէնհայմ մեծ ընդդիմութեան պէտք է յաղթէր. եւ այն մեքոնները՝ զորս ձեռք առաւ, խորտակելու համար այդ ընդդիմադրութիւնը, գերման «իւօփականտ»ին մէկ պատկերը կը կազմեն: Վանկէնհայմ մամուլի անխնայ պայքար մը բացաւ Անգլիայի, Ֆրանսայի եւ Ռուսիայի դէմ: Ես նկարագրեցի թիւրքերու զգացումները՝ Անգլիա շինուող իրենց նաւերը կորսնցնելուն առիթով: Վանկէնհայմի գործակալները, ուրեմն, թերթերու մէջ բուռն յարձակողականներով՝ վարձուած էջերու սիւնակներ լեցուցին, Անգլիայի՝ այդ նաւերը գրաւելուն դէմ:

Ամբողջ թիւը մամուլը շուտով Գերմանիայի ֆոնդոյին տակ մտաւ: Վանկէնհայմ գնեց Լոզանը, թիւը ամէնէն մեծ լրագիրներէն մէկը, որ անմիջապէս սկսաւ ներքուր հիւսել Գերմանիայի եւ նշաւակել Համաձայնութիւնը: Օսմանիշէր Լոյս, որ կը հրատարակուէր ֆրանսերէն եւ գերմաներէն լեզուներով, գերման Դեսպանատունի մէկ օրկանը դարձաւ: Թէեւ թիւը Սահմանադրութիւնը ազատ մամուլ մը կ'երաշխաւորէր, բայց գրաքննութիւն մը հաստատուեցաւ Կեդրոնի Տէրութիւններու նպաստին: Բոլոր թիւը լրագրողներուն հրահանգ տրուեցաւ Գերմանիայի նպաստաւոր գրել, եւ անոնք հնազանդեցան հրահանգին: Ժոկոն թիւէր, որ ֆրանսերէն լեզուով հրատարակուող Համաձայնասէր թերթ մըն էր, խափանուեցաւ: Թիւրք թերթերը չափազանցեցին գերման յաղթանակները եւ ամբողջովին ուրիշներ դարձեցին: Անոնք շարունակ կը հրատարակէին Համաձայնական պարտութիւններու լուրեր, որոնցմէ շատերը ամբողջապէս երեւակայական էին: Գիշերը, Վանկէնհայմ եւ Փալլափիլինի ինծի կը ցուցնէին պաշտօնական հեռագիրներ, որոնք մանրամասնութիւններ կը հաղորդէին զինուորական գործողութիւններու վրայ. բայց երբ առտուն թերթերը աչքէ կ'անցընէի, կը հաստատէի որ՝ այդ լուրերը Գերմանիայի նպաստին խեղաթիւրուած եւ խարդախուած էին: Պառոն Օփէնհայմ մը, պտրտեցաւ ամբողջ թիւրքիան, հանրային կարծիքը պատրաստելով Անգլիայի եւ Ֆրանսայի դէմ: Բացայտօրէն ան հնէաբան մըն էր, մինչդեռ իրականին մէջ, ամէն կողմ բացաւ գրասենեակներ, ուրկէ թուքումուրի հեղեղներ կը ժայթքէին Համաձայնութեան դէմ: Պատերու վրայ փակցուեցան հսկայ քարտէսներ, որոնք դարերու ընթացքին թիւրքիայի կորսնցուցած երկիրները կը ցուցնէին: Ռուսիա կը պատկերացուէր իբր այդ «աւագակութիւններուն» գլխաւորապէս պատասխանատու ազգը. եւ ուշադրութիւն կը հրաւիրուէր այն իրողութեան վրայ թէ՛ Անգլիա հիմա Ռուսիայի դաշնակիցը դարձած էր: Նկարներ կը հրատարակուէին, որոնք իբր գիշատիչ կենդանի՝ Համաձայնութեանը յափշտակիչ ուժը կը պատկերացնէին, խեղճ թիւրքիայի վրայ յարձակող դիրքով: Էնվէր կը հռչակուէր «դիւցազն», որ Ազրիանուպոլիսը վերագրուած էր: Գերմանիա կը պատկերացուէր իբր թիւրքիայի բարեկամը: Քայգէրը յանկարծ եղաւ «Հանի Վիլհէլմ», իսլամութեան մեծ պաշտպանը, եւ մինչեւ անգամ պատմութիւններ հրատարակուեցան թէ՛ ան Մահմետականութեան կրօնափոխուած է: Թիւրք ամբոխին կը ծանուցուէր թէ՛ Հնդկաստանի եւ Եգիպտոսի Խալիֆները ըմբոստանալու եւ իրենց անգլիացի «բռնակալ»ները տապալելու վրայ էին: Մինչեւ

անգամ թիւրք աւելածուն սորված էր ըսել. «Gott Strafe England»! [Աստուած պատժէ Անգլիան]: Եւ այս անպատիւ պայքարին դրդիչ ուժը միշտ գերմանական դրամն էր:

Բայց Գերմանիա թիւրք միտքը թունաւորելէ աւելին կ'ընէր: Ան կը տիրանար թիւրք զինուորական աղբիւրներուն: Ես արդէն նկարագրեցի թէ՛ ինչպէս 1914ին, Քայգէրը ձեռք անցուցած էր թիւրք բանակը եւ զայն վերակազմած՝ պատրաստ ըլլալու համար եւրոպական պատերազմին: Ան հիմա նոյնը ըրաւ թիւրք նաւատորմիդին: Օգոստոսին, Վանկէնհայմ կը պարծենար ինծի թէ. «Հիմա մենք տէր ենք թրքական թէ՛ բանակին եւ թէ՛ նաւատորմիդին»: Այն միջոցին երբ հասան Կոպիներ եւ Պրեզառն, անգլիական պատուիրակութիւն մը, որուն զուխը կը գտնուէր ծովակալ Լիմփրս, տքնաշանօրէն կ'աշխատէր թրքական նաւատորմիդը վերակազմելու: Անմիջապէս Լիմփրս եւ իր աշխատակիցները առանց ձեւակերպութեան ճամբուեցան. իրենց մեկնումին ձեւը իրապէս անպատուաբեր էր, որովհետեւ ամենատարրական մեծարանք մը իսկ չի ցուցուեցաւ անոնց: Անգլիացի ծովային սպաները հանդարտօրէն եւ աննշմարելի կերպով Պոլիսէն Անգլիա մեկնեցան, — ամէնքն ալ, բացի ծովակալէն, որ ստիպուեցաւ մնալ, իր աղջկանը հիւանդութեան պատճառով:

Ամէն գիշեր, կառախումբեր լեցուն Գերմաններ Պերլինէն Պոլիս կը ժամանէին. այս մարդոց ամբողջական թիւը վերջապէս հասաւ 3,800ի, որոնցմէ շատերը զրկուած էին պահպանելու թրքական նաւատորմիդը եւ ռազմանիւթ շինելու: Անոնք ամէն գիշեր սրճարանները կը լեցուէին եւ առտուն կանուխ կը շրջագայէին Պոլիսի փողոցները, պուչտալով եւ երգելով հայրենասիրական երգեր: Անոնցմէ շատեր ճարտար մեքենագէտներ էին, որոնք անմիջապէս գործի սկսան, նորոգելով թորիփարձակները եւ ուրիշ նաւեր եւ զանոնք պատերազմելու փնակի մէջ ղնելով: Անգլիական Առմսթրոնկ էնտ Վիքրըս հաստատութիւնը Պոլիսի մէջ սքանչելի նաւակայք մը ունէր, զոր հիմա Գերմանները իւրացուցած էին: Ամբողջ ցորեկը եւ գիշերը կը լսէինք այդ անդու գործունէութիւնը եւ հագիւ կը քնանայինք բեւեռումի եւ մրճահարութեան խլացուցիչ ժխորէն: Վանկէնհայմ հիմա ուրիշ առիթ մը գտաւ՝ էնվէրի, Քալէադի եւ ձէմալի միտքերուն մէջ քիչ մը աւելի թոյն կաթեցնելու համար: «Գերման գործաւորները, յայտարարեց, անվերաշինելի յուսահատական փնակի մը մէջ գտած են թրքական նաւերը». եւ ասոր համար բնականաբար պարսաւեց անգլիական պատուիրակութիւնը: Ըսաւ թէ՛ Անգլիա ազատօրէն թողած է որ՝ թրքական նաւատորմիդը քայքայուի, եւ հաւաստեց

թէ՛ ատիկա մէկ մասն էր Անգլիայի ծրագիրին՝ Թիւրքիան կործանելու :

— Տեսէ՛ք, գոչեց, տեսէ՛ք թէ մենք Գերմաններս ի՛նչ ըրինք Թիւրք բանակը, եւ տեսէ՛ք թէ Անգլիացիները ի՛նչ ըրած են ձեր նաւատորմիդին»։ Իրականութեան մէջ, այս բոլորը սուտ էին, որովհետեւ ծովակալ Լիմփրս խղճմտօրէն մեծ ջանք թափած էր բարւոքելու նաւատորմիդը եւ այդ ուղղութիւնով սքանչելի արդիւնքներ առաջ բերած էր:

Այս միջոցին, Գերմանները կը գործէին Տարտանէլի մէջ, զօրացնելու համար ամրութիւնները եւ կը պատրաստուէին Հաւածայնութեան կողմէ հաւանական յարձակումի մը: Սեպտեմբերի վերջերը, Բ. Դուռը գործնականապէս դադրեցաւ Օսմանեան Կայսրութեան վարչական գլուխը ըլլալէ: Իրականապէս կը հաւատամ որ՝ այդ առին իշխանութեան ամէնէն ազդեցիկ կեդրոնն էր գերման առեւտրական նաւ մը, Կեներալը: Ան կը կենար Ռուկեղջիւրի մէջ, Կալաթայի կամուրջին մօտը, եւ անոր կամրջակը առաջնորդող մնայուն սանդուղ մը շինուած էր: Լաւ կը ճանչնայի այս նաւին մշտական այցելուներէն մէկը, Ամերիկացի մը, որ յաճախ դեսպանատուն կու գար եւ ինծի կը տեղեկացնէր շոգեմաւին մէջ անցած-դարձածները: Այդ Ամերիկացիին ծանուցածին համեմատ՝ Կեներալը տեսակ մը գերմանական ակումբ կամ պանդոկ էր: Կեօպկեի եւ Պրեզաուի սպաները, ինչպէս նաեւ Թիւրք նաւատորմիդին հրամանատարութիւնը ստանձնելու համար զրկուած ուրիշ գերման սպաներ՝ այդ նաւին մէջ կ'ուտէին եւ կը պառկէին: Ծովակալ Սուշոն, որ գերման յաճախները Պոլիս բերած էր, կը նախագահէր այդ հաւարոյթներուն: Սուշոն ֆրանսական հիւկնօթեան ծագումով անձ մըն էր. ան կարճահասակ, հանճարեղ, կոկիկ նաւագ մըն էր, խիստ կորովի եւ աշխուժ, եւ հրամայելու եւ կատարելութեան գերմանական եռանդին կը միացնէր կալիական զուարթութիւնը եւ ոգելորութիւնը: Բնականաբար մեծ կենդանութիւն կու տար Կեներալի երեկոյթներուն եւ գարեջուրը եւ շամփանիան՝ որոնք ազատօրէն կը շոյալուէին այդ առիթով, կը թուլցնէին ընկեր սպաներուն յեզուն: Անոնց խօսակցութիւնը կը ցուցնէր որ՝ պատրանքներու անձնատուր չէին թէ՛ իրականապէս ո՛վ էր տէրը թրքական նաւատորմիդին: Օրէ-օր կ'աճէր գործելու իրենց անհամբերութիւնը. բացայայտօրէն կը յայտարարէին թէ՛ եթէ Թիւրքիա շուտով Ռուսիայի վրայ չի յարձակէր, զայն պիտի բռնադատէին յարձակելու: Անոնք կը պատմէին թէ՛ ինչպէս գերման նաւեր զրկած էին Սեւ Ծով, յուսարով ուռուական նաւատորմիդը մղելու՝ պատերազմը անխուսափելի դարձնող գործողութեան մը: Հոգեմեքերի վերջերը՝ բարեկամա հաղորդեց ինծի թէ՛ հակամարտութիւնը չէր կրնար երկար տեւել. թրքական նաւատորմիդը գործողութեան պատրաստ էր, եւ այդ պատերազմասէր [Kriegslustige] գերման սպաներուն եռանդը ա՛լ չէր կրնար զսպուել:

— Անոնք ճշմարիտ կուտասէր արջուրներ դարձած են: Իրարու զարնուելու առիթ կը փնտռեն պարզապէս, ըսաւ:

ԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳԵՐՄԱՆԻԱ ԿԸ ՓԱԿԷ ՏԱՐՏԱՆԷԼԸ

ԵՒ ՌՈՒՍԻԱՆ Կ'ԱՆՋԱՏԷ ԻՐ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԷՆ

Սեպտեմբեր 27ին, անգլիական դեսպան Սըր Լուի Մալէդ գրասենեակս մտաւ, միտքի մեծապէս վրդովուած վիճակով մը: Եզրպտոսի Խտիվը քովէս նոր մեկնած էր, եւ ես սկսայ Սըր Լուիի խօսիլ եզրպտական խնդիրներու վրայ:

— Ատոր մասին ուրիշ ատեն մը խօսինք, ըսաւ: Ձեզի տեղեկացնելիք աւելի կարեւոր բան մը ունիմ: Անոնք Տարտանէլը գոցած են:

Անոնքով, անշուշտ չէր ակնարկեր Թիւրք կառավարութեան, որ այդ վճռական քայլը առնելու միակ օրինական իրաւունքը ունեցող իշխանութիւնն էր, այլ կ'ակնարկէր Թիւրքիայի մէջ այդ ատեն վարիչ իշխանութեան՝ Գերմաններուն: Սըր Լուի կատարեալ իրաւունք ունէր այդ յուրը ինծի հաղորդելու, որովհետեւ այդ արարքը թշնամանք մըն էր ո՛րչափ Դաշնակիցներուն, նո՛յնչափ Միաց.-Նահանգներուն հանդէպ: Առաջարկեց ինծի՝ իրեն ընկերանալ եւ միացած բողոք մը ներկայացնել: Սակայն, ես թելադրեցի որ՝ լաւագոյն պիտի ըլլար, եթէ մենք անջատաբար գործէինք եւ անմիջապէս ճամբայ ելայ դէպի Եպարքոսին բնակարանը: Երբ հասայ, նախարարական խորհուրդը նիստ ունէր, եւ մինչ նստած էի նախասենեակին մէջ, կրցայ լսել բուռն վիճաբանութեան մը ձայները: Ատոնց մէջ կրնայի որոշակի զանազանել Թալէադի, Էնվէրի, ելեւմտական նախարար ձափիտի եւ Կառավարութեան ուրիշ անդամներուն ընտանի շեշտերը: Նուրբ միջնորմներուն ընդմէջէն լսել կրցածներէս որոշակի կը հետեւէր որ՝ Թիւրքիայի այդ անուանական վարիչները Տարտանէլի փակումէն գրեթէ ա՛յնչափ զայրացած էին, որչափ էինք Սըր Լուի Մալէթ եւ ես:

Ոնդրանքիս վրայ, Եպարքոսը դուրս ելաւ: Արգահատելի կերպարանք մը ունէր: Այս մարդը, որ գոնէ անուանապէս ամէնէն կարեւոր պաշտօնատարն էր Թիւրք կառավարութեան, նոյն ինքն Սուլթանին բերանը, հիմա կը ներկայացնէր ողորմելի անզօրութեան եւ վախի պատկեր մը: Դէմքը դեղնած էր եւ գլուխէն մինչեւ ոտքը կը դողդղար: Ա՛յնչափ ընկճուած էր յուզումէն որ՝

հագիւ կրնար խօսիլ: Երբ հարցուցի իրեն թէ՛ ճիշդ էր սր Տարտանէլը գոցուած էր, հագիւ վերջապէս կակազեց թէ՛ ճիշդ էր:

— Գիտէ՞ք որ ասիկա պատերազմ կը նշանակէ, ըսի, եւ Միաց.-Նահանգներու անուևով բողոքեցի այնչափ բոււն կերպով, որչափ կրնայի:

Մեր խօսակցութեան ամբողջ ընթացքին, կրցայ լսել բովի յարկաբաժինին մէջ Թալէադի եւ իր պաշտօնակիցներուն բարձր ձայները: Եպարբոսը ներողութիւն խնդրեց եւ վերադարձաւ սննեակ: Յետոյ ճովարը զրկեց խնդիրին շուրջը հետս խօսելու:

— Բացարձակ անակնկալ մըն է աս մեզի, եղան ձավիտի առաջին բառերը. — այս վկայութիւնը կատարեալ խոստովանութիւն մըն էր թէ՛ Դահլիճը որոշումին մէջ դեր մը չունէր: Կրկնեցի թէ՛ Միաց.-Նահանգները չպիտի համակերպէին Տարտանէլի փակումին. թէ թիւրքիս պատերազմական փնակի մէջ չէր եւ Սուլթանը օրինական իրաւունք չունէր նեղուցը փակելու՝ առեւտրական նաւերու, բացի պատերազմի պարագայէն: Ըսի թէ՛ ամերիկեան նաւ մը, ամերիկեան Դեսպանատունին համար պարէն եւ վաճառք բեռցած, այդ միջոցին նեղուցին դուրսը կը սպասէր ներս մտնելու: ձավիտ թեյադրեց որ՝ կրնայի այդ նաւին բեռը Իզմիր պարպել տալ. եւ բարեացակամօրէն աւելցուց թէ՛ թիւրք կառավարութիւնը ցամաքէն Պոլիս փոխադրութեան ծախքը պիտի վճարէր: Անշուշտ այս առաջարկը ծիծաղելի խուսափողական մըն էր, եւ զայն մերժեցի:

Ատոր վրայ ձավիտ յայտարարեց թէ՛ Դահլիճը խնդիրը պիտի քննէր, թէ իրապէս՝ այդ վայրկեանին՝ անոր վրայ կը խորհրդածէին իրենք: Պատմեց ինծի թէ՛ ինչպէս տեղի ունեցած էր փակումը: Թրքական թորփիլանաւ մը անցած էր Տարտանէլէն եւ փորձած եզակեան մտնել: Դուրսը պահակած անգլիական ռազմանաւեր կեցուցած էին թորփիլանաւը, զայն քննած էին եւ գտած էին որ՝ անոր մէջ գերման նաւազներ կան: Անգլիացի ծովակալը անմիջապէս հրամայած էր նաւին՝ ետ դառնալ. տրուած պարագաներուն մէջ, ան իրաւունք ունէր այդ բանը ընելու: Վէպէր փաշա, այն գերման զօրավարը, որ ամբողջութիւններուն հրամանատարն էր, առանց խորհուրդ հարցնելու թիւրքերուն, անմիջապէս հրաման տուած էր նեղուցը փակելու: Վանկէնհայմ ինծի պարծնեցած էր թէ՛ Տարտանէլը 30 վայրկեանի մէջ կրնար գոցուիլ, եւ Գերմանները իր խօսքը հաստատեցին: Ականներ եւ ցանցեր ձգուեցան. փարոսներու լոյսերը մարուեցան. նշաններ զետեղուեցան՝ որոնք կ'ազդարարէին բոլոր

նաւերուն թէ «ճամբայ չի կայ» եւ այն ամէնէն բռնաւորական արարքը՝ զոր Գերմանները երբեք գործած էին՝ կատարուած էր: Եւ հիմա կը տեսնէի որ, այդ թիւրք պետական-մարդիկը, որոնք տէրն էին ջուրի այդ կենսական երիզին, վախէ կը դողալային եւ կը կակազէին, ահաբեկած ճագարներու պէս հոս-հոն վազվզելով, զարհուրած գերման արարքին սոսկալիութենէն, եւ սակայն յայտնապէս անգոր՝ ո՛րեւէ վճռական քայլ առնելու: Բնականաբար, աչքի առջեւ ունէի ճիշդ պատկերը այն վիճակին՝ որուն մէջ ձգած էր գերման բռնաւորութիւնը՝ թրքական կայսրութեան ներկայ վարիչները: Նոյն պահուն, միտքիս առջեւ կը ներկայանար պատկերը՝ խաղաղօրէն իր պալատին մէջ բնացող եւ ամբողջ եղելութեան անգէտ Սուլթանին, որուն ստորագրութիւնը անհրաժեշտ էր այդ ջուրերը օրինականապէս փակելու: Թէև ձավիտ ինծի յայտարարեց թէ՛ Դահլիճը կրնար հրաման ընել Տարտանէլը վերաբանալու, բայց չբաւ երբեք: Հաղորդակցութեան այս մեծ ճամբան, յորս տարիէ աւելի գոց մնաց, 1914 Սեպտ. 27էն ի վեր: Անշուշտ որոշապէս ըմբռնեցի թէ՛ այդ արարքը ինչ կը նշանակէր: Սեպտեմբեր ամիսը հիասթափեցուցիչ ամիս մը եղած էր Գերմաններուն համար: Ֆրանսացիները ետ մղած էին արշաւանքը եւ գերման բանակները հարկադրած էին երկայնքը ամբամալու: Թուսերը յաղթականօրէն կ'առաջանային Կալիցիայի մէջէն. արդէն գրաւած էին Լէմպէրկը եւ անհաւանական չէր թուեր որ՝ շուտով Քարփաթները անցնելով մտնէին Աւստր-եւ-Հունգարիա: Այդ օրերուն, աւստրիական ղեսպան Փալլապիչինի յուսահատած եւ ողբալի հրեւոյթ մը ունէր: Ան ինծի խոստովանեցաւ իր վսիսերը սպառազային համար, ըսելով թէ՛ կարճ, վճռական պայքարի մը գերմանական ծրագիրը որոշապէս ձախողած էր, եւ թէ՛ ալ կատարելապէս յայտնի էր որ՝ Գերմանիա միայն երկար պատերազմէ մը ետքը կրնար յաղթել, եթէ երբեք կարենար յաղթել, ինչ որ չափազանց տարակուսելի էր: Ես նկարագրած եմ թէ՛ ինչպէս Վանկէնհայմ թրքական բանակը եւ նաւատորմիդը այս կամ այն պատահականութեան դէմ պատրաստած առեն, թիւրքիան պարզապէս իր ձեռքին մէջ կը բռնէր, ծրագրելով արթնապէս՝ իր ուժերը գործածել միայն այն պարագային՝ երբ Գերմանիա ձախողէր առաջին պատերազմին մէջ՝ Ֆրանսան եւ Թուսիան նգմելու: Հիմա որ այդ ձախողութիւնը բացայայտ էր, Վանկէնհայմի հրահանգ տրուած էր թրքական կայսրութիւնը իբր գործօն զինակից գործածել: Մինչեւ այդ առեն, 20,000,000-ոց այդ ազգը, ձեռնպահ կուսակից մը եղած էր, Վանկէնհայմի կողմէ պահեստի պահուած, մինչեւ որ Գերմանիա անհրաժեշտ դատեց որ՝ ան ալ իբր իրական

զինակից՝ իր պարտքը հատուցանել պատերազմի մասնակցութիւնն: Ժամանակը հասած էր՝ երբ Գերմանիա պէտք ունեցած էր թիւրք բանակին, եւ կացութեան փոխուելուն արտաքին նշանը եղած էր Տարտանէլի փակումը: Այսպէս, Վանկէնհայմ լրացուցած էր այն դերը՝ որուն համար աշխատած էր, եւ այս վերջին գործը արժանաւոր պսակումն էր այն ձեռնարկին, որով Կոպկեը եւ Պեդրաւն Տարտանէլէն ներս մտցուցած էր: Քիչ Ամերիկացիներ, նոյն իսկ այսօր, զիտեն թէ՛ ի՛նչ գերակշիռ ազդեցութիւն մը գործեց այդ արարքը՝ ապագայ պատերազմական գործողութիւններուն վրայ: Սակայն, այն իրողութիւնը որ՝ պատերազմը այսչափ տարիներ տեւեց, կը բացատրուի Տարտանէլի այս փակումովը:

Որովհետեւ կացութեան մէջ ադ եղաւ այն ազդակը՝ որ Ռուսիան բաժնեց իր դաշնակիցներէն, եւ, տարի մը չանցած, առաջ բերաւ իր պարտութիւնը եւ անկումը, որ ետքէն պատճառ եղաւ ռուսական յեղափոխութեան հնարաւոր դառնալուն: Քարտէսը կը ցուցնէ որ՝ Ռուսիա հսկայ երկիրը՝ ծով ելլելու չորս ճամբաներ միայն ունի: Մէկը Պալթիկի ճամբան, զոր գերման նաւատորմիդը արդէն փակած էր: Ուրիշ մը՝ Սառուցիայ Ովկէանոսին մէջ Արքանկէն է, նաւահանգիստ մը՝ որ տարուան շատ մը ամիսներուն մէջ սառած է եւ որ Ռուսիայի սիրտին հետ կը հաղորդակցի երկար, միագիծ երկաթուղիով մը: Ուրիշ մըն է՝ Սաղաղականի Վլատիվոսթօք նաւահանգիստը, նոյնպէս երեք ամիս սառնապատ, որ Ռուսիայի հետ կը հաղորդակցի 5,000 մղոն երկար սիւլբրիական երկաթուղիի խեղճ գիծով մը միայն: Չորրորդ ելքը՝ Տարտանէլն էր: Իրականութեան մէջ, ա՛յ էր միակ գործածելին: Ա՛յ էր այն նեղ դուռը՝ ուրկէ 175,000,000 ժողովուրդի արչիւնաբերութեան աւելցուքը կը հասնէր եւրոպա. ռուսական արտածումի եւ ներածումի ինը տասներորդը (⁹/₁₀) տարիներով այս ճամբէն անցած է: Չայն յանկարծ փակելով, Գերմանիա աւերեց Ռուսիան՝ թէ՛ իբր տնտեսական եւ թէ՛ իբր զինուորական ուժ: Սափանելով ռուսական արմտիքին արտածումը, Գերմանիա Ռուսիան զրկեց յաջող պայքարի մը համար էական եղող ելլումական ուժէն: Ինչ որ թերեւս աւելի՝ աղետալի էր, Գերմանիա Անգլիան եւ Ֆրանսան արգիլեց՝ ռուսական ռազմաճակատը բաւականաչափ ռազմանիւթ հասցնելէ՝ գերման յարձակումը ետ մղելու համար: Տարտանէլը փակուելուն պէս, Ռուսիա ստիպուեցաւ. Արքանկէլի եւ Վլատիվոսթօքի վրայ իյնալ, ա՛յն կարգի պարենաւորումներու համար՝ զորս այդ նաւահանգիստներէն կրնար ընդունիլ: 1915ի ռուսական զինուորական անկումին պատճառը հիմա լաւ ծանօթ է.

զինուորները պարզապէս կռուելու համար ռազմանիւթ չունէին: 1918տարուան առաջին կէսին, արեւմտեան ճակատին վրայ՝ Գերմանիա անյաջող ճիգ մը վատնեց «գամ» մը մխելու Վրանսական եւ անգլիական բանակներուն միջեւ, դաշնակիցները մէկգմէկէ զատելու եւ այդպէսով ձեռք բերելու համար անա՛նկ կացութիւն մը՝ ուր կարենար անջատարար յարձակիլ իւրաքանչիւրին վրայ: Ֆրանս-եւ-ռուսական դաշնագիրը ջնջելով, Ռուսիայի եւ իր արեւմտեան դաշնակիցներուն միջեւ «գամ» մը մխելու ձեռնարկը դիւրին գործ եղաւ: Ինչպէս նկարագրեցի, խնդիրը պարզապէս տէր դառնալն էր ապականած եւ այլասերած կառավարութեան մը, անոր խաղաղութեան մէջ եղած ստեղծ ձեռք անցընելով իր գործունէութեան զլխաւոր միջոցները, իր բանակը, իր նաւատորմիդը, իր աղբիւրները, եւ յետոյ, յարմար վայրկեանին, ուրանալով անոր անուանական վարիչները եւ խափանելով շուրջ քսան մղոն երկայնք եւ երկու կամ երեք մղոն լայնք ունեցող ջուրի երիզ մը! Ատիկա՛ մարդկային միակ կեանքի մը, կամ միակ թնդանօթի մը արձակումին իսկ չկարօտեցաւ. այլ, ակնթարթի մը մէջ, Գերմանիա իրականացուց ա՛ն՝ ինչ որ թերեւս լաւ սպառազինուած ռուսական ուժերու դիմադրող երեք միլիոն մարդիկ չկարենային զլուխ հանել: Ատիկա՛ պատերազմին զինուորական ամէնէն եղերերգական յաղթանակներէն մէկն էր, եւ ատիկա մի՛այն գործն էր գերման շիտիակաւսին, գերման կորովամտութեան եւ գերման դիւանագիտութեան:

Ռուսիայի արգելափակումին յաջորդող օրերուն, Վոսիորը սկսած էր յանկարծ ժամտախտէ զարնուած նաւահանգիստի մը երեւոյթը առնել: Ռուսիայէն, Ռումանիայէն եւ Պուլկարիայէն՝ արմտիք, ատաղձ եւ ուրիշ բերքեր բնօրցած նաւեր եկան, որոնք միայն տեսան թէ՛ աւելի հեռուն չէին կրնար երթալ: Բաւականաչափ նաւարաններ չի կային՝ զանոնք պարփակելու համար. որով անոնք հարկադրուած էին բաց ծովին վրայ ծփալու եւ խարխախ նետելու, սպասելով դէպքերուն: Կայմերու եւ միացող ծխաններու անտառ մը ձեւացաւ, եւ խռնուած նաւերը ա՛յնչափ խտացան որ՝ շոգեմուտակ մը հագիւ անցրի ճամբայ կը գտնէր այդ խառնիճազանն անտառին մէջ: Թիւրքերը յոյս կը տածէին որ՝ կարող կ'ըլլային նեղուցը վերաբանալու, եւ այս պատճառով նաւերը՝ որոնց թիւը շարունակ կը շատնար, շուրջ ամիս մը համբերատարօրէն սպասեցին: Յետոյ իրարու ետեւէ դարձան, ցուկնին Սեւ Մով ուղղեցին եւ տիրատեսիլ կերպով մեկնեցան դէպի իրենց խարխախ նաւահանգիստները: Քանի մը շաբաթուան մէջ, Վոսիորը եւ շրջակայ ջուրերը ամայի անապատ մը դարձած էին:

Այն վայրը, որ տարիներով առեւտրական ամէնէն ոգեւոր նաւահանգիստներէն մէկը եղած էր, հազիւ կը վրդովուէր պատահական նաւակէ մը, կամ վտիտ թրքական գայլոգէ մը, կամ ատեն-ատեն պզտիկ առագաստանաւէ մը: Եւ ճիշդ գաղափար մը տալու համար թէ՛ զինուորական տեսակէտով ինչ կը նշանակէր աս, պէտք է միայն յիշեցնենք ռուսական ռազմաճակատը՝ յաջորդ տարուան մէջ: Հոն, զեղջուկները գերման հրետանիին դէմ կը կռուէին անպաշտպան մարմիններով, ունենալով քիչ հրացան եւ քիչ ծանր հրետանի, մինչդեռ անօգուտ ռազմանիւթի լեռներ կը կուտակուէին իրենց հիւսիսային եւ խաղաղական հեռաւոր նաւահանգիստներուն մէջ, զանոնք գործունէութեան դաշտ փոխադրող երկաթուղիի զիծերու չգոյութեան հետեւանքով:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԹԻՐԻՔԻԱ ԿԸ ՋՆՁԷ «ՔԱՓԻԹԻԼԱՍԻՕՆ»ՆԵՐԸ

ԷՆԼԷՐ ՊԱՆԱՏԻ ՄԷՋ ԿՄՊՐԻ, ԱՌԱՏ ԴՐԱՄՈՎ,
ԵՒ ԿԱՅՍԵՐԱԶՈՒՆ ԿՆՈՋ ՀԵՏ

Ուրիշ խնդիր մը, որ ամիսներով առկախ մնացած էր, հիմա խառնուեցաւ Թիւրքիայի միջազգային կացութեան: Քափիթիւզասիօններու խնդիրն էր ալ: Ասոնք այն դաշնադրական իրաւունքներն էին՝ որոնք դարերով ճշդած էին օտարներու դիրքը՝ Թիւրք Կայսրութեան մէջ: Թիւրքիա երբեք եւրոպական ազգերու հետ կատարեալ հաւասարութեան մէջ ընդունուած չէր. եւ իրապէս, ան երբեք անկախ վեհապետութիւն մը եղած չէր: Սուլթանին օրէնքները եւ սովորոյթները այնչափ արմատապէս կը տարբերէին եւրոպայիներէն եւ Ամերիկայիներէն որ՝ ո՛չ մէկ ոչ-խլամ երկիր կրնար իր քաղաքացիները անոնց ենթարկելու հաւանիլ: Հետեւաբար շատ մը խնդիրներու մէջ, տարերկրայնութեան ex-territoriality] սկզբունքը միշտ գերակշիռ եղած էր՝ առանձնաշնորհական [capitulatory] իրաւունքներ վայելող քաղաքացիներու եւ հպատակներու նպաստին: Գրեթէ բոլոր եւրոպական երկիրները, ինչպէս նաեւ Միաց.-Նահանգները, դարերով ունեցած էին իրենց հիւպատոսական դատարանները եւ բանտերը, ուր դատուած եւ պատժուած էին այն յանցանքները՝ որոնք իրենց ազգակիցներուն կողմէ գործուած էին Թիւրքիայի մէջ: Մենք ամէնքս ունէինք մեր վարժարանները, որոնք ենթակայ էին ո՛չ թէ Թիւրք օրէնքին եւ պաշտպանութեանը, այլ օրէնքներուն եւ պաշտպանութեանը այն երկիրին՝ որ զանոնք կը հովանաւորէր: Այսպէս, Ռօպրոզ Գօլէճը եւ Ալջիկներու Գօնսթէնթիմօլի Գօլէճը, — այն սքանչելի հաստատութիւնները՝ զորս ամերիկեան բարեգործութիւնը կանգնած է Վոսփորի մէջ, — ինչպէս նաեւ ամերիկեան հարիւրաւոր կրօնական, մարդասիրական եւ կրթական հաստատութիւններ՝ գործնականապէս ամերիկեան հողի վրայ կը գտնուէին եւ ամերիկեան Դեսպանատունը կը նկատէին իրենց պաշտպանը: Շատ ազգեր իրենց սեփական նամակատունները ունէին, որովհետեւ չէին վստահեր իրենց թղթատարը օսմանեան նամակատունին յանձնել: Նոյնպէս Թիւրքիա անսահման իրաւունք չունէր օտարներու վրայ տուրք դնելու: Թիւրքիա

չէր կրնար նոյն իսկ մաքսի տուրքերը աւելցնել, առանց օտար տէրութիւններու հաւանութեանը: 1914ին, մաքսային սակացոյցներուն 10% միայն կրնար պարտադրել, եւ կը ջանար այդ թիւը 14ի բարձրացնելու իրաւունքը ապահովել: Մենք միշտ Անգլիան նկատած ենք անմաքս փոխանակութեան [free-trade] միակ երկիրը, մոռնալով այն իրողութիւնը թէ՛ Թիւրքիայի մաքսային տուրքերուն այս սահմանափակումը՝ գործնականին մէջ Օսմանեան Կայսրութիւնը Կօպտոսի ականայ հետեւող մը դարձուցած էր: Այսպէսով, Թիւրքիա Տէրութիւններու կողմէ արգիլուած էր իր սեփական ճարտարարուեստները զարգացնելէ. ատոր փոխարէն, ան դատապարտուած էր Եւրոպայէն մեծ քանակութիւնով ստորին ապրանքներ գնելու: Թիւրք քաղաքագէտները տարիներով բողոքած էին այս սեղմումներուն դէմ, յայտարարելով թէ՛ ատոնք նախատինք մը կը կազմէին իրենց ազգային հպարտութեանը եւ կը խափանէին իրենց առաջդիմութիւնը: Սակայն, դաշնադրութիւնը միակողմանի էր, եւ Թուրքիա չէր կրնար զայն փոխել, առանց պայմանադիր տէրութիւններու հաւանութեանը: Բայց, վստահօրէն, ներկայ պահը, երբ թէ՛ Համաձայնական եւ թէ՛ Կեդրոնական Տէրութիւնները կը սիրաշահէին Թիւրքիան, թանկագին առիթ մը դարձաւ փոփոխութիւնը կատարելու: Եւ այսպէս, Գերմանները Փարիզի վրայ քալել սկսեցնուն պէս, լուրեր ելան թէ՛ Թիւրքիա մտադիր էր ֆալիթիւրսիօնները ջնջելու: Զրոյցին մէջ կ'ըսուէր թէ՛ Գերմանիա հաւանած էր ատոր, իբր վարձք Թիւրքիայի պատերազմի մասնակցութեանը, եւ թէ՛ Անգլիա հաճած էր ջնջումին, իբր վարձքի հատուցում Թիւրքիայի չէզոքութեանը: Այս տեղեկութիւններէն ո՛չ մէկը ճիշդ չէր: Ինչ որ սակայն բացայայտ էր, այն տազնապն էր՝ զոր ջնջումի պարզ գաղափարը առաջ բերաւ օտար բնակչութեան վրայ: Թիւրքիայի օրէնքներուն ենթակայ դառնալու եւ թերեւս թիւրք բանտերու մէջ նետուելու գաղափարը իրենց մարմինը սարսուացուց — եւ իրաւունքով:

Այդ ատեն, երկար տեսակցութիւն մը ունեցայ Էնվէրի հետ: Խնդրեց որ իր բնակարանը երթամ, որովհետեւ վէրքոտած ոտքի մատին վրայ վիրաբուժական գործողութեան մը հետեւանքով՝ պառկած էր: Այդպէսով, որոշակի հանչցայ Պատերազմական Նախարարը տունն ներս [en famille*]: Ժողովուրդի զաւակ այս խոնարհ մարդը իրաւցնէ ո՛րչափ վեր ելեր էր: Իր բնակարանը, որ քաղաքին ամէնէն խաղաղ եւ ազնուապետական մէկ մասին

* Բնագրին մէջ գրանուէրն:

մէջ կը գտնուէր, հին շքեղ շէնք մըն էր, շատ ընդարձակ եւ շատ խնամուած: Հրամցուցայ անցնիլ չորս կամ հինգ սրահներու շարքի մը մէջէն, եւ երբ դուռի մը առջեւէն կ'անցնէի, կայսերական Իշխանուհին, Էնվէրի կինը, մեղմովին բացաւ զայն եւ գողունի զիս դիտեց: Անդին, ուրիշ Թրքոսի մը, բացաւ իր դուռը եւ նոյնպէս արագ ակնարկ մը սուեռեց դեսպանական անձնաւորութեանս: Վերջապէս առաջնորդուեցայ զեղեցիկ սենեակ մը, ուր Էնվէր բազմոցի մը վրայ ընկողմանած էր: Հագուած էր մետաքսէ երկար պարեգօտ մը եւ իր գուլպայով ոտքերը մեղկօրէն կախուած էին բազմոցին ծայրէն: Համազգեստով ցուցուցածէն աւելի երիտասարդ կ'երեւար. նշմարելի էր իր մաքուր եւ խնամուած տեսքը, տփզոյն, ողորկ դէմքով՝ որ աւելի ուշագրաւ կը դառնար իր սեւ մազերովը, եւ փափուկ; ճերմակ ձուքերով եւ երկար ու երթալով բարակցող մատներով: Հազիւ երեսուն տարեկանէն վար կ'երեւար, եւ իրապէս ալ, այդ տարիքը ունէր: Ձեռքին մէջ ջութակ մը ունէր եւ իր մօտը գտնուող դաշնակ մը՝ երաժշտութեան իր ճաշակը կը վկայէր: Սենեակը շքեղապէս գորգազարդուած էր. սենեակին էն աչքառու պատկերը կը կազմէր գահաւորակ մը, ուր ոսկեզարդ աթոռ մը կար. առիկա էնվէրին կայսերագուն կնոջ գահն էր: Մինչ շուրջս այս պերճանքը կը դիտէի, կը խոստովանիմ որ կարգ մը անգութ մտածումներ եկան միտքս եւ չկրցայ արգիլուիլ խոկայէ խնդրի մը վրայ՝ որ այդ ատեն Պոլիսի մէջ ընդհանրապէս կը հարցուէր: Էնվէր ուրկէ՞ կը գտնէր դրամը՝ այդ բազմածախս կարգուսարքին համար: Ինք սեփական հարստութիւն չունէր — իր ծնողքը խղճալիօրէն ազբաւտ էին — եւ իբր Դահլիճի անդամ՝ իր թօշակը հազիւ 8,000 տօշախ չափ էր: Իր կինը իբր կայսերագուն իշխանուհի՝ համեստ ոռոնիկ մը ունէր, բայց անձնական հասոյթներ չունէր: Էնվէր երբեք գործով զբաղուած չէր. ան իր ամբողջ կեանքի ընթացքին՝ եղած էր յեղափոխական, զինուորական պետ եւ քաղաքագէտ: Բայց հող անանկ կեանքով մը կ'ապրէր որ՝ շատ մեծ հասոյթի կը կարօտէր: Ուրիշ կերպով ալ Էնվէր իր մեծ եւ յանկարծական հարստութեան ապացոյցները կու տար, եւ արդէն շատ լսած էի անշարժ կալուածներու իր շահագործութիւններուն մասին քաղաքին մէջ խօսուիլը:

Էնվէր ուզեց ֆալիթիւրսիօններուն վրայ խորհրդակցիլ: Բացայայտօրէն ըսաւ թէ՛ Դահլիճը որոշած էր ջնջումը եւ ինք կ'ուզէր զիտնալ Միաց.-Նահանգներու դիրքը: Աւելցուց թէ՛ անշուշտ երկիր մը՝ որ կուտած էր իր անկախութեանը համար, պիտի համակրէր Թիւրքիայի ջանքին՝ իր շղթաները թօթափելու: Մենք

որ՝ օժանդակած էինք ձափոնի՝ համանման լուծէ ազատագրուելու համար, չի՞ պիտի օգնէինք Թիւրքիայի: Անշուշտ Թիւրքիա ալ ձափոնի չափ քաղաքակրթուած երկիր մըն էր ?

Պատասխանեցի թէ՛ կը խորհէի որ՝ Միաց.-նահանգները թերեւս հաւանէին հրաժարիլ ֆափփօրէաւորներէն, իբր տնտեսական առանձնաշնորհում: Իմ կարծիքս ան էր որ՝ Թիւրքիա պէտք է հսկէր իր մաքսային տուրքերուն եւ արտօնուէր պարտադրելու այդ տուրքերը օտարներու վրայ ալ, ինչպէս իր սեփական քաղաքացիներուն: Սակայն, որչափ ատեն որ Թիւրք դատարանները եւ Թիւրք բանտերը պահէին իրենց ներկայ կարգերը, մենք երբեք չպիտի կրնայինք հրաժարիլ դատական առանձնաշնորհումներէն: Թիւրքիա պէտք էր բարեկարգել իր դատարաններուն ապօրինութիւնները. դատական վարչութեան մէջ եւրոպական գաղափարներ մտցուելէն ետքը, խնդիրը կրնար քննուիլ: Էնվէր պատասխանեց թէ՛ պիտի յօժարէր որ՝ խառն դատարաններ կազմուէին եւ Միաց.-նահանգները նշանակէին դատաւորներուն մէկ մասը. բայց ես դիտել տուի թէ՛ քանի որ ամերիկացի դատաւորները Թիւրքերէն լեզուն չէին գիտեր, իր ծրագիրը գործնական մեծ դժուարութիւններ պիտի պարունակէր: Յայտնեցի իրեն նաեւ թէ՛ ամերիկեան վարժարանները եւ գոյճները շատ թանկագին էին Ամերիկացիներուն, որով անոնք չպիտի հաւանէին երբեք զանոնք ենթարկել Թրքական օրէնսդրութեան:

Հակառակ բոլոր Դեսպաններուն բողոքներուն, Դահլիճը հրատարակեց իր ծանուցագիրը թէ՛ ֆափփօրէաւորները պիտի ջնջուէին Հոկտեմբեր 1ին: Այս ջնջումը ժէօն Թիւրքերու ծրագրին մէկ մասն էր՝ զիրենք ազատագրելու օտար խնամակալութենէ եւ ստեղծելու երկիր մը՝ «Թիւրքիան Թիւրքերուն համար» հիմին վրայ: Ադ կը ներկայացնէր, ինչպէս պիտի ապացուցանեմ, թէ ի՞նչ էր Թիւրք քաղաքականութեան հիմնական ոգին, ո՛չ միայն օտար տէրութիւններու հետ կայսրութեան յարաբերութիւններուն մէջ, այլ նաեւ հանդէպ հպատակ փողովորդներու: Այս խնդրին մէջ, Անգլիայի դիրքը գրեթէ նոյնն էր, ինչ որ էր մերը: Բրիտանական կառավարութիւնը պիտի հաւանէր տնտեսական սեղմումներու փոփոխութեանը, բայց ո՛չ ուրիշ փոփոխութիւններու: Վանկէնհայմ մեծապէս նեղուած էր, եւ կը կարծեմ որ՝ գերման արտաքին գործերու նախարարութիւնը զինքը կշտամբեց, թոյլ տալուն համար որ ջնջումը տեղի ունենայ, — որովհետեւ քծնողաբար խնդրեց ինձմէ որ՝ ծանուցանեմ թէ՛ ատոր պատասխանատուն ես էի! Հոկտեմբեր 1ը մօտենայու միջոցները, Թիւրքիա գտնուող օտարականները սաստիկ վախի

մէջ էին: Տարտանէլը փակուած էր, զիրենք Եւրոպայէն կողմացնելով, եւ հիմա կը զգային որ՝ Թիւրք դատարաններու եւ Թիւրք բանտերու դատակնիքին պիտի մատնուէին: Քանի որ Թիւրք բանտերուն մէջ սովորութիւն էր անմեղը յանցաւորին հետ խմբել, մահապարտներու հետ նոյն սենեակին մէջ դնել մարդիկ՝ որոնք չնչին յանցանքներով ամբաստանուած են, բայց չեն դատապարտուած, եւ բրածեծել կամակոր վկաները, — օտար բնակիչներու վախերը շատ լաւ կրնան ըմբռնուիլ: Կրթական հաստատութիւններն ալ ահաբեկած էին եւ անոնց համար դիմեցի Էնվէրին, որ վստահեցուց թէ՛ Թիւրքերը թշնամական դիտաւորութիւն չունէին Ամերիկացիներու հանդէպ: Պատասխանեցի թէ՛ պէտք էր անվրիպելի փաստ մը ցուցնէր որ՝ Ամերիկացիները չպիտի մնասուէին:

— Շատ լաւ, պատասխանեց. ի՞նչ կը թելադրէք:

— Քափփօրէաւորներու ջնջումին օրը, Հոկտեմբեր 1ին, ամէնուն չաքին դէմ Ռօպըրդ Գօլէն կ'այցելէք, ըսի:

Գաղափարը եզական էր, որովհետեւ այդ հաստատութեան ամբողջ պատմութեանը մէջ, Թիւրք կարեւոր պաշտօնատար մը երբեք անոր դուռնէն ներս ոտք դրած չէր: Բայց բաւական կը հանձնայի Թիւրք նկարագիրը՝ ըմբռնելու համար որ Էնվէրի կողմէ բացայայտ պաշտօնական այցելութիւն մը՝ հանրային զգայացնում պիտի պատճառէր: Լուրը պիտի հասնէր Թիւրք Կայսրութեան ամէնէն հեռաւոր սահմանները եւ անտարակուսելի էր որ՝ Թիւրքերը այն մեկնութիւնը պիտի տային թէ՛ Թիւրքիայի ամէնէն հզօր երկու անձնաւորութիւններէն մէկը՝ ամերիկեան այդ եւ ուրիշ հաստատութիւնները իր հովանաւորութեանը տակ առած էր: Այդ տեսակ այցելութիւն մը՝ Թիւրքիայի Ամերիկեան Գօլէններուն եւ վարժարաններուն վրայ անելի՛ մեծ պաշտպանողական ազդեցութիւն մը պիտի գործէր, քան զօրաբանակ մը: Հետեւաբար մեծ հաճոյք զգացի, երբ Էնվէր անմիջապէս ընդունեց թելադրութիւնս:

Քափփօրէաւորներու ջնջումին օրը, Էնվէր Ամերիկեան Դեսպանատուն եկաւ երկու ինքնաշարժով, մէկը իրեն եւ ինձի, եւ միւսը իր կցորդներուն համար, որոնք բոլորն ալ համազգեստաւորուած էին: Ուրախացայ որ՝ Էնվէր այցը այդչափ հանդիսաւոր դարձուցած էր, որովհետեւ կը փափաքէի որ՝ ամենալայն հանրահռչակում գտնէր ան: Դէպի Գօլէն ճամբուն ընթացքին, Էնվէրի պատմեցի ամէն բան՝ այդ ամերիկեան հաստատութիւններուն վրայ, բացատրելով այն ծառայութիւնները՝ զորս կը մատուցանէին անոնք Թիւրքիայի: Իրապէս ան շատ քիչ բան

գիտէր անոնց մասին , եւ , ինչպէս շատ մը Թիւրքեր , ան կէս մը կը կասկածէր թէ՛ անոնք քաղաքական գաղտնի նպատակ մը ունէին :

— Մենք Ամերիկացիներս նիւթական շահ չենք հետապնդեր , ըսի : Մենք միայն կը պահանջենք որ՝ դուք ազնուութիւնով վարուիք մեր տղոց՝ այս գօլէճներուն՝ հետ , որոնց համար Միացեալ Նահանգներու ամբողջ ժողովուրդը ամենազերմ սէրը կը տածէ» :

Տեղեկացուցի իրեն թէ՛ Ռօպըրդ Գօլէճի խնամակալութեան նախագահ Մր. Բլիվլէնտ Հ. Տօճ եւ Աղջիկներու Գօլէճին խնամակալութեան նախագահ Մր. Չարլս Ռ. Բրէյն , Նախագահ Ուիլսոնի մտերիմ բարեկամներն էին : «Ատոնք , աւելցուցի , կը ներկայացնեն Ամերիկայի ընտրելագոյն ղէմքերը եւ այն այլասիրական ազնիւ ոգին՝ որ մեր երկիրին մէջ հարստութիւն կը դիզէ եւ ետքէն զայն կը գործածէ գօլէճներ եւ վարժարաններ հիմնելու : Թիւրքիայի մէջ այս հաստատութիւնները հիմնելով , անոնք կը ջանան ո՛չ թէ ձեր ժողովուրդին անդամները Քրիստոնէութեան դաւանափոխել , այլ մարզել զանոնք գիտութիւններու եւ արուեստներու մէջ եւ այդպէս անոնցմով լաւագոյն քաղաքացիներ պատրաստել : Ամերիկացիները կը զգան որ՝ Սուրբ Երկիրը իրենց տուած է իրենց կրօնքը եւ իրենք ալ կը փափաքին վարձահատոյց ըլլալ այն լաւագոյն բանով՝ զոր Ամերիկա ունի — իր դաստիարակութիւնը : Յետոյ խօսեցայ իրեն Տկն. Ռըսսըլ Սէյճի եւ Օր. Հելէն Կուլտի մասին , որոնք հսկայ նուիրատուութիւններ ըրած են Աղջիկներու Գօլէճին :

— Բայց ուրկէ՞ կը գտնեն անոնք դրամը՝ այդ տեսակ բարեգործութիւններու համար , հարցուց էնվէր :

Ժամի մը չափ խօսեցայ անոր՝ մեր «Ամերիկեան Գիշերներ»ու քանի մը էջերուն վրայ : Պատմեցի թէ՛ ինչպէս ձէյ Կուլտ , անկուտի եւ ցնցոտիազգեաց տղայ մը , Նիւ-Եօրք եկած էր , իր գիւտը եղող մուկի թակարդով մը , թէ ինչպէս , զրեթէ երեսուն տարի ետքը , մեռած էր շուրջ 100,000,000 օտարի հարստութիւն մը ձգելով : Պատմեցի իրեն թէ՛ ինչպէս Գօմմօտօս Վանուէրպիդ գործի սկսած էր իբր լաստավար [ferryman] եւ Ամերիկայի երկաթուղիներու մեծագոյն «աւագապետ»ը հանդիսացած էր : Թէ ինչպէս Ռօքֆէլլըր իր ասպարէզը սկսած էր՝ Բլիվլէնտ գտնուող յանձնակատարական հաստատութեան մը մէջ բարձր աթոռի մը վրայ ցցուած՝ շարաթը վեց օտար շահելով , բայց ետքէն ստեղծած էր մեծագոյն հարստութիւնը՝ զոր աշխարհի պատմութեան մէջ միակ մարդ մը դիզած ըլլայ երբեք : Պատմեցի թէ՛ ինչպէս Տօճերը եղած էին մեր հսկայ «պղինձի թագաւոր»ները

եւ Քրէյնները՝ երկաթէ խողովակի մեր մեծ հարտարագործները : Էնվէր այս պատմութիւնները աւելի սրտայոյզ գտաւ , քան Պաղտատէն եկած ուրիշ որեւէ պատմութիւն . ետքէն տեղեկացայ որ՝ անհկա լսածները այնչափ յաճախակի վերակրկնած էր որ՝ պատմութիւնները Պոլիսի զրեթէ բոլոր նշանակելի անձնաւորութիւններուն ականջը հասած էին :

Էնվէր խորապէս տպաւորուած էր նաեւ ամերիկեան հաստատութիւններու մասին խօսածներէս : Պտրտեցաւ բոլոր շէնքերը եւ իր տեսած ամէն բանին համար իր հիացումը յայտնեց . մինչեւ անգամ զգացուց թէ՛ փափաքող էր եղբայրը հոն ղրկելու : Տնօրէն Կէյթսի կնոջ՝ Տկն. Կէյթսի հետ թէյ առաւ . չափազանց ուշիմօրէն խօսեցաւ դասընթացքներուն վրայ եւ հարցուց թէ՛ չէ՞ր կարելի երկրագործութեան ուսումն ալ մտցնել անոնց մէջ : Ուսուցիչները՝ որոնց ծանօթացաւ , կարծես ճշմարիտ յայտնութիւն մը եղան իրեն :

— Ես այս միսիօնարները կ'ակնկալէի գտնել , ըսաւ , այնպէս՝ ինչպէս անոնք պատկերացուած են Պերլինի օրաթերթերուն մէջ , երկար մագերով եւ կախուած ձնօտներով եւ աղօթքի դիրքի մը մէջ մշտապէս միացած ձնօքերով : Բայց ահա՛ Տօքթ. Կէյթսը , որ Թիւրքերէնը տեղացիի մը պէս կը խօսի եւ աշխարհիկ մարդու մը պէս կը վարուի : Չափազանց ուրախ եմ , եւ շնորհակալ եմ ձեզի՝ զիս հոս բերած ըլլալնուդ» :

Այդ ցորեկէ-ետքը , մենք բոլորս էնվէրը գտանք իր է՛ն գուարթ տեսքով : Իմ գաղափարս թէ՛ այս այցելութիւնը ինքնին պիտի պաշտպանէր Գօլէճները խառնակութիւններէ՝ ապացուցուեցաւ որ բարեպատեհ ներշնչում մը եղած էր : Վերջին չորս տարիներու ընթացքին , Թիւրք Կայսրութիւնը խռովայոյզ վայր մը եղաւ . բայց ամերիկեան գօլէճները ո՛րեւէ կնճիւ չունեցան , թէ՛ Թիւրք կառավարութեան եւ թէ՛ Թիւրք ժողովուրդին հետ :

Այս այցելութիւնը հաճելի մէկ միջնարարն էր ամէնէն ծանր հանքամանքը ունեցող դէպքերու : Էնվէր , թէեւ պարագային համեմատ կրցածին չափ հաճոյական , բայց խորհրդածաբար որոշած էր Թիւրքիան պատերազմի մտցնել՝ Գերմանիայի կողքին : Գերմանիա հիմա հասած էր այն կէտին , ուր ա՛լ չէր ծածկեր իր դիտաւորութիւնները : Առաջները , երբ խաղաղութեան նպատին միջամտած էի , Վանկէնհայմ քաջալերած էր ձեռնարկս : Ատոր պատճառը ան էր որ , ինչպէս դիտել տուած եմ , այդ ատեն , Գերմանիա ուզած էր Թիւրքիան պատերազմէ հեռու պահել , որովհետեւ գերման Ընդհ. Սպայակոյտը կը յուսար պատերազմը շահիլ , առանց Թիւրքիայի օժանդակութեանը : Մինչդեռ հիմա

Վանկէնհայմ, կ'ուզէր որ Քիւրքիա մասնակցի: Որովհետեւ ես Գերմանիայի շահուն չէի գործեր, այլ ջանացեր էի ամերիկեան հաստատութիւնները պաշտպանելու, շարունակեցի էնվէրի եւ Քալէադի պնդել՝ պատերազմի լմասնակցելու: Ասիկա Վանկէնհայմը զայրացուց:

— Կը կարծէի որ՝ դուք չէզոք էք, գոչեց ան:

— Կը կարծէի որ՝ դուք... Քիւրքիա կը գտնուիք, պատասխանեցի: Հոկտեմբերի վերջը, Վանկէնհայմ բան պակաս չէր ձգեր՝ պատերազմը փութացնելու համար. հիմա նպատաւոր առիթի մը միայն կը կարօտէր:

Նոյն իսկ Գերմանիայի Տարտանէլը փակելէն ետքը, գերման Դիսպանին գործը դիւրին չէր: Քալէադ տակաւին լիովին համոզուած չէր որ՝ իր լաւագոյն քաղաքականութիւնը պատերազմը եղած ըլլար, եւ, ինչպէս արդէն ըսած եմ, տակաւին պաշտօնական շրջանակներու մէջ Համաձայնասէր համակրութիւնը մեծ էր: Քալէադի ծրագիրն էր Դահլիճին գործառնութիւնները յանկարծ ձեռք չառնել, այլ աստիճանաբար հարթել իր ճամբան դէպի բացարձակ տիրապետութիւն: Այս տազնապին մէջ, Դահլիճին ամէնէն աւելի ժողովրդական յարգանք վայելող անդամներն էին՝ ելեւմտական նախարար ձավիտ, մարդ մը՝ որ ցեղով Հրեայ, բայց կրօնքով մահմետական էր. հանրային շինութիւններու նախարար՝ Մահմուտ փաշա, Չէրքէզ մը. առեւտրական եւ երկրագործական նախարար՝ Պուսթանի էֆէնտի, բրիտանաց Արաբ մը. եւ թղթատարական եւ հեռագրական նախարար՝ Ոսկան էֆէնտի, Հայ մը, եւ հետեւաբար Բրիտանաց: Այս բոլոր վարիչները, ինչպէս նաեւ Եպարքոսը, բացայայտօրէն դէմ կեցան պատերազմին եւ ծանուցին Քալէադի եւ էնվէրի որ՝ եթէ Գերմանիա յաջողէր իր դաւերուն մէջ՝ իրենք պիտի հրաժարէին: Այսպէս, մթնոլորտը վրդովիչ էր: Թէ կացութիւնը ո՛րչափ ձգտուած էր, միակ դրուագ մը պիտի ցուցնէ: Անգլիական դեսպան Սըր Լուի Մալէդ՝ ամերիկեան Դեսպանատունէն եղած ճաշի հրաւերի մը խոստացած էր ներկայ ըլլալ Հոկտեմբեր 20ին, բայց վերջին վայրկեանին լուր դրկեց թէ՛ հիւանդ էր եւ չպիտի կրնար գալ: Մէկ երկու ժամ ետքը Դեսպանին գացի եւ զինքը պարտէզին մէջ գտայ, յայտնապէս կատարեայ առողջութեան տէր: Սըր Լուի ժպտեցաւ եւ ըսաւ թէ՛ իր հիւանդութիւնը զուտ քաղաքական էր: Նամակ մը ստացած էր, որ իրեն կը յայտնէր թէ՛ այդ գիշերը պիտի սպաննուէր. նամակը կը ծանուցանէր ժամը եւ ճիշդ այն տեղը՝ ուր տուամը տեղի պիտի ունենար: Հետեւաբար, խորհած էր որ լաւագոյն էր դուրս չելլել: Որովհետեւ այդ տեսակ

ոճիր մը ծրագրուած ըլլալուն տարակոյս չունէի, Սըր Լուիի առաջարկեցի մեր Դեսպանատունին պաշտպանութիւնը: Իրեն տուի շէնքին պարտէզին ետեւի դուռին բանալին. եւ, Լուի Ուէլլէզիի հետ, որ իր քարտուղարներէն մէկն էր — Ուէլլիզընի Դուքսին գերդաստանէն — ամէն կարգադրութիւն ըրի՝ իր փախուստին համար դէպի մեր շրջանակը, այն պարագային՝ երբ փախչելը անհրաժեշտ դառնար: Մեր Դեսպանատունները անանկ դիրք մը ունէին որ, յարձակումի մը պարագային՝ Դեսպանը աննշմարելի կերպով կրնար իր Դեսպանատունին ետեւի դուռէն անցնիլ մեր Դեսպանատունին ետեւի դուռը:

— Այս մարդիկը Միջին Դարը կը յիշեցնեն, ըսաւ Սըր Լուի, երբ խնդիրը դեսպանները բանտ նետելու վրայ ըլլայ. եւ կարծեմ ինք կը սպասէր որ՝ ներկայի Քիւրքերը նոյն կերպով պիտի վարուէին իրեն հետ: Անմիջապէս Եպարքոսին գացի եւ պարզեցի կացութիւնը, պնդելով որ՝ եթէ միայն Քալէադ այցելութիւն մը տար Սըր Լուիի, վստահեցնելով զայն իր ապահովութեանը մասին, գործուած չարիքը չեղեալ պիտի համարուէր: Ես առանց անհրաժեշտ կրնայի ընել այդ առաջարկը, քանի որ արդէն կարգադրութիւններ ըրած էինք բրիտանական շահերու պաշտպանութիւնը մեր վրան առնելու, երբ խզումը առաջ գար: Երկու ժամուան մէջ՝ Քալէադ կատարեց այդ այցելութիւնը: Թէեւ Քիւրք թերթերէն մէկը զուհիկ յարձակումներ կը հրատարակէր Սըր Լուիի դէմ, բայց ան անձնապէս շատ ժողովրդական էր Քիւրքերուն մէջ, եւ Եպարքոսը իր զարմանքը եւ ցաւը յայտնեց — եւ ան կատարելապէս անկեղծ էր — որ այդ տեսակ սպառնալիքներ եղած էին:

ԳԻՐՔԻՆ ՄԷՋ ՅԻՇՈՒՈՂ ԴԵՄՔԵՐ

ՍԱԻՏ ՉԱԼԻՄ, ՆԱԽԿԻՆ ԵՊԱՐՔՈՍ

Սաիտ Հալիմ եգիպտացի իշխան մըն է, որ ժեռն Քիւրքերու քաղաքական գործունեութեանը համար պայքարի դրամ հայթայթեց, եւ, իբր վարձատրութիւն, Եպարքոս եղաւ: Այդ պատճառով մեջ, ան արժանուած չէր որեւէ իրական իշխանութիւն բանեցնել: Իրեն խոստացուած եր որ՝ երբ ժեռն Քիւրքերը յաջողիկն Անգլիան եգիպտոսէն վճարել, ինք ետիվ պիտի ըլլար:

ԺԱ. ԳԼՈՒԽ

ԳԵՐՄԱՆԻԱ ՅԻՒՐՔԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿԸ ՄՂԷ

Բայց այդ ատեն, մենք ամէնքս չափազանց ջղային վիճակի մը մէջ էինք, որովհետեւ գիտէինք որ՝ Գերմանիա ամէն ջանք կը թափէր կռուապատճառ [casus belli] մը ստեղծելու: Սուշոն յաճախակի Կոպիենը եւ Պրեզաուն Սեւ Մոյ նաւափործի կը զրկէր, յուսալով որ՝ ռուսական նաւատորմիչը յարձակում կը գործէ: Զանազան առկախ խնդիրներ կային՝ որոնք կրնային պատերազմի յանգիլ: Թրքական եւ ռուսական զօրամասեր՝ պարսկական եւ կովկասեան սահմանագլուխներուն վրայ՝ պատահական ընդհարումներ կ'ունենային: Հոկտեմբեր 29ին, Պէտէփին զօրախումբեր եզիպտական սահմանագլուխը անցան եւ բրիտանական զինուորներու հետ թեթեւ բաղխումներ ունեցան: Ճիշդ այդ օրը, Թալէադի հետ երկար տեսակցութիւն մը ունեցայ: Անգլիական Դեսպանին կողմէ պարտք նկատեցի խօսիլ անոր՝ Պէտէփիններուն եզիպտոս անցնելուն վրայ: «Կը կարծեմ որ, կը գրէր ինձի Սըր Լուի, ատիկա պատերազմ կը նշանակէ. դուք կրնաք այդ լուրը յիշել Թալէադի եւ անոր զգացնել այդ տխմար արարքին հաւանական հետեւանքները»: Արդէն Սըր Լուի այդ խնդիրին շուրջը Թիւրքիայի հետ կ'ենթաներ ունէր: Երբ Եպարքոսին բողոքած էր եզիպտական սահմանագլուխին մօտը գտնուող Թիւրք զօրախումբերու մասին, Թիւրք վարչազէտը նրբամտօրէն պատասխանած էր թէ՛ Թիւրքիա եզիպտական սահմանագլուխ կոչուած բան մը չի ճանչնար: Ատով՝ անշուշտ ըսել ուզած էր որ՝ եզիպտոս ինքնին Թրքական հող էր եւ անգլիական գրաւումը ժամանակաւոր յափշտակութիւն մըն էր: Երբ այս եզիպտական կացութիւնը Թալէադի ուշադրութեանը յանձնեցի, ան ըսաւ թէ՛ օսմանցի Պէտէփիններ եզիպտոս չէին մտած: Թէ՛ Թիւրքերը Սինայիի թերակղզիին վրայ խրամ կը շինէին՝ գործածելու համար այն պարագային, երբ Անգլիայի հետ պատերազմ ծագէր. Անգլիա կը քանդէր այդ խրամները, եւ Պէտէփինները, կ'ըսէր Թալէադ, միջամտած էին՝ դադրեցնելու համար այդ քանդումը:

Այդ տեսակցութեան մէջ, Թալէադ անկեղծօրէն յայտարարեց ինձի թէ՛ Թիւրքիա որոշած էր Գերմաններուն կողմը անցնիլ եւ անոնց հետ մեռնիլ կամ յաղթել: Թալէադ նորէն ծանօթ պատճառներուն ակնարկեց եւ աւելցուց որ՝ եթէ Գերմանիա յաղթէր

— եւ Թալէադ յայտարարեց թէ՛ համոզուած էր որ՝ Գերմանիա պիտի յաղթէր — Գայգէրը վրէժ պիտի առնէր Թիւրքիայէն, եթէ Թիւրքիա օժանդակած չըլլար իրեն՝ այդ յաղթանակը շահելու: Թալէադ անկեղծօրէն խոստովանեցաւ թէ՛ վախն էր որ — ազդակ՝ որմէ կը ներշնչուին գլխաւորաբար, ինչպէս ըսած եմ, Թրքական գործերը — Թիւրքիան գերման զինակցութեան կը մղէր: Թալէադ չափազանց հանդարտ կերպով վերլուծեց ամբողջ կացութիւնը. ըսաւ թէ՛ ազգերը չեն կրնար անձնատուր ըլլալ երախտագիտութեան, ատելութեան կամ սէրի պէս զգացումներու. թէ՛ գործելու միակ առաջնորդը պէտք է ըլլայ պաղարիւն քաղաքականութիւնը:

— Այս պահուն, ըսաւ Թալէադ, մեր շահը կը պահանջէ Գերմանիայի կողմը բռնել. եթէ, ամիս մը ետքը, մեր շահը պահանջէ Ֆրանսայի կամ Անգլիայի յարիլ, նոյնչափ պատրաստակամութիւնով պիտի ընենք այդ բանը: «Ռուսիա մեր մեծագոյն թշնամին է, շարունակեց ան, եւ մենք անկէ կը վախնանք: Սա միջոցին, երբ Գերմանիա Ռուսիայի վրայ կը յարձակի, եթէ մենք կարող ենք անոր շատ ուժգին աքացի մը տալ, այնպէս որ ան ատեն մը անգոր դառնայ մեզի վնասելու, Թիւրքիայի պարտականութիւնն է այդ աքացին իջեցնելը!»

Եւ յետոյ, կէս-մելամաղձոտ, կէս-ռազմահրաւէր ժպիտով մը ինձի դառնալով, ամբողջ կացութիւնը խտացուց.

«Ich mit die Deutschen» [Ես Գերմաններուն հետ] ըսաւ, իր աղճատ գերմաններէնով:

Բայց Դահլիճը այնչափ պառակտուած էր որ՝ Գերմանները պէտք ունեցան իրենք Թիւրքիան դէպի խորխորատը մղելու: Թալէադի հետ տեսակցութեանս յաջորդ օրը, շատ աղետալի լուրեր հասան Ռուսիայէն: Երեք Թրքական թորփիլանաւեր Օտեսայի նաւահանգիստը մտած էին, ընկղմած էին Տոնկս թիւղանօթածիզը, սպաննելով նաւազներուն մէկ մասը, եւ վնասած էին երկու ռուսական տոնտերներ: Անոնք ընկղմած էին նաեւ Ֆրանսական Փօրթուկաչ նաւը, նաւազներէն երկուքը սպաննելով եւ ուրիշ երկու հատը վիրաւորելով: Յետոյ անոնք իրենց թիւղանօթները ուղղած էին քաղաքին վրայ եւ քանդած շաքարի երկու գործարաններ, մաս մըն ալ կեանքի կորուստ պատճառելով: Գերման սպաներ կը վարէին այս Թրքական մարտանաւերը, ուր շատ քիչ Թիւրքեր կային, որովհետեւ Պայրամի Թրքական կրօնական տօնին առիթով՝ Թիւրք նաւազներուն արծակուրդ տրուած էր: Լրբենի եւ մարտագրգիւ արարք մըն էր ադ: Գերմանները կանխամտածութիւնով յարձակում գործեցին քաղաքին վրայ,

պատերազմը անխուսափելի դարձնելու համար: Ինչպէս որ բարեկամս կը պատմէր ինծի, Կենտրալի գերման սպաները շարունակ կը սպառնային այդ տեսակ արարք մը գործել, եթէ Թիւրքիա պատերազմելու որոշում չի տար. արդ, հիմա գործած էին այդ արարքը: Երբ այս լուրը Պոլիս հասաւ, ձէմալ Սէրքը տ'Օռիանի մէջ թղթախաղ կը խաղար: Որովհետեւ ձէմալ ծովային նախարար էր, այս յարձակումը եթէ Թիւրքիայի մէկ պաշտօնական գործողութիւնը ըլլար, միայն իր հրամանով կրնար տեղի ունենալ: Երբ թղթասեղան եկան՝ իրեն տեղեկացնելու լուրը, ձէմալ չափազանց գրգռուեցաւ. «Այդ մասին բան մը չեմ գիտեր, գոչեց: Ատիկա իմ հրամանովս կատարուած չէ»: Հոկտեմբեր 29ի գիշերը ուրիշ տեսակցութիւն մը ունեցայ Թալէադի հետ: Ինծի ըսաւ թէ՛ այդ յարձակումէն կանխապէս ոչ մէկ տեղեկութիւն չունէր եւ թէ ամբողջ պատասխանատուութիւնը կը պատկանէր գերման ծովակալ Սուշոնի:

Չեմ գիտեր թէ՛ այդպէս անգիտութիւն ձեւացնելով՝ ձէմալ եւ Թալէադ ճշմարտութիւնը կը խօսէին թէ ոչ. կարծիքս ան է թէ՛ անոնք այդ տեսակ մարտագրգռութեան մը կը սպասէին: Բայց տարակոյս չի վերցնիր թէ՛ Եպարքոս Սախտ Հալիմ իրապէս վշտահարած էր: Երբ Մ. Պոնիաու եւ Սըր Լուի Մալէդ իրեն ներկայացան եւ անցագիրնին պահանջեցին, ան արցունքով փղծկեցաւ: Ան խնդրեց ետածգել մեկնումնին. կը վստահէր որ՝ խնդիրը կրնար կարգադրուիլ: Եպարքոսը Դահլիճին միակ անդամն էր՝ զոր էնվէր եւ Թալէադ մասնաւորաբար կ'ուզէին ողորել: Իբր Եգիպտոսի արքայական ընտանիքէն իշխան եւ իբր չափազանց հարուստ ազնուական, Դահլիճին մէջ իր ներկայութիւնը, ինչպէս արդէն ըսած եմ, անոր որոշ վարկ մը կու տար: Այդ բանը հաւանօրէն կը բացատրէ այն պաշտօնը՝ որ այդ ատեն տրուեցաւ ինծի: Թալէադ խնդրեց ինծմէ ռուսական Դեսպանին երթալ եւ հարցնել թէ՛ Թիւրքիա ինչ հատուցում կրնար ընել որ Զարը գոհացնէր: Բիչ հաւանական է որ՝ Թալէադ անկեղծապէս կը փափաքէր կնճռոտութիւնները դարմանելու. իր նպատակն էր միայն ցուցնել Եպարքոսին թէ՛ կը ջանար անոր փափաքներուն ուժ տալ, եւ այդ կերպով, զայն պահել Դահլիճին մէջ: Տեսայ Մր. Կիրսը, բայց զայն հաշտասէր ոգիի տէր չգտայ: Ան ըսաւ թէ՛ Թիւրքիա հատուցում կրնար ընել՝ միայն ճամբելով գերման սպաները՝ Թիւրք բանակէն եւ նաւատորմիդէն: Ան հրահանգ ունէր անմիջապէս մեկնելու եւ մտադիր էր մեկնիլ: Սակայն բաւական ատեն Դուլկարիա պիտի սպասէր՝ պատասխանը ստանալու, եւ, եթէ ընդունէին իր պայմանները, ետ պիտի դառնար:

«Ռուսիա, ինքն ալ, պէտք է երաշխաւորէ թէ՛ Թիւրք նաւատորմիդը կրկին Սեւ Մուլ չպիտի մտնէ», ըսաւ Մր. Կիրս, սպառնազին: Թալէադ ցորեկէ ետքը ինծի եկաւ եւ ըսաւ թէ՛ Վանկէնհայմի ճաշի էր: Դահլիճը նկատի առած էր ռուսական պատասխանը, յայտնեց. Եպարքոսը կ'ուզէր որ Մր. Կիրս իր պայմանները գրաւոր ներկայացնէ. կրնայի՞ զայն ձեռք բերելու աշխատիլ: Այդ ատեն, իտալական դեսպան՝ Կառօնի ստանձնած էր ռուսական գործերը: Թալէադի յայտնեցի թէ՛ այդ կարգի բանակցութիւններ իմ ձեռնհասութեանէս վեր էին եւ առաջիկայ ամէն կարգի բանակցութիւններ պէտք է անոր միջոցովը կատարուէին:

— Ինչո՞ւ համար իբր Եպարքոսին լրաբերը՝ դիմակնիդ վար չէք առնել եւ ինծի հետ չէք խօսիր իբր Թալէադ, հարցուցի:

Խնդաց եւ ըսաւ. «Լա՛ւ, Վանկէնհայմ, էնվէր եւ ես կը նախընտրենք որ՝ ա՛յ պատերազմը սկսի հիմա»:

Պոսթանի, Ոսկան, Մահմուտ եւ Ճավիտ՝ անմիջապէս գործադրեցին իրենց սպառնալիքը եւ Դահլիճէն հրաժարեցան, զայն ձգելով Իսլամ Թիւրքերու ձեռքը: Եպարքոսը, թէեւ սպառնացած էր հրաժարիլ, բայց չի գործադրեց. ան ծայրայեղօրէն սնափառ եւ ունայնապաշտ էր, եւ իր պաշտօնին շուքէն ա՛յնչափ հաճոյք կը զգար որ, երբ վերջնական որոշումին կարգը եկաւ, չկրցաւ անկէ հրաժարիլ: Այսպէս, Թիւրքիայի պատերազմին մէջ մտնելուն արդիւնքը եղաւ, ներքին քաղաքականութեան տեսակէտով ամբողջ ազգը յանձնել Միութիւն եւ Առաջդիմութիւն Քօմիթէին ձեռքը, որ հիմա գործնականօրէն կը վարէր Կառավարութիւնը իր ամէն ճիւղերովը: Այն գաղափարական կազմակերպութիւնը՝ որ մարմին առած էր Թիւրքիայի տալու համար ռամկավարական բարիքները, վերջապէս բրուսիական միապետութեան գործիքը դարձած էր:

Այդ յուզումնալից օրերէն վերջին պատկեր մըն ալ ներկայացնեմ: Հոկտեմբեր 30ի գիշերը, անգլիական Դեսպանատուն գացի: Բազմաթիւ անգլիահպատակներ արդէն իմ պաշտօնատունս կ'ողողէին՝ պաշտպանուելու համար, եւ յոռի վարմունքի ենթարկուելու, նոյն իսկ օտարականներու կոտորածի վախը ամէնուն միտքը պաշարած էր: Այս ընդհանուր ձգտուած վիճակին մէջ, միակ անվրդով դէմք մը կար: Սըր Լուի, Դեսպանատունին մէջ նստած էր մեծ օճախի մը առջեւը; կիսաշրջանակի ձեւով բոլորտիքը դիզուած վաւերաթուղթերու հսկայ շեղաակոյտի մը մէջտեղը: Քարտուղարներ եւ պաշտօնեաներ անընդհատ ներս կը մտնէին, թեւերնուն տակ լեցուն թուղթով, զորս կը դիզէին այն կոյտին վրայ, որով արդէն շրջապատուած էր Դեսպանը: Սըր Լուի վաւե-

դաթուղթերը իրարու ետեւէ կ'առնէր, ակնարկ մը կը նետէր անոնց եւ գրեթէ միօրինակօրէն զանոնք կրակին մէջ կը նետէր: Այս թուղթերը կը պարունակէին հաւանօրէն հարիւր տարուան մը դեսպանական արձանագրութիւնները: Անոնց մէջ արձանագրուած էին նշանաւոր դեսպաններու երկար շարքի մը գործքերը: Անոնք կը պարունակէին պատմութիւնը Թիւրքիայի մէջ դիւանագիտական բոլոր յաղթանակներուն Սթոքհոլմի տը Ռէտչիֆի, «Մեծ էլչին», ինչպէս կը կոչէին զինքը Թիւրքերը, որ, գրեթէ յիսուն տարուան ընթացքին, 1810էն 1858, իրապէս վարեց Թիւրք Կայսրութիւնը Անգլիայի շահերուն նպաստաւոր կերպով: Սըր Լուի Մալէրի կրակին մէջ կը նետուէին հիմա, մէկիկ-մէկիկ, ուրիշ անգլիական Դեսպաններու դիւանագրութիւնները [record]: Թիւրքիայի մէջ բրիտանական իշխողութեան երկար պատմութիւնը իր վախճանին հասած էր: Անգլիայի ազդեցութիւնը քանդելու եւ Անգլիայի յաջորդը դառնալու համար Քայզերին մղած երեսուն տարուան պայքարը վերջապէս յաղթանակած էր եւ Սըր Լուիի Դեսպանատունին բոցը՝ Թիւրքիայի մէջ Անգլիայի անհետացած զօրութեան մահուան խարոյկն էր իրապէս: Մինչ կը դիտէի այս արժանաւոր՝ բայց քիչ մը մտախոհ դիւանագէտը, նստած բրիտանական Դեսպանատունի ամբողջ շքեղանքին մէջ, բնականաբար կը խորհէի թէ՛ ինչպէս երբեմն Սուլթանները վախով եւ պատկառանքով կը խոնարհէին Անգլիայի մեծափառութեանը առջեւ, այն օրերուն, երբ Բրուսիա եւ Գերմանիա չնչին անուաներ էին միայն: Սակայն, անգլիական Դեսպանը խաղաղ եւ պաղարիւն էր, ինչպէս են ընդհանրապէս բրիտանական դիւանագիտական եւ զինուորական ղէմքերը: Մենք նստանք իր խարոյկին առջեւ եւ խորհրդակցեցանք իր մեկնումին մանրամասնութիւններուն վրայ: Ինձի տուաւ ցանկը այն անգլիական հպատակներուն՝ որոնք պիտի մեկնէին եւ անոնց՝ որոնք պիտի մնային: Սըր Լուիի հետ վերջնական կարգադրութիւններ կատարեցի՝ ստանձնելու համար բրիտանական շահերու պաշտպանութիւնը: Ռ'րչափ ալ կարգ մը տեսակէտներով Թիւրքիայի մէջ Բրիտանական ազդեցութեան այս քայքայումը վշտառիթ ըլլար, սակայն Մեծ Բրիտանիայի եւ իր Դեսպանին պատիւը անեղծ կը մնար: Սըր Լուի դրամով գնած չէր Թիւրք պաշտօնատարներ, ինչպէս ըրած էր Վանկէնհայմ: Ան կաշառած չէր Թիւրք մամուլը. կոխկռտած չէ՛ր միջազգային օրէնքի ամենայնտիին հետքերուն վրայ. չէ՛ր եղբայրակցած քաղաքական յուսահատներու հրոսախառնմբի մը հետ. խաբէութիւններու եւ սուտերու անդուլ պայքար մը չէ՛ր մղած՝ իր թշնամիին դէմ: Այն

դիւանագիտական խաղը՝ որուն վախճանը Անգլիայի պարտութիւնը եղած էր՝ խաղ մըն էր, զոր անգլիացի պետական-մարդեր ընդունակ չէին խաղալ: Ատիկա կը պահանջէր այն տեսակ ծիրքեր՝ զորս միայն Վանկէնհայմ ունէր — կը կարօտէր այն գերմանական քաղաքականութեան, որ, Պիլմարքի առածին համեմատ, Հայրենիքին համար պատրաստ է զոհել «ո՛չ միայն կեանքը, այլ նաեւ պատիւը»:

ԳԻՐՔԻՆ ՄԷՋ ՅԻՇՈՒՈՂ ԴԷՄՔԵՐ ԷՆՎԷՐ, ՆԱԽԿԻՆ ՊՍՏԵՐՍՉՄԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ինքնաբոյս սիպար մը, որ, 26 արեկանին, պէտք էր այն յեղափոխութեան, որ գահընկեց քաւ Ապսիլ-Համիսը եւ հասսասեց ժեօն Թիւրքերու նոր վարչութիւնը: Այդ ասեմ, ժեօն Թիւրքերը համեսօրէն կը փափաքէին քրական ռամկավարութիւն մը հասսասել: Այս փորձը ողորմելիօրէն ձախողեցաւ եւ անկէ ետք ժեօն Թիւրք պետերը քրական Կայսրութիւնը վաբեցին իրենց անձնական դիտումներուն համար, եւ երեւան բերին կառավարութիւն մը՝ որ Եւսալի ապիրաս եւ ռեաբարոյ է՝ Բան Ապսիլ-Համիսիսը: Ենվեր քրական բանակը Գերմանիայի կողմը դարձնող գլխաւորաբար պատասխանատու անձն է: Ան ինքզինքը կ'երեւակայէ Նափօլեոնի եւ Ֆրեյդրիխ Մեծի քրական ձուլում մը:

ԹԱԼԷԱԴ, ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ

1914ին, երբ պատերազմը պայթեցաւ, Թալեադ ներքին գործերու նախարար էր եւ ամենէն ազդեցիկ պէտք Միւրիսին եւ Առաջդիմութիւն Քօմիթէին, որ քրական Կայսրութիւնը վարող գաղտնի կազմակերպութիւնն է: Քանի մը քաբի առաջ, Թալեադ նամակի ցրուիչ մըն էր եւ ետէն հեռագրիչ՝ Ագրիանուպոլիսի մէջ: Իր ունեցածը՝ Բաղաբալան մեծ գործապետի (գաղթա) կարողութիւնն է: Թուսիայի հետ հաւատարմութեան բանակցութիւններուն մէջ Թիւրքիայի ներկայացուցիչն էր ան եւ իր ստորագրութիւնը կայ Պրեսկո-Լիպովսիի դաւեազիսին վրայ:

ԺԲ. ԳԼՈՒԽ

ՅԻՒՐՔԵՐԸ ԿԸ ԶԱՆԱՆ ԱԶՆՈՒՑՐԷՆ ՎԱՐՈՒԻԼ

ՕՏԱՐԱԿԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒ ՇԵՏ

ԲԱՅՑ ԳԵՐՄԱՆՆԵՐԸ ԿԸ ՊՆԴԵՆ ԶԱՆՈՆՔ ՉԱԼԱԾԵԼ

Օտեսայի ռմբակոծութենէն անմիջապէս ետքը, առանձնացայ էնվէրի հետ, խորհրդակցելու համար այն խնդիրին վրայ. որ այդ միջոցին Թիւրքիա գտնուող բոլոր օտարականներուն միտքին մէջ առաջին տեղը կը զբաղէր: Կառավարութիւնը ի՞նչպէս պիտի վարուէր թշնամի օտարականներուն հետ: Պիտի արգելափակէ՞ր զանոնք. կեդրոնական կայքեր պիտի հաստատուէր. գերման չարանենգութիւնով պիտի հալածէ՞ր. արդեօք քրիստոնեաներու յատուկ իր թրքական սիրական միջոցները պիտի գործադրէր — չարչարանք եւ ջարդ: Օսմանեան Կայսրութեան մէջ հազարաւոր թշնամի օտարականներ կը բնակէին: Անոնցմէ շատերը իրենց ամբողջ կեանքը հոն անցուցած էին: Ուրիշներ նոյն իսկ օսմանեան հողի վրայ ծնած էին: Երբ Թիւրքիա պատերազմի մէջ մտաւ, այս բոլոր մարդիկը ամէն պատճառ ունէին ամենաբիրտ տեսակէ վարմունք մը ակնկալելու: Չափազանցութիւն մը չէ՞ ըսել թէ՛ անոնցմէ շատերը սպանութեան մշտական վախին տակ ապրած էին: Տարտանելը գոցուած էր. այնպէս որ, քիչ հաւանականութիւն կար որ արտաքին օժանդակութիւն հասնէր այս օտարականներուն: Առանձնաշնորհական իրաւունքները, որոնց տակ ապրած էին անոնք դարերով, ջնջուած էին: Իրապէ՛ս, օտար հպատակներուն եւ բնաջնջումին միջեւ ոչինչ կար, բացի ամբերիկեան դրօշէն: Պատերազմի վիճակը, զիս՝ իբր ամբերիկեան Դեսպան՝ պաշտպանը դարձուցած էր բրիտանական, ֆրանսական, սերպիական եւ պելճիական բոլոր հպատակներուն: Սկիզբէն ըմբռնեցի թէ՛ գործս դժուար պիտի ըլլար: Մէկ կողմը՝ կային Դերմանները, ճնշումի եւ բրտութեան իրենց քաջածանօթ գաղափարները պարտադրող. միւս կողմը՝ կային Թիւրքերը, քրիստոնեաներու հանդէպ իրենց աւանդական ատելութիւնով եւ իրենց բնական բնազդով՝ խոշտանգելու զանոնք՝ որոնք անօգնական իրենց իշխանութեանը յանձնուած էին:

Սակայն, դեռ իմ կողմս զանազան ամուր կռուաններ ունէի եւ գացած էի էնվէրին՝ զանոնք իրեն ներկայացնելու նպատա-

կով: Թիւրքիա կը փափաքէր Միաց.-Նահանգներու համարումը շահիլ, եւ կը յուսար, պատերազմէ ետքը, օժանդակութիւն գտնել ամբերիկացի դրամատէրներու կողմէ: Այդ միջոցին, Պոլիսի բոլոր Դեսպանատունները կը հաւատային որ՝ Միաց.-Նահանգները պիտի ըլլային հաշտարար: Հետեւաբար էնվէրի ըսի թէ՛ եթէ Թիւրքիա մեզ բարեկամ կը նկատէր, պէտք էր թշնամի օտարականներու հետ քաղաքակիրթ կերպով մը վարուիլ:

— Դուք կը բարձաք վերահաստատել ձեր համաշխարհային իշխանութիւնը, ըսի, ուրեմն պէտք է յիշէք որ՝ քաղաքակիրթ աշխարհը ուշադիր պիտի հսկէ ձեր վրայ. ձեր ապագայ կացութիւնը կախում պիտի ունենայ պատերազմի մէջ ցուցնելիք ձեր ընթացքէն»: Թիւրքերու մէջ վարիչ դասակարգերը, մէջը ըլլալով նաեւ էնվէր, կ'ըմբռնէին թէ՛ արտաքին աշխարհը զիրենք կը նկատէր ժողովուրդ մը՝ որ մարդկային կեանքի նուիրականութեանը կամ նուրբ զգացումներու յարգանքը չունէր. եւ անոնք սաստիկ ցաւ կը զգային այդ դիրքէն: Հիմա կը յիշեցնէի էնվէրի թէ՛ Թիւրքիա սքանչելի առիթ մը ունէր այդ բոլոր բնադատութիւնները հերքելու:

— Աշխարհ կրնայ ըսել թէ՛ դուք բարբարոսներ էք, փաստաբանեցի. օտարական թշնամիներու հետ ձեր վարուելու կերպովը ցուցուցէ՛ք որ՝ դուք բարբարոսներ չէք: Միայն այս կերպով է որ՝ դուք տեւականապէս կրնաք փրկուիլ ֆափփախասիօններու ամօթէն: Ապացուցէ՛ք որ՝ դուք արժանի էք օտար խնամակալութենէ ազատագրուելու: Քաղաքակիրթ եղէք — արդիական եղէք»:

Նկատի ունենալով այդ միջոցին Պելճիքի եւ հիւսիսային Ֆրանսա պատահածները, իմ արդիական [modern] բառը գործածելս քիչ մը ծախորդ էր: Էնվէր անմիջապէս ակնարկութենէն ազդուեցաւ: Մինչեւ այդ պահը, ան պահած էր իր անվորդով եւ մեծավայելուչ խաղալութեան սովորական դիրքը, եւ իր դէմքը, ինչպէս միշտ, ուշադիր, անայլալ, զրեթէ անտարբեր մնացած էր: Հիմա, ակնթարթի մը մէջ, իր ընթացքը փոխուեցաւ: Իր դէմքին վրայ շնական ժպիտ մը գծուեցաւ, դէպի առաջ հակեցաւ, դաստակը սեղանին վրայ դրաւ ու ըսաւ.

— Արդիական. ո՛չ. Թիւրքիա ի՞նչ ձեւով որ պատերազմ մղէ, զոնէ մենք «արդիական» չպիտի ըլլանք: Ատիկա ամէնէն բարբարոս սիւրբան է: Մենք պարզապէս պիտի ջանանք ազնիւ ըլլալ!

Բնականաբար ես ատիկա խոստում նկատեցի: Սակայն բաւական լաւ կը ճանչնայի թիւրք նկարագիրին փոփոխականութիւնը, զխոնարի համար թէ՛ մէկէ աւելի խոստումներ անհրաժեշտ էին:

Գերմանները յարատեւաբար կը խթանէին թիւրք պաշտօնատար- ները. համոզելով զանոնք որդեգրել գերմանական սիրելագոյն ծրագիրը՝ թշնամի օտարականներու հանդէպ: Գերմանիա վերա- կենդանացուցած է հին եւ միջնադարեան պատերազմի սկզբունքնե- րէն շատերը. անցեալին մէջէն վերյարուժիւն առնող այդ սկզ- բունքներէն ամէնէն բարբարոսներէն մէկն է՝ ժողովուրդին մէջէն զանազան ներկայացուցիչներ — նախընտրելի են ականաւոր եւ ազդեցութեան տէր անձերը — իբր պատանդ պահելու կիրար- կումը, որպէսզի ապահովեն ուրիշներու «բարի վարք»ը: Այդ միջոցին, գերման զինուորական մարմինը կը մղէր թիւրքերը՝ այդ նպատակով վար դնել օտարական բնակիչները: Ճիշդ ինչպէս որ Գերմանները Պելճիքայի մէջ վար կը դնէին ոչ-պատերազմիկները, իբր երաշխաւորութիւն Պելճիքացիներու «բարեկամականութեան» [friendliness], եւ պելճիքացի կիները եւ տղայքը իրենց առաջա- ցող բանակներուն առջեւ կ'անցնէին, նոյնպէս թիւրքիայի մէջ, Գերմանները հիմա կը ծրագրէին ֆրանսական եւ անգլիական հպատակները իբր միջոց գործածել՝ դաշնակից նաւատորմիդին դէմ իրենց պաշտպանողական սխաբմին: Լաւ գիտէի որ՝ այս չարաշուք ազդեցութիւնը շարունակ կը գործադրուէր. հետեւա- բար, անհրաժեշտ էր որ՝ անմիջապէս պայքարէի անոր դէմ, եւ եթէ հնար էր, տապալէի զայն առաջին յարձակումով: Վճռեցի որ՝ Համաձայնութեան դիւանագէտներուն եւ հպատակներուն Պոլիսէն մեկնումը՝ օտար ժողովուրդները պաշտպանելու իմ ուժիս փորձաբարը պիտի ըլլար իրապէս: Եթէ մեկնիլ փափաքող բոլոր ծրանսացիները եւ Անգլիացիները կարենային թիւրքիայէն ապահով կերպով դուրս ելլել, կը հաւատայի թէ՛ այդ ցոյցը ճշտող ազդեցութիւն մը պիտի գործէր ո՛չ միայն Գերմաններուն, այլ նաեւ թիւրք պաշտօնական աշխարհին ստորակարգ անդամ- ներուն վրայ:

Բանակցութիւններու խզումին յաջորդ օրը, երկաթուղիի կայարանը հասնելուս պէս, տեսայ որ գործս դժուար պիտի ըլլար: Թիւրք իշխանութիւններուն հետ կարգադրած էի որ՝ երկու կա- ռախումքեր պատրաստ ըլլան. մէկը՝ որ պիտի մեկնէր ժամը 7ին, անգլիական եւ ֆրանսական հպատակներու համար եւ միւսը՝ որ 9ին պիտի մեկնէր, դիւանագէտներուն եւ անդամներուն հա- մար: Բայց կարգադրութիւնը չէր քալեր ծրագիրին համեմատ: Կայարանը լեցուած էր զրգռուած եւ հոգեվրդով ամբոխի կոհա- կաթաւալ զանգուած մը. ոստիկանութիւնը բոլոր ուժովը ամբոխը ետ կը մղէր. տեսարանը աննկարագրելի խառնակոյտ մը կը կազ- մէր զինուորներու, ոստիկան-զինուորներու, դիւանագէտներու, բռնեբու եւ թիւրք պաշտօնատարներու:

Հոն, ամէնէն ուշագրաւ դէմքերէն մէկն էր ոստիկանապետ Պէտրի պէյ, իրաւաբան քաղաքագէտ, որ նոր այդ ղիւրքին բարձ- րացուած էր եւ որ խորապէս կ'ըմբռնէր իր նոր պաշտօնին կա- րեւորութիւնը: Պէտրի Թալէալի մտերիմ բարեկամը եւ քաղա- քական ստորադասը ու իր ամէնէն արժէքաւոր գործիքներէն մէկն էր: Միութիւն եւ Առաջդիմութիւն Գօմիթէին մէջ բարձր դիրք ունէր եւ վերջերը Դահլիճին մէջ դիրք մը զբաւելու կը տենչար: Թերեւս իր տիրական գաղափարն էր՝ իր ատելութիւնը օտարներուն եւ օտար ազդեցութեան հանդէպ: Իր աչքին՝ թիւր- քիա տարամերժօրէն թիւրքերունն էր. կ'ատէր անոր ուրիշ բոլոր տարրերը եւ մասնաւորաբար կը բառնէր այն վերհսկողութեան դէմ՝ զոր օտար դեսպանութիւնները տարիներէ իվեր կիրարկած էին իր երկիրին ներքին գործերուն մէջ: Իրաւ ցնէ, թիւրքիայի մէջ քիչ մարդ կար՝ որոնց համար ֆախիթիւրախօններու վերջնական ջնջումը ա՛յնչափ կենսական խնդիր մը ըլլար: Բնականաբար, յաջորդ քանի մը ամիսներու ընթացքին, Պէտրին տեսնելու շատ առիթներ ունեցայ: Ան շարունակ ճամբաս կը կտրէր, զրեթէ չարամիտ հաճոյք մը զգալով միջամտելէն այն ամէն շարժումնե- րուն մէջ՝ զորս կը գործէի օտարներուն շահին համար: Իր ընթաց- քը կէս-զրգուիչ, կէս-զաւեշտական էր: Մենք շարունակ կը ջանա- յինք զիրար խաբել — ես նկրտելով պաշտպանել ծրանսացիները եւ Անգլիացիները, Պէտրի միշտ խոչընդոտ հանդիսանալով իմ ջանքերուս: Օտարներու համար պայքարը, իրապէս, վերածուեցաւ անձնական մենամարտի մը՝ Ոստիկանապետութեան եւ ամերիկե- ան Դեսպանութեան միջեւ: Պէտրի կարող, լաւ զարգացումի տէր եւ խիստ ճկուն էր ու նշանակելի կերպով չարաբնոյթ չէր, բայց կը սիրէր զուարճանալ անպաշտպան օտարի մը հետ: Բնա- կանաբար այդ իրիկունը իր զբաղումը հաճելի գտաւ:

— Ի՞նչ իրարանցում է աս, հարցուցի Պէտրիի:

— Մենք միտքերնիս փոխեցինք, ըսաւ. իր ձեւը կը ցուցնէր որ՝ փոփոխութիւնը անհաճոյ չէր իրեն: Դեսպանները եւ իրենց հետեւորդները տանող կառախումբին թոյլ չպիտի տանք որ մեկ- նի: Բայց որոշեցինք չարտօնել մեկնումը անպաշտօն օտարական- ներուն — այն կառախումբը՝ որ զանոնք պիտի տանէր՝ չպիտի մեկնի:

Սա ու պաշտօնէութիւնս շա՛տ աշխատած էինք թշնամի ազ- գութեան վերաբերողներու համար այդ ազատ անցքը ձեռք բերե- լու: Հիմա յայտնապէս կը տեսնուէր որ՝ որոշ ազդեցութիւն մը չէզոքացուցած էր մեր ջանքերը: Ծրագիրներու այս յանկարծակի փոփոխութիւնը ծայրայեղ շփոթութիւն եւ սարսափ առաջ կը

բերէր: Կայարանին մէջ երկու խումբ ճամբորդներ կային, որոնցմէ մէկը կրնար մեկնիլ, իսկ միւսը չէր կրնար: Անգլիական եւ ֆրանսական ղեսպանները չէին ուզեր իրենց ազգակիցները ետեւնին ձգել, իսկ վերջինները չէին ուզեր հաւատալ թէ՛ իրենց կառախումբը՝ որ թիւրք պաշտօնատարներու կողմէ վերջնապէս խոստացուած էր՝ չպիտի մեկնէր այդ իրիկունը, որեւէ պահու մը: Անմիջապէս գացի Էնվէրի, որ հաստատեց Պէտրիի հաւատումը: Թիւրքիա բազմաթիւ հպատակներ ունի եգիպտոսի մէջ, ըսաւ, որոնց կացութիւնը մեծ անձկութիւն կը պատճառէ: Ֆրանսական եւ անգլիական հպատակներուն մեկնելէն առաջ, պէտք է երաշխաւորութիւններ տրուին որ՝ թրքական հպատակներուն իրաւունքները պիտի պաշտպանուին այդ երկիրին մէջ: Դժուարութիւն չունեցայ այդ մանրամասնութիւնը կարգադրելու, որովհետեւ Սըր Լուի Մալէդ անհրաժեշտ երաշխաւորութիւնները տուաւ անմիջապէս: Սակայն, ատիկա չի հարթեց խնդիրը. իրապէս, ատիկա ուրիշ բան չէր, բայց եթէ պատրուակ մը: Պէտրի նորէն կը մերժէր թոյլ տալ որ կառախումբը մեկնի. կառախումբին մնալուն հրահանգը, կըսէր, չէր կրնար ջնջուիլ, որովհետեւ ընդհանուր ժամանակացոյցը կը խանգարուէր եւ կրնային արկածներ պատահիլ: Հասկցայ թէ՛ բոլոր ատոնք թրքական խոստատանքներ էին եւ զգացի թէ՛ հրահանգը եկած էր աւելի բարձր աղբիւրէ մը՝ բան Պէտրիէն. սակայն, այդ պահուն բան մը կարելի չէր ընել: Նաեւ, Պէտրի ո՛չ մէկը չէր ձգեր դիւանագէտներու կառախումբը մտնել, մինչեւ որ ես անձնապէս ինքնութիւնը չհաստատէի: Որով, պարտաւորուեցայ պզտիկ դուռի մը մէջ կենալ եւ քննել իւրաքանչիւր ներկայացող: Ամէն մարդ, դիւանագիտական մարմինին պատկանէր թէ ոչ՝ կը ջանար այդ նեղ անցքէն իրեն ճամբայ բանալ. պզտիկ սանդղաստիճանի մը վրայ՝ հինաւուրց Պրուքլինի Կամուրջի հրմշտկումի մը ականատես եղանք: Մարդիկ կը վազվզէին ամէն ուղղութիւնով, պայուսակ յարդարելով, տոմս գնելով, պաշտօնեաներու հետ վիճելով, միսթարելով վրդովուած կիներ եւ վախցած տղաքներ, մինչդեռ Պէտրի, անայլայլ եւ ինքնավատահ, հեզնական ժպիտով մը կը դիտէր ամբողջ հաւադիւստանը [pandemonium]: Գլխարկներ թռան, զգեստներ բզբտուեցան, եւ, խառնակութիւնը կատարեալ ըլլալու համար, անգլիական ղեսպան Մալէդ թիւրք պաշտօնեայի մը հետ վէճի բռնուեցաւ — շուտով յաղթանակը Անգլիացին շահեցաւ. նշարեցի ֆրանսական ղեսպան Պոնիփաուը՝ որ թիւրք ոստիկան մը կը ցնցէր ուժգնակի: Տիկին մը՝ իր մանկիկը բազուկներուս մէջ նետեց. ետքէն ուրիշ մը տղեկ մը յանձնեց ինձի. եւ աւելի ետքը, երբ

դուռը կեցած Թիւրքիայէն մեկնող հիւրերուն ինքնութիւնը կը ստուգէի, անգլիական Դեսպանատունի քարտուղարներէն մէկը՝ իր շունին պահապան ըրու զիս:

Այդ միջոցին, Սըր Լուի Մալէդ բարկաճայթ մերժեց մեկնիլ.

— Հո՛ս պիտի կենամ, ըսաւ, մինչեւ որ ամենավերջին անգլիական հպատակը մեկնի Թիւրքիայէն:

Բայց դիտել տուի իրեն թէ՛ ա՛լ Անգլիացիներուն պաշտպանը չէր ինք: Թէ ես՝ իբր ամերիկեան Դեսպան, ստանձնած էի այդ պատասխանատուութիւնը. եւ թէ՛ չէի կրնար ես ինքզինքս այդ հեղինակութեան տէր զգալ, եթէ ինք Պոլիս մնար:

Անշուշտ, ըսի, Թիւրքերը չպիտի ճանչնան զիս՝ իբր բրիտանական շահերու պաշտպանութիւնը ստանձնող, եթէ դուք հոս մնար:

Ատկէ գատ, թելադրեցի որ, ինք Տէտէ-Աղաճ մնայ քանի մը օր եւ սպասէ իր անգլիացի ընկերներուն ժամանումին: Սըր Լուի ակամայ ընդունեց տեսակէտս եւ շոգեկառք մտաւ: Մինչ կառախումբը մեկնեցաւ կայարանէն, վերջին ակնարկ մը ուղղեցի անգլիական Դեսպանին, որ նստած էր մասնաւոր «վակօն»ի մը մէջ, գրեթէ ամբողջովին թաղուած սնտուկներու, պայուսակներու, տուփերու եւ դիւանագիտական կաշեպարկերու խորը, պաշարուած իր ղեսպանական պաշտօնէութենէն, գուրգուրագին հրակուելով իր քարտուղարին շունին կողմէ:

Անպաշտօն օտարականները ժամերով մնացին կայարանին մէջ, յուսալով որ՝ վերջին պահուն պիտի արտօնուէին մեկնիլ: Սակայն, Պէտրի անողորբելի էր: Իրենց կացութիւնը գրեթէ յուսահատական էր: Անոնք Պոլիսի մէջ իրենց տունները լքած էին եւ հիմա ինքզինքնին իրականապէս բացը մնացած կը գտնէին: Ոմանք բարեկամներու կողմէ գիշերը տուն առնուեցան. ուրիշներ պանդոկներու մէջ ապաստան գտան: Բայց իրենց կացութիւնը ծայրայեղ մտատանջութիւն պատճառեց: Յայտնի էր որ, հակառակ բոլոր պաշտօնական խոստումներուն, Թիւրքիա որոշած էր այս օտարականները իբր պատանդ վար դնել: Մէկ կողմը՝ կային Էնվերը եւ Թալէադը, որոնք կ'ըսէին ինձի թէ՛ մտադիր էին պատերազմը վարել մարդկօրէն, եւ, միւս կողմը՝ կային իրենց ստորադասները՝ ինչպէս Պէտրի՝ որ անա՛նկ ձեւով մը կը վարուէր որ՝ կը չէզոքացնէր քաղաքակրթական այդ բոլոր յաւակնութիւնները: Իրողութիւնը ա՛ն էր որ՝ պաշտօնեաները ինքն իրենց մէջ կը պայքարէին՝ օտարներու հանդէպ ցուցուելիք ընթացքին մասին: Դերման ընդհանուր Սպայակոյտը կ'ըսէր Դահլիճին թէ՛ մեծ սխալ մը կը գործէին՝ իրենց թշնամի օտարականներուն հանդէպ որեւէ անյիշաւարութիւն ցուցնելով: Վերջա-

պէս յաջողեցայ անոնց համար կարգադրութիւններ ընել՝ որպէսզի յաջորդ օրը մեկնին: Պէտրին, շատ հաճոյակատար կերպով, այդ ցորեկէ-ետը անցուց Դեսպանատունին մէջ, անցագիրներ տեսագրելով [viséing]: Իրիկունը երկուքս մէկ կայարան գացինք եւ կառախումբը ապահով կերպով ճամբայ հանեցինք դէպի Տէտէ-Աղան: Կառախումբին մէջ գտնուող յիտուն կիներէ եւ տղաքներէ իւրաքանչիւրին մէկ-մէկ տուփ շաքարեղէն տուի — «Թրքական քաղցրաեփներ»: Անոնք ամէնքը մէկ՝ երջանիկ խումբ մը կը կազմէին եւ ջանք չէին ընել ծածկելու իրենց սիրտփանքը՝ Թիւրքիայէն մեկնելուն: Տէտէ-Աղանի մէջ, անոնք հանդիպեցան դիւանագիտական մարմինին եւ այն հաւաքոյթը որ տեղի ունեցաւ ինչպէս լսեցի ետքէն, չափազանց սրտառուչ էր: Ես հաճոյքը ունեցայ ստանալու իրենց երախտագիտական շատ մը արտայայտութիւնները, մասնաւորաբար նամակ մը, ստորագրուած հարիւրէ աւելի հոգիէ, որոնք իրենց շնորհակալութիւնները կը յայտնէին Տկն. Մօրկընթաուի, դեսպանական մարմինին եւ ինծի: Տակաւին ուրիշ շատեր կային, որոնք երթալ կ'ուզէին. յաջորդ օրը, անոնց համար Թալէադին գացի: Իր մէկ շատ հաճոյակատար տրամադրութեան մէջ գտայ զինքը: Դահլիճը, ըսաւ, խնամքով նկատի առաւ Թիւրքիայի անգլիացի եւ ֆրանսացի բնակիչներուն խնդիրը, եւ իմ պատճառաբանութիւններս, աւելցուց, մեծ ազդեցութիւն գործեցին անոր վրայ: Այն պաշտօնական որոշումին յանգած էին թէ՛ թշնամի օտարականները կրնային մեկնիլ կամ մնալ, ինչպէս որ նախընտրէին: Համախմբիչ կեդրոնավայրեր գոյութիւն չափտի ունենային. քաղաքային անձեր կրնային խաղաղօրէն իրենց գործը շարունակել, եւ, որչափ ատեն որ ինքզինքնին լաւ կառավարէին՝ զիրենք նեղող չափտի ըլլար:

—Օտարականներու հանդէպ մեր վարմունքով կ'ուզենք ցուցնել որ՝ բարբարոսներու ցեղ մը չենք մենք, ըսաւ Թալէադ:

Այս խոստումին փոխարէն ինձմէ շնորհ մը խնդրեց.—ջանադիր ըլլալ որ՝ եւրոպական եւ ամերիկեան մամուլին «մէջ Թիւրքիա ներքուրի այս որոշումին համար:

Դեսպանատուն դարձիս, անմիջապէս կանչեցի Associated Pressի թղթակից Մր. Թիրըն Տէմընը, Berliner Tageblattի թղթակից Տքթ. Լիարըրը եւ Փարիզի Heraldի ներկայացուցիչը՝ Տքթ. Զէնտլըրը, որոնց ինքր՝վիռներ տուի, գովելով Թիւրքիայի ընթացքը՝ օտարականներու հանդէպ: Նաեւ լուրը հեռագրեցի Ուաշինկթըն, Լոնտոն, Փարիզ եւ մեր բոլոր հիւպատոսներուն:

Հազիւ լրագրողներուն հետ գործս աւարտած էի, երբ նորէն վրդովիչ լուրեր ստացայ: Այդ իրիկուան համար ուրիշ կառա-

խումբ մը կարգադրած էի, բայց հիմա կը տեղեկանայի թէ՛ Թիւրքերը կը մերժէին տեսագրել անցագիրները անոնց՝ որոնց մեկնումը ապահոված էի: Այս լուրը, որ կը յաջորդէր Թալէադի բացայայտ խոստումին, բնականաբար վրդովիչ էր: Անմիջապէս ճամբայ ելայ դէպի երկաթուղիի կայարանը եւ այն տեսարանը զոր հոն տեսայ, զայրոյթս սաստկացուց ներքին գործերու նախարարին դէմ: Խելայեղ բազմութիւն մը լեցուած էր շրջակայքը. կիները կու յային, տղաքը կը ճչէին, մինչդեռ թիւրք զինուորներու խումբ մը, որուն հրամանատարն էր մանտրտիկ տխմար հազարապետ մը, հրացաններու կոթերով կայարանէն դուրս կը բշէր ամէնքը: Պէտրի, ինչպէս միշտ, հոն էր, եւ, ինչպէս միշտ, յայտնապէս հաճոյք կը զգար այդ խառնակութիւնէն: Ճամբորդներէ ոմանք, ըսաւ ինծի, վճարած չէին իրենց պետական տուրքը, եւ, այդ պատճառով, անոնց թոյլ չափտի տրուէր մեկնիլ: Ծանուցի թէ՛ ես անձնապէս պատասխանատու էի այդ վճարումին համար:

—Պրն. Դեսպալն, ձեզի հետ գլուխ չեմ կրնար ելլել, չէ՞, ըսաւ Պէտրի, ժպտելով: Ասկէ՛ մննք ամէնքս եզրակացուցինք թէ՛ առաջարկս հարթած էր խնդիրը եւ կառախումբը ժամանակացոյցին համեմատ պիտի մեկնէր: Բայց յանկարծ, ուրիշ հրահանգ մը եկաւ, որ մեկնումը կը ջնջէր:

Որովհետեւ շատ չէր ընել որ Թալէադէն խոստում առած էի, որոշեցի այդ պաշտօնատարը գտնել եւ տեղեկանայ թէ՛ ինչ կը նշանակէին այդ բոլորը: Նեստեցայ ինքնաշարժին մէջ եւ Բ. Դուռ գացի, որ իր կեդրոնն էր ընդհանրապէս: Հոն ո՛չ մէկը չգտնելով, միքենավարին ազդարարեցի ուղղակի Թալէադի տունը բշել: Շատ չէր ընել որ այցելած էի Էնվէրին, իր ընտանեկան շրջանակին մէջ. այս առիթը ինծի պատահութիւնը տուաւ՝ իր կենցաղը բաղադատել իր աւելի հզօր ընկերակիցին կեանքին հետ: Հակադրութիւնը այքառու էր: Էնվէրը գտած էի պերճանքէ շրջապատուած կեանքով, քաղաքին ամէնէն ազնուապետական թաղերէն մէկուն մէջ, մինչդեռ հիմա կը տարուէի քաղաքին սղքատագոյն մէկ մասը: Հասանք նեղ փողոց մը, եզերուած կոշտ եւ աններկ փայտէ տուներով. միայն մէկ բան կը գատորշէր այս փողոցը՝ Պոլիսի բոլոր միւս փողոցներէն եւ գաղափարը կը ներշնչէր թէ՛ անիկա բնակավայրն էր թիւրք Կայսրութեան ամէնէն հզօր անձին: Փողոցին իւրաքանչիւր ծայրը կը կենար ոստիկան մը, որ ոչ մէկուն անցքը չէր արտօներ, եթէ ան հոն մտնելու գոհացուցիչ պատճառ մը չկարենար ներկայացնել: Մեր ինքնաշարժը, ինչպէս բոլոր ուրիշները, կեցաւ: Բայց անմի-

զապէս արտօնուեցանք անցնիլ, երբ բացատրեցինք թէ ով ենք: Հակադրութիւնը ըլլալով էնվէրի պալատին, որ անթիւ սենեակներ եւ պերճաշուք կահ-կարասի ունէր, Թալէադին տունը հին, խեղճուկ, փայտէ եռայարկ շէնք մըն էր: Այս բոլորը, ինչպէս ետքէն տեղեկացայ, մաս կը կազմէր այն քաղաքականութեան՝ զոր Թալէադ գծած էր իր ասպարէզին համար: Շատ մը ամերիկացի քաղաքագէտներու պէս, իբր «ժողովուրդի» մարդ, իր դիրքը քաղաքական կարեւոր պահանջք մը կը նկատէր, եւ զիտէր թէ՛ հոխութեան եւ ցուցամուտութեան յանկարծական ցուցադրում մը՝ պիտի տկարացնէր իր ազդեցութիւնը Միութիւն եւ Առաջդիմութիւն Գօմիթէին մէջ, որուն անդամներէն շատերը, իրեն պէս, կեանքի խոնարհ խաւերէ բարձրացած էին: Տունին ներքին յարդարանքը կը համապատասխանէր արտաքինին: Արեւելեան շքեղանքի յաւակնութիւնները չի կային հոն: Կահաւորումը աժան էր. քանի մը կոշտ նկարներ կախուած էին պատերէն. եւ մէկերկու հնամաշ կապերտներ փռուած էին տախտակամածին վրայ: Սենեակին մէկ կողմը կար փայտէ սեղան մը, որուն վրայ կը հանգէր հեռագրի գործիք մը, ատենով Թալէադի ապրուստ շահելու միջոցը եւ հիմա այն միջոցը՝ որով կը հաղորդակցէր իր ընկերներուն հետ: Թիւրքիայի ներկայ խառնակուած պայմաններուն մէջ, Թալէադ երբեմն կը նախընտրէր իր հեռագիրը ինք զարնել!

Այս միջավայրին մէջ, քանի մը վայրկեան սպասեցի Թիւրքիայի մեծ «գործապետ»ին մուտքին: Պատեհ պահուն, սենեակին միւս ծայրէն դուռ մը բացուեցաւ, եւ հսկայ, դանդաղաշարժ, զուարթամեծանչ դէմք մը ներս մտաւ: Չարմացայ այն հակադրութեան, որ այս Թալէադը կը ներկայացնէր այն Թալէադին հետ, որ այնչափ ընտանի դէմք մը դարձած էր ինձի Բ. Դուռին մէջ: Այլ եւրոպական զգեստներով եւ եւրոպական նուրբ շարժուձեւերով դուռագուած Թալէադը չէր. մարդը՝ զոր հիմա կը տեսնէի՝ ճիշդ պուկար գնչուի մը կը նմանէր: Թալէադ թրքական սովորական կարմիր փաթ կը կրէր. իր զանգուածեղ մարմինին վրայ հագած էր գորշագոյն թանձր րայտասն. եւ այս միացումէն կը ցայտէր կտր ժպտուն դէմք մը: Իր վարուելու կերպը կէս-հաճոյական եւ կէս-աղերսարկու էր. Թալէադ լաւ կը հասկնար թէ ի՞նչ ստիպողական գործ էր որ՝ զիս մղած էր իր ընտանեկան առանձնարանը արշաւելու. իր ընթացքը հիմա կը նմանէր վարժարանի մէջ չար տղու մը անզիզ վարմունքին: Եկաւ նստաւ բարեհամբոյր ժպիտով մը եւ սկսաւ չքմեղանալ: Դուռը մեղմովին բացուեցաւ կրկին եւ վարանտ աղջնակ մը թափանցեց սենեակ,

բերելով սիկաոքներու եւ սուրճի ափսէ մը: Այդ պահուն, նշմարեցի որ՝ դեռատի կին մը, որ քսանըհինգ տարեկանի չափ կ'երեւար, տղեկին ետեւը կը կենար, մշտելով որպէսզի մտնէ: Ատոնք Թալէադի կինը եւ որդեգիր աղջկին էին. արդէն զիտէի թէ՛ թէեւ թիւրք կիները երբեք ընկերութեան մէջ չեն մտներ եւ իբր տանտիրուհի չեն վարուիր, բայց անոնք չափազանց հետաքրքիր են իրենց ամուսիններուն հիւրերուն մասին եւ կը սիրեն զաղտազողի ակնարկներ ուղղել անոնց: Յայտնի էր որ՝ Տկն. Թալէադ գոհացած չէր առաջին առիթով իր նախնական զննութենէն, որովհետեւ, քանի մը վայրկեան ետքը, երեւցաւ ճիշդ իմ դէմս գտնուող բայց իր ամուսինին — որուն դէմքը հակառակ ուղղութեան դարձած էր — կողմէ կատարելապէս չտեսնուող պատուհանի մը մէջ եւ հոն բազմաթիւ վայրկեաններ անվրդով եւ ուշադիր մնաց: Տունը գտնուելուն համար՝ քողածածկուած չէր. գեղանի եւ ուշիմ էր դէմքը. եւ որոշապէս յայտնի էր որ՝ հաճոյք կը զգար ամերիկեան Դեսպան մը այդչափ մօտէն դիտելէն:

— Է՛, Թալէադ, ըսի, զգալով որ՝ բաց խօսելու ատենը ալ եկած էր, չէ՞ք ըմբռներ թէ՛ ո՛րչափ յիմարօրէն կը գործէք: Քանի մը ժամ առաջ ինձի ըսիք թէ՛ որոշած էք Ֆրանսացիներուն եւ Անգլիացիներուն հետ ազնուօրէն վարուիլ եւ ինձմէ խնդրեցիք՝ այդ լուրը հրատարակել ամերիկեան եւ օտար մամուլին մէջ: Ես անմիջապէս կանչեցի լրագրողները եւ յայտնեցի անոնց թէ՛ ո՛րչափ լաւ էր ընթացքնիդ. եւ աս՝ ձեր խնդրանքին վրայ! Վաղը ամբողջ աշխարհ պիտի կարդայ ատիկա: Մինչդեռ, դուք կրցածնիդ կ'ընէք՝ ձեր շահուն համար գործած ջանքերուս հակադրելու. ահա ազնիւ ըլլալու ձեր առաջին խոստումը՝ ժխտեցիք: Ինձի տուած ձեր խոստումները պահելու միտք ունի՞ք: Անխախտ պիտի մնա՞ք անոնց վրայ. կամ շարունակ միտք փոխել կ'առաջադրէք: Արդ, կատարեալ հասկացողութեան մը գանք: Այն բանը՝ որուն համար մենք Ամերիկացիներս կը հպարտանանք, մեր խօսքը պահելն է: Մենք խօսքերնիս կը պահենք՝ թէ՛ անհատապէս եւ թէ՛ ազգովին: Մենք կը մերժենք իբր մեր աստիճանակիցները վարուիլ այն մարդոց հետ՝ որոնք խօսքերնին չեն պահեր: Այլ հիմա կրնաք հասկնալ թէ՛ մենք իրարու հետ գործ չենք կրնար ունենալ. ուրիշ բան՝ եթէ ձեր խոստումներուն համար ապահովցնէք զիս:

— Յանցանքը իմս չէ, պատասխանեց Թալէադ: Այդ կառախումբը կեցնելուն յանցանքը Գերմաններունն է: Գերման Սպա-յակոյտին պետը նոր վերադարձած է եւ մեծ աղմուկ կը յարուցանէ, ըսելով թէ՛ մենք շատ թոյլատու ենք Ֆրանսացիներուն եւ

Անզլիացիներուն եւ թէ՛ մենք պէտք չէ թոյլ տանք որ անոնք մեկնին: Կ'ըսէ թէ՛ մենք պէտք է զանոնք իբր պատանդ վար դնենք: Իր միջամտութիւնովն է որ եղաւ ադ:

Նիշոյ ատկէ՛ է որ կասկածած էի: Թալէադ ինծի խոստում տուած էր. յետոյ, Գերման Սպայակոյտին պետը՝ Պրոնսարդ, անոր հրահանգը՝ գործնականապէս ետ առած էր: Թալէադի վկայութիւնը՝ ինծի տուաւ այն համարձակախօսութիւնը՝ զոր կ'ըրծայի: Ատկէ ետքը, Թալէադի հետ իմ յարաբերութիւններս ա՛յնչափ բարեկամական դարձած էին որ՝ կրնայի իրեն հետ է՛ն ծայրայեղ անկեղծութիւնով խօսիլ:

— Թալէադ, ըսի, օտարականներու հետ ձեր յարաբերութիւններուն մէջ՝ դուք խորհրդատուի մը պէտք ունիք: Դուք պէտք է որոշէք թէ՛ զի՞նչ կ'ուզէք, թէ՛ գերման Սպայակոյտը: Չէ՞ք կարծեր որ՝ սխալ մը պիտի գործէք, եթէ ամբողջովին անձնատուր ըլլաք Գերմաններուն: Կրնայ զալ ատենը՝ երբ դուք ինծի պէտք ունենաք՝ անոնց դէմ:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք ատով, հարցուց, մեծ հետաքրքրութիւնով իմ պատասխանիս սպասելով:

— Գերմանները վստահօրէն ձեզի պարտաւորեն գործել շատ մը բաներ՝ զորս դուք չէք ուզեր կատարել: Եթէ՛ դուք կրնաք անոնց ըսել թէ՛ ամերիկեան Դեսպանը կ'ընդդիմանայ, իմ աջակցութիւնս կրնայ օգտակար ըլլալ ձեզի: Ասկէ՛ զատ, յայտնի է որ՝ դուք ամէնքդ բանի մը ամսուան մէջ հաշտութեան կնրումը կակնակալէք: Դուք գիտէք թէ՛ գերմանները իրապէս Թիւրքիան չեն հոգար. եւ վստահօրէն դաշնակիցներէն ոչ մէկ օժանդակութիւն չէք կրնար ակնկալել: Աշխարհի մէջ միակ ազգ մը կայ՝ զոր կրնաք անշահախնդիր բարեկամ նկատել. — Միաց.-Դահանգները:

Այս իրողութիւնը ա՛յնչափ ակներեւ էր որ՝ պէտք չունէի ուրիշ մանրամասնութիւններով պաշտպանելու: Սակայն, դեռ ուրիշ փաստ մը ունէի, որ աւելի արժէքաւոր էր: Արդէն, պատերազմական նախարարութեան եւ քաղաքային իշխանութեան միջեւ պայքարը սկսած էր: Գիտէի թէ՛ Թալէադ, թէ՛ եւ ներքին գործերու նախարար եւ քաղաքային անձ, որոշած էր իր իշխանութեանէն ո՛չ մէկ բան չի զոհել էնվէրի, Գերմաններուն եւ զինուորական ներկայացուցիչներուն:

— Եթէ՛ դուք թոյլ տաք Գերմանացիներուն որ՝ այսօր այս կէտին մէջ յաղթանակն, ըսի, դուք անոնց իշխանութեանը տակ կ'իյնաք գործնականապէս: Ներկային դժուր էք որ՝ կը վարէք գործերը. բայց դուք քաղաքային անձ մըն էք: Դուք թոյլ պիտի տա՞ք որ զինուորականութիւնը, որուն ներկայացուցիչներն են

էնվէր եւ գերման Սպայակոյտը, ձեր հրահանգները վերահսկեն: Յայտնի է որ՝ այսօր պատահածը ա՛դ է: Եթէ՛ ատոր համակերպիք, պիտի տեսնէք որ՝ անոնք զործը ետքէն աւելի առաջ պիտի տանին: Գերմանները այս երկիրը զինուորական օրէնքի պիտի ենթարկեն. այն ատեն ի՞նչ պիտի ընէք դժուր՝ քաղաքայիններդ:

Տեսայ որ պաշտպանողականս իր արդիւնքը ունեցած էր Թալէադի վրայ: Քանի մը վայրկեան լուռ մնաց, անշուշտ կշռադատելով դիտողութիւններս: Յետոյ հաստատ որոշումով, ըսաւ.

— Ձեզի պիտի օգնեմ:

Մօտեցաւ իր սեղանին եւ սկսաւ գործել իր հեռագրական գործիքին վրայ: Երբեք չպիտի մոռնամ այդ պատկերը. այդ հսկայ Թիւրքը, նստած իր գորշ բախտասով եւ կարմիր ֆեսով, ճարտարօրէն կը գործէր իր սեփական հեռագրական բանալիովը, մինչ իր դեռատի կինը պզտիկ պատուհանէ մը զինքը կը դիտէր եւ մայրամուտ արեւին վերջին ճաճանչները կ'ողողէին սենեակը: Յայտնի էր թէ՛ Թիւրքիայի տէրը կնճիւններ կ'ունենար, եւ, մինչ վիճաբանութիւնը կը շարունակուէր հեռագիրին վրայ, Թալէադ յարածուն գրգռութիւնով մը կը զարնէր իր բուխիին: Ինծի ըսաւ թէ՛ կայարանը սոնքացող հագարապետը կը պնդէր որ՝ էնվէրէն գրաւոր հրահանգներ կ'ուզէ, — բանի որ, թելով հեռագիրները կրնային դիւրին կերպով կեղծուիլ: Թալէադ բաւական ժամանակի պէտք ունեցաւ գտնելու համար էնվէրը եւ ատկէ՛ ետքը վէճը կրկին վերսկսաւ: Հեռագրական լուր մը՝ զոր Թալէադ այդ պահուն ստացաւ, գրեթէ փճացուց իմ դատս: Իր գործիքը երկար ատեն թափահարելէ ետքը, որուն միջոցին Թալէադի դէմքը կորսնցուց իր զուարթութիւնը եւ գրեթէ՛ վայրագ եղաւ, ան ինծի դարձաւ եւ ըսաւ.

— Անզլիացիները այս առտու Տարտանէլը ումբակոծած եւ երկու Թիւրք սպաննած են:

Եւ յետոյ աւելցուց.

— Սպաննուած իւրաքանչիւր իսլամի փոխարէն՝ երեք Քրիստոնեայ պիտի մնուցնենք մենք:

Վայրկեան մը խորհեցայ թէ՛ ամէն բան կորսուած էր: Թալէադի դէմքը մէկ յուզում միայն կը ցոլացնէր — ատելութիւն Անզլիացիներու հանդէպ: Յետոյ կարդալով Քրօմբրի տեղեկագիրը Տարտանէլի վրայ, տեսայ թէ՛ Բրիտանական Յանձնախումբը այս կանխահաս յարձակումը սխալ մը կ'որակէր, բանի որ ան կանխահասօրէն Թիւրքերուն կը ծանուցանէր իրենց ծրագիրները: Կրնամ վկայել թէ՛ ատիկա ուրիշ պատճառով մըն ալ սխալ մըն էր, որովհետեւ հիմա վստահ եմ թէ՛ այդ բանի մը անխմաստ

Թնդանօթածգութիւնները գրեթէ քանդեցին՝ օտարականները Թիւրքիայէն դուրս հանելու իմ ծրագիրս : Թալէադ կատողած էր եւ ես պէտք էի շահուած հողը կրկին մշակել . բայց վերջապէս յաջողեցայ անգամ մըն ալ խաղաղեցնել զինքը : Նշմարեցի որ՝ ան կը տատանէր Անգլիացիները պատուհասելու իր փափաքին եւ էնվէրի ու Գերմանացիներուն վրայ իր հեղինակութիւնը հաստատելու բաղձանքին միջեւ : Բարեբաղդաբար վերջին զգացումը շահեցաւ գերակշռութիւնը : Ամէն պարագայի մէջ , որոշած էր ցուցնել թէ ինք «գործապետ» մըն էր :

Երկու ժամէ աւելի հոն մնացինք մենք, որովհետեւ իմ ակամայ հիւրընկալս ատեն-ատեն հեռագիրին գլուխը կ'անցնէր, ինծի հաղորդելու համար քաղաքական վերջին զեկոյցները . ինծի ըսաւ թէ՛ ելեւմտական նախարար ձապիտ հրաժարած էր , բայց խոստացած էր իրենց համար աշխատիլ տունէն : Եպարքոսը, հակառակ իր սպառնալիքներուն, համոզուած էր պաշտօնի վրայ մնալ : Ներքին գաւառները գտնուող օտարականներու նեղութիւն չափտի տրուէր , եթէ Պէրութ , Ալեքսանտրէդ կամ ուրիշ չամբացուած նաւահանգիստներ չուբակոծուէին . բայց, եթէ այդ տեսակ յարձակումներ գործուէին, Տրանսացիներու եւ Անգլիացիներու վրայ ճնշողական միջոցներ պիտի բանեցուէին : Թալէադի խօսակցութիւնը կը ցուցնէր թէ՛ Գերմանացիներուն համար մասնաւոր սէր մը չունէր : Անոնք գոռոզ եւ ժպիրհ են, ըսաւ, եւ շարունակ կը միջամտեն զինուորական խնդիրներու եւ Թիւրքերու հետ կը վարուին արհամարհանքով :

Վերջապէս , կառախումբի խնդիրը կարգադրուեցաւ : Այս տեսակցութեան մէջ , Թալէադ երեւան բերաւ զանազան տրամադրութիւններ . փոփոխակի՝ եղաւ խոժոռ, բարեհամբոյր, վայրագ եւ հանոյակատար : Թիւրք նկարագիրին մէջ փուլ մը կայ , զոր Արեւմուտքցիները չեն հասկնար եւ ատիկա զուարթախոհութեան [humour] բուռն զգացումն է : Ինքն իսկ Թալէադ մեծապէս կը սիրէր սրախօսութիւնը կամ հնարամիտ պատմութիւնը : Հիմա որ մեր բարեկամական յարաբերութիւնները վերահաստատած եւ իր խոստումը փրկահատուցած էր, Թալէադ նորէն կատակաբան դարձաւ :

— Հիմա ձեր մարդիկը կրնան երթալ , ըսաւ ժպտելով : Ձեր քաղցրաւենիները գնելու ատեն է, Պրն. Դեսպան :

Անշուշտ այս վերջին խօսքը ակնարկութիւն մըն էր այն պզտիկ նուէրին՝ զոր նախորդ գիշեր ըրած էի կիներուն եւ տղոց : Անմիջապէս վերադարձայ կայարան, ուր անմխիթար ուղեւորները նստած էին չորս կողմը, սպասելով նպաստաւոր լուրի մը : Երբ

իրենց յայտնեցի թէ՛ այդ իրիկուն կառախումբը պիտի մեկնէր , իրենց շնորհակալութիւնովը եւ երախտագիտութիւնովը ողողեցին զիս :

ԳԻՐՔԻՆ ՄԷՋ ՅԻՇՈՒՈՂ ԴԵՄՔԵՐ

ՊԱՌՈՆ ՏՕՆ ՎԱՆԿԷՆԸԱՅՄ, ԹԻՒՐՔԻԱՅԻ ԳԵՐՄԱՆ ԴԵՄՊԱՆ

Քայգերին կողմէ անձնապէս ընտրուած եր ան՝ Թիւրքիան Գերմանիայի մերձեցնելու համար եւ այդ երկիրը Գերմանիայի զինակից դարձնելու՝ մօտալուս սլաքեագլխին մէջ — դեր՝ որուն մէջ յաջողեցաւ : Վանկէնհայմ զերման դիւանագիտութիւնը կը ներկայացնէր , իր ամենէն անագորոյն եւ ամենէն անպակաս ձեւին մէջ : Ան Պիզմարքի հետ կը հաւասար որ՝ հայրենասէր Գերմանացի մը պէտք է պատրաստ ըլլայ Քայգերին եւ Հայրենիքին համար զոհելու ո՛չ միայն իր կեանքը, այլ նաեւ իր պատիւը : Ան զարմանալի խեղճով Գերմանիայի գործիհները դարձուց այն յուսահատ արկածախնդիրները, որոնք 1914ին Թիւրքիան կը վարէին :

Պ Ո Ւ Ս Թ Ա Ն Ի

Թիւրք Դանիինին մէջ նախկին առեւտրական եւ երկրագործական նախարար : 1914 Յունվարին, Մր. Մօրկընքաուի դիմեց, ամերիկեան աջակցութիւն խնդրելով . Թիւրքիան սնտեսապէս վերականգնելու համար :

Այս գիրքին մէջ, Դուխներու ատարած տեղը, օպագրական գեղեցկագիտութեան պահանջով բաց ձգուած ըլլալէն՝ ընթերցողներէ ոմանք պիտի մեկնութիւններ ունեցած են : Կը փութալիք մընի քե՛զ ցրտնակական կամ քարզանակական յայտնուումներ չեն այդ պատկաները, որոնց նման գրուիսի ատարներուն մէջ, ասիկ ետքը, պիտի գտնուիք՝ հեղինակին կողմէ իր լրացուցիչ ծանօթագրութիւն գիրքին կցուած եւ միւրեւն մէջ յիշուող Դեմիտրու կենսագրական հակիրճ ուրուագիծները, հարազատօրէն ընագիրէն քարզանուած, ինչպէս որ արդէն մեր ներկայ հայերէն քարզանագրութիւնն այ՛ Մօրկընքաուի անգլիերէն ընագիրէն, կը կատարուի ամբողջական կերպով, առանց ո՛րեւէ յայտաւումի :

Մանօք. Թարգմանիչիք

ԺԳ. ԳԼՈՒԽ

«ՆՕՅՐԸ ՏԱՍ ՏԸ ՍԻՕՆ,,Ի ՎՐԱՅ ԱՐՇԱԽԱՆՔ

Թայէադի յայտնութիւնը թէ՛ գերման Սպայակոյտի պիտ Պոսնասարդ կառախուսքը կեցուցած էր իրապէս . արժէքաւոր տեղեկատուութիւն մըն էր : Որոշեցի խնդիրը աւելի ուսումնասիրել , եւ , այդ նպատակով , յաջորդ օրը գացի Վանկէնհայմի : Ըսի թէ՛ թիւրք իշխանութիւնները հանդիսաւորապէս խոստացած էին իրենց թշնամիներուն հետ ազնուօրէն վարուիլ , հետեւաբար գերման ընդհ. Սպայակոյտին կողմէ խնդիրին շուրջը կատարուած ո՛րեւէ միջամտութեան չէի կրնար հանդուրժել : Վանկէնհայմ յաճախակի յայտնած էր ինծի թէ՛ Գերմանները նախագահ Ուիլսընը կը նկատէին ապագայ հաշտարարը , եւ հետեւաբար , Վանկէնհայմի գործածեցի այն նոյն փաստը՝ որով խօսեր էի Թայէադի : Այս տեսակ ընթացքներ օգտակար չպիտի ըլլային իր երկիրին՝ երբ վերջնական կարգադրութեան օրը հասնէր ! Տարօրինակ կացութեան մը դէմ ենք , ըսի . — մէկ կողմը՝ բարբարոս կոչուած ազգ մը կայ , ինչպէս Թիւրքիա , որ կը փորձէ քաղաքակիրթ ձեւով պատերազմ մղել եւ քրիստոնեայ թշնամիներու հետ ազնուութիւնով եւ բարութիւնով վարուիլ , եւ . միւս կողմը , կարծեցեալ մշակուած եւ քրիստոնեայ ազգ մը , ինչպէս Գերմանիա , որ կը ջանայ զանոնք համոզել բարբարոսութեան դաւնալու . «Ի՞նչ տեսակ տպաւորութիւն մը կը կարծէք որ պիտի գործէ աս՝ ամերիկեան ժողովուրդին վրայ» , հարցուցի : Պատրաստակամութիւն յայտնեց ինծի աջակցելու եւ իբր իմ կողմէ փոխարինութիւն այդ աջակցութեան , առաջարկեց որ ջանամ համոզել Միաց.-Նահանգները՝ պահանջելով Գերմանիայի հետ ազատ վաճառականութիւն , այնպէս որ իր երկիրը կարենար մեծաքանակ պրիւնձ , ցորեն եւ բամպակ ստանալ : Ասիկա նիւթ մըն էր , որուն շարունակ կ'անդրադառնար Վանկէնհայմ , ինչպէս որ պիտի պատմեմ :

Հակառակ Վանկէնհայմի խոստումին , գերման Դեսպանատունին կողմէ որեւէ աջակցութիւն չի գտայ՝ օտար բնակիչները Թրքական յոռի վարմունքին դէմ պաշտպանելու : Խորհեցայ թէ , իմ կրօնքիս հետոյ տիրով , զանազան շրջանակներու մէջ կրնար գոյութիւն ունենալ սա զգացումը որ՝ այդ քրիստոնեայ ժողովուրդներու եւ կրօնական հաստատութեաններու — հիւանդա-

նոցներ , վարժարաններ , մենաստաններ եւ վանքեր — նպաստին չէի գործածեր իմ ամբողջ կորույս եւ բնականաբար հետեւցուցի թէ՛ Թիւրքերու վրայ իմ ազդեցութիւնս պիտի զօրանար , եթէ կարենայի իմ ամէնէն զօրաւոր քրիստոնեայ պաշտօնակիցներու օժանդակութիւնը վայելել : Այս խնդիրին շուրջը երկար խորհրդակցութիւն մը ունեցայ Փալլավիչինիի հետ , ինքն ալ կաթոլիկ մը . եւ ներկայացուցիւր կաթոլիկ մեծագոյն տէրութեան : Փալլավիչինի անկեղծօրէն յայտարարեց ինծի թէ՛ Վանկէնհայմ Թիւրքերուն դժգոհութիւն պատճառող որեւէ բան չպիտի ընէր : Այդ ատեն մշտական վախ մը կար որ՝ Անգլիացիները եւ Յրանսացիները Տարտանէլի վրայ պիտի յարձակէին , Պոլիսը պիտի գրաւէին եւ զայն Ռուսիայի պիտի յանձնէին , եւ միայն Թրքական ուժերն էին որ , ըսաւ Փալլավիչինի , կրնային արգելել այդ տեսակ աղէտ մը : Հետեւաբար Գերմանները կը հաւատային թէ՛ իրենք թիւրք կառավարութեան բարիկամեցողութեանը ենթակայ էին եւ զանոնք թշնամացնելու բան մը չպիտի ընէին : Փալլավիչինի յայտնապէս կը փափաքէր հաւատացնել ինծի թէ՛ Վանկէնհայմ եւ ինք՝ կ'ուզէին ինծի աջակցիլ : Սակայն այդ պաշտպանողականը անկեղծ չէր , որովհետեւ միշտ կը հաւատայի թէ , եթէ Գերմանները շարունակ միջամտութիւն չի գործէին , Թիւրքիա ազնուօրէն պիտի շարժէր : Եզրակացուցի թէ՛ չար ոգին թիւրք կառավարութիւնը չէր , այլ գերման Սպայակոյտի պետը՝ Փոն Պոսնասարդ : Այն իրողութիւնը թէ՛ թիւրք Դահլիճին անդամներէն ոմանք , որոնք եւրոպական եւ քրիստոնեայ մշակոյթ ունէին — Պուսթանիի եւ Ոսկանի պէս մարդիկ — հրաժարած էին՝ իբր բողոք՝ Թիւրքիայի պատերազմի մէջ մտնելու գործողութեանը դէմ , օտարականներու կացութիւնը աւելի վտանգաւոր դարձուց : Ասկէ զատ , հեղինակութեան մեծ պայքար ալ կար . այսօր որդեգրուած քաղաքականութիւն մը , յաջորդ օրը կը շրջէր , որուն արդիւնքը ան կ'ըլլար որ՝ երբեք չէինք գիտնար ո՛րը գտնուելնիս : Օրինակի համար , կառավարութեան ինծի տուած խոստումը թէ՛ օտարներուն հետ գէշ չպիտի վարուուէր , որեւէ կերպով չկարգադրեց խնդիրը , որովհետեւ ստորադաս պաշտօնեայ մը , ինչպէս Պէտրի , կրնար միշտ հրահանգներուն անաստելու չբնեղանք մը գտնել : Հետեւաբար , այն տեսակ կացութիւն մը կար , որ անդուլ արթնութիւն կը պահանջէր : Ես ոչ միայն պէտք էի հաւատարմներ առնել Թայէադի եւ Էնվէրի պէս մարդոցմէ , այլ նաեւ պէտք էի անձնապէս հսկել թէ՛ այդ հաւատարմները կը գործադրուէին :

Նոյնմբերի առտու մը , ժամը չորսին արթնցայ : Երազէ կը

սթափէի, կամ «նախագագում» մը ունեցած էի թէ Սիօնի Քոյրերուն գործը գէշ էր. Յրանսայի միանձնուհիներու միութիւն մըն է ադ, որ տարիներէ ի վեր աղջիկներու վարժարան մը կը վարէ Պոլիսի մէջ: Յրանսական Դեսպանին կինը՝ Տկն. Պօսփառ եւ Ֆրանսական գաղութէն ուրիշ կիներ մեզմէ մասնաւորաբար խնդրած էին որ՝ ուշադիր աչքով հսկենք այդ հաստատութիւնը: Շատ յաջողապէս կազմակերպուած վարժարան մըն էր ադ. ամէն ազգութիւններու լաւագոյն ընտանիքներուն շատ մը աղջիկները հոն կը յաճախէին, եւ երբ խմբուէին այս աղջիկները, որոնցմէ քրիստոնեաները արծաթ խայեր կը կրէին, եւ ոչ-քրիստոնեաները արծաթ աստղեր, եզականօրէն գեղեցիկ եւ տպաւորիչ տեսարան մը կը պարզէին: Բնականաբար, կոպիտ թիւրքերու այդ տեսակ մենաստանի մը մէջ թափանցումին գաղափարը բաւական էր՝ խելքը գլուխը եղող ո՛րեւէ մարդու զայրոյթը յարուցանելու: Թէեւ բացի վրդովիչ զգացումէ մը ստոյգ ոչինչ չգիտնայինք, բայց Տկն. Մօրկընթաու եւ ես որոշեցինք նախաճաշէն անմիջապէս ետքը հոն երթալ: Երբ շէնքին մօտեցանք, մասնաւորապէս կասկածելի ոչինչ չի նշմարեցինք. վայրը հանդարտ էր եւ ամբողջ միջավայրը խաղաղ ու սրբաշուք: Սակայն, աստիճաններէն վար իջնելուս պէս, հինգ թիւրք ոստիկաններ հետեւեցան մեր քայլերուն: Անոնք մեր ետեւէն գաւիթ մտան, մեծ սարսափ պատճառելով խումբ մը քոյրերու, որոնք պատահաբար նախասենեակին մէջ կը գտնուէին: Այն պարզ իրողութիւնը թէ՛ ամերիկեան Դեսպանը ոստիկանութեան հետ եկած էր, ինքնին սաստկացուց իրենց վրդովանքը, թէեւ մեր մէկտեղ ժամանումը պարզապէս դիպուածական էր:

— Ի՞նչ կ'ուզէք, հարցուցի, այդ մարդոց դառնալով: Որովհետեւ միայն թիւրքերէն կը խօսէին, բնականաբար ըսածս չի հասկցան եւ ուզեցին զին բաց վանել: Իմ թիւրքերէնի ծանօթութիւնս չափազանց սահմանափակ էր, բայց գիտէի թէ՛ «էլչի» բառը՝ «դեսպան» կը նշանակէր: Որով, ինքզինքս ցուցնելով, ըսի.

— Ամերիկեան «էլչի»:

Թիւրքերէնի այս փշրանքը մոզական դեր կատարեց: Թիւրքիայի մէջ, դեսպան մը գերամեծար անձաւորութիւն մըն է, եւ այդ ոստիկանները անմիջապէս յարգեցին հեղինակութիւնս: Նոյն միջոցին, քոյրերը կանչած էին իրենց մեծաւորուհին՝ Մայր Էլվիռան: Այս կինը խիստ նշանաւոր եւ ազդեցիկ անձնաւորութիւն մըն էր Պոլիսի մէջ: Այդ առտուն, երբ ան ներս եկաւ անվրդով եւ դէմը ելաւ այդ թիւրք ոստիկաններուն, վախի ո՛չ մէկ նշան չի ցուցնելով եւ իր դիրքին շուքովը եւ արժէքովը զանոնք պատկառե-

ցնելով, ան իմ աչքիս թուեցաւ գրեթէ գերբնական էակ մը: Մայր Էլվիռա՝ Յրանսայի ամէնէն ազնուապետական ընտանիքներէն մէկուն աղջիկն էր. քառասուն տարեկանի մօտ կին մըն էր, սեւ մազերով եւ շողացող սեւ աչքերով, համովին շեշտուած տոգոյն դէմքով մը՝ որ կրթութիւն, նկարագիր եւ իմաստութիւն կը ճառագայթէր: Այդ առտուն զինքը դիտած ատեն, չկրցայ արգիւտիլ խորհելէ թէ՛ աշխարհի վրայ չի կար դիւանագիտական շրջանակ մը՝ որուն շուքը եւ շնորհը չաւելցնէր ան: Քանի մը վայրկեանի մէջ, Մայր Էլվիռա կատարելապէս տիրացաւ ներկայ անստոյգ կացութեան: Կանչեց քոյրերէն մէկը՝ որ թիւրքերէն կը խօսէր եւ հարցաքննեց ոստիկանները: Անոնք ըսին թէ՛ Պէտրիին հրահանգներուն համեմատ կը գործէին: Բոլոր օտար վարժարանները այդ առտուն պիտի փակուէին, որովհետեւ կառավարութիւնը որոշած էր անոնց շէնքերը գրաւել: Այդ վանքին մէջ մօտաւորապէս եօթանասուն երկու ուսուցչուհիներ եւ քոյրեր կային: Ոստիկանութիւնը հրահանգ ունէր բոլոր ատոնք սենեակներու մէջ փակելու, ուր անոնք գործնականապէս իբր բանտարկեալ պիտի մնային: Շուրջ երկու հարիւր աղջիկներ կային. ատոնք փողոց պիտի հանուէին եւ պիտի թողուէին իրենց տունները փոխադրուիլ: Այն իրողութիւնը որ՝ հեղեղանման անձրեւ կը տեղար եւ օդը սարսափելի ցուրտ էր, կը շեշտէր այդ վարմունքին բարբարոսութիւնը: Սակայն, Պոլիսի ամէն թշնամի վարժարան եւ կրօնական հաստատութիւն, այդ պահուն, նմանօրինակ վ:ործի մը պիտի ենթարկուէր: Որ, ոչ էր որ՝ ասիկա կացութիւն մըն էր՝ զոր չէի կրնար մինակս վարել. որով, անմիջապէս հեռաձայնեցի թրքախօս օրէնսագէտ խորհրդականիս: Հոս կայ միջադէպ մը՝ որ կրնայ շահագրգռական ըլլալ անոնց՝ որոնք կը հաւատան նախանամական միջամտութեան: Երբ Պոլիս հասայ, հեռաձայնը անծանօթ էր. բայց, յաջորդ ամիսներու ընթացքին, անգլիական ընկերութիւն մը զայն հաստատելու վրայ էր: Սիօնի Քոյրերուն հետ իմ պատահարիս նախընթաց գիշերը, օրէնսագէտ խորհրդականս եկած էր ինձի եւ հպարտօրէն յայտարարած թէ՛ իր հեռաձայնը հաստատուած էր: Իր թիւր արծանագրեցի եւ հիմա այդ յիշատակութիւնը գրպանս կը գտնեմ: Առանց իմ թարգմանիս՝ ես շատ պիտի նեղուէի. եւ առանց այդ հեռաձայնին՝ չպիտի կրնայի զայն անմիջապէս հոն կանչել:

Մինչ անոր հասնելուն կը սպասէի, ոստիկաններուն գործողութիւնը ետածոցեի, եւ կինս, որ բարեբաղդաբար Ֆրանսերէն կը խօսէր, ամէն մանրամասնութիւններու կը տեղեկանար քոյրերէն: Տկն. Մօրկընթաու բաւական լաւ կը ճանչնար Թիւրքերը,

գիտնալու համար որ՝ անոնք քոյրերուն եւ իրենց աշակերտներուն պարզ վտարումէն տարբեր ծրագիրներ ունէին : Թիւրքերը այդ հաստատութիւնները գանձարաններ կը նկատեն . ժողովուրդին միտքին մէջ անոնց քովանդակած արժեղէնները մեծապէս չափազանցուած են . եւ ստոյգ ենթադրութիւն մըն է սա թէ՛ ուրիշ նկատումներու կարգին՝ այդ վտարումը ճարտար ասպատակային արշաւանք մըն էր՝ հարստութիւնը շօշափելի կերպով երեւան հանելու :

— Իրամ կամ ուրիշ արժեղէններ ունի՞ք հոս, հարցուց Տկն. Մօրկընթաու՝ քոյրերէն մէկուն :

Այո՛, անոնք բաւական մեծ գումար մը ունէին . ան պահուած էր ապահով վերնայարկի մը մէջ : Կինս պատուիրեց ինծի զբաղեցնել ոստիկանները . յետոյ ինք եւ քոյրերէն մէկը՝ լուիկ անհետացան տեսարանէն : Վերը , քոյրերը պահած էին հարիւր քառակուսի կտոր ասուեակ , որոնց իւրաքանչիւրին մէջ կարած էին քսան ոսկի դրամներ : Սիոնի Քոյրերը, այդ կակուղ ձևին մէջ համագումար ունէին շուրջ յիսուն հազար ֆրանք : Ատենէ մը ի վեր կը վախնային վտարումէ եւ այս կերպով իրենց դրամը ամփոփած էին, որպէսզի կարենան հետերնին տանիլ, երբ բռնադատուէին Թիւրքիայէն մեկնելու : Ատկէ գատ, քոյրերը ունէին բազմաթիւ ծրարներով զբաւականներ եւ շատ մը արժէքաւոր թուղթեր, ինչպէս իրենց վարժարանին հրամանագիրը : Անշուշտ ադ բան մըն էր որ պիտի գրգռէր թիւրք ընչաքաղցութիւնը : Տկն. Մօրկընթաու գիտէր որ՝ եթէ ոստիկանութիւնը անգամ մը տիրանար շէնքին , քիչ հաւանականութիւն պիտի մնար որ՝ Սիոնի Քոյրերը ա՛յլ երբեք տեսնէին իրենց դրամը : Քոյրերուն օգնութիւնովը՝ կինս անմիջապէս վրան պահեց ո՛րչափ բան որ կրնար, սանդուղներէն իջաւ եւ ոստիկան-զինուորներուն մէջէն դուրս անձրեւին տակը ելաւ : Տկն. Մօրկընթաու ետքէն ինծի պատմեց թէ՛ օրէնքի այդ պահապաններուն քովէն անցած ատեն՝ զրեթէ արիւնը սառած էր սոսկումէն . սակայն, արտաքին նշաններով, ան բացարձակապէս խաղաղ եւ ինքնամիտի էր : Ան մտաւ սպասող ինքնաշարժին մէջ եւ գնաց ամերիկեան Դեսպանատուն, դրամը գետնոց մեր նկուղը եւ անմիջապէս դարձաւ վարժարան : Նորէն Տկն. Մօրկընթաու հանդիսաւորապէս վեր ելաւ քոյրերուն հետ : Այս անգամ անոնք զինքը տարին Կաթուղիկէին թանգարանը, որ կը գտնուէր վանքին ետեւը եւ ուր կը մտնուէր վանքէն : Քոյրերէն մէկը՝ գետնին լրայ մասնաւոր տեղէ մը քար մը վերցուց եւ կրկին մէջտեղ հանեց ոսկի դրամի դէզ մը : Չայն պահեցին Տկն. Մօրկընթաուի զգեստներուն մէջ, եւ անգամ մըն

ալ ան ոստիկան-զինուորներու մէջէն անցաւ դուրս ելաւ անձրեւին տակ ու արագօրէն գնաց Դեսպանատուն : Այս երկու շրջաններուն միջոցին , կինս յաջողեցաւ քոյրերուն դրամը գետնոց տեղ մը՝ ուր Թիւրքերը ձեռնամուխ չէին կրնար ըլլալ :

Տկն. Մօրկընթաուի երթուղարձին միջոցին, Պէտրի հասած էր : Ան ինծի յայտնեց թէ՛ ինքը Թալէսոգ հրաման տուած էր բոլոր հաստատութիւնները փակելու եւ թէ՛ ծրագրած էին որ՝ ամբողջ գործը ժամը իննէն առաջ աւարտի : Ըսի արդէն թէ՛ Թիւրքերը զուարթախոհութեան հակամէտութիւն մը ունին . բայց այդ հաստատումին պէտք է աւելցնեմ թէ՛ ատիկա երբեմն այլ լանդակ ձեւով մը կ'արտայայտուի : Պէտրի կարծես կը խորհէր որ՝ եթէ անասունէ աւելի կաթոլիկ քոյրերը երկու սենեակի մէջ արգելափակելը եւ երկու հարիւր խնամրով մեծցուած աշակերտուհիներ Պոլիսի փողոցները թափելը՝ մեծ ծաղրածութիւն մըն էր :

— Առտուն կանուխ գործի սկսած էինք եւ ամէն բան պիտի լմնցնէինք՝ այդ մասին ձեր ո՛րեւէ բան լսելէն առաջ, ըսաւ ան խնդալով : Բայց կ'երեւայ թէ՛ դուք բնաւ չէք քննար :

— Իո՞ք շատ անխելք էք, երբ մեզի այդ տեսակ խաղ խաղալ կը փորձէք, ըսի : Չէ՞ք գիտեր որ մտադիր եմ գիրք մը գրել : Եթէ շարունակէք ասանկ վարուիլ, ձեզ գիրքիս մէջ պիտի անցընեմ՝ իբր անշնորհք մէկը :

Այս դիտողութիւնը վայրկեանին մէկ ներշնչումն էր . այդ պահուն էր որ՝ առաջին անգամը ըլլալով՝ ինծի թուեցաւ թէ՛ այդ պատուութիւնը կրնար հրատարակուելու չափ հետաքրքրական ըլլալ : Պէտրի յայտարարութիւնս լուրջ նկատեց եւ կարծես իր վրայ զգաստացուցիչ ազդեցութիւն մը գործեց :

— Իրա՞ւ մտադիր էք գիրք մը գրելու, հարցուց զրեթէ անձկուտ :

— Ինչո՞ւ չէ , աւելցուցի, զօրավար Լիու Ուէլլէյս, որ հոս դեսպան էր, գիրք մը չի գրե՞ց : «Սընսէդ» Քօթս ալ հոս դեսպան էր . — ան ալ գիրք մը չի գրե՞ց : Ինչո՞ւ ես չի գրէի : Եւ դուք այնչափ կարեւոր անձնաւորութիւն մըն էք որ՝ ես ստիպուած եմ ձեր մասին խօսիլ : Ինչո՞ւ կը շարունակէք գործել այն տեսակ ձեւով մը , որ զիս կը պարտաւորէք ձեզ նկարագրել իբր գէշ մարդ մը : Այս քոյրերը միշտ ձեր բարեկամները եղած են : Անոնք ձեզի միայն բարիք ըրած են : Անոնք դաստիարակած են ձեր ազդիկներէն շատերը : Ինչո՞ւ անոնց հետ կը վարուիք այս ամօթալի ձեւով :

Այս պաշտպանողականը արդիւնք մը առաջ բերաւ : Պէտրի հաւանեցաւ հրահանգին գործադրութիւնը ետածգել, մինչեւ որ

կարենայինք Թալէադի հետ հեռածայնել : Քանի մը վայրկեանէն լսեցի որ՝ Թալէադ հեռածայնին մէջէն կը խնդար :

— Ես ջանացի ձեզմէ խուսափիլ , ըսաւ , բայց դուք նորէն բռնեցիք զիս : Ինչո՞ւ այդ խնդիրին շուրջը ատանկ աղմուկ կը յարուցուի : Ֆրանսացիները իրենք չի վտարեցի՞ն բոլոր մայրապետները եւ վարդապետները : Մե՞նք ինչու չպիտի ընենք :

Ապացուցանելէս ետքը թէ՛ անագնիւ աճապարանք մըն էր ադ , Թալէադ հրամայեց Պէտրիի՝ հրահանգը ետածգել , մինչեւ որ առիթը ունենայինք խնդիրին վրայ տեսակցելու : Բնօրինակաբար ասիկա մեծապէս սփոփեց Մայր Էլփիւսան եւ քոյրերը : Ճիշդ մեկնելու ատեննիս , Պէտրի յանկարծ նոր գաղափար մը ունեցաւ :

— Մենք հիմակուհիմա տգատ պիտի թողունք Սիոնի քոյրերը , ըսաւ , բայց պէտք է գրաւենք իրենց դրամը :

Ակամայ զիջում ըրի իր առաջարկին , գիտնալով որ բոլոր արժեղէնները ապահով կերպով կը հանգչէին ամերիկեան Իեսպանատունին մէջ : Այսպէս , հաճոյքը ունեցայ մնալ եւ դիտելու Պէտրիի եւ իր ընկերներուն խուզարկութիւնը՝ ամբողջ հաստատութեան մէջ : Ինչ որ գտան , թիթեղէ պզտիկ տուփ մըն էր՝ որ կը պարունակէր քանի մը պղինձէ դրամներ , այնչափ աննշան աւար մը՝ զոր Թիւրքերը չզիջան գրաւել : Անոնք շատ շփոթուած եւ հիասթափ եղած էին եւ այդ օրէն մինչեւ հիմա չգիտցան երբեք թէ՛ դրամը ի՞նչ եղաւ : Եթէ իմ թիւրք բարեկամներս պատիւը ընեն ինծի՝ այս էջերը կարդալու , պիտի տեսնեն թէ՛ հոս առաջին անգամը ըլլալով պարզած եմ այդ տագնապալի օրերուն գաղտնիքներէն մէկը :

Որովհետեւ վանքին պատուհաններէն մէկը կը բացուէր Կաթուղիկէին գաւիթին վրայ , որ Վատիկանի սեփականութիւնն էր , մենք առարկեցինք թէ՛ թիւրք կառավարութիւնը զայն չէր կրնար գրաւել : Քոյրերէն անոնք՝ որոնք չէզոք ազգերու կը պատկանէին , արտօնուեցան շէնքին Վատիկանի հողին դէմը գտնուող մասին տէր մնալ , մինչդեռ շէնքին մնացած մասը Երկրաչափական Վարժարանի վերածուեցաւ : Կարգադրեցինք որ՝ Ֆրանսացի մայրապետները տասը օր պայմանաժամ ունենան՝ իրենց երկիրը մեկնելու . անոնք ամէնքն ալ ապահով հոն հասան եւ շատերը հիմա բարեգործական եւ պատերազմական աշխատանքներու նուիրուած են Ֆրանսայի մէջ :

Իմ կատակաբան յայտարարութիւնս թէ՛ մտադիր էի գիրք մը գրելու՝ խորապէս տպաւորեց Պետրին , եւ , յաջորդ քանի մը շաբաթներուն , ան յաճախակի ակնարկեց ատոր : Ես միշտ զուարճաբանօրէն ըսի իրեն թէ՛ եթէ իր ընթացքը չի բարւոքէր , ստիպ-

ուած պիտի ըլլայի զինքը իբր անշնորհք մը նկատել : Օր մը , կատարեալ լրջութիւնով ինծի հարցուց թէ՛ չէ՞ր կրնար ընել բան մը՝ որ իրաւունք տար ինծի զինքը աւելի նպաստաւոր գոյնով մը դիմանկարելու : Իր այդ դիրքը՝ ինծի հայթայթեց այն առիթը՝ զոր ատենէ մը իվեր կը փնտռէի : Պոլիսը տարիներէ իվեր կեդրոն մը եղած էր ներմակ-գերիներու առուտուրի , եւ զեղծ խուսք մը կը գործէր խարդախ սինակոկի մը հովանիին տակ : Յանձնախուսք մը , որ կազմուած էր այդ մարդոց դէմ պայքարելու համար , զիս պատուակալ անդամ ընտրած էր : Պէտրիի ըսի թէ՛ հիմա առիթը ունէր հասրաւ մը շինելու . պատերազմին պատճառով , իր իշխանութիւնը՝ իբր ոստիկանապետ՝ մեծապէս աւելցած էր եւ իր կողմէ ցուցուած քիչ մը կորովի գործունէութիւն՝ յաւիտեան պիտի փրկէր քաղաքը այդ անպատուութենէն : Այն խանդավառութիւնը՝ որով Պէտրի ողջունեց առաջարկս եւ այն կատարելութիւնը եւ նարտարութիւնը՝ որով գործեց , զինքը արժանի կըրնեն ամէն պարկեշտ մարդու երախտագիտութեանը : Քանի մը օրուան մէջ , Պոլիսի ներմակ-գերիներու բոլոր գործակալները ապաստան կը փնտռէին . շատերը ձերբակալուած էին . ոմանք փախուստ տուած . անոնցմէ օտարականները , ատեն մը բանտ մնալէ ետքը , երկիրէն արտաքսուեցան : Պէտրի ինծի յանձնեց այդ բոլոր չարագործներուն լուսանկարները , որոնք հիմա թղթածրար կազմած են մեր կառավարական մասնաւոր պաշտօնատունին մէջ : Այդ միջոցին գիրք չէի գրեր , բայց պարտք զգացի հանրութեան ծանօթացնել Պէտրիի աշխատանքը : Հետեւաբար իր լուսանկարը , իր դիրին մասին քանի մը ծանօթութիւններով , զրկեցի Նիւ-Եօրքի Թայմզին , որ զայն հրատարակեց կիրակի օրուան թիւի մը մէջ : Ամերիկեան մեծ թերթի մը զինքը այդ կերպով պատուած ըլլալը՝ անսահման ուրախութիւն պատճառեց իրեն : Ամիսներով իր գրպանին մէջ պտըտցուց իր պատկերը պարունակող Թայմզի էջը , զայն իր բոլոր բարեկամներուն ցուցնելով : Այս դէպքը վերջ դրաւ ոստիկանապետին հետ իմ կնճիռներուս . անկէ ետքը , որչափ որ Պոլիս մնացի , շատ քիչ լուրջ քաղխումներ ունեցանք :

ԺԴ. ԳԼՈՒԽ

ՎԱՆԿԷՆՀԱՅՍ ԵՒ «ԲԵՔԼԵՅՍ ՊՈՂՊԱՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ»Ը

ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒ ՄԷՋ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԱԾ ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Այդ միջոցին, աւելի խոր կը ծանօթանայի գերման ժամանակակից նկարագիրին, զոր կ'անձնաորէին Վանկէնհայմ եւ իր ընկերները. պատերազմի առաջին օրերուն, Գերմանները շատ նպաստաւոր արտայայտուեցան Ամերիկացիներուն հանդէպ. բայց ժամանակ անցնելով, երբ երեսան եկաւ որ Միաց-Նահանգներուն մէջ հանրային կարծիքը միաձայնօրէն Դաշնակիցները կը պաշտպանէր եւ Ուաշինկթընի կառավարութիւնը չէ գորութեան օրէնքները չպիտի արհամարէր՝ որպէսզի գերման շահերը պաշտպանուէին, Գերմանիայի բարեկամական վերաբերումը փոխուեցաւ եւ գրեթէ թշնամական դարձաւ :

Այն տրտունջը՝ որուն շարունակ կ'անդրադառնար գերման Դեսպանը՝ ձածրացուցիչ կրկնաբանութիւնով մը՝ հին ծանօթ տրտունջն էր — Ամերիկայի՝ Դաշնակիցներուն ռազմանիւթ ծախսելը: Քիչ պատահած է որ՝ զինքը տեսած ատենն՝ այդ նիւթին վրայ չխօսի: Միշտ կը խնդրէր ինձմէ՛ որ՝ նախագահ Ուիլսոնի գրեմ, առաջարկելով անոր որ՝ նաւարգելք [embarago] հրատարակէ. անշուշտ ան չէր ազդուեր իմ ընդդիմախօսութենէս թէ՛ ռազմանիւթի վաճառականութիւնը կատարելապէս օրինաւոր էր: Երբ Տարտանէլի մէջ պատերազմը սաստկացաւ, Ամերիկայի ռազմանիւթ հայթայթելուն մասին Վանկէնհայմի առարկութիւնը աւելցաւ: Պնդեց թէ՛ Տարտանէլի մէջ գործածուած ռուսերէն շատերը Ամերիկա շինուած էին եւ թէ՛ Ամերիկա իրապէս պատերազմ կը մղէր Թիւրքիայի դէմ:

Օր մը, սովորականէն աւելի բարկացած, ռուսքի կտոր մը բերաւ ինձի: Անոր վրայ որոշակի կը տեսնուէր «Բ. Պ. Ընկ.» արծանագրութիւնը:

— Տեսէ՛ք սա, ըսաւ: Կարծեմ զիտէ՛ք թէ՛ ինչ կը նշանակէ «Բ. Պ. Ընկ»: «Բեթիեհէմ Պողպատի Ընկերութիւնն» է ադ! Ասիկա Թիւրքերը պիտի կատողեցնէ: Մի՛ մոռնաք որ՝ ասոր համար մենք Միաց-Նահանգները պատասխանատու պիտի նկատենք: Ամէն օր նոր-նոր ապացոյցներ ձեռք կը բերենք. ամերիկեան ռուսերէն առաջ եկած իւրաքանչիւր մահուան համար

ձեզմէ հատուցում պիտի պահանջենք: Եթէ դուք միայն գրէիք ձեր կառավարութեան եւ մեր թշնամիներուն ռազմանիւթ ծախսելը դադրեցնել տայիք, պատերազմը շուտով վերջ պիտի գտնէր:

Սովորական պաշտպանողական խօսեցայ, Վանկէնհայմի ուշադրութիւնը հրաւիրելով այն իրողութեան վրայ թէ՛ Գերմանիա ռազմանիւթ ծախսած էր սպանիական պատերազմի միջոցին. բայց այս բոլորը անօգուտ էր: Ինչ որ Վանկէնհայմ կը տեսնէր, սա էր թէ՛ ամերիկեան հայթայթումը՝ իր թշնամիին օգնութիւն մը կը հանդիսանար. կացութեան օրինականութիւնը զինքը չէր շահագրգռեր: Անշուշտ ես բացայայտօրէն՝ մերժեցի գրել Նախագահին, այդ նիւթին մասին:

Քանի մը օր ետքը, Իգսամի մէջ երեւցաւ յօդուած մը, որ թրքական եւ ամերիկեան յարաբերութիւններուն վրայ կը խօսէր: Այդ հրատարակութիւնը, մեծ մասով, չափազանց ներքողական էր Ամերիկայի, բայց անոր իրական նպատակը, ներկան քաղաքական էր անցեալին հետ, եւ ցուցնել թէ՛ Թիւրքիայի թշնամիներուն ռազմանիւթ հայթայթելու մեր գործը չէր հաշտուեր բնաւերկու երկիրներու միջեւ գոյութիւն ունեցող պատմական բարեկամութեան: Ամբողջ յօդուածը գրուած էր թիւրք ժողովուրդին ներկայացնելու գաղափար մը՝ որ գրեթէ համառօտակի կամփոփուէր վերջին պարբերութեան մէջ. «Տարտանէլի թղթակիցներուն տեղեկագիրէն կը հասկցուէր թէ՛ վերջին ռազմականութեան միջոցին Անգլիացիներու եւ Ֆրանսացիներու կողմէ արծակուած ռուսերուն շատերը շինուած են Ամերիկայի մէջ»:

Այդ ատեն, գերման Դեսպանատունին ազդեցութեանը տակ էր Իգսամը, որ զայն կը վարէր ամբողջովին գերման փոփականքի շահերուն համեմատ: Դիւրագրգիռ եւ մոլեռանդ Թիւրքերու միաքին մէջ կաթեցուած այդ տեսակ գաղափար մը՝ կրնար պմենաողբալի հետեւանքներ ունենալ: Հետեւաբար, անմիջապէս նիւթը բացի այն մարդուն՝ զոր այդ յարձակումին գլխաւոր պատասխանատուն կը նկատէի — գերման Դեսպանը: Նախ, իր անմեղ ըլլալը յայտարարեց. տղու մը չափ հեզ էր՝ ամբողջ խնդիրէն անտեղեկ ըլլալը փաստած ատեն: Իր ուշադրութիւնը հրաւիրեցի այն իրողութեան վրայ թէ՛ Իգսամի գաղափարները գրեթէ համամանօրէն նոյնն էին՝ քանի մը օրեր առաջ իր ինձի յայտնածներուն, թէ՛ զանազան տեղեր, իրապէս, լեզուն գրեթէ իր խօսակցութեան մէկ կրկնութիւնն էր:

— Կամ դուք գրած էք այդ յօդուածը, ըսի, կամ լրագրողը կանչած եւ անոր թելադրած գլխաւոր գաղափարները:

Վանկէնհայմ զգաց որ՝ հեղինակութիւնը ալ աւելի ժխտելը օգուտ չունէր :

— Լա՛ւ, ըսաւ, զլուխը վեր առնելով, ի՞նչ պիտի ընէք հիմա այդ մասին :

Այս «Թուխտ»ական վարմունքը վիրաւորեց զիս եւ ես զայն հարուածեցի անմիջապէս :

— Պիտի ըսեմ թէ՛ ի՞նչ պիտի ընեմ այդ մասին, պատասխանեցի, եւ դուք զիտէ՛ք թէ՛ ես կարող պիտի ըլլամ գործադրել սպառնալիքներս : Կա՛մ դուք կը դադրեցնէք Թիւրքիայի մէջ հակա-ամերիկեան զգացում յուզելը, կա՛մ ես հակա-գերման զգացումի պայքար մը կը բանամ հոս : Դուք զիտէք, Պառոն, թէ՛ դուք Գերմաններդ շատ բարակ սառի մը վրայ կը չմշկէք այս երկիրին մէջ : Դուք զիտէք թէ՛ Թիւրքերը ձեզ այնչափ շատ չեն սիրեր : Մինչդեռ, զիտէք որ՝ Ամերիկացիները հոս ձեզմէ աւելի ժողովրդական են : Ենթադրեցէք որ ելլեմ Թիւրքերուն հասկցնել թէ՛ դուք զիրենք պարզապէս ձեր շահուն կը գործածէք, թէ՛ դուք զիրենք իրապէս ձեր զինակիցները չէք նկատեր, այլ միայն վահան՝ այն խաղին մէջ, զոր կը խաղաք : Արդ, այս երկիրին մէջ հակա-ամերիկեան զգացում գրգռելով՝ դուք իմ ամէնէն փափուկ կէտիս կը դպչիք : Դուք մեր կրթական եւ կրօնական հաստատութիւնները Թիւրքերու յարձակումներուն կ'ենթարկէք : Մա՛րդ չգիտեր թէ՛ անոնք ի՞նչ կրնան ընել, եթէ համոզուին որ՝ իրենց ազգականները ամերիկեան գնդակներով կը զարնուին : Դուք այդ զգացումը կա՛մ կը խափանէք, կա՛մ որեք շարաթուան մէջ ամբողջ Թիւրքիան կը լեցնեմ Գերմաններու դէմ ատելութիւնով : Ատիկա պատերազմ մը պիտի ըլլայ մեր միջեւ. եւ ես պատրաստ եմ ատոր :

Վանկէնհայմի վարմունքը յանկարծ փոխուեցաւ : Դարձաւ, ձեռքը ուսիս վրայ դրաւ եւ շատ հաշտասէր, զրեթէ գորովագին կերպարանք մը ադաւ :

— Եկէ՛ք, հաշտուի՛նք, ըսաւ : Կ'ընդունիմ որ՝ իրաւունք ունիք այդ մասին : Կ'ըմբռնեմ որ՝ այդ տեսակ յարձակումներ կրնան վիրաւորել ձեր բարեկամները, սխախտները : Կը խոստանամ ձեզի որ՝ պիտի դադրին այդ յարձակումները :

Այդ օրէն, Թիւրք մամուլը երբեք ամենաթեթեւ չարակամ ակնարկութիւն մը իսկ չըրաւ Միաց.-Նահանգներուն : Յարձա-

կումներուն յանկարծակի դադրելէն զգացի թէ՛ Գերմանները, Թիւրքիայի մէջ որոշապէս տարածած էին իրենց Հայրենիքին սիրելագոյն միջոցներէն մէկը — կառավարական բացարձակ հսկողութիւն՝ մատուլին վրայ : Բայց երբ կը խորհիմ այն խայտառակ դաւերուն վրայ՝ զորս Վանկէնհայմ կը նիւթէր այդ ատեն, անգլիական մարտանաւերու կողմէ գործածուած քանի մը ռումբերու դէմ իր բողոքը — եթէ երբեք անգլիական մարտանաւեր գործածած են այդ տեսակ ռումբեր, բան մը՝ որուն համար լրջօրէն կը տարակուսիմ — զրեթէ այլանդակ կը թուի : Առաջին օրերը, Վանկէնհայմ ինձի բացատրած էր Գերմանիայի գլխաւոր նպատակներէն մէկը, Թիւրքիան պատերազմի մղելուն մէջ : Անիկա այդ յայտարարութիւնը ըրած էր հանդարտօրէն եւ անփութօրէն, իբր թէ ադ՝ աշխարհի ամէնէն սովորական խնդիրը ըլլար : Իր գրասենեակին մէջ նստած, փչելով իր խոշոր սեւ գերմանական սիկառը, ան պարզեց Գերմանիայի ծրագիրը՝ ամբողջ իսլամական մոլեռանդ աշխարհը՝ Քրիստոնեաներու դէմ հանելու : Գերմանիա ծրագրած էր իրական «սրբազան պատերազմ» իր՝ անգլիական եւ ֆրանսական իշխանութիւնը կործանելու համար աշխարհի մէջ :

— Թիւրքիա ինքնին կարելոր ուժ մը չէ իսկապէս, ըսաւ Վանկէնհայմ : Իր բանակը տկար է եւ մենք չենք յուսար որ մեծ բան մը կրնայ ընել : Մեծ մասով՝ ան պաշտպանողական դեր մը պիտի կատարէ : Այլ, մեծ խնդիրը իսլամական աշխարհն է : Եթէ մենք կարենանք Մահմետականները Անգլիացիներուն եւ Ռուսներուն դէմ գրգռել, կրնանք զանոնք բռնադատել հաշտութիւն կնքելու :

Ինչ որ Վանկէնհայմ որոշակի հասկցնել կ'ուզէր իր «մեծ ձեռնարկ»ով, յայտնի եղաւ Նոյեմբեր 13ին, երբ Սուլթանը պատերազմի յայտարարութիւնը հրատարակեց. այս յայտարարութիւնը իրապէս կոչ մըն էր ձիւնասի համար, այսինքն «սրբազան պատերազմ», անհաւատներուն դէմ : Քիչ ետքը, Շէյխ-իւլ-Իսլամը, հրատարակեց իր յայտարարութիւնը, ամբողջ իսլամ աշխարհը հրաւիրելով ոտքի կանգնելու եւ ջարդելու իրենց քրիստոնեայ հարստահարիչները : «Ո՛վ Իսլամներ, կ'եզրակացնէք այդ վաւերագիրը, դուք որ գրաւուած էք երջանկութենէ, եւ իրաւունքի դատին համար ձեր կեանքը եւ ձեր ինչքը զոհելու եւ վտանգներու դիմագրաւելու նախօրեակին մէջ կը գտնուիք, խմբուեցէ՛ք հիմա կայսերական գահին շուրջը, հնազանդեցէ՛ք պատուիրաններուն Ամենակարողին, որ, Քուրանի մէջ, մեզի կը խոստանայ երանութիւն՝ աստենի եւ հանդերձեալ կեանքին մէջ . համբուրել խոնարհեցէ՛ք Խալիֆային գահին ոտքը, եւ զիտցէ՛ք թէ՛ պետութիւնը պատե-

* Հռ. ակաւոր «գործակե», որ 1870ին, Նիւ-Եօրթ խղափին մէջ, Թամսենի Հոյի շահերը պաշտպանեց : Միաց.-Նահանգներու մէջ, իր անունը հոմանիչ է ընտանական զեղծագործութեան եւ ուղղամիտ խղափացիներու շափազանց իրաւացի կեդրով անպատահաբախ կը ներշնչէ :

րագմի մէջ է Ռուսիայի, Անգլիայի, Ֆրանսայի եւ անոր դաշնակիցներուն հետ. զիտցէ՛ք թէ՛ ասոնք Իսլամութեան թշնամիներն են: Հաւատացեալներու պետր՝ Խալիֆան՝ ձեզ բոլոր Իսլամներդ կը հրաւիրէ միանալ Սրբազան Պատերազմին»:

Կրօնապետները այս հրովարտակը կարդացին, մզկիթներու մէջ, իրենց համախումբ հաւաքուած ժողովուրդին. բոլոր թերթերը զայն տպագրեցին մեծ տառերով. անիկա լայնօրէն տարածուեցաւ այն ամէն երկիրներուն մէջ, ուր մեծաթիւ մահմետական ժողովուրդներ կային — Հնդկաստան, Չինաստան, Պարսկաստան, Եգիպտոս, Ալճերի: Տրիպոլիս, Մարոք եւ նմանները. բոլոր այս վայրերուն մէջ անիկա կարդացուեցաւ համախմբուած ամբոխներու, եւ ժողովուրդին յորդոր տրուեցաւ հնազանդիչ հրամանագիրին: Իգտանը, այն լրագիրը, որ գերման սեփականատիրոջ փոխանցուած էր, շա՛րունակ կը գրգռէր խուժանը: «Մեր թշնամիներուն արարքները Աստուծոյ զայրոյթը զրգռած են, կը գրէր այս թիւրք-եւ-գերման հրատարակիչը: Յոյսի ճանաչ մը երեւցած է: Բոլոր Մահմետականները, երիտասարդ եւ ծեր, այր, կին կամ տղայ, պէտք է կատարեն իրենց պարտքը, որպէսզի ճանաչը չի ցնդի, այլ մեզի յաւիտեան լոյս տայ: Ո՛րչափ մեծ գործքեր կրնան կատարուիլ կորովի մարդերու բազուկներով եւ ուրիշներու՝ կիներու եւ տղոց օգնութիւնով! . . . Գործելու ժամանակը հասած է: Մենք պէտք է մեր բովանդակ ուժովը, մեր ամբողջ հոգիովը, մեր ակռաներովը եւ եղունգներովը. մեր մարմինին եւ միտքին ամբողջ ուժերովը կուռինք: Եթէ այդ կռիւը մղենք, մահմետական ստրկացած երկիրներու փրկութիւնը ապահովուած է: Այն ատեն, եթէ Տէրը կամենայ, մենք ճակատաբաց պիտի բալենք մեր բարեկամներուն կողքին, որոնք իրենց ողջոյնները կը դրկեն Մահիկին: Ալլահը մեր օգնականն է եւ Մարգարէն մեր ապաւէնը»:

Սուլթանին հրովարտակը պաշտօնական վաւերագիր մըն էր եւ առաջադրուած Սրբազան Պատերազմով կը զբաղէր՝ ընդհանուր կերպով մը. բայց գրեթէ ճիշդ այդ ատենը, երեւցաւ գաղտնի տետրակ մը, որ հաւատացեալներուն հրահանգներ կու տար, աւելի՛ մասնայատուկ ձեւով մը: Այս տետրակը մզկիթներու մէջ չկարդացուեցաւ. ան գաղտագողի ցրուուեցաւ բոլոր մահմետական երկիրներու մէջ — Հնդկաստան, Եգիպտոս, Մարոք, Սուրիա եւ բազմաթիւ ուրիշներ. ան — նշանակալից պարագայ — Քուրանի լեզուովը՝ արաբերէն տպագրուած էր: Երկարապատու մ վաւերագիր մըն էր ան — անգլիերէն թարգմանութիւնը կը բովանդակէ 10,000 բառ — Քուրանէն յիշատակութիւններով լեցուն

եւ որ մոլեգին ոճով՝ ցեղային եւ կրօնական ատելութեան կոչ մըն էր: Ան կը նկարագրէր զործողութիւններու մանրամասն ծրագիր մը՝ սպաննելու եւ ընաչնջելու համար բոլոր Քրիստոնեաները — բացի գերման ազգէ եղողներէն: Քանի մը քաղուածքներ կրնան որոշակի պատկերացնել անոր ոգին. «Ո՛վ հաւատացեալ ժողովուրդ եւ ո՛վ սիրեցեալ Իսլամներ, աչքի առջեւ բերէք, հոգ չէ գոնէ կարճ վայրկեան մը, իսլամական աշխարհին ներկայ վիճակը: Որովհետեւ եթէ քիչ մը նկատի առնէք զայն, դուք երկար ատեն պիտի լաք: Դուք պիտի տեսնէք գործերու խառնակ կացութիւն մը, որ արցունք պիտի հոսեցնէ աչքերնուդ եւ վիշտի կրակէն պիտի այրէ ձեզ: Տեսէ՛ք Հնդկաստան մեծ երկիրը, որ հարիւր հազար միլիոններով Իսլամ կը պարունակէ, կրօնական երկպառակութիւններու եւ տկարացումներու պատճառով՝ Աստուծոյ թշնամիներուն՝ անհաւատ Անգլիացիներուն ճանկը ինկած է: Տեսէ՛ք, ձափայի մէջ քառասուն միլիոն Իսլամներ, ստրկութեան եւ տառապանքի շղթաներով կաշկանդուած են, Հոլանտացիներու լուծին տակ, թէեւ այս անհաւատները թիւով աւելի քիչ են, քան հաւատացեալները եւ աւելի բարձր քաղաքակրթութիւն մը չունին: Տեսէ՛ք Եգիպտոսը, Մարոքը, Թունուզը, Ալճերին եւ Սուտանը, որոնք տարապայման չարչարանքներով կը տառապին եւ կը հեծեն Աստուծոյ եւ իր առաքեալին թշնամիներուն ճանկին մէջ: Տեսէ՛ք ընդարձակ Սիպերիան եւ Թիւրքիստանը եւ Խիվան եւ Պուխարան եւ Կովկասը եւ Խրիմը եւ Քազանը եւ Աժտերհանը եւ Խուժաստանը, որոնց իսլամ ժողովուրդները Աստուծոյ միութեան կը հաւատան, բայց ոտքի կոխանը եղած են իրենց բռնակալներուն՝ որոնք արդէն մեր կրօնքին թշնամիներն են: Դիտեցէ՛ք Պարսկաստանը, որ բաժան-բաժան ըլլալու նախօրեակին մէջ է եւ տեսէ՛ք իսլամիստական քաղաքը, որ տարիներով կուրծք-կուրծքի կռիւ մղած է մեր կրօնքին թշնամիներուն դէմ, հիմա նշանակէտ դարձած է ճնշումի Պէ բռնութեան: Այսպէս, ո՛ր կողմը որ դիտէք, կը տեսնէք որ՝ ճշմարիտ կրօնքի թշնամիները, մասնաւորաբար Անգլիացիները, Ռուսերը եւ Ֆրանսացիները, ճնշած են Իսլամութիւնը եւ անոր իրաւունքները ամէ՛ն հնարաւոր միջոցներով բռնաբարած են: Չենք կրնար թուել այն անարգանքները, զորս կրած ենք այդ ազգերուն լուծին տակ, որոնք կը բաղձան ջնջել Իսլամութիւնը եւ աշխարհի երեսէն վտարել բոլոր Մահմետականները: Այս բռնակալութիւնը տանելի ամէն սահման անցած է. մեր ստրկութեան բաժակը յորդելու չափ լեցուած է . . . Կարճ խօսքով, Իսլամները կ'աշխատին եւ անհաւատները կը վայելեն: Իսլամները անօթի են եւ կը տառապին, մինչդեռ ան-

հաւատները յափրանքէ կը յղփանան եւ պերճանքի մէջ կ'ապրին: Իսլամական աշխարհը կը զահավիժի եւ ետ կ'երթայ, մինչդեռ քրիստոնեայ աշխարհը կ'առաջդիմէ եւ հետզհետէ կը բարձրանայ: Իսլամները ստրկացած են, մինչդեռ անհաւատները մեծ երկրավարներ են: Այս բոլորը ա՛յն պատճառով է որ՝ Իսլամները լքեցին Քուրանի կողմէ գծուած օրէնքը եւ մոռցան անոր հրամայած Սրբազան Պատերազմը . . . Բայց հիմա Սրբազան Պատերազմին ժամանակը եկած է եւ անոր միջոցով Իսլամութեան հայրենիքը յաւիտեան պիտի փրկուի զայն ճնշող անհաւատներու իշխանութենէն: Այս Սրբազան Պատերազմը, հիմա նուիրական պարտականութիւն մը դարձած է: Գիտցէ՛ք որ՝ իսլամական երկիրներու մէջ անհաւատներու արիւնը կրնայ թափուիլ անպատիժ կերպով — բացի անոնցմէ՝ որոնց ապահովութիւն խոստացած է իսլամական իշխանութիւնը եւ որոնք իրեն զինակից են: [Ասկէ կը հասկնանք թէ՛ Գերմանացիները եւ Աւստրիացիները բացառութիւն կը կազմեն կոտորածէ]: Իսլամութեան վրայ իշխող անհաւատները սպաննելը սրբազան պարտականութիւն մը դարձած է, հոգ չէ թէ գաղտնապէս կատարէք կամ բացայայտօրէն, ինչպէս Քուրանը հրամանագրած է. «Բռնեցէք զանոնք եւ սպաննեցէք, երբ որ գտնէք: Գիտցէ՛ք որ՝ մենք զանոնք ձեր ձեռքը յանձնած ենք եւ ձեզի գերագոյն իշխանութիւն տուած՝ անոնց վրայ»: Ան որ մեր վրայ իշխողներէն նոյն իսկ մէկ անհաւատ մը կը սպաննէ, գաղտնապէս ըլլայ թէ բացայայտօրէն, պիտի վարձատրուի Աստուծով: Եւ թող իւրաքանչիւր Իսլամ, աշխարհի ո՛ր կողմն ալ որ գտնուի, հանդիսաւոր երդում կատարէ իր վրայ իշխողներէն գտնէ երեք կամ չորս անհաւատ սպաննելու, որովհետեւ անոնք Աստուծոյ եւ հաւատքի թշնամիներն են: Թող իւրաքանչիւր Իսլամ գիտնայ թէ՛ այդ արարքը գործելուն համար իր վարձատրութիւնը պիտի կրկնուի Աստուծոյ կողմէ՝ որ ստեղծեց երկինքը եւ երկիրը: Այն Իսլամը՝ որ այս գործը կը կատարէ, փրկուած պիտի ըլլայ Դատաստանի օրուան՝ մեռելի յարութեան սարսափներէն: Ո՞վ է այն մարդը՝ որ կրնայ մերժել այդ տեսակ վարձատրութիւն մը, այդ տեսակ չնչին գործքի մը համար . . . Նաեւ, եկած է ժամանակը որ՝ մենք ամէնքս ոտքի կանգնինք մէկ մարդու պէս, որ մէկ ձեռքը ունի սուր մը, միւս ձեռքը հրացան մը, գրպանը հրացանի զնդակներ եւ մահ սփռող ատրոնկէցներ, սիրտը վառուած հաւատքի լոյսով. եւ պէտք է բարձրացնենք մեր ձայնը, գոչելով — Հնդկաստանը՝ հնդիկ Իսլամներուն, Ճափան՝ ճափացի Իսլամներուն, Ալճերիան՝ ալճերիացի Իսլամներուն, Մարոքը՝ մարոքցի Իսլամներուն, Թունուզը՝ թունուզցի Իսլամներուն,

Եգիպտոսը՝ եգիպտացի Իսլամներուն, Պարսկաստանը՝ պարսիկ Իսլամներուն, Թուրանը՝ թուրանեան Իսլամներուն, Պուխարան՝ պուխարացի Իսլամներուն, Կովկասը՝ կովկասցի Իսլամներուն եւ Օսմանեան Կայսրութիւնը՝ օսմանցի թիւրքերուն եւ Արաբներուն»:

Այս սրբազան նպատակը առաջ տանելու համար՝ մասնայատուկ հրահանգներ կը յաջորդեն: Գոյութիւն պիտի ունենան՝ «սիրտի պատերազմ» մը — մարզարէի իւրաքանչիւր հետեւորդ միշտ իր միտքին մէջ ատելութիւն պիտի սնուցանէ անհաւտին հանդէպ: «Նօսքի պատերազմ» մը — իւրաքանչիւր իսլամ լեզուով եւ գրիչով պիտի տարածէ այս նոյն ատելութիւնը՝ ո՛ւր որ Մահմետականներ կ'ապրին: «Գործի պատերազմ» մը — զարնել եւ սպաննել անհաւատը՝ ո՛ւր որ զուխը ցոյց տայ ան: Այս վերջին պատերազմը, կ'ըսէ տետրակը, «ճշմարիտ պատերազմ»ն է: Գոյութիւն պիտի ունենան «պզտիկ սրբազան պատերազմ» մը եւ «մեծ սրբազան պատերազմ» մը. առաջինը կը կազմէ այն պայքարը՝ զոր իւրաքանչիւր Մահմետական պարտաւոր է մղել իր գտնուած հասարակութեան մէջ՝ ամէն քրիստոնեայ դրացիի դէմ. երկրորդը՝ աշխարհային մեծ պայքարն է՝ զոր Հնդկաստանի, Արաբիայի, Թիւրքիայի, Ափրիկէի եւ ուրիշ երկիրներու միացած Իսլամութիւնը պարտաւոր է մղել անհաւատ բռնաւորներուն դէմ: Տետրակը կ'ըսէ. «Սրբազան Պատերազմը երեք ձեւ ունի: Առաջին՝ անհատական պատերազմը, որ կը բաղկանայ անհատական անձնական գործքերէ: Ասիկա կրնայ կատարուիլ կտրող, սպաննող գործիքներով, ինչպէս այն սրբազան պատերազմը՝ զոր հաւատացեալներէն մէկը գործադրեց անգլիացի անհաւատ կառավարիչին՝ Փիթըր Կէշիի վրայ. ինչպէս Հնդկաստանի մէջ անգլիացի ոստիկանապետի մը սպաննութիւնը. եւ ինչպէս Մէքիկէ հասած պաշտօնատարի մը՝ Ալի Պուսիի կողմէ սպաննութիւնը (թո՛ղ Աստուծոյ շնորհին արժանանայ)»: Վաւերագիրը սպաննութեան ուրիշ զանազան պարագաներ կը յիշէ՝ զորս հաւատացեալները արտօնուած են օրինակել: Երկրորդ, հաւատացեալները կը հրաւիրուին կազմակերպել «խումբ»եր եւ երթալ քրիստոնեաները սպաննել: Ամէնէն օգտակարները գաղտնի կազմակերպուած եւ գաղտնի գործողներն են: «Կը յուսացուի որ՝ այսօրուան իսլամական աշխարհը խիստ մեծապէս պիտի օգտուի այդ տեսակ խումբերէ»: Երկրորդ մեթո՞ճ է՝ «կազմակերպուած պայքար»ով կատարուածը, այսինքն մարզուած բանակներով:

Ոճիւրի եւ սպաննութեան գրգռիչ այս տետրակին իւրաքանչիւր մասին մէջ՝ նշաններ կան որ՝ գերման ձեռք մը խմբագրական վերհսկողութիւն կատարած է հոն: Միայն այն անհաւատները

պիտի սպաննուին՝ «որոնք կ'իշխեն մեր վրայ» — այսինքն անոնք՝ որոնք մահմետական հպատակներ ունին: Որովհետեւ Գերմանիա այդ կարգի հպատակ չունի, այդ փրկարար պարբերութիւնը կը յուսացուէր որ՝ պիտի պաշտպանէր Գերմանները յարձակումէ: Գերմանները՝ որոնք սովոր են միայն իրենց անձնական բարօրութիւնովը շահագրգռուիլ եւ նկատի չառնել իրենց զինակիցը, յայտնապէս անտես ըրած են այն իրողութիւնը թէ՛ Աւրտորիա բազմաթիւ մահմետական հպատակներ ունէր Պօսնայի եւ Հերսէքի մէջ: Իսլամներուն հրահանգ կը տրուէր որ՝ պէտք էին բանակներ կազմել, «եթէ նոյն իսկ անհրաժեշտ ըլլար զանազան օտար տարրեր մտցնել» — այսինքն գերման կրթիւններ եւ գերման սպաններ առնել: «Պէտք է յիշէք որ — ասիկա յայտնապէս կանխամտածուած է ամէն կողմ գտնուող Գերմաններու իբր քողածածուկ պաշտպանութիւն — բացարձակապէս ապօրէն է կռուիլ ուրիշ կրօնքէ ժողովուրդներէն ուրիշ որեւէ մէկուն դէմ՝ որուն եւ Իսլամներուն միջեւ դաշինք կայ կամ անոնց դէմ՝ որոնք թշնամութիւն յայտնած չեն Խալիֆայական աթոռին դէմ, կամ անոնց՝ որոնք Իսլամներու պաշտպանութեանը տակ մնացած են»:

Եթէ նոյն իսկ լսած չըլլայի Վանկէնհայմի անձնական յայտարարութիւնը թէ՛ Գերմանները ծրագրած են ամէն կողմի Մահմետականները ոտքի հանել՝ Անգլիայի, Ֆրանսայի եւ Ռուսիայի դէմ, տետրակին այս յաւելումները բաւական յստակօրէն պիտի ցուցնէին ապշեցուցիչ վաւերագիրին իրական նպատակը: Վանկէնհայմի՝ ինծի հետ նիւթին վրայ խօսած ատեն, իր տիրական գաղափարը կը թուէր ըլլալ սա՛ թէ՛ այս տեսակ «սրբազան պատերազմ» մը է՛ն արագ միջոցը պիտի ըլլար Անգլիան հաշտութիւն կնքել բռնադատելու: Այս տեսակէտին համաձայն, «սրբազան պատերազմ» մը իրապէս մեծ յարձակողական մըն էր: Այդ ատեն Վանկէնհայմ արտայայտեց այն համոզումը թէ, — ինչ որ պաշտօնական բոլոր շրջանակներու մէջ տիրող համոզումն էր, — Գերմանիա սխալ մը գործած էր Անգլիան պատերազմի մտցնելով, եւ հիմա յայտնապէս իր կարծիքը ան էր թէ՛ եթէ Անգլիայի դէմ կռնակէն հրդեհներ կարենային յարուցուիլ՝ Հնդկաստանի, Եգիպտոսի եւ Սուտանի եւ ուրիշ վայրերու մէջ, Բրիտանական Կայսրութիւնը պիտի ետ քաշուէր: Վանկէնհայմ կը հաւատար որ՝ եթէ միայն Բրիտանական Մահմետականները մերժէին ոտքի կանգնիլ, այդ տեսակ ապստամբութեան մը չնչին սպառնալիքը իսկ պիտի մղէր Անգլիան՝ Պեմբրան եւ Ֆրանսան իրենց ճակատագիրին ձգելու: Վայրենօրէն մոլեռանդ ժողովուրդի մը մէջ այդ տեսակ հրծիգ գրականութիւն մը տարածելուն վտանգը ակ-

ներեւ է: Ես միակ չէզոք դիւանագէտը չէի որ՝ կը սոսկայի ատոր չափազանց ծանրակշիռ հետեւանքներէն: Դիւանագիտական մարմինին կարողագոյն անդամներէն մէկը, պուլկար Դեսպան՝ Մ. Թօլէֆ, չափազանց վրդովուած էր: Այդ միջոցին Պուլկարիա չէզոք էր. եւ Մ. Թօլէֆ յաճախ կ'ըսէր ինծի թէ՛ կը յուսար որ իր երկիրը չէզոքութիւնը միշտ պահէր: Իւրաքանչիւր կողմը, կ'ըսէր, կը յուսայ որ Պուլկարիա իր դաշակիցը պիտի դառնայ. եւ Պուլկարիայի քաղաքականութիւնն է՝ իւրաքանչիւր կողմը միտքի այդ ակնկալու վիճակին մէջ պահել: Եթէ Գերմանիա յաջողի «Սրբազան Պատերազմ» յարուցանել եւ եթէ ջարդեր սկսին, կ'աւելցնէր Մ. Թօլէֆ, Պուլկարիա անշուշտ Համաձայնութեան ուժերուն պիտի միանայ:

Որոշեցինք որ՝ ինք Վանկէնհայմի երթայ եւ այդ յայտարարութիւնը կրկնէ եւ ես այ նման ճնշում մը բանեցնեմ ինվէրի վրայ: Սակայն, առաջին օրէն, Սրբազան Պատերազմը ձախողութիւն մը եղաւ: Հնդկաստանի, Եգիպտոսի, Ալճերիի եւ Մարոքի պէս երկիրներու Մահմետականները գիտէին թէ՛ շատ աւելի լաւ վարչութեան ենթակայ էին, քան զոր կրնային գտնել ուրիշ որեւէ երեւակայելի պայմանի մէջ: Ատկէ զատ, պարզամիտ Մահմետականները չէին կրնար ըմբռնել թէ՛ ինչո՞ւ սրբազան պատերազմ մը պիտի մղէին Բրիտանականներու դէմ եւ թէ ինչո՞ւ, նոյն ատեն, Գերմանիայի եւ Աւստրիայի պէս քրիստոնեայ ազգերու դաշնակիցը ըլլային: Այս ընկերակցութիւնը ամբողջ նպատակը ծաղրելի կը դարձնէր: Իրաւ է թէ, Քուրանը կը պատուիրէ Բրիտանականներու սպաննութիւնը, բայց այդ նուիրական մատենանը բացառութիւն չի դնել Գերմաններուն, եւ, մոլեռանդ Մահմետականի մը միտքին առջեւ, գերման ռայա մը այնչափ քրիստոնեայ տիղմ մըն է, ո՛րչափ Անգլիացի մը եւ Ֆրանսացի մը, եւ իր ջարդը իրապէս նոյնչափ արժանաւոր գործք մըն է: Եւրոպական դիւանագիտութեան կողմէ անհրաժեշտ դատուած զանազանումէն անիկա այնչափ որոշ բան կը հասկնայ, ո՛րչափ կը հասկնայ ձգողական զօրութեան օրէնքէն կամ միգամածային վարկածէն: Ասիկա հաշիւի չառնող գերման ձախողութիւնը պարզապէս ուրիշ մէկ ապացոյցն է գերման արմատական տխմարամտութեան եւ հիմնական հոգեբանութեան իրական տգիտութեան: Միակ շօշափելի իրողութիւնը, որ յստակօրէն երեւան կու գայ, Քայզերին բաղձանքն է 300,000,000 Մահմետականները Ս. Բարթուղիմէոսական հսկայական ջարդարարութեան մը մղելու՝ Բրիտանականներու դէմ:

Ուրեմն «սրբազան պատերազմ» տեղի չունեցա՞ւ երբեք:

Վանկէնհայմի «Մե՛ Ձեռնարկ»ը իրապէս ծախողեցա՞ւ : Ամէն անգամ որ խորհիմ այս ծիծաղելի ձիւնասին վրայ, ամերիկեան Դեսպանատունին մէջ պատահած Լանայատուկ տեսարան մը միտքս չու գայ : Սեղանին մէկ կողմը նստած էր էնվէր եւ շատ հանդարտօրէն ու մալ-ու մալ թէյ կը խմէր ու ինչ կը ճաշակէր . միւս կողմը նստած էի ես, նոյն խաղաղ զբաղումին անծնատուր : Նոյեմբեր 14ն է, Սուլթանին «սրբազան պատերազմ» յայտարարելուն յաջորդ օրը . մզկիթներու եւ ուրիշ վայրերու մէջ հաւաքումներ տեղի ունեցած են, ուր յայտարարութիւն մը կարդացուած է եւ հրաբորոք ճառեր արտասանուած են : Էնվէր կը վստահացնէ ինծի թէ՛ Ամերիկացիներուն բացարձակապէս ո՛չ մէկ չարիք չպիտի հասնի, թէ՛ իրապէս՝ ոչ մէկ տեղ որեւէ ջարդ տեղի չպիտի ունենայ : Մինչ ան կը խօսի, քարտուղարներէս մէկը ներս կու գայ եւ կը հաղորդէ ինծի թէ՛ պզտիկ խուժան մը ցոյցեր կ'ընէ զանազան օտար հատատութիւններու դէմ : Խուժանը յարձակած է աւստրիական խանութի մը վրայ, որ անխելօրէն պահած է իր ծախու «անգլիական զգեստներ» ազդանշանը : Հարցուցի էնվէրի թէ ի՞նչ կը նշանակէր ադ . պատասխանեց թէ՛ կատարելապէս սխալ մըն է ադ, թէ՛ որեւէ մարդու վրայ յարձակելու ծրագիր չի կայ : Իր մեկնումէն քիչ ետքը կը տեղեկանամ որ՝ խուժանը յարձակած է ֆրանսական ապրանքներու մթերանոցի մը՝ Պոն Մառչիի վրայ եւ շիտակ կ'ուղղուի դէպի անգլիական Դեսպանատուն : Հեռածայնով անմիջապէս կը խօսիմ էնվէրի հետ . բան չի կայ, կ'ըսէ, Դեսպանատունին բան չպիտի պատահի : Մէկ-երկու վայրկեան ետքը, խուժանը անմիջապէս կը դառնայ եւ կը խոյանայ Պոլիսի ամէնէն կարեւոր ճաշարանին՝ Թօֆաթեանի վրայ : Այն պարազան որ՝ այդ ճաշարանին պետը Հայ մըն է, ամէն բան կը բացատրէ : Մայրը կեռով ձողեր կրող վեց մարդիկ կը կոտրեն բոլոր հայելիները եւ ապակիները . ուրիշներ սեղաններուն վրայէն կը վերցնեն . մարմարները եւ զանոնք բազմակոտոր կը փշրեն : Քանի մը վայրկեանի մէջ, ճաշարանը կատարելապէս աւերուած է : Այս ցոյցը կը պատկերացնէր Սրբազան Պատերազմը, այնպէս ինչպէս Պոլիս զայն հասկցած էր : Այս էր 300,000,000 Մահմետականները քրիստոնեայ աշխարհին դէմ հանելու Դերմանիայի փորձին անփառունակ վախճանը ! Քայգէրը միակ որոշ արդիւնք մը ձեռք բերաւ այդ զրգուիչ հրատարակութիւնը տարածելով : Ան մահմետական հոգիին մէջ առաջ բերաւ Քրիստոնեային հանդէպ անսահման ատելութիւն մը՝ ինչ որ անոր յուզումնավար տարրինակ բնաւորութեան հիմնական նշանն է, եւ այդպէսով ոտք հանեց կիրքերու բռնկումը, որոնք ետքէն յայտնագործուցան Հայերու եւ ուրիշ հպատակ ժողովուրդներու ջարդերուն մէջ :

ԺԵ. ԳԼՈՒԽ

ՃԷՄԱԼ, ՎՐԴՈՎԻԶ ՄԱՐԿՈՍ ԱՆՏՈՆԻՈՍ ՄԸ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ

1914ի Նոյեմբերի սկիզբը, Հայտար ֓աշայի երկաթուղիի կայարանը մեծ ցոյցի մը բեմը դարձած էր : Մովային նախարար ձէմալ, որ Թիւրք կայսրութեան մէջ երեք հզօրագոյն անձերէն մէկն էր, կը մեկնէր հրամանատարութիւնը ստանձնելու թրքական չորրորդ զօրաբանակին, որուն բանակատեղին կը գտնուէր Սուրիա : Դահլիճին բոլոր անդամները, ինչպէս նաեւ Պոլիս գտնուող ուրիշ ազդեցիկ անձնաւորութիւններ՝ հաւաքուած էին այս մեկնող մարզական խանդավառ ողջերթ մը կատարելու : Անոնք զինքը ողջունեցին իբր «Եգիպտոսի փրկիչ»ը, եւ ինքը ձէմալ, կառախումբին մեկնումէն առաջ, իր հրապարակային յայտարարութիւնը ըրաւ .

—Մինչեւ որ Եգիպտոսը նուաճած չլլամ, Պոլիս չպիտի դառնամ :

Ամբողջ արարողութիւնը ինծի չափազանց ուռուցիկ թուեցաւ : Անխուսափելիօրէն ան միտքս բերաւ ուրիշ արիւնուշտ եռապետութեան մը երրորդ անդամը, որ մօտաւորապէս երկու հազար տարի առաջ, իր հայրենիքէն մեկնած էր, Արեւելքի գերագոյն դիկտատորը դառնալու համար : Եւ ձէմալ մէկէ աւելի յատկանշական նմանութիւններ ունէր Մարկոս Անտոնիոսի հետ : Իր հռոմայեցի նախահայրին պէս, իր ներքին կեանքը անբարոյական էր . Անտոնիոսի պէս՝ անյազ խաղասէր մըն էր եւ իր հաճոյքի ժամերուն մեծ մասը Սէնքըր տ'Օռիանի մէջ, թղթախաղի սեղանին շուրջը կը վատնէր : Ուրիշ յատկանիշ մը՝ որով կը նմանէր հռոմայեցի մեծ ճարտասանին, իր ահարկու սնափառութիւնն էր : Թրքական աշխարհը ձէմալի օրովը կը թուէր անդամահատուիլ, ճիշդ ինչպէս որ Հռոմէական Հանրապետութիւնը կը լուծուէր Անտոնիոսի օրովը : ձէմալ կը հաւատար թէ՛ ինք կրնար անոր մէկէ աւելի նահանգներուն ժառանգորդը դառնալ եւ հաւանօրէն հարստութիւն [dynasty] մը հիմնել : Կը յուսար որ՝ այն զինուորական արշաւանքը՝ որուն իբր հրամանատար կը մեկնէր հիմա, զինքը ո՛չ միայն Թիւրքիայի գեղեցկագոյն նահանգին յաղթականը պիտի դարձնէր, այլ նաեւ



ՊԱՌՕՆ ՖՕՆ ՎԱՆԿԷՆԶԱՅՄ

ՆԱԿԿԻՆ ԳԵՐՄԱՆ ԴԵՍՊԱՆ ԹԻԻՐՔԻՈՅԻ

աշխարհի հզոր դէմքերէն մէկը : Ետքէն, Սուրիայի մէջ, ան իշխեց ա՛յնչափ անկախօրէն, որչափ միջնադարեան կողոպտիչ պառօն մը — որուն կը նմանէր ուրիշ մասնայատկութիւններով : Ան դարձաւ տեսակ մը փոխ-սուլթան, որ սեփական արքունիք ունէր, իր սեփական զինուոր ունէր եւ սեփական հրահանգներ կը յայտարարէր, ազատօրէն գործադրելով իրեն յատուկ արդարութիւնը եւ յաճախ արհամարելով Պոլիսի իշխանութիւնները :

Այն ցնծութիւնը, որով ձէմալի ընկերակիցները կը փութացնէին մեկնումը, բոլորովին անշահախնդրական չէր : Իրողութիւնը ան էր որ՝ անոնցմէ շատերը ծայրայեղօրէն ուրախ էին՝ անոր երթալը տեսնելով : Անիկա ատեն մը Թալէադի եւ Էնվէրի կողքին՝



ՃԷՄԱԼ ՓԱՇԱ, ԾՈՎԱՏԻՆ ՆԱԽԱՐԱՐ

1914ին, ձեմալ մտնականութեան պես եր. իր պաշտօնն եր եզմել այն քաղաքացիները՝ որոնք Քիւրքիան կառավարող քաղաքացիական խմբակին դէմ կ'ելլէին : Այդ տեսակ հակառակորդներ՝ ընդհանրապէս կը սպաննուէին կամ օրհնով կը դատապարտուէին : Ետքէն, ձեմալ ծովային նախարար եղաւ, եւ իբր այդ՝ բուն կերպով բողոքեց ամերիկեան մարտնամուտն Յունաստանի ծախուելուն դէմ : Աւելի ետք, իբր չորրորդ զօրքաճակի հրամանատար, զրկուեցաւ Պաղեսթին, ուր նշանուր դարձաւ իբր պարագլուխ՝ ոչ-խլամ ժողովուրդին զանգուածային հալածանքին մէջ :

Դեպքով Մօրկընքաուի Յիտաակները

Անգլիերէն բնագիրէն քարգմանիչ ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

փուշ մը եղած էր, եւ անոնք կատարեցապէս գոհ էին որ՝ ան իր գուռոց եւ բիրտ վարքը պիտի գործադրէր Սուրիացիներու, Հայերու եւ միջերկրականեան նահանգներու ուրիշ ոչ-խալամ տարրերուն դէմ: Ճէմալ Պոլիսի մէջ ժողովրդական մարդ մը չէր: Եռապետութեան միւս անդամները, իրենց քիչ փափաքելի յատկութիւններուն յաւելուածօրէն, զանազան առիւնքնող յատկանիշեր ունէին — Թալէադ՝ իր բիրտ կորովը եւ բնածին միամտութիւնը, Էնվէր՝ իր յանդգնութիւնը եւ անձնական շնորհալիութիւնը, բայց Ճէմալի վրայ քիչ բան կար որ հաճելի ըլլար: Ամերիկացի բժիշկ մը, որ դիմագիտութեան մասնագէտ էր, Ճէմալը հիանալի ենթակայ մը նկատած էր: Ան ըսաւ ինծի թէ՛ երբեք չէր տեսած դէմք մը՝ որ վայրենութիւնը այնչափ միացնէր հեղինակաւորութեան եւ կորովամտութեան: Էնվէր, ինչպէս իր կեանքը կը ցուցնէր, կրնար անգութ եւ արիւնաժարաւ ըլլալ. բայց ան՝ իր նենգաւոր յատկութիւնները կը ծածկէր մեղմ, անխորշում եւ նոյն իսկ հաճելի դէմքի մը տակ: Սակայն Ճէմալ չէր ծածկեր իր հակուռնները, որովհետեւ իր դէմքը յստակօրէն կը պատկերացնէր ներքին հոգին: Իր աչքերը սեւ ու թափանցող էին. անոնց սրութիւնը, արագաթարթութիւնը եւ խայթողութիւնը՝ որով կը սեւեռէին մէկ առարկայէն միւսին, քանի մը փայլականման ակնարկի մէջ յայտնապէս ընդգրկելով ամէն բան, կը մատնէին ծայրայեղ աստիճանով խորամանկութիւն, անխղճութիւն եւ անձնապաշտութիւն: Նոյն իսկ իր խնդուածքը, որ մէջտեղը կը հանէր իր ճերմակ ակունները, անհաճոյ եւ կենդանակերպ էր: Իր սեւ մազերը եւ սեւ մօրուքը, որոնք հակադրութիւն կը կազմէին իր տօգոյն դէմքին հետ, այդ տպաւորութիւնը կը սաստկացնէին միայն: Առաջին ակնարկով, Ճէմալի կերպարանքը քիչ մը աննշան կ'երեւար — միջահասակ էր, գրեթէ կարճ եւ գէր եւ քիչ մը կորաքամակ. բայց շարժիլ սկսելուն պէս, կը տեսնուէր որ՝ իր մարմինը կորովայից էր: Երբ ձեր ձեռքը սեղմէր, ճնշելով ձեզ մամուլի պէս բռնուածքի մը մէջ եւ ձեզ դիտելով իր թափառուն եւ թափանցող ակնարկովը, մարդուն անձնական ուժը տպաւորիչ կը դառնար:

Առաջին տեսակցութենէ մը ետքը, չգարմացայ լսելով որ՝ Ճէմալ մարդ մըն էր, որուն համար սպաննութիւնը եւ օրինական դատապարտութիւնը պարզ խնդիրներ էին: Բոլոր ժէօն Թիւրքերուն նման, չափազանց խոնարհ ծագում ունէր: Միութիւն Գե Առաջդիմութիւն Բօմբիթէին շատ կանուխէն անդամակցած էր, եւ իր անձնական հեղինակութիւնը եւ կամապաշտութիւնը շուտով զինքը անոր պարագլուխներէն մէկը դարձուցած էին: Նազըմի

սպաննութենէն ետքը, Ճէմալ Պոլիսի զինուորական կառավարիչ եղած էր. այս պաշտօնին մէջ իր գլխաւոր պարտականութիւնն էր՝ տիրող իշխանութեան հակառակորդները ասպարէզէն վտարել: Այս կուսակցական պաշտօնը ան կատարեց մեծ տաղանդով եւ այն սարսափը՝ որ յաջորդեց, մեծ մասով Ճէմալի գործն էր: Ետքէն, Ճէմալ Դահլիճի անդամ եղաւ, բայց չի կրցաւ իր ընկերակիցներուն հետ ներդաշնակօրէն գործել. ան միշտ վրդովիչ ընկեր մըն էր: Համաձայնութեան հետ խզումի նախընթաց օրերուն, ան հանրութեան մէջ ֆրանսասէր մը նկատուած էր: Ինչ զգացում որ ալ Ճէմալ տածած ըլլայ Համաձայնութեան հանդէպ, ան քիչ ճիգ գործեց ծածկելու իր արհամարհանքը՝ Դերմաններուն հանդէպ: Կը պատմուի թէ՛ անիկա իրենց ներկայութեանը կը քիֆէր անոնց, անշուշտ թիւրքերէն լեզուով. եւ անիկա թիւրք կարեւոր հազուագիւտ պաշտօնատարներէն մէկն էր՝ որ երբեք անոնց իշխանութեանը տակ չի նկատու: Իրողութիւնը ա՛ն էր որ՝ Ճէմալ կը ներկայացնէր այն ծագումը՝ որ արագօրէն գերակշռութիւն կը շահէր թիւրք քաղաքականութեան մէջ — համաթրքութիւն: Ան կ'ատէր օսմանեան երկիրին հպատակ ժողովուրդները, Արաբները, Յոյները, Հայերը, Չէրքէզները, Հրեաները եւ իր փափաքն էր՝ թրքացնել ամբողջ Կայսրութիւնը: Իր անձնական փառատենչութիւնը զինքը յաճախ վէճի կը բռնուցնէր Էնվէրի եւ Թալէադի հետ, որոնք քաջի՛ անգամներ ինծի ըսած են թէ՛ չէին կրնար զայն զսպել: Այս պատճառով էր որ, ինչպէս ըսի, անոնք ուրախ էին Ճէմալի երթալը տեսնելով. — ո՛չ թէ իրապէս յուսալնուն որ՝ ան Սուէզի Ջրանցքը կը գրաւէ եւ Անգլիացիները Եգիպտոսէն կը վտարէ: Իբր օրինակ, այս պաշտօնը որոշակի կը պարզէ այն անշահ կազմակերպութիւնը՝ որ այդ ատեն գոյութիւն ունէր Թիւրքիայի մէջ: Իբր ծովային նախարար, Ճէմալի տեղն էր ծովային նախարարութիւնը: Փոխանակ աշխատելու այս պաշտօնական ասպարէզին մէջ, նաւատորմիդին պետը կը դրկուէր բանակ մը վարելու, Սուրիայի եւ Սինայիի արեւակէզ աւազներուն վրայ:

Սակայն, Ճէմալի արշաւանքը կը ներկայացնէր ամէնէն թատերական ջանքը, հաստատելու իր զինուորական կարողութիւնը՝ Համաձայնականներուն դէմ: Երբ Ճէմալ հեռացաւ կայսրանէն, ամբողջ թիւրք ժողովուրդը զգաց թէ՛ պատմական վայրկեան մը հասած էր: Կէս դարէ պակաս ժամանակաշրջանի մը միջոցին, Թիւրքիա կորսնցուցած էր իր հողամասին մեծագոյն մասը. բայց ոչինչ ա՛յնչափ վիրաւորած էր իր ազգային հպարտութիւնը՝ քան Եգիպտոսի անգլիական գրաւումը: Այդ գրաւու-

մին ամբողջ ընթացքին, թիւրք վեհապետութիւնը ճանչցուած էր: Սակայն, թիւրքիա Մեծ Բրիտանիայի դէմ պատերազմ յայտարարելուն պէս, Բրիտանացիները վերջ դրած էին այդ առասպելին եւ պաշտօնապէս գրաւած էին այդ մեծ նահանգը: Ճէմալի արշաւանքը թիւրքիայի փոխարինութիւնն էր՝ Անգլիայի այդ արարքին: Թիւրք ժողովուրդին յայտարարուած էր թէ՛ պատերազմին իսկական նպատակը՝ անհետացող թիւրքիան վերականգնել էր, եւ այդ մեծ ձեռնարկին մէջ՝ Եգիպտոսի վերստացումը՝ առաջին քայլն էր միայն: Թիւրքերը գիտէին նաեւ թէ՛ անգլիական վարչութեան տակ՝ Եգիպտոս բարգաւաճ երկիր մը եղած էր եւ թէ՛, հետեւաբար, մեծ գանձ պիտի հայթայթէր յաղթականին: Զարմանալի չէ ուրեմն որ՝ Ճէմալի մեկնումին յաջորդեցին թիւրք ժողովուրդին կեցցէները:

Գրեթէ նոյն միջոցներուն, էնվէր մեկնեցաւ ստանձնելու թիւրքիայի ուրիշ զինուորական ձեռնարկներուն հրամանատարութիւնը — Կովկասի վրայէն Ռուսիայի դէմ յարձակումը: Հոս ալ կային «վերագրաւելի» թրքական նահանգներ: 1878ի պատերազմէն ետքը, թիւրքիա հարկադրուած էր Ռուսիայի թողուլ զանազան հողամասեր՝ Կասպից եւ Սեւ ծովերուն միջեւ, զխաւորաբար բնակուած Հայերէն. ահա այս երկիրն էր որ՝ էնվէր կը ձեռնարկէր վերանուանել հիմա: Բայց էնվէր մեկնած ատեն ցոյցի առարկայ չեղաւ: Ան լուռ եւ աննշմար գնաց: Այս երկու մարդերուն մեկնումովը պատերազմը իրապէս սկսած էր:

Հակառակ այս զինուորական ձեռնարկներուն, ռազմականէ տարբեր պատրաստութիւններ կը տեսնուէին Պոլիսի մէջ: Այդ միջոցին — 1914ի վերջին մասին մէջ — Պոլիսի արտաքին յատկանիշները միայն պատերազմ կը մատնէին, բայց հիմա յանկարծ ան դարձած էր խաղաղութեան մեծ կեդրոնը: Անգլիական նաւատորմիդը շարունակ կը սպառնար Տարտանէլի եւ ամէ՛ն օր թիւրք զօրախումբեր կ'անցնէին փողոցներէն: Բայց այդ գործունէութիւնը չէ՛ որ զխաւորաբար կը գրաւէր ուշադրութիւնը գերման Դեսպանատունին: Վանկէնհայմ կը խորհէր միակ բանի մը եւ միակ բանի մը վրայ միայն: Այս գերման սուտ-կտրիճը յանկարծ հաշտասէր դարձած էր: Որովհետեւ ան հիմա ըմբռնած էր թէ՛ մեծագոյն ծառայութիւնը զոր գերման Դեսպան մը կրնար մատուցանել իր Կայսրին, պատերազմին վերջ տալն էր, այն տեսակ պայմաններով՝ որոնք Գերմանիան փրկէին հիւժումէ եւ նոյն իսկ կործանումէ: Ձեռք բերել կարգադրութիւն մը՝ որ իր հայրենիքը վերահաստատէր ազգերու ընկերութեան մէջ:

Նոյնմբերի մէջ, Վանկէնհայմ սկսաւ այս նիւթին վրայ

ճառել: Կ'ըսէր թէ՛ Գերմանիայի կազմակերպութեանը մաս կը կազմէ ո՛չ միայն պատերազմի պատրաստ ըլլալ կատարելապէս, այլ նաեւ հաշտութեան: «Իմաստուն զօրավար մը, երբ կռիւի կը սկսի, միշտ պատրաստ ունի նահանջին համար իր յատակագիծերն ալ, այն պարագային՝ երբ յաղթուի», կ'ըսէր գերման Դեսպանը: «Այս սկզբունքը ճշդօրէն կը պատշաճի նաեւ պատերազմ սկսող ազգի մը: Պատերազմի մասին միակ ստոյգ բան մը կայ — եւ ան ալ սա՛ է թէ՛ օր մը պիտի վերջանայ: Այսպէս, երբ մենք պատերազմ ծրագրենք, մենք պէտք է նկատի ունենանք նաեւ հաշտութեան պայքար մը»:

Բայց այդ ատեն Վանկէնհայմ այս փիլիսոփայական սկզբունքէն աւելի՛ շօշափելի բանով մը շահագրգռուած էր: Գերմանիա անմիջակապ պատճառներ ունէր թշնամութիւններուն վերջ գտնելը փափաքելու, եւ Վանկէնհայմ այդ պատճառներուն վրայ կը խօսէր անկեղծօրէն եւ անպատկառօրէն: Կ'ըսէր թէ՛ Գերմանիա կարճ տեւող պատերազմի մը համար միայն պատրաստուած էր, որովհետեւ կը յուսար վեց ամիսէն աւելի չտեւող երկու կարճ ճակատամարտներու մէջ ձրանսան եւ Ռուսիան ճգմել: Այս ծրագիրը բացորոշապէս ձախողած էր եւ քիչ հաւանականութիւն կար որ՝ Գերմանիա շահէր պատերազմը: Վանկէնհայմ երկարօրէն բացատրեց ինձի ատիկա. «Գերմանիա, աւելցուց, մեծ սխալ մը պիտի գործէր, եթէ յամառէր հիւժելու աստիճան կուռի, որովհետեւ այդ տեսակ կռիւ մը՝ իր գաղթավայրերուն, իր առեւտրական նաւատորմին եւ իր ամբողջ տնտեսական եւ առեւտրական կարգերուն վերջնական կորուստը պիտի նշանակէր»: Վանկէնհայմ Օգոստոսի մէջ ինձի ըսած էր. «Եթէ երեսուն օրուան մէջ Փարիզը չզրաւենք, յաղթուած ենք»: Եւ թէ՛ եւ Մառնի ճակատամարտէն ետքը իր հաւատքը քիչ մը փոխուած էր, բայց չէր ջանար ծածկել այն սլարագան թէ՛ յարձակողական մեծ կռիւը տկարացած էր, թէ՛ միակ բանը՝ որուն կրնային յառիլ Գերմանները, դանդաղ, հիւժող պատերազմ մըն էր, եւ թէ՛ ինչ որ կրնային ձեռք բերել գոյութիւն ունեցող կացութենէն՝ երկարածիք մարտնչում մըն էր: Այս անգամ սխալ մը գործեցինք: Ըսաւ Վանկէնհայմ, երկարատեւ պատերազմի մը համար չի պարէնաւորուելով. ասիկա սխալ մըն էր, զոր սակայն չպիտի կրկնենք: Յաջորդ անգամ, հինգ տարի տեւելու բաւականաչափ պղինձ եւ բամբակ պիտի մթերենք»:

Վանկէնհայմ անմիջական հաշտութիւն ուզելու ուրիշ պատճառ մըն ալ ունէր. ատիկա պատճառ մըն է՝ որ բաւական լոյս կը սփռէ գերման դիւանագիտութեան անպատկառութեանը

վրայ: Այն պատրաստութիւնը՝ զոր Թիւրքիա կը կատարէր Եգիպտոսը նուաճելու համար, այս գերման Դեսպանին շատ սրտնեղութիւն եւ մտահոգութիւն կը պատճառէր: Ան չափազանց կը վրդովուէր այն կորովէն՝ զոր Թիւրքերը կը ցուցնէին այս ձեռնարկին մէջ: Նախապէս բնականաբար խորհեցայ թէ՛ Վանկէնհայմ կը վախնար որ Թիւրքիա պիտի յաղթուէր: Սակայն, ան խոստովանեցաւ ինծի թէ՛ իր ճշմարիտ վախը ան էր որ՝ իր դաշնակիցը կը յաջողէր: Եգիպտոսի մէջ Թրքական յաղթական պատերազմ մը, բացատրեց Վանկէնհայմ, կրնար լրջօրէն խանգարել գերման ծրագիրները: Եթէ Թիւրքիա նուաճէր Եգիպտոսը, բնականաբար հաշտութեան սեղանին վրայ պիտի պնդէր այդ մեծ նահանգը սեփականել եւ Գերմանիայէն պիտի ակնկալէր ուժ տալ այդ պահանջումին: Բայց Գերմանիա դիտաւորութիւն չունէր Թիւրք Կայսրութեան վերահաստատումը քաջալերելու: Այդ ատեն, Գերմանիա կը յուսար Անգլիայի հետ հասկացողութեան մը գալ՝ Արեւելքի մէջ շահերու բաժանումի բնոյթը ունեցող հիմի մը վրայ: Գերմանիա ամէն բանէ առաջ կ'ուզէր ձեռք անցնել Միջագետքը, իբր անխուսափելի մաս իր Համպուրկ-Պաղտատ ծրագիրին: Ասոր փոխարէն, ան պատրաստ էր հաւանի՝ Եգիպտոսի Անգլիայի կցուելուն: Այդ ատեն, Գերմանիայի ծրագիրը ան էր որ՝ ինք եւ Անգլիա բաժնէին Թիւրքիայի երկու գերեցկագոյն երկիրները: Ան էր մէկը այն առաջարկներէն՝ զոր Գերմանիա կը մտադրէր ներկայացնել Վանկէնհայմի ծրագրած հաշտութեան ժողովին, եւ որոշ էր որ՝ Թուրքիայի Եգիպտոսը նուաճելը՝ կնճռոտութիւններ պիտի բանար այդ ծրագիրը յաջողցնելու ճամբուն մէջ: Պէտք չկայ երբեք փաստելու՝ Գերմանիայի դիրքին բարոյականին մասին՝ հանդէպ իր զինակիցին՝ Թիւրքիայի: Ամբողջ եղելութիւնը կը ներդաշնակուէր արտաքին յարաբերութիւններու մէջ Գերմանիայի հետապնդած «իրապաշտութեան» քաղաքականութեանը:

1814ի վերջին մասին եւ 1915ի սկիզբի մասին մէջ, գրեթէ բոլոր գերման դասակարգերը անձկոտ կերպով հաշտութիւն կը սպասէին եւ իրենց ակնարկը սեւեռած էին դէպի Պոլիս՝ իբր ամէնէն խոստմնալից վայրը՝ ուր հաշտութեան բանակցութիւնները ամէնէն նպաստաւոր կերպով կրնային սկսիլ: Գերմանները համոզուած էին որ՝ հաշտարարը նախագահ Ուիլսըն պիտի ըլլար: Իրաւցնէ՛, այդ կարողութիւնը ունեցող ուրիշ որեւէ մէկուն վրայ վայրկեան մը անգամ չի խորհեցան երբեք: Նկատի առնուելիք միակ կէտը որ կը մնար՝ նախագահին մօտենալու լաւագոյն կերպն էր: Այդ բանակցութիւնները՝ մեծ հաւանականութիւնով պիտի կատարուէին Եւրոպայի ամերիկեան Դեսպաններէն

մէկուն միջոցով: Բացորոշ էր որ՝ Գերմանիա թշնամի մեծ մայրաքաղաքներու ամերիկեան Դեսպաններուն հետ հաղորդակցելու միջոց չունէր. ուրիշ պարագաներ ալ գերման պետական-մարդերը մոզեցին Թիւրքիայի ամերիկեան Դեսպանը աչքի ունենալ:

Այս միջոցին, Պոլիսի մէջ երեւցաւ գերման դիւանագէտ մը, որ նորագոյն ժամանակներու պատմութեան մէջ մեծ տեղ գրաւած է — Տքթ. Ռիխարտ ֆօն Քիւլման, ետքէն Գերմանիայի արտաքին գործերու նախարար: Վերջին հինգ տարիներու ընթացքին, Տքթ. ֆօն Քիւլման երեւցած է ամէն ո՛ր որ դիւանագիտական գաղտնի կարեւոր բանակցութիւններ տեղի ունեցած են գերման Կայսրութեան կողմէ: Իշխան Լիխնօվսքի նկարագրած է անոր գործունէութիւնը Լոնտոնի մէջ 1913 եւ 1914ին. ան աւելի բացայայտօրէն երեւցաւ Պրէսդ-Լիլովսքի անշնորհ հաշտութեան դաշնագիրին մէջ: Պատերազմին սկսելէն անմիջապէս ետքը, Տքթ. ֆօն Քիւլման Պոլիս եկաւ, իրր գերման Դեսպանատունի խորհրդական, յաջորդելով ֆօն Մուլթիուսի, որ դրօշի տակ կոչուած էր: Իր նշանակումը միակ պատճառով մը յարմար էր, որովհետեւ Քիւլման Պոլիս ծնած էր եւ իր երիտասարդութիւնը հոն անցուցած էր, իր հայրը Անատոլուի երկաթուղիին տնօրէնը ըլլալուն: Հետեւաբար, ան Թիւրքերը կը ճանչնար ա յապէս՝ ինչպէս այն միակ մաքրը՝ որ շատ մը տարիներ անոնց հետ ապրած է: Անձնապէս, ան դիւանագիտական գաղութին ապացուցուց՝ իր կարեւոր ուժ մը ըլլալը: Ան իմ վրաս ոչ թէ նշմարելիօրէն կոուսաւէր, այլ շատ հեզահամբոյր մարդու մը տպաւորութիւնը գործեց: Յայտնապէս փափարող էր ամերիկեան Դեսպանատունին հետ բարեկամ ըլլալու եւ մեզի ամէնուս համար մասնաւոր հրապոյր մը ունէր, որովհետեւ նոր դարձած էր խրամներէն եւ մեզի շատ կենդանի պատկերներ կը պարզէր ռազմաճակատի կեանքէն: Այդ ատեն, մենք ամէնքս բուն կերպով շահագրգռուած էինք ժամանակակից պատերազմի կերպոյրը եւ խրամային պատերազմներու մասին Քիւլմանի նկարագրած մանրամասնութիւնները՝ շատ ցորեկէ-ետքեր եւ իրիկուններ՝ կը թովէին մեզ: Խօսակցութեան իր միւս սիրական նիւթն էր Ֆեդերակաւս ֆալսապոլիտիկը [Welt-Politik] եւ բոլոր արտաքին խնդիրներու մասին նշանակելի կերպով քաջատեղեակ կ'երեւար ինծի: Այդ ատեն, ֆօն Քիւլմանը, կարեւոր մարդ մը չի նկատեցինք. սակայն այն ճարտարութիւնը որով կը ծառայէր իր գործին՝ ամէնուն ուշադրութիւնը գրաւեց, նոյն միջոցին իսկ: Բայց շուտով, սկսայ զգացում մը ունենալ թէ՛ ան հզօր ազդեցութիւն մը կը գործադրէր խաղաղ եւ կակուղ կերպով մը: Քիչ կը խօսէր, բայց կը զգայի որ՝ ամէն բանի կ'ուն-

կնդրէր եւ իր միտքին անծանօթ ամէն կարգի տեղեկութիւններ կ'ամբարէր: Յայտնապէս Վանկէնհայմի մօտաւորագոյն մտերիմն էր, եւ այն մարդն էր, որուն կապուած էր Դեսպանը, գերման արտաքին գործերու նախարարութեան հետ իր յարաբերութիւններուն մէջ: Դեկտեմբերի կէսին միջոցները, Գոն Գիւլման Պերլին մեկնեցաւ, ուր մնաց երկու շաբաթի չափ: Իարծին, 1915 Յունվարի սկիզբները, գերման Դեսպանատունի մթնոլորտին մէջ նշմարելի փոփոխութիւն մը կար: Մինչեւ այդ ատեն, Վանկէնհայմ հաշտութեան բանակցութիւններուն վրայ խօսած էր քիչ կամ շատ անպաշտօն կերպով, բայց հիմա խնդիրը ձեռք կ'առնէր մասնաւոր կերպով: Հասկցայ որ՝ Գիւլման Պերլին կանչուած էր՝ այդ խնդիրին վերջնագոյն մանրամասնութիւններուն ծանօթանալու եւ վերադարձած էր այն վերջնական հրահանգներով՝ որոնց համեմատ պիտի գործէր Վանկէնհայմ անմիջապէս: Գերման Դեսպանին հետ հաշտութեան վրայ իմ բոլոր խօսակցութիւններուս մէջ, Գիւլման միշտ հեռանկարին մէջ կը պտըտկէր. խիստ կարեւոր տեսակցութեան մը միջոցին, ան ներկայ ալ էր, թէեւ բնաւ չմասնակցեցաւ խօսակցութեան. իր դերը եղաւ, ինչպէս միշտ, երկրորդական եւ լուռ կերպով հետաքրքիր ունկնդիրի դերը:

Վանկէնհայմ ինծի ծանուց թէ՛ 1915 Յունվարը սքանչելի շրջան մը պիտի ըլլար պատերազմը վերջացնելու: Իտալիա դեռ պատերազմի մտած չէր, թէեւ ամէն պահառ կար հաւատալու թէ՛ պիտի մասնակցէր գարունին: Պուլկարիա եւ Ռումանիա դեռ չէզոք կը կենային, թէեւ ո՛չ մէկը չէր յուսար որ իրենց սպասողական դիրքը տեւական ըլլար: Ֆրանսա եւ Անգլիա կը պատրաստուէին առաջին «գարունի յարձակողական»ներուն եւ Գերմանները վստահ չէին թէ՛ ան չպիտի յաջողէր: Իրաւցնէ՛, անոնք շատ կը վախնային որ՝ գերման բանակները աղէտի հանդիպէին: Բրիտանական եւ ֆրանսական մարտանաւերը կը խմբուէին Տարտանէլ. եւ գերման ընդհանուր սպայակոյտը եւ Պոլիս գտնուող բոլոր զինուորական եւ ծովային փորձագէտները կը հաւատային որ՝ համահայտական մարտանաւերը կրնային իրենց ճամբան բանալ եւ մայրաքաղաքը գրաւել: Այդ միջոցին, շատ Թիւրքեր պատերազմէ գզուած էին եւ Գերմանիա միշտ նկատի ունէր որ՝ Թիւրքիա կրնար անջատ հաշտութիւն կնքել: Ետքէն հասկցայ թէ՛ ո՛ր ատեն որ զինուորական կացութիւնը Գերմանիայի աղէտաւոր երեւար, ան միշտ հաշտութեան վրայ կը խորհէր, բայց եթէ կացութիւնը բարւոքէր, ան անմիջապէս նորէն՝ ռազմասէր պիտի դառնար. հիւանդ-սատանայի եւ առողջ-սատանայի պարագան էր ադ: Սակայն, ո՛րչափ ալ Վանկէնհայմ 1915 Յունվարին բուռն

կերպով հաշտութեան փափաքէր, չափազանց ակներեւ էր որ՝ տեւական հաշտութեան մը վրայ չէր խորհեր: Այդ ատեն, հաշտութեան ամէնէն մեծ արգելքը այն պարագան էր որ՝ Գերմանիա նշան չէր ցուցներ իր ոսիրներուն ցաւելու եւ ներկային՝ Վանկէնհայմի վարմունքին մէջ սուգի ամենաթեթեւ արտայայտութիւնը իսկ չի կար: Գերմանիա մոլար ենթադրութիւն մը ըրած էր. ուրիշ ոչինչ: Ինչ որ Վանկէնհայմ եւ ուրիշ Գերմաններ կը տեսնէին կացութեան մէջ, սա էր թէ՛ ցորենի, բամպակի եւ պղինձի մթերքը անբաւական էր երկարատեւ պատերազմի մը: Վանկէնհայմի հետ իմ տեսակցութիւններու նօթերուս մէջ կը գտնեմ իր յաճախակի գործածելը սա տեսակ բացատրութիւններ «յաջորդ պատերազմ», «յաջորդ անգամ», եւ ներքնովին հեռատեսելով հիմակուանէն հսկայագոյն ուրիշ աշխարհաւերութիւն մը, ան տիրող junker-զինուորական դասակարգին մտայնութիւնը միայն կը ցուցնէր: Յայտնապէս, Գերմանները իրաւախոհութիւն մը կ'ուզէին — տեսակ մը զինադադար — ինչ որ իրենց զօրավարներուն եւ ճարտարուեստի պետներուն ժամանակ պիտի տար յաջորդ պատերազմին պատրաստուելու: Այդ ատեն, մօտաւորապէս չորս տարի առաջ*, Գերմանիա կ'առաջարկէր այն նո՛յն ձեւով հաշտութեան բանակցութիւնները, զորս անկէ ետքը քանի՛ անգամներ առաջարկեց եւ կ'առաջարկէ հիմա՛ ալ: Վանկէնհայմի ծրագիրը ան էր որ՝ պատերազմիկ տէրութիւններու ներկայացուցիչները սեղանի մը շուրջը խմբուէին եւ գործերը կարգադրէին «տո՛ւր եւ ա՛ռ»ի [«give and take»] սկզբունքին համաձայն: Կ'ըսէր թէ՛ անխմաստ էր պահանջել որ՝ իւրաքանչիւր կողմը կանխապէս իր պայմանները որոշէ:

— Երկու կողմէ իրենց պայմանները նախապէս որոշելը՝ պիտի փնտցնէր ամբողջ գործը, ըսաւ ան: Ընելիքնիս ի՞նչ պիտի ըլլար: Անշուշտ Գերմանիա պահանջքներ պիտի ընէր՝ զորս միւս կողմը ծիծաղելի կերպով անհեթեթ պիտի նկատէր: Համաձայնութիւնը պիտի առաջարկէր պայմաններ՝ որոնք պիտի կատողեցնէին Գերմանները: Իբր արդիւնք, երկու կողմերը այնչափ պիտի զրգուռէին որ՝ ժողով տեղի չպիտի ունենար: Ո՛չ — եթէ մենք իրապէս կ'ուզենք վերջացնել պատերազմը, պէտք է զինադադար մը կնքենք: Անգամ մը որ դադրեցնենք պատերազմը, զայն կրկին չպիտի սկսինք: Պատմութիւնը չի ներկայացնել մեծ պատերազմի մը մէջ պարագայ մը՝ ուր զինադադարը հաշտութիւնով վերջացած չըլլայ: Նոյնը պիտի ըլլայ այս պարագային ալ»:

* Ինչպէս հեղինակին Առաջաբանին թուականէն կը հասկցուի, այս գեղքը հրատարակուած է 1918ին, Նիւ-Եօքսի մէջ:

եւ սակայն, Վանկէնհայմի խօսքերէն՝ Գերմանիայի պայմաններուն հակումին մասին հարեւանցի զաղափար մը կազմեցի: Այդ պայմաններէն մէկն էր՝ Եզրպտոսի եւ Միջագետքի վերեւ յիշուած խնդիրը: Վանկէնհայմ ոգեւին կը պնդէր որ՝ Գերմանիա մշտական նաւային խարխիս ունենայ Պելճիքայի մէջ, որով իր նաւատորմը ամէն ատեն պաշարումով կարենայ Անգլիայի սպառնալ եւ այդպէսով ապահովէ «ծովերու ազատութիւն»ը: Գերմանիա ամէն կողմ կ'ուզէր հանքածխային իրաւունքներ. այդ պահանջքը անիմաստ կը թուէր, որովհետեւ Գերմանիա խաղաղութեան ժամանակ միշտ վայելած է այդ տեսակ իրաւունքներ: Գերմանիա կրնար Յրանալի տալ Լօռէնէն բաժին մը եւ Պելճիքայի մէկ մասը — Թերեւս Պրիւքսէլը — տուգանքի հատուցումի մը փոխարէն:

Վանկէնհայմ խնդրեց որ՝ Գերմանիայի առաջարկը ներկայացնեմ ամերիկեան կառավարութեան: Իմ Ուաշինկտըն ուղղած նամակս 11 Յունվար 1915 թուականը կը կրէ: Ան լիովին կը պարզէ այդ ատեն տիրող ներքին կացութիւնը եւ այն պատճառները թէ՛ ինչո՞ւ Գերմանիա եւ Թիւրքիա հաշտութիւն կ'ուզէին:

Այս դէպքին յատկանշականօրէն շահեկան մասը ան է որ՝ Գերմանիա որոշապէս կ'անտեսէր Աւստրիան: Աւստրիական Դեսպանը՝ Փալլավիչինի՝ ոչինչ չէր գիտեր մշակուող բանակցութիւններէն, մինչեւ որ ես ինքս զանոնք տեղեկացուցի իրեն: Գերման Դեսպանը այսպէս անտեսելով իր զինակիցը՝ անձնական արհեստարհանքի նպատակ չունէր. անիկա միայն ճշորէն անոր հետ կը վարուէր այնպէս՝ ինչպէս իր պետութեան արտ. գործերու նախարարութիւնը՝ Վիէնայի հետ — ո՛չ թէ իբր հաւասարի, այլ իրականապէս իբր ծառայի: Աշխարհ բաւական ծանօթ է՝ Գերմանիայի՝ Աւստր-եւ-Հունգարիան զինուորական եւ դիւանագիտական տեսակէտով ծծելուն. բայց թէ՛ Վանկէնհայմ այնչափ կարեւոր շարժում մը ընէ որ՝ հաշտութեան բանակցութիւններ փորձէ եւ թողու որ՝ Փալլավիչինի անոր տեղեկանայ երրորդ անձի մը միջոցով, կ'ապացուցանէ որ՝ 1915 Յունվարէն ի վեր, աւստր-եւ-հունգարական կայսրութիւնը դադարած էր անկախ ազգ մը ըլլալէ:

Անշուշտ այդ առաջարկը ո՛չ մէկ հետեւանք չունեցաւ: Մեր կառավարութիւնը մերժեց միջամտել, անտարակոյս ժամանակը պատեն չի նկատուելով: Թէ՛ Գերմանիա եւ թէ՛ Թիւրքիա, ինչպէս պիտի յայտնեմ, այս խնդիրին անդրադարձան հուրէն: Այս մասնաւոր բանակցութիւնը վերջ գտաւ Մարտի վերջին մասին մէջ, երբ Բիւլման մեկնեցաւ Պոլիսէն, Լա Հէյի դեսպան ըլլալով: Ամերիկեան Դեսպանատուն եկաւ, իր հրաժեշտի այցելութիւնը կատարելու, այնչափ հրապուրիչ, այնչափ հանոյական եւ այնչափ բարեմոյն՝ որչափ չէր երբեք: Չեւքս սեղմելով, շէնքէն մեկնած ատեն՝ իր վերջին խօսքերը եղան յաջորդող դէպքերը բնականաբար պատճառ եղան որ զանոնք վերյիշեմ. —

— Իրեք ամիսէն հաշտութիւն պիտի կնքենք, Վսեմաշուք!
 Այս պզտիկ տեսարանը տեղի ունեցաւ եւ այս գեղեցիկ նախատեսութիւնը կատարուեցաւ 1915 Մարտին:

ԺԶ. ԳԼՈՒԽ

ՅԻՒՐԲԵՐԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՆ ՊՈԼԻՍԷՆ ՓԱԽՉԻԼ ԵՒ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՄԷՋ ՆՈՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՄԸ ՀԱՍՏԱՏԵԼ

ՀԱՄԱԶԱՅՆԱԿԱՆ ՆԱԽԱՏՈՐՄԸ ԿԸ ՌՄՐԱԿՈՍԵ ՏԱՐՏԱՆԵԼԸ

Հաւանօրէն բան մը՝ որ Գերմանիան հաշտութեան այս բաղձանքին մղեց՝ Տարտանէլի կացութիւնն էր: Յունվարի սկիզբը, երբ Վանկէնհայմ կը յորդորէր ինձի Ուաշինկտըն նամակ գրել, Պոլիս ծայրայեղ յուզումի վիճակի մը մէջ էր: Տեղեկացուած էր թէ՛ Դաշակիցները քառասուն մարտանաւերով նաւատորմի մը խմբած էին Տարտանէլի բերանը եւ մտադիր էին նեղուցէն անցնիլ փորձելու: Ինչ որ կացութեան մասնաւորաբար լարուած գոյն մը տուաւ՝ այն հաւատքն էր թէ՛ այդ տեսակ ձեռնարկ մը պիտի յաջողէր այդ ատեն, Պոլիսի մէջ տիրող ընդհանուր գաղափարը աս էր: Վանկէնհայմի հաւատքն ալ աս էր՝ բարեփոխուած ձեւով մը. նոյնը կը հաւատար նաեւ ֆօն տէր Կօլց, որ հաւանօրէն Տարտանէլի պաշտպանութեանը մասին այնչափ քաջատեղեկ էր, որչափ ուրիշ մասնագէտ մը, որովհետեւ չորս տարի Թիւրքիայի զինուորական կրթիչը եղած էր: Օրագրիս մէջ կը գտնեմ ֆօն տէր Կօլցի ճիշդ կարծիքը այս կէտին մասին, Վանկէնհայի կողմէ ինձի տեղեկագրուած. զայն կը յիշատակեմ հոս նոյնութիւնով, ճիշդ այն ատեն գրուածին պէս. « Թէեւ, կ'ըսէր, գրեթէ անկարելի է Տարտանէլը ճեղքել, բայց, եթէ Անգլիացիները ընդհ. պատերազմին մէջ կարեւոր շարժում մը նկատեն զայն, կրնան տասը նաւ զոհելով ներս մտնել. եւ ատիկա կրնան ընել շատ արագ կերպով եւ ռմբակոծութեան սկսելէ տասը ժամ ետքը կրնան Մարմարայի մէջ գտնուիլ »:

Ճիշդ այն օրը որ՝ Վանկէնհայմ ֆօն տէր Կօլցի այս մասնագիտական կարծիքը հաղորդեց ինձի, ինձմէ խնդրեց ամերիկեան Դեսպանատունին մէջ պահել իր արժեղէնները պարունակող քանի մը արկղներ: Անկասկած իր մեկնումին համար պատրաստութիւն կը տեսնէր:

Տարտանէլի ռմբակոծութեանը մասին Քրօմըրի տեղեկագիրը կարդալով, կը տեսնեմ որ ծովակալ Սըր Ճօն Ֆիշըր, այդ ատեն առաջին Մովակալ, յաջողութեան գինը տասերկու նաւ կը զնէր:

կը տեսնուի որ՝ ֆօն տէր Կօյց եւ Ֆիշըր զգալապէս չէին տարբեր իրենց գնահատումին մէջ :

Համաձայնական ռմբակոծութեան այս առաջին շուկաները երբ մեզի հասան, Թիւրքիայի կացութիւնը չափազանց յուսահատական էր : Ամէն կողմ վախի եւ տագնապի նշաններ կային, որոնք ազդած էին ո՛չ միայն ժողովուրդին, այլ նաեւ պաշտօնական շրջանակներու վրայ : Ամէն կողմէ՝ երկիրին վրայ ազէտներ կը խուժէին որոշապէս : Մինչեւ 1915 թուականը, Թիւրքիա բան մը չէր ըրած՝ պատերազմին իր մասնակցութիւնը արդարացնող ընդհակառակը, ամէն կողմ ճշմարիտ պարտութեան ենթարկուած էր : Ճէմալ, ինչպէս արդէն տեղեկացուեցաւ, Պոլիսէն մեկնած էր, իբր ապագայ «Եգիպտոսի աշխարհակալ», բայց իր արշաւանքը արիւնյալի եւ նուաստացուցիչ ծախողութիւն մը եղաւ : Կովկասը Ռուսիայի լուծէն փրկելու ձգտող էնվէրի փորձը՝ զինուորական ա՛լ աւելի զարհուրելի ծախողութեան մը յանգեցաւ : Ան արհամարհած էր Դերմաններուն խորհուրդը, որ էր թողուլ որ Ռուսերը առաջանան մինչեւ Սըվազ եւ հո՛ն գործել իր յարձակումը. մինչդեռ ընդհակառակը, ան յանդգնօրէն ջանացած էր ռուսական հող շահիլ Կովկասի մէջ : Այս բանակը պարտուած էր ամէն կէտի վրայ . բայց զինուորական ծախողանքները վերջ չի դրին անոր տառապանքներուն : Թիւրքերը բժշկական եւ առողջապահական չափազանց անբաւական սպասարկութիւն մը ունէին : Թիւրքերը եւ Տիգրանի երեւան եկան թողոր բանակետներուն մէջ եւ այդ հիւանդութիւններէն՝ մահերը հասան 100, 000 անձի : Սոսկալի պատմութիւններ կը հասնէին շարունակ, որոնք կը նկարագրէին այդ զինուորներուն տառապանքները : Թէ Անգլիա Միջագետքը նուաճելու կը պատրաստուէր՝ քաջածանօթ էր, եւ այդ ատեն ո՛չ մէկը պատճառ ունէր հաւատալու թէ՛ նուաճումը չափազանց յաջողէր : Ամէն օր Թիւրքերը կը սպասէին այն լուրին թէ՛ Պուլկարները պատերազմ յայտարարած են եւ Պոլիսի վրայ կը քայնն . անոնք գիտէին թէ՛ այդ տեսակ յարձակում մը՝ անհրաժեշտապէս պատերազմի մէջ պիտի մտցնէր Ռուսաստանի եւ Յունաստանը : Ա՛լ դիւանագիտական զաղտնիք չէր որ՝ Իտալիա կը սպասէր տաք օդերու հասնելուն՝ միանալու համար Դաշնակիցներուն : Այդ պահուն, ռուսական նաւատորմի կը ռմբակոծէր Սեւ Ծովի Տրապան քաղաքը . եւ ամէն օր կը սպասուէր անոր Վոսիօր մուտքը : Այդ միջոցին, ներքին կացութիւնը ողբալի էր . բովանդակ Թիւրքիայի մէջ, ժողովուրդէն հազարաւորներ ամէն օր կը մեռնէին անօթութենէ : Խնդիրը ան էր որ՝ թողոր քաջակամ մարդիկը բանակին մէջ առնուած էին որով միայն շատ քիչ մարդիկ մնացած

էին արտերը մշակելու . աւազակային գրաւումները գրեթէ քանդած էին թողոր առեւտրական գործերը. երեւտական գանձը շատ աւելի սպառած վիճակի մէջ էր, քան բնական ատեն, որովհետեւ Տարտանէլի փակումը եւ Միջերկրականի նաւահանգիստներուն պաշարումը՝ դադրեցուցած էին թողոր ներածումները եւ մաքսային տուրքերը . եւ ժողովուրդին յարաճուն ատելութիւնը հաւանական կը թուէր օր մը պայթիլ Թալէադի եւ իր ընկերակիցներուն դէմ : Եւ ահա, ամէն կողմէ ծաւալուն դժուարութիւններէ պաշարուած, Թիւրքերը զգացին թէ՛ Անգլիայի եւ իր դաշնակիցներուն հզօր նաւատորմի կը մօտենար, որոշած ըլլալով ամրութիւնները քանդել եւ մայրաքաղաքը գրաւել : Այդ ատեն, չի կար ուժ մը՝ որմէ Թիւրքերը այնչափ ուժգնօրէն սոսկային, որչափ կ'ահահաբեկէին բրիտանական նաւատորմիկէն : Դարերու ընթացքին անոր անընդմիջական յաղթանակներուն աւանդութիւնը ամբողջովին գրաւած էր անոնց երեւակայութիւնը : Անիկա իրենց կը թուէր գերմարդկային — այն գերակշիռ ուժը՝ որուն դէմ մաքսուի անօգուտ էր :

Վանկէնհայմ, ինչպէս նաեւ գրեթէ թողոր գերման զինուորական եւ նաւային ուժերը՝ ո՛չ միայն Տարտանէլի գրաւումը կարելի կը նկատէին, այլ կը հաւատային թէ՛ անխուսափելի էր ան : Բրիտանական յաջողութեան կարելիութիւնը՝ վիճաբանութեան ամէնէն սովորական նիւթերէն մէկն էր, եւ, թէ՛ ժողովրդային եւ թէ՛ պաշտօնական կարծիքի ծանրութիւնը կը հակէր դաշնակից նաւատորմի կողմը : Թալէադ խոստովանեցաւ ինծի թէ՛ Նեղուցը ճեղքելու փորձ մը պիտի յաջողէր — ատիկա միայն կախում ունէր Անգլիայի քանի մը նաւ զոհելու կամեցողութենէն : Թալէադ աւելցուց թէ՛ Թիւրքիայի՝ Եգիպտոսի դէմ ուժ մը զրկելուն իրական պատճառն էր Անգլիան շեղեցնել Կէլիպոլուի թերակղզին վրայ յարձակում գործելէ : Տիրող միտքի վիճակը կ'ապացուցուի այն պարագայով որ՝ Յունկար 1ին, Թիւրք կառավարութիւնը երկու կառախումբ պատրաստած էր, որոնցմէ մէկը Սուլթանը եւ իր հետեւորդները Փոքր Ասիա փոխադրելու համար, մինչ միւսը յատկացուած էր Վանկէնհայմի, Փալլավիլիի եւ դիւանագիտական մարմինի մնացած անդամներուն : Յունկար 2ին, Փալլավիլիի հետ լուսաբանական տեսակցութիւն մը ունեցայ : Ան ինծի ցուցուց ուստիկանապետ Պէտրիի կողմէ տրուած արտօնագիր մը՝ զինքը, իր քարտուղարները եւ ծառաները այդ գաղթական կառախումբերէն մէկը մտնելու թոյլատրող : Ան ունէր նաեւ նստարանի տոմսակներ՝ իրեն եւ իր թողոր հետեւորդներուն համար : Ըսաւ թէ՛ իւրաքանչիւր կառա-

խուճը երեք վակոն միայն ունէր, որով կրնար մեծ արագութիւնով ընթանալ. իրեն պատուէր տրուած էր որ՝ ամէն բան պատրաստէ, ազդարարուած ժամուն մեկնելու համար: Վանկէնհայմ ջանք չըրաւ ծածկելու իր վախերը: Յայտնեց ինձի թէ՛ ամէն պատրաստութիւն տեսած էր իր կինը Պերլին զրկելու համար եւ հրաւիրեց Տկն. Մօրկընթաուն անոր ընկերանալ, որպէսզի ա՛ն ալ վտանգի գօտիէն կարենայ փրկուիլ: Վանկէնհայմ վախ յայտնեց որ, — այդ վախը օրուան տիրող զգացումն էր, — յաջող ռմբակոծութիւն մը ծնունդ պիտի տար հրծիգութիւններու եւ ջարդերու՝ Պոլիսի, ինչպէս նաեւ Թիւրքիայի միւս մասերուն մէջ: Այդ տեսակ խառնակութիւններու իբր նախագուշակութիւն՝ յատկանշական մտածում մը արտայայտեց: «Եթէ նաւատորմիդը Տարտանէլը անցնի, ըսաւ, Թիւրքիայի մէջ ո՛չ մէկ Անգլիացիի կեանքը ապահով պիտի ըլլայ — անոնք ամէնքն ալ պիտի կոտորուին»: Որովհետեւ շատ դժուար էր Անգլիացի մը Ամերիկացիէ մը զանազանել, առաջարկեց որ Ամերիկացիներուն տամ՝ կրելու՝ յատկորոշիչ կոծակ մը՝ որ զանոնք պաշտպանէր թիւրք վայրագութենէ: Որովհետեւ համոզուած էի Վանկէնհայմի իրական նպատակին, որ էր ապահով միջոց մը կարգադրել Անգլիացիներու ինքնութիւնը երեւան հանելու եւ այդպէսով զանոնք թրջական խոշտանգումներու ենթարկելու, մերժեցի այդ բարեացակամ թելադրութեան համեմատ շարժիլ:

Ուրիշ դէպք մը՝ կը լուսաբանէ այն զղային լարուածութիւնը՝ որ կը տիրէր այդ Յունկարի օրերուն: Նշմարեցի որ՝ անգլիական Դեսպանատունին մէջ քանի մը փեղկեր բացուած էին. Տկն. Մօրկընթաուն եւ ես հետազօտութեան մը գացինք: Պատերազմին առջի օրերը, կնքած էինք այդ շէնքը, որուն պաշտպանութիւնը ինձի յանձնուած էր, եւ հիմա առաջին անգամն էր որ՝ հոն մտնելու համար կնիքը կը քակէինք: Այդ քննական այցելութենէն մեր դարձէն երկու ժամ ետքը, Վանկէնհայմ զրասնենակս եկաւ, ա՛լ հիմա ծանօթ եղող իր գրգռուած մէկ կերպարանքով:

— Տեղեկութիւն առնուած է որ, ըսաւ, Տկն. Մօրկընթաուն եւ դուք Դեսպանատուն զացած էք, պատրաստելու համար անգլիական ծովակալին՝ որուն շուտով զայն գրաւելուն կը սպասուի!

Հիմա այս բոլորը քիչ մը անհիմաստ կը թուի, որովհետեւ, իրականութեան մէջ, դաշնակից նաւատորմիդը այդ ատեն յարձակում չէր գործեր: Ճիշդ այն պահուն՝ երբ ամբողջ Պոլիս տենդոտ կերպով բրիտանական ռեզիստանսներուն կը սպասէր, Լոնտոնի մէջ բրիտանական Դահլիճը նկատողութեան կ'առնէր միայն թէ՛ այդ տեսակ ձեռնարկ մը յանձնարարելի՞ էր: Դիւանագիտական

ատենագրութիւնը կը ցուցնէ որ՝ Յունկար 2ին, Փեթրոկրատ հեռագրած է բրիտանական Կառավարութեան, խնդրելով որ՝ որեւէ ցոյց մը կատարուի Թիւրքերու դէմ, որոնք Ռուսերը կը ճնշէին Կովկասի մէջ: Թէեւ այդ խնդրանքին քաջայերական պատասխան մը զրկուած էր անմիջապէս, բայց Յունկար 28ին է որ՝ բրիտանական Դահլիճը Տարտանէլի վրայ յարձակումի հրահանգ հանեց վերջնապէս: Ա՛լ գաղտնիք մը չէ՛ որ՝ միաժայն վատահուծիւն չի կար՝ այդ տեսակ ձեռնարկի մը յաջողութեանը համար: Մովակալ Գէրտըն տեղեկագրեց իր հաւատքը թէ՛ «Նեղուցը չէր կրնար ճեղքուիլ, այլ մեծաթիւ մարտանաւերով երկարատեւ գործողութիւններ միայն կրնային յաջողիլ»: Չախողութեան պատիժը, կ'աւելցնէր, պիտի ըլլար Արեւելքի մէջ հեղինակաւորութեան [prestige] եւ ազդեցութեան այն մեծ կորուստը՝ որուն պիտի ենթարկուէր Անգլիա: Թէ՛ այս մարգարէութիւնը ո՛րչափ ճշդօրէն կատարուեցաւ, առիթ պիտի ունենամ ապացուցանելու: Մինչեւ այդ ատեն, նաւային գործողութիւններու հիմնական եւ ընդհանրապէս ընդունուած սկզբունք [axiom] ներէն մէկն էր որ՝ մարտանաւեր պէտք չէին յարձակում փորձել անխախտ հողային ամրութիւններու վրայ: Բայց Դերմանացիները Լիէժի եւ Նամիւռի ամրութիւնները քանդելով, ապացուցած էին շարժուն թնդանօթներու ուժը՝ ամրոցներու դէմ. այս պատճառով, Անգլիայի զանազան շրջանակներուն մէջ կարծիք մը կը տիրէր թէ՛ այդ դէպքերը բարեփոխած էին վերը յիշուած նաւային սկզբունքը: Մր. Չըրիլ, այդ ատեն Մովակալութեան պետ, մեծ հաւատք կը սնուցանէր աւերիչ ուժին վրայ ճիշդ այդ օրերը աւարտած նոր սիւրստրոնկսի մը, — Քուին Էլիզապէթը, — որ ճամբայ ելած էր՝ միանալու Միջերկրականեան նաւատորմիդին:

Մենք, Պոլիսի մէջ, այդ պահուն, ոչինչ գիտէինք այդ խորհրդակցութիւններուն մասին, բայց արդիւնքը ակնհերեւ եղաւ Փետրվարի վերջին մասին մէջ: Փետրվար 19ի ցորեկէ-ետքը, աւստրիական Դեսպան Փալլավիչինի ինձի եկաւ՝ կարեւոր լուրերով: Մարքիզը անհատական մեծ շուք ունեցող անձ մըն էր, բայց յայտնի էր որ՝ այդ օրը ծայրայեղօրէն զղայնացած էր, եւ իրաւցնէ: Երբեք չփորձեց ծածկել իր վախերը: Դաշնակից նաւատորմիդը, ըսաւ, վերսկսած է Տարտանէլի վրայ իր յարձակումներուն եւ այս անգամ ռմբակոծութիւնները արտասովոր կերպով կատարի եղած են: Այդ ատեն, գործերը գէշ կ'ընթանային Աւստրիացիներուն համար. ռուսական բանակները յաղթականօրէն կ'առաջանային. Սերպիա՝ Աւստրիացիները սահմանագլուխէն անդին նետած էր. եւ եւրոպական մամուլը լեցուն էր Աւստրիական Կայսրութեան

փլուզումին կանխազուշակութիւններով : Այդ օրը, Փալլավիչինի վիճակը կատարեալ ցոլացուցին էր այն վտանգներուն՝ որոնք պաշարած էին իր երկիրը : Զգայուն եւ հպարտ մարդ մըն էր ան. հպարտ՝ իր Կայսրին համար եւ հպարտ՝ աւստր-եւ-հունգարական մեծ Կայսրութեան պատկանելուն համար : Իսկ հիմա, կը թուէր ընկճուած ըլլալ այն վախով որ՝ այդ Հապսպուրկեան հսկայ շէնքը, որ անչափ դարերու յարծակումներուն դիմագրաւած էր, արագօրէն քայքայուելով կը փլչէր : Ինչպէս մարդկային շատ էակներ, Փալլավիչինի համակրանքի կը կարօտէր . ո՛չ մէկ համակրանք կրնար գտնել Վանկէնհայմէն, որ զինքը մտերիմ չէր նկատեր եւ հետեւաբար իրեն հետ կը վարուէր իբր ներկայացուցիչին ազգի մը՝ որ դատապարտուած էր Գերմանիայի գերիշխանութեանը հպատակիլ : Թերեւս ադ է պատճառը որ՝ աւստրիական Դեսպանը սովոր էր իր սիրտը ինծի բանալ : Եւ հիմա Դաշնակիցներուն Տարտանէլը ռմբակոծելը՝ իր վիշտերուն լրումը եղաւ : Այդ միջոցին, Կեդրոնի Տէրութիւնները կը հաւատային որ՝ Ռուսիան ամրափակած էին . թէ՛ Տարտանէլը խցած էին, եւ թէ՛ Ռուսիա չպիտի կրնար ո՛չ իր ցորենը՝ արտածել, ո՛չ ալ պատերազմը շարունակելու համար անհրաժեշտ եղող ռազմանիւթը ներածել : Գերմանիա եւ Աւստրիա այսպէս խեղդիչ արքան մը դրած էին իրենց հսկայ թշնամիին կոկորդին, եւ, եթէ այս վիճակը կարենար պահպանուիլ անհունօրէն, Ռուսիայի քայքայումը անխուսափելի պիտի ըլլար : ձիշդ է որ, այդ միջոցին Չարին ուժերը յաղթական պայքար մը կը մղէին եւ ասիկա ինքնին բաւականչափ վրդովիչ էր Աւստրիայի համար. բայց իրենց ներկայ ռազմանիւթի մթերքը ետքէն պիտի սպառէր եւ ան ատեն իրենց զինուորի թիւի գերակշռութիւնը ոչինչի պիտի ծառայէր եւ իրենք անխուսափելիօրէն պիտի քայքայուէին : Բայց եթէ Ռուսիա Պոլիսի տիրանար, իշխելով Տարտանէլի եւ Վոսփորի, պատերազմը շարունակելու համար անհրաժեշտ եղող ամբողջ ռազմանիւթը պիտի կրնար ստանալ մեծագոյն չափով, եւ Կեդրոնի Տէրութիւններու պարտութիւնը կրնար անմիջապէս յաջորդել . եւ Փալլավիչինի կ'ըմբռնէր թէ՛ այդ տեսակ պարտութիւն մը աւելի՛ ծանրակշիռ պիտի ըլլար Աւստրիայի, քան Գերմանիայի : Վանկէնհայմ ինծի յայտնած էր թէ՛ աւստր-եւ-հունգարական Կայսրութեան բաժնուելու պարագային, Գերմանիայի ծրագիրն էր՝ անոր 12,000,000 Գերմանները կցել Հօհէնցօլէրնեան երկրամասին, եւ Փալլավիչինի, անշուշտ, ծանօթ էր այս վտանգին : Այսպէս, Տարտանէլի վրայ Դաշնակիցներու յարծակումը Փալլավիչինի աչքին կը նշանակէր իր երկիրին խաւարումը, որովհետեւ եթէ ուզենք որոշապէս հասկնալ



ՏԿՆ. ՇԷՆՐԻ ՄՕՐԿԸՆԹԱՈՒ

1913 1916 Պոլիսի ամերիկեան Դեսպանին կիցը, Յրանսական Հիւանդանոցի մեծաւորուի բոյր ժառանգի հետ :

իր միտքի վիճակը, պէտք է յիշենք որ՝ ինք հաստատապէս կը հաւատար որ՝ այդ յարծակումը պիտի յաջողէր, — ինչպէս կը հաւատային նաեւ Պոլիս գտնուող ուրիշ բոլոր կարեւոր անձնաւորութիւնները :

Վանկէնհայմ կեանքն ալ այս նոյն հալածող համոզումէն խուովուած էր : Ինչպէս արդէն ցուցուցի. Ռուսիայի ամրափակումը գրիթէ տարամերժօրէն գերման Դեսպանին գործն էր : Ան Պոլիս բերած էր Կոպիներ եւ Պրեզաւուն եւ այս դարձուածքով Թիւրքիան մղած էր պատերազմի : Նեղուցը ճեղքելը աւելի՛ մեծ նշանակութիւն պիտի ունենար, քան Ռուսիան մշտական եւ հզօր

պատերազմի մասնակցող մը դարձնելը : Այդ պիտի նշանակէր — ինչ որ Վանկէնհայմի համար երբեք անկարեւոր նկատում մը չէր — իր անձնական մեծ ձեռնարկին զլատումը : Սակայն, Վանկէնհայմ իր վախը Փալլավիչինի բոլորովին տարբեր կերպով մը կ'արտայայտէր : Իբր ճշմարիտ Գերմանացի, կը դիմէր սպառնալիքներու եւ մեծաբանութեան : Վհատութեան արտաքին նշաններ ցոյց չէր տար. բայց իր ամբողջ մարմինը կատաղութենէ կը դողար : Իր ճակատագիրը չէ՛ որ կ'ողբար, այլ միջոցներ կը փնտռէր վրէժ առնելու : Գրասենեակս կը նստէր, իր սովորական կորովովը կը ծխէր եւ ինձի կը պատմէր այն զարհուրելի բաները՝ զորս կը ծրագրէր ընել իր թշնամիին : Այն բանը՝ որ մասնաւորաբար կը ճշդէր Վանկէնհայմի միտքը, գերման Դեսպանատունին արտակարգադ զիրքն էր : Ան բլուրի մը վրայ կանգնած էր եւ քաղաքին ամէնէն աչքի զարնող շէնքերէն մէկն էր, կատարեալ նշանակէտ մը անգլիացի յանդուգն ծովակալի մը համար : Երիտանական նաւատորմի իր նաւահանգիստ մտնելուն պէս, գրեթէ առաջին առարկան որ տեսանելի պիտի ըլլար, Հօհէնձօյէրններուն այս դեղին շէնքն էր եւ զայն ռմբակոծելու փորձութիւնը անդիմադրելի պիտի դառնար :

Տեսնեմ ինչպէս պիտի համարձակին քանդել Դեսպանատունս, ըսաւ Վանկէնհայմ : Անոնց ընելիքս գիտեմ ! Եթէ միակ ուռւմբ մը արծակեն անոր վրայ, Ֆրանսական եւ անգլիական Դեսպանատունները օդը պիտի հաննէք ! Գացէք ծովակալին ըսէք որ հոգը չպիտի ընէր. ըսէ՛ք անոր նաեւ թէ՛ ատոր համար մեր ուժանակը արդէն պատրաստ է !

Վանկէնհայմ նաեւ մեծ տագնապ կը ցուցնէր՝ Կառավարութեան էսկի-Շէհիբ փոխադրուելու մտադրութեանը մասին : Յունվարի սկիզբը, երբ ամէն մարդ համաձայնական նաւատորմիդին ժամանումին կը սպասէր, պատրաստուած էին Կառավարութիւնը Փոքր Ասիա փոխադրելու : Եւ հիմա, երբ բրիտանական եւ ֆրանսական թնդանօթներու առաջին որոտումին, մասնաւոր կառախումբերը անգամ մըն ալ պատրաստուած էին, Վանկէնհայմ եւ Փալլավիչինի երկուքն ալ յայտնեցին ինձի իրենց չկամութիւնը՝ Սուլթանին եւ կառավարութեան հետ ընկերանալու դէպի Փոքր Ասիա : Եթէ Դաշնակիցները գրաւէին Պոլիսը, Կեդրոնի Տէրութիւններու Դեսպանները ինքզինքնին իրենց մայր-հայրենիքէն անջատուած եւ կատարելապէս Թիւրքերուն ձեռքը ինկած պիտի գտնէին : «Այն ատեն, Թիւրքերը կրնան մեզ իբր պատանդ վար դնել», ըսաւ Վանկէնհայմ : Անոնք դրոշեցին Թալէադը որ՝ գաղթական կառավարութիւնը Ազրիանուպոլիս հաստատէ, ուրկէ

կրնային Պոլիս ելեւմուտք գործել, եւ, մայրաքաղաքին գրաւուելու պարագային, կրնային հայրենիք փախչել : Միւս կողմէ, սակայն, Թիւրքերը մերժեցին անսալ այս թելադրութեան, որովհետեւ Պուլկարիայէ յարձակումէ մը կը վախնային : Վանկէնհայմ եւ Փալլավիչինի հիմա ինքզինքնին գտան երկու կրակներու մէջ : Եթէ Պոլիս մնային, կրնային գերի իյնալ Անգլիացիներուն եւ Ֆրանսացիներուն. միւս կողմէ, եթէ էսկի-Շէհիբը երթային, անհաւանական չէր որ Թիւրքերուն գերի դառնային : Ուշադրութեանս զարկած էին բազմաթիւ ապացոյցներ այն թոյլ կռուանին մասին՝ որուն վրայ հիմնուած էր գերման-եւ-թիւրք զինակցութիւնը, բայց ասիկա ամէնէն բացատրողականն էր : Վանկէնհայմ, ինչպէս ուրիշ ամէն մարդ ալ, գիտէր որ՝ այն պարագային, երբ Ֆրանսացիները եւ Անգլիացիները գրաւէին Պոլիսը, Թիւրքերը իրենց կատաղութիւնը պիտի դարձնէին ո՛չ թէ զլիաւորաբար Համաձայնութեան դէմ, այլ Գերմաններուն դէմ, որոնք զիրենք պատերազմի հրապուրած էին :

Ո՛րչափ ալ հիմա շատ տարօրինակ թուի, սա համոզումը կը տիրէր այն ատեն ամէնուն միտքին մէջ գերագոյն ձեւով — թէ դաշնակից նաւատորմիդին Տարտանէլի վրայ յաջողութիւնը անխուսափելի էր եւ թէ Պոլիսի գրաւումը քանի մը օրուան խնդիր էր : Կը յիշեմ ռզիւոր վինարանութիւն մը, որ տեղի ունեցաւ ամերիկեան Դեսպանատունը, 24 Փետրվարի ցորեկէ-ետքը : Տկն. Մօրկընթաուի շաքաթական ընդունելութեան առիթով էր — հաւաքոյթներ, որոնք գրեթէ միակ պատեհութիւնը կ'ընծայէին, այդ օրերուն մէջ, դիւանագէտներու համախմբուելուն : Այդ ցորեկէ-ետքը, գրեթէ բոլորն ալ ներկայ էին : Տարտանէլի առաջին մեծ ռմբակոծութիւնը տեղի ունեցած էր հինգ օր առաջ, ինչ որ պարզապէս նեղուցին բերանը զտնուող ամրութիւնները քանդած էր : Բնականաբար վինարանութեան միակ նիւթ մը կար. — դաշնակից մարտանաւերը ներս պիտի մտնէին : Խնչ պիտի պատահէր, եթէ մտնէին : Ամէն մարդ կարծիք մը յայտնեց. Վանկէնհայմ, Փալլավիչինի, իտալական դեսպան՝ Կառօնի, շուէտական դեսպան՝ Տ' Անքէրսվէտ, պուլկարական դեսպան՝ Քօլուչէֆ, Բիւլման եւ գերման Դեսպանատունի առաջին քարտուղար՝ Շառֆէնպէռկ. ամէնուն կարծիքը այն էր թէ՛ Դաշնակիցները պիտի յաջողէին : Մասնաւորաբար կը յիշեմ Բիւլմանի արտայայտութիւնը : Պոլիսի գրաւումին վրայ գրեթէ կը խօսէր՝ «Վանկէնհայմ» իբր թէ արդէն կատարուած բան մը ըլլար : Պարսկական Դեսպանը մեծ անձկութիւն կը ցուցնէր. իր Դեսպանատունը Բ. Դուռին մօտը կը գտնուէր. ինձի ըսաւ թէ՛ կը վախնար որ այս վերջին շէնքը

ումբակոծուէր եւ թէ՛ քանի մը մոլորած ռուսներ կրնային դիւրին հրկիզել իր պաշտօնատուներ. ու հարցուց որ՝ կրնամք իր դիւանաթուղթերը ամերիկեան Դեսպանատուն փոխադրել: Ամենասուկալի զրոյցներ կը շրջէին. կը հաւաստուէր որ՝ Սթէնտրրոտ Օյլի գործակատարը Տարտանէլի մէջ համրած էր տասնը եօթը փոխադրանաւեր՝ զինուորով բեռնաւորուած. թէ՛ մարտանաւերը արդէն 800 ռուսք արծակած էին եւ մուտքին բոլոր բլուրները հարթած էին, թէ՛ Քալէադի անձնապահը զարնուած էր, ինչ որ ծածուկ լեզուով կը նշանակէր որ՝ զնդակը նպատակէն վրիպած էր: Կրտուէր թէ՛ ամբողջ թիւրք ժողովուրդը սարսափէ բռնկած էր որ՝ երբ Անգլիացիները եւ Ֆրանսացիները մայրաքաղաք հասնէին, այդ յաջողութիւնը պիտի տօնէին միահամուռ յարծակումով մը թիւրք կիներու վրայ: Անշուշտ վերջին տեղեկութիւնները անիմաստ էին. անոնք Գերմաններուն եւ իրենց թիւրք ընկերակիցներուն կողմէ շրջաբերութեան հանուած տարօրինակ զրոյցներ էին: Իրողութիւնը ան էր որ՝ Պոլիսի ժողովուրդին մեծ զանգուածը հաւանօրէն կ'աղօթէր որ Դաշնակիցներու յարծակումը յաջողէր եւ այդպէսով փրկէր զիրենք երկիրին վրայ այդ ատեն իշխող քաղաքական խմբակին լուծէն:

Եւ այս բոլոր գրգռութեան մէջ միակ մենախոհ եւ յուսահատ դէմք մը կար՝ Քալէադին էր ադ: Երբ զինքը այդ տազնապալի օրերուն մէջ տեսայ, ան վհատութեան եւ պարտութեան պատկերը կը ներկայացնէր: Թիւրքերը, ինչպէս նախնական ժողովուրդներէ շատերը, իրենց յուզումները մակերեսին վրայ կը կրեն, եւ իրենց համար ցնծութենէ յուսահատութեան փոխանցուիլը դիւրին բան մըն է: Վստահօրէն՝ նեղուցին մէջ թնդանօթներու որոտումը Քալէադին վերջին դատաստանը կարդաց: Ազրիանուպոլիսի նամակի ցրուիլը [letter carrier*] կարծես հասած էր իր ասպարէզին [career*] վախճանին: Նորէն խոստովանեցաւ ինծի իր ակնկալութիւնը թէ՛ Անգլիացիները պիտի գրաւէին թիւրք մայրաքաղաքը, եւ անգամ մըն ալ յայտնեց թէ՛ կը ցաւէր Թիւրքիայի պատերազմի մտնելուն: Քալէադ լաւ գիտէր թէ՛ դաշնակից նաւատորմը Մարմարա Մովը մտնելուն պէս ինչ պիտի պատահէր: Քրօմըր Յանձնախումբին տեղեկագիրին համաձայն, Լօւտ Քիչնէր հաւանութիւն յայտնելով մէկտեղ պարզ նաւային արշաւանքի մը, ապաւինած էր յեղափոխութեան մը՝ Թիւրքիայի մէջ, ձեռնարկը յաջողցնելու համար: Տարտանէլի

յարծակումին համար Լօւտ Քիչնէր շատ քննադատուած է: Բայց իր յիշատակին իբր յարգանք պէտք է ըսեմ թէ՛ այս կէտին մէջ բացարձակապէս իրաւունք ունէր: Անգամ մը որ դաշնակից մարտանաւերը նեղուցին պաշտպանութեան զիծերը անցնէին, ժէճն Թիւրքերու վարչութիւնը արիւնալի վախճանի մը պիտի հասնէր: Թնդանօթներուն կրակել սկսելուն պէս, ծողերու վրայ գրգռազդեր երեւցան, որոնք կը դատապարտէին Քալէադը եւ իր ընկերակիցները՝ իբր պատասխանատու այն բոլոր աղէտներուն, որոնք Թիւրքիայի գլխուն եկած էին: Ոստիկանապետ Պէտրին՝ նուիրուած էր հաւաքելու բոլոր անգործ երիտասարդները եւ զանոնք քաղաքէն դուրս հանելու: Իր նպատակն էր Պոլիսը փրկել բոլոր անոնցմէ՝ որոնք կրնային ժէճն Թիւրքերու դէմ յեղափոխութիւն մը յարուցանել: Հանրածանօթ էր թէ՛ Պէտրի այդ յեղափոխութենէն աւելի՝ կը վախնար, քան անգլիական նաւատորմիդէն: Եւ այս նոյն նեմեսիսն էր որ՝ ամէն վայրկեան կը հալածէր Քալէադը:

Միակ դրուագ մը կը պատկերացնէ այն ջղային յուզումը՝ որ կը տիրէր: Պեռնիէն Քակկալարի թղթակիցը Տքթ. Լիտըրըր, կարճ այցելութիւն մը կատարեց Տարտանէլ, եւ, դարձին, դիւանագիտական շրջանակի տիկիններէ ոմանց տեղեկացուց որ՝ զերման սպաները իրենց յայտնած էին թէ՛ պատանք կը կրէին, որովհետեւ մէկ վայրկեանէն միւսը հոն թաղուելու կը սպասէին: Այս խօսքերը կայծակի արագութիւնով տարածուեցան քաղաքին մէջ եւ Տքթ. Լիտըրըրի ձերբակալութեան սպառնալիք եղաւ, այդ զրոյցը հանելուն համար: Իմ օգնութեանս դիմեց. զինքը տարի Վանկէնհայմին, որ մերժեց անոր հետ ո՛րեւէ գործ ունենալ: Լիտըրըրը, ըսաւ, աւստրիական հպատակ մըն է, թէեւ զերման թերթի մը ներկայացուցիչը ըլլայ: Լիտըրըրի դէմ չափազանց զայրոյթ կը զգար, այդ անգաղտնապահութեան համար: Վերջապէս յաջողեցայ այդ անժողովրդական լրագրողը աւստրիական Դեսպանատունը ընդունիլ տալ, ուր գիշերեց: Քանի մը օր ետքը, Լիտըրըր ստիպուեցաւ մեկնիլ քաղաքէն:

Այս բոլոր յուզումներուն մէջ, մէկ անձ միայն կար որ վրդովուած չէր երեւար: Թէեւ Դեսպանները, զօրավարները եւ քաղաքագէտները կը կանխատեսէին յուճեղոյն աղէտները, բայց էնվէրի խօսքը սրտապնդիչ եւ խաղաղ էր: Երբեք լաւագոյն առիթ մը չէր եղած՝ մարդուն պաղարիւնութեան եւ իրապէս քաջասիրտ ոգիին փայլելուն: Վերջին Դեկտեմբերին եւ Յունվարին, երբ քաղաքը ումբակոծութեան առաջին զարհուրանքը ունեցած էր, էնվէր Կովկասի մէջ Ռուսերուն դէմ կը կռուէր: Այդ կռիւն մէջ

* Հեղինակը հոս սրտիկա բառախաղ մը կ'ընէ carrier & career տեղափոխէն բառերով:

իր քաղած արդիւնքները, ինչպէս արդէն նկարագրուեցաւ, շատ հեռու եղած էին փառայեղ ըլլալէ: Էնվէր Պոլիսէն մեկնած էր Նոյեմբերին՝ միանալու իր բանակին՝ իբր ասպազայ յաղթական. բայց Յունվարի վերջերը դարձաւ՝ իբր հրամանատարը ամբողջովին պարտուած եւ բարոյալքուած ուժի մը: Այդ տեսակ աղէտալի վախճան մը գրեթէ բոլորովին պիտի կործանէր ուրիշ ո՛րեւէ զինուորական պետ, եւ էնվէրի՝ իր ծախողութիւնը զգալը որոշապէս ակնբերէ էր այն վարմունքէն՝ որով հասարակութենէն իր երեսը պահեց: Իր դարձէն ետքը, զինքը առաջին անգամ տեսայ, Կարմիր Մահիկի նպաստին տրուած հանդէսի մը: Հող, էնվէր նստած էր հեռուները գտնուող օթեակի մը մէջ, կարծես ուզած ըլլար կարելի եղածին չափ աչքէ հեռու մնալ. կատարելապէս յայտնի էր որ՝ կասկած ունէր հանրութեան սրտագին ընդունելութեանը:

Պոլիսի բոլոր ականաւոր անձնաւորութիւնները, գահաժառանգ Իշխանը, Դահլիճին անդամները եւ Դեսպանները ներկայ էին այդ հաւաքոյթին, եւ սովորութեան համաձայն, գահաժառանգ Իշխանը այդ բարձրաստիճան անձերը յաջորդաբար կանչեց, բարեւի եւ շնորհաւորութեան քանի մը խօսք ուղղելու անոնց: Ասկէ ետքը, օթեակէ օթեակ այցելութիւնը սովորական դարձաւ: Դահաժառանգը միւսներուն ըրածին պէս, էնվէրն ալ հրաւիրեց. այս մեծարանքը անշուշտ նոր քաջայերանք մը տուաւ անոր, որովհետեւ ան սկսաւ դիւանագէտներուն մէջ մտնել, որոնք նոյնպէս իրեն հետ վարուեցան ծայրայեղ մտերմութիւնով եւ մեծարանքով: Էնվէր այդ նպաստաւոր վերաբերումէն վստահօրէն իր դիրքը ամրապնդուած նկատեց եւ անգամ մըն ալ առաջնորդող դեր մը ստանձնեց տիրող տագնապին մէջ: Քանի մը օր ետքը՝ կացութեան վրայ ինձի հետ տեսակցութիւն մը ունեցաւ: Ըսաւ թէ՛ շատ զարմացած էր ամէն կողմ տիրող վախին մասին եւ տհաճութիւն զգացած էր՝ մայրաքաղաքը պարզապէս Անգլիացիներուն իբր աւար լքելով՝ Սուլթանը եւ Կառավարութիւնը դրկելու համար կատարուած պատրաստութիւններէն: Չէր հաւատար որ՝ դաշնակից մարտանաւերը կարենային անցնիլ Տարտանէլէն: Վերջերս այցելած էր բոլոր ամրութիւնները եւ կատարեալ վստահութիւն ունէր անոնց յաջողապէս դիմադրելու ուժին վրայ: Կը պնդէր որ՝ եթէ մինչեւ անգամ մարտանաւերը մտնէին, Պոլիսը պէտք էր պաշտպանուիլ մինչեւ վերջին մարդը:

Բայց էնվէրի վստահեցումը չի գոհացուց իր ընկերակիցները: Անոնք ամէն պատրաստութիւն տեսան՝ քրիտանական նաւատորմիդին մուտքին պատահականութեան դէմ: Եթէ հակառակ բոլոր

դիւցազնական դիմադրութեան՝ զոր թիւրք բանակները կրնային կատարել, պատահէր որ՝ Դաշնակիցներուն քաղաքը զրաւելը հաւանական ըլլար, կառավարական իշխանութիւնները պատրաստած էին իրենց վճռական ծրագիրները: Անոնք որոշած էին այս մեծ մայրաքաղաքին ընել ան՝ ինչ որ Թուսերը ըրած էին Մոսքուայի, երբ Նափօլէոն երեւցաւ անոր առջեւ:

« Կենդանի քաղաք մը չէ՛ երբեք որ պիտի գրաւեն, ըսին ինձի, այլ մոխիրներու դէզ մը »: Ճիշդը ըսելու համար, ասիկա չոր սպառնալիք մը չէր: Տեղեկացած էի թէ՛ թիթեղներով քարիւղ մթերուած էր արդէն բոլոր պահականոցներու եւ ուրիշ վայրերու մէջ, պատրաստ՝ քաղաքը կրակելու, նշան տրուած վայրկեանին: Որովհետեւ Պոլիս մեծ մասով փայտաշէն է, շատ դժուար գործ չպիտի ըլլար աղ: Բայց որոշած էին այդ նոր շէնքերէն շատ աւելին աւերել. մտադրած էին ջնջել այն ճարտարապետական զեղեցիկ յիշատակարանները՝ որոնք թիւրք տիրապետութենէն առաջ Քրիստոնեաներու կողմէ կառուցուած էին: Թիւրքերը մասնաւորաբար մտադրած էին Այա-Սօֆիայի մզկիթը օղը հանել: Այս շէնքը, որ քրիստոնէական եկեղեցի մը եղած էր՝ մահմետական մզկիթի վերածուելէ դարեր առաջ, բիզանդական անհետացող կայսրութեան ամէնէն շքեղ շինուածքներէն մէկն է: Բնականաբար այդ տեսակ վանտալական արարքի մը մտածումը մեզ ամէնքս զայրացուց եւ ես Թալէադի հարց ներկայացուցի որ՝ Այա-Սօֆիան խնայուի: Թեթեւօրէն վերաբերուեցաւ այդ առաջադրուած աւերումին մասին:

« Միութիւն եւ Առաջդիմութիւն Քօմիթէին մէջ վեց մարդ չի կայ որ, ըսաւ ինձի, մտահոգ ըլլայ հնութիւն եղող բանի մը համար: Մենք ամէնքս նոր բան կը սիրենք »:

Այդ խնդիրին մասին, այդ ատեն ինձի տրուած գոհացումը աղ եղաւ միայն:

Էնվէրի պնդումը թէ՛ Տարտանէլը կրնայ դիմադրել, պատճառ եղաւ որ՝ իր ընկերակիցները ջնջեն իրենց վստահութիւնը անոր դատողութեանը մասին: Տարիի մը չափ ետքը, ոստիկանապետ Պէտրի պէյ, յաւելուածական մանրամասնութիւններ հաղորդեց ինձի: Երբ տակաւին էնվէր Կովկաս կը գտնուէր, ըսաւ Պէտրի, Թալէադ՝ Տարտանէլի մասին ժողով մը՝ տեսակ մը պատերազմական խորհուրդ՝ գումարած էր: Անոր ներկայ եղած էին՝ Լիման Ֆօն Չանտէրս, այն գերման զօրավարը՝ որ թիւրք բանակը վերակազմած էր, օսմանեան ծովային ամրութիւններու ընդհանուր քննիչ գերման ծովակալ Ուզտօմ, թիւրք բանակին սպայակոյտին գերման նախագահ՝ Պրօնսարդ եւ շատ ուրիշներ: Բոլոր

ներկայ եղողները կարծիք, յայտնեցին թէ՛ քրիստոնեական եւ ֆրանսական մարտնասուները կրնային ճնկրել Նիդուցը: Վեճաբանութեան միակ առարկան աւ էր թէ, ըստ Պէտրի, մարտնասուները ամբողջութեամբ թաղեցէ՛ մի թը թէ՛ քան մամ հոքը Պոլիս պետի հասնէին: Եւ թէ՛ս Էմվէրի ճեղքնակութիւնը հաշիւի աւելում էր, ըսյց այս խորհուրդը որոշեց անտեսել զինքը եւ առանց իր գիտութեանը պատրաստութիւն տեսնել զանէ՛ մամնակաւորապէս տարանջատել պատերազմական նախարարը իրենց խորհրդակցութիւններէն:

Մարտի սկիզբը, Պէտրի եւ ճանապարհի մարտնասուները տեսնելէն էր, եկան զիս տեսնել: Այդ միջոցին մարտնասուները արտագաղթը սկսած էր. թիւրք կիները եւ տղաքը զէպի ներքնագաւառ կը մեկնէին. բոլոր կրտսերուները ստեղծուել էին իրենց սովորաբար Փոքր Ասիա զրկել: Բ. Դուռի պաշտօնաթուղթերը արդէն Եւփի-Շէնըր փոխադրուած էին. եւ զրեթէ բոլոր Դեմպակները եւ իրենց հետևողները, ինչպէս նաեւ կառավարական պաշտօնակներու մեծ մասը՝ մեկնելու պատրաստութիւն տեսած էին: Քանզարանի տնօրէնը, որ մէկն էր այն վեց Քիւրբեղէն, որոնց Քաշէպ պակարկած էր իբր սնտութիւններ սիրող, Պայիս արտեստի զեղեցիկագոյն գործերուն մեծ մասը նկուղներու մէջ թաղած էր կամ զանօք պաշտպանելու համար պատած էր: Պէտրի եկած էր կարգադրել իմ մեկնումիս մանրամասնութիւնները: Եւ իբր Դեմպակն, եւ անպատշաճ Սուլթանի հովանադրութիւնը իր վայելի, որով, եւ պարզապէս պարտաւոր էի հետեւել Սուլթանին, ու որ ար ան երթար: Կառախուսքը արդէն պատրաստ էր, կ'աւելցնէր ան. կ'ուզէր ստղծելուայ թէ՛ քանի՛ հոգի մտադիր էի հետս աւանի, որպէս զի բաւականաչափ տեղ պատուէր: Այս առաջարկին պարզ սերժողական պատասխան մը տուի: Պէտրի ծանուցի թէ՛ կը խորհէի որ՝ իմ պատասխանատուութիւններս անբարձեւոյ կը զարմնէի Պոլիս մուտ: Ըստ թէ՛ միայն չէզոք դեպքան մը կրնար արգելիլ ջարդերը եւ քաղաքին աւերումը, եւ քաղաքակիրթ աշխարհի ճանդէպ պարտք ունէի՝ արգելիլ այդ կարգի աղէտները, ի՞նչէ՛ կարեւոր: Ե՞նչ իմ դեպքանի զորքս անխուսափելի կը զարմնէր Սուլթանին հետեւի պարտաւորուելու, պատրաստ էի հրատարիլ եւ պատճառակա ընդհանուր-հիպատոս մը դառնայ:

Թէ՛ Պէտրի եւ թէ՛ ճանապարհի ինձմէ՛ շատ երկտեսարդ եւ նուազ փորձառու անձեր էին. հետեւաբար իրենց ըսի թէ՛ այս տեսակ միջազգային տաղանայի մը մէջ՝ կը կարտաէին իրենց խորհրդատու եղող տարէց մարդու մը: Ոչ միայն շահագրգռուած

էի պաշտպանելու օտարները եւ ամերիկեան հաստատութիւնները, այլ նաեւ շահագրգռուած էի, ընդհանուր մարդկայնական հողի վրայ, թիւրք ժողովուրդը եւս կնցնելու այն ժայռայեղութիւններէն՝ որոնք կը սպասուէին ամէն կողմէ: Մանաւանդ բազմազան ազգերը՝ որոնց շատերը ունէին տարրեր՝ որոնք աւարի եւ ջարդի հետամուտ էին, մեծ անձկութիւն կը պատճառէին: Ընտեսաբար առաջարկեցի Պէտրիի եւ ճանապարհի որ՝ մենք երեքս տեսակ մը յանձնախումբ կազմենք, ստանձնելու համար մտաւորաւ տաղանայի վարչութիւնը: Անոնք հաւանեցան եւ մենք երեքս խորհրդակցեցանք եւ որոշեցինք զորումնէ՛ութեան ընթացքը: Պոլիսի քաղաքն մը առինք եւ նշանակեցինք այն վարչերը՝ զորս գոյութիւն ունեցող պատերազմական օրէնքներուն համարժեք համաձայն էինք որ՝ գաշնակից բանակը ռմբակոծուել իրաւունք պետի ունենար: Որոշեցինք որ՝ պատերազմական պաշտօնատուներ, ժողային պաշտօնատուներ, հեռագիրի վարչութիւններ, կայսրաններ եւ բոլոր հանրային շէնքերը՝ կրնային կատարել օրենականութիւնով թրջանութիւնըս նշանակէտը դառնայ: Ատոր համար, նշանակեցինք զանազան գօտիներ, որոնք չէզոք պետի հելպուէին: Քաղաքին էն շատ ընակուած հիւզը եւ այն մասը՝ ուր բոլոր Դեմպակները հաստատուած են, Բերան է, Ոսկեղեցիի հիւսիս-կողմի արտուներին քարձուները զտեսուող շրջանակը: Առկա յարձուկումէ զերծ նշանակեցինք: Եոյն ծիւղով սահմանազծեցինք նաեւ Սեմապուլի, Կապիթայի զանազան թրքական բազմաբնակ թաղերը: Եւ այնիկզքն հեռագրեցի, պատմեցիլով պատմական պատճառատունէն որ՝ այս յատակագիծներուն վարկարցումը եւ այս պատշաճութեան գօտիները յարգելու համարութիւնը ստացուի՛ քրիստոնեական եւ ֆրանսական կառավարութիւններու կողմէ: Զեւանարկ վաւերացնող պատասխան ստացայ:

Այսպէս, ամէն պատրաստութիւններ աւարտած էին: Սուլթանը եւ կառավարութիւնը եւ Դեմպակները փոքր Ասիա փոխադրել սահմանուած կառախուսքը կայարանը կը սպասէին: Անոնք շոգիի վրայ էին, պատրաստ շարժելու՝ նրան արուած գայեցեանին: Մենք այլ կը սպասէինք համապայնական նուազարմիղին յաղթական ժամանումին:

ԺԷ. ԳԼՈՒԽ

ԻՆՉՊԷՍ ԷՆՎԷՐ ՀԱՍՏԱՏԵՑ «ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՆԱԽՏՈՐՄԻՂԻՆ ՊԱՐՏԵԼՈՒԹԻՒՆԸ»

ՏԱՐՏԱՆԷԼԻ ՀԻՆ ԶԵՒՈՎ ԱՄՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երբ կացութիւնը այս տենդոտ վիճակին հասած էր, էնվէր առաջարկեց ինծի Տարտանէլ այցելել: Ան տակաւին կը պնդէր որ, ամբողջիւնները անառիկ էին եւ կ'ըսէր թէ՛ չէր կրնար ըմբռնել այն տազնապը, որ կը տիրէր Պոլիսի մէջ: Ինքն ալ այցելած էր Տարտանէլ, քննած էր իւրաքանչիւր թնդանօթ եւ իւրաքանչիւր ամրավայր եւ կատարելապէս վստահ էր որ՝ իր զինուորները անհունապէս կրնային դիմադրել դաշնակից նաւատորմիդին: Ան Թալէադը հետը առած էր եւ ատով մեծապէս փարատած էր այդ պետական-մարդուն վախերը: Էնվէրի համոզումը ան էր որ՝ եթէ այս ամբողջիւնները այցելէի, պիտի համոզուէի որ՝ մարտանաւերը չէին կրնար երբեք ներս մտնել, եւ կարող պիտի ըլլայի ժողովուրդին այն վստահութիւնը ներշնչել թէ՛ տիրող յուզումը անտեղի էր: Նկատի չառի կարգ մը բնական մտածումներ թէ՛ դեռ պահան մը պէ՛տք էր ինքզինքը ենթարկել այդ տեսակ կացութեան մը վտանգներուն — մարտանաւերը գրեթէ ամէ՛ն օր կը ումարկոժէին — եւ անմիջապէս ընդունեցի էնվէրի առաջարկը: 15ի առտուն, Պոլիսէն մեկնեցանք Եփեսոս շոգենաւով: Էնվէր մեզի ընկերացաւ մինչեւ Պանտրմա, որ Մարմարա Մոլին վրայ ասիական քաղաք մըն է: Մեր խումբին մէջ կային կարգ մը ուրիշ աստիճանաւորներ. արդարութեան նախարար՝ Իպրահիմ պէյ, ժէօն Թիւրքերու յեղափոխութեան մէջ Ապտիւլ-Համիտը գահընկէց ընող բանակին հրամանատար՝ զօրավար Հիւսնի փաշա, Մարգարէին սերունդէն Արաբ մը՝ ծերակուտական Շէրիֆ Ճաֆէր փաշա: Մասնաւորապէս համակրելի ընկեր մը՝ Ֆուատ փաշա, ծերունի ֆէլտ-մարազախտ մը, որ արկածահնդրական ասպարէզ մը ունեցած էր. հակառակ իր տարիքին, անհուն հակում մը ունէր զուարճութեան. սոսկալի ուտող մը եւ դիմացկուն խմող մըն էր, եւ արսորի, պատերազմի եւ հրաշապատում փախուստներու այնչափ շատ պատմութիւններ ունէր, որչափ Օթէլլօ: Բոլոր այս անձերը էնվէրէն շատ տարէջ էին եւ բոլորն ալ շատ աւելի

նշանաւոր ընտանիքներու շառաւիղներն էին, բայց էնվէր լաճուկին հանդէպ վերջին ծայր ակնածանքով կը վարուէին:

Էնվէր առանձնապէս ուրախ կը թուէր կացութեան վրայ խօսելու այդ պատեհութիւնէն: Նախաճաշէն անմիջապէս ետքը, զիս մէկ կողմ քաշեց եւ մէկտեղ կամրջակը ելանք: Արեւոտ գեղեցիկ օր մըն էր եւ Մարմարայի երկինքը զգեցած էր այն մութկապոյտը՝ զոր աշխարհի այս մասին մէջ միայն կը գտնենք: Ինչ որ ամէնէն աւելի տպաւորութիւն գործեց իմ վրայ, այդ ջուրերուն մէջ տիրող անսահման խաղաղութիւնը. գրեթէ ամայական անշարժութիւնն էր: Մեր նաւը գրեթէ միակ տեսանելի բանն էր եւ այդ ցամաքափակ ծովը որ սովորական ժամանակներ աշխարհի առեւտրական մեծագոյն ճամբաներէն մէկն էր, հիմա պարզապէս նախնական անապատ մըն էր: Ամբողջ տեսարանը պատկերն էր միայն այն մեծ յաղթանակին՝ զոր գերման դիւանագիտութիւնը շահած էր Մօտաւոր Արեւելքի մէջ: Գրեթէ վեց ամիսէ իվեր ո՛չ մէկ ռուսական առեւտրական նաւ չէր անցած Նեղուցէն: Ռուսմանիայի եւ Պուլկարիայի ամբողջ վաճառականութիւնը, որուն դէպի Եւրոպա բնական ճամբան այս ներքնածովէն անցքը եղած էր, շատոնց է որ անհետացած էր: Եւ այս բովանդակ ամայութեան գերագոյն պատճառը ան էր որ՝ Ռուսիա արգելափակուած էր եւ իր դաշնակիցներէն կատարելապէս կղզիացուած: Այդ դէպքը որչա՛փ մեծ նշանակութիւն ունեցաւ վերջին երեք տարիներու տիեզերական պատմութեան մէջ. եւ հիմա Անգլիա եւ Ֆրանսա կը ջանային այդ անպատեհութիւնը ջնջել, իրենց զինուորական միջոցները միացնելով իրենց արեւելեան մեծ դաշնակիցին միջոցներուն եւ Տարտանէլ եւ Մարմարա լերադարձնել հազարաւոր նաւերը, ինչ որ Ռուսիայի գոյութիւնը կը նշանակէր, իբր զինուորական եւ տնտեսական, եւ նոյն իսկ, ինչպէս յաջորդ դէպքերը ցուցուցին, իբր քաղաքական ուժ: Կը մօտենայինք պատերազմին մեծագոյն տազնապներէն մէկուն տեսարանին:

Անգլիա եւ իր դաշնակիցները պիտի յաջողէին այս ձեռնարկին մէջ: Իրենց մարտանաւերը Տարտանէլի ամբողջիւնները պիտի խորտակէին, պիտի անցնէին հոնկէ եւ Ռուսիան կրկին տեսական ուժ մը պիտի դարձնէին պատերազմին մէջ: Այս էր նիւթը, որուն վրայ ես ու էնվէրը խօսեցանք գրեթէ երեք ժամ, մինչ կամրջակին վրայ մէկ ծայրէն միւսը կ'երթեւեկէինք: Էնվէր կրկին ակնարկեց այն «անմիտ վախ»ին, որով պաշարուած էին ամէն դասակարգեր մայրաքաղաքին մէջ: «Եթէ մինչեւ անգամ Պուլկարիա եւ Յուդաստան մեզի դէմ դառնան, ըսաւ, մենք Պոլիսը մինչեւ վերջը պիտի պաշտպանենք: Մենք բազմաթիւ թնդանօթներ

եւ առատ ռազմանիւթ ունինք, որոնք հաստատուն հողի վրայ կը գտնուին, մինչդեռ անգլիական եւ ֆրանսական մարտկոցները ծփուն են : Եւ Նեղոցին բնական առաւելութիւնները այնչափ մեծ են որ՝ մարտանաւերը անոնց դէմ չնչին յաջողութիւն մը միայն կրնան ունենալ : Ես հոգ չեմ ընել թէ՛ ուրիշ մարդիկ ինչ կը խորհին : Ես այս խնդիրը աւելի՛ կատարելապէս քան անոնցմէ մէկը՝ ուսումնասիրած եմ եւ կը զգամ որ իրաւունք ունիմ : Որչափ ատեն որ ես պատերազմական նախարար եմ, անձնատուր չպիտի ըլլանք մենք : Իրա՛ւ որ, չեմ գիտեր թէ՛ այդ անգլիական եւ ֆրանսական մարտանաւերը ինչ նպատակի կը ձգտին : Ենթադրենք որ՝ անոնք Տարտանէլը անցնին, Մարմարա մտնեն եւ Պոլիս հասնին . ինչ օգուտ պիտի քաղեն ատկէ : Կրնան քաղաքը ռմբակոծել եւ զայն քանդել . կ'ընդունիմ . բայց չեն կրնար զայն գրաւել, քանի որ ցամաք հանելիք քիչ զօրք ունին : Եթէ հսկայ բանակ մը չբերեն, անոնք պարզապէս ցանցի մը մէջ պիտի բռնուին : Թերեւս երկու-երեք շաբաթ կրնան մնալ հոս, մինչեւ որ իրենց սննդեղէնը եւ պարէնը սպառին . անկէ ետքը, ստիպուած են ետ դառնալ — կրկին յարձակում գործել Նեղոցին վրայ եւ կրկին ոչնչանալու վտանգին ենթարկուիլ : Այդ միջոցին, մենք ամբողջիւնները վերանորոգած, ներսը զօրք համախմբած կ'ըլլանք, պատրաստ գտնուելով անոնց դիմադրելու : — Անոնց ձեռնարկը ինծի շատ յիմարական կը թուի» :

Արդէն ըսած եմ թէ՛ էնվէր իրեն մտատիպար ըրած էր Նափօլէոնը . հիմա, Տարտանէլի այս արշաւանքին մէջ, ան յայտնապէս Նափօլէոնեան պատեհութիւն մը կը գտնէր : Մինչ կամրջակին վրայ կը պտըտէինք, էնվէր կանգ առաւ պահ մը, ակնկառոյց զիս դիտեց եւ ըսաւ .

«Ես պատմութեան մէջ պիտի անցնիմ իբր այն մարդը՝ որ ապացուցած է Անգլիայի եւ իր նաւատորմին պարտելիութիւնը : Պիտի ցուցնեմ որ՝ Անգլիայի նաւատորմը անյաղթելի չէ : Պատերազմէն քանի մը տարի առաջ Անգլիա կը գտնուէի եւ Անգլիայի կացութեանը վրայ վիճաբանեցայ բազմաթիւ ազդեցիկ անձերու հետ, ինչպէս Էսքուիթ, Չորչիլ, Հէլտէյն : Ըսի անոնց թէ՛ իրենց ճամբան սխալ էր : Ուրիշներն Չորչիլ յայտարարեց թէ՛ Անգլիա կրնար միայն իր նաւատորմովը ինքնապաշտպանուիլ եւ մեծ բանակի չէր կարօտեր : Չորչիլի ըսի թէ՛ ո՛չ մէկ մեծ կայսրութիւն կրնար գոյութիւնը պահել, առանց թէ՛ բանակ եւ թէ՛ նաւատորմիդ ունենալու : Տեսայ որ Չորչիլի կարծիքը այն կարծիքն էր, որ Անգլիայի մէջ ամէն կողմ կը տիրէր : Միակ մարդ մը կար, որ համաձայն էր ինծի . Լօուտ Ռօպրորդսն էր ադ : Հիմա, Չորչիլ իր

նաւատորմիդը հոս դրկած է — Թերեւս ինծի ցուցնելու համար որ՝ իր նաւատորմիդը կրնայ ընել ամէն ինչ որ ինք ըսաւ թէ կրնայ : Լա՛ւ, պիտի տեսնենք» :

Էնվէր կ'երեւայ թէ Չորչիլի նաւային արշաւանքը անոր կողմէ իրեն դէմ ուղղուած անձնական մարտահրաւէր մը կը նկատէր — Լոնտոնի մէջ իրենց ունեցած վիճաբանութեան շարունակութեանը պէս բան մը գրեթէ :

«Դո՛ւք ալ, պէտք է մեծ բանակ մը ունենաք, ըսաւ էնվէր, Միաց.-Նահանգներուն ակնարկելով : Ես չեմ հաւատար որ, շարունակեց, Անգլիա կը ջանայ Տարտանէլը ճեղքել, անոր համար որ Ռուսիա իրմէ պահանջած է ադ : Երբ Անգլիա էի, Չորչիլի հետ խօսեցայ համաշխարհային պատերազմի մը կարելիութեանը վրայ : Ինծի հարցուց թէ՛ այդ տեսակ պարագայի մը մէջ Թիւրքիա ինչ պիտի ընէր . եւ յայտնեց որ՝ եթէ մենք Գերմանիայի կողմը անցնէինք . բրիտանական նաւատորմիդը պիտի անցնէր Տարտանէլէն եւ Պոլիսը պիտի գրաւէր : Չորչիլ Ռուսիայի օգնել չէ՛ որ կը ջանայ ան այդ ատեն ինծի ըրած սպառնալիքը կը գործադրէ» :

Էնվէր կը խօսեր ծայրայեղ վճռականութիւնով եւ համոզումով . ըսաւ թէ՛ արտաքին ամբողջիւններու հասցուած գրեթէ բոլոր միասնեքը դարմանուած էին եւ թէ՛ Թիւրքերը ունէին պաշտպանողականի մեթոտներ՝ որոնց գոյութենէն թշնամին տեղեկութիւն անգամ չունէր : Մեծ զայրոյթ ցուցուց Անգլիացիներուն դէմ . զանոնք ամբաստանեց թէ՛ Թիւրք պաշտօնեաները կաշառել ջանացած են եւ նոյն իսկ ըսաւ թէ՛ Անգլիացիները իր կեանքին դէմ մահափորձներ իրութեամբ էին : Միւս կողմէ, մասնաւոր բարեկամականութիւն չէր ցուցներ Գերմաններուն հանդէպ : Վանկէնհայմի ամբարտաւան վարմունքները մեծ գրգռութիւն պատճառած էին իրեն, եւ Թիւրքերը, ըսաւ, գերման սպաներուն հետ շատ լաւ հասկացողութեան մէջ չեն :

« Թիւրքերը եւ Գերմանները, աւելցուց, զիրար չեն սիրեր : Մենք անոնց հետ ենք, որովհետեւ մեր շահը անոնց հետ ըլլալ կը պահանջէ . անոնք մեզի հետ են, որովհետեւ անոնց շահը ատանկ կը պահանջէ : Գերմանիա Թիւրքիայի պիտի օգնէ՛ այնչափ ատեն միայն որ՝ Թիւրքիա օգնէ Գերմանիայի . Թիւրքիա Գերմանիայի պիտի օգնէ՛ այնչափ ատեն միայն որ՝ Գերմանիա օգնէ Թիւրքիայի :

Էնվէր շատ ազդուիլ կ'երեւար մեր սրտակից տեսակցութենէն, որով իրարու հետ անձնական մտերիմ կապակցութիւններ հաստատած էինք : Անկասկած կը հաւատար թէ՛ մեծ էնվէրը, Թիւրք յեղափոխութեան Նափօլէոնը, նուաստացած էր իր ազգին զործերուն վրայ խօսելով պարզ դեպքանի մը հետ :

« Գիտէք որ, բայց, Գերմանիայի մէջ չիկայ մէկը, որուն հետ Կայսրը այնչափ մտերմօրէն խօսի, որչափ ես այսօր խօսեցայ ձեզի հետ » :

Ժամը երկուքին մօտ Պանտրմա հասանք : Հոս էնվէր եւ իր ինքնաշարժը ցամաք հանուեցան եւ մեր խումբը կրկին ճամբայ ելաւ մեր նաւը իրիկուան դէմ Կէլիպօլու հասաւ : Նաւահանգիստին մէջ խարսխեցինք եւ գիշերը նաւին մէջ անցուցինք : Ամբողջ գիշերը լսեցինք Թինզանօթներուն՝ ամրութիւնները ու մրակոծելը . բայց պատերազմի եւ մահուան այդ յուշարարները ազդեցութիւն չէին գործեր իմ թիւրք հիւրընկալներու միտքին վրայ : Այդ առիթը անոնց համար մեծ զուարճութիւն մըն էր . ամիսներով չարատանջ եւ խստակենցաղ աշխատանք թափած էին, եւ հիմա կը վարուէին այն տղոց պէս՝ որոնք յանկարծ զբօսանքի կ'արձակուին : Անոնք կատակաբանութիւններ կ'ընէին, պատմութիւններ կը ճառէին, այլանդակագոյն երգեր կ'երգէին, տղայական չարահիւսութիւններ կ'ընէին իրարու : Պատկառելի Ֆուատը, հակառակ գրեթէ իր իննսուէն տարեկան ըլլալուն, զուարճասէլի մեծ յատկութիւններ երեւան բերաւ . իր ընկերակիցները զինքը իրենց ձեռքի կատակներէն շատերուն առարկան դարձուցին, որոնք որոշապէս այդ օրերու իր հաճոյքը կ'աւելցնէին : Զուարճութիւնը իր գագաթնակէտին հասաւ, երբ իր բարեկամներէն մէկը . նենգաբար գաւաթ մը օքսֆօրմը մեծարեց : Մերունին վայրկեան մը այդ նոր ըմպելիին վրայ նայեցաւ եւ յետոյ անոր ջուր խառնեց : Կ'ըսուի թէ՛ թրքական ժողովրդական ըմպելիին՝ ուսրն՝ ճաշակելու ճշմարիտ կերպն է՝ անոր ջուր խառնելով խմել եթէ ան այդ գործողութիւնով ճերմկի, հարազատ օդի է եւ վստահութիւնով կրնայ խմուիլ : Կ'երեւայ թէ՛ ջուրը նոյն ազդեցութիւնը աւելի նաեւ օքսֆօրմերի վրայ, որովհետեւ Ֆուատի գաւաթին պարունակութիւնը, այդ փորձին վրայ, ճերմկեցաւ : Հետեւաբար, ձերունին ամբողջ գաւաթը կոկորդէն վար պարպեց, առանց դէմքի որեւէ ժամածուրթեան . — զինքը չարչարողները խելապատառ զուարճութիւն զգացին :

Առտուն, նորէն ճամբայ ելանք : Հիմա ա՛յ Տարտանէլ հասած էինք եւ Կէլիպօլուէն մինչեւ Չանաք-Գալէ գրեթէ քսանը հինգ մղոն ճամբայ կտրելու էինք : Նեղուցին այս հատուածը մեծ մասով հետաքրքրական է, իսկ զինուորական տեսակէտով անկարելոր է : Նեղուցը գրեթէ երկու մղոն լանք ունի եւ երկու ափունքները ցած եւ ծանծաղուտ են . քանի մը ցանցնուած գիւղեր միայն կեանքի նշան ցոյց կու տան : Ըսին ինձի թէ՛ քանի մը հին ամրոցներ կային, որոնց ժանգոտ Թինզանօթները կը ցցուէին

Մարմարայի վրայ . այդ տեղերը շինուած էին տասներկններորդ դարու առաջին մասին մէջ, հիւսիսէն մտնող Թշնամի նաւերը արգիլելու նպատակով : Սակայն, այդ ամրութիւնները այնչափ աննշմարելի էին որ՝ զանոնք չկրցայ տեսնել : Հիւրընկալներս տեղեկացուն ինձի որ՝ անոնք մարտական ուժ չունէին, եւ թէ՛, իրաւցնէ՛, նեղուցին հիւսիսային մասին մէջ, Նաղարայի քիթէն մենչեւ Մարմարա ոչինչ կար որ՝ կարենաւ դիմադրութիւն ընծայել որեւէ արդիական նաւատորմի : Տարտանէլի այս մասին մէջ ինչ որ . գլխաւորաբար շահագրգռական գտայ, զուտ պատմական եւ աւանդական էր : Հին Լամիսաբուս քաղաքը կ'երեւար նոր Լափսաքիին մէջ, ճիշդ Կէլիպօլուի դէմը . իսկ Նաղարայի քիթը՝ հին Ապիտոսի տեղն է . այդ գիւղէն է որ Լէանտը սովոր էր գիշերով յողալ անցնիլ Հէլլեսպոնտոսը՝ Հերօն գտնելու — քաջագործութիւն՝ որ հարիւր տարի առաջ կրկնուած է Լօւտ Պայրընի կողմէ : Այս տեղէն է որ Քսերքսէս Ասիայէն Յունաստան անցաւ, նաւերէ կազմուած կամուրջներու վրայէն, վարելով այն հուշակաւոր արշաւանքը, որ կը ձգտէր զինքը մարդկութեան տէրը դարձնել : Անոր քաջագործութեան տեսարանը միտք բերելով, խորհեցայ որ՝ Քսերքսէսի ոգին տակաւին կատարելապէս կենդանի է աշխարհի մէջ ! Գերմանացիները եւ Թիւրքերը նուազ ուսմանքի ծառայութիւն մը գտած էին անոր, Տարտանէլի այդ ամէնէն նեղ մասին, որովհետեւ անոնք հող երկարած էին հեռագրական թել մը եւ հակա - ընդժովեայ արգելափակումի ականներ եւ ցանցեր — հնարք մը, որ սակայն, ինչպէս պիտի բացատրեմ, չարգիլեց անգլիական եւ Ֆրանսական ընդժովեաները Մարմարա եւ Վոսփոր թափանցել : Նաղարայի պատմական հրուանդանէն դառնալէ ետքն է որ՝ տափակ ծովափերուն տխուր միօրինակութիւնը տեղի տուաւ աւելի պէսպիսուն գիւղանկարի մը : Եւրոպական կողին վրայ, ժեռուտքները սկսան գահավիժօրէն ջուր իջնել, յիշեցնելով ինձի Հըստընի երկայնքի մեր շերտափակերը եւ նշմարեցի այն բլուրները եւ լեռնաշղթաները՝ որոնք ետքէն դաշնակից քաջամարտիկ բանակներուն այնչափ ողբերգական խոչընդոտներ դարձան : Նաղարայի հարաւը գտնուող ցամաքին արտաքին ծ'ւրը, իր բազմաթիւ բլուրներով եւ կատարներով, բացատրեց թէ՛ ինչո՞ւ զինուորական երկրաչափները Տարտանէլի այդ տարածութիւնը ընտրած էին, իբր պաշտպանողականի յարմարագոյն մասը : Հիմա մեր նաւը կը մօտենար այն վայրին, որ Թերեւս ամէնէն հրամայող կէտն էր ամբողջ նեղուցին մէջ — Չանաք քաղաքը, կամ, իր ժամանակակից եւրոպական անունը տալով, Տարտանէլը : Բնական ժամանակներու մէջ, ասիկա 16,000 բնակիչով բարգաւառ նաւա-

հանգիստ մըն էր, փայտաշէն տուներով եւ կեդրոնն էր բուրդի եւ ուրիշ արտադրութիւններու կարեւոր վաճառականութեան մը, եւ դարերով զինուորական կարեւոր կայան մը եղած էր : Հիմա, զինուորները բացառութիւն համարելով, ան ամայացած էր, որովհետեւ քաղաքային բնակչութեան մեծ մասը Անատոլու փոխադրուած էր : Լսուած էր թէ՛ բրիտանական նաւատորմիչը ռմբակոծած էր այս քաղաքը : Բայց այս հաւաստումը հաւանական չէր թուեր, որովհետեւ միակ տուն մը տեսայ որ ռմբահարուած էր, վստահօրէն մոլորած ռումբէ մը, որ արծակուած էր մօտակայ ամրութիւններուն :

Տարտանէլի ընդհանուր հրամանատար ձէվատ փաշա դիմաւորեց մեզ եւ մեր խումբին ընկերացաւ դէպի բանակատեղը : ձէվատ՝ զարգացած, հաճոյական եւ սրտազին կէրպարանքով մարդ մըն էր. որովհետեւ սքանչելի գերմաներէն կը խօսէր ան, թարգմանի չէի կարօտներ : Շատ զգածուեցայ այն ակնածանքէն՝ որով գերման սպաները կը վարուէին անոր հետ : Պատերազմի այդ թատերաբեմին ընդհանուր հրամանատարը ինք ըլլալը եւ Քայգէրին զօրավարներուն իր ստորադասները ըլլալին՝ կատարելապէս զգալի դարձուած էր : Երբ իր գրասենեակը մտանք, ձէվատ կանգ առաւ քօփիլի մը առջեւ, որ կախուած էր՝ կ'երեւայ թէ իբր յիշատակ՝ սրահին մէջտեղէն.

Ահա՛ մեծ յանցապարտը, ըսաւ, ուշադրութիւնս հրաւիրելով բեկորին վրայ :

Այդ միջոցին, թերթերը կը պարծէին անգլիական ընդծովեայի մը քաջագործութեանը վրայ, որ Անգլիայէն ճամբայ ելած էր դէպի Տարտանէլ, անցած էր ականներու ցանցին տակէն եւ թօրփիլահար ըրած էր թրքական Մեսուտիէ մարտանաւը :

«Ահա սա՛ է այն քօփիլը, որ մեր նաւը ընկղմեց, ըսաւ ձէվատ. երբ վար իջնէք, պիտի տեսնէք նաւին աւերակոյտը » :

Առաջին ամրութիւնը ուր այցելեցի, Անատոլու Համիտիէն էր (այսինքն ասիական Համիտիէ), զետեղուած ջուրին եզրը, Չանաքի ճիշդ դուրսի կողմը : Գերմանիա գտնուելու տպաւորութիւնը զգացի առաջին անգամ : Սպաները գրեթէ բոլորն ալ Գերմաններ էին եւ ամէն կողմ Գերմանները աւագէ պարկերով հակապաշտպանողականներ կը շինէին եւ ուրիշ միջոցներով կ'ամրացնէին թնդանօթավայրերը : Հոս, ամէն կողմէ, լսուող լեզուն էր գերմաներէնը, ո՛չ թէ թիւրքերէնը : Գնդապետ Վէլլէ, որ զիս կ'առաջնորդէր այդ հրետանիներուն շուրջը, շատ մեծ հաճոյք կը զգար զանոնք ինձի ցուցնելով : Արուեստագէտին՝ իր երկին հանդէպ ունեցած հպարտութիւնը կը զգար : Ան ինձի յայտնեց



ՍԵՐ ԼՈՒԻՉ ՄԷԼԷԴ

ՄԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՍԿՍԱԾ ԱՏԵՆ՝ ՊՈԼԻՍԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԶԱՆ ԿՈՂՄԸ ԿԸ ԳՏՆՈՒԻ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ՝ Մ. ՊՅՆՓԱՌ

այն երջանկութիւնը՝ զոր զգացած էր իր կեանքին մէջ, երբ Գերմանիա վերջապէս պատերազմի սկսած էր. իր ամբողջ կեանքին մէջ, ըսաւ, զինուորական պաշտօններու նուիրուած էր, եւ, Գերմաններէն շատերուն պէս, ծանծրացած էր ռազմափորձերէ, կեղծ պատերազմներէ : Արդէն յիսուն տարեկանին կը մօտենար, գնդապետ եղած էր եւ կը վախնար որ՝ իր ասպարէզը զոցուէր, առանց զինուորական գործնական ծառայութեան մտնելու, երբ իր երազները պսակուեցան եւ հիմա կը կուէր իրական թշնամիի մը դէմ՝ որ Անգլիացին էր, իրական թնդանօթներ եւ իրական ռումբեր գործածելով ! Վէլլէի վարմունքին մէջ կոշտ բան մը

Գնալան Մօրկըմբաուի Տիօսակները 12
Անգլիերէն բնագիրէն քարգմանիչ ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

չի կար բնաւ. Պատէնցի «gemütlich» [զուարթախոն] եւ կատարելապէս հաճելի ճեղքովն մըն էր ան. բայց ամբողջովին թրծուած էր «Der Tag»-ի ոգիով: Իր կեանքը պարզապէս անցուցած էր նման մարդու մը՝ որ առուտուր մը սորված է եւ որ հիմա կ'ուրախանար զայն կիրարկելու առիթէն: Եւ ան՝ բացատրիչ լոյս մը կ'ընծայէր այն գերման զինուորական նկարագիրին եւ ուժերուն մասին, որոնք պատերազմին պատճառ եղած էին:

Ինքզինքս կատարելապէս գերման հողի վրայ զգալով, հարցուցի գնդապետ Վէլչի թէ՛ Նեղուցին այդ եզերքին վրայ ինչո՞ւ այնչափ քիչ թիւրքեր կը գտնուէին: «Այդ հարցումը չպիտի ընէք ինձի այս ցորեկէ-ետքը, ըսաւ ժպտելով, երբ անցնիք միւս եզերքը»:

Անատուրու Համիտիէի դիրքը ինձի իտէպլ երեւցաւ: Ան կը գտնուէի ճիշդ ծովափին վրայ եւ ունի — գոնէ ունէր այդ ատեն — տասը թնդանօթներ, ամէնքն ալ Տարտանէլի վրայ հսկող: Անոր եզերքը բլլելով, Նեղուցը որոշակի կը տեսնէի, որուն մուտքին վրայ՝ Գում-Գալէն տասնըհինգ մղոն հեռուէն յստակօրէն կը նշմարուէր: Ո՛չ մէկ մարտանաւ կրնար մտնել այս ջուրերուն մէջ, առանց հրետանիներէն անմիջապէս եւ կատարելապէս տեսանելի ըլլալու: Բայց ամրոցը ինքնին, ոչ-մասնագէտ աչքի մը՝ ինչպէս իմս, մասնաւորապէս ուշագրաւ բան մը չունէր: Ամրափակերը եւ շեղարուրները պարզ հողաթումբեր էին եւ ներկային պարզապէս կը մնային այն վիճակին մէջ՝ ինչպէս շինուած էին 1837ին, Ֆրանսացի ճարտարագէտներու կողմէ: Ընդհանուր կարծիք մը կայ թէ՛ Գերմանները կատարելապէս արդիականացուցած են Տարտանէլի ամրութիւնները, բայց իմ տեսած ատենս ճիշդ չէ՞ր ադ: Անատուրու Համիտիէի ամրոցը պաշտպանող թնդանօթները՝ երեսունէ աւելի տարուան հուլիսներ էին, ամէնքն ալ Քրուփի 1885ի տիպարով, եւ անոնցմէ ոմանց ժանգոտ արտաքինը իրենց տարիքը կը մատնէր: Իրենց է՛ն հեռաւոր հասողութիւնը ինը մղոնի չափ էր միայն, մինչդեռ յարձակող մարտանաւերուն հասողութիւնը տասը մղոնի մօտ էր եւ Քուփն էլիզապէթինը տասնըմէկէն պակաս չէր: Անատուրու Համիտիէի մասին նկարագրութիւններս կատարելապէս կը պատշաճին նաեւ ուրիշ բոլոր գործոն ամրութիւններու թնդանօթներուն: Հետեւաբար, հասողութեան առաւելակշռութեան տեսակէտով՝ դաշնակից նաւատորմը վճռական գերազանցութիւն ունէր եւ միայն Քուփն էլիզապէթը անոնց բոլորին կ'իշխէր դրապէս: Ամրութիւնները ռազմանիւթի խիստ մեծ պաշար ալ չունէին: Այդ միջոցին եւրոպական եւ ամերիկեան թերթերը տեղեկութիւններ կը հրատա-

րակէին թէ՛ Գերմանիայէն կառախուսքեր լեցուն ռումբեր եւ թնդանօթներ կը հասնէին Տարտանէլ, Ռումանիայի ճամբով: Այդ ատեն եւ ետքէն լսուած իրողութիւններէ՛ համոզուած եմ որ՝ այդ տեղեկութիւնները պարզ առասպելներ էին: Քիչ թիւով «կարմիր գլուխ»ներ — այ:ինքն զրահ չծակող ռումբեր՝ որոնք ցամաք զօրահանութեան դէմ կուռելու միայն օգտակար են — բերուած էին Ադրիանուպոլիսէն, որոնք իմ այցելութեանս միջոցին Համիտիէ մթերուած էին, բայց ատոնք քիչ քանակութիւնով էին եւ մարտանաւերու դէմ կուռելու մէջ արժէք չունէին: Համիտիէի վրայ կը ծանրանամ, որովհետեւ ան Տարտանէլի ամէնէն կարելոր ամրութիւնն է: Ռմբակոծութեան ամբողջ ընթացքին՝ դաշնակից կրակը անոր ուղղուեցաւ, քան ուրիշ որեւէ դիրքի եւ յարձակող մարտանաւերուն հասցուած վնասին հարիւրին նուազագոյն 60ը ան է որ զործեց: Անատուրու Համիտիէն էր որ՝ 18 Մարտի մեծ ռմբակոծութեան միջոցին ընկղմեց ֆրանսական Պուփ մարտանաւը. ան է որ՝ յարձակումին ամբողջ ընթացքին անկարողութեան մատնեց ուրիշ զանազան միութիւններ: Անոր բոլոր սպաները Գերմաններ էին եւ հոն պաշտօնի վրայ եղող մարդոց հարիւրին 85ը Կոպիկի եւ Պրեզաուի նաւազններէն էին:

Ինքնաշարժ մտնելով, սուբացիք Տարտանոս տանող ռազմական ճամբայէն, ուր տեսանք Մաուսիի բեկորները: Տարտանոսի մարտկոցը այնչափ կատարելապէս թրքական էր, որչափ Համիտիէն գերմանական: Տարտանոսի թնդանօթները աստիճան մը աւելի՛ արդիական էին, քան Համիտիէիները — անոնք Քրուփի 1905ի տիպարովն էին: Հոս ալ, կար այն միակ նոր մարտկոցը, զոր Գերմանները հաստատած էին իմ այցելութեանս միջոցին. անոնք կը բաղկանային այն զանազան թնդանօթներէն, զորս առած էին Վոսիորի մէջ կեցող գերմանական եւ թրքական մարտանաւերէն: Մեր բնական այցելութենէն քանի մը օրեր առաջ, դաշնակից նաւատորմը մտած էր էրէն-Բէօյի Մոցը եւ Տարտանոսը ենթարկած էր զարհուրելի ռմբակոծութեան մը, որուն արդիւնքները տեսայ ամէ՛ն կողմ: Հողը շուրջանակի կէս մղոն տարածութեան վրայ կատարելապէս տակն ու վրայ եղած կ'երեւար. ան կը նմանէր այն լուսանկարներուն, զորս տեսած էի քաշուած՝ Ճրանսայի ռազմադաշտերէն: Տարօրինակ բանը այն էր որ՝ հակառակ այդ բոլոր աւերին, մարտկոցները անեղձ կը մնային. առաջնորդներս ինձի ըսին թէ՛ միակ թնդանօթ մը իսկ փճացած չէր:

«Պատերազմէն ետքը, ըսաւ զօրավար Մառթէնս, հոս զօրսաշրջիկներու ժամադրափայր մը պիտի հաստատենք, պանդոկ մը պիտի շինենք եւ ձեզի Ամերիկացիներու դասուսները պիտի

ծախենք: Պէտք չպիտի ունենանք գտնելու համար պեղում կատարելու — բրիտանական նաւատորմիդը մեր տեղը այդ աշխատանքը կը կատարէ» :

Անցողակի կատակի մը կը նմանէր ադ, բայց ըսուածը տառապէս ճշմարիտ էր: Այն տեղը՝ ուր Տարտանոս հաստատուած է, հին աշխարհի ամէնէն հռչակաւոր քաղաքներէն մէկը կար. Հոմերոսի ժամանակ՝ ան մաս կը կազմէր Փոլիամի իշխանապետութեան: Խոյակներու եւ սիւներու բեկորներ կը տեսնուին դեռ հոն: Եւ դաշնակից նաւատորմիդին ռումբերը հիմա հողահան կ'ընէին այն բազմաթիւ նշխարները՝ որոնք հազարաւոր տարիներէ ի վեր թաղուած էին: Բարեկամներէս մէկը գետնէն գտաւ ջուրի սափոր մը՝ որ թերեւս գործածուած էր Տրովադայի ժամանակները: Ուշագրաւ էր արդի ռմբակոծութեան ազդեցութիւնը՝ վաղընչական կորսուած քաղաքակրթութեան մը նշանները հողահան ընելուն մէջ — թէեւ դժբաղդաբար նշխարները անեղծ կերպով չէին ելլեր հողին երեսը:

Թիւրք զօրավարները չափազանց հպարտ էին այն կռիւին համար, զոր Տարտանոսի մարտկոցը մղած էր բրիտանական մարտանաւերուն դէմ: Անոնք զիս կ'առաջնորդէին այն թնդանօթներուն քով, որոնք մասնաւորապէս լուրջ ծառայութիւն կատարած էին եւ զանոնք խանդաղամտագին կը գգուէին: Զիս պատուելու համար, ձէվատ կանչեց տեղակալ Հասանը, այն թիւրք սպան, որ այս դիրքը պաշտպանած էր: Ան մանրուկ մարդ մըն էր, սաթի պէս սեւ մազերով, սեւ աչքերով, չափազանց համեստ եւ երկչոտ՝ այս մեծ զօրավարներուն ներկայութեանը: Ձէվատ շոյեց Հասանի երեսները, մինչդեռ ուրիշ բարձրաստիճան թիւրք սպայ մը փայփայեց անոր մազերը. կարծես թէ արժէքաւոր ծառայութիւն մը կատարող հաւատարիմ շուն մը ըլլար ան:

«Զեզի նման մարդերէն է որ մեծ դիւցազններ կ'ելլեն», ըսաւ ձէվատ: Ան Հասանի առաջարկեց նկարագրել յարձակումը եւ կատարուած դիմադրութիւնը: Շիտթահար տեղակալը հանդարտօրէն ըրաւ իր պատմութիւնը, թէեւ գրեթէ լալու չափ յուզուած էր՝ իր յափշտակուած պետերուն զնահատութիւններէն:

«Բանակին մէջ ձեզի մեծ ապագայ մը վերապահուած է», ըսաւ զօրավար ձէվատ. երբ կը բաժնուէինք այդ դիւցազնէն:

Խեղճ Հասանի «ապագան» հասաւ երկու օր ետքը, երբ դաշնակից նաւատորմը իր մեծագոյն յարձակումը կատարեց: Ռումբերէն մէկը զարկաւ իր ապաստարանին, որ փլուզուելով, երիտասարդը սպաննուեցաւ: Բայց մարտկոցին այցելութեանս օրը, իր վարմունքը կը ցուցնէր որ՝ Հասան իր զօրավարին դրուատիքը

գոհացուցիչ վարձատրութիւն կը նկատէր, իր կրած կամ դեռ կրելիք բոլոր տառապանքներուն:

Շատ կը զարմանայի այն պարագային վրայ որ՝ դաշնակից նաւատորմը, հակառակ ռազմանիւթի իր առատ վատնումին, կարող եղած չէր Տարտանոսի դիրքը հարուածելու: Բնականաբար նախ խորհեցայ թէ՛ այդ տեսակ ձախողութիւն մը խեղճ նշանաւորութիւն մը կը մատնէր. բայց գերման առաջնորդներս ըսին թէ՛ պատճառը ատ չէր: Այդ անյաջող նշանաւորութիւնը՝ իրաւ է թէ անգամ մըն ալ կը հաստատէր այն ծանօթ պարագան որ՝ արագօրէն շարժադարձող մարտանաւ մը՝ մեծապէս աննպաստ պայմաններու մէջ կը գտնուի հաստատուն ամրութիւն մը ռմբակոծած ատեն: Բայց Տարտանոսի մարտկոցին կապուած ուրիշ կէտ մը կար. հիւրընկալներս ուշադրութիւնս հրաւիրեցին անոր դիրքին վրայ. ան թառած էր բլուրի մը կատարը. իշխելով մարտանաւերուն վրայ եւ կազմելով հորիզոնին մէկ մասը: Տարտանոս պողպատէ հինգ աշտարակներ միայն ունէր, իւրաքանչիւրը մէկ թնդանօթով զինուած եւ շրջապատուած էր ոլորապտոյտ խրամով մը:

«Աշխարհի ամէնէն դժուար բանն է անոր ռումբ հանդիպցնել, ըսին: Այնչափ որոշակի տեսանելի է որ՝ դիւրին կը թուի բայց երեւցածը պատրանք մըն է միայն»:

Դիրքի տեսաբանութեան [optics] կատարելապէս տեղեակ չեմ. բայց կ'երեւայ թէ՛ հորիզոնի զիծը կը ստեղծէ տեսակ մը կրկներեւոյթ, այնպէս որ պարզապէս անկարելի է այդ կէտին վրայ բանի մը զարնել, բացի դիպուածով եղածէն: Նշանաւոր կրնայ տեսնուածին համեմատ ճիշդ նշան առնել, բայց նորէն ռումբը պիտի մոլորի: Տարտանոսի պատմութիւնը առասպելականէն քիչ պակաս բան մը եղած է: Մինչեւ Մարտ 18, մարտանաւերը անոր վրայ արձակած էին 4,000ի մօտ ռումբեր: Աշտարակներէն մէկը հարուած կրած էր պայթուցիկի մը կողմէ, որ նաեւ սկրդած էր անոր ներկը. ուրիշ աշտարակ մը զարնուած եւ թեթեւօրէն հակած էր. ուրիշ մը հարուածուած էր խարխիսէն, ուրկէ մարդու ձեռքի մեծութիւնով կտոր մը փրթած էր: Բայց միակ թնդանօթ մը անգամ՝ նոյն իսկ թեթեւօրէն վնասուած չէր: Ութը մարդեր սպանուած էին, որոնց մէջ նաեւ տեղակալ Հասան, եւ քառասունի չափ վիրաւորուած էին: Այդչափ էր գործուած աւերը:

«Տեսողական պատրանքն էր որ փրկեց Տարտանոսը», դիտել տուաւ Գերմաններէն մէկը:

ԺԸ. ԳԼՈՒԽ

ԴԱՆԱԿԻՑ ՆԱԽՏՈՐՄԻՂԸ ԿԸ ՇԵՌԱՆԱՅ, ԹԷՒԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԵԶՐԸ ՆԱՍԱԾ

Նորէն ինքնաշարժ մտնելով, ճամբորդեցինք ծովափին երկայնքէն . հիւրընկալս ուշադրութիւնս հրաւիրեց ականներու դաշտերուն վրայ, որոնք Չանաքի հարաւակողմը կը տարածուէին, շուրջ եօթը մղոն հեռաւորութիւնով: Այս շրջանակին մէջ, Գերմանները եւ Թիւրքերը ցանած էին գրեթէ 400 ականներ: Մեծ հացոյթով ըսին ինծի թէ՛ այդ աւերիչ գործիքներուն մեծ մասը հայթայթած էին Ռուսերը: Ամէն օր ռուսական թօրփիլարծակներ Վոսիորի բերանը Սեւ Մովի մէջ ականներ կը ցանէին, յուսալով որ անոնք հոսանքն իվար պիտի քշուէին եւ իրենց յատուկ պաշտօնը պիտի կատարէին: Բայց ամէն առտու, թիւրք եւ գերման ականահաւաքներ հոսանքն իվեր կ'երթային, կ'որսային ականները եւ Տարտանէլի մէջ կը գետեղէին զանոնք:

Էրէն-Քէօյի հրետանին այ ծանր ռմբակոծութեան մը ենթակայ եղած էր, բայց քիչ վնաս կրած էր: Տարտանոսի մէջ եղածէն տարբեր, այդ մարտկոցը բլուրի մը ետեւը հաստատուած էր, կատարելապէս տեսողութենէ ծածկուած: Ինծի ըսին թէ՛ այս վայրը ամրացնելու համար Թիւրքերը դրապէս պարտաւորուած էին ներքին նեղուցին ամրութիւնները քանդելու — նեղուցին այն մասը, որ կը տարածուի Չանաքէն Նաղարայի ծայրը: Այս էր պատճառը որ՝ Տարտանէլի այդ մասը ներկային ամրացուած չէր պէտք եղածին պէս: Իբր ամրացում, հոն գետեղուած թնդանօթները, Քրուփի 1885ի հին տիպարով հրազէններու նմուշներ էին:

Էրէն-Քէօյի հարաւը, ճամբան եզերող բլուրներուն վրայ, Գերմանները նորութիւն մը մտցուցած էին: Գտած էին պուլկարական պատերազմէն լքուած Քրուփի զանազան ռմբասանդեր, զորս հաստատած էին ծուլածոյ հիմերու վրայ: Իւրաքանչիւր մարտկոց այդ խարխիսներէն ունէր չորս կամ հինգ հատ, այնպէս որ, երբ անոնց մօտեցայ, տեսայ կարեւոր խարխիսներ, որոնք բնաւ թնդանօթ չունէին: Ա՛լ աւելի զարմացայ, երբ տեսայ խումբ մը գոմէշներ — կարծեմ գործի լծուած, տասնըվեց հատ համրեցի — որոնք այդ ռմբասանդերէն մէկը մէկ խարխիսէն միւսը կը փոխադրէին: Կ'երեւայ թէ՛ ասիկա պաշտպանողական ծրագիրին մէկ մասը կը կազմէր: Անմիջապէս որ ինկող ռումբերը ցուց-

նէին թէ՛ նաւատորմին նշանառութիւնը ճշդուած էր, ռմբասանդը գոմէշներու միջոցով կը փոխադրուէր ուրիշ խարխիս մը:

— Ատկէ՛ աւելի աղէկ հնարք մըն ալ ունինք, դիտել տուաւ սպաններէն մէկը: Կանչուեցաւ յիսնապետ մը՝ որ պատմեց իր ըրածները: Այս գինուորը վարիչն էր գործիքի մը, որ հեռուէն կը նմանէր իրական թնդանօթի: Բայց երբ զայն մօտէն քննեցի, տեսայ որ՝ ան կոյուղիի խողովակի երկայն կտոր մըն էր: Բլուրին ետեւը, նաւատորմիդէն կատարելապէս անտեսանելի, գետեղուած էր թնդանօթ մը՝ որուն հետ այս յիսնապետը կը գործակցէր: Երկու կողմերը հեռածայնով կը հաղորդակցէին: Երբ կրակելու հրամանը գար, ռմբասանդը վարող թնդանօթածիզը ռումբը կ'արծակէր, մինչդեռ կոյուղիի խողովակը վարող մարդը՝ կրակ կու տար քիլօներով սեւ վառօդի եւ կ'արծակէր սեւ ծուխի ուշագրաւ ամպ մը: Բնականաբար, մարտանաւերուն մէջ գտնուող Անգլիացիները եւ Ֆրանսացիները կը կարծէին թէ՛ իրենց ուղութիւնովը սուրացող ռումբերը կու գային այդ տեսանելի ծուխի ամպէն եւ կը ջանային իրենց ամբողջ ուշադրութիւնը այդ տեղին վրայ կեդրոնացնել: Այս ծիծաղելի թնդանօթին շուրջը գտնուող հողը ռումբի ծակերով նիշուած էր. ինծի ըսին թէ՛ այդ պաշտօնը կատարող յիսնապետը 500 է աւելի հարուածներ հրաւիրած էր իր վրայ, մինչդեռ իրական հրետածիզը դեռ կը մնար անեղծ եւ անյայտ:

Էրէն Քէօյէն ետ դարձանք զօրավար ձէվատի բանակատեղը, ուր պիտի նախաճաշէինք: ձէվատ զիս դիտարան մը հանեց. հոն աչքիս առջեւ պարզուեցաւ Եգէականի կապոյտ գեղեցիկ տարածութիւնը: Կը տեսնէի Տարտանէլի մուտքերը. Սէտու-իւլ-Պահրը եւ Գում-Գալէն, որոնք դուռի մը պահապաններուն պէս կանգնած էին. իրենց միջեւ կը տարածուէին արեւաշող վէտիվտուն ջուրերը: Հեռուն, Նշմարեցի Անգլիայի եւ Ֆրանսայի վեհապանծ մարտանաւերը՝ որոնք դէպի մուտքը կ'առաջանային. աւելի հեռուն, Նշմարեցի Թէնէտոս կղզին, որուն ետեւը գիտէինք թէ՛ ա՛լ աւելի մեծ նաւատորմիդ մը պահուրտած էր: Բնականաբար այս տեսարանը ինծի յիշեցուց պատմական եւ առասպելական հազարաւոր յիշատակներ, որովհետեւ հաւանօրէն աշխարհի վրայ չի կայ տեղ մը՝ որ աւելի բանաստեղծութիւն եւ վիպերգանք ներկայացնէ: Վստահօրէն, թիւրք ընկերս՝ զօրավար ձէվատ ալ դիւթուած զգաց, որովհետեւ հեռադիտակը առաւ եւ ուղղեց սեւ տարածութեան մը վրայ, հաւանօրէն վեց մղոն հեռուն:

— Նայեցէ՛ք այդ տեղին, ըսաւ, ինծի երկարելով հեռադիտակը: Գիտէ՞ք թէ ի՞նչ է աղ:

Դիտեցի, բայց չի կրցայ ստուգել թէ՛ ի՞նչ էր այդ աւագուտ ափուները :

— Ատոնք Տրովադայի դաշտերն են, ըսաւ : Եւ այն գետը՝ որուն պտուտկելով երեւալը եւ պահուրտիլը կը տեսնէք, աւելցուց, մենք Թիւրքերս գայն կը կոչենք Մէնտէրէ : Հոմերոսի Սքամանտը ըսածն է ան : Մեր կռնակը, քանի մը մղոն միայն հեռուն, կը գտնուի Իտա լեռը :

Յետոյ հեռադիտակը ուղղեց ծովին, պտըտցուց այն դաշտին վրայ, ուր բրիտանական մարտանաւերը կը կենային եւ կրկին առաջարկեց ինծի՝ դիտել ցուցուցած կէտը : Յանկարծ, աչքիս դէմ ցցուեցաւ անգլիական շքեղ մարտանաւ մը, կազմ ու պատրաստ պատերազմի, հանդարտօրէն շրջապտըտկելով, պահակի պաշտօն կատարող մարդու մը պէս :

— Ատիկա Ակամեմնոնն է՛ ըսաւ, զօրավար ձէվատ : Ռուսը մը արծակեմ անոր, հարցուց :

— Այո՛, եթէ կը խոստանաք որ՝ ռուսը չէք հանդիպցնել, պատասխանեցի :

Նախաճաշեցինք բանակատեղը, ընկերակցութիւնով ծովակալ Ուզէտտի, զօրավար Մառթէնսի եւ Պոլսի աւստրիական զինուորական կցորդ զօրավար Փօմիանրովսքիի : Խօսակցութեան մէջ տիրող նիշն էր՝ ապագային համար բացարձակ վստահութիւնը : Պոլսի դիւանագէտները եւ քաղաքագէտները ի՞նչ որ ալ խորհէին, այս մարդիկը՝ Թիւրք եւ Գերման՝ չէին յուսար — գէթ իրենց խօսակցութիւնը չէր մատնել ադ — որ դաշնակից մարտանաւերը պիտի անցնէին իրենց դիմադրութեան մէջէն : Ինչ որ ամէն բանէ վեր՝ կը թուէին յուսալ՝ սա էր թէ թշնամիները ուրիշ յարձակում մը պիտի գործէին :

— Եթէ միայն կարենայինք հարուածել Քոլին Էյդապօքը, ըսաւ խանդոտ Գերման մը, ակնարկելով բրիտանական նաւատորմիդին ամէնէն մեծ մարտանաւին, որ այդ միջոցին Նեղուցին բերանը կը կենար :

Մինչ Հռենոսի զինին սկսաւ կլլուել, կռիւի իրենց խանդը աճեցաւ :

— Անգամ մը սա անիծեալ յիմարները զօրք ցամաք հանէին, բացազանչեց մէկը — կը յիշատակեմ ճիշդ իր բառերը :

Թիւրք եւ գերման սպաները, իրապէս, կարծես կը մրցէին իրարու հետ, իրենց կռիւի պատրաստ ըլլալը արտայայտելու : Անկասկած այս խօսքերուն մեծ մասը յոխորտանք էր՝ իմ համբերութիւնս սպառել ձգտող — որովհետեւ մասնակի տեղեկութիւններ ունէի որ՝ կացութեան մասին իրենց ճիշդ զնահատութիւնը

շատ քիչ ապահով էր : Սակայն, հիմա կը յայտարարէին թէ՛ պատերազմը մինչեւ այդ առնել իրական պատեհութիւն մը չէր ներկայացուցած գերման եւ անգլիական մարտանաւերուն՝ իրարու հետ չափուելու եւ այդ պատճառով, Գերմանները Տարտանէյի մէջ կ'ողջունէին այդ առիթը, փորձելու համար անոր վախճանը :

Անատօլուի եզերքին վրայ, այցելելով բոլոր կարեւոր վայրերը, մեծ նաւակ մը նստանք եւ անցանք Կէլիպօլուի հրուանդանը : Հող, բոլորովին աղէտալի արկածի մը պիտի ենթարկուէինք : Նրբ Կէլիպօլուի ափուներին կը մօտենայինք, մեր նաւուղիդին հարցուցինք թէ՛՞ զիսէ՞ր ականներու դաշտին տեղը եւ կրնա՞ր ջրանցքին մէջ դեկավարել : «Այո՛», ըսաւ եւ ուղղակի դէպի ականները դեկավարեց ! Բարեբաղաբար միւս մարդը ժամանակին՝ նշմարեց սխալը եւ այդպէսով անվտանգ հասանք Քիլիտ-իւլ-Պահր : Հոս, մարտկոցները միւս կողմը գտնուածներուն ձեւը ունէին գրեթէ . անոնք Նեղուցին պաշտպանութեան գլխաւոր ուժերէն մէկը կը կազմէին : Հոս, ամէն բան, որչափ որ ոչ-զինուորական մը կրնար դատել, սքանչելի պայմանի մէջ էր, բացի այն պարագայէն որ՝ մարտկոցներու թնդանօթները հին ձեւով էին եւ ռազմանիւթը երբեք առատ չէր :

Մարտկոցները ծանր կերպով ռմբակոծուած ըլլալու նշաններ կը ցուցնէին : Ոչ մէկը աւերուած չէր. բայց ռուսքի ծակերէ շրջապատուած էին ամբողջները : Թիւրք եւ գերման ընկերներս աւերումի այդ հետքերը կատարեալ լրջութիւնով կը դիտէին եւ իրենց հիացումը կ'արտագեղէին դաշնակից կրակին ճշդութեանը համար :

— Ի՞նչպէս կարող կ'ըլլան այսչափ ճիշդ նշան առնելու : Այս հարցումը կ'ուղղէին իրարու : Ինչ որ ռմբակոծութիւնը այնչափ նշանաւոր կը դարձնէր, այն պարագան էր որ՝ անիկա կ'ուղղուէր ո՛չ թէ Նեղուցին բերանը գտնուող դաշնակից մարտանաւերէ, այլ՝ Կէլիպօլուի հրուանդանին միւս կողմը՝ եգէական Մովին մէջ ! գտնուող մարտանաւերէ : Հրետածիգները երբեք չէին տեսներ իրենց նշանակէտը, այլ պարտաւոր էին՝ բարձր բլուրներ պարզող մօտաւորապէս տասը մղոն հեռաւորութենէ մը կրակել. եւ սակայն իրենց ռուսքերէն շատերը շատ քիչ վրիպած էին Քիլիտ-իւլ-Պահրի մարտկոցներէն :

Սակայն, հող գտնուած միջոցիս, վայրը խաղաղ էր, որովհետեւ այդ օրը ռմբակոծութիւն տեղի չէր ունենար : Մասնաւորապէս զիս պատուելու համար, սպաները իրենց թնդանօթածիգ մէկ խումբը շարժումի մէջ դրին, որպէսզի կարենամ կատարեալ գաղափար մը կազմել գործող Թիւրքերու գործունէութեանը մա-

սին : Հրետածիգները երեւակայեցին որ՝ անգլիական նաւերը կ'առաջանան իրենց հասողութեան սահմանին մէջ, իրենց թնդանօթները ուղղած՝ փճացնելու Մարգարէին հետեւորդները : Փողահարը հնչեցուց շփորը . ամէն մարդ նետուեցաւ իր պաշտօնին գլուխը : Ոմանք ռումբ կը բերէին : ուրիշներ թնդանօթներու բերանը կը բանային . ոմանք նշանը կը ճշդէին . ուրիշներ լիսեռնները կը սեղմէին եւ ուրիշներ ռումբը տեղը կը դնէին : Ամէն բան եռանդու գործունէութիւն էր անշուշտ Գերմանները սքանչելի մարզիչներ եղած էին . բայց գերմանական ճշդապահութենէն աւելի բան մըն ալ կար, որովհետեւ այդ մարդոց դէմքերը կը փայլէին այն խոր մոլեռանդութիւնով՝ որ թիւրք զինուորին բարոյականը կը կազմէ : Հրետածիգները պահ մը կ'երեւակայէին թէ՛ նորէն կը կրակէին անհաւատ Անգլիացիին վրայ եւ իրենց մարզանքը իրականի դրոշմը կ'առնէր : Բոլորին աղաղակներուն մէջէն , կը լսէի միօրինակ երգը իրենց պետին, որ կ'նղանակէր այն աղօթքը, որով Իսլամութիւնը տասերեք դարեր կռիւի մղուած է . «Ալլահը մեծ է . միայն մէկ Աստուած կայ եւ Մուհամմէտ անոր Մարգարէն է» :

Երբ դիտեցի այդ մոլեգնած մարդիկը եւ անոնց դէմքերուն վրայ որոշակի գրուած տեսայ իրենց անզապելի ատելութիւնը անհաւատին հանդէպ , յիշեցի ինչ որ առտուն Գերմանները ըսած էին՝ թիւրք եւ գերման զինուորները իրար չխառնելու խոհականութեան մասին : Կատարելապէս վստահ եմ որ , եթէ ատիկա կատարուած ըլլար , գոնէ հոռ «Սրբազան Պատերազմ»ը յաջողութիւն մը ունեցած պիտի ըլլար . եւ Թիւրքերը Քրիստոնեաներուն հանդէպ իրենց ատելութիւնը թափած պիտի ըլլային իրենց շատ մօտը գտնուող այդ Գերմաններուն վրայ , պահ մը մոռնալով այն պարագան որ՝ անոնք զինակիցներ էին :

Այդ իրիկունը Պոլիս դարձայ, եւ երկու օր ետքը , Մարտ 18ին, դաշնակից նաւատորմիդը իր մեծագոյն յարձակումը գործեց : Ինչպէս ամէն մարդ գիտէ , այդ յարձակումը դաշնակիցներու աղէտալի եղաւ : Անոր արդիւնքը եղաւ ընկղմումը Պուֆիի , Օշրնի եւ Իռոի գիսքիսլի եւ ծանրապէս վնասուիլը ուրիշ չորս մարտանաւերու : 18ի կռիւին մասնակցող տասնըվեց մարտանաւերէն եօթը այսպէս ժամանակաւորապէս կամ տեւականապէս գործունէութենէ դուրս հանուեցան : Բնականաբար Գերմանները եւ Թիւրքերը հրճուեցան այս յաղթանակէն : Ոստիկանութիւնը ամէն կողմ շրջեցաւ եւ բոլոր տանտէրներուն յանձնարարեց այդ դէպքին իբր պատիւ դրօշակ պարգել : Թիւրք ժողովուրդը որեւէ տեսակ ինքնաբուխ հայրենասիրութեան կամ խանդավառութեան ա՛յնչափ քիչ ընդունակ է որ՝ առանց այդ կարգի հրահանգներու,

չպիտի դրօշագարդէր իր բնակարանը : Իրականութեան մէջ , ո՛չ Գերմանները , ո՛չ ալ Թիւրքերը այդ տօնախմբութիւնը շատ լուրջ չէին նկատուր , որովհետեւ տակաւին համոզուած չէին որ՝ իրենք իրական յաղթանակ մը շահած էին : Դեռ շատերը կը հաւատային որ՝ դաշնակից նաւատորմիդը պիտի յաջողէր նեղուցը ճեղքելով անցնիլ : Միակ խնդիրը ան էր թէ , կ'ըսէին , Համաձայնութիւնը յօժար էր անհրաժեշտութիւնով նաւեր գոհել : Ո՛չ վանկէնհայմ , ո՛ ալ Փալլապիչինի չէին հաւատար թէ՛ 18ի աղէտալի փորձը վերջ պիտի դնէր նաւային յարձակումին . եւ օրերո՛ւ , անձկութիւնով սպասեցին նաւատորմին վերադարձին : 18ի ետ մղումէն ետքը , այդ սուր սպասողական վիճակը տեւեց օրեր եւ շաբաթներ : Դեռ ամէն վայրկեան յարձակումին կրկնուելուն կը սպասէինք : Բայց մեծ առմաստն չվերադարձաւ երբևք :

Պիտի վերադառնա՞ր : Դաշնակից մարտանաւերը իրապէս պիտի կրնային գրաւել Պոլիսը : Այս հարցումը կ'ուղղէին ինձի շարունակ : Իբր ո՛չ - զինուորական՝ իմ կարծիքս չնչին արժէք միայն կրնար ունենալ . ասորը համար , ես միայն կը յայտարարէի գերման զօրավարներու եւ ծովակալներու եւ Թիւրքերու կարծիքները , որոնց գրեթէ ամէնքն ալ, բացի Էնվէրէն, կը հաւատային որ՝ ձեռնարկը պիտի յաջողէր . ես կը տարուիմ կիսովին հաւատալու թէ՛ Էնվէրի վերաբերմունքը գերեզմաննոցի հեծկտուք մըն էր միայն : Հետեւաբար, ներկային այս կէտին մասին ինչ որ կ'ուզեմ ըսել սա է . կ'ուզեմ որ հասկնալի ըլլայ թէ՛ իմ անձնական տեսութիւնս չէ՛ որ կը պարզեմ, այլ միայն այն պաշտօնական անձեւրունը, որոնք այդ ատենն դատելու լաւագոյն իրաւասութիւնը ունէին, Թիւրքիայի մէջ :

Եխտիւի կամրջակին վրայ մեր խօսակցութեան միջոցին , Էնվէր ինձի յայտնած էր թէ՛ «բազմաթիւ թնդանօթներ եւ առատ ռազմանիւթ» ունէր : Բայց այդ յայտարարութիւնը ճշմարիտ չէր : Քարտէսին վրայ ականարկ մը պիտի ցուցնէ թէ՛ ինչո՞ւ համար Թիւրքիա ռազմանիւթ չէր ստանար Գերմանիայէն կամ Աւստրիայէն, այդ ատեն : Իրողութիւնը ան է որ՝ Թիւրքիա նոյնչափ կատարելապէս կ'զգիացուած էր իր զինակիցներէն, որչափ Ռուսիա էր : Պոլիսէն Գերմանիա գացող երկաթուղիի երկու գիծեր կային : Մէկը կ'անցնէր Պուլկարիայի եւ Սերպիայի ճամբով : Պուլկարիա այդ ատենն զինակից չէր . եթէ նոյն իսկ Պուլկարիա այք գոցէր թնդանօթներու եւ ռումբերու անցնելուն , այդ գիծը չէր կրնար օգտագործուիլ, քանի որ Սերպիա, որ նիշէն Պելկրատ տարածուող կենսական օղակին կ'իշխէր, տակաւին յարձակում կրած չէր : Երկաթուղիի միւս գիծը, Պուքրէշի ճամբով Ռումանիա-

յէն կ'անցնէր : Այս գիծը Սերպիայէն կախում չունէր եւ եթէ ռուսմանական կառավարութիւնը հաւանէր, ան ապահով ճամբայ մը պիտի կազմէր՝ Քրուսիէն մինչեւ Տարտանէլ : Այն պարագան որ՝ ռուսմանական կառավարութեան մեղսակցութիւնովը ռազմանիւթեր կրնային զրկուիլ, թերեւս կը բացատրէ այն կասկածը, որ ծագում առաւ թէ՛ այդ ճամբով թնդանօթներ եւ ռուսներ կը փոխադրուէին : Քանի՛-քանի անգամներ ֆրանսական եւ անգլիական Դեսպանները բողոքեցին Պուքրէշի կառավարութեան, չէզոքութեան այդ հաստատուած բռնաբարումին դէմ. բայց ցամառից հերքումներ տրուեցան թէ՛ Գերմանները այդ գիծը չէին շահագործեր : Այսօր, կասկած չի կայ թէ՛ ռուսմանական կառավարութիւնը այդ հերքումները տալուն մէջ կատարելապէս պարկեշտ էր : Անհաւանական չէ որ Գերմանները իրենք հնարած ըլլան այդ առասպելները՝ միայն խաբելու համար Դաշնակից նաւատորմիդը որ՝ իրենց պաշարը անսպառելի էր :

Ենթադրենք թէ՛ Դաշնակիցները վերադարձած ըլլային, օրինակի համար՝ 19ի առտուն. ի՞նչ պիտի պատահէր : Միակ անվիճելի իրողութիւնը ան է որ՝ ամրութիւնները շատ քիչ ռազմանիւթ ունէին : Անոնք զրեթէ իրենց դիմադրողական ուժին վերջին կէտը հասած էին, երբ բրիտանական նաւատորմիդը 18ի ցորեկէնտքը հեռացաւ : Էսօսիէյրոս Փրէսի ամերիկացի հանրածանօթ թղթակից Մր. ձօրն Ա. Շռայնրի արտօնութիւն ձեռք բերած էի՝ Տարտանէլ այցելելու՝ դէպքերուն առիթով : 18ի գիշերը, այդ թղթակիցը կացութեան վրայ տեսակցեցաւ զօրավար Մէռթէնսի հետ, որ Նեղուցին արհեստագիտական գլխաւոր պաշտօնատարն էր : Զօրավար Մէռթէնս խոստովանեցաւ թէ՛ պաշտպանողականի հեռանկարը շատ վնասուցուցիչ էր :

«Մենք կը սպասենք որ՝ Անգլիացիները վաղը առտու կանուխ վերադառնան, կ'ըսէ. եւ եթէ գան, քանի մը ժամ միայն կարող կ'ըլլանք դիմանալ» :

Զօրավար Մէռթէնս աւելի խօսք չըրաւ, յայտարարելով թէ՛ ռազմանիւթը ճշմարտապէս սպառած էր, բայց Մր. Շռայնրը կռահեց որ՝ կացութիւնը ա՛դ էր : Եւ իրա՛ւ, Համիտիէ ամրոցը, որ ասիական եզերքին պաշտպանողական ամէնէն հզօր դիրքն էր, զրահ ծակող տասնըեօթը ռուսք միայն ունէր. մինչդեռ Քիլիտ-իւլ-Պահր, որ եւրոպական եզերքին պաշտպանողական գլխաւոր դիրքն էր, ճիշդ տասը ռուսք ունէր :

«Նորհուրդ կու տամ ձեզի վաղը առտու ժամը վեցին ելլել, ըսաւ զօրավար Մէռթէնս, եւ երթալ Անատօլուի բլուրները : Մենք որոշած ենք երթալ» :

Բոլոր ամրութիւններու զինուորները հրաման ստացած էին մինչեւ արծակուած վերջին ռուսքը թնդանօթները գործածել եւ անկէ ետքը լքել ամրոցները :

Անգամ մը որ այդ պաշտպանողական դիրքերը անզօր դառնային, դաշնակից նաւատորմիդին գործը շատ պարզ պիտի ըլլար : Իրենց առաջնաւուն դէմ միակ արգելքը պիտի ըլլար ականներու դաշտը, որ Էրէն-Քէօյի հիւսիսակողմը զրեթէ նրկու մղոն հեռու կէտէ մը՝ կը տարածուէր մինչեւ Քիլիտ-իւլ-Պահր : Բայց Դաշնակից նաւատորմիդը բազմաթիւ ականահաւաք նաւեր ունէր, որոնք քանի մը ժամուան մէջ Նեղուցը կրնային մաքրել : Զանաքի հիւսիսը, ինչպէս արդէն բացատրած եմ, քանի մը թնդանօթներ կային, բայց 1878ի տիպարով էին եւ չէին կրնար արդիական զրահապատ նաւերը ծակող ռուսքեր արծակել : Նաղաբայի հրուանդանին հիւսիսը, միայն երկու մարտկոցներ կային, երկուքն ալ 1835 ! թուականէն : Այնպէս որ, անգամ մը Նեղուցին արտաքին ամրոցները լռեցնելէ ետքը, Պոլիսի ճամբուն արգելք ըլլալու ոչինչ կար, բացի գերմանական եւ թրքական մարտանաւերէն : Երկու նաւատորմիդներուն մէջ, Կոսիկը միակ ռազմական առաջնակարգ մարտանաւն էր, բայց ան երկար ատեն չպիտի կրնար տոկալ Քուրն Էլիպպիի դէմ : Իրաւցնէ՛, դիմադրող նաւատորմիդներուն զօրութեան անհամեմատականութիւնը ա՛յնչպի մեծ էր որ՝ տարակուսելի էր որ՝ բաղխում մը տեղի ունենար երբեք :

Այսպէս, դաշնակից նաւատորմիդը ամսուն քսանի առտուն, Պոլիսի առջեւ պիտի ցցուէր : Ի՞նչ պիտի պատահէր այն ատեն : Շատ վիճաբանութիւն կատարուած էր այդ տեսակ զուտ նաւային յարձակումի մը հաւանականութեանը մասին : Էնպէր, ինձի հետ իր տեսակցութեանը մէջ, ուժգնապէս ծանրացած էր Պոլիս նաւատորմիդ մը զրկելու անհնթեթութեանը մասին, առանց պաշտպանութեանը ցամաքահանուած համազօր ուժի. արդէն Տարտանէլի արշաւանքին շուրջը կատարուած քննադատութիւններէն շատերը՝ այդ կէտին վրայ կեդրոնացած են : Սակայն իմ կարծիքս ան է որ՝ այդ տարամերժօրէն նաւային յարձակումը պաշտպանելի էր : Ես այս դատաստանը կ'ընեմ միայն՝ այդ ատեն Քիւրքիայի մէջ գոյութիւն ունեցող քաղաքականութեան վրայ : Սովորական պարագաներու մէջ, այդ տեսակ ձեռնարկ մը հաւանօրէն յիմարական պիտի ըլլար. բայց այդ ժամանակ Պոլիս տիրող քաղաքական պայմանները սովորական չէին : Այդ միջոցին, Քիւրքիայի մէջ ամրապէս հաստատուած կառավարութիւն չի կար : Նաղաքական խմբակցութիւն մը, որ քառասունէ աւելի անդամ

չունէր եւ որուն գլուխը կը գտնուէին Թալէադ, Էնվէր եւ ձէմալ, կը վարէին կեդրոնի կառավարութիւնը. բայց ամբողջ կայսրութեան մէջ իրենց հեղինակութիւնը չափազանց տկար էր: Իրականութեան մէջ, բովանդակ օսմանեան պետութիւնը, 1915 Մարտ 18ի օրը, երբ դաշնակից նաւատորմիդը լքեց յարծակոււմը: կազմալուծուի եզրը հասած էր: Թիւրքիայի ամէն կողմը, փառճամուլ առաջնորդներ բուսած էին, որոնք ամէն վայրկեան պետութեան անկումին կը սպասէին եւ որոնք առ ի իր կը փնտռէին ժառանգութենէն իրենց բաժինը յափշտակելու: Կանխապէս նկարագրուածին համաձայն. Սուրիայի մէջ ձէմալ արդէն կազմակերպած էր տեսակ մը անկախ կառավարութիւն: Իզմիրի մէջ, կառավարիչ Ռահմի պէյ յանախ մայրաքաղաքի իշխանութեան անսատած էր: Ազրիանուպոլիսի մէջ, Հանի Ատիլ, օրուան ամէնէն յանդուզն Թիւրքերէն մէկը, կ'ըսուէր թէ ինքնագլուխ իշխանութիւն մը հիմնել կը ծրագրէր: Արաբիա արդէն գրեթէ անկախ ազգ եղած էր: Հպատակ ցեղերուն մէջ, ապստամբութեան ոգին արագօրէն կը տարածուէր: Յոյները եւ Հայերը սիրով պիտի ողջունէին Դաշնակիցներուն բազուկը զօրացնելու առիթ մը: Տիրող ելեմտական եւ ճարտարարուեստական պայմանները կը թուէին յեղափոխութիւնը անխուսափելի դարձնել: Բազմաթիւ հողատէրեր գլուխ վերցուցին. անոնք ցանքի հունտ չունէին եւ չէին ուզեր կառավարութենէն իրր ծրի նուէր ընդունիլ զայն, որովհետեւ, կ'ըսէին թէ՛ հունձքը համբարուելուն պէս՝ բանակը անմիջապէս պիտի գրաւէր: Գայով Պոլիսին, հոն՝ ժողովուրդը եւ Թիւրքերու լաւագոյն տարրերը, հեռու՛ զաշնակից նաւատորմիդին գալուն հակառակելէ, հանոյքով պիտի ողջունէին զայն: Նոյն իսկ Թիւրքերը կ'աղօթէին որ՝ Անգլիացիները եւ Ֆրանսացիները գրաւէին իրենց քաղաքը, որովհետեւ ատիկա պիտի փրկէր զիրենք իշխող խմբակէն, պիտի ազատագրէր ատելի Գերմաններէն, խաղաղութիւն պիտի բերէր եւ վերջ պիտի դնէր իրենց տառապանքներուն:

Ո՛չ մէկը այնչափ լաւ կ'ըմբռնէր այս բանը, քան Թալէադ: Յարմար չէր նկատեր յանկարծակի նահանջ մը կատարել, այն պարագային, երբ դաշնակից նաւատորմիդը քաղաքին առջեւ երեւար: Ամիսներէ իվեր Թիւրք վարիչները նախանձոտ ակնարկներ կ'ուղղէին Միլէուվա ինքնաշարժի մը, որ Թիւրքիայի պատերազմ յայտարարելէն իվեր կը հանգչէր պելճիքական Իեսպանատունը: Վերջապէս Թալէադ տիրացաւ ցանկացուած աւարին: Տեղէ մը ձեռք անցուցած էր նաեւ ուրիշ ինքնաշարժ մը, զոր բեռնաւորած էր անիւի բացառիկ զօտիներով, պեղծիկով եւ ուրիշ բոլոր անհրաժեշտ պիտոյքներով՝ երկարատեւ ճամբորդու-

թեան մը համար: Վստահաբար, ասոր կոչումն էր ընկերանալ աւելի յանդուզն մեքենային՝ իբր տեսակ մը «մայր նաւ»: Թալէադ այս ինքնաշարժները կը սպասցնէր քաղաքին ասիական կողմը, միշտ կազմ ու պատրաստ եղոյ մեքենավարներով: Ամէն բան պատրաստուած էր Փոքր Ասիայի ներսերը մեկնելու, նշանը տրուած վայրկեանին:

Բայց Դաշնակից մեծ առնասան չի վերադարձաւ երբեք՝ յարծակում գործելու:

Այս մէկ վայրկեանի պարտութենէն շաքարի մը չափ ետքը, պատահումով Գերման Դեսպանատունէն ներս մտայ: Կանկէնհայմ ականաւոր այցելու մը կ'ընդունէր, զոր վաւիաքեցաւ ինծի ներկայացնել: Մտայ իր անձնական գրասենեակը, ուր կը գտնուէր Ֆօն տէր Կօլց փաշան, որ նոր վերադարձած էր Պելճիքայէն, ուր կառավարիչի պաշտօն վարած էր: Կը խոստովանիմ որ՝ Կօլցին այդպէս անպաշտօն կերպով հանդիպելուս, դժուարեցայ իր անձը հաշտեցնել այն պատմութիւններուն հետ. որոնք այդ միջոցին կը հասնէին Պելճիքայէն: Այդ առտուն, այդ քաղցրաբարոյ եւ ակնունոցաւոր պարոնը՝ բաւական մեղմօգի եւ անվնաս թուեցաւ ինծի: Ան իր տարիքն այ չէր ցուցներ -- զրեթէ եօթանասունը չորս տարեկան էր. իր մագիւրը գորշ գիծերով միայն պիսակուած էին եւ դէմքը զրեթէ անխորշոմ էր. զինքը հագիւ վաթսուներհինգ տարեկանի տեղ պիտի դնէի: Աչքի չէին զարներ այն դաժանութիւնը, բրտութիւնը եւ խրոխտանձնութիւնը՝ որոնք շատ մը ազնուատոհմ Գերմաններու յատկանիշներն են: Իր ծայրը խորաշեշտ, ներդաշնակ եւ հանելի էր. իր վարմունքի ձեւերը լիովին բարեկամական եւ հանոյական էին: Իր վարքին մէջ միակ ցոյցի նշանը իր համազգեստն էր. ֆելյու-մարաշախտի զգեստ հագած էր. կուրծքը կը շողար շքանշաններով եւ ոսկի հիւսքով: Ֆօն տէր Կօլց բացատրութիւն տուաւ իր շքանշաններուն մասին, — զորս կէս մը գովաբանեց, ըսելով թէ՛ Սուլթանին հետ տեսակցութենէ մը նոր կը դառնար: Պոլիս եկած էր Քայզրին կողմէ նորին վեհափառութեան պատուանշան մը մատուցանելու. եւ Սուլթանին կողմէ մեծարանքի նման նշան մը կը տանէր Պերլին՝ Քայզրին, 10, 000 սիլառեքներու կայսերական ընծայէ մը գաւտ:

Միջոց մը երեքս ժամանակ անցուցինք, սուրճ խմելով, գերմանական յեյիեր ուտելով եւ գերմանական սիկառներ ծխելով: Ես խօսակցութեան շատ չի մասնակցեցայ. բայց ֆօն տէր Կօլցի եւ Վանկէնհայմի խօսակցութիւնը թուեցաւ ինծի որ՝ լայն լոյս կը սփռէր գերման միտքին եւ մասնաւորապէս գերման զինուորական տեղեկագիրներուն արժանահատութեանը վրայ: Տարտա-

նէլի կռիւին մէջ, — ինչ որ զիրենք այդ միջոցին ամէն բանէ աւելի կը շահագրգռէր, — նշանակելի պարագան Անգլիայի կատարեալ անկեղծութիւնն էր՝ հրատարակելու իր կորուստները: Բրիտանական կառավարութեան՝ պաշտօնական յայտարարութիւն մը հրատարակելը՝ ըսելու համար թէ՛ երեք մարտանաւեր ընկղմած էին եւ չորս ուրիշներ ծանրապէս վնասուած, շատ արտասովոր բան կ'երևար իրենց: Այդ գեկոյցին մէջ, ես կը տեսնէի մէկ արտայայտութիւնը Անգլիացիներու սո:խրական փափաքին՝ հրապարակելու ամէնէն զէշ բանն ալ քաղարականութիւն՝ զոր մենք Ամերիկացիներս լաւագոյնը կը նկատենք պատերազմի ժամանակ: Բայց այդ տեսակ ակնյայտ բացատրութիւն մը չէր կրնար գոհացնել այդ խելանի եւ վեհաշուք Տիւտանները: Ո՛չ, Անգլիա թաքուն նպատակ մը ունէր՝ նշմարութիւնը այդչափ չբաշտելով խոստովանելուն մէջ. ի՞նչ կրնար ըլլալ ադ:

— «Es ist ausserordentlich!» (Արտասովոր է ադ), կ'ըսէր ֆօն տէր Կօյց, ականարկելով Անգլիայի՝ հրապարակով պարտութիւնը խոստովանելուն:

— «Es ist unerhört!» (Անը՛րբ բան է ադ), կը յայտարարէր նոյնպէս Վակէնհայմ, ապշահար:

Այդ գիտնական դիւանագէտները մէկզմէկու ետեւէ բացատրութիւններ ձեւաբանեցին եւ վերջապէս յանգեցան եզրակացութեան մը՝ որ կը գոհայնէր բարձրագոյն ռազմագիտութիւնը անգամ: Անոնք համաձայնեցան թէ՛ Անգլիա իրականապէս եռանդաւորուած չէր այդ յարձակումով, որո:վնտեւ, յաջողութեան պարագային, ստիպուած պիտի ըլլար Պոլիսը Ռուսիայի յանձնել — բան մը էր՝ Անգլիա իրականապէս մտադիր չէր ըլնել: Ծանուցանելով կորուստները, Անգլիա Ռուսիայի կը ցուցնէր զործին հսկայական դժուարութիւնները. իրաւցնէ, ան ապացուցած էր որ՝ ձեռնարկը անիրականալի էր: Այդ կորուստներէն ետքը, Անգլիա կ'ուզէր Ռուսիայի հասկցնել թէ՛ անկեղծ ջանք մը ըրած էր պատերազմի այդ մեծ աւարը շահելու եւ կը սպասէր որ՝ Ռուսիա ալ չի պահանջէ աւելի զոհողութիւններ:

Պատեղազմի այս մեծ դրուագին վախճանը եկաւ 1915-16ի ձմեռը: Այդ միջոցներուն, Պուլկարիա Կեդրոնի Տէրութիւններուն միացած էր. Սերպիա ճգմուած էր եւ Գերմանները տիրացած էին անվթար եւ անխափան երկաթուղիի գիծի մը՝ Պոլիսէն մինչեւ Աւստրիա եւ Գերմանիա: Ալ Քրուսիի հսկայ թնդանութիւնը սկսան գալ այդ գիծով — բոլորն ալ Տարտանէլի սահմանուած: Նեղուցին մուտքին մօտ, զետեղուեցան ամենավերջին տիպարով՝ տասներկու մեծ մարտկոցներ, որոնք կատարելապէս կ'իշխէն Սէտու-իւլ-

Պահրի: Գերմանները Թիւրքերուն փոխ տուին 500,000,000 մառֆ, որուն մեծագոյն մասը ծախսուեցաւ պահպանելու հաղորդակցութեան այս անհրաժեշտ նամբան: Խեղճուկրակ կերպով ամբացուած այն նեղուցը. ուրկէ 1915 Մարտին անցայ, հիմա ամբացուած է այնչափ անառիկ կերպով՝ որչափ Հէլիկոլանտը: Տարակուսելի է որ՝ աշխարհի բոլոր նաւատորմիւնները կարենան այսօր ճեղքել Տարտանէլը:



ՋՕՐԱՎԱՐ ԼԻՄԱՆ ՅՕՆ ԶԱՆՏԵՐՍ

Պե՛ս՝ Քայգերին կոյմէ 1913ի վերջերք Պոլիս դրկուած զինուորական պատուիրակութեան. վերակազմելու համար քիւրճ բանակը՝ ապագայ պատերազմին պատրաստ ցնուելու: Խնն է որ անձնապէս վառեց քեֆական զօրահանութիւնը, 1914 Օգոստոսին — Թիւրքիայի պատերազմ յայտարարելէն ետեք ամիս առաջ:

ԺԹ. ԳԼՈՒԽ

ԵՐԵՔ ՀԱԶԱՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՆՁԵՐՈՒ ՀԱՍՆՐ ՊԱՅՔԱՐ ՄԸ

1915 Մայիս 2ին, էնվէր ամերիկեան Դեսպանատունը ղրկած էր իր թիկնապահը. որ կը բերէր պատգամագիր մը, խնդրելով ինձմէ որ՝ զայն Ֆրանսական եւ բրիտանական կառավարութիւններուն ղրկեմ: Այս այցելութենէն զրեթէ շաբաթ մը առաջ, Դաշնակիցները Կէլիպոլուի թերակղզին ցամաք ելած էին: Վստահօրէն, անոնք այն եզրակացութեան յանգած էին թէ՛ միակ նաւային յարձակում մը կարող չսիրտի ըլլար քանդել ամրութիւնները եւ բանալ Պոլիսի ճամբան. եւ անոնք հիմա ծրագրի փոփոխութիւն մը որդեգրած էին՝ հսկայ զօրաբանակներ ղրկելու, որոնք պիտի պաշտպանուէին իրենց մարտանաւերուն թնդանօթներով: Արդէն հազարներով Աւստրալիացիներ եւ Նոր-Չելանտացիներ թերակղզին ծայրը խրամներու մէջ տեղաւորուած էին եւ Պոլիսի մէջ տիրող յուզումը զրեթէ ա՛յնչպի մեծ էր, որչափ եղած էր. երկու ամիս առաջ, նաւատորմիլին երեւնալէն առաջ եկած յուզումը:

էնվէր կը տեղեկացնէր հիմա ինձի որ՝ դաշնակից նաւերը անզգուշ կերպով մը կը ումբակո՛ւէին, անտեսելով այն միջազգային ընտելուած օրէնքը թէ՛ այդ տեսակ ումբակոծութիւններ պէտք էին ուղուի միայն ամբացած վայրերու դէմ. բրիտանական եւ Ֆրանսական ռուսերը, կ'ըսէր, կ'իյնային ամէն կողմ, քանդելով անպաշտպան իսլամ գիւղեր եւ սպաննելով հարիւրաւոր ոչ-պատերազմիկ իսլամներ: Էնվէր կը խնդրէր ինձմէ՛ Դաշնակից կառավարութիւններուն ծանուցանել որ՝ այդ գործերը անմիջապէս պէտք էին դադարի: Էնվէր որոշած էր այդ միջոցին Պոլիս գտնուող բոլոր բրիտանական եւ Ֆրանսական քաղաքացիները ժողովել եւ զանոնք Կէլիպոլուի թերակղզին ղրկելով ցրուել իսլամ գիւղերու եւ քաղաքներու մէջ: Այն ատեն Դաշնակից մարտանաւերը իրենց ռուսերը պիտի արձակէին ո՛չ թէ միայն խաղաղ եւ անպաշտպան իսլամներու, այլ նաեւ իրենց հայրենակիցներուն վրայ: Էնվէրի կարծիքը ա՛ն էր որ՝ այս սպառնալիքը ամերիկեան Դեսպանատունին միջոցով բրիտանական եւ Ֆրանսական կառավարութիւններուն հազորդուելով՝ շուտով վերջ պիտի դնէր այդ կարգի «վայրագութիւն» ներու: Քանի մը օրուան պայմանաժամ տրուած էր ինձի՝ զեկոյցը Լոնտոն եւ Փարիզ հասցնելու:

Այդ ատեն, 3,000ի չափ բրիտանական եւ Ֆրանսական քաղաքացիներ կ'ապրէին Պոլիսի մէջ: Ատոնց մեծագոյն մասը կը պատկանէր Լըվանդիս անունով ծանօթ դասակարգին. անոնք զրեթէ բոլորն ալ Թիւրքիա ծնած էին եւ անոնցմէ շատերուն ընտանիքները երկու կամ երեք սերունդներէ իվեր այս երկիրին մէջ հաստատուած էին: Իրենց եւրոպայի քաղաքացիութեան պահպանումը զրեթէ միակ կապն է՝ այն ազգին հետ, որմէ ծագում առած են: Թիւրքիայի զխաւոր քաղաքներուն մէջ, յաճախադէպ կերպով կը հանդիպինք այրերու եւ կիներու, որոնք ցեղով ու ազգութիւնով Անգլիացի են, բայց որոնք անգլիերէն չեն խօսիր, որովհետեւ Լըվանդիսներուն սովորական լեզուն Ֆրանսերէնն է: Անոնց մեծագոյն մասը երբեք Անգլիա կամ որեւէ եւրոպական քաղաք ոտք դրած չէ. անոնք միայն մէկ հայրենիք մը ունին, եւ ադ՝ Թիւրքիան է: Այն պարագան որ՝ Լըվանդիս սովորաբար կը պահէ իր բնիկ ազգին քաղաքացիութիւնը, հիմա զինքը յայտնապէս յարմար առարկայ կը դարձնէր թրքական վրէժխնդրութեան: Այս Լըվանդիսներէն զատ, բազմաթիւ Անգլիացիներ եւ Ֆրանսացիներ կ'ապրէին Պոլիսի մէջ. իր վարժարաններու ուսուցիչներ, իբր միսիոնարներ եւ իբր կարեւոր գործի մարդեր եւ վաճառականներ: Օսմանեան կառավարութիւնը հիմա կը մտադրէր հաւաքել այդ բոլոր օտարները. թէ՛ մօտաւոր եւ թէ՛ հեռաւոր կերպով Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսայի կապակցուած անձերը, եւ կուզէր զանոնք Կէլիպոլուի թերակղզին կրակի ենթակայ դիրքերուն մէջ զետեղել, իբր նշանակէտ Դաշնակից նաւատորմիլին:

Երբ այս ցնցող ծանուցագիրը ստացայ, բնականաբար իմ առաջին հարցումս սա եղաւ թէ՛ իրա՞ւ մարտանաւերը անպաշտպան քաղաքներ կը ումբակոծէին: Եթէ անոնք այդպէս անզգուշ կերպով ոչ-պատերազմիկ այրեր, կիներ եւ տղաքներ կը սպաննէին, էնվէրի ծրագրածին նման ճնշողական միջոց մը՝ հաւանօրէն քիչ մը արդարացում պիտի գտնէր: Բայց ինձի անհաւատալի թուեցաւ որ՝ Անգլիացիները եւ Ֆրանսացիները կարենային այդ տեսակ բարբարոսութիւններ գործել: Արդէն թիւրք պաշտօնատարներու կողմէ այդ կարգի բազմաթիւ զանգատագիրներ ստացած էի, որոնց շուրջը քննութիւն կատարելէ ետքը, իբր անճիշդ՝ վերադարձուցած էի: Դեռ վերջերս. բժշկական մարմինի պետ Սիլվէյման Նումանի առաջին օգնական՝ Տրթ. Մէյէր, ծանուցած էր ինձի թէ՛ բրիտանական նաւատորմիլը ումբակոծած էր թրքական հիւանդանոց մը եւ 1,000 հիւանդ սպաննած: Բայց երբ խնդիրը քննած էի, գտած էի որ՝ չէնքը հազիւ թեթեւօրէն վնասուած էր եւ մէկ մարդ միայն սպաննուած: Հիմա բնակա-

նաբար կը կասկածէի որ՝ դաշնակից բարբարոսութեան այս վերջին պատմութիւնը հիմնուած ըլլայ նման խարխուլ կռուանի մը վրայ: Իրաւ ալ, շատ չանցած տեղեկացայ որ այդպէս էր: Դաշնակից նաւատորմիդը իսլամ գիւղեր չէր ռմբակոծեր երբեք: Թերակղզիին արեւմտեան կողմը, Եգէական Մովին աղեղնածեւ փորուածքը եղող Սարոսի Մոցին մէջ, կեցած էին կարգ մը բրիտանական մարտանաւեր եւ այդ ապահով կէտէն Կէլիպօլու քաղաքին վրայ ռումբ կ'արծակէին:

Քաղաքներու բոլոր «ռմբակոծութիւն»ը՝ զոր կը կատարէին, կը սահմանափակուէր այս միակ քաղաքին շուրջը: Բրիտանական նաւատորմիդը այդ արարքով չէր բռնաբարեր քաղաքակիրթ պատերազմի օրէնքները, որովհետեւ երկար ատենէ իվեր պարպած էր իր քաղաքային բնակչութիւնը, եւ Թիւրքերը զանազան տուներու մեջ հաստատած էին զինուորական սպայակոյտի կեդրոններ, որոնք ուղղակի առարկայ դարձած էին դաշնակից յարձակումին: Անտարակոյս ինծի ծանօթ չէր պատերազմական օրէնք մը՝ որ յարձակումը արգիւէր զինուորական կայանի մը դէմ: Գալով քաղաքային անձերու, այրերու, կիներու եւ տղաքներու սպաննութեան պատմութիւններուն, ատոնք պարզապէս արտառոց չափազանցութիւններ էին: Քանի որ զրեթէ ամբողջ քաղաքային բնակչութիւնը շատոնց մեկնած էր, ռմբակոծութեան հետեւանք եղող որեւէ դէպք՝ պէտք էր պատկանիլ կայսրութեան զինուած ուժերուն:

Կացութեան մասին բուական խօսեցայ Մր. Էռնէսդ Կէլի հետ, որ ընդհանրապէս Պոլիսի ֆրանսական քաղաքացիներու ներկայացուցիչը կը նկատուէր, ինչպէս նաեւ ամերիկեան Դեսպանատունի խորհրդական Մր. Զօֆման Ֆիլիպի հետ, եւ որոշեցի որ անմիջապէս Բ. Դուռ երթամ՝ Էնվէրին բողոքելու:

Այդ պահուն, նախարարական խորհուրդ գումարուած էր, բայց Էնվէր դուրս ելաւ: Իր վարմունքը սովորականէն աւելի ջղազրգիւ էր: Բրիտանական նաւատորմիդին յարձակումը նկարագրած ատեն՝ ծայրայիտօրէն կրքոտեցաւ. ալ այն անվրդով Էնվէրը չէր՝ ինչպէս զինքը ճանչցեր էի:

— Աս վատ Անգլիացիները! բացազանչեց: Անոնք երկար ատեն ջանացին Տարտանելէն անցնիլ, բայց անոնց դասը աղէկ տուինք! Եւ տեսէ՛ք թէ ի՞նչ տեսակ վրէժ մը կը լուծեն: Իրենց մարտանաւերը կը սպրդին արտաքին ծովածոցին մէջ, ուր մեր Թիւրանօթները իրենց չեն կրնար հասնիլ, եւ բլուրներուն վրայէն կրակ կ'ընեն մեր գիւղակներուն, սպաննելով անվնաս ծերունիներ, կիներ եւ մանուկներ եւ ռմբակոծելով մեր հիւանդանոց-

ները: Կը կարծէ՞ք որ Թոյլ պիտի տանք որ շարունակեն: Բայց ի՞նչ կրնանք ընել: Մեր Թիւրանօթները բլուրներուն վրայէն անոնց ռումբ չեն կրնար հասցնել որով կռիւի չենք կրնար մտնել անոնց հետ: Եթէ կարենայինք, զանոնք ետ պիտի մղէինք, ճիշդ ինչպէս որ ըրինք ամիս մը առաջ Նեղուցին մէջ: Մենք նաւատորմիդ յունիսք Անգլիա դրկելու, ռմբակոծելու համար անոնց չամբացուած քաղաքները, ինչպէս անոնք կը ռմբակոծեն մերիւնները: Հետեւաբար որոշած ենք մեր գտնել կրցած բոլոր Անգլիացիները եւ Ֆրանսացիները Կէլիպօլու փոխադրել: Թող իրենց ազգակիցներն ալ սպաննեն՝ մերիւններուն հետ:

Պատասխանեցի իրեն որ՝ եթէ դէպքերը իր յայտարարածին պէս էին, սրտմտելու պատճառ ունէր: Բայց իր ուշադրութիւնը հրաւիրեցի այն իրողութեան վրայ թէ՛ ինք կը սխալէր. թէ՛ Դաշնակիցները կ'ամբաստանէր ռմիւններու համար՝ զորս անոնք չէին գործեր:

— Ատիկա ամէնէն բարբարոս բանն է՝ զոր դուք երբեք երեւակայած ըլլաք, ըսի: Անգլիացիները կատարեալ իրաւունք ունին Կէլիպօլուի պէս զինուորական կայանի մը դէմ յարձակում գործելու:

Բայց առարկութիւնս չազդեց Էնվէրի: Համոզուեցայ որ՝ այդ բայը առնել որոշած էր, ո՛չ թէ իբր ճնշողական միջոց մը՝ իր հայրենակիցները պաշտպանելու համար, այլ ինք եւ ընկերակիցները կուրաբար կատաղութիւննին կը յագեցնէին: Այն իրողութիւնը որ՝ Աւստրալիացիները եւ Նոր-Զելանտացիները յաջողապէս ցամաք ելլել կրցած էին, իրենց ամէնէն բարբարոս բնագրները ոտք հանած էր: Էնվէր մեր տեսակցութեան մէջ ակնարկեց այդ ցամաք ելլելուն. թէեւ ձեւացուց շատ կարեւորութիւն չի տալ ատոր եւ ըսաւ թէ՛ շուտով Ֆրանսացիները եւ Անգլիացիները ծով պիտի թափէր, բայց կռահեցի որ՝ ատիկա շատ մտահոգութիւն կը պատճառէր իրեն: Ինչպէս արդէն ըսի, Թիւրքը հոգեբանական տեսակէտով նախնական է. Էնվէրի կատարելապէս տրամաբանական կը թուէր իր իշխանութեանը տակ գտնուող հարիրաւոր անպաշտպան Անգլիացիները սպաննել՝ իբր փոխարինութիւն Անգլիացիներու Կէլիպօլու ցամաք ելլելուն. Այս տեսակցութեան իբր արդիւնք՝ քանի մը զիջողութիւններ միայն կրցայ շահիլ: Էնվէր հաւանեցաւ տարագրութիւնը ետածգել միջնու հիմնադրութիւն — կերակի էր այդ օրը. հրահանգէն գերծ ընել կիները եւ տղաքը եւ չառնել ոչ մէկը այն Անգլիացիներէն եւ Ֆրանսացիներէն՝ որոնք ամերիկեան հաստատութիւններու հետ կապ ունէին այդ միջոցին:

— Միւսները բոլորն ալ պէտք է երթան, եղաւ իր վերջին խօսքը: Ասկէ զատ, աւելցուց, չենք ուզեր որ ընդծովեանները Մարմարայի մէջ թորփիլահար ընեն այն փոխադրանաւերը, զորս Տարտանէլ կը ղրկենք: Առաջիկային, հոն ղրկուած իւրաքանչիւր նաւի մէջ մէկ քանի Անգլիացիներ եւ Ֆրանսացիներ պիտի դնենք, իբր պաշտպանութիւն մեր զինուորներուն:

Երբ Դեսպանատուն վերադարձայ, տեղեկացայ որ՝ առաջադրուած տարագրութեան լուրը հրատարակուած էր: Ապաշարութիւնը եւ յուսահատութիւնը՝ որոնք ատոր յաջորդեցին անմիջապէս, անօրինակ եղան, այն քաղաքին մէջ՝ որ մշտապէս յուզումի ենթակայ էր: Եւրոպացիները, երկար տարիներ Արիւելթի մէջ ապրած ըլլալով, կ'երեւայ թէ վարակուած են անոր ղիւրագրգռութենէն, մասնաւորապէս վախի եւ սարսափի ենթակայականութենէն, եւ հիմա, երբ ալ չէին վայելեր իրենց Դեսպանատուններուն պաշտպանութիւնը, այդ վախերը աւելի՝ ծաւալուած էին: Սարսափահար ժողովուրդի հեղեղ մը սկսաւ խուժել ամբիկեան Դեսպանատունէն ներս: Իրենց յացուկոծէն եւ աղաղակներէն մարդ կը կարծէր թէ՝ անոնք անմիջապէս պիտի տարուէին եւ սպաննուէին. անոնք չէին կրնար հաւատալ թէ՝ փրկուելու որեւէ հնարաւորութիւն մը կար: Շարունակ կը թախանձէին որ մասնաւոր բացառումներ ձեռք բերէի: Մէկը կ'առարկէր թէ՝ չէր կրնալ երթալ՝ ընտանիքի մը ապաւէնը ըլլալուն. ուրիշ մը հիւանդ տղեկ մը ունէր. ուրիշ մըն ալ ինք հիւանդ էր: Նախասենեակս լեցուն էր զարհուրած մայրերով՝ որոնք կ'աղաչէին որ իրենց զաւակներուն համար պատժագրծութիւն ապահովեմ, եւ այրիներով՝ որոնք իրենց ամուսիններուն համար մասնաւոր շնորհներ կը խնդրէին: Անոնք ինձի կը ներկայացնէին ամէն տեսակ անկարելի թելադրութիւններ. թէ՝ իբր բողոք՝ դեսպանութենէս հրաժարելու էի. թէ՝ մինչեւ անգամ Միաց.-Նահանգներու կողմէ Թիւրքիայի սպառնալու էի պատերազմ յայտարարել! Անոնք շարունակ կը պաշարէին կինս, որ անոնց պատմութիւնները լսելու եւ զանոնք մխիթարելու համար ժամեր կը վատնէր: Այս ամբողջ յուզումած ամբոխին մէջ, շատեր ալ կային՝ որոնք կացութիւնը կը դիմագրաւէին կատարեալ քաջասրտութիւնով:

Էնվէրի հետ տեսակցութեանս յաջորդ օրը, ոստիկանապետ Պէտրի սկսաւ ձեռքակալել զոհերէն մէկ քանին:

Յաջորդ առտուն, այցելուներէս մէկը գաղափար մը յայտնեց ինչ որ ինքնին բացայայտ բան մը պիտի նկատուէր: Այդ այցելուն Դերման մըն էր: Ան ըսաւ ինձի թէ՝ Դերմանիա իր վարկէ շատ պիտի տուժէր, եթէ Թիւրքերը գործադրէին իրենց ծրագիրը

հաւանօրէն ո՛չ մէկ մարդ պիտի ուզէր համոզուիլ որ՝ այդ ծրագիրը Դերմաններուն կողմէ դարձնուած չէր: Թելադրեց որ՝ գերման եւ աւստրիական Դեսպաններուն երթամ. վստահ էր թէ՝ անոնք ուժ պիտի տային իմ դատիս՝ պատշաճ կարգադրութեան մը համար: Որովհետեւ օտարներու նպատին շատ անգամներ Վանկէնհայմի դիմումներ կատարած էի, որոնք ապարդիւն մնացած էին, միտքէ չէի անցուցած թէ՝ այս առիթով ալ կ'արժէր իր գործակցութիւնը խնդրել: Ատկէ զատ, ոչ-պատերազմիկները պատերազմի մէջ իրը պաշտպանողական պահպանակ ծառայեցնելու ծրագիրը Դերմաններուն համար այնչափ սովորական հնարք մըն էր որ՝ երբեք ապահով չէի թէ՝ գերման սպայակոյտը դրդած ըլլար Թիւրքերը: Սակայն որոշեցի գերման այցելուիս խորհուրդին հետեւիլ եւ Վանկէնհայմի աջակցութիւնը խնդրել: Պէտք է խոստովանիմ որ՝ այս դիմումը կատարեցի իբր կորսուած յոյս մը, բայց զայն նկատեցի գոնէ միակ յարմարագոյն միջոցը՝ Վանկէնհայմի աջակցութեան տուիթ մը տալու:

Իրեն գացի իրիկուան ժամը տասնին եւ քուր մնացի մինչեւ տասնըմէկ: Այդ ժամուն մեծագոյն մասը վատնեցի ապարդիւն ջանքի մը՝ զինքը շահագրգռելու այդ ոչ-պատերազմիկներուն դժնդակ կացութիւնովը: Վանկէնհայմ ուղղակի ըսաւ թէ՝ ինձի չպիտի օժանդակէր. «Կատարելապէս պատշաճ է որ, կը պնդէր, Թիւրքերը Կելիպօլուի մէջ կնդրուացումի կայան մը հաստատեն: Պատշաճ է նաեւ որ՝ անոնք անգլիացի եւ ֆրանսացի ոչ-պատերազմիկները զետեղեն իրենց փոխադրանաւերուն վրայ եւ ատով ինքզինքնին ապահովեն յարձակումի դէմ»: Մինչ ես կրկնակի ջանքեր կը կատարէի դատը պաշտպանելու, Վանկէնհայմ խօսակցութիւնը ճարտարօրէն ուրիշ նիւթի կը դարձնէր: Մեր տեսակցութենէն ետքը նօթագրած յուշագրութիւններս կը վկայեն որ՝ գերման Դեսպանը գրեթէ ամէն նիւթի վրայ խօսեցաւ, բացի այն նիւթէն՝ որուն համար իրեն դիմած էի:

— Թիւրքերու այս արարքը մեծապէս պիտի վնասէ Դերմանիայի, կը սկսէի:

— Դիտէ՞ք թէ Գապա-Թէփէի անգլիացի զինուորները ուտելիք եւ խմելիք չունին, կը պատասխանէր: Անոնք յարձակում մը կատարեցին հոր մը գրաւելու համար եւ ետ մղուեցան: Անգլիացիները հեռացուցին իրենց նաւերը, իրենց զինուորները նահանջելէ արգելելու համար:

— Բայց Կելիպօլուի խնդիրին դառնանք, կ'ընդմիջէի: Հոս Պոլսի Դերմանները իրենք անգամ կը յայտարարէին թէ՝ Դերմանիա պարտաւոր էր կասեցնել այդ արարքը:

— Գաշնակիցները 45,000 զինուոր ցամաք հանեցին թերակղզիին վրայ, կը պատասխանէր Վանկէնհայմ, տոտնց 10,000ը սպաննուած են: Գանի մը օրէն յարձակում պիտի գործենք մնացածներուն վրայ եւ զանոնք պիտի բնաջնջենք:

Երբ կը ջանայի ուրիշ կողմէ նիւթին մօտենալ, այս վարպետ դիւանագէտը կը սկսէր Թուամանիայի վրայ խօսիլ. յիշելով այդ երկիրին ճամբով ռազմանիւթ ստանալու կարելիութիւնը:

— Ձեր վարչապետը Պոլիան. կըսէր, վերջերս յայտարարութիւն մը հրատարակած է՝ ապացուցանելով թէ՛ Միաց.-Նահանգները չէզոքութենէ պիտի դադրէին, մերժելով Գաշնակիցներուն ռազմանիւթ ծախել: Հետեւաբար մենք ալ նոյն փաստը գործածեցինք Թուամանացիներուն. եթէ չէզոքութենէ դադրի կը նշանակէ ռազմանիւթ ծախելը, անշուշտ չէզոքութենէ դադրի է՝ զայն փոխադրել մերժելը:

Այս փաստին սրամիտ ոգին հաճոյ կը թուէր Վանկէնհայմի. բայց յիշուցի իրեն որ՝ ես եկած էի խօսելու 2-3,000 ոչ-պատերազմիկներու կեանքին շուրջը: Երբ կրկին այս նիւթին անցայ, Վանկէնհայմ պատասխանեց թէ՛ Միաց.-Նահանգները ա՛լ Գերմանիայի կողմէ չպիտի ընդունուէին իբր հաշտարար, բանի որ մենք ա՛յնչափ բարեացակամ էինք Համաձայնութեան հանդէպ: Յամառեցաւ ինծի հաղորդելու Քարփաթներու մէջ գերմանական վերջին յաջողութիւններուն բոլոր մանրամասնութիւնները եւ Խտալիայի կացութեան վրայ վերջնագոյն յուրերը:

— Մենք պիտի նախընտրէինք Խտալիայի դէմ կռուիլ, բան զայն մեզի զինակից ունենալ, ըսաւ:

Ուրիշ որեւէ ատեն, բայց ո՛չ այդ միջոցին, այս խօսքերը չափազանց պիտի զբօսցնէին զիս: Կատարելապէս բացորոշ էր թէ՛ Վանկէնհայմ չպիտի խօսէր առաջադրուած տարագրութեան վրայ, եթէ ոչ ըսելու համար միայն որ՝ Թիւրքերը իրաւունք ունէին: Իր յայտարարութիւնը թէ՛ ծրագրուած էր Կէլիպօլուի մէջ «կեդրոնացումի կայան» մը հաստատել, կը բողոքակէր իր ամբողջ ընթացքը: Մինչև այդ ատեն, Թիւրքերը ոչ մէկ տեղ կեդրոնացումի կայան չէին հաստատած՝ թշնամի օտարականներու համար: Ես իրենց լրջօրէն խորհուրդ տուած էի այդ տեսակ կայաններ չի հաստատել. եւ լիովին յաջողած էի: Միւս կողմէ, Գերմանները կը բողոքէին որ՝ Թիւրքերը «չափազանց ներողամիտ» են եւ կը պնդէին երկիրին ներսերը այդ կարգի կայաններ հաստատուելուն վրայ: Վանկէնհայմի՝ «Կէլիպօլուի մէջ կեդրոնացումի կայան»ներ բացատրութիւնը գործածելը կ'ապացուցանէր որ՝ գերման տեսակէտը վերջապէս գերակշիռ դարձած էր եւ ես

օտարներուն համար իմ պայքարս կը կորսնցնէի: Ամէնէն նպատակը պարագաներու մէջ անգամ, արգելափակումի կայան մը՝ տառապնցուցիչ վայր մըն է, բայց ո՞վ երբեք, բացի Գերմանէն, կամ Թիւրքէն, յղացաւ զայն հաստատել պատերազմի դաշտին ճիշդ մէջտեղը: Ենթադրենք թէ՛ Անգլիացիները եւ Ֆրանսացիները հաւաքած ըլլային իրենց բոլոր թշնամի օտարականները, զանոնք բշտ ըլլային ռազմաճակատ եւ զետեղած No Man's Landի կայանի մը մէջ, ճիշդ երկու բանակներուն մէջտեղը: Ճիշդ այս տեսակէն էր այն «կեդրոնացումի կայան»ը, զոր Թիւրքերը եւ Գերմանները կը մտադրէին հաստատել Պոլիսի օտարականներուն համար — որովհետեւ Վանկէնհայմի հետ տեսակցութիւնս ա՛լ միտքիս մէջ ո՛չ մէկ տարակոյս չի թողուց թէ՛ Գերմանները դաւին մեղսակից էին: Անոնք կը վախնային որ՝ Տարտանէլի վրայ ցամաքային յարձակումը պիտի յաջողէր, ճիշդ ինչպէս որ վախցած էին թէ՛ նաւային յարձակումը պիտի յաջողէր, եւ զայն ծախողիցնելու իրենց ճիզբրուն մէջ, պատրաստ էին ո՛րեւէ զէնք գործածելու, նո՛յն իսկ հազարաւոր ոչ-պատերազմիկներու կեանքը:

Վանկէնհայմի հետ տեսակցութիւնս՝ իր աջակցութիւնը շահելու տեսակէտով՝ արդիւնք մը չունեցաւ. բայց ամրապնդեց այս ձեռնարկին մէջ յաղթանակը տանելու որոշումս: Գացի նաեւ աւստրիական դեսպան Փալլապիչիի: Ան առանց այլեւայլ յայտարարեց թէ՛ առաջադրուած տարագրութիւնը «անմարդկային» էր:

— Այդ նիւթին մասին պիտի տեսակցիմ Եպարքոսին հետ, ըսաւ ան. տեսնեմ թէ կրնամ ծրագիրը կասեցնել:

— Բայց գիտնալու էք որ բոլորովին անօգուտ է, պատասխանեցի: Եպարքոսը ոչ մէկ հեղինակութիւն չունի — ան լոկ փայտէ-մարդ մըն է: Մէ՛կ մարդ մը կրնայ կասեցնել ծրագիրը. այդ մարդը էնպէրն է:

Փալլապիչիին աւելի՛ նուրբ զգացումներ եւ աւելի՛ գորովոտ հոգի ունէր՝ քան Վանկէնհայմ, եւ տարակոյս չունէի թէ՛ կատարելապէս անկեղծ էր այդ ոճիրը արգիլելու իր փափաքին մէջ: Բայց ան աւստրիական հին դպրոցի դիւանագէտ մըն էր: Իր աչքին՝ ոչինչ այնչափ կարեւոր էր, որչափ դիւանագիտական նրբակենցաղութիւնը [etiquette]: Իբր ներկայացուցիչը իր կայսրին, պատշաճութիւնը կը պահանջէր որ իր բոլոր բանակցութիւնները կատարէր Եպարքոսին հետ, որ այդ միջոցին նաեւ արտաքին գործերու նախարարն էր: Պետական խնդիրներու շուրջը երբեք չէր տեսնուեր Թալէադի եւ էնպէրի հետ — իսկապէս, այդ մարդոց

հետ՝ որոնք Թիւրքիայի իրական վարիչներն էին՝ պաշտօնական սահմանափակ յարաբերութիւններ միայն ունէր: Եւ հիմա, 3,000 կեանքերու փրկութիւնը՝ պատճառ մը չէր Փալլափիլինիի աչքին՝ որ անտեսէր դիւանագիտական յարաբերութիւններու աւանդական սովորութիւնները:

Այս խնդիրին մէջ ճշդապահօրէն օրէնքին համաձայն պէտք է շարժիմ, ըսաւ ան:

Եւ իր սիրտի ազնուութենէն դրդուած, խօսեցաւ Սահտ Հալիմի: Իր օրինակին հետեւելով, Վանկէնհայմ ալ խօսեցաւ Եպարքոսին: Սակայն, Վանկէնհայմի բողոքին նպատակը՝ պաշտօնական ձեւակերպութիւն մըն էր միայն:

— Դուք կրնաք կարգ մը մարդեր խաբել, ըսի գերման Դեսպանին, բայց դուք գիտէք որ՝ այս նիւթին մասին Եպարքոսին խօսիլը՝ գրեթէ օդին մէջ հրացան պարպելու չափ արժէք միայն ունի:

Սակայն, դիւանագիտական մարմինէն անդամ մը կար, որ սրտովին աշխատեցաւ սպառնացուած օտարականներուն նպաստին: Ատիկա պուկար դեսպան Մ. Գօլուչէֆն էր: Թիւրք-եւ-գերման այս վերջին անքաղաքակրթութիւնը լսելուն, անմիջապէս ինծի եկաւ՝ իր աջակցութիւնը ներկայացնելու: Միտք չունէր ժամանակը վատնելու՝ Եպարքոսին բողոքելով, այլ իր մտադրութիւնը յայտնեց՝ անմիջապէս իշխանութեան աղբիւրին՝ նոյն ինքն էնվէրի դիմելու: Այդ նշանակելի օրերուն, Գօլուչէֆ չափազանց կարեւոր անձնաւորութիւն մըն էր. որովհետեւ Պուկարիա դեռ չէզոք էր եւ երկու կողմերն ալ անոր օժանդակութիւնը կ'որսային:

Նոյն միջոցին, Պէտրի եւ իր հացկատակները զբաղած էին ձերբակալելու նշանակուած Անգլիացիներէն եւ Ֆրանսացիներէն ոմանք: Կարգադրուած էր որ՝ տարագրութիւնը տեղի ունենար հինգշաբթի առտու: Չորեքշաբթի օր, հոգեխուովքը ջղայնատենդի աստիճանին հասաւ: Կարծես թէ՝ Պոլիսի ամբողջ օտար քնակուութիւնը ամերիկեան Դեսպանատուն համախոնուած էր: Քսանեակներով լալագին կիներ եւ դաժանադէմ այրեր՝ Դեսպանատունին դէմը եւ դուռին տակ հաւաքուեցան. երեք հարիւրէ աւելի անձեր մուտք գործեցին գրասենեակէս ներս, յուսահատօրէն փառելով Դեսպանին եւ պաշտօնէութեան: Շատերը կարծես կը խորհէին որ՝ իրենց ճակատագիրը իմ ձեռքերու մէջ էր. իրենց հոգեկան տագնապին մէջ, ոմանք նոյն իսկ դատապարտեցն գիս, առարկելով թէ՝ իմ բոլոր ուժս չէի գործածեր իրենց նպաստին: Ամէն անգամ որ գրասենեակէս դուրս կ'ելլէի եւ սրահը կ'երթայի, կը պաշարուէի քսանեակներով սարսափահար եւ հերարծակ մայ-

յերէ եւ կիներէ: Չարհուրելի էր ջղային պրկումը. հեռաձայնը առի, էնվէրը կանչեցի եւ տեսակցութիւն մը ուզեցի:

Պատասխանեց թէ՝ ուրախ պիտի ըլլար զիս ընդունելով հինգշաբթի օրը: Սակայն, մինչև այդ ատեն, գերիները արդէն դէպի Կէլիպօլու ճամբայ ելած պիտի ըլլային:

— Ո՛չ, պատասխանեցի, ձեզ պէտք է տեսնեմ այսօր ցորեկէ-ետքը:

Էնվէր ամէն կարգի չբնդանքներու կը դիմէր. զբաղած էր. ամբողջ օրուան ընթացքին համար ծրագրուած գործեր ունէր:

Կ'ենթադրեմ որ՝ զիս տեսնել կ'ուզէք Անգլիացիներու եւ Ֆրանսացիներու մասին, ըսաւ: Եթէ այդպէս է, հիմակուրնէ կրնամ ձեզի յայտարարել թէ՝ տեսակցութիւնը անօգուտ պիտի ըլլայ: Մենք որոշումը տուած ենք: Ոստիկանութեան հրահանգներ տրուած են՝ այս գիշեր զանոնք բոլորը հաւաքելու եւ վաղը առտու շոգենաւ դնելու համար:

Պնդեցի նորէն որ՝ զինքը պէտք էի տեսնել ցորեկէ-ետքը եւ ան ալ ցանաց նորէն խուսափիլ տեսակցութենէն:

— Ամբողջ ժամանակս գրաւուած է, ըսաւ: Ժամը չորսին նախարարական ժողով կը գումարուի եւ նիստը խիստ կարեւոր պիտի ըլլայ: Չեմ կրնար բացակայիլ:

Դեսպանատունը ողողող կիներու բազմութեան մտածումէն սիրտ առած, որոշեցի բոլորովին աննախընթաց միջոցի մը դիմել:

— Առաջարկած տեսակցութիւնս մերժուելու չէ, պատասխանեցի. ժամը չորսին Դահլիճին սրահը պիտի գամ: Եթէ մերժէք զիս ընդունիլ, պիտի պահանջեմ ժողովասրահը մտնել եւ ամբողջ Դահլիճին հետ խօսիլ խնդիրին վրայ: Հետաքրքիր եմ գիտնալ թէ՝ թիւրք Դահլիճը պիտի մերժէ՞ ընդունիլ ամերիկեան Դեսպանը:

Ինծի անանկ թուեցաւ որ՝ հեռաձայնին միւս ծայրը՝ կը լսէի էնվէրի հեւալը: Կ'ենթադրեմ որ՝ ոչ մէկ երկիրի պատասխանատու նախարարի այս տեսակ ապշեցուցիչ առաջարկ եղած չըլլայ երբեք:

— Ժամը 3.30ին զիս Բ. Դուռը գտէք, պատասխանեց ան, երկար դադարէ մը ետքը, կարգադրութիւն մը պիտի ընեմ՝ ձեզի հետ տեսակցելու համար:

Երբ Բ. Դուռ հասայ, ինծի տեղեկութիւն տուին թէ՝ պուկար Դեսպանը երկար տեսակցութիւն մը կ'ունենար էնվէրի հետ: Բնականաբար յօժար էի սպասելու, որովհետեւ գիտէի երկու անձերուն տեսակցութեան նիւթը: Քիչ ետքը, Մ. Գօլուչէֆ դուրս ելաւ. իր դէմքը կնճռոտած էր եւ որոշակի կը մատնէր այն տագնապը, որմէ անցած էր:

—Ամէն յոյս փճացած է, ըսաւ ան ինծի: Ոչ մէկ բան էնվէրը պիտի շեղեցնէ: Բացարձակ կերպով որոշած է որ՝ այդ տարագրութիւնը կատարուի: Չեմ կրնար ձեզի բարեյաջողութիւն մաղթել, որովհետեւ որեւէ յաջողութիւն չպիտի ունենար:

Ասոր յաջորդող տեսակցութիւնը՝ որ տեղի ունեցաւ էնվէրի եւ իմ միջեւ, ամէնէն ծանրակշիռն էր՝ զոր երբեք ունեցած ըլլայի մինչեւ այդ ատեն: Մօտ ժամ մը խօսեցանք օտարականներու ճակատագիրին վրայ: Էնվէրը գտայ իր ամէնէն քաղաքավար, բայց ամէնէն անդրդուելի մէկ ընթացքին մէջ: Խօսքի սկսելէ առաջ, յայտնեց ինծի թէ՛ անօգուտ էր վիճաբանիլ - որովհետեւ հարցը փակուած խնդիր մըն էր: Բայց ես յամառեցայ դիտել տալ իրեն թէ՛ Թիւրքիայի՝ իր թշնամիներուն հետ վարուելու կերպը ինչ սքանչելի օրհասութիւն մը գործած էր արտասահմանի մէջ: «Այս խնդիրին մէջ դուք որեւէ ուրիշ պատերազմիկ երկիրէ աւելի գերազանց առաջնութիւն շահեցար, ըսի: Դուք ձեր թշնամիները կեղծոնացուցի՛ր կայաններու մէջ չդրիք. դուք արտօնեցիք որ անոնք հոս մնան եւ առաջուան պէս շարունակեն իրենց սովորական գործը: Դուք ըրիք այս բանը, հակառակ տարբեր կերպով գործելու համար եղած զօրաւոր ճնշումին: Ինչո՞ւ կը քանդէք այդ ընթացքին առաջ բերած բովանդակ լաւ արդիւնքը, հիմա գործելով ձեր մտադրածին նման անդառնայի սխալ մը:

Բայց էնվէր առարկեց թէ՛ դաշնակից մարտանաւերը կը ռմբակոծէին չամրացուած քաղաքներ, սպաննելով կիներ, մանուկներ եւ վիրաւորուած զինուորներ:

—Մենք ձեր միջոցով զանոնք զգուշացուցինք որ՝ պէտք չէին այդ բանը ընել, ըսաւ, բայց անոնք չեն կասիր:

Անշուշտ այս յայտարարութիւնը ճշմարիտ չէր, բայց չկրցայ համոզել էնվէրը թէ՛ կը սխալէր: Մեծ գնահատութիւն յայտնեց իմ ըրածիս համար, ԼԷ անծիս համղէպ յարգանքովը մէկտեղ՝ ցաւ յայտնեց որ՝ չէր կրնար ընդունիլ տուած խորհուրդս: Յայտնեցի իրեն թէ՛ օտարահպատակները կը պահանջէին որ՝ սպառնամ հրաժարիլ բրիտանական եւ ֆրանսական շահերու պաշտպանութեան յանձնառութենէս:

— Աւելի գոհ կը մնանք ատկէ, պատասխանեց իսկոյն: Ձեզի հետ կնճիռ կ'ունենանք միայն այն ատեն, երբ մեր քովը կու գար եւ մեզ կը նեղէք անգլիական եւ ֆրանսական գործերով:

Հարցուցի թէ՛ իրեն երբեք խորհուրդ մը տուած էի՞ որ զիրենք նեղութեան առաջնորդած ըլլար: Էնվէր ազնուօրէն խոստովանեցաւ թէ՛ իմ թելադրութիւններուս հետեւելով երբեք սխալ մը գործած չէին մինչեւ այդ ատեն:

— Լա՛ւ ուրեմն, այս պարագային ալ հետեւեցէք խորհուրդիս, պատասխանեցի: Ետքէն պիտի տեսնէք որ՝ այդպէս շարժելով՝ երբեք սխալ գործած չէք: Ձեզի կը յայտարարեմ թէ՛ իմ բացարձակ համոզումս ա՛ն է որ՝ ձեր Դահլիճը այս քայլը առնելով զարհուրելի սխալ մը կը գործէ:

— Բայց այդ նպատակով հրահանգներ տուած եմ, պատասխանեց էնվէր: Չեմ կրնար հրահանգներս ետ առնել: Եթէ ընեմ ադ, բանակին մէջ իմ ամբողջ հեղինակութիւնս պիտի փճանայ: Անգամ մը հրաման տալէ ետքը, զայն երբեք չեմ փոխեր: Կինս ինձմէ խնդրեց որ՝ իր սպասաւորները զինուորական ծառայութենէ զերծ կացուցանեմ, բայց մերժեցի: Եպարբոսը իր քարտուղարին զերծ մնալը խնդրեց, բայց զայն ալ մերժեցի, որովհետեւ հրահանգ տուած էի: Ես երբեք հրաման ետ չեմ առնել եւ այս պարագային ալ չպիտի ընեմ ադ: Եթէ դուք կրնաք ինծի ցուցնել ճամբայ մը, որով այդ հրամանը գործադրուի, բայց միւս կողմէ ձեր պաշտպանեալներն ալ փրկուին, հաճոյքով պիտի լսեմ ձեզ:

Ես արդէն նշմարած էի թիւրք նկարագիրին ամէնէն բացորոշ մէկ յատկանիշը. հակում՝ իրաւախոհութեան եւ սակարկութեան: Էնվէրի՝ թելադրութիւն մը խնդրող առաջարկը՝ պատեհութիւն ընծայեց ինծի այդ յատկանիշէն օգտուելու:

Շա՛տ լաւ, ըսի: Կը կարծեմ թէ կրնամ ճամբայ մը ցուցնել: Կը խորհիմ որ՝ կրնաք ձեր հրամանները գործադրել, առանց բողոք ֆրանսացի եւ անգլիացի հպատակները Կէլիպօլու դրկելու: Եթէ քանի մը հոգի ալ դրկէք, նորէն ձեր տեսակէտը առաջ տարած կ'ըլլաք: Դուք նորէն կրնաք կարգապահութիւնը պահպանել բանակին մէջ, եւ այս պզտիկ խուճրդ դաշնակից նաւատորմին համար կ'ըլլայ ա՛յնչափ զօրաւոր ահաբեկիչ, որչափ ամէնքը դրկելը:

Ինծի անանկ թուեցաւ որ՝ էնվէր այս թելադրութեան ամբողջ ուժովը փառեցաւ՝ իբր միակ միջոցը իր երկսայրի դիրքէն փրկուելու համար:

Քանի՞ հոգի կ'արտօնէք որ դրկեմ, հարցուց փութկոտ: Այդ հարցումը ըրած պահուն՝ զգացի թէ՛ դատս շահած էի: Կ'առաջարկեմ որ քսան Անգլիացի եւ քսան Ֆրանսացի առնէք ամէնքը քառասուն:

— Յիսուն հոգի տուէք, ըսաւ:
— Շատ աղէկ, տասը հոգիի համար սակարկելու չենք, պատասխանեցի: Բայց ուրիշ զիջողութիւն մը պէտք է ընէք: Թոյլ տուէք որ ընտրեմ յիսուն հոգիները:
Այս կարգադրութիւնը մեզմացուց խստութիւնը, եւ հիմա

էնվէրի բնաւորութեան ազնիւ յատկանիշը սկսաւ կրկին երեւան գալ :

— Ո՛չ, Պրն. Իեսպան, պատասխանեց ան : Դուք այսօր զիս արգիլեցիք սխալ մը գործելէ . հիմա դուք ալ թոյլ տուէք որ՝ ես ձեզ արգիլեմ ուրիշ սխալ մը գործելէ : Եթէ զրկուելիք յիսուն անծերը դուք ընտրէք, դուք պարզապէս յիսուն թշնամիներ պիտի ստեղծէք : Ես ձեզ շատ հոգալուս՝ թոյլ չեմ տար որ թշնամիներ աւելո՞ղէք : Պիտի ապացուցանեմ որ՝ ես ձեր նշմարիտ բարեկամն եմ : Ուրիշ թելադրութիւն մը ունի՞ք ընելիք :

— Ի՞նչու ամէնէն երիտասարդները չառնէք : Անոնք աւելի աղէկ կը տոկան յոգնութեան :

— Ծ՛նմարիտ է ադ , պատասխանեց էնվէր :

Յայտնեց թէ՛ Պէտրի , որ այդ պահուն Բ. Դուռը կը գտնուէր, պիտի ընտրէր «գոհերը» Ասիկա ինծի քիչ մը անհանգստութիւն պատճառեց : Իիտէի որ՝ էնվէրի՝ հրամանը բարեփոխելը անհաճոյ պիտի թուէր Պէտրիի , որուն օտարականներու հանդէպ սնուցած ատելութիւնը շատ առիթներով երեւան եկած էր եւ ոստի կանապետը , ձեռքէն եկածը պիտի ընէր՝ այդ բարեփոխութենէն խուսափելու հնարք մը գտնելու համար : Հետեւաբար, էնվէրէն խնդրեցի Պէտրին կանչել եւ իմ ներկայութեանս անոր հաղորդել իր նոր հրահանգը : Պէտրի եկաւ , եւ ինչպէս կասկածած էի , նոր կարգադրութենէն երբեք չախորժեցաւ : Լսելուն պէս որ՝ յիսուն հոգի միայն պիտի առնէր եւ ամէնէն երիտասարդները , ուսերը թօթուեց եւ սկսաւ սենեակին մէկ կողմէն միւսը երթեւեկել :

— Ո՛չ, ո՛չ, ատանկ չկրնար ըլլալ ! ըսաւ : Ես ամէնէն երիտասարդները չեմ ուզեր ինծի ականաւոր մարդիկը պէտք են !

Բայց էնվէր կարգադրութեան վրայ անդդուելի մնաց եւ Պէտրիին հրաման տուաւ միայն երիտասարդ անծերը առնել : Բացայայտ էր որ՝ պէտք էր Պէտրին անուշեցուել . հետեւաբար, առաջարկեցի իրեն որ՝ ինծի ընկերանայ դէպի ամերիկեան Դեսպանատուն , ուր թէյ պիտի առնէինք եւ գործին բոլոր մանրամասնութիւնները պիտի կարգադրէինք : Այս հրաւէրը ունեցաւ մոզական ազդեցութիւն մը , զոր Ամերիկացիի մը միտքը դժուարութիւն կը կրէ ըմբռնելու : Ամերիկացի մը արտաստովոր ոչինչ կը գտնէ Դեսպանի մը հետ կառքով հանրութեան կողմէ տեսնուելուն , կամ Դեսպանատունի մը մէջ թէյ առնելուն մէջ : Բայց ասիկա պատիւ մըն է , որ Թիւրքիայի մայրաքաղաքին մէջ չվիճակիր ստորադաս պաշտօնեայի մը , ինչպէս է ոստիկանապետ մը : Թերեւս ես դիրքիս շուքը նուաստացուցի՝ այդ հրաւէրը ընծայելով Պէտրիի . Փալլավիլինի հաւանօրէն ատանկ պիտի խորհէր . բայց

վատահօրէն ըրածս արժեց , որովհետեւ այդ հրաւէրը Պէտրին անյապի կակուղցուց , որչափ այլապէս չպիտի ըլլար :

Երբ Դեսպանատուն հասանք, դեռ հոն գտանք բազմութիւնը, որ կը սպասէր իմ միջնորդութեանս արդիւնքին : Երբ զիս շրջապատողներուն հաղորդեցի թէ՛ յիսուն հոգի միայն պիտի երթային եւ ամէնէն երիտասարդները, անոնք պահ մը ապշահար մնացին : Նախ չկրցան ըմբռնել այդ բանը. կը հաւատային թէ՛ հրահանգին մէջ կրնայի բարեփոխութիւն մը մտցնել տալ , բայց ո՛չ ատոր նման բան մը : Յետոյ, երբ նշմարտութիւնը յայտնուեցաւ անոնց, ինքզինքս մէջտեղը գտայ բազմութեան մը , որ յայտնապէս վայրկեանի մը մէջ խելքը թռցուցած էր, այս անգամ ո՛չ թէ վիշտէն, այլ ցնծութենէն : Երեսնուն վար արցունքը հեղեղի պէս հոսող կիներ կը ճգնէին ոտքս իյնալ. բռնելով երկու ձեռքերս եւ համբոյրներով ծածկելով զանոնք : Չափահաս մարդիկ , հակառակ իմ բուռն բողոքներուս, կը յամառէին գրկել զիս նւ երեսներս համբուրել : Քանի մը վայրկեան մաքառեցայ այդ ամբոխին հետ, որ շուարած էր իր երախտագիտութեան ցոյցերով . բայց վերջապէս յաջողեցայ փախչել եւ Պէտրիի հետ պահուրտիլ ներքին սենեակի մը մէջ :

— Չե՛մ կրնար մէկ քանի ականաւոր անծեր ունենալ , հարցուց Պէտրի :

— Միայն մէկ հոգի պիտի տամ, պատասխանեցի :

— Չե՛մ կրնար երեք հոգի ունենալ. հարցուց կրկին :

— Յիսուն տարեկանէն վար եղող բոլորն ալ կրնաք առնել , պատասխանեցի :

Բայց ադ զինքը չգոհացուց, քանի որ այդ որոշ տարիքէն վար՝ այքի զարնող միակ անծ մը իսկ չի կար : Պէտրի որոշակի աչք տնկած էր Պարոններ Վէյլի, Ռէյլի եւ Տքթ. Ֆրիուի : Իսկ ես ձեռքի տակ ունէի միակ «ականաւոր» մը, զոր պատրաստ էի զիջելու : Տքթ. Ուիկրէմ, անկլիքան կրօնաւոր մը, օտար գաղութին ամէնէն երեւելի անծերէն մէկը, ինծմէ պահանջած էր որ՝ արտօնուէր պատանդներուն հետ երթալ եւ կրօնքին տալ կրցած մխիթարութիւնը ընծայել անոնց : Իիտէի թէ՛ ոչինչ աւելի հաճոյք պիտի առթէր Տքթ. Ուիկրէմի՝ քան իբր խայծ նետուիլ «ականաւոր»ներու համար Պէտրիի զգացած ցանկութեանը :

— Տքթ. Ուիկրէմ միակ ականաւորն է՝ զոր կրնաք ունենալ , ըսի Պէտրիի : Ընդունեց զայն իբր լաւագոյնը՝ այդ ճամբուն մէջ շահիլ կրցածին :

Մը. Չօֆման Ֆիլիփ, ամերիկեան Դեսպանատունի խորհրդականը, — ներկային Գօլօմպիայի ամերիկեան դեսպան, — արդէն

փախաք յայտնած էր պատանդներուն ընկերանալու, որով կրնար անոնց անձառաւթեանը հսկել: Մարդասիրական սքանչելի ոգիի այդ արտայայտութիւնը երբեք նոր չէր. Մր. Ֆիլիփի բով: Թէև լաւ աւուրցութեան տէր չէր, բայց Թիւրքիայի՝ պատերազմի մտնելէն հոտը Պոլիս դարձած էր, որպէսզի ինծի օժանդակէր օտարանպատակները հոգալու գործին մէջ: Այդ դժուրակ շրջանին ամբողջ ընթացքին, թշուառին, հիւանդին եւ չքաւորին հանդէպ ան շարունակ ցոյց տուաւ այն համակրութիւնը, որ իր նկարագիրին մէջ բնածին է: Թէև Դեսպանատունի ներկայացուցիչ մը համար կարգէ դուրս բան մըն էր այդ տեսակ արկածալից գործ մը ստանձնել, բայց Մր. Ֆիլիփի այնչափ եռանդագին թախանձեց որ՝ վերջապէս ակամայ հաւանեցայ: Խուճիկն ընկերանալու արտօնութիւն ձեռք բերի նաև Ֆոլիոր'ա ընկ.նէն Մր. Արդըր Արլի եւ Պաուրլիի Իլլըէն Մր. Հէնրի Ուէսթ Սըյոտէմի համար:

Ամէնէն հոտը. Պէտրի ալ պզտիկ խաղ մը խաղաց: Թէև յիսուն հոգիին ծանուցուեցաւ թէ՛ նաւը յաջորդ առտուն ժամը վեցին պիտի մեկնէր Կէլիպօլու, բայց ան, իր ստիկաններուն հետ կէս գիշերուն անոնց տուները գնաց եւ բոլորն ալ անկողինէն հանեց: Յաջորդ առտուն, նաւակայրին վրայ խռնուած ամբոխը քիչ մը փոթորկահար եւ ջատուած կ'երեւար: Պէտրի հոն էր եւ կը հսկէր ամբողջ գործողութիւններուն. երբ քոյս եկաւ, կատակաբար տրտնջաց ինծի դէմ կրկին՝ միայն մէկ «ականաւոր» մը ունենալ թոյլատրած ըլլալուս համար: Ընդհանուր կերպով, շատ պատշաճօրէն վարուեցաւ, թէև չկրցաւ արգիլուիլ պատանդներուն ըսելէ թէ՛ բրիտանական օշանաւերը Կէլիպօլուի վրայ ռումբ կը ձգէին! Հոն հաւաքուած քանդակները «Անգլիացի»ներէն երկու հոգի միայն կային՝ որոնք 'Անգլիա ծնած էին եւ քանդակները «Փրանսացի»ներէն միայն երկուքը Փրանսա ծնած էին: Անոնք կը կրէին ուտելիք եւ ուրիշ էական գոյքեր պարունակող պարկեր. իրենց հաւաքուած ազգականները յաւելուածական ծրարներ ունէին. եւ Տկն Մօրկընթաու շատ մը մեծ սնտուկներով ուտելիք զրկեց նաւ: Այս երիտասարդներուն իրենց ընտանիքներէն բաժանուած սրտայայտ էր բայց անոնք բոլորն ալ քաջաբար տոկացին անոր:

Դեսպանատուն դարձայ, վերջին բանի մը օրերու յուզումներէն քիչ մը յոգնած եւ բոլորովին յոռի տրամադրութեան մը մէջ էի այն պատիւին հանդէպ՝ որուն պիտի արժանանայի: Որովհետեւ հագիւ քանի մը վայրկեան կար որ հասած էի՝ երբ լուր տրուեցաւ Ն Վսեմութիւն գերման դեսպանին գալը: Վանկէն-հայմ քանի մը վայրկեան հասարակ-տեղիք խօսքեր զրուցելէ ետքը,



ՊԷՏՐԻ ՊԷՅ, ՊՈԼԻՍԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ

Ժեօն Թիւրքու պարագլուխներէն մեկը եւ Թալեադի մտերիմ բարեկամը: Անգլիացիները եւ Ֆրանսացիները պաշտպանելու համար Մր. Մօրկընթաուի բախած ջանքերը՝ վեհի առարկայ եղան՝ իր եւ Պէտրիի միջեւ, որ որդեգրած էր գերման տեսակէր քե՛՛ օտարականներուն հետ պէտք չէր «չափազանց ներողամտութիւն»ով վարուիլ:

Վստեցաւ իր գալուն բուն նպատակին: Ինծի առաջարկեց որ՝ Ուաշինկըրն հեռագրեմ թէ՛ ինք «աջակից» եղած է Կէլիպօլու զրկուելիք պատանդներուն թիւը յիսունի իջեցնելու մէջ: Նկատի ունենալով օրուան պատահարները, այս առաջարկը այնչափ այլախաղակ էր որ՝ հագիւ կրցայ խնդուքս զսպել: Եպարբոսին խօսելու կերպէն հասկցած էի թէ՛ Վանկէնհայմ բողոք կը դարձնէր ապագային գործածելու համար, բայց չէի ակնկալեր որ այսչափ շուտով պիտի դիմէր ատոր:

— Լա՛ւ, ըսաւ, Վանկէնհայմ, գոնէ հեռագրեցէք ձեր կառավարութեան որ՝ այս խնդիրին մէջ ես Թիւրքերը «hetz» ըրած չեմ: Գերմաներէն «hetzen» բայը գրեթէ այն նշանակութիւնը ունի, ինչ որ ունի անգլիերէն «sic»ը՝ շուն մը զրգոնելու իմաստին մէջ: Ես տրամադիր չէի Վանկէնհայմի բարի վարքի տեղեկագիր մը տալու. եւ ատիկա յայտնեցի իրեն: Իրաւ ալ Ուաշինկոյն տեղեկագրեցի մասնաւորաբար որ՝ ան մերժած էր ինծի օգնել: Մէկ երկու օր ետքը, Վանկէնհայմ հեռածայնով զիս կոչեց եւ խօսեցաւ. կրթուած ու բարկացուած շեշտով մը: Իմ Ուաշինկոյն ուղղած հեռագիրիս մասին իրեն հեռագրած էր իր կառավարութիւնը: Պատասխանեցի իրեն թէ՛ եթէ այդ տեսակ խնդիրներու մասին կը փափաքէր գովաբանուիլ, պէտք էր զործնականապէս աշխատիլ եւ քան մը ընել:

Պատանդները անհանգիստ վիճակ մը ունէին Կէլիպօլուի մէջ. անոնք զետեղուած էին երկու փայտաշէն տուններու մէջ, ուր անկողին չի կար եւ իրենց հետ բերածէն զատ ուտելիք չունէին: Յորեկ եւ գիշեր խղճալի դարձած էին առատ ոջիլէն, ինչ որ սովորական բան է Թիւրքիայի մէջ: Եթէ Մր. Ֆիլիփ հետ գացած չըլլար, ծանրապէս պիտի տառապէին: Այդ դժբաղդներուն հոն երթալէն քանի մը օր ետքը, էնվէրին դիմելով նորէն սկսայ աշխատիլ, զանոնք ետ բերելու համար: Օրուան արտաքին գործերու նախարարը՝ Սրբ. էտուըրտ Կրէյ, մեր արտաքին գործերու նախարարէն խնդրած էր ինծի պատգամագիր մը ղրկել, այն խնդրանքով որ՝ զայն ներկայացնեմ էնվէրին եւ իր ընկեր նախարարներուն: Այդ պատգամագիրը էնվէրին ներկայացուցի Մայիս 9 ին:

Անոր զեկոյցը ան էր՝ որ բրիտանական Կառավարութիւնը զանոնք անձնապէս պատասխանատու պիտի բռնէր պատանդներուն հասցուած որեւէ չարիքի համար: Էնվէրի շատ մը վարմունքները տեսած էի, բայց այն անգուսպ կատաղութիւնը՝ որ Սրբ. էտուըրտի խրատականը կը պատճառէր հիմա իրեն, բոլորովին նոր բան մըն էր: Երբ հեռագիրը կարդացի, դէմքը կապուտացաւ եւ բոլորովին ինքզինքը կորսնցուց: Այն եւրոպական շաքրը՝ զոր էնվէր խնամքով զգեցած էր, դիմակի մը պէս ինկաւ: Հիմա զինքը կը տեսնէի ճիշդ իրականութեան մէջ եղածին պէս — վայրենի, արիւնածարաւ Թիւրք մը:

— Անոնք ետ չպիտի գան! պօռաց ան: Չանոնք հոն պիտի թողում, մինչեւ որ փոտին!

— Կը փափաքիմ տեսնել թէ՛ այդ Անգլիացիները ինչպէ՛ս պիտի դպչին ինծի! շարունակեց:

Տեսայ որ՝ համոզութեան մեթոքը, զոր որդեգրած էի էնվէրի

հանդէպ, միակ հնարաւոր միջոցն էր զինքը գործածելու: Արդ. ջանացի նախարարը կակուղցնել, եւ, միջոց մը ետքը, ան հանդարտեցաւ:

— Բայց անգամ մըն ալ ինծի սպառնալիք մի՛ ընէք, ըսաւ:

Խուճըր շաքաթ մը Կէլիպօլու անցընելէ ետքը, վերադարձաւ: Թիւրքերը իրենց զինուորական սպայակոյտի կեղրունը փոխադրած էին Կէլիպօլուէն, եւ հետեւաբար, անգլիական նաւատորմի դրաղրեցաւ զայն ռմբակոծելէ: Ամէնքն ալ ողջ առողջ վերադարձան եւ մեծ խանդավառութիւնով ողջունուեցան իրենց տուններուն մէջ:

Ի. ԳԼՈՒԻ

ՕՏԱՐԱՀՊԱՏԱԿՆԵՐՈՒ ՌԻՐԵՇ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

Օսմանեան Կայսրութեան մէջ իբր Դաշնակիցներու շահերուն ներկայացուցիչ իմ պարտքս լրացնել ջանալու համար հանդիպած դժուարութիւններուս մասին գաղափար մը կրնայ տալ Կէլիպօլուի տարագրութիւնը: Թէեւ, հակառակ թշնամութեան այս պատահական ժայթքումներուն, Թիւրք պաշտօնատարները անձնապէս լաւ կը վարուէին ընդհանուր կերպով: Նախապէս անոնք խոստացած էին ինծի թէ՛ թշնամի օտարներու հետ պատշաճօրէն պիտի վարուին եւ անոնց պիտի արտօնեն կա՛մ. Թիւրքիա մնալ եւ իրենց սովորական զբաղումներուն հետեւիլ, կա՛մ Կայսրութեան հողէն դուրս ելլել: Կը թուի թէ՛ անոնք կը խորհէին որ՝ պատերազմը լմննալէն ետքը, զիրենք պիտի դատէին ո՛չ թէ իրենց հպատակներուն հանդէպ վարուելու եղանակին համեմատ, այլ թշնամի Տէրութիւններու հպատակներուն հանդէպ վարմունքի իրենց կերպին համաձայն: Այս մտածումին արդիւնքն էր որ՝ Ֆրանսացի մը, Անգլիացի մը, Իտալացի մը, Թիւրքիայի մէջ աւելի մեծ ապահովութիւն կը վայելէին, քան Հայ մը, Յոյն մը, կամ Հրեայ մը: Մակայն հակառակ ազնիւ ըլլալու այս տրամադրութեան, չարակամութեան յամառ ուժ մը մշտապէս կը ցուցնէր իր գոյութիւնը:

Իմ կառավարութեանս ուղղուած նամակի մը մէջ ես նկարագրեցի այն ազդեցութիւնը, որ կը գործէր Թիւրքիայի մէջ՝ օտարականներու հանդէպ: Համառօտակի կը գրէի թէ՛ «գերման

Դեսպանը կ'աշխատի ճնշում բանեցնել թիւրքերուն վրայ, խորհուրդ տալով որ՝ թէ՛ ճնշողական միջոցներ բանեցնեն պատերազմիկ Տէրութիւններու հպատակներուն վրայ եւ թէ՛ զանոնք իբր պատանդ վար դնեն: Ես գերման պաշտօնակիցիս յամառ ընդդիմութեանը բաղխեցայ՝ մեր պաշտպանութեանը տակ զտնուող ազգերու հպատակներուն մեկնելու արտօնութիւն ստանալու ջանքիս մէջ»:

Ատեն-ատեն, թիւրք պաշտօնատարները փոխվրէժ կը լուծէին թշնամի օտարականներէն մէկուն վրայ, սովորաբար իբր ճնշողական փոխարինութիւն թշնամի երկիրներու մէջ իրենց հպատակներոն հանդէպ գործուած չարիքի մը կամ երեւակայական չարիքի մը: Այս տեսակ արարքներ ծնունդ տուին շատ մը վրդովիչ դրուագներու, ոմանք ողբերգական, ոմանք զաւեշտական, եւ որոնք բոլորն ալ լոյս կը սփռէին թիւրք նկարագիրին եւ տեւտոնեան մեքոսներուն վրայ:

Օր մը, ցորեկէ ետքը, Քալէադի քոյն էի եւ կը խօսակցէիք սովորական նիւթերու վրայ, երբ իր հեռածայնը հնչեց:

— Pour Vous*, ըսաւ նախարարը, ինծի երկարելով հեռածայնը:

Քարտուղարներէս մէկն էր: Կ'ըսէր թէ՛ Պէտրի ձերբակալած էր Սըր էտուին Փիրսը, զայն բանտ նետած էր եւ գրաւած էր անոր բոլոր թուղթերը: Սըր էտուին Պոլիսի ամէնէն քաջածանօթ բրիտանական հպատակներէն մէկն էր: Քառասուն տարիէ իվեր օսմանեան մայրաքաղաքին մէջ փաստաբանութիւն կ'ընէր. նաեւ այդ ժամանակամիջոցին, մամուլին մէջ շատ բան գրած էր եւ հրատարակած բազմաթիւ գիրքեր՝ որոնք համբաւ մը շինած էին իրեն՝ իբր հեղինակութիւն Արեւելքի պատմութեան եւ քաղաքականութեան մասին: Մօտ ութսուն տարեկան էր եւ պատկառելի ու ազդեցիկ երեւութ մը ունէր: Երբ պատերազմ ծագեցաւ, մասնաւոր խոստում առած էի Քալէադէն եւ Պետրիէն որ՝ որեւէ պարագայի Սըր էտուին Փիրսի եւ Ռօպրորդ Գօլէնէն Բրօֆ. Վան Միլինճընի նեղութիւն չպիտի տրուէր: Հեռածայնի այս լուրը, զոր կը ստանայի—շատ զարմանալի պարագայ՝ Քալէադի ներկայութեանը — կը ցուցնէր որ՝ այդ խոստումը բեկանուած էր:

Անմիջապէս դարձայ Քալէադի խօսեցայ՝ տհաճութիւնս ծածկել չջանացող ձեւով մը:

— Այսպէ՞ս է որ ձեր խոստումը կը բռնէք, հարցուցի: Սըր էտուին Փիրսի նման պատկառելի ժերունի մը խոշտանգելէ լա-

* Բնագիրն մէջ ֆրանսերէն.

ւագոյն բան մը չէ՞ք կրնար գտնել կատարելիք: Ձեզի ի՞նչ է ըրած ան: — Լա՛ւ, լա՛ւ, մի՛ կրքոտիք, աւելցուց Քալէադ: Քանի մը ժամէ իվեր է որ բանտն է եւ զինքը արծակել պիտի տամ:

Փորձեց Պէտրին հեռածայնի կանչել, բայց չյաջողեցաւ: Պէտրին շատ լաւ կը ճանչնայի, հասկնալու համար իր գործելու կերպը: Եթէ Պէտրի ուզէր պատասխանել հեռածայնի, աշխարհի ամէնէն դիւրագտանելի մարդն էր. բայց եթէ հեռածայնին միւս ծայրը իր ներկայութիւնը կնճռոտ ըլլար, ամէնէն տրնաջան փնտուտուքը իսկ չէր կրնար երեւան հանել իր ո՛ւր ըլլալը: Որովհետեւ Պէտրի ինծի հանդիսաւոր խոստում տուած էր որ՝ Սըր էտուինի նեղութիւն չպիտի տրուէր, այդ պատճառով ոստիկանապետը նախամեծար կը համարէր երեսը պահել:

«Ես հոս պիտի մնամ, մինչեւ որ Պէտրին գտնէք». ըսի այն ատեն Քալէադի: Բաւական երկար սպասեցինք, բայց Պէտրի յաջողեցաւ խուսափիլ երեւալէ: Վերջապէս կանչեցի քարտուղարներէս մէկը, եւ անոր յանձնարարեցի ելլել եւ կորսուած ոստիկանապետը գտնել:

— Ըսէ՛ք Պէտրիին որ, հրահանգեցի, Քալէադը իր գրասենեակին մէջ վար դրած եմ եւ թոյլ չպիտի տամ որ դուրս ելլէ, մինչեւ որ կարող ըլլայ հրահանգ տալ Պէտրիին՝ Սըր էտուին Փիրսը արծակելու:

Քալէադ կը զուարճանար կացութեան զաւեշտականութենէն: Ինծմէ աղէկ կը ճանչնար Պէտրիի դարձուածքները, եւ չափազանց շահագրգռուած էր տեսնելու թէ՛ պիտի յաջողէ՞ զայն գտնել: Բայց քանի՞ մը վայրկեան ետքը, հեռածայնը հնչեց: Պէտրին էր: Քալէադին ըսի որ՝ Պէտրիի տեղեկացնէ թէ՛ ինքնաշարժովս բանտ պիտի երթայի՝ Սըր էտուին Փիրսը առնելու:

— Հաճեցէք թոյլ չի տալ իրեն որ ընէ այդ բանը, պատասխանեց Պէտրի: Այդ տեսակ պատահար մը իմ անձս ծիծաղելի պիտի դարձնէ եւ իմ ազդեցութիւնս պիտի փճացնէ:

— Շա՛տ աղէկ, պատասխանեցի: Պիտի սպասեմ մինչեւ ժամը 6.15: Եթէ մինչեւ այդ ատեն Սըր էտուին իր ընտանիքին չվերադարձուի, Ոստիկանութեան Տնօրէնութիւնը պիտի երթամ եւ զայն պիտի առնեմ:

Դեսպանատուն դարձած միջոցիս, Փիրսի ընակարանը հանդիպեցայ եւ ջանացի Տկն. Փիրսը եւ իր աղջիկը հանդարտեցնել:

— Եթէ ձեր հայրը մինչեւ ժամը 6.15 հոս չըլլայ, ըսի Օր. Փիրսի, հաճեցէք անմիջապէս տեղեկացնել ինծի:

Ճիշդ այդ պահուն հնչեց իմ հեռածայնս: Օր. Փիրսն էր, որ կը ծանուցանէր ինծի թէ՛ Սըր էտուին տուն հասած էր:

Գաջորդ օրը, Սըր Էտուին Էեսպանատուն եկաւ, շնորհակալութիւն յայտնելու ինծի՝ իր մասին կատարած ջանքերուս համար: Ինծի յայտնեց թէ՛ գերման Դեսպանն այ իր արծակուսին համար աշխատած էր: Այս վերջին յայտարարութիւնը բիչ մը զարմացուց զիս, բանի որ գիտէի թէ՛ ուրիշ ո՛չ մէկը գործելու պատեհութիւն ունէր, որովհետեւ Թալէադի գրասենևակը գտնուած միջոցիս, ամէն բան վերջացած էր: Կէս ժամ ետքը, տեսայ ինքը՝ Վանկէնհայմը. պատահաբար Տկն. Մօրկընթաուի ընդունելութեան կու գար: Փիրսի պատահարին ակնարկեցի եւ հարցուցի իրեն թէ՛ որեւէ ազդեցութիւն բանեցուցած էր անոր ազատ արծակուելուն համար: Հարցումս մեծապէս զարմացուց զինքը:

— Ի՛նչ, բացազանեց: Ձեզի օգնած ըլլամ այդ մարդուն ազատ արծակու մը ձեռք բերելու համար! Der alle Gauner! [ձեր սինկրօրը]: Բայց ինչո՞ւ: Ե՛ս էի որ ձերբակալել տուի զինքը!

— Իրեն հակառակ ըլլալու ի՛նչ ունիք, հարցուցի:

— 1876ին. պատասխանեց Վանկէնհայմ, այդ մարդը Ռուսերուն պաշտպան [pro-Russian] եւ Թիւրքիայի դէմ էր!

Գերմանները այսչափ երկար յիշողութիւն ունին! 1876ին, Սըր Էտուին բազմաթիւ յօդուածներ գրեց Լոնտոնի Տէյլի Նիւզզին, նկարագրելով պուլկարական ջարդերը: Այդ ատեն, հաւատք չէին ընծայեր ընդհանրապէս այդ թշնամական վայրագութիւններու պատմութիւններուն, բայց Սըր Էտուինի նամակները անգլիախօս ժողովուրդներու այքին պարզեցին անվիճելի իրողութիւնները եւ մեծ դեր կատարեցին Թիւրքիայի լուծէն Պուլկարիայի ազատագրուելուն մէջ: Մարդասիրութեան եւ լրագրական քաղաքագիտութեան [statesmanship] այս արարքը մեծ համբաւ շինեց Սըր Էտուինի: Բայց հիմա, 40 տարի ետքը, Գերմանիա կ'ուզէր պատժել զինքը, Թրքական բանտ մը նետելով! Թիւրքերը նորէն աւելի գթոտ եղան, բան իրենց գերման զինակիցները, որովհետեւ ոչ միայն Սըր Էտուինը ազատ արծակեցին եւ վերադարձուցին իր թուղթերը. այլ նաեւ իրեն արտօնեցին Լոնտոն դառնալ:

Սակայն Պէտրի քիչ մը ընկճուած էր իմ այս յաջող միջամտութենէս եւ միտքը դրած էր հաշիւը կարգադրել: Սըր Էտուին Փիրսէն ետքը, Պոլիսի ամէնէն ականաւոր անգլիախօս փաստաբանն էր Տքթ. Միցցի, 70 տարեկան մալթացի մը: Կառաւարական դէմքերը ոխ ունէին անոր դէմ, որովհետեւ ան սեփականատէրն էր Լեվոնո Չեքրջի, այն թերթի՝ որ Միութիւն եւ Առաջդիմութիւն Գօմիթէն քննադատող յօդուածներ հրատարակած էր: Ծիշող Փիրսի պատահարին գիշերը, Պէտրի ժամը Աին Տքթ. Միցցիի

տունը գնաց, ծերունին անկողինէն քաշեց հանեց, զայն կառախումբ դրաւ դէպի Էնկիւրի, Փոքր Ասիայի մէջ քաղաք մը: Որովհետեւ թիֆուսի զարհուրելի համանարակ մը մահ կը սփռէր Էնկիւրիի մէջ, Տքթ. Միցցիի տարիքը ունեցող մարդու մը համար քնակութեան փափաքելի վայր մը չէր ատ: Յաջորդ առտուն, երբ առաջին անգամը ըլլալով լսեցի լուրը, Տքթ. Միցցի արդէն դէպի իր արքայազնը նամբայ դրուած էր:

— Այս անգամ ձեզ կանխեցի! քսաւ Պէտրի, յաղթական ժպիտով մը: Տղու մը չափ կը ցնծար եւ հանոյք կը զգար ատկէ: Վերջապէս «աւելի նիշ շահած» էր ամերիկեան Դեսպանին, որ անզգուշաբար իր անկողինին մէջ բուն եղած էր, երբ այս ծերունին նամբայ կը դրուէր դէպի Փոքր Ասիայի մէջ տնտրւարակ կեդրոնը:

Բայց վերջապէս Պէտրի յաջողութիւնը այնչափ կատարեալ չէր: Իմ լսողականութիւնս Թալէադ Տքթ. Միցցին Գօմիա դրկած էր, փոխանակ Էնկիւրիի: Ամերիկեան միսիօնարներէն մէկը՝ Տքթ. Տօտտ, հոն սքանկելի հիւանդանոց մը ունէր. կարգադրեցի որ՝ Տքթ. Միցցի այդ շէնքին մէջ աղուոր սենեակ մը կարենայ ունենալ. Տքթ. Միցցի հոն ամիսներ անցուց, ունենալով գաղափարակից ընկերներ, յաւ. սնունդ, առողջարար մթնոլորտ, իր ուզած բոլոր գիրքերը, նաեւ այն բանը՝ առանց որուն չափազանց դժբաղդ պիտի ըլլար — դաշնակ մը: Անանկ որ, իրաւունքով կը խորհէի թէ՛ Պէտրիի եւ իմ միջեւ յաջողութեան առաւելակշռութիւնը իմ կողմս էր:

Երբ անգլիական իշխանութիւնները Սելանիկի մէջ ձերբակալեցին թիւրք շիւպատոսը եւ իր պաշտօնէութիւնը, Թիւրքերը ամիջապէս իրամասական գաղութէն ինք կարեւոր դէմքեր բանտարկեցին: Գրեթէ երեք շաբաթ աշխատեցայ զանոնք ազատ արծակել տալու համար: 1916ի Ֆունվարի սկիզբը, լուր առնուեցաւ որ՝ Անգլիացիները Եգիպտոսի մէջ գէշ կը վարուին թիւրք գերիներու հետ: Բիշ ետքը, երկու Աւստրալիացիներու՝ հրամանատար Սթօքըրի եւ տեղակալ Ֆիցկէրէյտի կողմէ նամակներ ստացայ, տեղեկացնող թէ՛ իրենք տասներմէկ օր խցարգելուած էին պատերազմական նախարարութեան ողորմելի խոնաւ մէկ գնդանին մէջ, չունենալով ուրիշ ընկեր, բայց եթէ ոչիլի հրէշային բանակ մը: Այս երկու ծովային սպանները Պոլիս եկած էին Ամերիկա շինուած ընդժովաններու համալուար տորմիլէն մէկով, որ Անգլիայէն մեկնելով յանդուզն նամբարդութիւն մը բրած էր, Տարտանէլի ականներուն տակէն սուզած էր եւ հասած Մարմարա, ուր շաբաթներով սարսափ սփռած էր եւ տիրած՝ այդ ներքնա-

ծովին, իրապէս խափանելով ամէն կարգի նաւարկութիւն: Այդ զարմանալի ընդծովեան՝ E 15՝ որով թղթակիցներս եկած էին, Տարտանէլի մէջ բռնուած էր եւ իր նաւազները եւ սպաները Աֆիոն-Գարա-Հիսարի (Փոքր Ասիա) զինուորական բանտը դրկուած էին: Երբ Եգիպտոսի մէջ թիւրք գերիններու վերազրուած կարծեցնալ խոշտանգումին լուրը ստացուեցաւ, վիճակ ձգելով այդ գերիններէն երկու հոգի ընտրեցին՝ Պոլիս դրկել եւ բանտարկելու համար, իբր փոխվրէժ: Աթօքըր եւ Ֆիցկէրէլտ քաղեցին չարաքաղէ թիւերը եւ տասնըմէկ օր մնացին այդ ստորեկրեայ զարհուրելի նկուղին մէջ: Անմիջապէս խնդիրը ներկայացուցի էնվէրի եւ առաջարկեցի որ՝ չէզոք բժիշկ մը եւ սպայ մը՝ քննեն Եգիպտոս գտնուող թիւրքերը եւ տեղեկագրեն զրոյցներուն իսկութիւնը: Անմիջապէս լուր առինք թէ՛ տեղեկատուութիւնը սխալ էր, եւ թէ՛ Անգլիացիներուն ձեռքը գտնուած թիւրք գերինները հիանալի վերաբերմունքի մը ենթակայ էին իրականութեան մէջ:

Այդ միջոցներուն, այցելութիւն տուի Թուրքիայի պապական նուիրակ Մօնսէնէօտ Տօլլի: Ան պատահաբար խօսք բացաւ տեղակալ Ֆիցկէրէլտի վրայ, որ, ըսաւ, Աֆիոն-Գարա-Հիսարի մէջ պատերազմական գերի էր:

— Ես շատ շահագրգռուած եմ իրմով, ըսաւ Մօնսէնէօտ Տօլլի, որովհետեւ ան նշանածն է Վատիկանի բրիտանական Դեսպանին աղջկան: Ես իր մասին խօսեցայ էնվէրին, որ խոստացաւ թէ՛ ան մասնաւոր հոգածութեան պիտի արժանանար:

— Ի՞նչ է իր առաջին անունը, հարցուցի:

— Ընէֆրի:

— Իրաւ որ «մասնաւոր հոգածութիւն» կը վայելէ ան, պատասխանեցի: Տեղեկութիւն չունի՞ք որ՝ ճիշդ այս պահուն Պոլիս զնդանի մը մէջ կը գտնուի ան:

Բնականաբար Մ. Տօլլի շատ վրդովուեցաւ ասկէ, բայց ապահովցուցի զինքը որ՝ իր պաշտպանեալը քանի մը օրէն պիտի արծակուէր:

— Կը տեսնէք որ շատ ամօթալի կերպով մը վարուած էք այս երիտասարդներուն հանդէպ, ըսի էնվէրին, իբր գոհացում բան մը պէտք է ընէք:

— Շա՛տ աղէկ, ի՞նչ կ'առաջարկէք:

Աթօքըր եւ Ֆիցկէրէլտ պատերազմական գերիներ էին, եւ, ընդհանուր կանոնին համեմատ, իրենց զնդանէն արծակուելով պէտք էին գերիններու կայք մը դրկուիլ: Ուրեմն առաջարկեցի էնվէրին որ՝ Պոլիսի մէջ ութը օրուան արծակուրդ մը տայ անոնց:

Հաշտուեցաւ այդ զաղափարին եւ մարդիկը արծակուեցան: Բնականաբար ցաւալի երեսոյթ մը ունէին անոնք. զնդանին մէջ քսանըհինգ օր անցուցած էին, առանց միջոց ունենալու լուացուելու եւ ածիւրելու, առանց հերմակեղէն փոխելու կամ կեանքի վայել գոհացումներու: Բայց Մր. Ֆիլիփ զանոնք հոգաց, հայթայթեց անոնց անհրաժեշտ պիտոյքները, եւ շուտով մեր դէմը ունեցանք երկու երիտասարդ եւ վայելուչ բրիտանական ծովային սպաներ: Իրենց ութը օրուան ազատութիւնը յաղթական թափօրի մը փոխակերպուեցաւ, չնայելով որ միշտ իրենց կ'ընկերանար անգլիախօս թիւրք սպայ մը: Մոնսէնէօտ Տօլլի եւ ամբողջիկեան Դեսպանատունը սեղան տուին անոնց. անոնք նաեւ հանելի ընդունելութեան մը արժանացան Աղջիկներու Գօլէճին մէջ: Երբ գերեվայրը դառնալու ժամանակը հասաւ, երիտասարդները յայտարարեցին թէ՛ սիրայօժար ուրիշ ամիս մըն ալ զնդանին մէջ պիտի անցընէին, եթէ ազատուելէ հոտքը՝ քաղաքին մէջ՝ ազատութեան համապատասխան շրջան մը կարենային վայելել:

Հակառակ բոլոր պատահարներուն, ես միշտ հաճելի յիշատակ մը պիտի պահեմ էնվէրէն, Ֆիցկէրէլտի հանդէպ իր վարմունքին մասին: Ես պատերազմական նախարարին յայտնեցի տեղակալին նշանուած ըլլալը:

— Զէ՞ք խորհիր որ պէտք եղածին չափ պատժուեցաւ ան, հարցուցի, ինչո՞ւ չէք թողուր որ տղան հայրենիք դառնայ եւ ամուսնանայ իր սիրականին հետ:

Առաջարկս անմիջապէս էնվէրի զգացումը յուզեց:

— Պիտի թոյլ տամ, պատասխանեց էնվէր, եթէ ինձի պատիւի խօսք տայ որ՝ ա՛յ երբեք Թիւրքիայի դէմ չպիտի կռուի:

Բնականաբար Ֆիցկէրէլտ խօսք տուաւ. այսպէսով, համեմատապէս կարճ ժամանակ մը զնդանի մէջ մնալուն արդիւնքը եղաւ՝ բանտարկուելէ իր ազատագրումը եւ երջանկութեան դառնալը: Որովհետեւ Աթօքըր հաստատած չէր վիպական կապեր՝ որոնք իր պարագային համար նման դատ մը արդարացնէին, ան ստիպուեցաւ Փոքր Ասիայի բանտը վերադառնալ: Սակայն ատոր համակերպեցաւ, իրապէս զուարթասէր ոգիով մը, որ արժանի էր բրիտանական նաւազութեան գեղեցկագոյն աւանդութիւններուն:



ԻԱ. ԳԼՈՒԽ

ՊՈՒԼԿԱՐԻԱ ԱՃՈՒՐԴԻ ՀԱՆՈՒԱԾ

Դաշնակից նաւատորմիդին Տարտանէլի մէջ ծախողութիւնը վերջնականապէս չվճուեց Պոլիսի ճակատագիրը: Բնականաբար Թիւրքերը եւ Գերմանները անսահման հոգեկազդոյր մը զգացին, երբ նաւատորմիդը Բոսացաւ: Բայց անոնց միտքը երբեք լիովին խաղաղած չէր: Դէպի հին մայրաքաղաքը ամէնէն ուղղակի ճամբան դեռ մատչելի էր իրենց թշնամիներուն:

1915 Սեպտեմբերի սկիզբը, քաղաքին ամէնէն ազդեցիկ Գերմաններէն մէկը, տիրող զինուորական կացութեան մասին մանրամասն բացատրութիւն մը տուաւ ինծի: Ամբողջ խնդիրը հետեւեալ նախադասութեան մէջ խտացուց.

«Չենք կրնար Տարտանէլը գրաւել, առանց Պուլկարիայի զինուորական օժանդակութեանը»:

Ասիկա անշուշտ կը նշանակէր որ՝ եթէ Պուլկարիա Թիւրքիայի եւ Կեղրոնի Տէրութիւններուն չմիանար, Կէլիպոլուի արշաւանքը պիտի յաջողէր, Պոլիսը պիտի իյնար, Թիւրք Կայսրութիւնը պիտի քայքայուէր, Ռուսիա պիտի վերածնէր՝ իբր տնտեսական եւ զինուորական տէրութիւն, եւ պատերազմը, համեմատապէս կարճ միջոցի մը մէջ, պիտի վերջանար Համաձայնութեան յաղթանակովը: Հաւանօրէն, Պուլկարիայի իրական չէզոքութիւնը նոյն արդիւնքը պիտի ունենար: Որով, չափազանցութիւն մը չէ ըսել թէ՛ 1915 Սեպտեմբերին եւ Հոկտեմբերին՝ պուլկար Կառավարութեան ձեռքն էր պատերազմին տնտեսութիւնը:

Այս իրողութիւնը այնչափ գերակշիռ կարեւորութիւն ունէր որ՝ հազիւ կրնամ գայն ուզուած ուժգնութիւնով շեշտել: Կառաջարկեմ որ՝ ընթերցողներս վար առնեն աշխարհի քարտէսին մէկ մասը՝ որուն շատ ծանօթ չեն. Պուրթէշի Դաշնագրին սահմանագծած Պալքանեան Պետութիւններու քարտէսը: Ինչ որ կը մնայ Եւրոպական Թիւրքիայէն, պզտիկ անկանոն գետին մըն է, որ կը տարածուի Պոլիսի արեւմուտքը, գրեթէ մինչեւ հարիւր մղոն հեռւորութիւնով: Այն ազգը՝ որուն երկիրը սահմանակից է Եւրոպական Թիւրքիայի, Պուլկարիան է: Արեւմտեան Եւրոպա գացող երկաթուղիի գլխաւոր զիծը կը սկսի Պոլիսէն եւ կ'անցնի Պուլկարիայէն, Ադրիանուպոլիսի, Յելիպէի եւ Սօֆիայի ճամբով: Այդ ատեն Պուլկարիա կրնար 500,000 լաւ մար-

զուած, կատարելապէս կազմակերպուած զինուորներու քանակ մը զօրահանել: Եթէ անգամ մը այս զինուորները Պոլիսի վրայ քայելու համար ճամբայ ելլէին, իսկապէս ոչ մէկ բան կրնար անոնց ճամբան խափանել: Ճիշդ է որ՝ Թիւրքիա ալ կարելոր բանակ մը ունէր, բայց անիկա այդ միջոցին շատ զբաղած էր ետ մղելու Դաշնակից ուժերը Տարտանէլի՝ եւ Ռուսերը՝ Կովկասի մէջ: Պուլկարիայի հետ թշնամանալով, Թիւրքիա ոչ զինուոր, ոչ ալ ռազմամթերք կրնար ստանալ Գերմանիայէն: Թիւրքիա ամբողջապէս պիտի կոզիւնար, եւ, Պուլկարիայի ճնշումին տակ, պիտի անհետանար իբր զինուորական ուժ եւ իբր եւրոպական պետութիւն, միակ կարճ կռիւէ մը ետքը:

Կուզեմ մասնաւոր ուշադրութիւն դարձնել այս երկաթուղիի զիծին, որովհետեւ ան էապէս այն ռազմական մրցանակն էր՝ որուն համար Գերմանիա կը զօտեմարտէր: Սօֆիայէն մեկնելէ ետքը, ան կ'անցնի հիւսիս արեւելեան Սերպիայէն, էն կարելոր կայանները ըլլալով՝ Նիշը եւ Պելկրատը: Վերջին կէտէն կ'անցնի Սաւ գետէն եւ աւելի ետքը Դանուբի գետէն, ուրկէ կը շարունակէ իր ընթացքը դէպի Պուտայիէշը եւ Վիլննա եւ անկէ Պերլին: Իսկապէս 1915-16ին Պալքաններու մէջ տեղի ունեցող զինուորական բոլոր գործողութիւններուն գերազոյն նպատակն էր այս ճամբուն տիրացումը: Անգամ մը այս զիծը զբաւելէ ետքը, ա՛յ Թիւրքիա եւ Գերմանիա չպիտի անջատուէին. տնտեսապէս եւ զինուորականապէս անոնք միութիւն մը պիտի դառնային: Ինչ-պէս որ նկարագրած եմ, Տարտանէլը այն օղակն էր որ Ռուսիան կը միացնէր իր դաշնակիցներուն. այս ջրանցքին գոցուելովը՝ Ռուսիայի քայքայումը արագօրէն յաջորդեց: Մօրավայի եւ Մարի-ձայի հովիտները, ուրկէ այս երկաթուղիի զիծը կ'անցնի, Թիւրքիայի համար կը կազմէին տեսակ մը ցամաքային Տարտանէլ: Անոր տէր մնալով, Թիւրքիա իր զինակիցներուն հետ հաղորդակցելու ճամբայ կ'ունենար. եթէ անոր տիրանային իր թշնամիները, օսմանեան Կայսրութիւնը կը փշուէր: Պուլկարիայի՝ տնտեսեան դատին միացումը միայն կրնար Թիւրքերուն եւ Գերմաններուն պարզեւել այս առաւելութիւնը: Պուլկարիա պատերազմի մտնելուն պէս, երկաթուղիի այդ հատուածը՝ որ մինչեւ սերպիական սահմանազուխը կը տարածուի, անմիջապէս շահագործելի պիտի դառնար: Եթէ Պուլկարիա իբր գործօն մասնակից Կեղրոնի Տէրութիւններուն միանար, Սերպիայի նուաճումը անխուսափելիօրէն պիտի յաջորդէր, եւ ասիկա՝ տնտեսեան պետութիւններուն պիտի տար Նիշէն Պելկրատ երկարող օղակը: Այսպէսով, պուլկարական զինակցութիւնը Պոլիսը Պերլինի մէկ

արուարծանը պիտի դարձնէր, Գրուգի բոլոր արտադրութիւնները թիւրք բանակին տրամադրութեանը տակ պիտի դնէր, Կէլիպօլուի վրայ Դաշնակիցներու յարձակումին ձախողութիւնը անխուսափելի պիտի դարձնէր, եւ հիմը պիտի դնէր այն Արեւելեան Կայսրութեան, որ քառասուն տարիէ ի վեր գերման քաղաքականութեան շարժիչ գլխաւոր ուժը եղած էր:

Ասկէ բացորոշ կը տեսնուի թէ՛ ի՛նչ էր միտքը գերման բարեկամիս, երբ Սեպտեմբերի սկիզբը կ'ըսէր. «Առանց Պուլկարիայի չենք կրնար Տարտանէլը գրաւել»: Այսօր, ամէն մարդ ա՛յնչափ յստակօրէն կ'ըմբռնէ ասիկա որ տիրական հաւատք մը ծնունդ առած է թէ՛ Գերմանիա պուլկարական այս զինակցութիւնը պատերազմին պայթելէն առաջ երաշխաւորած էր: Այս կէտին մասին ես բացարձակ ծանօթութիւն մը չունիմ: Թէ՛ Պուլկարիայի Թագաւորը եւ Քայզէրը կանխապէս կարգադրած ըլլան այս համագործակցութիւնը՝ անհաւանական չէ: Բայց պէտք չէ սխալը գործենք՝ հաւատարու թէ՛ ատով խնդիրը վճռուած կ'ըլլար, որովհետեւ վերջին քանի մը տարիներու փորձը մեզի ցոյց կու տայ թէ՛ դաշնագիրներուն շատ մեծ հաւատք ընծայելու չէ: Թէ համաձայնութիւն մը կա՞ր կամ ոչ, միայն սա գիտեմ որ՝ թիւրք պաշտօնատարները եւ Գերմանները երբեք վճռուած չէին նկատեր որ՝ Պուլկարի կրննց կողմը պիտի անցնէր: Ինծի հետ իրենց տեսակցութիւններուն մէջ անոնք միշտ ծայրայեղ վախ կը ցուցնէին ելքին մասին. եւ եղաւ. ատեն մը՝ երբ ամէնքն ալ վախցան որ Պուլկարիա Համաձայնութեան կողմը պիտի անցնէր:

Ես անձնապէս Պուլկարիայի բանակցութիւններուն առաջին անգամ միջամուխ եղայ Մայիսի վերջը, երբ տեղեկացայ թէ՛ պուլկար դեսպան Մ. Գօլուչէֆ ծանուցած էր Ռօպրորդ Գօլէճի որ՝ պուլկար ուսանողները Գօլէճին տարեշրջանին միջնեւ վախճանը չէին կրնար մնալ, այլ պէտք էին տուներնին վերադառնալ Յունիս Ծին: Աղջիկներու Բօնաթէնթիւնօփլ Գօլէճն ալ լուր ստացած էր թէ՛ պուլկար աղջիկները այդ թուականին պէտք էին վերադառնալ: Այս երկու ամերիկեան հաստատութիւններն ալ բազմաթիւ պուլկար ուսանողներ ունէին, որոնց շատերը իրենց երկիրին ընտրուած ներկայացուցիչներն էին. իրաւցնէ, այս Գօլէճներուն միջոցով էր որ՝ հեռաւոր Միաց.-Նահանգները եւ Պուլկարիա ա՛յնչափ բարեկամական յարաբերութիւններ հաստատած էին: Բայց մինչեւ այդ ատեն՝ ատանկ դէպք մը չէին ունեցած երբեք:

Ամէն մարդ այս քայլին նշանակութեանը վրայ կը խօսէր: Ան բաւական բացորոշ կը թուէր: Օրուան խօսակցութեան գլխաւոր նիւթն էր Պուլկարիան: Պատերազմի պիտի մասնակցէ՞ր:

Եթէ այո՛, ո՞ր կողմին պիտի միացնէր իր ճակատագիրը: Օր մը կը ծանուցուէր թէ՛ Պուլկարիա Համաձայնութեան պիտի միանայ: Յաջորդ օրը կը ծանուցուէր թէ՛ որոշած է դաշնակցի Կեդրոնի Տէրութիւններուն հետ: Տիրող կարծիքը ա՛ն էր որ՝ Պուլկարիա ժրջանօրէն կը սակարկէր երկու կողմերուն հետ ալ, փնտռելով լաւագոյն պայմանները: Սակայն, եթէ Պուլկարիա Համաձայնութեան կողմը անցնէր, փափաքելի չպիտի ըլլար որ՝ պուլկարական հպատակները Թիւրքիա թողուէին: Որովհետեւ ամերիկեան Գօլէճներու ուսանողները եւ ուսանողուհիները ընդհանրապէս պուլկարական կարեւոր ընտանիքներու կը պատկանէին, — անոնցմէ մէկը աղջիկն էր զօրավար Իվանօֆի, որ Պալքանի պատերազմին մէջ պուլկար բանակին հրամանատարն էր, — պուլկար Կառավարութիւնը բնականաբար մասնաւոր շահագրգռութիւն մը պիտի ունենար անոնց ապահովութեանը համար:

Այն եզրակացութիւնը՝ որուն յանգած էին շատեր՝ սա՛ էր թէ՛ Պուլկարիա որոշած էր Համաձայնութեան կողմը դառնալ: Լուրը արագօրէն տարածուեցաւ ամբողջ Պուլիսի մէջ: Մասնաւորապէս ազդուած էին Թիւրքերը: Աղջիկներու Գօլէճին Տնօրէնուհին Տքթ. Փէթրիք, պուլկար ուսանողուհիներու համար աճապարկոտ տարեվերջի հանդէս մը կազմակերպեց, որուն ներկայ էի: Տխուր հանդէս մըն էր ան, աւելի նման յուղարկաւորութեան մը, քան այն հանդիսութեան, որ սովորաբար տեղի կ'ունենար: Պուլկար աղջիկները գրեթէ ջղայնոտած վիճակի մը մատնուած գտայ. անոնք կը հաւատային թէ՛ իրենք տուն կը ճամբուէին, մի՛այն զերծ ընելու համար զիրենք Թիւրքերուն ճանկերուն մէջ իյնալէ: Ա՛յնչափ կարեկցութիւնս շարժեցին որ՝ զիրենք ամերիկեան Դեսպանատուն տարինք եւ ամէնքս հաճելի երեկոյթ մը անցուցինք: Ճաշէն ետքը, աղջիկները այքերնին չորցուցին եւ մեզ մեծարեցին, երգելով իրենց պուլկարական զեղեցիկ երգերէն շատեր, եւ այն օրը որ տխուր սկիզբով մը ծագած էր, ուրախ վախճան մը ունեցաւ: Յաջորդ առտուն աղջիկները ամէնքն ալ Պուլկարիա մեկնեցան:

Բանի մը շարաթ ետքը՝ պուլկար Դեսպանը յայտնեց ինծի թէ՛ Կառավարութիւնը ուսանողուհիները հայրենիք կանչած էր մի՛այն քաղաքական նպատակով: Պատերազմի անմիջական հաւանականութիւն չի կայ, ըսաւ ան: Բայց Պուլկարիա ուզած էր Գերմանիայի եւ Թիւրքիայի հասկցնել թէ՛ տակաւին պատերազմութիւն կար որ Համաձայնութեան կարենար միանալ: Պուլկարիա, ինչպէս մենք ամէնքս կը կռահէինք, պարզապէս աճուրդի հանուած էր: Պուլկարիայի կացութեան մէջ միակ որոշ իրողութիւնը

Մակեդոնիայի տիրանայու որոշումն էր: Ամէն բան, կ'ըսէր Գօլուէֆ, ատկէ կախում ունի: Իր խօսակցութիւնը կը ցոլացնէր պուլկարական ընդհանուր տեսակէտը թէ՛ Պուլկարիա Պալքանի առաջին պատերազմին մէջ արդարապէս շահած էր այդ հողը: Թէ՛ Տէրութիւնները անարդարօրէն թոյլ տուած էին որ ինք զրկուի անկէ, թէ՛ Մակեդոնիա ցիղով, լեզուով եւ ասանդութիւնով պուլկարական էր, եւ թէ՛ Պալքաններու մէջ տեւական խաղաղութիւն չէր կրնար գոյութիւն ունենալ երբեք, մինչեւ որ Մակեդոնիա իր օրինաւոր տէրերուն չի վերադարձուէր: Բայց Պուլկարիա պատերազմին աւարտելէն ետքը հատուցուելիք խոստումէն աւելի բան մը կը պահանջէր. անմիջական գրաւում կը պահանջէր ան: Անգամ մը որ Մակեդոնիա Պուլկարիայի վերադարձուէր, Պուլկարիա իր ուժերը պիտի միացնէր Համաձայնութեան ուժերուն: Որով, Պալքաններու մէջ խաղացուած խաղին մէջ երկու պարգեւներ կային. մէկը Մակեդոնիան էր՝ զոր Պուլկարիա կը պահանջէր, եւ միւսը Պոլիսն էր՝ զոր Ռուսիա որոշած էր ձեռք անցընել: Պուլկարիա կատարելապէս յօժար էր որ Ռուսիա Պոլիսը գրաւէր, եթէ ինք կարենար ստանալ Մակեդոնիան:

Կը հասկնէին թէ՛ պուլկար ընդհանուր սպայակոյտը կազմ ու պատրաստ յատակագիծեր ունէր Պոլիսը գրաւելու համար, եւ թէ իրենք այդ յատակագիծերը ցուցուցած էին Համաձայնութեան: Իրենց ծրագիրը կ'ընդգրկէր 300,000 հոգինոց պուլկարական բանակ մը, որ զօրակոյն նշանը տրուելու պահէն քսաներեք օր ետքը Պոլիսը պիտի պաշարէր: Բայց Մակեդոնիայի համար տրուած խոստումները բաւական չէին. Պուլկարները զրաւումներ կը պահանջէին:

Պուլկարիա տեղեակ էր Դաշնակիցներու կացութեան դժուարութիւններուն: Պուլկարիա հաւատք չունէր նաեւ որ՝ Սերպիա եւ Յունաստան յօժարակամ հրաժարէին Մակեդոնիայէն, ոչ ալ կը հաւատար որ՝ Դաշնակիցները յանդգնէին այդ երկիրը անոնցմէ բռնի խլել: Կը մտածէր որ՝ այդ պարագային, վտանգ մը կար թէ՛ Սերպիա կրնար անջատ հաշտութիւն կնքել Կեդրոնի Տէրութիւններուն հետ: Միւս կողմէ, Պուլկարիա պիտի ընդդիմանար, եթէ Սերպիա Մակեդոնիայի կորուստին փոխարէն ստանար Պօսնան եւ Հերսէքը — կը զգար որ՝ ընդարձակուած Սերպիա մը մշտական սպառնալիք մը պիտի ըլլար իրեն, եւ ատով՝ Պալքաններու մէջ խաղաղութեան ապագայ սպառնալիք մը: Այսպէս, կացութիւնը ծայրայեղօրէն դժուար եւ բարդ էր:

Թիւրքիայի մէջ ամէնէն իրագիկ մարդոցմէն մէկն էր՝ Թրանսֆորթը Զայրուկի թղթակցը՝ Փօլ Վայց: Վայց լրագրողէ աւելի

բան մըն էր. երեսուն տարի Պոլիսի մէջ ապրած էր ան. Թրքական գործերու մասին անձնական ամէնէն մօտ ծանօթութիւնը ունէր, եւ գերման Դեսպանատունի մտերիմը եւ խորհրդականն էր: Ներկային իր պաշտօնը կէս-դիւանագիտական էր: Վայց իրապէս ամէնէն յաջողակ գործակալներէն մէկը եղած էր Թիւրքիայի մէջ գերման թափանցումին: Ամէն կողմ կը խօսուէր թէ՛ ան կը ճանչնար թիւրք Կայսրութեան մէջ գտնուող ամէն կարեւոր անձ, գիտէր անոր մօտենալու լաւագոյն ճամբան, ինչպէս նաեւ անոր արժէքը: Օգոստոսի եւ Սեպտեմբերի սկիզբի այդ տազնապալի օրերուն ընթացքին, եւ քանի՛-քանի անգամներ տեսակցութիւններ ունեցած էի Վայցի հետ՝ Պուլկարիայի մասին: Քանի՛ անգամներ ան ըսած էր թէ՛ երբեք վստահ չէր որ Պուլկարիա իր ուժերը պիտի միացնէր Գերմանիայի: Սակայն, Սեպտեմբեր 6ին, Վայց ինձի եկաւ՝ կարեւոր լուր մը տալու: Գիշերը կացութիւնը փոխուած էր: Պոլիսի գերման Դեսպանատունի խորհրդական Պառոն Նօյրախթ Սօֆիա գացած էր, եւ իբր արդիւնք իր այցելութեան, ստորագրուած էր համաձայնութիւն մը, որ Պուլկարիան Գերմանիայի զինակիցը պիտի ընէր:

Գերմանիա, ըսաւ Վայց, Պուլկարիան շահած է՝ ընելով բան մը՝ զոր Համաձայնութիւնը կարող եւ կամեցող չէր եղած կատարել: Այդ բանը իրեն ապահոված էր անմիջական տիրացումը ցանկացուած հողամասի մը: Սերպիա մերժած էր որ Պուլկարիա անմիջապէս տիրանայ Մակեդոնիայի: Միւս կողմէ, Թիւրքիա ներկային օսմանեան Կայսրութիւնէն մաս մը յանձնած էր: Իրաւ է թէ՛ խնդրի առարկայ հողը ինքնին աննշան էր, բայց ռազմագիտական մեծ առաւելութիւններ ունէր եւ Թիւրքիայի կողմէ լուրջ գոհողութիւն մը կը նշանակէր: Մարիժա գետը, Էնօսէն քանի մը մղոն հիւսիս, կը ծռի դէպի հիւսիս եւ ետքէն նորէն դէպի արեւմուտք, ստեղծելով մօտաւորապէս 1,000 քառակուսի մղոն մակերեսով հողազանգուած մը, որ կը պարունակէ Տիմօթիքա, Բարա-Աղան կարեւոր քաղաքները եւ Ադրիանուպոլիսի կէսը: Ինչ որ այս հողամասը առանձնապէս կարեւոր կը դարձնէ, սա՛ է որ՝ ան իր մէջ ունի Տէտէ-Աղանէն Սօֆիա երկարող երկաթուղիի գիծէն զբիծէ յիսուն մղոն: Բացի այդ յիսուն մղոնէն, այդ ամբողջ երկաթուղիի գիծը պուլկարական հողի վրայ շինուած է. այս կարճ թեւը, որ կ'երկարի Թիւրքիայի մէջէն, Պուլկարիայի հաղորդակցութիւնը կը կտրէ Միջերկրականի հետ: Բնականաբար Պուլկարիա կը ցանկար այդ հողամասին եւ Թիւրքիա հիմա զայն Պուլկարիայի կու տար: Այդ յանձնումը փոխեց Պալքանի ամբողջ կացութիւնը եւ Պուլկարիան Թիւրքիայի եւ

Կեդրոնի Տէրութիւններուն զինակիցը դարձուց : Երկաթուղիի գիծէն զատ , Պուլկարիա ստացաւ Ադրիանուպոլիսի այն մասը , որ Մարիձա գետին արեւմուտքը կը գտնուի : Անշուշտ աւելի ըլլալով Պուլկարիա պիտի ստանար Մակեդոնիան , անմիջապէս որ այդ նահանգը կարենար գրաւուիլ Պուլկարիայի եւ իր Զինակիցներուն կողմէ : Այս համաձայնութիւնը ստորագրուելուն՝ Վայցի ունեցած ցնծութիւնը տակաւին պատկերի պէս կը յիշեմ :

— Ամէն բան կարգին է , ըսաւ ան ինձի . Պուլկարիա որոշած է մեզի միանալ : Ամէն բան կարգադրուած է երէկ գիշեր , Սօֆիայի մէջ» :

Թիւրքերն ալ մեծապէս սիրտուած էին : Առաջին անգամը ըլլալով իրենց դժուարութիւններուն ելք մը կը գտնէին : Էնվէր կ'ըսէր ինձի թէ՛ պուլկարական զինակցութիւնը՝ իրենց միտքին վրայէն վերցուցած էր զարհուրելի ճնշում մը :

— Մեզի՝ Թիւրքերուս կը վերաբերի , Պուլկարիան Կեդրոնի Տէրութիւններու կողքին միացնելու պատիւը , ըսաւ ան : Ան երբեք օգնութեան չպիտի փութար մեզի , եթէ մենք անոր չի տայինք հողի այդ պատառը : Առանց մինչեւ պատերազմի վախճանը սպասելու , զայն անմիջապէս յանձնելով , մենք ապացուցինք մեր բարեյօժարութիւնը : Մեզի համար անշուշտ շատ դժուար էր մասնաւորապէս զոհել Ադրիանուպոլիսի մէկ մասը , բայց նպատակին արժանի էր ադ : Մենք այդ հողամասէն իսկապէս հրաժարեցանք՝ փոխարէն Պոլիսի , որովհետեւ եթէ Պուլկարիա մեր կողքին միացած չըլլար , մենք պիտի կորսնցնէինք մայրաքաղաքը : Լաւ մը աչքի առջեւ բերէք թէ՛ մենք ռ'ըլաի բարելաւեցինք մեր դիրքը : Մենք պարտաւոր պիտի ըլլայինք 200,000 զինուոր պահել պուլկարական սահմանագլուխը , ինքզինքնիս պաշտպանելու համար այդ կողմէն որեւէ հաւանական յարձակումի մը դէմ : Հիմա մենք կրնանք այդ ամբողջ զինուորները Կէլիպօլուի թերակղզին փոխադրել եւ բացարձակապէս անկարելի դարձնել որ՝ Դաշնակիցներու արշաւանքը կարենայ յաջողիլ : Նաեւ մենք մեծապէս նեղը մնացած ենք Տարտանէլի մէջ , ռազմանիւթի պակասին պատճառով : Բայց Պուլկարիա , Աւստրիա եւ Գերմանիա միացած յարձակում մը պիտի զործեն Սերպիայի վրայ եւ քանի մը շաբաթուան մէջ ամբողջովին պիտի տիրեն այդ երկիրին : Այսպէսով , երկաթուղիի ուղղակի գիծ մը պիտի ունենանք Պոլիսէն մինչեւ Աւստրիա եւ Գերմանիա եւ կարող պիտի ըլլանք ստանալ այն բոլոր պատերազմական պաշարը՝ որուն կը կարօտինք : Պուլկարիան մեր կողքին գտնուելով , ո՛չ մէկ յարձակում կրնայ զործուիլ Պոլիսի վրայ հիւսիսի կողմէն — անառիկ պատնէշ



Ք Ա Յ Ջ Է Ի Վ Ի Լ Լ Է Լ Ս Բ .
Թ Ի Ք Ա Վ Ա Ն Ֆ Է Լ Տ - Մ Ա Ր Ա Ջ Ա Լ Տ Ի Տ Ա Ր Ա Ջ Ո Վ .

Երբ իր զինակիցները՝ Թիւրքերը՝ 600,000էն 1,000,000 Հայեր կը սպաննէին , ինձ՝ մերժելով միջամտել , համամիտ գտնուեցաւ : Ամբողջ ժողովուրդի մը այս կոսորումը՝ վաճառագոյն արդիւնքն էր բուսիական վարդապետութեան — թե՛ կ'արդարանայ ամեն բան՝ որ գերման գեներալ յաջողութիւնը կ'ապահովէ : Զարդը աւարտելուն , Քայգերը պատահական տուաւ Սուլթանին , ճիշդ ինչպէս որ , 1898ին , Ապիւլ-Համիթի 200,000 Քրիստոնեաներ ջարդելէն ետք , այցելութիւն տուած էր այդ ինքնակային եւ զայն աւխարհի այլին առջեւ ողջագուրած էր :

մը ստեղծեցինք մենք Ռուսիայի դէմ: Չեմ ժխտեր որ՝ կացութիւնը մեզի մեծ անձկութիւն պատճառած էր: Մենք կը վախնայինք որ՝ Յունաստան եւ Պուլկարիա ձեռք-ձեռքի տային եւ իրենց միացնէին նաեւ Ռումանիան: Այն ատեն, Թիւրքիա կորսու յծ էր. անոնք մեզ քրճանի ակռաներուն մէջ պիտի բռնէին: Բայց հիմա, միակ գործ մը ունինք մեր առջեւ, որ է Անգլիացիները եւ Ֆրանսացիները Տարտանէյի մէջ ծովը թափել: Մեզի պէտք եղած բոլոր զինուորները եւ բոլոր ռազմանիւթերը ձեռքի տակ ունենալով՝ շատ կարճ ժամանակի մը մէջ պիտի ընենք այդ բանը: Մենք լքեցինք պզտիկ հողամաս մը, որովհետեւ տեսանք որ՝ ա՛յդ էր պատերազմը շահելու միջոցը»:

Գործին ելքը հաստատեց էնվէրի մարզարէութիւնները, գրեթէ բոլոր մանրամասնութիւններով: Պուլկարիայի՝ Ազրիանուպոլիսի կաշառքը ընդունելէն երեք ամիս ետքը, Համաձայնութիւնը ընդունեց պարտուած ըլլալը եւ իր ուժերը ետ քաշեց Տարտանէյէն: Այս նահանջով, Ռուսիա, որ մեծագոյն ամենագոր արքիւրն էր ուժի՝ Դաշնակիցներու դատին, եւ այն երկիրը՝ որ եթէ լրջօրէն կազմակերպուած եւ պարէնաւորուած ըլլար, կրնար Դաշնակիցներուն արագ յաղթանակ մը շահեցնել, պատերազմի բեմէն՝ իբր կենսունակ գործօն՝ անհետացաւ: Երբ Բրիտանացիները եւ Ֆրանսացիները ՚իւլիպօլուէն քաշուեցան, այդ գործողութիւնը Ռուսիան եղող վիթխարի երկիրին նաւը մատնեց՝ անիշխանութեան, կազմալուծումի եւ քայքայումի ալեկոծութեանը մէջ տատանելու:

Գերմանացիները այդ յաղթանակը տօնեցին ձեւով մը՝ որ յատկանշականօրէն տեստոնական էր: Իրենց միտքին մէջ 1916 Յունվար 17ը դրոշմուած է իբր պատերազմին ամէնէն կարեւոր թուականներէն մէկը: Պոլիսի մէջ մեծ խրախօսանութիւն կար, որովհետեւ ցորեկէն ետքը պիտի ժամանէր Պալքանեան հեպլընթացը—կամ, ինչպէս Գերմանները զայն կը կոչէին Balkanzugը!—: Երկաթուղիին կայարանը զարդարուած էր դրօշներով եւ ծաղիկներով, եւ Պոլիսի ամբողջ գերման եւ աւստրիական ընակչութիւնը, մէջը ըլլալով դեսպանական մարմինները, հոն խմբուած էին, ողջունելու կառախումբին մուտքը: Երբ վերջապէս կառախումբը կայարանին մէջ թաւալեցաւ, հազարաւոր «hoch»եր արձակուեցան, հազարաւոր խուպոտ կոկորդներէ:

1916 Յունվար 17էն իվեր Balkanzugը կանոնաւորաբար երթելեկեց Պերլինէն Պոլիս: Գերմանները կը հաւատային որ՝ անիկա գերման նոր Կայսրութեան այնչափ տեւական մէկ պատկերն էր, որչափ Պերլինէն Համպուրկ գիծը:

ԻԲ. ԳԼՈՒԽ

ԹԻՒՐԲԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԻՊԱՐԻՆ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ

Դաշնակից նաւատորմիդին Տարտանէյէն նահանջը՝ ունեցաւ այն տեսակ հետեւանքներ, զորս տակաւին մարդիկ չեն կրնար կատարելապէս ըմբռնել: Այդ դէպքին պարզ մէկ հետեւանքը եղաւ, ինչպէս ըսած եմ, Թիւրք Կայսրութիւնը կողիացնել բովանդակ աշխարհէն, բացի Գերմանիայէն եւ Աւստրիայէն: Անգլիա, Ֆրանսա, Ռուսիա եւ Իտալիա, որոնք ամբողջ դար մը օսմանեան Կայսրութեան վրայ տիրող իշխանութիւն մը կը բանեցնէին, վերջապէս կորանցուցած էին ազդեցութեան կամ հակակշիռի ամէն ուժ: Թիւրքերը հիմա կը նշմարէին որ՝ զարմացուցիչ դէպքերու շարք մը գիրկնք եւրոպական Տէրութիւններու նուազ հպատակներու դիրքէն ազատ ազդակներու փոխակերպած էր: Երկու դարէ իվեր առաջին անգամը ըլլալով՝ հիմա կրնային իրենց ազգային կեանքը ապրիլ՝ իրենց սեփական հակումներուն համաձայն, եւ իրենց ժողովուրդները կառավարել՝ համաձայն իրենց սեփական կամքին: Ազգային այս երիտասարդացած կեանքի առաջին արտայայտութիւնն էր դրուագ մը, որ, որչափ որ ես գիտեմ, ամէնէն զարհուրելի դրուագն է աշխարհի պատմութեան մէջ: Թիւրքիա, հիմա, ազատուած եւրոպական խնամակալութենէ, իր ազգային վերածնունդը հռչակեց՝ իր սեփական հպատակներէն գրեթէ մէկ միլիոն հոգի սպաննելով:

Երբք չեմ չափազանցեր այն արդիւնքը՝ զոր Դաշնակից նաւատորմիդին ետ մղուիլը առաջ բերաւ Թիւրքերուն վրայ: Անոնք կը հաւատային թէ՛ իրենք շահած էին ծովային իրապէս մեծ վճռական յաղթանակ մը: Դարերով, կ'ըսէին, բրիտանական նաւատորմիդը յաղթականօրէն իշխած էր ծովերուն վրայ, եւ հիմա իր առաջին լուրջ ծախողանքին հանդիպած էր Թիւրքերուն ձեռքով: Իրենց հպարտութեանը առաջին պահերուն մէջ՝ ժէօն Թիւրք առաջնորդները իրենց Կայսրութեան ամբողջական յարութեան ցնորքները կը տեսնէին: Ան որ՝ երկու դարէ իվեր քայքայուող ազգ մը եղած էր, հիմա յանկարծ սկսած էր նոր եւ փառաւոր կեանք մը: Իրենց հպարտութեանը եւ ամբարտաւանութեանը մէջ, Թիւրքերը սկսան արհամարհանքով նայիլ այն ժողովուրդին վրայ, որ իրենց ստրկեցուցած էր արդի պատերազմագիտութիւնը. եւ ոչինչ զիրենք այնչափ կը զայրացնէր, որչափ որնէ յայտա-

բարութիւն թէ՛ իրենց յաղթանակներուն մէկ մասը կը պարտէին իրենց գերման զինակիցներուն :

«Ինչո՞ւ որեւէ շնորհապարտութիւն պիտի զգայինք Գերմաններուն», կ'ըսէր էնվէր ինծի : Անոնք մեզի համար ի՞նչ ըրին՝ որ համեմատուի իրենց համար մեր ըրածին հետ : Անոնք մեզի քիչ մը փոխ դրամ տուին եւ մէկ քանի սպաներ ղրկեցին. ճիշդ է. բայց միտք բերէք թէ մենք ի՞նչ ըրինք ! Մենք պարտութեան մատնեցինք բրիտանական նաւատորմիդը — քան մը՝ որ ո՛չ Գերմաններուն, ո՛չ ալ ուրիշ որեւէ ազգի գործն էր : Մենք Կովկասի ճակատին վրայ բանակներ զետեղեցինք եւ զբաղուցցինք ուսական մեծ զօրաբանակներ, որոնք կրնային գործածուիլ արեւմտեան ճակատին վրայ : Նոյնպէս մենք Անգլիան պարտադրեցինք Եգիպտոսի եւ Միջագետքի մէջ մեծ բանակներ պահելու, եւ այդ միջոցով, տկարացուցինք Դաշնակից բանակները՝ Ֆրանսայի մէջ : Ո՛չ Գերմանները չէին կրնար երբեք առանց մեզի գլուխ հանել իրենց յաջողութիւնները . երախտագիտութեան պարտքը ամբողջովին իրենց ուսին վրայ կը ծանրանայ» :

Այս համոզումն է որ կ'իշխէր նաեւ Միութիւն եւ Առաջդիմութիւն Կուսակցութեան պարագլուխներուն մէջ . այդ համոզումը սկսաւ վճռական ազդեցութիւն մը ունենալ թիւրք ազգային կեանքին եւ թիւրք քաղաքականութեան վրայ : Էսպէս թիւրքը սնապարծ եւ երկչու է : Ան առիւծի մը պէս քաջ է, երբ իրերը իրեն նպաստաւոր կը քայնն. բայց քծնուտ, զծուծ եւ կորովազուրկ է, երբ ծախողութիւնները կը ճնշեն զինրը : Եւ հիմա որ՝ պատերազմին պատահարները յայտնապէս կը նպաստաւորէին Կայսրութիւնը, սկսայ աչքերուս առջեւ բոլորովին նոր թիւրքի մը յայտնուելը տեսնել : Վարանտու եւ վախկոտ Օսմանցին, որ եւրոպական դիւանագիտութեան լարիւրինթոսին մէջէն զգուշաւորութիւնով իր ճամբան կը հետագօտէ եւ եւրոպական տէրութիւններու պառակտուած գաղափարներուն մէջ՝ իրեն շահ մը գտնելու պատեհութիւններ կը փնտռէ, տեղի տուաւ խրոխտ, գրեթէ յանդուզն, հարստ եւ հաստատակամ դէմքի մը, որ որոշած է իր ուրոյն կեանքը ապրիլ եւ որ քայքայածակապէս անարգական դիրք մը ունի քրիստոնեայ թշնամիներուն հանդէպ : Ես իրապէս ականատես էի ցեղային հոգեբանութեան նշանակելի բարեփոխութեան մը — գրեթէ դասական պարագայ մը տիպարի շրջափոխութեան : Քսաներորդ դարու կոշտ ու անխնամ թիւրքը կ'աներեւութանար եւ իրեն տեղը կ'երեւար տասնըջորսերորդ եւ տասնըհինգերորդ դարու թիւրքը, այն թիւրքը՝ որ դուրս խոյանալով իր ասիական ամրութիւններէն՝ յաղթած էր իր ճամբուն

վրայ գտնուող բոլոր զօրաւոր ժողովուրդներուն եւ Ասիայի, Ափրիկէի եւ Եւրոպայի մէջ հիմնած էր ամէնէն ընդարձակածաւալ կայսրութիւններէն մէկը՝ զոր պատմութիւնը ճանցած ըլլայ : Եթէ կ'ուզենք լրջօրէն գնահատել այս նոր Թալէադը եւ էնվէրը, ինչպէս նաեւ այդ ատեն տեղի ունեցող դէպքերը, պէտք է հասկնանք այն թիւրքը, որ Օսմանի եւ անոր յաջորդներուն օրով, աշխարհի մէջ գործադրեց այս հզօր՝ բայց աւերիչ ազդեցութիւնը : Պէտք է զիտանք որ՝ թիւրք մտայնութեան թաքուն հիմնական ոգին կը կազմէ խոր արհամարհանքը՝ բոլոր ուրիշ ցեղերու հանդէպ : Կատարելապէս անմիտ գոռոզութիւն մը տիրական յատկորոշից մեծ նշանն է՝ այս մարդկային տարօրինակ ցեղին : Թիւրքին կողմէ Գրիստոնեային համար սովորաբար գործածուած բացատրութիւնն է «շուն» . եւ իր այդ դատումը միայն հոետորական պատկեր մը չէ՛ . թիւրքը ներկայիս իր եւրոպացի դրացիները իր ընտանի կենդանիներէն շատ աւելի քիչ նկատառութեան արժանի կը նկատէ :

«Զաւակս, կ'ըսէր անգամ մը ծերունի թիւրք մը, կը տեսնե՞ս խոզի սա երամակը : Ոմանք ճերմակ են, ոմանք սեւ են, ոմանք մեծ են, ոմանք պզտիկ են — կարգ մը տեսակէտներով իրարմէ կը տարբերին, բայց ամէնքն ալ խոզ են : Ատանկ են քրիստոնեաներն ալ : Մի՛ խաբուիր, զաւակս : Այդ քրիստոնեաները կրնան աղուոր զգեստներ հագնիլ. իրենց կիները կրնան շատ գեղեցիկ ըլլալ՝ դիտուելու համար. մորթերնին ճերմակ եւ հիանալի է. անոնց շատերը շատ խելացի են եւ հրաշալի քաղաքներ կը շինեն եւ կը ստեղծեն՝ երևցածին նայելով՝ մեծ պետութիւններ : Բայց յիշէ՛ որ՝ այս ամբողջ շացուցիչ արտաքինին տակ, անոնք ամէնքն ալ նոյն են — ամէնքն ալ խոզ են» : Թիւրքի մը ներկայութեանը գտնուած ատեն, բոլոր օտարականները իրապէս այդ դիրքին գիտակից են : Թիւրքը՝ կրնայ ստրկօրէն քաղաքավար ըլլալ, բայց գրեթէ համայնական սնգիտակից զգացում մը կայ որ՝ թիւրքը մտովին կը սարսափի իր քրիստոնեայ բարեկամէն, իբր զարշ բանէ մը : Եւ այս հիմնական հաւատքով է որ՝ դարերով առաջնորդուած է օսմանեան քաղաքականութիւնը՝ հանդէպ իր հպատակ ժողովուրդներուն : Այս վայրենի «հորտա» մէջտեղ ելած է կեղքոնական Ասիայի դաշտագիտիներէն, եւ, մրրիկի մը պէս, ճնշած է Միջագետքի եւ Փոքր Ասիայի ժողովուրդները . նուաճած է Եգիպտոսը, Արաբիան եւ գրեթէ ամբողջ հիւսիսային Ափրիկէն եւ յետոյ խուժած է Եւրոպա, ճգնած է Պարսնի ազգերը, զրաւած Հունգարիայի ընդարձակ մէկ մասը եւ նոյն իսկ օսմանեան Կայսրութեան առաջապահները հաստատած՝

Ռուսիայի հարաւակողմը: Որչափ որ կրնամ գիտնալ, օսմանցի թիւրքերը միակ մեծ յատկութիւն մը ունեցած են--զինուորական ծիրքը: Անոնք հրամանատարի կարողութիւնով բազմաթիւ զինուորական պետեր ունեցած են. նախկին աշխարհակալ թիւրքերը քաջարի, մոլեւանդ եւ յանդուզն կռուողներ եղած են, ճիշդ ինչպէս որ են այսօր իրենց շառաւիղները: Իմ կարծիքս ան է որ՝ այդ վաղեմի թիւրքերը պատմութեան մէջ կը ներկայացնեն ամէնէն կատարեալ պատկերը աւազակային գաղափարին՝ քաղաքականութեան մէջ: Անոնց թերին էր ան՝ ինչ որ մենք կը կոչենք քաղաքակիրթ համայնքի հիմունքներ: Անոնք այբուբեն եւ գրելու արուեստ չունէին. չունէին՝ ոչ գիրք, ոչ քանաստեղծ, ոչ արուեստ, ոչ ճարտարապետութիւն. ոչ քաղաքներ կառուցին եւ ոչ ալ տեւական պետութիւն հիմնեցին: Անոնք ուրիշ օրէնք չէին ճանչնար, բայց եթէ ուժին օրէնքը իրապէս ոչ նրկրագործութիւն ունէին, ոչ ալ ճարտարարուեստական կազմակերպութիւն: Պարզապէս վայրենի եւ ասպատակող հեծեալներ էին, որոնց ցեղական միակ ըմբռնումն էր՝ խուժել իրենցմէ աւելի քաղաքակիրթ ժողովուրդներու վրայ եւ զանոնք կողոպտել: Տասնչորսերորդ եւ տասներհինգերորդ դարերուն, այս ցեղերը արշաւեցին ժամանակակից քաղաքակրթութեան օրրաններուն վրայ, որոնք եւրոպայի տուած էին իր կրօնը, եւ մեծ չափով մը՝ իր քաղաքակրթութիւնը: Այդ ատեն, այդ երկիրները բնակավայրերն էին շատ մը խաղաղ եւ բարգաւաճ ազգերու: Միջագետքի նովիտը կը սնուցանէր երկրագործական մեծ ազգաբնակչութիւն մը: Պարտատ՝ գոյութիւն ունեցող ամենամեծ եւ ծաղկնայ քաղաքներէն մէկն էր: Պոլիս աւելի մեծ բնակչութիւն ունէր՝ քան Հռոմ: Եւ Պալքանի ու Փոքր Ասիայի երկրամասերը կը պարունակեն զանազան հզօր պետութիւններ: Աշխարհի այս բոլոր մասերուն վրայ թիւրքը խոյացաւ իբր վիթխարի, աւերիչ ուժ մը: Բանի մը տալուան մէջ Միջագետք անապատի վերածուեցաւ: Վօտաւոր Արեւելքի մեծագոյն քաղաքները թշուառութեան մատնուեցան եւ հպատակ ժողովուրդները ստրուկ դարձան: Բաղաքակրթութենէն իր վայելած բոլոր բարիքները՝ թիւրքը հինգ դարերու ընթացքին էապէս քաղած է հպատակ ժողովուրդներէն՝ զորս խորապէս կ'արհամարհէ: Իր կրօնքը կու գայ Արաբներէն: Իր լեզուն գրական որոշ արժէք մը ստացած է՝ արաբական եւ պարսկական տարրեր փոխ առնելով: Նաեւ իր գիրը արաբական է: Պոլիսի ճարտարապետական գեղեցկագոյն յիշատակարանը՝ Այա-Սօֆիայի մզկիթը, նախապէս քրիստոնէական եկեղեցի մըն էր. եւ ամբողջ թրքական ինքնակոչ ճարտարապետութիւնը՝ սերած է թիւզանդա-

կանէն: Առուտուրի եւ ճարտարարուեստի մեքենան միշտ մնացած է հպատակ ժողովուրդներու՝ Յոյներու, Հրեաներու, Հայերու եւ Արաբներու ձեռքը: Թիւրքերը քիչ բան իւրացուցած են եւրոպական արուեստէն եւ գիտութենէն. շատ քիչ կրթական հաստատութիւններ հիմնած են. եւ անուսութիւնը տիրող կանոնն է: Ասոր արդիւնքը ան եղած է որ՝ օսմանեան Կայսրութեան մէջ անմաքրութիւնը եւ թշուառութիւնը հասած են անանկ աստիճանի մը՝ որ ուրիշ որեւէ տեղ գրեթէ նմանը չունի: Թիւրք գիւղացին կը բնակի ցեխոտ խրճիթի մը մէջ. կը պառկի կեղտոտ գետինի մը վրայ. ոչ աթոռ ունի, ոչ սեղան, ոչ ճաշի սպաս, ոչ զգեստ՝ բացի ողորմելի քանի մը ցնցոտիէ, որով մարմինը կը ծածկէ եւ զոր սովորաբար տարիներով կը հազնի:

Ժամանակի ընթացքին, թիւրքերը կրցած են իրենց եւրոպացի եւ արաբ դրացիներէն կարգ մը բաներ սորվիլ. բայց կայ գաղափար մը՝ որուն հետ չէին կրնար նոյն իսկ թեթեւօրէն հաշտուիլ: Անոնք չէին կրնար ըմբռնել թէ՛ յաղթուած ժողովուրդ մը գերիէ տարբեր բան մըն է: Երբ թիւրքերը երկիրի մը կը տիրէին, հոն կը գտնէին որոշ թիւով ուղտեր, ձիեր, եզներ, շուներ, խոզեր եւ մարդկային արարածներ: Այս բոլոր կենդանի գոյակներէն այն ենթական՝ որ ամէնէն աւելի փրկիքապէս կը նմանէր իրենց՝ ամէնէն քիչ կարելորդ կը նկատէին: Իրենց մէջ առած դարձած է այն խօսքը թէ՛ ձի մը կամ ուղտ մը աւելի՛ շատ արժէք ունին, քան մարդ մը: Այս կենդանիները դրամ կ'արժէին, մինչդեռ օսմանեան երկիրներու մէջ լեցուն էին «անհաւատ քրիստոնեաները», որոնք դիւրին կերպով կրնային աշխատութեան բռնադատուիլ: Քրիստոնեաներուն համար գործածուած սովորական բառն է ռայա — որ կը նշանակէ նախիր: Ճիշդ է որ նախկին Սուլթանները Կայսրութեան մէջ գտնուող հպատակ ժողովուրդներուն եւ եւրոպացիներուն զանազան իրաւունքներ տուած էին, բայց իրականութեան մէջ ատոնք ինքնին կը ցոլացնէին այն արհամարհանքը՝ որուն ենթակայ էին ոչ-Իսլամները: Արդէն նկարագրած եմ «քափիթիլիսիօն»ները, որոնց համեմատ թիւրքիայի օտարականները իրենց դատարանները, բանտերը, նամակատունները եւ ուրիշ հաստատութիւնները ունէին: Բայց նախկին Սուլթանները այդ առանձնաշնորհումները տուած էին՝ ոչ թէ լայնախոհութեան [tolerance] ոգիով, այլ միայն անոր համար որ՝ անոնք քրիստոնեայ ազգերը պիղծ կը նկատէին, հետեւաբար անարժան՝ օսմանեան վարչական եւ դատական կազմին հետ որեւէ շփում ունենալու: Սուլթանները նոյնպէս զանազան ժողովուրդներէն՝ ինչպէս Յոյներէն եւ Հայերէն՝ անջատ «միլլէթ»ներ կամ ազգեր

կազմեցին, ո՛չ թէ որովհետեւ կը փափաքէին զարկ տալ անոնց անկախութեան եւ բարօրութեան, այլ անոր համար որ՝ զանոնք զարշաճեցնեն կը նկատէին եւ հիտեւաբար անյարմար օսմանեան պետութեան անդամակցութեան: Քրիստոնեայ հպատակներու հանդէպ Կառավարութեան դիրքը կը բացատրուէր կարգ մը կանոնադրութիւններով՝ որոնք անոնց գործունէութեան ազատութիւնը կը սահմանափակէին: Քրիստոնեաներու բնական շէնքերը պէտք չէին ուշադրաւ ըլլալ եւ իրենց եկեղեցիները զանգակատուն ունենալու չէին: Քրիստոնեաները քաղաքին մէջ չէին կրնար ծի հեծնել, որովհետեւ ատիկա ազնուատոհմ Իսլամներուն բացառիկ իրաւունքն էր: Թիւրքը իրաւունք ունէր իր սուրին սուրութիւնը փորձել որեւէ Քրիստոնեայի վիզին վրայ:

Երեւակայեցէ՛ք մեծ Կառավարութիւն մը, որ տարիներով այս վարմունքը կը ցուցնէ իր բազմամիլիոն հպատակներուն հանդէպ! Եւ Թիւրքերը, դարերով, այս ծանրաբեռն եւ գործունեայ ժողովուրդներուն երեսնէն ապրեցան՝ պարզապէս մակարոյժներու նման: Անոնց վրայ տնտեսապէս փճացնող տուրքեր դրին. առեւանգեցին անոնց ամէնէն գեղեցիկ աղջիկները եւ իրենց «հարէմ»-ներուն մէջ արգելափակեցին. հարիւր հազարաւոր քրիստոնեայ արու զաւակներ առին եւ իսլամ զինուորներ դարձուցին զանոնք: Միտք չունիմ նկարագրելու այն զարհուրելի ճորտութիւնը եւ ճնշումը, որոնք հինգ դարեր տեսցին. իմ միակ նպատակս է շեշտել իսլամ Թիւրքին այն բնածին զգացումը՝ հանդէպ իր ցեղէն եւ կրօնքէն չեղող ժողովուրդներու թէ՛ անոնք իրաւունքներ ունեցող մարդկային էակներ չեն, այլ պարզապէս շարժուն ինչքեր, որոնք կրնան թոյլատրուիլ ապրելու՝ երբ իրենց տէրերուն շահին կը ծառայեն, բայց որոնք կրնան անգթօրէն ոչնչացուիլ, երբ օգտակար ըլլալէ դադրած են: Այս վերաբերմունքը լայնցած է՝ մարդկային կեանքի հանդէպ բացարձակ արհամարհանքով մը եւ մարդը ֆիզիքական չարարանքի ենթարկելու անսահման հաճոյքով մը. այս զգացումները նախնական ժողովուրդներու սովորական յատկութիւններն են:

Ասոնք էին Թիւրքին իմացական յատկանիշերը, իր զինուորական մեծութեան օրերուն: Նոր ժամանակներու մէջ, օտարականներու եւ հպատակ ժողովուրդներու հանդէպ իր վարմունքը բաւականաչափ փոխուած է: Իր զինուորական անկումը եւ այն դիւրութիւնը որով անհաւատ ազգերը յաղթահարած էին իր լաւագոյն բանակները, Օսմանի ամբարտաւան յաջորդները յայտնապէս պարտադրած էին յարգելու գոնէ անոնց քաջագործութիւնը: Հարիւր տարիներու միջոցին, իր Կայսրութեան արագ

անհետացումը, օսմանեան Կայսրութեան ծոցէն նոր պետութիւններու ստեղծումը՝ ինչպէս Յունաստան, Սերպիա, Պուլկարիա եւ Ռումանիա, եւ այն հրաշալի բարելաւումը որ յաջորդեց՝ Թրքական լուծին խորտակումին՝ այդ խաւար երկիրներուն մէջ, կրնան աւելցուցած ըլլալ Օսմանցիին ատելութիւնը անհաւատին հանդէպ, բայց ատոնք գոնէ որոշ ազդեցութիւն մը ունեցան իր աչքերը բանալու՝ իր արժէքին մասին: Կարգ մը Թիւրքեր՝ ա՛յլ եւրոպական համալսարաններու մէջ դաստիարակութիւն կ'առնեն. կ'ուսանին մասնագիտական վարժարաններու մէջ եւ կը դառնան՝ եւրոպական ձեւով բժիշկ, վիրաբուժ, օրէնագէտ, երկրաչափ եւ քիմիագէտ: Սակայն, ո՛րչափ ալ, այս աւելի զարգացած Իսլամները ատեն իրենց քրիստոնեայ ընկերները, չեն կրնար անգիտանալ այն իրողութիւնը թէ՛ գոնէ այս անցաւոր աշխարհին մէջ գեղեցկագոյն բաները՝ արդիւնքն են եւրոպական եւ ամերիկեան քաղաքակրթութեան: Եւ հիմա, ժամանակակից պատմութեան առաջդիմութիւնը՝ որ շատ քիչ ըմբռնելի կը թուէր Թիւրքին, սկսած է աւելի իմաստուններու եւ առաջդիմասէրներու միտքին վրայ ազդել: Երեւան եկան առաջնորդներ՝ որոնք սկսան թաքնօրէն խօսիլ «Սահմանադրութեան», «Ազատութեան» եւ «Ինքնավարութեան» պէս բաներու վրայ, եւ որոնց համար անկախութեան հռչակումը կը պարունակէր որոշ ճշմարտութիւններ՝ որոնք կրնային արժէք մը ունենալ նոյն իսկ Իսլամներուն համար: Այս յանդուգն զաղափարները սկսան ինքնակալ Սուլթանը տապալելու երազը սնուցանել եւ անոր անպատասխանատու աշխարհավարութեանը փոխարէն հաստատել խորհրդարանական դրութիւն մը: Ես արդէն նկարագրած եմ ծագումը եւ անկումը այս ժէժն Թիւրք շարժումին, Թալէադի, Էնվերի, ճէմալի նման պարագլուխներու եւ Միութիւն եւ Առաջդիմութիւն Քոմիթէի իրենց ընկերներուն ղեկավարութիւնով: Այն կէտը՝ զոր կ'ուզեմ շեշտել հոս, սա՛ է թէ՛ այս շարժումը կանխայուսադրեց Թիւրք մտայնութեան կատարեալ շրջափոխութիւն մը, մասնաւորաբար հպատակ ժողովուրդներու հանպէպ իր դիրքին մասին: Վերակազմուած Թիւրք պետութեան մէջ, Յոյները, Սուրիացիները, Հայերը եւ Հրեաները ա՛յլ «պիղծ կեպտուներ» չպիտի նկատուէին: Ասկէ ետքը, այս բոլոր ժողովուրդները հաւասար իրաւունքներ եւ հաւասար պարտականութիւններ պիտի ունենային: Նոր ռեժիմի հաստատումին յաջորդեց ընդհանուր ցնձատոն մը. եւ գրեթէ խելայեղ համերաշխութեան այն տեսարանները, ուր Թիւրքերը եւ Հայերը հրապարակով ողջագուրուեցան, բացորոշապէս կը ցուցնէին երկար ատեն հակառակորդ եղող ժողո-

վորդներու բացարձակ միութիւնը : Թիւրք գործիչներ, որոնց մէջ նաեւ Թալէաթ եւ էնվէր, քրիստոնեայ եկեղեցիներ այցելեցին եւ բարեմաղթութիւններ ըրին նոր կարգերուն համար. գացին հայ գերեզմանատունները եւ զղումի արցունքներ թափեցին ոսկորներուն վրայ այն մարտիրոսներուն՝ որոնք հոն կը հանգչէին: Փոխադարձօրէն, հայ կրօնաւորները աղօթքի իրենց պարտքը հատուցին մահմետական Թիւրքերու մզկիթները երթալով : էնվէր փաշա բազմաթիւ հայ վարժարաններ այցելեց , բարոզելով տղոց թէ՛ Իսլամ-Քրիստոնեայի պայքարի հին օրերը յաւիտեան անցած էին եւ թէ՛ երկու ժողովուրդները հիմա պէտք էին իրարու հետ վարուիլ եղբայրներու եւ քոյրերու պէս: Շնական խորհողներ կային՝ որոնք կը խնդային այս բոլոր ցոյցերուն վրայ, բայց այդ միակ քայլը կը մղէր զանոնք խորհելու թէ՛ երկրային դրախտը հասած էր:

Բռնակալութեան ամբողջ շրջանին , միայն իսլամ տէրը արտօնուած էր զէնք կրելու եւ օսմանեան բանակին մէջ ծառայելու : Զինուոր ըլլալու գործը՝ չափազանց առնաւայել եւ փառալից էր, անյարմար՝ ատելի քրիստոնեաներուն: Բայց հիմա ժէօն Թիւրքերը կը քաջայերէին բոլոր Քրիստոնեաները զէնք առնելու. Թիւրքերը զանոնք բանակին մէջ Իսլամին հետ հաւասար կերպով զինուորագրեցին: Այս Քրիստոնեաները, թէ՛ իբր սպայ եւ թէ՛ իբր զինուոր կռուեցան իտալական եւ պալքանեան պատերազմներուն մէջ, թիւրք զօրավարներու կողմէ բարձր գովեստներու արժանանալով, իրենց քաջութեան եւ հնարամտութեան համար: Ժէօն Թիւրք շարժումին մէջ, հայ գործիչներ ալ զտնուած էին յայտնի կերպով. այդ մարդիկը բացայայտօրէն կը հաւատային թէ՛ սահմանադրական Թիւրքիա մը հնարաւոր էր: Անոնք գիտակցութիւնը ունէին իրենց իմացական եւ ճարտարարուեստական գերազանցութեանը՝ Թիւրքերուն վրայ , եւ զիտէին թէ՛ կրնային օսմանեան Կայսրութեան մէջ բարգաւաճիլ, եթէ մինակ թողուէին, մինչդեռ եւրոպական վարչութեան տակ, մեծ դժուարութեան պիտի բաղխէին, տոկալու համար մրցակցութեանը աւելի զօրաւոր եւրոպացի գաղթականներու՝ որոնք կրնային երկիր թափանցել: Կարմիր Սուլթանին՝ Ապտիւլ-Համիտի գահընկէցութիւնով եւ սահմանադրական վարչութեան հաստատումով՝ Հայերը բազմաթիւ դարերէ իվեր առաջին անգամը ըլլալով իրենց ազատ մարդեր ըլլալը զգացին :

Բայց, ինչպէս արդէն նկարագրած եմ, այս բոլոր ցանկութիւնները երազի մը պէս ցնդեցան: Եւրոպական պատերազմին սկսելէն շատ առաջ, թիւրք ժողովրդապետութիւնը անհետացած էր: Նոր Սուլթանին ուժը չբացած էր. չբացած էին նաեւ Թիւր-

քիան արդիական ուղղութիւնով վերածաղկեցնելու յոյսերը, ձգելով միայն անհատներու խմբակ մը, որուն գլուխը կը գտնուէին Թալէաթ եւ էնվէր, ներկային՝ պետութեան տէրերը: Իրենց ժողովրդապետական ձգտումները կորսնցուցած ըլլալով, այս մարդիկը ատոնց տեղը դրին ուրիշ նոր ազգային գաղափար մը: Ժողովրդապետական սահմանադրական պետութեան փոխարէն՝ անոնք յարութիւն տուին համաթիւրքութեան գաղափարին. բոլոր օսմանցիներու հանդէպ հաւասար վարմունքի փոխարէն, անոնք որոշեցին հիմնել երկիր մը, տարամերժօրէն Թիւրքերուն համար: «Նոր» կոչեցի այս գաղափարը, բայց անիկա նոր էր միայն այն մարդոց՝ որոնք այդ ատեն երկիրին ճակատագիրը կը վարէին, որովհետեւ, իրականութեան մէջ, ատիկա պարզապէս փորձ մըն էր վերակենդանացնելու՝ իրենց նախահայրերուն ամէնէն բարբարոս գաղափարները: Ինչպէս ըսի, ատիկա դէպի նախնական Թիւրքը առհաւական վերադարձ մըն էր միայն: Որով՝ տեսանք թէ՛ թիւրք գործիչները, որոնք ազատութեան, հաւասարութեան, եղբայրութեան եւ սահմանադրականութեան վրայ կը ճառէին, զոց ճառ արտասանող տղաքներ էին. միայն թէ՛ անոնք «ժողովրդապետութիւն» բառը կը գործածէին՝ իբր ելարան՝ իշխանութեան գլուխ ելելու համար միայն : Եւրոպական քաղաքակրթութեան հետ հինգ հարիւր տարիներու մօտաւոր շփումէն ետքը , Թիւրքը կը մնար ճիշդ այն անհատը, որ Միջին Դարուն մէջ Ասիայի տափաստաններէն երեւան ելած էր: Սնիկա՝ նոյնչափ յամառօրէն, որչափ իր նախահայրերը՝ կը կառչէր պետական այն գաղափարին՝ որ կը բաղկանայ մէկ քանի տէր. անհատներէ, որոնց իրաւունքն է ստրկացնել, կողոպտել եւ խոշտանգել այն ժողովուրդը՝ զոր կրնան իրենց զինուորական իշխանութեանը ենթարկել: Թէեւ Թալէաթ, էնվէր եւ ձէմալ բոլորն ալ խոնարհ ընտանիքներէ ծագում առած էին, բայց իրենք տիրապետուած էին տիրոջ եւ ստրուկի այն հիմնական գաղափարներէն, որոնք կը կազմէին պետական արուեստը [statecraft] Օսմանի եւ նախկին Սուլթաններուն: Տեսանք այն ատեն որ՝ թղթեղէն սահմանադրութիւն մը եւ նոյն իսկ քրիստոնեայ եկեղեցիներու եւ գերեզմանատուններու տրուած արտասուահեղձ այցելութիւններ՝ չէին կրնար արմատախլել այս վաչկատուն ցեղին ընդոժին գաղափարը թէ՛ աշխարհի վրայ երկու տեսակ ժողովուրդներ կան— յաղթողը եւ յաղթուողը:

Երբ թիւրք Կառավարութիւնը ջնջեց ֆալիթիւլախօնները եւ այդ կերպով Թիւրքերը ազատագրուեցան օտար տէրութիւններու տիրապետութիւնէն, ատով քայլ մը առած եղան դէպի համա-

Թիւրքութեան գաղափարականին իրականացումը: Ես ակնարկած եմ այն դժուարութիւններուն՝ զորս ունեցայ իրենց հետ, քրիստոնեայ վարժարաններու շուրջը: Զանոնք արմատախլելու կամ գէթ թիւրք հաստատութիւններու փոխակերպելու իրենց որոշումը՝ նոյն արմատական ծրագիրին մէջ ուրիշ մանրամասնութիւն մըն էր լոկ: Նոյնպէս, ջանացին բոլոր օտար առեւտրական տուններուն մէջ միայն թիւրք պաշտօնեաներ գործածել տայ. պնդելով որ՝ պէտք էին ճամբել իրենց Յոյն, Հայ եւ Հրեայ գործակատարները, սլազգիները, գործաւորները եւ ուրիշ պաշտօնեաները: Անոնք հրաման տուին բոլոր օտար հաստատութիւններուն որ՝ թիւրքերէն լեզուով բռնեն իրենց տոմարները. մեծ դժուարութիւն կրեցի իրաւախոհութեան մը յանգելու, որով անոնք կարող պիտի ըլլային տոմարները թէ՛ Ֆրանսերէն եւ թէ՛ թիւրքերէն բռնելու: Ուզեցին թիւրքերուն պաշտօն հայթայթել եւ զանոնք կարող ընել՝ գործի արդիական մեթոտներ սորվելու: Օսմանեան Կառավարութիւնը մինչեւ անգամ մերժեց որեւէ յարաբերութիւն ունենալ աւստրիական մեծագոյն ռազմանիւթի գործարանի մը ներկայացուցիչին հետ, եթէ ան թիւրք շահակից մը չառնէր: Բացի թիւրքերէնէն, բոլոր լեզուները ջնջելու մենամուտներէն մը բռնուեցան: Տասնեակ տարիներէ ի վեր, Պոլիսի մէջ զանազան օտարականներուն կողմէ ընդունուած լեզուն եղած էր Ֆրանսերէնը. փողոցի ծանուցանիշերէն շատերը գրուած էին թէ՛ Ֆրանսերէնով եւ թէ՛ թիւրքերէնով: Առտու մը, օտարականները զարմանքով տեսան որ՝ այդ բոլոր ծանուցանիշերը վերցուած էին եւ փողոցի անունները, փողոցի կառքերու վրայի ցուցմունքները եւ ուրիշ հանրային ծանուցումներ գրուած էին միայն թիւրքերէն, այն տարօրինակ գիրերով, զորս շատ քիչեր կը հասկնային: Այս փոփոխութենէն մեծ շփոթութիւն ծագեցաւ, բայց տիրող իշխանութիւնը մերժեց վերահաստատել ատելի օտար լեզուն:

Այս գործիները, ո՛ր միայն իրենց նախահայրերուն բարբարոս գաղափարներուն վերադարձան, այլ նաեւ դիմեցին ծայրանշուրթիւններու՝ որոնք նախկին Սուլթաններուն միտքէն անցած չէին երբեք: Տասնըհինգերորդ եւ տասնըվեցերորդ դարերու իրենց նախահայրերը հպատակ ժողովուրդներու հետ կը վարուէին իբր իրենց ոտքին տակի ցելսը. բայց նորէն հաւատքը ունէին թէ՛ անոնք որոշ օգտակարութիւն մը ունին եւ չէին արհամարհեր զանոնք իրենց ստրուկները դարձնել: Բայց այս Միութիւն եւ Առաջդիմութիւն Քօմիթէն, որուն պարագլուխներն էին Թալէաթ եւ Էնվեր, որոշեց զանոնք ամբողջովին մէջտեղէն վերցնել: Վաղեմի աշխարհակալ Թիւրքերը՝ Քրիստոնեաները իրենց ծառաները դար-

ծուցած էին. բայց իրենց չտես յաջորդները գործը աւելի առաջ տարին, որովհետեւ որոշեցին զանոնք միահամուռ բնաջնջել եւ Կայսրութիւնը թրքականացնել, ջարդելով ոչ-Իսլամ տարրերը: Աշխարհավարական այս մտածումին սկզբնական հեղինակութիւնը Թալէադի եւ Էնվերի էր վերաբերել. այն մարդը՝ որ առաջին անգամ ծրագրեց գայն, մեծագոյն հրէշներէն մէկն է՝ որ ծանօթ ըլլայ պատմութեան — «Կարմիր Սուլթանը», Ապտիւլ-Համիտը: Այս մարդը զահ բարձրացաւ 1876ին, թիւրք պատմութեան մէջ տազնապալի շրջանի մը: Իր թագաւորութեան առաջին երկու տարիներուն, ան կորսնցուց Պուլկարիան, ինչպէս նաեւ Կովկասի մէջ կարեւոր նահանգներ, իր վեհապետութեան նետքերուն վերջին մնացորդները Գարա-Տաղի, Աերպլայի եւ Ռումանիայի մէջ, եւ իր իրական ամբողջ իշխանութիւնը Պօսնայի եւ Հերսէքի մէջ: Յունաստան երկար ատենէ ի վեր անկախ ազգ մը եղած էր, եւ այն վէճերը՝ որոնք Եգիպտոսը պիտի անջատէին օսմ. Կայսրութենէն, սկսած էին արդէն: Երբ Սուլթանը իր ժպտանալութեան մթերհաշիւը կատարեց, առանց դժուարութեան կրցաւ նախատեսել այն օրը, երբ իր երկիրին ամբողջ մնացած մասը պիտի անցնէր անհաւատներուն ձեռքը: Ի՞նչ էր պատճառը թիւրք ընդարձակածաւալ Կայսրութեան այս տարանջատումին: Անշուշտ իրական պատճառը խորապէս թաքնուած է թիւրքին նկարագիրին մէջ, բայց Ապտիւլ-Համիտ տեսաւ միայն աւելի ակնյայտ իրողութիւնը թէ՛ եւրոպական մեծ տէրութիւններու միջամտութիւնը ուժ տուած էր այդ գերի ազգերուն: Սուլթանին երկրամասերէն կտրուելով կերտուած այս բոլոր թագաւորութիւններուն մէջէն, Աերպիան — յիշենք այս պարագան՝ իբր իրեն յաւերժական պատիւ — միակն է որ՝ իր անկախութիւնը ինքնիրենը շահեցաւ: Բոլոր մնացածները՝ ազատագրած են Ռուսիա, Ֆրանսա եւ Մեծ Բրիտանիա: Եւ ինչ որ շատ անգամներ պատահած էր, կրնար նորէն պատահիլ: Օսմանեան Կայսրութեան մէջ տակաւին կը մնար համախումբ ցեղ մը, որ ազգային ցանկութիւններ եւ ազգային զօրութեանականութիւններ ունէր: Փոքր Ասիայի հիւսիս-արեւելեան մասին մէջ, դէպի Ռուսիայի սահմանը երկարող վեց նահանգներ կային, ուր Հայերը ազգաբնակչութեան էն ստուարաթիւ տարրը կը կազմէին: Հերոդոտոսի ժամանակէն, Ասիայի այս մասը Հայաստան անունը կրած է: Ներկայի Հայերը ուղղակի շառաւիղներն են այն ժողովուրդին, որ երբեք հազար տարի առաջ այդ երկիրը կը բնակէր: Իրենց ծագումը այնչափ վաղնջական է որ՝ կորսուած է առասպելին եւ խորհուրդին մէջ: Հայկական մեծագոյն քաղաքը եղող Վանի ժեռուտ բլուրներուն վրայ՝ տակաւին կը

մնան (կարդացուած [undeciphered] բեւեռագիր արձանագրութիւններ՝ որոնք մղեցին կարգ մը արեւելագէտներ -- պէտք է խոստովանիմ թէ փոքրաթիւ -- հայ ցեղը նոյնացնելու Աստուածաշունչի Հիդիդներուն հետ: Մակայն, ինչ որ որոշապէս ծանօթ է Հայերու մասին, սա՛ է թէ՛ դարձրէ իվեր Հայերը օսմանեան Կայսրութեան արեւելեան մասին ամէնէն քաղաքակիրթ եւ ամէնէն ճարտարարուեստ ցեղը հանդիսացած են: Իրենց լեռներէն իջնելով, անոնք տարածուած են Սուլթանին հողամասերուն մէջ, եւ բոլոր մեծ քաղաքներու ազգաբնակչութեան կարեւորագոյն մէկ տարրը կը կազմեն: Ամէն կողմ, անոնք ծանօթ են իրենց ճարտարարուեստով, իրենց ուշիմութիւնով եւ կանոնապահ կեանքով: Անոնք իմացականապէս եւ բարոյապէս ա՛յնչպիսի գերազանց են Թիւրքերէն որ՝ առուտուրի եւ ճարտարարուեստի մեծ մասը իրենց ձեռքը անցած է: Յոյներուն հետ, Հայերը Կայսրութեան տնտեսական ուժը կը կազմեն: Այս ժողովուրդը չորրորդ դարուն Քրիստոնէութիւնը ընդունեց եւ հիմնեց Հայկական Եկեղեցին՝ իբր պետական կրօնքին խարխիւր: Կրտսի թէ՛ ասիկա գոյութիւն ունեցող ամէնէն հին Քրիստոնեայ Եկեղեցին է:

Իմագրաւելով հայածանքներու՝ որոնց նմանը ուրիշ ո՛րեւէ տեղ գոյութիւն չէ ունեցած, այս ժողովուրդը իր վաղեմի բրիստոնէական հաւատքին կառչած է գերագոյն յամառութիւնով: Տասնըհինգ դարեր Հայերը սպրեցան Հայաստանի մէջ, -- Քրիստոնեաներու պատիկ կղզի մը, շրջապատուած թշնամի կրօնքով եւ թշնամի ցեղով ետադէմ ժողովուրդներէ: Իրենց երկարատեւ կեանքը չվերջացող մարտիրոսութիւն մը նդած է: Իրենց բնակած երկիրը միացումի օղակը կը կազմէ Եւրոպայի եւ Ասիայի միջեւ, եւ բոլոր ասիական արշաւանքները -- Սարազենները, Թաթարները, Մոնկոլները, Քիւրտերը եւ Թիւրքերը -- անցած են անոնց երկիրին վրայէն: Այսպէս, Հայերը դարերով եղած են Արեւելքի Պելոփան: Ամբողջ այս ժամանակաշրջանի ընթացքին, Հայերը ինքզինքնին նկատած են ո՛չ թէ Ասիացիներ, այլ Եւրոպացիներ: Կը խօսին հնդ-եւրոպական լեզու մը. գիտուններ անոնց ցեղային ծագումը արիական կը նկատեն. եւ այն պարագան որ՝ իրենց կրօնքը Եւրոպայի կրօնքն է, պատճառ եղած է որ՝ անոնք միշտ աչքերնին դէպի Արեւմուտք դարձնեն: Եւ անոնք միշտ յուսացած են որ՝ օր մը Արեւմուտքի այդ աշխարհէն է որ պիտի գար փրկութիւնը, որ զիրենք պիտի աշատագրէր իրենց ոճրագործ տէրերէն: Եւ երբ, 1876ին, Ապտիւլ-Համիտ քննեց իր կտոր կտոր եղած երկիրը, տեսաւ որ իր ամէնէն տկար կէտը Հայաստանն էր: Ճիշդ կամ սխալ կերպով, խորհեցաւ թէ՛ Հայերը, Ռուսմանա-

ցիներուն, Պուլկարներուն, Յոյներուն եւ Սերպիացիներուն պէս, կը տենչային իրենց միջնադարեան անկախ ազգութիւնը վերահաստատելու, եւ զիտէր թէ՛ Եւրոպա եւ Ամերիկա համակիր էին այս ցանկութեան:

Պերլինի դաշնագրերը, որ վճռապէս վերջ դրած էր Թիւրք-եւ-ռուսական պատերազմին, կը պարունակէր յօդուած մը, որ եւրոպական տէրութիւններուն կ'ընծայէր պաշտպան քաղուկ մը՝ Հայերուն վրայ: Համիտ ի՛նչպէս կրնար տեսականօրէն ազատիլ այս վտանգէն: Լուսամիտ վարչութիւն մը, որ Հայերը ազատ անհատներու փոխակերպէր եւ ապահովէր անոնց կեանքը եւ ինչքը, ինչպէս նաեւ քաղաքային եւ կրօնական իրաւունքները, հաւանօրէն զանոնք պիտի դարձնէր խաղաղ եւ օրինապահ հպատակներ: Բայց ո՛չ մէկ Թիւրք կրնար բարձրանալ միևեւ աշխարհավարական այդ տեսակ ըմբռնումի մը: Ընդհակառակը, Ապտիւլ-Համիտ որոշեց որ՝ միակ միջոց մը կար Թիւրքիան հայկական խնդիրէն փրկելու համար -- եւ ատիկա էր՝ երկիրը Հայերէն մաքրել: Պետութեան կողմէ կազմակերպուած եւ ղեկավարուած ջարդով՝ 2,000,000 մարդոց, կիներու, տղոց քնազնջումը՝ միակ միջոցը ըլլալ թուեցաւ՝ թրքական Կայսրութեան ալ աւելի քայքայուիլը կանխարգիլելու համար:

Օր մը, Ապտիւլ-Համիտ կանչեց Հայերու Պատրիարքը, որ հայկական Եկեղեցիին գլուխն է: Չայն ընդունեց ուղղակի Վոսփորին վրայ նայող իր պալատին մէջ: Սուլթանը ցուցուց այդ նեղուցը եւ ըսաւ.

— Եթէ Հայերը չի դադրին խռովութիւն յարուցանելէ, անոնց արիւնը սա Վոսփորին պէս պիտի հոսեցնեմ:

Եւ անկէ ետքը, մօտաւորապէս երեսուն տարի, Թիւրքիա աշխարհի ներկայացուց ջարդով կառավարելու պատկեր մը: Մենք, Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ, լսեցինք այդ դէպքերը, մասնաւորապէս երբ անոնք հրէշային համեմատութիւններու հասան, ինչպէս 1895-96ին, որ ատեն, 200,000 Հայեր ամենավայրագ կերպով խողխողուեցան: Եւ ամբողջ այդ տարիներու ընթացքին, Հայերու կեանքը շարունակական մղձաւանջ մը եղաւ: Անոնց ստացուածքը կը գողցուէր, անոնց այրերը կը սպաննուէին, անոնց կիները կը յափշտակուէին, անոնց դեռատի աղջիկները կ'առեւանգուէին եւ կը բռնադատուէին թրքական հարեմներու մէջ ապրելու: Այս բաները ամէն օր կը պատահէին: Սակայն Ապտիւլ-Համիտ կարող չէր իր ամբողջ նպատակը գործադրել. եթէ իր կամքին մնար, ան միակ զգուշի գեհեհնատօնի մը մէջ ջարդել կու տար ամբողջ ազգը: Ան ջանաց ընել այդ բանը 1895ին,

բայց իր ծրագիրին դէմ՝ զանազան անյաղթելի խոչընդոտներ գտաւ։ Ատոնց գլխաւորներն էին Անգլիա, Ֆրանսա եւ Ռուսիա։ Այդ վայրագութիւնները՝ իր մենարանէն ծայնը բարձրացուցին Կլէտսթընի, որ այն ատեն ութսունըվեց տարեկան էր եւ ան, իր ճառերովը, որոնց մէջ Սուլթանը «Մե) Մարդասպանը» եւ «Թժոխապարտ Ապտիւլը» անուանեց, բովանդակ աշխարհը դէմ հանեց այն խուժուժութիւններուն, որոնք տեղի կ'ունենային։ Տեսնուեցաւ որ՝ եթէ Սուլթանը չընկրկէր, Անգլիա, Ֆրանսա եւ Ռուսիա պիտի միջամտէին, եւ Սուլթանը գիտէր թէ՛ այդ միջամտութիւնը տեղի ունենալու պարագային, Թիւրքիայի այն մասերը՝ որոնք նախկին անջատումներէ ետքը վերապրած էին՝ պիտի անհետանային։ Որով, Ապտիւլ-Համիտ ստիպուած էր հրաժարիլ սպանութիւնով ամբողջ ցեղ մը բնաջնջելու իր դիւային ծրագիրէն։ Բայց Հայաստան շարունակեց կրել անգութ հալածանքին յամր ճգնաժամը։ Մինչև եւրոպական պատերազմին պայթիլը, հայկական նահանգներուն մէջ օ՛ր չէր անցած՝ առանց վայրագութիւններու եւ սպանութիւններու։ Ժէօն Թիւրք ուժիւնը, հակառակ իր ընդհանուր եղբայրութեան խոստումներուն, հանգիստ չտուաւ Հայերուն։ Արդէն նկարագրուած սիրատօներէն քանի մը ամիս ետքը, ամենազարհուրելի ջարդեր տեղի ունեցան Ատանայի մէջ, ուր 35,000 հոգի ոչնչացան։

Եւ հիմա, Ժէօն Թիւրքերը, որոնք Ապտիւլ-Համիտի գաղափարներէն շատերը իւրացուցած էին, որդեգրեցին նաեւ Հայկական քաղաքականութիւնը։ Ազգը Թրքականացնելու իրենց մտուցքին արամաբանական նպատակը ըլլալ կը թուէր՝ բնաջնջել բոլոր Քրիստոնեաները — Յոյները, Սուրիացիները եւ Հայերը։ Ո՛րչափ ալ հիանային տասներհինգերորդ եւ տասնըվեցերորդ դարերու մահմետական աշխարհակալներուն վրայ, հիմա կ'ըմբռնէին թէ՛ այդ մեծ պատերազմիկները աղէտալի սխալ մը գործած էին, քանի որ՝ ունէ՛ին կատարեալ իշխանութիւնը քրիստոնեայ ազգաբնակչութիւնները ջնջելու եւ զանց ըրած էին կատարել այդ քանը։ Իրենց կարծիքով, այդ քաղաքականութիւնը՝ աշխարհավարական աղէտալի սխալ մըն էր. ատոր արդիւնքն էին այն բոլոր թշնամութիւնները՝ որոնցմէ տուայտած է Թիւրքիա, արդի ժամանակներու մէջ։ Եթէ այդ իսլամ ցեղապետները Պուլկարիան նուաճած ատեն, բոլոր Պուլկարները սուրէ անցուցած ըլլային ու Պուլկար երկիրը բնակչաւորած իսլամ Թիւրքերով, երբեք գոյութիւն չպիտի ունենար ժամանակակից պուլկարական հարց մը, եւ Թիւրքիա երբեք չպիտի կորսնցնէր Կայսրութեան այդ մասը։ Նոյնպէս, եթէ անոնք բնաջնջած ըլլային բոլոր Ռուսները, Սերպերը



HENRY MORGENTHAU, AMERICAN AMBASSADOR TO TURKEY, 1913-1916
 Mr. Morgenthau is standing on the terrace of the American Embassy in Constantinople. The two ladies are his granddaughters, Henry M. and Mortimer J. Fox; the two girls are the daughters of the Swedish Minister to Constantinople, Mr. and Mrs. Axel von Frenckell.

Հ Է Ն Ր Ի Մ Օ Ր Կ Ը Ն Թ Ա Ո Ւ
Թ Ի Ի Բ Գ Ի Ո Յ Ի Ա Մ Ե Ր Ի Կ Ե Ա Ն Դ Ե Ս Պ Ա Ն, 1913—1916

Մր. Մօրկընթաու կեցած է Պոլիսի ամերիկեան Դեսպանատունին պաշտօնաւր։ Երկու մանչեր իր բոռներն են, Հէնրի Մ. եւ Մօրքիմըր ձ. Ֆօքս։ Երկու աղջիկները՝ զուակներն են Թիւրքիայի Շուէտական դեսպանին՝ Ե'Անգերսդէրի : Տկն. Ե'Անգերսդէրս Ամերիկուհի մըն է :

Եւ Յոյները, այն նահանգները՝ որոնք հիմա այդ ցեղերէն գրաւուած են, տակաւին պիտի մնային Սուլթանին երկիրին անանջատ մասերը։ Անոնք զգացին որ՝ սխալը սոսկալի եղած էր, բայց դեռ չարիքէն քան մը կրնար փրկուիլ։ Անոնք պիտի բնաջնջէին Յոյները, Սուրիացիները, Հայերը եւ ուրիշ Քրիստոնեաները։ Անոնց տուններուն եւ ագարակներուն մէջ պիտի փոխադրէին իսլամ ընտանիքներ եւ այդպէսով պիտի ապահովէին այդ հողամասերուն միւսներուն նման Թիւրքիայէն չխլուիլը։

Այս մեծ բարեկարգութիւնը կատարելու համար, անհրաժեշտ չպիտի ըլլար սպաննել իւրաքանչիւր ապրող Քրիստոնեայ։ Ամէնէն գեղեցիկ եւ առողջակազմ հայ աղջիկները կրնային յափշտակուիլ, բռնի իսլամացուիլ եւ դառնալ կիները կամ հոմանուհիները Մար-

գարէին ջերմեւանդ հետեւորդներուն: Անոնց տղաքը ինքնաշար-
ժօրէն իսլամ պիտի ըլլային եւ պիտի գորացնէին Կայսրութիւնը,
ինչպէս Ենիքըիները ըրած էին անցած շրջաններուն մէջ*:

Այս հայ տղիկները կնոջական բարձր տիպար մը կը ներ-
կայացնեն, եւ Ժէօն Թիւրքերը, իրենց նախնական, յայտնատե-
սական խելքովը՝ բմբռնեցին թէ՛ անոնց արիւնին թիւրք ժողո-
վուրդին խառնուելը՝ ամբողջին վրայ eugenic ազդեցութիւն
մը պիտի գործէր: Պատիկ տարիքով հայ տղաքներ կրնային առ-
նուիլ թիւրք բնութանը մէջ եւ մեծցուիլ՝ իբր թէ պարզ
խլամներ ըլլային: Ճշմարտութեան անգէտ պահելով զանոնք:
Ասոնք զրեթէ միակ տարրերն էին, որոնք կրնային արժէքաւոր
նպաստ մը բերել ձեւակերպուող նոր Թիւրքիային: Որովհետեւ
պէտք էին բոլոր նախագոյն թիւնները ձեռք առնուիլ Հայերու
նոր սերունդի մը ծաղկումին դէմ, հետեւաբար անհրաժեշտ պիտի
ըլլար մէկ անգամնել սպաննել ծաղիկ հասակի մէջ զտնուող եւ
որով անիծուած սերունդը ծաւալելու կարող բոլոր այրերը: Մեր
այրերը եւ կիները մեծ վտանգ մը չէին կազմեր ապագայ Թիւր-
քիայի, որովհետեւ անոնք արդէն լրացուցած էին սերնդագործա-
կան իրենց բնական պաշտօնը. թէեւ անոնք ալ փորձանք էին եւ
հետեւաբար պէտք էին մէջտեղէն վերցուիլ:

Հակադարձօրէն Ապտիւլ-Համիտի, Ժէօն Թիւրքիքը ինքզինք-
նին կը զգային այն տեսակ դիրքի մը մէջ՝ ուր կրնային այս
սուրբ ձեռնարկը գլուխ հանել: Մեծ Բրիտանիա, Ֆրանսա եւ
Ռուսիա իրենց նախահայրերուն համբան խափանած էին: Բայց

* Երբ թիւրք մը փողոցին մէջ Քրիստոնեայէ մը պահանջէր
իր կօշիկները մարբել, այս վերջինը պէտք էր հնազանդի, թէ ոչ
մահուան պատիժ կար:

Սիսո տւշագրաւ պաշտօնական վաւերագիր մը՝ որ երբեք
ճրագրուած ըլլայ, այն թաղումի արտօնագիրն է՝ զոր օսմանեան
Կառավարութիւնը մինչեւ հարիւր տարի առաջ սովոր էր հանել՝
իր քրիստոնեայ հպատակներուն թաղումին համար: Անոր տա-
ռացի թարգմանութիւնն է հետեւեալը. — «Ո՛վ դուն անկրօն
քահանայ, որ արտաքուստ ես Աստուծոյ ներկայութենէն, դուն
որ սատանային թագը եւ սեւ զգեստներ կը կրես, պիղծ անհա-
ւատներու հօտէդ այսինչը մեռած ըլլալով — թէեւ իր սրբապիղծ
մարմինը հողէն ընդունելի չէ, բայց քանի որ իր սոսկալի գարշա-
հոտութիւնը հանրութեան վնասակար պիտի ըլլայ, տա՛ր պիղծ
դիակը, փոս մը փորէ, նետէ զայն անոր մէջ, ոտքերովդ կոխկռտէ
անոր վրայ, եւ ետ դարձիր, անհաւատ խոզ»:

հիմա այդ խորհրդոտները վերցած էին: Ժէօն Թիւրքերը, ինչպէս
ըսած եմ, հաւատքը ունէին թէ՛ իրենք յաղթած էին այդ ազգե-
րուն եւ հետեւաբար, անոնք ալ չէին կրնար իրենց ներքին գոր-
ծերուն միջամուխ ըլլալ: Միայն մէկ տէրութիւն մը կրնար ազ-
դուապէս ընդդիմութիւններ յարուցանել, եւ ադ՝ Գերմանիան էր:
1898ին, երբ Եւրոպայի ամբողջ մնացած մասը կլէտսթընի ամ-
բաստանութիւններուն հետ ծայն կը բարձրացնէր եւ միջամտու-
թիւն կը պահանջէր, Քայզեր Վիլհելմ Բ. Պոլիս կ'երթար, այցե-
լութիւն կու տար Ապտիւլ-Համիտի, իր ամէնէն բարձր պատուա-
նշանները կը կախէր արիւնարբու բռնակալին կուրծքը եւ անոր
երկու այտերը կը համբուրէր: Այն Քայզերը, որ 1898ին այս բանը
ըրած էր, տակաւին գահին վրայ էր 1915ին. եւ հիմա Թիւրքիայի
ըրած էր, տակաւին գահին վրայ էր 1915ին. եւ հիմա Թիւրքիայի
զինակիցն էր: Երկու դարերու ընթացքին առաջին անգամը ըլլա-
լով, 1915ին, Թիւրքերը կատարելապէս ձեռք առած էին իրենց
քրիստոնեայ ազգաբնակչութիւններուն ճակատագիրը: Եկած էր
ժամանակը՝ Թիւրքիան այլամերժօրէն Թիւրքերուն հայրենիքը
դարձնելու:



Թ Ա Լ Է Ա Դ Փ Ա Շ Ա
ՆԱՆԿԻՆ ԵՊԱՐԻՈՍ ԹԻՒՐԿԻԱՅԻ
(Կենսագրական Նօթերը Տեսնել էջ 109)

ԻԳ. ԳԼՈՒԽ

«ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ» ՎԱՆԻ ՄԷՋ

Վանի թրքական նահանգը՝ կը գտնուի Փոքր Ասիայի հիւսիս-արեւելեան հեռաւոր ծայրը: Արեւելքէն կը կցուի Պարսկաստանի սահմանագլուխին, եւ իր հիւսիսային սահմանագլուխը ուղղուած է դէպի Կովկաս: Անիկա թրքական Կայսրութեան ամէնէն գեղեցիկ եւ ամէնէն բերրի մասերէն մէկն է. նաեւ պատմական յիշատակարաններով հարուստը: Վան քաղաքը, որ նահանգին գլխաւոր քաղաքն է, համանուն լիճին արեւելեան ափունքին վրայ կը գտնուի. Փոքր Ասիայի այն մեծագոյն քաղաքն է, ուր հայ ազգաբնակչութիւնը իսլամներէն մեծաթիւ է: 1914ի վերջերը, իր շուրջ 30,000 բնակչութիւնը կը ներկայացնէր թրքական Կայսրութեան ժողովուրդներու ամէնէն խաղաղ, երջանիկ եւ բարգաւաճ մէկ համայնքը: Թէեւ Վան, նման ուրիշ ամէն հողամասի՝ ուր Հայեր կը բնակին, ունեցած է իր կեղեքումի եւ ջարդի շրջանները, բայց իսլամ լուծը համեմատաբար աւելի թեթեւ կերպով ծանրացած է ժողովուրդին վրայ: Իր թիւրք կառավարիչը՝ Թահսին փաշա, թիւրք պաշտօնատարներու ամէնէն լուսաւորուած ղեմքերէն մէկն էր: Քաղաքին լաւագոյն մասին մէջ բնակող Հայերուն եւ իսլամ թաղերու տղամուտ հիւղակներուն մէջ բնակող Թիւրքերուն եւ Քիւրտերուն միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնները տանելի կերպով զոհացուցիչ եղած են բազմաթիւ տարիներու ընթացքին:

Սակայն, այս նահանգին դիրքը զայն անխուսափելիորէն թատրը դարձուցած է զինուորական գործողութիւններու եւ հայ ժողովուրդին գործունէութիւնը մշտական կասկածի նիւթ եղած է: Եթէ Խուսիա արշաւանք մը փորձէր դէպի Թիւրքիա, ամէնէն դիւրանցանելի ճամբաներէն մէկը այս նահանգին մէջէն պիտի ըլլար: Տակաւին պատերազմը շատ առաջացած չէր՝ երբ զրգուութեան պատճառներ բարձրացան: Բանակին պարէնաւորումին համար կատարուած գրաւումները Վանի մէջ, աւելի ծանրապէս Քրիստոնեաներու ուսին վրայ ինկան, քան Մահմետական տարրերու, ճիշդ ինչպէս որ եղան Թիւրքիայի ուրիշ ամէն մասերուն մէջ: Հայերը պարտաւորուեցան լուռ ականատեսներ ըլլալ որ՝ թիւրք սպանները զրաւեն իրենց բոլոր արջառները, իրենց ամբողջ ցորենը, իրենց ամէն տեսակ ինչքերը, փոխարէն իրենց տալով

միայն անարժէք թուղթի կտորներ: Տեղի ունեցող ընդհանուր զինահաւաքութեան փորձն ալ, արթնցոց իրենց վախը, որ սաստկացաւ այն բիրտ վարմունքին պատճառով՝ որուն կ'ենթարկուէին հայ զինուորները Կովկասի մէջ: Միւս կողմէ, Թիւրքերը կարգ մը ամբաստանութիւններ կ'ընէին քրիստոնեայ բնակչութեան դէմ, եւ, իրապէս, թրքական բանակներուն Կովկասի մէջ ենթարկուած ծախողութիւններուն պատասխանատուութեան մեծագոյն բաժինը Քրիստոնեաներուն կը վերագրէին: Այն իրողութիւնը որ՝ ռուսական ուժերուն կարեւոր մէկ մասը կազմուած էր Հայերէ, Թիւրքերուն անզուսպ զայրոյթ կը պատճառէր: Քանի որ աշխարհի Հայերուն մօտաւորապէս կէսը կը բնակին Կովկասի ռուսական նահանգներուն մէջ եւ բոլոր Ռուսերուն նման ենթակայ են զինուորական ծառայութեան, անկասկած տրտունջի օրինաւոր պատճառ չէր մնար, որչափ ատեն որ այս հայ զինուորագիրները Զարին հաւատարիմ (bona fide) հպատակներն էին: Բայց Թիւրքերը կը հաւատէին թէ՛ Վանի եւ ուրիշ հայկական նահանգներու հայ զինուորներէն շատեր դասալիք եղած էին, անցած էին սահմանագլուխը, միացած էին ռուսական բանակին, ուր ճամբաներու եւ երկիրին իրենց ծանօթութիւնը կարեւոր ազդակ մը եղած էր ռուսական յաղթանակներուն մէջ: Թէեւ տակաւին ճիշդ իրողութիւնները ստուգուած չեն, բայց անհաւանական չթուիր որ՝ այդ տեսակ դասալքութիւններ, թերեւս քանի մը հարիւր, տեղի ունեցած ըլլան: Պատերազմին սկիզբը, «Միութիւն եւ Առաջդիմութիւն»ի գործիչներ երեւան ելան Կարինի եւ Վանի մէջ, եւ կոչ ըրին հայ պետերու՝ ռուսական Հայաստան երթալ եւ հոն ռուսական կառավարութեան դէմ յեղափոխութիւն յարուցանելու փորձ կատարել. եւ որովհետեւ օսմանցի Հայերը մերժեցին՝ ատիկա ալ աւելի սաստկացուց տիրող զրգուութիւնը: Թիւրք Կառավարութիւնը չափազանցեց Վանի Հայերուն «դաւաճանական» ընթացքը եւ մինչեւ իսկ զայն իբր չքմեղանք ծառայեցուց ամբողջ ցեղին հանդէպ իր վարմունքին: Թիւրքերու վարքը՝ անգամ մըն ալ կը պատկերացնէ թիւրք միտքին չարանենգութիւնը: Երեսուն տարիներու ընթացքին, հարիւր հազարաւոր Հայեր ջարդելէ, անոնց կիները եւ աղջիկները չարչարելէ, երեւակայելի ամէն ձեւով զանոնք կեղեքելէ եւ խոշտանգելէ ետքը, Թիւրքերը տակաւին կ'երեւայ թէ իրաւունք ունենալ կը կարծէին՝ Հայերէն ամենաեռանդուն «ուղղամտութիւնը» ակնկալելու: Բովանդակ Թիւրքիայի մէջ, Հայերուն՝ Համաձայնութեան հանդէպ համակիր ըլլալը գաղտնիք մը չէր: «Եթէ կ'ուզէք զիտնալ թէ ինչ է պատերազմին ընթացքը, կը

գրէր թիւրք Էրզրոմական թերթ մը , միայն Հայու մը երեսը նայեցէք : Ե՞րբ ան կը ժպտի , կը նշանակէ որ՝ Դաշնակիցները կը յաղթեն : Եթէ երեսը ծուռ է , կը նշանակէ որ՝ Գերմանները կը յաջողին : Եթէ սամանցի հայ զինուոր մը դասալիք ըլլար եւ միանար Ռուսերուն , առիկա անվիճելիօրէն պատերազմագիտական սօժիւր մը կը կազմէր պետութեան հանդէպ , եւ կը պատժուէր , առանց բոլոր քաղաքակիրթ երկիրներու կանոնները խաթարելու : Սակայն , միայն թիւրք միտքը -- եւ թերեւս Junkerը -- կրնար առիկա չբնեղանքի պատճառ նկատել այն զարհուրելի բարբարոսութիւններուն՝ որոնք գործուեցան :

1914-15ի աշունին եւ ձմեռուան բովանդակ ընթացքին , թէեւ մթնայրօրաց յեցուած էր խռովութիւններու կանխանշաններով , բայց Հայերը ինքնազստութեան հիանալի ընթացքով շարժեցան . Տարիներէ ի վեր թիւրք քաղաքականութիւնը եղած էր քրիստոնէաց ժողովուրդը զրգոել՝ վրան-բաց արարքներ գործելու . անկէ՛ ետքը , այդ տեսակ յոռի ընթացք մը պատրուակ կը բռնուէր՝ ջարդելու : Հայ կղերք եւ քաղաքական պետերը շատ մը ապացոյցներ նշմարեցին թէ՛ թիւրքերը հետամուտ էին իրենց հին ռազմավարութեան [tactics], հետեւաբար ժողովուրդին մէջ մտան , նախազգուշացնելով հանդարտութիւն պահել , համբերատարօրէն հանդուրժել ամէն անարգանքի եւ նոյն իսկ ծայրայեղութիւններու . ստով չտալու համար թիւրքերուն այն առիթը՝ զոր կը փնտռէին : «Եթէ նոյն իսկ անոնք մեր մէկ բանի զիւղերը կրակի տան , կ'ըսէին այդ պետերը , փոխվրէժի մի՛ դիմէք , որովհետեւ աւելի լաւ է որ՝ մէկ բանի զիւղեր ոչնչանան . բան ամբողջ ազգը կտորուի» :

Երբ պատերազմը սկսաւ , կեդրոնի Կառավարութիւնը ետ կանչեց Քահսին փաշան , Վանի հաշտասէր կուսակալը , եւ անոր տեղ զրկեց ձէվտէթ պէյը , որ Էնվէր փաշայի բեռայրն էր : Այս կարգադրութիւնը ինքնին շատ վրդովիչ էր : Թիւրք պաշտօնէութեան մէջ միշտ գտնուած է փոքրամասնութիւն մը մարդոց , որոնք հաւատացած չեն թէ՛ ջարդը պետական քաղաքականութիւն մըն է . եւ որոնց կարելի չէ փտահիլ որ ճշդապահօրէն կը կատարեն կեդրոնի Կառավարութեան ամէնէն արիւնուռւտ հրահանգները : Հետեւաբար , ամէն անգամ որ ջարդեր ծրագրուած են , սովորութիւն եղած է նախ տեղափոխել այդ կարգի «անվստահելի» պաշտօնեանները եւ անոնց տեղը դնել աւելի վստահելի նկատուած անձեր : Քահսինի յաջորդին նկարագիրը՝ իր պաշտօնառութիւնը ա՛յլ աւելի վրդովեցուցիչ կը դարձնէր : ձէվտէթ իր կեանքին մեծ մասը Վանի մէջ անցուցած էր . յարափոփոխ նկա-

րագրի տէր մարդ մըն էր ան , պահ մը բարեացակամ ոչ-Իսլամներուն հանդէպ . յաջորդ պահուն թշնամական , կեղծաւոր դաւող եւ վայրագ , համաձայն իր ցեղին յուսեղոյն սուսնդութիւններուն : Ան կ'ատէր Հայերը , եւ սրտովին համակիր էր հայկական խնդիրը լուծելու համար կազմակերպուած վաղեմի թրքական ծրագիրին : Կասկած չի կայ թէ՛ ան Վան եկաւ , այդ նահանգին Հայերը բնաջնջելու որոշ հրահանգներով բայց , առաջին քանի մը ամիսներուն մէջ , պայմանները չլիւրացուցին այդ տեսակ գործողութիւն մը : ձէվտէթ անձնապէս բացակայ էր , որովհետեւ Կովկասի մէջ Ռուսերուն դէմ կը կռուէր . թշնամիին շուտով մօտենալուն պատճառով , Թիւրքերուն համար իմաստուն քաղաքականութիւն մը նկատեց Վանի Հայերուն հետ գէշ վարուելէ զգուշանալ : Բայց զարունի սկիզբը , Ռուսերը ժամանակաւոր կերպով նահանջեցին : Ընդհանրապէս , զինուորական լաւ ռազմագիտութիւն մը նկատուած է յաղթական բանակին համար՝ հետապնդել նահանջող թշնամին : Սակայն , թիւրք զօրավարներու աչքին՝ Ռուսերուն հո քաշուիլը պատերազմին մէկ բարեբաղդ դարձուածքն էր , գլխաւորաբար անոր համար որ՝ Հայերը կը զրկէր իրենց պաշտպաններէն եւ անոնց բաղդը կը յանձնէր թիւրք բանակին : Հետեւաբար , փոխանակ նահանջող թշնամիին հետեւելու . թիւրք բանակը ետ դարձաւ եւ Վանի հողամասը արշաւեց : Փոխանակ ռուսական մարդուած զինուորներով բանակին դէմ կռուելու . Թիւրքերը իրենց իրացանները , գնդացիները եւ ուրիշ գէնքերը դարձուցին Վանի զիւղերը բնակող կիներուն , տղոց եւ ծերերուն դէմ : Իրենց յախտեանական սովորութեան համաձայն , Իսլամներու միջեւ բաժնեցին հայ ամէնէն գեղեցիկ կիները , թալլեցին եւ այրեցին հայ զիւղերը եւ չորս օր անընդհատ ջարդ կատարեցին : Ապրիլ 15ին , 500ի չափ երիտասարդ Հայեր կանչուեցան Ականցէն , լսելու համար Սուլթանին մէկ հրամանը . արեւմուտին , անոնք բաղաբէն դուրս դնուեցան եւ անգթօրէն հրացանագարկ սպաննուեցան : Վանի լիճին հիւսիսը գտնուող թեմին ութսունի չափ հայ զիւղերուն մէջ , այս ընթացքը կրկնուեցաւ եւ այս վայրագ ձեւով երեք օրուան մէջ 24,000 Հայեր սպաննուեցան : Միակ դրուագ մը կը պատկերացնէ թրքական մէթոտներուն անբացասելի գարշելիութիւնը : Շատախի մէջ վէճ մը ծագած ըլլալով , ձէվտէթ պէյ , որ այդ միջոցին Վան վերադարձած էր , առաջարկեց չորս քաղաքացի հայ երեւելիներու , որ այդ քաղաքը երթան եւ ջանան ժողովուրդը հանդարտեցնել : Այդ անձերը շրջանի ելան , իրենց նամբուն վրայ կանգ առնելով ամէն հայ զիւղի մէջ եւ յորդորելով ամէնքը որ՝ հան-

րային կարգը պահեն : Իրենց գործը աւարտելէ ետքը , այդ յորս Հայերը սպաննուեցան քրդական գիւղի մը մէջ : Այս պատճառով, երբ ձէվտէթ իր պաշտօնատեղին դառնալուն , պահանջեց որ Վանը անմիջապէս 4,000 զինուոր հանէ , բնականաբար ժողովուրդը որ եւ է կերպով չի հաւանեցաւ իր առաջարկին : Երբ նկատի առնենք թէ՛ ի՞նչ պատահած էր նախապէս եւ ի՞նչ պատահեցաւ ետքէն , կասկած չի մնար այն նպատակին մասին՝ որ կը ծածկուէր այդ պահանջումին տակ : Ընդհանրապէս , հլու հպատակ կերպով գործելով Պոլիսի հրամաններուն համաձայն , կը պատրաստուէր բնաջնջել բովանդակ ժողովուրդը եւ 4,000 քաջակամ մարդիկ ուզելու նպատակը ուրիշ բան չէր , բայց եթէ զանոնք կոտորել , որպէսզի մնացած Հայերը ա՛լ պաշտպան չունենան : Հայերը , ժամանակ շահելու համար բանակցելով , առաջարկեցին 500 զինուոր տալ եւ մնացածներուն համար փրկագին վճարել : Ատոր վրայ ձէվտէթ սկսաւ «ըմբոստութեան» խօսք ընել եւ յայտնել իր որոշումը՝ զայն ամէ՛ն գինով «ճգմելու» : «Եթէ ապատամբները միակ զնդակ մը արծակեն , յայտարարեց , պիտի սպաննեմ բոլոր Քրիստոնեաները , այր , կին եւ մինչեւ հոս (ծունկը ցուցնելով) ամէն տղայ» :

Ատենէ մը իվեր Թիւրքերը հայ թաղերուն շուրջը խրամներ կը շինէին եւ հոն զինուոր կը լեցնէին . այդ գրգռակոչին [provocation] փոխարէն , Հայերն ալ սկսան պաշտպանողական պատրաստութիւններ կատարել : Ապրիլ 20ին , թիւրք զինուորներու ջոկատ մը գերեզմանաց քաղաք մտնող խումբ մը հայ կիներ . երկու Հայեր անոնց օգնութեան փութացին եւ հրացանազարկ սպաննուեցան : Թիւրքերը հրացանով եւ հրետանիով կրակ բային հայ թաղերու վրայ . քաղաքին մէկ մեծ մասը անմիջապէս բոցերու մատնուեցաւ եւ կանոնաւոր պաշարում մը սկսաւ : Հայերու ամբողջ կռուող ուժը կը բաղկանար միայն 1,500 հոգիէ . միայն 300 հրացան ունէին անոնք եւ ռազմանիւթի շատ անբաւական պաշար մը , մինչդեռ ձէվտէթ ունէր՝ կատարելապէս սպառագինուած եւ պարէնաւորուած 5,000 հոգինոց բանակ մը : Սակայն Հայերը ծայրայեղ դիւցազնութիւնով եւ հնարագիտութիւնով կռուեցան . մինչեւ ետքը թշնամիին դիմադրելու քիչ առիթ ունէին անոնք , բայց գիտէին թէ ռուսական բանակ մը կը կռուէր դէպի Վան իջնելու , եւ Հայերու մեծագոյն յոյսը ան էր որ՝ իրենք կարող պիտի ըլլային դիմադրել պաշարողներուն՝ մինչեւ որ Ռուսերը հասնէին : Որովհետեւ ես պաշարումներու եւ կռիւներու պատմութիւնը չեմ գրեր , հետեւաբար չեմ կրնար մանրամասնօրէն նկարագրել անհատական դիւցազնութեան բազմաթիւ դէպքերը ,

հայ կիներու համագործակցութիւնը , հայ պատանիներու եռանդը եւ կորովը , ամերիկացի միսիօնարներու անձնագործ խանդը , մասնաւորաբար Տքթ . Բըրրը եւ իր կիներ եւ Օր . Կրէյս Է . Նէվը . եւ հազարաւոր ուրիշ պարագաներ , որոնք այս զարհուրելի ամիսը դարձուցին ժամանակակից հայկական պատմութեան ամէնէն փառաւոր էջերէն մէկը : Գործին հիանալի կողմը ան է որ՝ Հայերը յաղթանակեցին : Մօտաւորապէս հինգ շաբաթներու զիշեր-ցորեկ պայքարէ ետքը , Ռուսերը յանկարծ երեւցան եւ Թիւրքերը փախուտ տունին շրջակայ վայրերը , ուր իրենց զայրոյթը յագեցուցին , անպաշտպան հայ գիւղերն ալ ջարդելով : Տքթ . Բըրր , ամերիկեան միսիօնար , որուն Վանի մէջ գտնուող Հիւանդանոցը քանդուեցաւ ռմբակոծութենէ , հաւաստի կերպով կը յայտարարէ թէ՛ Թիւրքերուն բաշուելէն ետքը , Ռուսերը սկսան նահանգին մէջ սպաննուած Հայերուն մարմինները հաւաքել եւ դիակիզել . հրկիզուած դիակներուն թիւը հասած է 55,000ի :

Ես Վանի «յեղափոխութեան» այս պատմութիւնը ըրի , ո՛չ միայն անոր համար որ՝ ամբողջ ազգ մը բնաջնջելու կազմակերպուած փորձի մը առաջին քայլը կը կազմէ ան , այլ նաեւ անոր համար որ՝ Թիւրքերուն կողմէ այդ դէպքերը միշտ առաջ կը բշուին՝ իբր արդարացում իրենց յաջորդ ոճիրներուն : Ինչպէս որ պիտի պատմեմ , ամէն անգամ որ Հայերու նպաստին կը դիմէի էնվէրի , Թալէադի եւ նմաններուն , անոնք անփոփոխելիօրէն կը յիշէին Վանի «յեղափոխականները» , իբր օրինակ «դաւադրութեան» : Ինչպէս որ այս պատմութիւնը ցոյց կու տայ , այդ համբաւաւոր «յեղափոխութիւնը» ուրիշ բան չէր , բայց եթէ Հայերու դիմադրութիւնը՝ միտքերնին դրած ըլլալով պաշտպանել իրենց կիներուն պատիւը եւ իրենց կեանքը , երբ Թիւրքերը՝ իրենց դրացիներէն հազարաւորներ ջարդելով՝ ցուցուցած էին թէ՛ ի՞նչ ճակատագիր կը սպասէր իրենց :



ԻՂ. ԳԼՈՒԽ

ԱԶԳԻ Մ Ը ՍՊԱՆՈՒՄ Ը

1915ին, հայ ցեղին բնաջնջումը կընդգրկէր կարգ մը դժուարութիւններ. որոնք արգիլած էին Թիւրքերու գործողութիւնները, 1895ի եւ ուրիշ տարիներու ջարդերուն մէջ: Այդ նախկին շրջաններուն, Հայերը դիմադրութեան օկար ուժի կամ միջոցներու տէր էին: Այդ առնձն՝ Հայերը արտօնուած էին զինուորական մարզանք տեսնելու, թրքական բանակին մէջ ծառայելու, կամ գէնք կրելու: Ինչպէս արդէն ըսի, այդ խտրականութիւնները վերցուած էին, երբ յեղափոխականները գերագոյն իշխանութեան տիրացած էին 1908ին: Այ միայն Քոնստանտնուպոլսէն արտօնուած էին գէնք կրելու, այլ կառավարական իշխանութիւնները, ազատութեան եւ հաւասարութեան խանդի իրենց կատարեալ ընկճումին մէջ, կը քաջալերէին զանոնք գէնք առնելու: Հետեւաբար, 1915ի սկիզբը, թրքական իւրաքանչիւր քաղաքի մէջ կային նազարաւոր Հայեր, որոնք իբր զինուոր մարզուած էին եւ որոնք զինուած էին հրացաններով. ատրճանակներով եւ ուրիշ մարտական գէնքերով: Անի գործողութիւնները անգամ մըն ալ երեւան բերին որ՝ այդ մարդիկը կրնային իրենց գէնքերը սորդիւնաւորապէս գործածել: Ակներեւ էր որ՝ այս անգամ հայկական ջարդ մը ընդհանուր կերպով սուլի պատերազմի մը ընդթը պիտի առնէր, բան հանգամանքը անպաշտպան այրերու եւ կիներու այն միահաղոյն սպանդագործութիւններուն, զորս Թիւրքերը միշտ իրենց հոգիին հաճոյ գտած էին: Յեղ մը բնաջնջելու այս ծրագիրը յաջողցնելու համար, երկու նախաքայլեր պէտք էին առնուիլ. անհրաժեշտ էր բոլոր հայ զինուորները անգոր դարձնել՝ ու ամէն քաղաքներու Հայերուն ձեռքէն գէնքերը առնել: Հայաստանը խեղդամահ ընելէ առաջ, Հայաստանը պէտք էր անպաշտպան դարձնել:

1915ի սկիզբը, հայ զինուորները Թիւրք բանակին մէջ ենթարկուեցան նոր օրէնքի մը: Մինչեւ այդ առնձն, անոնցմէ շատերը պատերազմիկ եղած էին, բայց հիմա անոնց բոլորին ալ գէնքերը առնուեցան եւ գործաւոր եղան անոնք: Փոխանակ իրենց երկիրին իբր հրետանիք եւ հետեւազօրք ծառայելու, տեսան որ համբայ շինող գործաւոր եւ բուռի կենդանիներ եղած էին: Իրենց կռնակը կը բեռցուէին ամէն կարգի պաշարներ, եւ կըսնով բեռին

տակ ու բշտելով Թիւրքերու խարազաններէն եւ սորիններէն, կը բռնադատուէին իրենց յոգնած մարմինները քաշկոտել կռակասի լեռներուն մէջ՝ Երրեմու, այդ կերպով ընտնադուած, կը պարտաւորուէին իրենց ճամբան բանալ, գրեթէ միշտ կէս մէջերինին ձիւնին մէջ մարմուած: Գրեթէ իրենց ամբողջ ժամանակը բաց օդին մէջ կ'անցընէին, քնանալով չոր գետինին վրայ. կը սակայն իրենց գործապետներուն անդու խթանումը դիպուածուկան առիթ մը ընծայէր բնամայու: Մնուել ըլլալով անոնց չնչին բան մը միայն կը տրուէր, կիթէ ճիւղակաւային, կը թողուէին հոն՝ ուր ինկած էին եւ իրենց Թիւրք հարստահարիչները բաւական առնն բոլորին կը մնային. կողոպտելու համար անոնց բոլոր ունեցածը -- նոյն իսկ անոնց զգեստները: Եթէ կեանքի համար ոգորողներ յաջողին սահմանուած տեղը հասնիլ, անոնք շատ յանախ կը ջարդուէին: Կարգ մը պարագաներու մէջ, հազիւաւորները յաճախ կը մնացուէին աւելի կարուկ կերպով մը՝ որովհետեւ գրեթէ բնդհանուր սովորութիւն մը դարձած էր զանոնք պաղարիւնով սպաննելը: Գրեթէ ամէն պարագաներու մէջ, մէքոսը նոյնն էր: Ասկէ անկէ 50 կամ 100 հոգիւնց խուճեր կը ժողովուէին, չորսական դասակներով հրարու կը կապուէին. կը տարուէին գիւղէն քիչ հեռու անայի տեղ մը: Յանկարծ հրացաններու պայթիւններու ձայնը կը լիցնէր օդը, եւ Թիւրք զինուորները՝ որոնք իբր հետեւորդ ծառայած էին, տխրադէմ իրենց կայքը կը դառնային: Անոնք որ շիակները թաղելու կը զրկուէին զանոնք գրեթէ միշտ բայորովին մերկ կը գտնէին, որովհետեւ սովորութեան համաձայն Թիւրքերը գողցած կ'ըլլային անոնց բոլոր զգեստները: Այն դէպքերուն մէջ, որոնց ծանօթացայ, սպաննիչներ իրենց գոհերուն տատապանքին վրայ նըբարուեաւ մը աւելցուցած էին, բռնադատելով զանոնք գնդակահար ըլլալէ առաջ իրենց գերեզմանները փորելու:

Պատմեմ միակ դրուագ մը. որ կը գոնուի մեր հիւպատոսներուն տեղեկագիրներէն մէկուն մէջ եւ որ հիմու մաս կը կազմէ ամերիկեան արտաքին գործերու նախարարութեան դիւանագրութիւններուն: Ռուիսի սկիզբը, 2,000 հայ «ամէլէ»ներ -- մ'ու է Թիւրքերէն անունը այն զինուորներուն՝ որոնք գործաւորի փոխակիրպուած են -- նարբերդէն հանուած էին Եւրոպայ շինելու համար: Այդ քաղաքին Հայերը հասկցան թէ՛ ինչ կը նշանակէր ատ, եւ կուտակային դիմացին որ խնայէ անոնց: Բայց սող պարտօնատարը հաւաստիացուց թէ՛ այդ մարդոց վրաս չպիտի հասցուէր եւ նոյն իսկ խնդրեց գերման միսիօնար էմմանէն, որ խուճապը հանդարտեցնէ, այդ պարսնին պատիւի խօսք տալով թէ՛ նախկին զին-

ուորները պիտի պաշտպանուէին: Մր. Էհման հաւատաց Կուսակալին խօսքին եւ հանդարտեցուց ժողովուրդին ահուղողը: Բայց գործնականին մէջ, այդ 2,000 անձերէն ամէնքն ալ կոտորուեցան, եւ իրենց մարմինները նետուեցան նկուղի մը մէջ: Քանի մը հոգիներ միայն փախան եւ անոնց միջոցով է որ՝ ջարդին լուրը տարածուեցաւ ամէն կողմ: Քանի մը օր ետքը, ուրիշ 2,000 զինուորները դրկուեցան Տիարպէքիւր: Այդ մարդիկը ամայի վայրեր դրկելուն միակ նպատակն էր թողուլ որ անոնք կոտորուէին: Որպէսզի անոնք դիմադրելու կամ փախուստով ազատելու ուժ չունենան, այդ դժբաղդ արարածները կանոնաւոր կերպով անօթի կը պահուէին: Կառավարական գործակալներ, ճամբան անոնցմէ առաջ անցնելով, Քիւրտերուն լուր կու տային որ՝ կարաւանը կը մօտենար եւ կը պատուիրէին անոնց՝ կատարել իրենց սրտահաճոյ պարտականութիւնը: Ո՛չ միայն քիւրտ ցեղի այրերը լեռներէն վար կը խուժէին այս սովալլուկ եւ ուժասպառ խուճքին վրայ, այլ նաեւ քիւրտ կիները կու գային մսագործի դանակներով, որպէսզի Ալլահի աչքին՝ շահին այն արժանիքը՝ որ քրիստոնեայ մը սպաննելէն առաջ կու գայ: Այս ջարդերը մասնակի պատահարներ չէին: Ես կրնայի դեռ յիշել ուրիշ շատ մը դրուագներ, ճիշդ նո՛յնչափ զարհուրելի, որչափ վերեւ յիշուածը: Բովանդակ թիւրք Կայսրութեան մէջ կանոնաւոր ջանք մը գործուեցաւ սպաննելու բոլոր քաջակամ այրերը, ո՛չ միայն մէջտեղէն վերցնելու նպատակով բոլոր արուները՝ որոնք Հայերու նոր սերունդ մը կրնային արգասաւորել, այլ նաեւ ժողովուրդին տկարագոյն դասակարգը դիւրին որս մը դարձնելու նպատակով:

Որչափ ալ ահաւոր ըլլային անգէն զինուորներու այս ջանքերը, անոնք ինքնին գթութիւն եւ արդարութիւն էին, բաղդատուելով այն վարմունքին հետ, որ զէնք պահելու կասկածին ենթարկուած Հայերու գլխուն պայթեցաւ: Բնականաբար Քրիստոնեաները վրդովուեցան, երբ գիւղերու եւ քաղաքներու մէջ ազդեր փակցուեցան, որոնք կը հրամայէին զէնքերը տանիլ զինուորական կայանը: Որովհետեւ այս հրամանը միայն Քրիստոնեաներուն յատուկ էր, հետեւաբար Հայերը լաւ ըմբռնեցին թէ՛ ինչ պիտի ըլլար արդիւնքը, երբ իրենք անգէն մնային, մինչդեռ իրենց իսլամ դրացիները արտօնուած էին պահել իրենց զէնքերը: Սակայն հայածուած ժողովուրդէն շատեր գլխիկոր հնազանդեցան հրամանին. ատոր վրայ, թիւրք պաշտօնատարները գրեթէ ցնձախինդ կերպով գրաւեցին հրացանները՝ իբր նշան թէ «յեղափոխութիւն» մը կը ծրագրուէր եւ իրենց զոհերը դաւադրութեան ամբաստանութիւնով բանտ նետեցին: Հազարաւորներ զէնք չյանձ-

նեցին, պարզապէս անոր համար որ՝ յանձնելիք զէնք չունէին, մինչդեռ բաւական մեծ թիւով անձեր յամառօրէն մերժեցին յանձնել, ո՛չ թէ՛ որովհետեւ ապստամբութիւն մը կը սարքէին, այլ որովհետեւ կ'ուզէին պաշտպանել իրենց կեանքը եւ իրենց կիներուն պատիւը, այն հարստահարութիւններուն դէմ, որոնց կազմակերպուելուն գիտակ էին:

Այն պատիժը՝ որուն ենթարկուեցան այս անասատողները, կը կազմէ ժամանակակից պատմութեան ամէնէն ահաւոր գլուխներէն մէկը: Մեզմէ շատեր կը կարծեն թէ՛ չարչարանքը երկարատենէ իվեր դադրած է վարչական եւ դատական միջոց մը ըլլալէ: Բայց չեմ կարծեր որ՝ ամէնէն խաւար դարերը անգամ ներկայացուցած ըլլան երբեք աւելի զարհուրելի տեսարաններ, քան անոնք՝ որոնք ներկային տեղի ունեցան բովանդակ թիւրքիայի մէջ: Թիւրք ոստիկան-զինուորները ո՛չ մէկ նուիրականութիւն կը ճանչնային: Պահուած զէնքեր փնտուելու պատրուակին տակ՝ անոնք կողոպտեցին եկեղեցիները. ամենածայրայեղ սրբապղծութիւններու ենթարկեցին խորանները եւ նուիրական առարկաները. եւ նոյն իսկ քրիստոնէական խորհուրդներու նմանողութիւնով՝ ծաղրական արարողութիւններ կատարեցին: Քահանաները կը գանակոծէին՝ զգայազուրկ ընելու աստիճան, այն պատրուակով թէ՛ անոնք խուճկութեան օճախն էին: Երբ եկեղեցիներու մէջ զէնք չգտնէին, ատեն-ատեն հրացաններով, ատրճանակներով եւ սուրբ-չգտնէին, ատեն-ատեն հրացանները եւ քահանաները, զանոնք կը քաշէին բով կը զինէին եպիսկոպոսները եւ քահանաները, զանոնք կը քաշէին պատերազմական ատենաներու առջեւ՝ իբր օրէնքի հակառակ զէնք կրողներ, եւ զինուած ձեւով փողոցներուն մէջ կը պտըտցնէին, ամբոխին մոլեռանդ գայրոյթը գրգռելու համար պարզապէս: Ոստիկան-զինուորները կիներու հետ կը վարուէին այն նո՛յն անգթութիւնով եւ անպատշաճութիւնով, որով կը վարուէին անոնց ամուսիններուն հետ: Տեղեկագրուած են դէպքեր, ուր իբր զէնք պահող ամբաստանուած կիներ մերկացուած են եւ գանակոծուած՝ ծառերէն նոր կտրուած հիւղերով. այդ ձեռներուն ենթարկուած են նոյն իսկ յղի կիներ: Զէնքի այդ փնտուտութիւններուն ա՛յնչափ սովորական կերպով կ'ընկերանային բռնաբարութիւնները որ՝ հայ կիները եւ աղջիկները, ոստիկան-զինուորներուն գալը լսելուն, անտառները, բլուրները կամ լեռնային անձաւներու մէջ կը փախչէին:

Իբր նախապատրաստութիւն ամէն կողմ կատարուելիք փնտուտութիւններուն, գիւղերու եւ քաղաքներու մէջ կայտառ մարդիկը ձեռքակալուեցան եւ բանտ նետուեցան: Հոն, անոնց խոշտանգիւնները ամէնէն դիւային հնարամտութիւնը կը գործադրէին՝ ջանալով իրենց զոհներուն ինքնաբերաբար յայտարարել տալ «յեղափոխա-

կան» ըլլալնին, եւ խոստովանցնելու զէնքերուն պահուած տեղը: Սովորական կերպ մըն էր բանտարկեալը պառկեցնել սննեակի մը մէջ, երկուական թիւրք պահակներ կեցնելով զլխուն եւ ոտքերուն կողմերը եւ երկու քովերը: Յետոյ հարցաքննութիւնը կը սկսէր գաւազանահարութիւնով: Ասիկա անսովոր չարչարանք մը չէ Արեւելքի մէջ. անիկա կը կատարուէր ոտքերուն տակը բարակ հպտոտով մը ձեծելով: Նախապէս ցաւը զգալի չլլար. բայց քանի՞ ձեծը կամաց-կամաց ուժ կ'առնէ, ցաւը զարհուրելի տառապանքի մը կը փոխուի. ոտքերը կ'ուռին եւ կը պատուին. եւ յաճախ, այս արարքին ենթարկուելէ ետքը, պէտք կ'ըլլայ որ ոտքերը կտրուին: Ոստիկան-զինուորները իրենց հայ զոհը կը գաւազանահարէին մինչեւ անոր մարիլը. այն ատեն, զայն կ'արթնցնէին երեսին ջուր սրսկելով եւ նորէն կը սկսէին: Եթէ աս չի յաջողէր զոհը խօսեցնելու, խոստովանցնելու ուրիշ բազմաթիւ մէթոտներ ունէին անոնք: Կը քաշէին կը փրցնէին անոր յօնքերը եւ մօրուքը, գրեթէ իւրաքանչիւր թել գատ-գատ. կը քաշէին անոր մատներուն եւ ոտքերուն եղունգները. հրաշէկ երկաթներ կը դնէին անոր կուրծքին վրայ. հրաշէկ աքծաններով անոր միտը կը փրցնէին եւ վէրքերուն մէջ եռացած իւղ կը թափէին: Երբեմն, ոստիկան-զինուորները զոհին ձեռքերը եւ ոտքերը փայտի կտորներու կը գամէին, — բացայայտօրէն նմանողաբար նաչելութեան, — եւ երբ չարչարուողը կը գալարուէր իր տազնապին մէջ, անոնք կը գոչէին. — «Թող հիմա Քրիստոսդ գայ եւ քեզի օգնէ»:

Այս վայրագութիւնները — եւ բազմաթիւ ուրիշներ՝ զորս կը հրաժարիմ նկարագրելէ — սովորաբար կը գործադրուէին գիշեր ատեն: Թիւրքերը բանտին շուրջը կը կենային, թմբուկ զարնելով եւ սուլիւններ հնչեցնելով, որպէսզի չարչարուողին սրտակեղծ կանչերը չհասնին զիւղացիներուն:

Հազարաւոր առիթներով՝ այդ տառապանքներուն տոկացած են Հայերը եւ մերժած յանձնել իրենց զէնքերը, պարզապէս անոր համար որ՝ յանձնելիք բան չեն ունեցած: Սակայն, անոնք չէին կրնար համոզել իրենց խոշտանգիչները թէ՛ իրողութիւնը աղ էր: Հետեւաբար սովորական դարձաւ որ՝ երբ լուր կը ստացուէր թէ՛ խուզարկուները կը մօտենային, Հայերը իրենց թիւրք դրացիներէն զէնքեր կը գնէին, որպէսզի կարող ըլլան զանոնք յանձնել եւ խուսափիլ այդ սոսկալի պատիժներէն:

Օր մը, այս վարմունքներուն մասին կը խօսէի Պոլիսի ոստիկանապետ Պէտրի պէյի հետ: Պէտրի զգուելի ախորժակով մը կը նկարագրէր գործադրուած չարչարանքները: Չէր ծածկեր այն

իրողութիւնը թէ՛ Կառավարութիւնը սարքած էր զանոնք, եւ պաշտօնական դասակարգի բոլոր թիւրքերուն պէս, խանդավառօրէն կը գնահատէր ատելի ցեղին հանդէպ ցուցուած այդ ընթացքը: Պէտրի յայտնեց ինծի թէ՛ այդ բոլոր մանրամասնութիւնները Միութիւն եւ Առաջդիմութիւն Քօմիթէի գիշերային նիստերուն մէջ խորհրդակցութեան նիւթեր եղած էին: Չարչարանք տալու իւրաքանչիւր նոր մէթոտ՝ ողորունուած էր իբր սքանչելի զիւտ մը, եւ նիստերուն կանոնաւորաբար ներկայ եղողները շարունակ իրենց միտքը կը տանջէին, որեւէ նոր չարչարանք մը հնարելու ճիգով: Պէտրի ինծի յայտնեց նաեւ թէ՛ նոյն իսկ սպանիական Հաւատաքննութեան արձանագրութիւնները եւ չարչարանքի ուրիշ պատմական յիշատակարաններ հետազօտած էին եւ որդեգրած անոնց մէջ գտնուող բոլոր նիւթերը: Պէտրի չքսաւ ինծի թէ՛ նողկալի մրցումին մէջ ո՛վ շահած էր մրցանակը, բայց բովանդակ Հայաստանի վրայ գերակշիռ վատահամբաւութեան տիրական հուշակը շահած էր Վանի կուսակալ ձէվտէթ պէյ, որուն այդ նահանգին մէջ ունեցած գործերը արդէն նկարագրած եմ: Բովանդակ այդ նահանգին մէջ, ձէվտէթ համբաւուած էր իբր «Պաշալէի պայտահարը», որովհետեւ չարչարանքի այս մասնագէտը հնարած էր ա՛յն՝ ինչ որ թերեւս բոլոր չարչարանքներուն զլուխ-գործոցն էր — իր հայ զոհներուն ոտքերուն պայտ գամել:

Սակայն այս պատահարները չէին ներկայացնել ա՛յն, ինչ որ այդ ժամանակի թերթերը ընդհանուր կերպով կը յիշէին՝ իբր հայկական վայրագութիւններ. անոնք հազիւ նախնական քայլերն էին ցեղին բնաջնջումին: Ժէօն Թիւրքերը՝ աւելի մեծ հնարագիտութիւն ցուցուցին, քան իրենց նախորդը՝ Ապտիւլ-Համիտ: Գահրնկէց Սուլթանին հրամանն էր միայն. «Ապաննէլ, սպաննէլ», մինչդեռ թիւրք ռամկավարութիւնը բոլորովին նոր ծրագիր մը գտաւ: Փոխանակ հայ ցեղը մէկ անգամէն ջարդելու, որոշեցին զայն տարագրել: Օսմանեան Կայսրութեան հարաւային եւ հարաւ-արեւելքի կողմը կը տարածուին Սուրիական անապատը եւ Միջագետքի հովիտը: Թէեւ այս երկիրին մէկ մասը ատենով թատերավայրն էր ծաղկեալ քաղաքակրթութեան մը, բայց վերջին հինգ դարերու ընթացքին, ան զարնուած է այն խորշակէն՝ որ ճակատագիրը կը դառնայ ո՛րեւէ երկիրի, որ կ'ենթարկուի թրքական վարչութեան: Եւ հիմա, անիկա տխուր, ամայի անապատ մըն է, առանց քաղաքի եւ աւանի եւ առանց որեւէ կեանքի, բնակչաւորած միայն սակաւաթիւ վայրի եւ մոլեռանդ Պէտէվի ցեղերով: Բազմաթիւ տարիներու ընթացքին կատարուած ամենա-

ճարտար աշխատանքն է միայն որ՝ կրնայ այդ անապատը նշանակելի ժողովուրդի մը բնակավայրին փոխակերպել: Արդ. կեղծունի Կառավարութիւնը ծանուց իր մտադրութիւնը՝ Կայսրութեան զանազան մասերուն մէջ ապրող 2,000,000է աւելի Հայերը հաւաքելու եւ զանոնք փոխադրելու՝ այդ անապատային եւ անհիւրընկալ երկրամասին մէջ: Եթէ նոյն իսկ այդ տեսակ տարագրութեան մը ձեռնարկած ըլլային անկեղծ միտքով, անիկա պիտի ներկայացնէր անգթութեան եւ անարդարութեան գերագոյն ձեւը: Մեծ մասով Հայերը երկրագործ չեն. անոնք գլխաւորաբար աշխատաւորական եւ վաճառականական շորձունէութեան ձիրքեր ունին: Թէեւ անոնցմէ շատեր արտեր կը մշակեն եւ խաշնարածութիւնով կը զբաղին, բայց շատերը քաղաքներու եւ մեծ աւաններու մէջ կը ընակին, եւ, ինչպէս արդէն ըսի, կը ներկայացնեն երկիրին տնտեսական ուժը: Այս տեսակ ժողովուրդ մը բռնել միլիոններով եւ զրկել Ասիայի ամէնէն անշէն մասերուն մէջ, պիտի ըլլար անմարդկային կեղեքումի արարք մը: Իրողութիւնը ան է որ՝ Թիւրքերը ամենանչին գաղափարը իսկ չունէին երբեք՝ Հայերը այս նոր երկիրին մէջ վերահաստատելու: Անոնք գիտէին թէ՛ խոշոր մեծամասնութիւնը չպիտի հասնէր սահմանուած վայրը, եւ անոնք որ՝ պիտի հասնիլ ջանային, կամ ծարաւէ եւ անօթութենէ պիտի մեռնէին, կամ պիտի սպաննուէին անապատի մահմտական վայրի ցեղերէն: Տարագրութեան իրական նպատակը աւազակութիւն եւ աւերածութիւն էր. անիկա ճշմարտապէս ջարդի նոր վերջ մը կը ներկայացնէր: Երբ Թալէադ, իբր ներքին գործերու նախարար, այդ տեղահանութիւններուն հրամանը կու տար, լոկ մահուան վճիռը կ'արտասանէր ամբողջ ցեղի մը. շատ լաւ գիտէր ատիկա, եւ ինծի հետ ունեցած իր խօսակցութիւններուն մէջ, ո՛չ մէկ մասնաւոր ջանք չէր ընել իրողութիւնը քողարկելու:

1915ի գարունէն աշունի ամբողջ ընթացքին, տեղի ունեցան տարագրութիւնները: Մեծ քաղաքներէն միայն Պոլիս, Իզմիր եւ Բէօթահիա խնայուեցան: Ուրիշ ամէն տեղեր՝ ուր միակ հայ ընտանիք մը կ'ապրէր, անբացատրելի ողբերգութիւններու թատրերը եղան ճշմարտապէս: Հրամանէն մէկ Հայ անգամ գերծ չմնաց, ո՛րչափ ալ զարգացած կամ հարուստ ըլլար, կամ ընկերային ո՛ր դասակարգին ալ որ պատկանէր: Գիւղերէ ոմանց մէջ, սովորաբար մէկ կամ երկու օր առաջուրնէ՛ ծանուցումներ փակցուեցան, որոնք կը հրամայէին ամբողջ հայ ժողովուրդին, որոշուած ժամու մը ներկայանալ հրապարակ մը. ուրիշ տեղերու մէջ մուկնտիկը կը շրջէր փողոցներուն մէջ եւ հրամանը բերանացի



ՏԱՐԱԳԻՐՆԵՐ ՎԱՆԻ ՄԷՋ, ՀԱՅ ՍՏԱՆԱԼՈՒ ՅՈՅՈՎ՝

ՀԱՒԱՔՈՒԱԾ ՇՈՒԿԱՅԻ ՓՈՒՌԻ ՍԸ ՇՈՒՐՁԸ

Այս խեղճեր՝ բոլորովին անպաստապար ձեւով հեռացուեցան իրենց տուներէն եւ ճամբայ հանուեցան դեպի անապատ: Հազարաւոր կիներ եւ զոտներ, ինչպէս նաեւ այրեր, այդ բռնի ուղեգնացուքեան մէջ մեռան, ո՛չ միայն անօրութեան եւ մեղկութեան, այլ նաեւ իրենց պահակախումբերուն անմարդկային վայրագութիւններէն:

կը հաղորդէր: Իսկ ուրիշ տեղեր ալ, ո՛չ մէկ ազդարարութիւն չէր կատարուեր: Ոստիկան-զինուորները կը ցցուէին Հայու մը տունին առջեւ, կը հրամայէին բոլոր բնակիչներուն՝ հետեւիլ իրենց: Իրենց տնական գործերով զբաղող կիները կ'առնէին, առանց թոյլ տալու որ անոնք զգեստնին փոխեն: Ոստիկանութիւնը անոնց վրայ կ'իյնար, ճիշդ ինչպէս որ Վէսուվ հրաբուխը խուժած էր Պոմպէայի վրայ. կիները կը տարուէին՝ լուացքի տաշտէն զատելով. մանուկները անկողինէն կը խլուէին. հացը փուռին մէջ կիսեփ կը մնար. ընտանեկան ճաշը կէս կերուած կը թողուէր. տղաքը դասարաններէն դուրս կը հանուէին, գիրքերնին՝ բաց ձգուած օրուան դասին վրայ, եւ մշակները կը բռնադատուէին իրենց արօրը թողելու՝ արտերուն մէջ եւ իրենց արջաօր՝ լեռներու կողին վրայ: Նոյն իսկ նոր զաւակ բերած կիներ կը բռնադատուէին իրենց անկողինը թողուլ եւ միանալ տազնապահար ամբոխին,

իրենց քնացող մանկիկները՝ բազուկներնուն մէջ : Հապճեպով խլուած բաներ, — ինչպէս շալ մը, ծածկոց մը եւ թերեւս ուտեստեղէնի քիչ մը փշուրներ, — ա՛ս էր պմէնը՝ ինչ որ կրնային վերցնել իրենց տնական գոյքերէն : Իրենց խելայեղ հարցումներուն թէ «Ո՞ւր կ'երթանք», ոստիկան-զինուորները հազիւ կը հաճէին պատասխանել. «Դէպի ներքին գաւառներ»:

Կարգ մը պարագաներու մէջ, տարագիրներուն կը տրուէին քանի մը ժամեր. բացառիկ պարագաներու՝ քանի մը օրեր, կարգադրութիւններ ընելու համար իրենց ստացուածքներուն եւ տնական գոյքերուն մասին: Բայց այս ձեւը անշուշտ կը յանգէր պարզապէս աւազակութեան : Հայերը՝ միայն թիւրքերու գոյք ծախել արտօնուած էին. եւ որովհետեւ թէ՛ ծախողները եւ թէ՛ գնողները զիտէին թէ՛ մէկ կամ երկու օր միայն կար ծախելու համար ամբողջ կեանքի ընթացքին դիզուած ինչքերը, ձեռք բերուած գիները ծախուածներու արժէքին պտիկ մէկ կամ երկու տարի միայն կը ներկայացնէին: Կարի մեքենաներ մէկ կամ երկու տարի կ'արժէին. կով մը մէկ տարուով ձեռքէ կը հանուէր. տուն մը լեցուն կահ-կարասի կը ծախուէր ժում մը ճաշի փոխարէն : Շատ անգամ, արգելք դրուած էր Հայերուն՝ նոյն իսկ այս գիներով ծախելու եւ թիւրքերուն՝ գնելու: Այն պատրուակով թէ՛ Կառավարութիւնը կ'առաջադէր Հայերու գոյքերը ծախել՝ վճարելու համար այն պարտքերը՝ զորս անոնք անխուսափելիօրէն պիտի թողէին, անոնց կահ-կարասիները կը դրուէին մթերանոցներու մէջ կամ կը կուտակուէին հրապարակները, ուր սովորաբար կը կողոպտուէին թիւրք այրերու եւ կիներու կողմէ : Կառավարական պաշտօնեաներ Հայերուն կը ծանուցանէին նաեւ թէ՛ որովհետեւ իրենց տարագրութիւնը ժամանակաւոր էր եւ ծրագրուած էր որ՝ պատերազմը լմննալէ ետքը ետ պիտի բերուէին, այդ պատճառով արտօնուած չէին իրենց տունները ծախելու: Բայց հազիւ թէ այդ սեփականատէրերը զիւղէն կը հնռանային, եւ ահա՛ մահմետական մուհաճիւրներ — թիւրքիայի ուրիշ մասերէն գաղթուողներ — կը փոխադրուէին հայկական թաղերը: Նոյնպէս Հայերուն բոլոր արժեղէնները — դրամ, մատնիներ, ժամացոյցներ եւ գոհարեղէններ — կը տարուէին պահականոցները՝ «ապահով պահուելու» համար, մինչեւ իրենց վերադարձը. բայց թիւրքերը զանոնք իրենց միջեւ կը բաժնէին: Սակայն, այն աւազակութիւնները տարագիրներուն այնչափ ցաւ չէին պատճառեր, որովհետեւ ա՛լ աւելի սոսկալի եւ տագնապեցուցիչ տեսարաններ կը պարզուէին իրենց աչքերուն առջեւ: Մարդոց կանոնաւոր կերպով բնաջնջումը կը շարունակուէր. այն այրերը՝ որոնք զերծ մնացած էին հալա-

ծանքներէն՝ զորս արդէն նկարագրեցի, վայրագ վարմունքներու կենթարկուէին: Սովորութիւն եղած էր կարաւաններուն մեկնումէն առաջ այրերը բաժնել իրենց ընտանիքներէն, չորսական խումբով իրարու կապել զանոնք, քաղաքէն դուրս տանիլ եւ զնդակահարել: Շարունակ տեղի կ'ունենային հրապարակով կախելու մահապատիժներ, առանց դատելու, այն միակ յանցանքով որ՝ գոհերը Հայեր էին: Ոստիկան-զինուորները մասնաւոր փափաք մը կը ցուցնէին ոչնչացնելու զարգացածները եւ ազդեցիկները: Այդ տեսակ մահապատիժներու մասին շարունակ տեղեկագիրներ կը ստանայի ամերիկեան հիւպատոսներէ եւ միսիսիսներէ. անոնց նկարագրած դէպքերէն շատերը չպիտի ջնջուին միտքէս: Էնկիւրիի մէջ, տասնըհինգէն եօթանասուն տարեկան բոլոր հայ այրերը կը ձերբակալուին, չորսական խումբերով իրարու կը կապուին եւ դէպի Կեսարիա ճամբայ կը հանուին: Հինգ-վեց ժամ ճամբորդելէ ետքը, երբ անոնք կը հասնին մեկուսի ձոր մը, թիւրք զիւղացիներու խուժան մը անոնց վրայ կը թափի՝ բիրերով, մուրճերով, կացիններով, գերանդիներով, բահերով եւ սղոցներով : Այս գործիքները, ո՛չ միայն տագնապեցուցիչ մահեր կը պատճառէին՝ քան հրացանները եւ ատրճիտակները, այլ նաեւ, ինչպէս թիւրքերը իրենք ծանուցած էին գոհարտօրէն, անոնք աւելի խնայողական էին, քանի որ վառօդի եւ գնդակի սպառում չէին հարկադրեր : Այս կերպով, թիւրքերը բնաջնջեցին Էնկիւրիի ամբողջ արու ժողովուրդը, մէջը ըլլալով բոլոր հարուստները եւ կրթուածները, եւ անոնց չարաչար կտորուած մարմինները թողուեցան ձորին մէջ, ուր կեր եղան վայրի գազաններու : Այս ջարդարարութիւնը լմնցնելէ ետքը, զիւղացիները եւ ոստիկան-զինուորները կը հաւաքուին տեղին գինետունը, ուր քաղդատութեան կը դնեն ըրածնին եւ կը յոխորտան իրենց իւրաքանչիւրին սպաննուած «կեալուս»ներու քանակին վրայ: Տրապիզոնի մէջ, այրերը նաւակներու մէջ կը դրուին եւ դէպի Սեւ Մով կը լրկուին. ոստիկան-զինուորներ զանոնք կը հետապնդեն, կը գնդակահարեն եւ անոնց դիակները ծովը կը նետեն :

Հետեւաբար, երբ կարաւաններուն մեկնելու նշանը կը տրուէր, անոնք զրեթէ միակերպօրէն կը բաղկանային կիներէ, տղաքներէ եւ ձերունիներէ: Անոնք որ՝ թերեւս կրնային զանոնք պաշտպանել իրենց վիճակուած ճակատագիրին դէմ, ոչնչացուած էին: Յաճախ, ամբոխին ճամբայ ելլելու ատենը, քաղաքապետը հեգնական «բարի ճամբորդութիւն» մը կը մաղթէր : Կարաւանին մեկնումէն առաջ, երբեմն կիներուն կ'առաջարկուէր մահմետական ըլլալ: Եթէ նոյն իսկ անոնք ընդունէին նոր հաւատքը, ինչ

որ քիչերը կ'ընէին, նորէն իրենց երկրային տառապանքները վերջ չէին գտներ: Կրօնափոխները կը բռնադատուէին իրենց զաւակները յանձնելու ինքնակոչ [so-called] «խլամ Որբանոցներ»ու, հաւանելով որ՝ անոնք կրթուին իբր Մարգարէին հաւատարիմ հետեւորդներ: Եւ իրենք ալ անձնապէս, իրենց կրօնափոխութեան անկեղծ ըլլալը ապացուցանելու համար, պարտաւոր էին իրենց քրիստոնեայ ամուսինները լքելու եւ Իսլամներու հետ ամուսնանալու: Եթէ իբր ամուսին ներկայացող Մահմետական մը չգտնուէր, այն ատեն, նոր կրօնափոխը կը տարագրուէր, ո՛րչափ ալ ուժգնապէս Իսլամութեան համար իր հաւատարմութեանը վրայ պնդէր:

Նախապէս, Կառավարութիւնը քիչ մը տրամադրութիւն ցոյց տուաւ այս տարագրուող խումբերը պաշտպանելու: Սպանները զանոնք ընդհանրապէս կը բաժնէին խումբերու, երբեմն հարիւրեակներով, երբեմն հազարեակներով: Քաղաքային իշխանութիւնները երբեմն կը հայթայթէին սայլեր, որոնք կը կրէին արտականներուն ժողովոյ յարողած տնական կահ-կարասիները: Ոստիկան-զինուորներու պահակախումբ մը կ'ընկերանար իւրաքանչիւր թափօրին, իբր թէ առաջնորդելու եւ պաշտպանելու համար զայն: Ողորմելի զգեստներ հագուած կիներ, գիրկերնին կամ կռնակնին կրելով մանկիկներ, կը քալէին քովն իվեր զաւազաններու կրթնած կաղնիկաղ առաջացող ծերունիներու: Տղաքները ասդին-անդին կը վազվզէին, մատաղ խելքովսին՝ կ'երեւայ թէ թափօրը նոր տեսակ խաղ մը նկատելով: Աւելի բարեկեցիկ անհատ մը, ձի մը կամ էջ մը կ'ունենար. երբեմն ազարակատէր մը փրկած կ'ըլլար կով մը կամ ոչխար մը, որ իր քովսիվեր կը քալէր. եւ ընտանի կենդանիներու սովորական խումբերը — շուններ, կատուներ եւ թռչուններ — մաս կը կազմէին խայտաբղէտ թափօրին: Հազարաւոր հայ քաղաքներէ եւ գիւղերէ այս յուսաբեկ կարաւանները ճամբայ ելան. անոնք դէպի հարաւ ամբողջ պողոտաները կը լեցնէին. իրենց քալած ատեն, ամէն տեղ, անոնք ահագին փոշի մը կը յարուցանէին, եւ կը թողէին բեկորներ, աթոռներ, ծածկոցներ, մահճեղէններ, տնական առարկաներ եւ ուրիշ կահ-կարասիներ, որոնք թափօրին ընթացքը կը գծէին: Կարաւաններուն ճամբայ ելած միջոցին, տարագիրները քիչ մը մարդկային էակներու նմանութիւն կը կրէին. սակայն, քանի մը ժամուան մէջ, փոշին կը ծեփէր իրենց դէմքերը եւ զգեստները, ցեխը կը թանձրանար իրենց ոտքերուն ու սրունքներուն վրայ, եւ դանդաղօրէն առաջացող ամբոխը, յաճախ յոգնութենէ կորաքամակ, եւ ընկերացող «պաշտպան»ներուն բրտութենէն ահաբեկած, կը նմանէր տեսակ մը նոր եւ այլանդակ կենդանիներու ցեղի: Եւ

սակայն, ճիշդ վեց ամսուան ընթացքին, 1915 Ապրիլէն մինչեւ Հոկտեմբեր, Փոքր Ասիայի գրեթէ բոլոր պողոտաները լեցնուած էին արքորականներու այս արտամարդկային խումբերով: Կը տեսնուէր անոնց պտուտքիլը իւրաքանչիւր հովիտէ դարձար ու դարձեր, եւ մագլցիլը գրեթէ իւրաքանչիւր լեռան կողմ իվեր, քալելով եւ շարունակ քալելով, չգիտնալով երբեք թէ դէպի ո՛ւր, բայց եթէ դէպի ամէն ճամբայ՝ որ մահուան կը տանի: Իլիւզ գիւղի ետեւէ եւ քաղաք քաղաքի ետեւէ, պարպուեցաւ իր հայ բնակչութենէն, արդէն մանրամասնօրէն նկարագրուած տխուր պայմաններուն մէջ: Ստուգուածին համաձայն, այս վեց ամսուան միջոցին, 1,200,000 ժողովուրդ դէպի սուրիական անապատը այս ուղեգնացութեան համար ճամբայ ելաւ:

Աղօթեցէ՛ք մեզի համար, կ'ըսէին անոնք իրենց տուններէն մեկնած ատեն — այն յարկերէն՝ ուր 2,500 տարիներէ իվեր իրենց նախահայրերը ապրած էին: Ալ այս աշխարհի մէջ ձեզ չպիտի տեսնենք. բայց օր մը իրար պիտի գտնենք: Աղօթեցէ՛ք մեզի համար!»:

Հագիւ թէ Հայերը բաժնուած կ'ըլլային իրենց ծննդավայր գիւղերէն, երբ հալածանքները կը սկսէին: Այն ճամբաները, ուրկէ կ'անցնէին, հագիւ թէ ջորիներու արահետներ էին. եւ անոնք որ քանի մը ժամ առաջ մեկնած էին իբր կանոնաւոր թափօր, շուտով կը դառնային այլակերպուած տքնատանջ խումբան մը: Կիները կը բաժնուէին իրենց զաւակներէն եւ ամուսինները իրենց կիներէն: Ծերունիները շուտով յարաբերութենէ կը զրկուէին իրենց ընտանիքներուն հետ, խոնջաբեկ ու ոտքերնին ցաւած: Թիւրք սայլապանները, իրենց վարձուորներուն վերջին դրամը կորցելէ ետքը, յանկարծ զանոնք եւ անոնց զոյքերը ճամբուն վրայ կը թափէին, ճամբէն կը շեղէին եւ գիւղ կը վերադառնային ուրիշ զոհեր գտնելու: Այսպէս, կարճ ժամանակէ մը ետքը, գրեթէ ամէն մարդ, երիտասարդ թէ ծեր, դատապարտուած էր ոտքով ճամբորդելու: Այն ոստիկան-զինուորները՝ զորս Կառավարութիւնը կը ղրկէր իբր թէ արքորականները պաշտպանելու համար, հագիւ քանի մը ժամէն անոնց հարստահարիչները կը դառնային: Անոնք իրենց պաշտպանեալներուն կը հետեւէին սուլիմները հրացաններուն անցուցած, խթանելով ո՛վ որ քալուածքը դանդաղեցնելու հակում կը ցուցնէր: Անոնք որ հանգչելու համար կը փորձէին կանգ առնել, կամ ուժասպառ ճամբուն վրայ կ'իյնային, ծայրայեղ վայրագութիւնով կը բռնադատուէին միանալու քաղաք ամբոխին: Թիւրքերը նոյն իսկ սուլիմներով կը խթանէին յղի կիները, եթէ անոնցմէ մէկը, ինչպէս որ յաճախ կը պատահէր, ճամբուն

վրայ զաւակ ունենար, կը բռնադատուէր որ անմիջապէս ելլէ եւ միանայ քաղղներուն: Ճամբորդութեան ամբողջ շրջանին՝ տեւական պայքար մը մղեցին Հայերը իսլամ բնակիչներու դէմ: Ոստիկան-զինուորներու ջոկատներ առաջ կ'անցնէին՝ ծանուցանելու քիւրտ ցեղերու թէ՛ իրենց զոհերը կը մօտենային. նաեւ թիւրք զիւղացիներուն տեղեկութիւն կը տրուէր որ՝ իրենց երկար ատենէ ի վեր սպասած առիթը հասած էր: Կառավարութիւնը նոյն իսկ բանտերը բացաւ եւ ազատ արծակեց դատապարտեալները, այն հասկացողութիւնով որ՝ անոնք իբր բարի Իսլամներ պիտի վարուէին՝ մօտեցող Հայերուն հանդէպ: Այսպէս, իւրաքանչիւր կարաւան գոյութեան մշտական պայքար մը ունէր զանազան դասակարգի թշնամիներու դէմ — իրենց ընկերացող ոստիկան-զինուորները, թիւրք շինականները եւ զիւղացիները, քիւրտ ցեղերը եւ Զեքեներու կամ աւազակներու հրոսախումբերը: Եւ պէտք չէ մոռնանք թէ՛ այն մարդիկը՝ որոնք կրնային այս ուղեւորները պաշտպանել, գրեթէ բոլորն ալ սպաննուած էին կամ իբր բանուոր՝ բռնի բանակին մէջ առնուած, եւ քսորականներէն ալ կանոնաւոր կերպով առնուած էին բոլոր զէնքերը, ուղեւորութիւնը սկսելէ առաջ:

Երբ զոհերը իրենց մեկնումի կէտէն քանի մը ժամ անդին կը ճամբորդէին, Քիւրտերը իրենց լեռնային բնակարաններէն վար կը խուժէին: Խոյանալով մանկամարդ աղջիկներուն վրայ, անոնց լաչակները կը վերցնէին եւ զեղեցկագոյնները կը փախցնէին դէպի բլուրները: Իրենց աչքին հաճոյ երեւցող մանուկները կը գողնային եւ ամբոխին մնացած մասը անզթօրէն կը կողոպտէին: Եթէ քսորականները մեկնած էին դրամով եւ ուտեստեղէնով, յարծակողները կը յափշտակէին, զանոնք այդպէս անօթութեան յուսահատ զոհեր դարձնելով: Անոնք կը կողոպտէին քսորականներուն զգեստները, եւ երբեմն թէ՛ այրերը եւ թէ՛ կիները կատարեալ մերկութեան վիճակի մը մէջ կը ձգէին: Այս աւարաուութիւնները զործելու ամբողջ ընթացքին, Քիւրտերը ազատօրէն կը ջարդէին, եւ կիներու եւ ծերունիներու զոռում-գոչումները կ'աւելցնէին ընդհանուր սարսափը: Անոնք որ կը ճողոպտէին բաց տեղուանք կատարուած այս յարծակումներէն, կ'ենթարկուէին իսլամ զիւղերու մէջ իրենց վերապահուած նոր սարսափներուն: Հոս, թիւրք սինլթորներ կ'իյնային կիներուն վրայ, որոնք իրենց կրած խոշտանգումներէն երբեմն կը մեռնէին, երբեմն ալ զգայազուրկ կը յիմարանային: Այս տեսակ ահաւոր կայանի մը մէջ գիշեր մը անցընելէ ետքը, քսորականները, կամ անոնք որ կը վերապրէին, յաջորդ առտու նորէն ճամբայ կ'ելլէին: Քանի՛ ճամ-

բորդութիւնը երկարէր, ոստիկան-զինուորներու վայրագութիւնը յայտնապէս կ'աւելնար, որովհետեւ անոնք կը թուէին ջղայնտուի այն իրականութենէն որ՝ իրենց հոգածութեանը յանձնուածներէն մաս մը դեռ կ'ապրէր: Յաճախ ճամբուն վրայ ինկող մը՝ անմիջապէս կը սուհնահարուէր: Հայերը սկսան հարիւրներով մեռնիլ անօթութենէ եւ ծարաւէ: Նոյն իսկ երբ գետերու կը հասնէին, ոստիկան-զինուորները Հայերը չարչարելու համար միայն, երբեմն չէին ձգեր ջուր խմել: Անապատին հրակէզ արեւը կ'այրէր իրենց խեղճօրէն հագուած մարմինները, եւ իրենց մերկ ոտքերը, կոխտելով անապատին տաք աւազը, ա՛յնչափ ցաւոտած էին որ՝ հազարներով կ'իյնային եւ կը մեռնէին, կամ կը սպաննուէին՝ երբ զետին երկնային: Այսպէս, քանի մը օրուան մէջ, ինչ որ մարդկային բնականոն էակներու թափօր մըն էր, փոշիթաթաւ կմախքներու սայթաքուն հօրդայի մը փոխակերպուեցաւ, որ անյագօրէն ուտելիքի փշուրներ կը փնտռէր, ուտելով ճամբուն վրայ հանդիպած ո՛րեւէ սատակ, խելայեղած այն խուժուժ տեսարաններէն՝ որոնք ամէն ժամ կը վրդովէին իրենց էութիւնը, հիւանդ՝ այն բոլոր ախտերով որոնք կ'ընկերանան սյս տեսակ նեղութիւններու եւ զրկանքներու, բայց դարձեալ դէպի առաջ խթանուելով, իրենց դահիճներուն խարազաններով քիբերով եւ սուհիներով:

Եւ այսպէս, մինչ քսորականները կը քալէին, անոնք իրենց ետին կը ձգէին ուրիշ կարաւան մը — կարաւանը մեռած եւ չթաղուած մարմիններու, թիֆուսի, իզգանթիի եւ ֆլանդրի վերջին աստիճաններուն մէջ մեռնող ծերունիներու եւ կիներու, կռակով վրայ պառկած եւ սնունդի ու ջուրի համար իրենց վերջին սրտածմիկ ճիչերը արծակուող տղեկներու: Կիներ գտնուեցան, որոնք իրենց մանկիկները օտարականներու կու տային, աղաչելով անոնց որ՝ զանոնք առնեն եւ փրկեն իրենց խոշտանգիչներէն. ասիկա չյաջողելու պարագային, մայրերը իրենց զաւակները հորերու մէջ կը նետէին կամ մացառներու մէջ կը թողէին, որպէսզի գոնէ անվրդով կարենային մեռնիլ: Թափօրին ետեւը կը մնար պզտիկ բանակ մը աղջիկներու, որոնք իբր ստրուկ ծախուած էին — յաճախ սեփիսիի մը կամ գրեթէ յիսուն սեփի — եւ որոնք իրենց գնորդներուն անասնական նպատակներուն ծառայելէ ետքը, պոռնկութեան կեանք վարելու կը բռնադատուէին: Մեռնողներու անթաղ կամ կիսաթաղ մարմիններուն խառնուած հիւանդներով եւ մահամերձներով լեցուն կայքերու շարան մը կը գծէր ընթացքը առաջացող խուճերուն: Գիշակերներու երամներ օղին մէջ կը հետեւէին անոնց, եւ սովալլուկ շուներ, մեռելներու մարմիններուն համար իրարու հետ զգուրտելով, շարունակ կը հետապնդէին

Թափօրը : Ամէնէն զարհուրելի տեսարանները տեղի ունեցան գետերուն քով, մասնաւորաբար Եփրատի : Այս գետը անցած ատեն, երբեմն ոստիկան-զինուորները կիները ջուրին մէջ կը հրէին : զնդակի բռնելով բոլոր անոնք՝ որոնք լողալով ազատիլ կը փորձէին : Յաճախ կիները՝ զաւակնին իրենց բազուկներուն մէջ, ինքնաբերաբար գետին մէջը կը նետուէին՝ փրկելու համար իրենց պատիւը : «Յունիսի վերջին շաբթուն, — հիւպատոսական տեղեկագիրէ մը կը քաղեմ այս մէջըրումը — Էրզրումի Հայերէն բազմաթիւ խումբեր տարագրուեցան յաջորդական օրերու մէջ, եւ անոնցմէ շատերը կոտորուեցան ճամբան, կամ զնդակահարուելով, կամ ջուրի մէջ խեղդամահ ըլլալով : Տկն. Չարուհի անունով տարէց եւ ունեւոր կին մը, որ Եփրատի մէջ նետուած էր, ազատեցաւ գետին մէջ խարակի մը կառչելով : Ան յաջողեցաւ եզերք ելլել եւ դարձաւ Էրզրում՝ պահուլտելու թիւրք բարեկամի մը տունը : Ան պատմեց «Համօրէն-Ռուսական Քաղաքային Միութիւն»ի Էրզրումի ներկայացուցիչ՝ Իշխան Արկուղինսքիի թէ՛ դեռ կը դողդուր յիշելով որ՝ ինչպէ՛ս հարիւրաւոր մանուկներ սուինահարուած էին թիւրքերուն կողմէ եւ նետուած Եփրատի մէջ, թէ ինչպէ՛ս այրեր եւ կիներ մերկացուած էին, հարիւրներով իրարու կապուած, զնդակի բռնուած եւ գետը նետուած : Երզնկայի մօտ, ըսաւ, գետին մէկ ագոյցքին վրայ, հազարաւոր դիակները անանկ թումբ մը ձեւացուցած էին որ՝ Եփրատը հարիւր ետքայի չափ տեղ իր ընթացքը փոխած էր» :

Անիմաստ է թիւրք Կառավարութեան հաւաստելը թէ՛ լրջօրէն նպատակ ունեցած ըլլայ երբեք «Հայերը նոր բնակավայրեր» փոխադրելու. ճամբորդներուն հանդէպ ցուցուած ընթացքը՝ բացայայտօրէն կը յայտնէ որ՝ Էնվէրի եւ Թալէադի իրական նպատակը բնաջնջումն էր : Այս ըմբոստացուցիչ պայմաններուն մէջ դէպի հարաւ աքսորուածներէն քանի՞ հոգի հասան երբեք իրենց սահմանուած վայրը : Միակ կարաւանի մը կրած վիճակները կը ցուցնեն թէ՛ տարագրութեան այս ծրագիրը ինչպէ՛ս կատարեալ ոչնչացումի փոխուեցաւ : Հալէպի ամերիկեան Հիւպատոսին կողմէ հաղորդուած են ինծի խնդրի առարկայ մանրամասնութիւնները, որոնք ներկայիս Ուաշինկոնի արտաքին գործերու նախարարութեան դիւանաթուղթերուն մէջ անցած են : Յունիսի սկիզբը, երբեք հազար Հայերու թափօր մը, մեծ մասով կիներ, աղջիկներ եւ տղաքներ, մեկնեցաւ Խարբերդէն : Հետեւելով սովորական միջոցին, կառավարութիւնը անոնց հայթայթեց եօթանասուն ոստիկան-զինուորներու պահակազօրք մը, թիւրք պետի մը՝ Պէյի մը՝ հրամանին տակ : Սովորականին համաձայն, ասոնք ապացուցին որ՝

Հայերու պաշտպանները չեն, այլ խոշտանգիչները եւ դահիճները : Հազիւ թէ տարագիրները ճամբայ առած էին, — Պէյը կարաւանէն 400 ոսկի շորթեց, պատճառաբանելով թէ՛ մինչեւ անոնց Մալաթիա հասնիլը ապահովութեան պիտի հսկէր. անոնցմէ կողոպտածին պէս այն գումարը՝ որ կրնար իրենց ուտելիք հայթայթել, փախուստ տուաւ, զանոնք ձգելով ոստիկան-զինուորներու փափկազգած գթասրտութեանը !

Ամբողջ ճամբուն ընթացքին մինչեւ Րէս-Իւլ-Այն, որ Պալտատի գիծին առաջին կայարանն է, այս թշուառ ուղեւորներուն կեանքը երկարատեւ արհաւիրք մը եղաւ : Ոստիկան-զինուորները առաջ կ'անցնէին, ծանուցանելու լեռնաբնակ կիսավայրերնի ցեղերու թէ՛ հազարաւոր հայ կիներ եւ աղջիկներ կու գային : Արաբները եւ Քիւրտերը աղջիկները կը փախցնէին. լեռնականները անոնց վրայ կ'իյնային կրկնակ անգամներ բռնաբարելով եւ սպաննելով կիները իրենք՝ ոստիկան-զինուորներն ալ կը մասնակցէին խնէշատօսին : Թափօրին ընկերացող բանի մը այրերը մէկիկ-մէկիկ կը սպաննուէին : Կիները յաջողած էին դրամին ծածկել իրենց հալածիչներէն, պահելով իրենց բերաններուն եւ մազերուն մէջ. ատով ձիեր կը գնէին, միայն որպէսզի կրկնակ անգամներ գողցնեն քիւրտ ցեղապետներու : Վերջապէս, ոստիկան-զինուորները՝ ամբողջ տասերեք օրեր իրենց պաշտպանեալները կողոպտելէ, ծեծելէ, բռնաբարելէ եւ սպաննելէ ետքը, զանոնք ամէնքը մէկ լքեցին : Երկու օր ետքը, Քիւրտերը խումբին մէջ կը մտնեն եւ կը հաւաքեն այն բոլոր արու անձերը՝ որոնք դեռ ողջ կը մնային : 150ի չափ կը գտնեն, 15էն 90 տարեկան. անմիջապէս կը հեռացնեն ասոնք եւ մինչեւ վերջին մարդը կը մորթեն : Բայց Տիշո՞ այդ օրը, Սնքաստիայէն ուրիշ կարաւան մը կը միանայ Խարբերդի կարաւանին, ամբողջ կարաւանին թիւր հասցնելով 18,000 հոգիի :

Հիմա հրամանատարութիւնը կը ստանձնէ ուրիշ քիւրտ Պէյ մը, որուն համար, ինչպէս նոյն դիրքին մէջ գտնուող ամէն մարդու, այդ պատեհութիւնը առիթ մը կը նկատուէր միայն՝ կողոպուտի, խոշտանգումի եւ սպանութեան : Այս ցեղապետը լեռները կը կանչէ իր բոլոր հետեւորդները եւ հրաւէր կ'ընէ անոնց որ՝ Հայերու այս հսկայ զանգուածին հանդէպ ուզածնուն պէս շարժին : Ամէն օր ու ամէն գիշեր, է՛ն գեղեցիկ աղջիկները կ'առեւանգուէին. երբեմն անոնք կը դառնային գթաշարժ վիճակի մը մէջ, ինչ որ կը մատնէր իրենց ամբողջ տառապանքներուն պատմութիւնը : Ետամնացները, անոնք՝ որոնք այնչափ ծեր, տկար եւ հիւանդ էին որ՝ չէին կրնար հետեւիլ առաջացողներուն, անմի-

ջապէս կը սպաննուէին: Երբ Թիւրք գիւղ մը հասնէին, տեղին բոլոր դատարկաշրջիկները արտօնուած էին հայ աղջիկներուն վրայ խոյանալու: Երբ կոտորակուած խուճըը եփրատի եզերքը հասաւ, տեսան որ՝ 200 հոգիներու դիակները ջուրին երեսը կը ծփային: Մինչեւ այդ ատենը ամէնքն ալ ա՛յնչափ կրկնակ անգամներ կողոպտուած էին որ՝ գրեթէ ո՛չ մէկ բաներնին չէր մնացած, բացի քանի մը ցնցոտի զգեստներէ, զորս հիւսա ալ Քիւրտերը յափշտակեցին: Կարաւանին մեծ մասը հինգ օր քալեց, գրեթէ ամբողջովին մերկ՝ անապատին խանձող արեւին տակ: Ուրիշ հինգ օրեր ալ՝ ո՛չ կտոր մը հաց, ո՛չ ալ կաթիլ մը ջուր ունեցան: «Հարիւրաւորներ ճամբան մեռած կ'իյնային, կ'ըսէ տեղեկագիրը: Իրենց լեզուները ածուխ դարձած էին, եւ երբ, հինգ օրէն ետքը, աղբիւր մը հասան, բնականաբար ամբողջ կարաւանը դէպի հոն խուժեց: Բայց ոստիկանները ճամբան խափանեցին եւ արգիլեցին կաթիլ մը ջուր առնել: Իրենց նպատակն էր ջուրը ծախել գաւաթը մէկէն երեք ոսկիի. երբեմն նոյն իսկ դրամը առնելէ ետքը պարզապէս զլացան ջուրը: Ուրիշ տեղ մը, ուր հորեր կային, կ'ինքնէ ումանք ինքզինքնին անոնց մէջը նետեցին, քանի որ ո՛չ չուան, ո՛չ ալ դոյլ կար ջուրը քաշելու: Այդ կ'ինները խեղդուեցան, բայց հակառակ ատոր, ժողովուրդին մնացած մասը խմեց այդ հորէն, մինչ հոն կը մնային դիակները եւ ջուրը կ'ապականէին: Երբեմն, երբ հորերը ցած ըլլային, եւ կ'ինները կարենային անոնց մէջը իջնել եւ կրկին դուրս ելլել, միւսները կը յարձակէին անոնց թաց եւ խոնաւ զգեստները լզելու կամ ծծելու, իրենց ծարաւը յագեցնելու ջանքով: Երբ իրենց մերկ վիճակին մէջ կ'անցնէին արաբ գիւղէ, Արաբները զթացին անոնց եւ տուին զգեստեղէններու հիմ կտորուանքներ՝ մարմիննին ծածկելու համար: Աքսորականներէն ումանք՝ որոնք տակաւին դրամ ունէին, քանի մը կտոր զգեստ գնեցին. բայց տակաւին ուրիշներ կային, որոնք մինչեւ Հալէպ քաղաքը՝ ամբողջ ճամբան այդպէս մերկ քալեցին: Խեղճ կ'ինները՝ ամչնալով՝ հագիւ կրնային քալել. անոնք բոլորն ալ կէս մէջքերնուն վար ծռած կը քալէին:

Տասներօթերորդ օրը, քանի մը հոգիներ միայն հասան Հալէպ: 18,000 հոգինոց միացած կարաւանէն ճիշդ 150 կ'իններ եւ տղեկներ հասան սահմանուած տեղը: Միւսներէն մէկ քանիներ, ամէնէն գրաւիչները, դեռ կ'ապրէին իբր Քիւրտերուն եւ Թիւրքերուն ստրուկները. մնացածները բոլորն ալ մեռած էին:

Այս տեսակ զարհուրելի դէպքեր պատմելով՝ միակ նպատակս ան է որ՝ առանց մանրամասնութիւններ լսելու, անգլիախօս հասարակութիւնը չկրնար ճշգրտօրէն հասկնալ թէ՛ ի՛նչ է այն ազգը,

զոր մենք Թիւրք կը կոչենք: Ես տակաւին չեմ պատմեր ամէնէն սոսկալի մանրամասնութիւնները, որովհետեւ կատարեալ պատմութիւնը այդ սադիական խենչշանքներուն՝ որոնց զոհերը դարձան այդ հայ այրերը եւ կ'ինները, չի կրնար երբեք տպուիլ ամերիկեան հրատարակութեան մը մէջ: Ի՛նչ ոճիւրներ որ մարդկային միտքին ամէնէն խաթարուած բնագոյր կրնար ծրագրել, եւ հալածանքի եւ անարդարութեան ի՛նչ նրբութիւններ որ ամէնէն ստորին երեւակայութիւնը կրնար յղանալ, ամենօրեայ դժբաղդութիւնները դարձան այս նուիրական ժողովուրդին: Ես համոզուած եմ որ՝ մարդկային ցեղին ամբողջ պատմութիւնը ա՛յսչափ անաւոր դրուագ մը չի պարունակեր: Անցեալին մեծագոյն ջարդերը եւ հալածանքները գրեթէ աննշան կը թուին, բաղդատուելով 1915ին հայ ցեղին կրած տառապանքներուն հետ: Տասերեքերորդ դարուն սկիզբը, Ալբիզացիներու ջարդը պատմութեան ամէնէն ողբալի դէպքերէն մէկը նկատուած է միշտ: Մոլեռանդութեան այս բռնկումին մէջ 60,000ի չափ անձեր սպաննուած են: Սէն Պարթէյէմիի ջարդերուն մէջ, մօտ 30,000 մարդկային էակներ կորսուեցան: Սիկիլիական ջարդերը, որոնք մոլեռանդական ամէնէն դիւային պողոթկումներէն մէկը հանդիսացած են, 8,000 անձերու մահուանը պատճառ եղած են: Թօրութեամտայի օրով, Սպանիական Հաւատաքննութեան վրայ հատորներ գրուած են. եւ սակայն, իր կառավարութեան տասնութը տարիներուն՝ 8,000էն քիչ մը աւելի հերետիկոսներ միայն մահուան դատապարտուած են: Թերեւս պատմութեան միակ դէպքը, որ ամէնէն աւելի կը նմանի հայկական տարագրութիւններուն, Ֆէրտինանի եւ Իզապէլայի կողմէ Հրեաներու Սպանիայէն արտաքսումն է: Փրէսքօթի ըսածին համեմատ, 160,000 Հրեաներ իրենց բնակավայրերէն տեղահանուած եւ դիպուածաբար տարտղնուած են Ափրիկէի եւ Եւրոպայի մէջ: Բայց այս նախընթաց հալածանքները գրեթէ ոչինչ կ'երեւան, երբ զանսնք կը բաղդատենք Հայերու տառապանքներուն հետ, ուր գոնէ 600,000 եւ թերեւս մինչեւ անգամ 1,000,000 անձեր ոչնչացան: Այդ նախընթաց ջարդերը, երբ բաղդատուին հայկական վայրագութիւնները վարող ոգիին հետ, ունին բնոյթ մը՝ զոր կրնանք զրկել չքմեղանք նկատել. անոնք արդիւնքն էին կրօնական մոլեռանդութեան, եւ զանոնք սարքող մարդոցմէ եւ կ'ինքնէ շատերը անկեղծապէս կը հաւատային թէ՛ հաւատարմօրէն իրենց Աջարիչին կը ծառայէին: Անտարակոյս կրօնական մոլեռանդութիւնը շարժիչ դրդապատճառ մըն էր այն Թիւրք եւ քիւրտ խուժանին քով, որ Հայերը կը սպաննէր, իբր ծառայութիւն մը Ալլահին. բայց այն մարդիկը՝ որոնք իրապէս յղացան

ոճիրը, այդ տեսակ դրդապատճառ մը չունէին: Անոնք գրեթէ ամէնքն ալ անաստուածներ էին, որոնք ա՛յնչպիսիք քիչ յարգանք ունէին Մահմետականութեան հանդէպ, որչափ Բրիտանոնէութեան, եւ որոնց միակ դրդապատճառն էր՝ պաղարիւնով հաշուուած պետական քաղաքականութիւնը:

Հայերը Թիւրքիայի մէջ միակ հպատակ ժողովուրդը չեն, որ չարչարուած ըլլան՝ Թիւրքիան տարամերժօրէն Թիւրքերուն երկիրը դարձնելու այս քաղաքականութենէն: Հայերու մասին ըրած պատմութիւնն ա՛յլ կրնայի կարգ մը փոփոխութիւններով կրկնել նաեւ Յոյներուն եւ Սուրիացիներուն համար: Իրաւցնէ՛, Յոյները առաջին զոհերը եղան այս ազգայնացումի գաղափարին: Արդէն նկարագրած եմ թէ՛ ինչպէս եւրոպական պատերազմի նախընթաց քանի մը ամիսներուն, օսմանեան Կառավարութիւնը սկսաւ Փոքր Ասիայի ծովափունքին վրայ գտնուող իր յոյն հպատակները տարագրել: Այս բռնագեղձութիւնները թէեւ մեծ շահագրգռութիւն չպատճառեցին Եւրոպայի եւ Միաց.-Նահանգներու մէջ, բայց երեք կամ չորս ամիսներու ընթացքին 100,000է աւելի Յոյներ Միջերկրականի ափունքի իրենց տարեւոր բնակավայրերէն խլուելով՝ փոխադրուեցան յունական կղզիները եւ ներքին գաւառները: Ընդհանուր առումով, ասոնք ճշմարիտ [bona-fide] տարագրութիւններ էին. այսինքն յոյն բնակիչները միայն այդ վայրերը փոխադրուեցան եւ համաջարդի չենթարկուեցան: Հաւանօրէն, քաղաքակիրթ աշխարհին՝ այս տարագրութիւններուն դէմ չբողոքելուն պատճառով էր որ՝ Թիւրքերը ետքէն որոշեցին նոյն մէթոքը լայն չափով կիրարկել ո՛չ միայն Յոյներուն, այլ նաեւ Հայերուն, Սուրիացիներուն, Նեստորականներուն եւ իրենց հպատակներէն ուրիշ ժողովուրդներու: Եւ իրապէս, Պոլիսի ոստիկանապետ Պէտրի պէյ, իմ քարտուղարներէս մէկուն յայտարարեց թէ՛ Թիւրքերը ա՛յնչպիսի յաջողապէս տարագրած էին որ՝ որոշած էին նոյն մէթոքը կիրարկել նաեւ Կայսրութեան միւս բոլոր ցեղերուն:

Հետեւաբար, Յոյներու մարտիրոսագրութիւնը կ'ընդգրկէր երկու շրջաններ. պատերազմէն առջի շրջանը եւ 1915ի սկիզբը սկսող շրջանը: Առաջինը գլխաւորաբար հարուածեց Փոքր Ասիայի ծովափունքի Յոյները: Երկրորդը հարուածեց Թրակիայի եւ Մարմարայի, Տարսանէյի, Վոսփորի շուրջի հոգամասերուն մէջ, ինչպէս նաեւ Սեւ Մովի եզերքը գտնուող Յոյները: Այս վերջինները, հարիւր հազարներով զրկուեցան Փոքր Ասիայի ներսերը: Թիւրքերը գրեթէ ճիշդ նոյն ընթացքը ցուցուցին Յոյներուն հանդէպ, որով վարուած էին Հայերուն հանդէպ: Սկսան Յոյները օսմանեան

բանակին մէջ զինուորագրել ու ետքէն զանոնք բանուորական գունդերու վերածեցին, գործածելով նամբայ շինել տալու, Կովկասի եւ գործողութեան ուրիշ բեմերու մէջ: Այս յոյն զինուորները, ճիշդ Հայերուն պէս, հազարներով մեռան ցուրտէ, անօթութենէ եւ ուրիշ գրկանքներէ: Պահուած գէներու համար, տունէ-տուն նո՛յն խուզարկութիւնները տեղի ունեցան յունական գիւղերու մէջ եւ յոյն այրերը եւ կիները ծեծուեցան եւ չարչարանքներու ենթարկուեցան, ճիշդ ինչպէս որ եղած էին իրենց հայ ընկերները: Յոյներն ալ ենթարկուեցան նո՛յն բռնագրաւումներուն, որոնք ամենամեծ չափով կողոպուտի յանգեցան միայն, իրենց համար ալ, ինչպէս եղած էին Հայերուն: Թիւրքերը փորձեցին յոյն հպատակները իսլամանալու բռնադատել. յոյն աղջիկներ, ճիշդ հայ աղջիկներուն պէս, առեւանգուեցան եւ թիւրք հարեմներու մէջ տարուեցան. յոյն մանչերը գողցուեցան եւ իսլամ տուներու մէջ զետեղուեցան: Յոյները, ճիշդ Հայերուն պէս, ամբաստանուեցան՝ իբր անհաւատարիմ օսմանեան Կառավարութեան. Թիւրքերը զանոնք ամբաստանեցին թէ՛ Մարմարայի անդլիական ընդծովեաններուն պարէն կը հայթայթեն եւ լրտեսութիւն կ'ընեն: Թիւրքերը յայտարարեցին նաեւ թէ՛ Յոյները հաւատարիմ չէին օսմանեան Կառավարութեան հանդէպ եւ ակնդէտ կը սպասէին այն օրուան՝ երբ Թիւրքիայի ներքին մասերու Յոյները Յունաստանի մաս պիտի կազմէին: Այս վերջին վերագրումները անվիճելիօրէն ճշմարիտ էին. Յոյներուն՝ հինգ դարերու ընթացքին՝ Թիւրքերու բազուկներուն տակ ամէնէն անպատմելի բռնաւորութիւններու ենթարկուելէ ետքը, անձկագին սպասելը այն օրուան՝ երբ իրենց երկիրը մայր-հայրենիքին մաս պիտի կազմէր, ակնկալելի էր: Թիւրքերը, ինչպէս Հայերուն ըրած էին, ասիկա պատրուակ նկատեցին՝ բուռն արշաւանք մը գործելու ամբողջ ցեղին վրայ: Ամէն կողմ, Յոյները խուճբերով ժողովուրդեցան եւ թիւրք ոստիկան-զինուորներու կարծեցեալ պաշտպանութեանը տակ, փոխադրուեցան, շատ պարագաներու մէջ հետիոտն, ներքին գաւառները: Թէ այս ձեւով քանի՞ հոգիներ ցիրուցան եղան, որոշապէս ծանօթ չէ, որովհետեւ թուահամարը 200,000էն 1.000,000ի միջեւ կը տարուբերի: Այս կարաւանները մեծ գրկանքներ կրեցին, բայց ընդհանուր ջարդի չենթարկուեցան, ինչպէս եղած էին Հայերը. եւ հաւանօրէն աս է պատճառը որ՝ արտաքին աշխարհը շատ բանի տեղեկացած չէ անոնց մասին: Թիւրքերը Յոյներուն հանդէպ այս լուրջ ակնածութիւնը որեւէ գութի զգացումով չէ որ ցուցուցին: Յոյները, հակադարձօրէն Հայերուն, ունէին Կառավարութիւն մը, որ ոգեւին շահագրգռուած էր իրենց բարօ-

րութիւնովը: Այդ միջոցին, Յեւտոնեան Զինակիցներուն մէջ ընդհանուր վախ մը կար որ՝ Յունաստան պատերազմի պիտի մտնէր Համաձայնութեան կողքին, եւ Փոքր Ասիայի մէջ Յոյներու միահաղոյն ջարդ մը՝ Յունաստանի մէջ անվիճելիօրէն առաջ պիտի բերէր այն տեսակ միտքի վիճակ մը որ՝ իր Գերմանասէր [pro-German] թագաւորը ա՛լ անկարող պիտի ըլլար իր երկիրը չէզոք պահել: Հետեւաբար, պետական քաղաքականութեան խնդիր մըն էր միայն որ՝ Թիւրքիայի յոյն հպատակները փրկեց այն բոլոր խուժուժութիւններէն՝ որոնք Հայերուն գլխուն թափեցան: Բայց Հայերուն տառապանքները շատ աւելի զարհուրելի են եւ ուրիշ գլուխ մը կը կազմեն երկար պատմութեանը մէջ ոճիրներու, որոնց համար քաղաքակրթութիւնը պատասխանատու պիտի բռնէ Թիւրքը:



ԷՆՎԷՐ ՓԱՇԱ

ՆԱԽԿԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ
(Գեներալական Նօթերը Տեսնել՝ էջ 109)


ԻՆ. ԳԼՈՒԽ

ՔԱԼԷԱԴ ԿԸ ՅԱՅՏԻ ԹԷ ԻՆՉՈ՞Ւ «ԿԸ ՏԱՐԱԳՐԷ՝» ՀԱՅԵՐԸ

Հայկական խուժուժութիւններուն պատմութեան՝ իրենց բոլոր զարհուրելի մանրամասնութիւններով մինչեւ ամերիկեան Դեսպալնատուն հասնիլը՝ ատեն անցաւ: Յունվարին եւ Փետրվարին հատակոտոր տեղեկագիրներ սկսան հասնիլ, բայց նախ միտքերը տարուեցան զանոնք նկատել սոսկ նշանները անկարգութիւններու, որոնք հայկական նահանգներու մէջ կը տիրէին տարիներէ ի վեր: Երբ Ուրմիայէն տեղեկագիրներ եկան, թէ՛ Էնվէր եւ թէ՛ Քալէադ մերժեցին զանոնք՝ իբր այլանդակ չափազանցութիւններ. նաեւ երբ, առաջին անգամը ըլլալով, լսեցինք Վանի խառնակութիւնները. այդ թիւրք պաշտօնատարները յայտարարեցին թէ՛ ատոնք սամոսային ըմբոստութենէ աւելի բան մը չէին, զոր իրենք չուտով պիտի զսպէին: Հիմա կը զգամ, ինչ որ այդ առաջին ամիսներուն մէջ նշմարելի չէր, թէ թիւրք իստավարութիւնը որոշած էր այդ լուրերը կարելի եղածին չափ երկար ատեն ծածկել արտաքին աշխարհէն: Նպատակը որոշակի ան էր որ՝ Եւրոպա եւ Ամերիկա հայ ցեղին բնաջնջումը լսէին՝ այդ բնաջնջումը կատարուի լմնալէն ետքը միայն: Որովհետեւ Ամերիկա այն երկիրն էր՝ զոր Թիւրքերը մասնաւորաբար կը փափաքէին անգէտ պահել, անոնք կը զիջանէին ամէնէն անպատկաս խուսափողականներուն, երբ կացութեան վրայ կը խօսէին ինձի կամ պաշտօնէութեանս հետ:

Ապրիլի սկիզբները, կառավարական իշխանութիւնները Գոլիսի մէջ ձերբակալեցին երկու հարիւրի չափ Հայեր եւ զանոնք երկիրին ներսերը քշեցին: Այդ տարազրուողներէն շատերը մտաւորական եւ ընկերային գործիչներ էին, ինչպէս նաեւ կարեւոր դիրքի տէր անձեր՝ ճարտարաբանութիւն եւ դրամական աշխարհին մէջ: Այդ անձերէն շատերը կը ճանչնայի եւ հետեւաբար անձնապէս կը շահագրգռուէի իրենց դժբաղդութիւնով: Բայց երբ անոնց աքտրուելուն մասին Քալէադի խօսեցայ՝ ան պատասխանեց թէ՛ Կառավարութիւնը ինքնապաշտպանութեան համար կը գործէր: Վանի Հայերը, ըսաւ, իբր յեղափոխականներ ցուցուցած են արդէն իրենց կարողութիւնները. գիտէր թէ՛ Գոլիսի այդ գործիչները Ռուսերուն հետ կը թղթակցէին եւ ինք ամէն պատճառ ունէր վախնալու որ՝ անոնք ապստամբութիւն մը յա-

րուցանէին Կեդրոնի Կառավարութեան դէմ: Հետեւաբար, ապահովագոյն միջոցն էր՝ զանոնք էնկիւրի եւ կամ ուրիշ քաղաքներ դրկել: Քալէադ կը ժխտէր թէ՛ ատիկա մէկ մասն էր խորհրդածուած ընդհանուր ծրագիրի մը՝ քաղաքը մաքրելու իր հայ բնակչութենէն, եւ կը հաւատէր որ՝ Պոլիսի հայ հասարակութեան նեղութիւն չպիտի տրուէր: Քայց շատ չանցած երկիրին ներսըէն հասնող տեղեկութիւնները աւելի յատկանշական եւ աւելի վրդովիչ դարձան: Դաշնակից նաւատորմիդին Տարտանէլէն ետ քաշուելը՝ որոշ փոփոխութիւն մը առաջ բերաւ մթնոլորտին մէջ: Մինչեւ այդ առոնք, բազմաթիւ նշաններ կային որ՝ իրերը լաւ չէին ընթանար հայկական նահանգներուն մէջ սակայն, երբ վերջապէս վճռականօրէն հաստատուեցաւ որ՝ Հայաստանի աւանդական բարեկամները՝ Մեծ Բրիտանիա, Ֆրանսա եւ Ռուսիա ոչինչ չէին կրնար ընել՝ օգնելու համար այդ տառապող ժողովուրդին, դիմակը սկսաւ անհետանալ: Ապրիլի մէջ, յանկարծ զրկուեցայ՝ ամերիկեան հիւպատոսներուն հետ հաղորդակցելու համար ծածկագիր գործածելու առանձնաշնորհումէն: Նաեւ ամենախիստ գրաքննութիւն հաստատուեցաւ նամակներուն: Այս տեսակ միջոցներ՝ մի՛այն ան կրնային նշանակել որ՝ Փոքր Ասիայի մէջ դէպքեր կը պատահէին, զորս կառավարական իշխանութիւնները որոշած էին ծածկել: Քայց անոնք չյաջողեցան: Թէեւ ճամբորդելու դէմ ամէն տեսակ արգելքներ հաստատուեցան, բայց կարգ մը Ամերիկացիներ, գլխաւորաբար միսիսոնարներ, յաջողեցան ճամբայ գտնել: Անոնք ժամերով կը նստէին գրասենեակս, եւ, արցունքը հոսելով իրենց երեսէն վար, կը պատմէին ինծի այն սարսափները՝ որոնցմէ անցած էին: Անոնցմէ շատերը, թէ՛ այրեր եւ թէ՛ կիներ, գրեթէ հիւանդացած էին այն տեսարաններէն՝ որոնց ականատես եղած էին: Անոնցմէ ոմանք, ամերիկեան հիւպատոսներէ նամակներ բերին ինծի, որոնք կը հաստատէին իրենց պատմութիւններուն ամէնէն զարհուրելիները, աւելցնելով մանրամասնութիւններ՝ զորս կարելի չէ հրատարակել: Այս բոլոր չլուած տեղեկագիրներուն ընդհանուր ոգին ան էր թէ՛ թիւրք նկարագիրին տարապայման վատթարացումը եւ դիւայնութիւնը, որ դարերու ընթացքին արդէն բաւականաչափ հռչակուած էր, այս անգամ ինքզինքը գերազանցած էր: Մօտ 2,000,000 ժողովուրդը՝ շարդէ եւ անսուաղութենէ եւ աւելի գէշ չարիքներէ փրկելու միակ յոյս մը կար, կ'ըսէին, — ատիկա Միաց-նահանգներու բարոյական ուժն էր: Նահատակ եղող ազգի մը այս փոխանորդները կը յայտարարէին որ՝ եթէ ամերիկեան Դեսպանը չկարենար համոզել Թիւրքերը, որպէսզի կեցնէին իրենց



Մ. ՄԱՌՔԻ ԿԱՌՕՒՒ

Ք Ի Ի Ր Ք Ի Ա Յ Ի
ԻՏԱԼԱԿԱՆ ԴԵՍԱՊԱՆ, 1914ԻՆ

Մ ՔՕԶԷՅ

Ք Ի Ի Ր Ք Ի Ա Յ Ի
ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԴԵՍԱՊԱՆ, 1914ԻՆ

աւերիչ զօրութիւնը . բովանդակ հայ ազգը պիտի անհետանար : Միայն ամերիկեան եւ բնատական միսիսոնարները չէին որ այս անձնական կոչը կ'ընէին: Իրենց գերման ընկերակիցներէն շատերը խնդրեցին ինձմէ միջամտել: Այս մարդիկը եւ կիները կը հաստատէին այն յոռեգոյն դէպքերը՝ զորս լսած էի, եւ անոնք չէին խնայեր ամբաստանելու իրենց հայրենիքը : Չէին ծածկեր այն նուաստացումը՝ զոր իբր Գերման կը զգային, այն իրողութեան պատճառով որ՝ իրենց ազգը զինակից էր ժողովուրդի մը, որ կրնար այդ կարգի խայտառակութիւններ գործել, բայց բաւական լաւ կ'ըմբռնէին գերման քաղաքականութիւնը, զիտնալու համար որ՝ Գերմանիա չպիտի միջամտէր: Անօգուտ էր օգնութիւն ակնկալել Քայզերէն, կ'ըսէին — Ամերիկա պէտք է դադրեցնէ ջարդերը. թէ ոչ՝ անոնք պիտի շարունակուին :

Դրապէս, անշուշտ, ես իրաւունք չունէի միջամտելու : Եթէ կացութեան օրինականութիւնը պաղարիւնով նկատի առնուէր, Թիւրք Կառավարութեան կողմէ Թիւրք հպատակներուն ցուցուած վարմունքը զուտ ներքին խնդիր մըն էր: Եթէ ան չվստէր Ամերիկացիներու կեանքին եւ ամերիկեան շահերուն, ամերիկեան Կառավարութեան չէր վերաբերեր ան: Երբ այս խնդիրին մասին աւազին անգամ արտայայտուեցայ Քալէադի, ան վճռական ձեւով ինծի յիշեցուց այդ պարագան: Այդ տեսակցութիւնը մինչեւ

այդ ստանն ունեցած տեսակցութիւններուս ամէնէն յուզումնալիցներէն մէկն էր : Նոր էր որ ինծի եկած էին երկու միսիօնարներ եւ հաղորդած՝ Գօնիայի ահաւոր դէպքերուն մանրամասնութիւնները : Լսելէ ետքը իրենց պատմութիւնները չկրցայ ինքզինքս զսպել, եւ անմիջապէս Բ. Գուռ գացի : Մէկ ակնարկով նշմարեցի որ՝ Թալէադ իր ամէնէն վայրագ մէկ տրամադրութեանը մէջ էր : Ամիսներով ջանադիր եղած էր ազատ արծակել տալ իր երկու ամէնէն մտերիմ բարեկամները, էյուպ Սապրի եւ Զինուռ, որոնք Անգլիացիներու կողմէ իրր պատերազմական գերի Մալթա վար դրուած էին : Այս խնդիրին մէջ իր ծախողութիւնը մշտական սրտնեղութեան եւ գրգռութեան առիթ եղած էր երեսն . շարունակ այդ նիւթին վրայ կը խօսէր, շարունակ նոր առաջարկներ կ'ընէր՝ իր բարեկամները Թիւրքիա վերադարձնելու եւ շարունակ իմ օժանդակութիւնս կը խնդրէր : Թիւրք գործապետը [Boss] իր բացակայ բարեկամներուն վրայ խորհած ատեն այնչափ կը կատողէր որ՝ սովորաբար այդ արտայայտութիւններուն ակնարկութիւն կ'ընէինք՝ Թալէադի «էյուպ Սապրիի վիճակը» ըսելով : Մասնաւորաբար այդ առտուն, ներքին գործերու նախարարը իր ամէնէն յոռի «էյուպ Սապրիի վիճակ»ներէն մէկուն մէջն էր : Անգամ մըն ալ ջանք ըրած էր արտոնականներուն արծակումին համար եւ անգամ մըն ալ ծախողած էր : Սովորականին համեմատ, ան ջանաց վերջին ծայր հանդարտութիւն պահել եւ կենցաղազէտ ըլլալ ինծի հանդէպ, բայց իր կարծ, խածան խօսքերը, իր պուրջօտի դաժանութիւնը, եւ սեղանին վրայ տնկուած դաստակները՝ կը ցուցնէին որ՝ աննպաստ պահ մըն էր իր մէջ արթնցնելու՝ որեւէ զինութեան կամ խղճահարութեան զգացում : Իրեն խօսեցայ նախ Քանատացի միսիօնարի մը՝ Տքթ. Մաք Նօթընի մասին, որ Փոքր Ասիայի մէջ խիստ վարմունքի մը կ'ենթարկուէր :

— Այդ մարդը անգլիացի գործակալ մըն է, պատասխանեց ան, եւ մենք ապացոյցներ ունինք այդ մասին :

— Ըսէք տեսնեմ այդ ապացոյցները, ըսի :

— Ո՛չ մէկ Անգլիացիի կամ ո՛չ մէկ Քանատացիի համար բան մը չպիտի ընենք, պատասխանեց ան, մինչեւ որ չարծակեն էյուպը եւ Զինուռը :

— Բայց դուք խոստացած էք Ամերիկացիներու ծառայութեան մէջ գտնուող Անգլիացիներու հետ վարուիլ՝ իրր Ամերիկացիներու, պատասխանեցի :

— Կրնայ ըլլալ, աւելցուց Նախարարը, բաց խոստում մը յաւիտեան պահուելու սահմանուած չէ : Հիմա ետ կ'առնեմ այդ խոստումը, խոստումի մը համար ժամանակի սահման մը կայ :

— Բայց եթէ խոստում մը պարտադրիչ չէ, ի՞նչ է ուրեմն ան, հարցուցի :

— Երաշխատութիւն մը, պատասխանեց Թալէադ վայրկենապէս :

Թրքական այս նուրբ գատորոշութիւնը քնազանցական որոշ արժէք մը կը կրէր, բայց այդ միջոցին խօսելիք աւելի կենսական նիւթեր ունէի : Որով, սկսայ խօսիլ Գօնիայի Ամերիկացիներուն մասին : Հազիւ թէ խօսք առած էի երբ Թալէադի ընթացքը աւելի կուտարար դարձաւ : Իր աչքերը փայլատակեցին. ծնօտները սեղմեց. դէպի ինծի ծռեցաւ եւ գոչեց .

— Ամերիկացի՞ են անոնք :

Այս հարցումին ոգին դիւանագիտական չէր երբեք . ատիկա ինծի հասկցնելու կերպ մըն էր միայն որ՝ իմ խառնուելիք խնդիրս չէր ադ : Թալէադ քանի մը խօսքով բացայայտօրէն հասկցուց ատիկա :

— Հայերը վստահելի չեն, ըսաւ . ասկէ գտաւ, իրենց մասին մեր ընկիւրը՝ Միաց.-Նահանգներուն խառնուելիք գործը չէ :

Պատասխանեցի թէ՛՝ ես Հայերուն բարեկամ էի եւ ազդուած՝ անոնց հանդէպ ցուցուած վարմունքէն : Բայց Թալէադ գլուխը շարժեց եւ մերժեց այդ նիւթին մասին խօսիլ : Զգացի որ՝ այդ միջոցին նիւթին վրայ պնդելով բան մը չպիտի շահուէր : Որով, խօսեցայ ուրիշ անգլիական հպատակի մը նպաստին, որուն հանդէպ լաւ վարմունք մը չէր ցուցուեր :

— Անգլիացի է ան . չէ՞, պատասխանեց Թալէադ : Ուրեմն անոր մասին պիտի շարժիմ ինչպէս որ ինծի հաճոյ թուի :

— Եթէ կը փափարիք կերէ՞ք ուրեմն զայն, պատասխանեցի :

— Ո՛չ, ըսաւ Թալէաթ, չպիտի կրնայի մարսել զայն :

Բոլորովին անփոյթ վիճակ մը ունէր : Gott strafe England! գոչեց ան — գործածելով իր զիտցած գերմաներէն քանի մը խօսքերէն մէկը : Գալով ձեր Հայերուն, մենք ապագային կարեւորութիւն չենք տար : Մենք միայն ներկային մէջ կ'ապրինք ! Գալով Անգլիացիներուն, կը փափարիմ որ՝ Ուաշինկոնը հեռագրէք թէ՛ անոնց մասին ո՛ր եւ է բան չպիտի ընենք, մինչեւ որ իրենք էյուպ Սապրին եւ Զինուռը ազատ չթողուն !

Յետոյ, խոնարհելով, դերասանի ձեւ մը ըրաւ, ձեռքը սիրտին վրայ սեղմեց եւ անգլիերէն լեզուով — կարծեմ գիտցած ամբողջ անգլիերէնը ադ էր — ըսաւ .

— էյուպ Սապրի — he—my—brudder !

Հակառակ ասոր, անգամ մըն ալ Տքթ. Մաք Նօթընի դատը պաշտպանեցի :

Անիկա Ամերիկացի չէ՛, ըսաւ Թալէադ, Քանատացի է ան :

— Գրեթէ նոյն բանն է, ըսի :

— Լա՛ւ, պատասխանեց Թալէադ, եթէ ես զինքը ազատ արձակեմ, կը խոստանա՞ք որ Միաց.-Նահանգները Քանատան կցեն :

— Կը խոստանամ, ըսի, եւ երկուքս մէկ Վանդացիներ այս պզտիկ կատակին :

— Ամէն անգամ որ դուք հոս կու գաք, ըսաւ վերջապէս Թալէադ, միշտ ինձմէ բան մը կը գողնաք : Շա՛տ աղէկ, ձեր Մաք Նոթընը ձեզի կու տամ !

Անշուշտ այս տեսակցութիւնը քաջալերիչ սկզբնաւորութիւն մը չէր՝ Հայերու խնդիրին վերաբերումով : Բայց Թալէադ միշտ «էյուպ Սապրիի վիճակ»ի մը մէջ չէր : Տղու մը չափ թեթեւութիւնով մէկ յուզումէն միւսին կ'անցնէր : Օր մը վայրագ եւ անդրդուելի էր . յաջորդ օրը՝ աղմկարարօրէն զուարթախոհ եւ դիւրահաղորդ : Հետեւաբար, խոհեմութիւնը կը հարկադրէր որ՝ սպասէի իր հաճոյական պահերէն մէկուն՝ իրեն ներկայացնելէ առաջ այն նիւթը, որ իր բնաւորութեան ամբողջ բարբարոսութիւնը կ'արթնցնէր : Վերեւ յիշատակուած տեսակցութենէն քանի մը օր ետքը, կրկին Թալէադի գացի : Է՛ն առաջ զգրոցը բացաւ եւ դուրս քաշեց բուռ մը դեղին հեռագիրներ :

— Ինչո՞ւ այս դրամը մեզի չէք տար : ըսաւ քմծիծաղով մը :

— Ի՞նչ դրամ հարցուցի :

— Ամերիկայէն ձեզի հեռագիր մը կայ, որով Հայերու համար խոշոր գումար մը կը դրկուի ձեզի : Դուք անոնց յանձնելու չէք զայն . մ'աղի՛ թիւրքերուս տուէք այդ դրամը . մենք ալ անոնց չափ ստիպողաբար պէտք ունինք ատոր :

— Ատանկ հեռագիր մը չեմ ստացած ես, պատասխանեցի :

— Մ, ո՛չ, չէք ստացած, բայց պիտի ստանաք, պատասխանեց : Դուք գիտէ՞ք որ՝ ձեր հեռագիրները նախ ինծի կու գան : Զանոնք կարդալէ ետքը միայն ձեզի կը դրկեմ :

Այս հաւաստումը տառացի ճշմարտութիւնն էր : Ամէն առտու, Պոլիս հասած բոլոր ոչ-ծածկագիր հեռագիրները, կը դրկուէին Թալէադին, որ զանոնք կը կարդար, անկէ ետքը հրաման կու տար որ՝ անոնք իրենց հասցէներուն դրկուին : Որոշ էր որ՝ նոյն իսկ Դեսպաններու հեռագիրները բացառութիւն չէին կազմեր, թէեւ, անշուշտ, ծածկագիր հեռագիրներուն միջամտութիւն չէր կատարուեր : Ուրիշ որեւէ առիթով՝ պիտի բողբոջէի իմ իրաւունքներուս մէջ այդ ձեռնամուխութեան դէմ . բայց իմ թղթակցութիւնս գողնալու մասին Թալէադի խոստովանուած անկեղծու-

թիւնը եւ նոյն իսկ իմ անձնական հեռագիրներս աչքիս դէմ ճօճելը՝ ինծի սքանչելի առիթ մը ընծայեց արգիլուած նիւթին մօտենալու :

Բայց, ինչպէս շատ մը ուրիշ առիթներով, այս անգամ ալ, Թալէադ խուսափողական եւ օծիքը ձեռք չտուող դիրք մը առաւ, եւ շատ տհաճութիւն արտայայտեց ան շահագրգռութեան համար՝ զոր Ամերիկացիները Հայերուն կը ցուցնէին : Բացատրեց իր քաղաքականութիւնը այն հիմին վրայ թէ՛ Հայերը մշտական յարաբերութեան մէջ էին Ռուսերուն հետ : Այն վճռական համոզումը՝ զոր այս խօսակցութիւնը միտքիս վրայ թողուց, սա՛ էր թէ՛ Թալէադ ամէնէն ոխերիմ թշնամին էր հայ հալածուած ցեղին : «Թալէադ այն տպաւորութիւնը գործեց իմ վրաս որ, — այս նախաբանը կը գտնեմ օրագիր-յուշատետրիս մէջ, 3 Օգոստոս թուականով, — կ'ուզէ ճգմել դժբաղդ Հայերը» : Ան յայտնեց ինծի թէ՛ Միութիւն եւ Առաջդիմութիւն Քօմիթէն խնամքով քննած էր խնդիրը՝ բոլոր մանրամասնութիւններով եւ հետապնդուած քաղաքականութիւնը ան էր՝ զոր պաշտօնապէս որդեգրած էին : Ըսաւ թէ՛ պէտք չէր որ այն գաղափարը կազմէի թէ՛ տարագրութիւնները հապճեպով որոշուած էին . իրականութեան մէջ, անոնք արդիւնքն էին երկար եւ խոհուն խորհրդակցութիւններու : Իմ կրկնակ կոչերուս թէ՛ ինք պէտք էր զութ ցուցնել այդ ժողովուրդին, ան կը պատասխանէր երբեմն լրջօրէն, երբեմն բարկացոտ եւ երբեմն շատախօսարար :

— Օր մը պիտի գամ եւ ամբողջ հայկական խնդիրին վրայ պիտի խօսիմ ձեզի հետ, ըսաւ անգամ մը : Յետոյ ցած ձայնով եւ թիւրքերէն լեզուով աւելցուց .

— Բայց այդ օրը երբեք չպիտի գայ !

Ուրիշ անգամ մը հարցուց .

— Բայց ինչո՞ւ այդչօ՞ւի շահագրգռուած էք Հայերով : Դուք Հրեայ էք . իսկ այդ մարդիկը Քրիստոնեայ են : Մահմետականները եւ Հրեաները միշտ հաշտօրէն կ'ապրին իրարու հետ : Մենք Հրեաներու հետ այնչափ լաւ կը վարուինք հոս : Գանգատելու ի՞նչ ունիք : Ինչո՞ւ չէք թողուր որ՝ այդ Քրիստոնեաներուն ուզածնիս ընենք :

Շատ անգամ նշմարած էի որ՝ թիւրքերը ամէն խնդիր պարզապէս նկատի կ'առնեն իբր անձնական նիւթ . սակայն նորէն այդ տեսակէտը զիս շատ զարմացուց . թէեւ ան կատարեալ մէկ ցոլացումն էր թիւրք մտայնութեան : Այն իրողութիւնը թէ՛ ցեղի եւ կրօնքի ամէն նկատումէ վեր՝ մարդկութեան եւ քաղաքակրթութեան պէս բաներ կան, ամենեւին չի մտներ իրենց միտքին

մէջ: Անոնք կ'ըմբռնեն որ՝ Քրիստոնեայ մը Քրիստոնեայի մը համար եւ Հրեայ մը Հրեայի մը համար կուռի. բայց արդարութեան եւ ազնուութեանն պէս վերացումներ՝ իրերու իրենց ըմբռնումին մէջ տեղ չունին:

— Դուք կ'երեւայ չէ՞ք ըմբռներ թէ, պատասխանեցի, ես հոս եկած եմ ո՛չ թէ իբր Հրեայ, այլ իբր ամերիկեան Դեսպան: Իմ երկիրս կը բովանդակէ 97,000,000է քիչ աւելի Քրիստոնեաներ եւ 3,000,000է քիչ պակաս Հրեաներ: Այնպէս որ, զոնէ իմ դեսպանական իշխանութիւնովս՝ ես հարիւրին 97 Քրիստոնեայ եմ: Բայց խնդիրը ատոր վրայ չէ: Ես ձեզի չեմ դիմեր որեւէ ցեղի կամ կրօնքի անունով, այլ միայն իբր մարդկային էակ: Դուք ինձի շատ անգամներ յայտնած էք որ՝ կը փափաքիք թիւրքիան ժամանակակից առաջդիմական աշխարհին մասը հանդիսացնել: Այն կերպը՝ որով դուք կը վարուիք Հայերուն հանդէպ, թոյլ չպիտի տայ ձեզի այդ ցանկութիւնը իրականացնել. այդ կերպը ձեզ ետամուսց եւ ետաշրջական ժողովուրդներու դասակարգին մէջ կը մտցնէ:

— Իսկ Ամերիկացիներուն հետ ալ աղէկ կը վարուինք մենք, ըսաւ թալէադ: Չեմ զիտեր թէ՛ ինչո՞ւ կը գանգատիք:

— Բայց Հայերու դէմ ձեր հալածանքներէն նախատուած կը զգան Ամերիկացիները: Դուք ձեր սկզբունքները պէտք է հիմնէք մարդկայնասիրութեան [humanitarianism] վրայ, ո՛չ թէ ցեղային խտրականութեան. եթէ ո՛չ՝ Միաց.-Նահանգները ձեզ բարեկամ եւ հաւասար չպիտի նկատեն: Նաեւ, դուք պէտք է ըմբռնէք այն մեծ փոփոխութիւնները՝ որոնք տեղի կ'ունենան ամբողջ աշխարհի Քրիստոնեաներուն մէջ: Անոնք կը մոռնան իրենց վէճերը, եւ բոլոր յարանուանութիւնները մէկի կը վերածուին: Դուք կ'արհամարհէք ամերիկացի միսիօնարները, բայց մի՛ մոռնաք որ՝ Ամերիկայի է՛ն ընտրուած դասակարգն է որ՝ կը պաշտպանէ անոնց կրօնական գործը, ինչպէս նաեւ անոնց կրթական հաստատութիւնները: Ամերիկացիները միայն դրամի ետեւէ վազող նիւթապաշտներ չեն. այլ անոնք լայնօրէն մարդկայնասէրներ են, եւ շահագրգռուած՝ բովանդակ աշխարհի վրայ արդարութեան եւ քաղաքակրթութեան տարածուելուն համար: Այս պատերազմը վերջ գտնելէն ետքը, դուք նոր կացութեան մը դէմ պիտի գտնուիք: Դուք կ'ըսէք թէ՛՝ եթէ յաղթական ելլէք, կրնաք աշխարհի ասպարէզ կարդալ. բայց կը սխալիք: Դուք ամէն կողմ հանրային կարծիքը ձեզի դէմ պիտի գտնէք, մանաւանդ Միաց.-Նահանգներուն մէջ: Մեր ժողովուրդը երբեք չպիտի մոռնայ այս ջարդերը: Ամերիկացիները միշտ ոխ պիտի պահեն թիւրքիայի մէջ Քրիստոնեա-

ներուն միահաղոյն քնաջնջումին համար: Անոնք զայն ուրիշ բան չպիտի նկատեն, բայց եթէ կամաւոր տերազորութիւն եւ լրջօրէն պիտի դատապարտեն բոլոր այն մարդիկը՝ որոնք անոր պատասխանատուներն են: Դուք կարող չպիտի ըլլաք ինքզինքնիդ պաշտպանիդ՝ ձեր քաղաքական կանոնագիրին ապաւինած եւ ըսել թէ՛՝ դուք իբր ներքին գործերու նախարար գործեցէք եւ ո՛չ իբր թալէադ: Դուք կ'արհամարհէք արդարութեան ամէն զաղափար, այն իմաստով՝ որով մենք կ'ըմբռնենք զայն մեր երկիրին մէջ:

Բաւական զարմանալի էր որ՝ այս դիտողութիւնները չլիրաւորեցին թալէադը, բայց իր որոշումն ալ չխախտեցին, իբր թէ քարէ պատի մը հետ խօսած ըլլայի: Իմ զաղափարական տեսութիւններէս՝ թալէադ անմիջապէս որոշ բանի մը յանգեցաւ:

— Հայերը, ըսաւ ան, մերժեցին զինսթափ ըլլալ, երբ մենք ազդարարեցինք: Անոնք մեզի դիմադրեցին Վանի եւ Զէյթունի մէջ եւ օժանդակեցին Ռուսերուն: Միակ միջոց մը կայ՝ որով ապագային մէջ կրնանք ինքզինքնիս պաշտպանել անոնց դէմ, եւ ատիկա միայն զանոնք տարագրելն է:

— Ենթադրեցէք որ՝ մէկ քանի Հայեր դաւած ըլլան ձեզի դէմ, ըսի, ատիկա պատճա՞ռ մըն է ամբողջ ցեղը ընայնջելու: Ատիկա արդարացո՞ւմ մըն է՝ անմեղ կիներ եւ մանուկներ տառապեցնելու:

— Այդ բաները անխուսափելի են, պատասխանեց:

Ինձի յայտնած այս նկատողութիւնը այնչափ լուսաբանիչ չէր, որչափ ա՛ն՝ զոր թալէադ ետրվն կ'ընէր Պերդինիս թակիպրոյի թղթակիցի մը, որ նոյն հարցումը ուղղած էր իրեն: Այդ տեսակցութեան համեմատ, ան ըսած է. «Մենք պարսաւուեցանք՝ զանազանութիւն չդնելուս համար՝ անմեղ եւ մեղաւոր Հայերու միջեւ. բայց ատիկա բացարձակօրէն անկարելի էր, նկատի առնելով այն իրողութիւնը թէ՛՝ անոնք որ այսօր անմեղ էին, կրնային վաղը մեղաւոր ըլլալ!»:

Պատճառ մը՝ որքան համար թալէադ չէր կրնար այս նիւթին վրայ ինձի հետ ազատօրէն խօսիլ, ա՛ն էր որ՝ դեսպանական մարմինի այն անդամը՝ որ թարգմանի պաշտօնը կը կատարէր՝ ինքն ալ Հայ մըն էր: Ասոր համար, օգոստոսի սկիզբը, անձնական լրաբեր մը դրկեց ինձի, հարցնելով թէ՛՝ արդեօք չէի՞ կրնար զինքը առանձին տեսնել. կը յայտնէր թէ՛՝ ինքն է որ պիտի հայթայթէր թարգմանը: Առաջին անգամն էր որ՝ թալէադ կ'ընդունէր թէ՛՝ Հայերու հանդէպ իր վարմունքը խնդիր մըն էր՝ որուն խառնուելու իրաւունք ունէի: Տեսակցութիւնը տեղի ունեցաւ երկու օր ետքը: Անանկ պատահեցաւ որ՝ թալէադի տուած վերջին այցելութենէս ետքը՝ մօրուքս ածիլած էի: Ներս մտնելուս

պէս, փիթխարի նախարարը սկսաւ խօսիլ իր սովորական կատակարան ձեւովը.

— Նոր երիտասարդ եղեր էք, ըսաւ, հիմա այնչափ երիտասարդ էք որ՝ ա՛յ չեմ կրնար ձեզի խորհուրդ հարցնելու դիմել:

— Մօրուքս ածիլեցի, պատասխանեցի, որովհետեւ ճերմկեցաւ ան — ճերմկեցաւ Հայերու հանդէպ ձեր վարմունքին պատճառով:

Այս մեծարանքներու փոխանակութենէն ետքը, ձեռուելիք խնդիրը ձեռք առինք:

— Այսօր ձեր զայր խնդրեցի, սկսաւ Քալէադ, որպէս զի կարենամ բացատրել մեր կացութիւնը՝ ամբողջ հայկական խնդիրին մասին: Հայերու հանդէպ մեր դիտողութիւնները երեք որոշ կէտերու վրայ հիմնած ենք: Առաջին. Հայերը հարստացած են՝ Քիւրքերու վնասովը: Երկրորդ. անոնք որոշած են մեր վրայ բռնակալի եւ անջատ պետութիւն մը հիմնել: Երրորդ. անոնք բացէ-բաց օժանդակած են մեր թշնամիներուն: Անոնք Կովկասի մէջ օգնած են Ռուսերուն, եւ մեր ծախողութիւնը լիովին կը բացատրուի իրենց գործքերովը: Հետեւաբար, մենք եկած ենք այն անդառնալի որոշումին որ՝ զանոնք անգոր դարձնենք, այս պատերազմը վերջանալէ առաջ:

Այս երեք կէտերուն ամէնքն ալ ջրելու համար առատ փաստեր ունէի: Քալէադի առաջին առարկութիւնը խոստովանութիւն մըն էր միայն թէ՛ Հայերը աւելի՛ ճարտարագործ էին եւ աւելի կարող, քան բթամիտ եւ ծոյլ Քիւրքերը: Զարդը՝ իբր միջոց գործի մրցակցութիւնը փճացնելու, անկասկած ինքնաախպ մտածում! մըն էր: Իր գլխաւոր մեղադրանքը թէ՛ Հայերը «կը դաւէին» Քիւրքիայի դէմ եւ բացայայտօրէն կը բարեկամանային Քիւրքիայի թշնամիներուն հետ, պարզապէս կը նշանակէր — երբ ան վերածուէր իր սկզբնական տարրերուն — որ Հայերը միշտ եւրոպական տէրութիւններուն կը դիմէին՝ զիրենք պաշտպանելու համար գողութեան, սպանութեան եւ բռնագործութիւններու դէմ: Հայկական Հարցը, նման շատ մը ցեղային հարցերու, արդիւնքն էր դարաւոր յոռի վարչութեան եւ անարդարութեան: Միակ լուծում մը կրնար ըլլալ անոր, — ստեղծուիմը կառավարութեան կանոնաւոր դրութեան մը, ուր բոլոր քաղաքացիները հաւասար կերպով կառավարուէին եւ ուր բոլոր չարագործութիւնները պատժուէին իբր արարքները անհատներու եւ ո՛չ թէ իբր արարքները ժողովուրդներու: Երկար ատեն փաստարանեցի այս եւ նման տեսակէտներու շուրջը:

— Անօգուտ է ձեր փաստելը, պատասխանեց Քալէադ, մենք արդէն Հայերու երեք քառորդին գործը կարգադրած ենք. Պիթ-

լիսի, Վանի եւ Էրզրումի մէջ բնաւ մարդ մնացած չէ: Քիւրքերու եւ Հայերու միջեւ ատելութիւնը ներկային այնչափ ծաւալուն է որ՝ ստիպուած ենք Հայերուն գործը լմնցնել: Եթէ ատանկ չընենք, Հայերը իրենց վրէժը պիտի լուծեն:

— Եթէ չէք ազդուիլ մարդկային նկատումներէ, պատասխանեցի, խորհեցէ՛ք նիւթական կորուստին վրայ: Հայերը ձեր գործի մարդերն են: Անոնց ձեռքն են ձեր ճարտարարուեստին շատ ճիւղերը: Անոնք են ամէնէն շատ տուրք վճարողները: Վաճառականական տեսակէտով՝ առանց անոնց՝ ի՞նչ վիճակի պիտի մատնուէիք դուք:

— Առեւտրական կորուստին մասին բնաւ փոյթ չենք ընք մենք, պատասխանեց Քալէադ: Մենք այդ բոլորը՝ հաշուած ենք եւ գիտենք թէ՛ վնասը հինգ միլիոն ոսկին չպիտի անցնի: Այդ մասին չենք մտահոգուիլ մենք: Ես ձեր հոս գալը խնդրեցի, որպէսզի ձեզի տեղեկացնեմ թէ՛ մեր հայկական քաղաքականութիւնը բացարձակօրէն որոշուած է եւ ոչինչ չկրնար զայն փոփոխել: Անատուլի ո՛րեւէ կողմը ա՛յ Հայ չենք ուզեր: Անոնք կրնան անապատին մէջ ապրիլ, բայց ուրիշ ո՛չ մէկ տեղ:

Նորէ՛ն ջանացի համոզել Քալէադը թէ՛ Հայերու հանդէպ ցուցուած վարմունքը Քիւրքիան կը փճացնէր աշխարհի աչքին, եւ թէ՛ այս երկիրը ա՛յ երբեք կարող չպիտի ըլլար փրկուիլ իր անպատուութենէն:

— Զարհուրելի սխալ մը կը գործէք դուք, ըսի, եւ այս յայտարարութիւնը երբ անգամ կրկնեցի:

— Այո՛, մենք կրնանք սխալներ գործել, պատասխանեց, բայց շրթունքները սեղմօրէն կծկեց եւ զլուխը թօթկեց — երբեք չենք զոջար:

Հայերու մասին Քալէադի հետ շատ մը խօսակցութիւններ ունեցայ, բայց երբեք չյաջողեցայ ամենաթեթեւ չափով իր սիրտը շարժել: Ան միշտ կը վերադառնար այն կէտերուն՝ զորս պարզած էր այս տեսակցութեան միջոցին: Զափազանց պատրաստակամ էր գոհացում տալու Ամերիկացիներու եւ նոյն իսկ Ֆրանսացիներու եւ Անգլիացիներու նպաստին կատարած ո՛րեւէ խնդրանքիս, բայց ո՛րեւէ կարեւոր զեղոյութիւն չէի կրնար ձեռք բերել Հայերու մասին: Միշտ ինձի անանկ կ'երեւար որ՝ այս խնդիրին մէջ անձնապէս շատ խոր կերպով զգածուած էր, եւ Հայերու հանդէպ իր հակառակութիւնը կը թուէր աւելնալ, ո՛րչափ անոնց տառապանքները կ'աւելնային: Օր մը, մասնաւոր Հայու մը վրայ խօսած ատեն, Քալէադի ըսի թէ՛ կը սխալէր այդ անձը Քիւրքերու թշնամի նկատելով, թէ՛ ան իրապէս իրենց բարեկամ էր:

— Ո՛չ մէկ Հայ մեր բարեկամը կրնայ ըլլալ՝ Հայերուն մեր ըրածներէն ետքը, պատասխանեց Քալէազ :

Օր մը , Քալէազ խնդրանք մը ըրաւ . թերեւս ամէնէն զարմանալի բանը՝ զոր երբեք լսած ըլլայի : «Տը Նիու Էօֆ Լայֆ Ինշուրենս Քըմբրի՝» եւ «Տը Իստիքիզ Լայֆ օլ Նիու Եօրֆ» տարիներով կարեւոր գործեր ըրած էին Հայերու մէջ : Այն մեծ չափը՝ որով անոնք իրենց կեանքերը կ'ապահովագրէին , ուրիշ ապացոյց մըն էր միայն իրենց խնայասիրական սովորոյթներուն :

— Կուզեմ որ , ըսաւ Քալէազ , ամերիկեան կեանքի ապահովագրական ընկերութիւններուն պարտադրէք՝ մեզի դրկել իրենց ապահովագրականներուն կատարեալ մէկ ցուցակը : Ներկայիս անոնք ամէնքն ալ իրապէս մեռած են . նաեւ իրենց ժառանգորդները մնացած չեն՝ դրամ ստանալու համար : Որով, անշուշտ , ամբողջ դրամը կ'իջնայ Պետութեան : Ներկայիս, ժառանգորդը Կառավարութիւնն է : Պիտի ընէ՞ք ըսածս :

Այ չափը անցած էր . ինքզինքս չկրցայ զսպել :

— Ինծմէ այդ տեսակ ցուցակ չախտի ստանաք , ըսի . եւ ոտքի ելլելով մեկնեցայ :

Հայերու վերորերորդ ուրիշ դրուագ մը Քալէազը իր ամէնէն կատարի վիճակներէն մէկուն մատնեց : Սեպտեմբերի վերջերը , Տկն . Մօրկընթաու Ամերիկա մեկնեցաւ : Հայերու տառապանքները մեծապէս չարարած էին իր միտքը , եւ ան հայրենիք մեկնեցաւ , ճշմարտապէս այն պատճառով որ՝ ա՛յ երկար չէր կրնար տոկալ այս տեսակ երկիրի մը մէջ ապրելու : Բայց որոշեց իր հաշիւին վերջին բարեխօսութիւն մը ընել՝ այդ խեղճ ժողովուրդին համար : Իր համբան զեւրոյ Պուլկարիայէն կ'անցընէր եւ մօտէն տեղեկութիւն ստացած էր որ՝ Պուլկարիայի Էլէօնօր թագուհին ուրախ պիտի ըլլար իր այցելութիւնը ընդունելով : Թերեւս Տկն . Մօրկընթաուի հասարակական գործերով շահագրգռուիլը քաջածանօթ ըլլալէն առաջ եկած էր այդ հրաւերը : Էլէօնօր թագուհին բարձր զարգացումի տէր կին մըն էր , որ լսուր եւ մենակեաց կեանք մը կը վարէր . եւ որ իր ժամանակին մեծ մասը կը վատնէր Պուլկարիայի չքաւոր ժողովուրդին կացութիւնը բարելաւելու ջանքին : Ամերիկեան քաղաքներու ընկերային գործերուն մասին ամէն բանի ծանօթ էր . եւ բանի մը տարի առաջ Միաց.-Նահանգները այցելելու իր բոլոր ծրագիրները պատրաստած էր , ուսումնասիրելու համար ամէնէն առաջ մեր հաստատութիւնները : Տկն . Մօրկընթաուի այցելութեան միջոցին , թագուհին Նիւ-Եօրքի շէնրի Մթրիթ Հաստատութիւնէն երկու ամերիկացի հիւանդապահուհիներ ունէր , որոնք կը մարզէին խումբ մը պուլկար աղջիկներ , Ամերիկեան Կարմիր Նաչի մէքոններով :

Կինս թագուհին այցելելով՝ գլխաւորաբար փափաքը ունեցած էր որ՝ մէկ կնոջմէն միւսին միջոցով՝ կարենայ պաշտպանութիւն մը կատարել Հայերուն համար : Այդ միջոցին , Պուլկարիայի պատերազմի մտնելու խնդիրը տազնապալի աստիճանի մը հասած էր , եւ Թիւրքիա պատրաստ էր զիջողութիւններ ընելու՝ Պուլկարիան իբր զինակից շահելու համար : Հետեւաբար , յարմար պահ մըն էր այդ տեսակ դիմում մը կատարելու :

Թագուհին Տկն . Մօրկընթաուէն ընդունեց անպաշտօն կերպով , եւ կինս ժամի մը չափ խօսեցաւ : Թագուհին հետ , պատմելով անոր ամէն բան՝ Հայերու մասին : Իր ըրածներէն շատերը բոլորովին նոր էին թագուհին : Այս խնդիրին մասին տակաւին շատ քիչ բան հրատարակուած էր եւրոպական մամուլին մէջ . եւ Էլէօնօր թագուհին ճիշդ այն կարգի կ'ինտրէն էր՝ որոնցմէ ճշմարտութիւնը կը ծածկուէր , կարելի եղածին չափ երկար առեւն : Տկն . Մօրկընթաու թագուհին պարզեց հայ կիներու եւ մանուկներու հանդէպ ցուցուած վարմունքին մասին բոլոր իրողութիւնները , եւ անկէ խնդրեց Հայերու նպատին միջամտել : Մինչեւ անգամ Տկն . Մօրկընթաու անյատի առաջ գնաց որ՝ զգացուց թէ՛ սոսկալի բան մը պիտի ըլլար Պուլկարիայի համար , — որ ինքն ալ անցեալին մէջ՝ Թիւրքերու կողմէ՛ նման վայրագութիւններու ենթարկուած էր , — հիմա պատերազմի մէջ անոնց զինակիցը դառնայ : Էլէօնօր թագուհին մեծապէս ազդուեցաւ : Ան շնորհակալութիւն յայտնեց կնոջս՝ պարգևուն համար այդ ճշմարտութիւնները , եւ յայտնեց թէ՛ անմիջապէս պիտի բարեխօսէր եւ հետամուտ պիտի ըլլար զիտնալու թէ՛ կարելի՞ էր բան մը ընել :

Ճիշդ այն միջոցին , երբ Տկն . Մօրկընթաու կը պատրաստուէր մեկնիլ , տեսաւ որ՝ Մէլքէմպուրկի Դուքսը դուռին բով ցցուած էր : Այդ միջոցին Դուքսը Սօֆիա կը գտնուէր . ջանալով Պուլկարիայի պատերազմի մասնակցութիւնը ապահովել : Թագուհին՝ Դուքսը Տկն . Մօրկընթաուի ներկայացուց : Նորին Բարձրութիւնը քաղաքավարօրէն վարուեցաւ . բայց իր դէմքը պաղ եւ վիրաւորուած երեւոյթ մը ունէր : Իր ամբողջ վարմունքը , մասնաւորաբար այն խոժոռ ակնարկները՝ զորս կ'ուզէր Տկն . Մօրկընթաուի , կը ցուցնէին որ՝ խօսակցութեան մեծագոյն մասը լսած էր ! Մինչդեռ ինք իր բոլոր ջանքերը կը թափէր՝ Պուլկարիան Գերմանիայի կողքին պատերազմի մտցնելու , զարմանալի չէր որ՝ հաճոյք չզգար այն յոյսէն՝ զոր Տկն . Մօրկընթաու կը յայտնէր թագուհին՝ որպէսզի Պուլկարիա չզինակցի Թիւրքիայի հետ :

Էլէօնօր թագուհին անմիջապէս զբաղեցաւ հայկական դատով , եւ , իբր արդիւնք , Թիւրքիայի պուլկար Դեսպանին հրահանգ

տրուեցաւ բողոքելու՝ գործուած վայրագութիւններուն դէմ: Այս բողոքը ոչ մէկ դեր չունեցաւ, ըսյց Քալէաղի յանկարծական զայրոյթը զրգուեց՝ ամերիկեան Դեսպանին դէմ: Մէկ քանի օր ետքը, երբ ընթացիկ գործերու համար Բ. Դուռ գացի, Քալէաղը գտայ ծայրայեղօրէն յոռի տրամադրութեան մը մէջ: Իմ հարցումներէս շատերուն՝ պատասխանեց վայրենօրէն եւ միավանկ բառերով: Ետքէն տեղեկացայ որ՝ Տկն. Մօրկընթաուի՝ Քազուհիին մօտ կատարած բարեխօսութիւնն էր որ զինքը այդ վիճակին մատնած էր: Սակայն, քանի մը օրէն, ամէն ատենէ աւելի զուարթախոհ դարձաւ, որովհետեւ Պուլկարիա Թիւրքիայի կողմը անցած էր:

Հայերու հանդէպ Քալէաղի ընթացքը կը խտանայ՝ բարեկամներուն ուղղած իր սա յոխորտագին պոռոտախօսութեանը մէջ. «Հայկական խնդիրը լուծելու տեսակէտով՝ երեք ամսուան մէջ ես աւելի գործ կատարեցի, քան Ապտիւլ-Համիտ երեսուն տարուան մէջ!»



ԽԱԼԻԼ ՊԷՅ

ԹՐԲԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՆԱԽԱԳԱՀ ՍԻ ԺԷՕՆ ԹԻԻՐԲԵՐՈՒ
«ԼԻՏԸՐ»—ՍՏԲԷՆ ԱՐՏԱԲԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐ

ԻԶ. ԳԼՈՒԽ

ԷՆՎԷՐ ՓԱՇԱ ՀԱՅԵՐՈՒ ՎՐԱՅ ԿԸ ԽՕՍԻ

Այս շրջանի ամբողջ ընթացքին, ճնշում կը բանեցնէի նաեւ Էնվէրի վրայ: Ինչպէս արդէն ճշդած եմ, պատերազմական նախարարը Քալէաղէն տարբեր տիպար մըն էր: Ան իր զգացումները շատ աւելի յաջողապէս կը ծածկէր. ան սովորաբար քաղցրաբարոյ, պաղարիւն եւ խղճմտօրէն քաղաքավար էր: Նախ. ան երբեք Քալէաղի պէս անզգայ չէր՝ Հայերու վրայ խօսած ատեն: Նախընթաց պատմութիւնները յիմար ծայրայեղութիւններ հռչակեց ան. յայտարարեց թէ՛ Վանի խռովութիւնները միայն հասարակ կռիւներ էին եւ ջանաց ցրուել իմ վախերս թէ՛ Հայերու միահաղոյն ոչնչացումը որոշուած բան էր: Սակայն, Էնվէր զիս խաբել ջանացած ատեն, ուրիշներու բաց խոստովանութեաններ կ'ընէր — իրողութիւն մը՝ որուն տեղեակ էի: Մասնաւորապէս չէր փորձած իրականութիւնը ծածկել՝ գերման միսիօնարական ներկայացուցիչ՝ Տքթ. Լէփցիուսէն: Տքթ. Լէփցիուս ազատամիտ քրիստոնեայ պարոն մըն էր: 1895ի բոլոր ջարդերուն մէջ զոնուած էր եւ մեծագումար դրամ հաւաքած՝ որբանոցներ հիմնելու՝ հայ տղոց համար, որոնք այդ միջոցին իրենց ծնողքը կորսնցուցած էին: 1915ին նորէն եկած էր՝ գերման միսիօնարական իրաւունքներու անունով՝ հայկական կացութիւնը հետազօտելու: Ամերիկեան հիւպատոսներու տեղեկագիրները քննելու արտօնութիւն խնդրեց եւ ես հաւանեցայ: Սյդ տեղեկագիրները, ճոխացած ուրիշ տեղեկութիւններով՝ գորս Տքթ. Լէփցիուս կը ստանար՝ մեծ մասով ներքին զաւառները գտնուող գերման միսիօնարներու կողմէ, թիւրք քաղաքականութեան մասին իր միտքին մէջ տարակոյս չէին թողուր: Ինք զայրոյթ կը զգար գլխաւորաբար գերման կառավարութեան դէմ: Տքթ. Լէփցիուս ինծի յայտնեց՝ իբր Գերման զգացած նուաստացումը, անոր համար որ՝ Թիւրքերը ձեռնարկած էին իրենց քրիստոնեայ հպատակները բնաջնջելու, մինչ Գերմանիա, որ ինքզինքը քրիստոնեայ երկիր մը կը կոչէր, ո՛չ մէկ ջանք չէր գործեր արգիլելու համար այդ բնաջնջումը: Էնվէր Տքթ. Լէփցիուսէն գրեթէ չէր ծածկած պաշտօնական նպատակը: Տքթ. Լէփցիուս պարզապէս սարսուռացած էր անոր անկեղծութենէն, որովհետեւ Էնվէր քանի մը բառերով յայտնած էր թէ՛ իրենք վերջապէս առիթը գտած էին Հայերու կրեւսէն ազատելու, եւ որոշած էին այդ առիթը գործածել:

Մինչև այդ, էնվէր ինծի հանդէպ աւելի անկեղծ դարձած էր,—
այն մանրամասն տեղեկագիրները՝ որոնք ձեռքիս տակ կը
գտնուէին՝ անօգուտ կը դարձնէին իր կողմէ ջանալը՝ աւելի երկար
ատեն ճշմարիտ կացութիւնը ծածկել, — եւ կարգ մը երկար եւ
յուզումնայից վիճաբանութիւններ ունեցած էինք այս նիւթին
շուրջը: Այդ վիճաբանութիւններէն մէկը մասնաւոր յստակու-
թիւնով կը յիշեմ: Ծանուցի էնվէրի թէ՛ մտադրած էի խնդիրը
մանրամասնօրէն բննել եւ ինք ալ բաւական երկար ծանրացաւ
ամբողջ կացութիւնը պատկերացնելու:

— Հայերը արդէն ժամանակին զգուշացուցուած էին, սկսաւ
էնվէր, իրենց պատահելիք դէպքերէն, այն պարագային՝ երբ մեր
թշնամիներուն միանային: Երեք ամիս առաջ, Հայերու Պատրիարքը



Տ. ԶԱԻԷՆ ԱՐՔ. ԵՂԻԱԵԱՆ

ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԻՆ ՀԱՅԵՐՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԸ
ԻՆՔՆ ԱՆ ՏԱՐԱԳՐՈՒԱԾ ՄԻՆՉՅԵՒ ՄՈՒՍՈՒԼ ԵՒ ՊԱՂՏԱՏ

կանչեցի եւ ըսի անոր թէ՛ եթէ Հայերը փորձէին յեղա-
փոխութիւն մը յարուցանել կամ Ռուսերուն օգնել, ես կարող
չպիտի ըլլայի Հայերու պատահելիք չարիքները արգելել: Եւ զգու-
շացուցիք ազդարարութիւնս արդիւնք չունեցաւ եւ Հայերը յեղա-
փոխութիւն յարուցին եւ օժանդակեցին Ռուսերուն: Գիտէք թէ՛

ինչ պատահեցաւ Վանի մէջ: Հայերը տիրացան քաղաքին, ուժա-
նակներ նետեցին կառավարական շէնքերու վրայ եւ բազմաթիւ
Իսլամներ սպաննեցին: Մենք գիտէինք թէ՛ Հայերը ուրիշ տեղե-
րու մէջ ալ ապստամբութիւններ կը սարքէին: Գուք պէտք է
ըմբռնէք թէ՛ մենք Տարսանէլի մէջ կը կուռինք մեր գոյութեանը
համար եւ հազարաւոր մարդ կը զոհենք: Մինչ այս տեսակ պայ-
քարի մը բռնուած ենք մենք, չենք կրնար թոյլատրել մեր իսկ
երկիրին մէջ գտնուող մարդոց որ՝ մեր կռնակէն զարնեն մեզ:
Մենք ստիպուած ենք արգելել ատիկա, խնդիր չէ թէ ինչ միջոցի
դիմել հարկադրուած ենք: Բացարձակապէս ճշմարիտ է որ՝ ես
հակառակ չեմ Հայերուն՝ իբր ժողովուրդ: Ամենամեծ հիացումը
ունիմ իրենց մտացիութեանը եւ ճարտարահմարութեանը համար,
եւ ոչինչ ինծի աւելի հաճոյք պիտի պատճառէր, քան տեսնել որ
անոնք մեր ազգին մէկ մասը եղած են: Բայց եթէ անոնք մեր
թշնամիներուն միանան, ինչպէս ըրին Վանի նահանգին մէջ, այն
ատեն փճացուելու են: Ես միջոցներ ձեռք առած եմ, որպէսզի
ո՛չ մէկ անարդարութիւն չգործուի. դեռ վերջերս է որ՝ հրահանգ
տուի կրեք Հայերու համար՝ որոնք տարագրուած էին, որպէսզի
իրենց բնակավայրերը վերադարձուին, կրք տեղեկացայ որ անոնք
անմեղ էին: Ռուսիա, Թրանսսա, Մեծ Բրիտանիա եւ Ամերիկա
Հայերուն բարիք չեն ընել՝ անոնց համակիր ընթացք ցուցնելով
եւ զանոնք բազալեբերով: Ես գիտեմ թէ՛ ինչ կը նշանակէ այդ
տեսակ բազալեբանք մը՝ ժողովուրդի մը, որ հակամէտ է յեղա-
փոխութեան: Երբ մեր Միութիւն եւ Առաջդիմութիւն Բոմբէն
Ապտիւլ-Համիտի վրայ կը յարձակէր, մենք մեր բարոյական քա-
ջալեբանքը կը ստանայինք արտաքին աշխարհէն: Այդ քաջալե-
բանքը մեզի մեծ օժանդակութիւն մըն էր եւ մեր յաջողութեանը
մէջ մեծ դեր կը կատարէր: Նոյնպէս ան հիմա կրնայ օգնել Հա-
յերուն եւ անոնց յեղափոխական ծրագիրին: Վստահ եմ թէ՛ եթէ
այդ օտար երկիրները չքաջալեբէին Հայերը, անոնք պիտի լքէին
ներկայ կառավարութեան դէմ ելլելու իրենց բոլոր ջանքերը եւ
պիտի դառնային օրինապահ քաղաքացիներ: Հիմա այս երկիրին
բացարձակ վարչութեան տէրը մենք ենք եւ կրնանք դիւրին կեր-
պով վրէժ լուծել յեղափոխականներէն:

— Բայց, ըսի, ենթադրենք թէ՛ ըսածնիդ ճշմարիտ ըլլայ,
ինչո՞ւ միայն յանցաւորը չպատժել: Ինչո՞ւ ամբողջ ցեղ մը նահա-
տակել, անհատներու կարծեցեալ ոճիրներուն համար:
— Ձեր տեսակէտը շիտակ է խաղաղութեան ատեն, պատաս-
խանեց էնվէր: Ատանկ ատեն՝ կրնանք պղատոնական միջոցներ
գործածել, խաղաղեցնելու համար Հայերը եւ Յոյները. բայց

պատերազմի ժամանակ, չենք կրնար հետաքննել եւ բանակցիլ: Մենք պէտք է գործենք վայրկենապէս եւ վճռողաբար: Կը կարծեմ նաեւ որ՝ Հայերը սիւսայ մը կը գործեն, Ռուսերուն կառչելով: Ռուսերը, իրականապէս, աւելի պիտի ուզէին Հայերը մահացած տեսնել, քան ողջ: Հայերը այնչափ մեծ վտանգ մըն են Ռուսերուն, որչափ մեզի: Եթէ Հայերը անկախ կառավարութիւն մը կազմէին Թիւրքիայի մէջ, Ռուսիայի Հայերն ալ պիտի ջանային հոն անկախ կառավարութիւն մը կազմել: Նաեւ Հայերը յանցաւոր եղած են ջարդերով. Վանի ամբողջ նահանգին մէջ միայն 30,000 Թիւրքեր փախած են մնացած յոյսը սպաննուած են Հայերէն եւ Քիւրտերէն: Ես ջանացի կովկասի ոչ-պատերազմիկները պաշտպանել. հրահանգ տուի որ՝ անոնց վնաս հասցուելու չէր. բայց տեսայ որ՝ իմ իշխանութիւնս հասու չէր կացութեան: Պոլսի մէջ 70,000 Հայեր կան եւ անոնց նեղութիւն չպիտի տրուի, բացի անոնցմէ՝ որոնք Դաշնակցական են եւ անոնցմէ՝ որոնք Թիւրքերու դէմ կը դաւեն: Սակայն, ես կը կարծեմ որ ամբողջ խնդիրին մասին միտքերնիդ կրնաք հանգատացնել, որովհետեւ ա՛լ Հայերու ջարդեր տեղի չպիտի ունենան:

Ես լուրջ նկատեցի էնվէրի վերջին յայտարարութիւնը: Այն միջոցին երբ կը խօսէր, հայկական նահանգներուն մէջ ջարդեր եւ տարագրութիւններ տեղի կ'ունենային եւ զրեթէ ամիսներէ իվեր կը շարունակուէին անընդմիջաբար:

Տեղեկագիրները Միաց.-Նահանգները հասնելուն պէս, օգնութեան հարցը ստիպողական դարձաւ: Յուլիսի վերջերը, լսեցի թէ՛ Սուլթանիէի մէջ* 5,000 Ձէյթունցի Հայեր կային, որոնք ո՛չ մէկ ուտելիք չէին ստանար: Անոնց մասին խօսեցայ էնվէրի, որ դրապէս յայտարարեց թէ՛ պատշաճ սնունդը պիտի ստանան անոնք: Էնվէր նպաստաւոր ընդունելութիւն չըրաւ սա թելադրութեան որ՝ ամերիկացի ներկայացուցիչներ երթան երկիրին այդ կողմը եւ քարտականներուն օգնեն ու խնամք տանին:

— Եթէ որեւէ Ամերիկացի ընէր այդ բանը, ըսաւ, պիտի քաջախիտ թողար Հայերը եւ նոր խռովութիւններ պիտի յարուցանէր: Թիւրքիայի մէջ 28,000,000ի չափ բնակիչ կայ եւ 1,000,000 ալ Հայ: Մենք չենք ուզեր որ՝ 1,000,000ը վրշովն մնացած բնակչութեան խաղաղութիւնը: Հայերուն հետ մեծագոյն կնճիւղը ան է որ՝ անոնք անջատողականներ են: Անոնք որոշած են սեփական

* Հոս կ'ուղղեմ բնագիրը, որ կ'ըստ. «5,000 Armenians from Zeitoun and Sultanié (Ձէյթունէն եւ Սուլթանիէն 5,000 Հայեր): Պոստ քրոյ» «5,000 Armenians from Zeitoun at Sultanié (5,000 Ձէյթունցի Հայեր Սուլթանիէի մէջ:

Ծանօթ. ԹարգմանիչԵԿ



THE AMERICAN EMBASSY STAFF
at the Embassy of Mr. Morgenthau

**ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԻ ՊԱՇՏՕՆԵՌՈՒԹԻՒՆԸ
ՄԻ. ՄՕՐԿԵՆԹԱՈՒԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՕՐՈՎ**

Թագաւորութիւն մը ունենալ, եւ կը տարուին Ռուսերէն խաբուելու: Ռուսերուն բարեկամութեանը ապաւինելուն համար՝ Հայերը այս պատերազմին մէջ օգնեցին Ռուսերուն: Մենք որոշ կը տեսնենք որ՝ անոնք ճիշդ Թիւրքերուն ըրածին պէս կը վարուին: Դուք յիշելու էք որ՝ երբ Թիւրքիայի մէջ ծանօթ յեղափոխութիւնը յարուցինք, միայն երկու հարիւր հոգի էինք: Այդ փոքրաթիւ ընկերներով, մենք կարող եղանք Սուլթանը եւ հասարակութիւնը խաբելու, որոնք կարծեցին թէ՛ մենք մեծապէս աւելի բազմաթիւ եւ զօրեղ էինք, քան որչափ էինք: Մենք մեր տակեղծ յանդուութիւնովը իրականապէս գերիշխեցինք Սուլթանին եւ հասարակութեան վրայ, եւ այդ միջոցով հաստատեցինք Սահմանադրութիւնը: Յեղափոխութիւններու մասին մեր փորձառութիւնն է որ՝ մեզ վախցնել կու տայ Հայերէն: Եթէ երկու հարիւր Թիւրքեր կրնան տապալել կառավարութիւնը, քանի մը ուշիմ եւ զարգացած Հայեր ալ կրնան նոյն բանը ընել: Հետեւաբար մենք գիտակցօրէն որդեգրած ենք զանոնք ցիր ու ցան ընելու ծրագիրը, որպէսզի մեզի վնաս չկարնան հասցնել: Ինչպէս ձեզի նախապէս ըսի անգամ մը, ես Հայերու Պատրիարքին զեկուցի որ՝

եթէ Հայերը մեր վրայ յարձակին՝ այն միջոցին երբ մենք արտաքին պատերազմի մը բռնուած ենք, մենք Թիւրքերս զանոնք պիտի զարնենք գետին փռենք եւ պիտի զարնենք անխտիր :

Էնվէր միշտ կը նեղսրտէր որեւէ թելադրութենէ՝ որ ամերիկեան միսիօնարներ կամ Հայերու ուրիշ բարեկամներ օգնութեան կամ հոգածութեան փութային Հայերուն :

— Անոնք ամէնքն ալ չափազանց սէր ցոյց կու տան Հայերուն, կ'ըսէր կրկին ու կրկին :

Առաջարկեցի որ քանի մը Ամերիկացիներ Տարսոն եւ Մարգուան երթան :

— Եթէ անոնք երթան, կը վախնամ որ՝ այդ քաղաքներուն տեղացի ժողովուրդը զայրանայ եւ հակամտութիւն ցուցնէ խռովութիւններ յարուցանելու՝ որոնք կրնան դէպք մը ստեղծել : Հետեւաբար, նոյն ինքն Հայերուն համար նախապատիւ է որ՝ ամերիկացի միսիօնարները հեռու մնան Հայերէն :

— Բայց դուք երկիրը տնտեսապէս կը կործանէք, ըսի ուրիշ անգամ մը, կրկնելով նոյն դիտողութիւնը՝ զոր Թալէադին ըրած էի : Ինքն ալ պատասխանեց գրեթէ ճիշդ Թալէադին բառերով, ինչ որ կը ցուցնէր թէ՛ խնդիրը ամբողջապէս քննորոշուած էր տիրող իշխանութեան կողմէ :

— Ներկայիս տնտեսական նկատումներ որեւէ կարեւորութիւն չունին : Միակ կարեւոր գործը՝ յաղթելն է : Մեր միտքին մէջ տիրող միակ նիւթը այդ է : Եթէ մենք յաղթենք, ամէն բան կատարեալ պիտի ըլլայ. եթէ յաղթուինք՝ ամէն բան կորսուած է, ինչ ձեւով կ'ուզէ ըլլայ : Մեր կացութիւնը յուսահատական է, կը խոստովանիմ ատիկա, եւ մենք կը կռուինք այնպէս՝ ինչպէս յուսահատ մարդիկ կը կռուին : Զպիտի թողունք որ՝ Հայերը մեր կռնակէն յարձակին մեր վրայ :

Սոված Հայերուն օգնութեան խնդիրը շաքաթէ-շաքաթ աւելի ստիպողական կը դառնար, բայց էնվէր դեռ կը պնդէր որ՝ Ամերիկացիները հեռու մնան հայկական նահանգներէն :

— Ինչպէս հաց կրնանք հայթայթել Հայերուն, կը յայտարարէր էնվէր, երբ բաւականաչափ հաց չենք կրնար գտնել մեր իսկ ժողովուրդին համար : Գիտեմ որ՝ անոնք կը տառապին եւ թէ շատ հաւանական է որ՝ առաջիկայ ծմեռ քնաւ հաց չկարենան գտնել : Բայց ամենամեծ դժուարութեան մէջ ենք այլեր եւ զգեստ հայթայթելու համար, մինչեւ անգամ հոս Պոլիսի մէջ :

Յայտնեցի թէ՛ ես դրամ ունէի եւ ամերիկացի միսիօնարներ շատ փափորոզ էին գաւառ երթալ եւ այդ դրամը տարագիրներու նպաստին գործածելու :

— Մենք չենք ուզեր որ Ամերիկացիները մնուցանեն Հայերը, պատասխանեց, անզգածօրէն : Ատիկա ամէնէն գէշ բանն է, որ կրնայ իրենց պատահիլ : Ես արդէն ձեզի ըսի թէ՛ Հայերը այն հաւատքը ունին որ՝ իրենք օտար երկիրներու մէջ բարեկամներ ունին, ինչ որ զիրենք կը մղէ Կառավարութեան դիմադրելու եւ իրենց վրայ կը հրաւիրէ իրենց բոլոր դժբաղդութիւնները : Եթէ դուք Ամերիկացիները սկսիք անոնց ուտեստ եւ զգեստ բաժնել, անոնք պիտի խորհին որ՝ իրենք Միաց.-Նահանգներուն մէջ ուժով պաշտպաններ ունին : Ատիկա զիրենք կրկին ըմբոստութեան պիտի քաջայերէ եւ մենք ալ պիտի ստիպուինք ա՛լ աւելի պատուհասել զանոնք : Եթէ ձեր ստացած դրամը մեզի Թիւրքերուս տաք, մենք պիտի ջանանք զայն գործածել Հայերուն օգնելու :

Էնվէր այս առաջարկը ըրաւ ինքնապատահ դիմագծութիւնով եւ զանազան ուրիշ առիթներով ալ կրկնեց զայն : Ճիշդ այդ պահուն երբ էնվէր նպաստի այս մեքենայութիւնը կ'առաջարկէր, Թիւրք ոստիկան-զինուորները եւ Թիւրք պաշտօնականները ո՛չ միայն կը կողոպտէին Հայերուն տնական բոլոր ինչքերը, անոնց բոլոր ուտեստեղէնները եւ բոլոր դրամները, այլ նոյն իսկ կիները կը մերկացնէին իրենց զգեստի վերջին կտորներէն եւ անոնց մերկ մարմինները սուղիներով կը խթանէին, մինչ անոնք դանդաջելով կ'անցնէին հրակէզ անապատէն : Եւ ահա պատերազմական Նախարարը կ'առաջարկէր որ՝ Ամերիկայէն եկած մեր դրամը տայինք այս նոյն օրէնքի պահապաններուն՝ բաժնուելու համար իրենց պաշտպանեալներուն ! Սակայն ես պէտք էի կենցաղագէտ ըլլալ :

— Եթէ դուք կամ Կառավարութեան ուրիշ պետեր անձնապէս պատասխանատու կ'ըլլաք բաշխումին, ըսի, անշուշտ հաճոյքով ձեզի պիտի վստահէինք դրամը : Բայց բնականաբար չպիտի սպասէիք որ այդ դրամը տայինք այն մարդոց՝ որոնք Հայերը սպաննած եւ անոնց կիները խոշտանգած են :

Բայց էնվէր վերադարձաւ իր գլխաւոր առարկութեան :

— Հայերը պէտք չէ գիտնան որ, ըսաւ, իրենք Միաց.-Նահանգներուն մէջ պաշտպաններ ունին : Այդ բանը բացարձակապէս պիտի կործանէր զիրենք ! Նախապատիւ է որ անոնք սովամահ ըլլան. ասիկա ըսելով՝ ես անկեղծապէս նոյն ինքն Հայերուն բարօրութիւնն է որ կը խորհիմ : Եթէ միայն կարելի ըլլայ զանոնք համոզել որ՝ իրենք օտար երկիրներու մէջ բարեկամ չունին, այն ատեն անոնք պիտի հանդարտին, պիտի գիտնան որ՝ իրենց միակ ապաստանը Թիւրքիան է եւ պիտի դառնան խաղաղասէր քաղաքացիներ : Զեր երկիրը անոնց բարիք չէ որ կ'ընէ, շարունակ համակրանք ցուցնելով : Ատով, դուք անոնց վրայ շատ մը չարիքներ կը հրաւիրէք :

Ուրիշ խօսքով, Ամերիկացիները ո՛րչափ աւելի դրամ դրկէին՝ Հայերը ապրեցնելու համար, նո՛յնչափ աւելի Քիւրքիա մտադրած էր ջարդել Հայերը: Էնվէրի տրամաբանութիւնը պարզապէս ցնորեցուցիչ էր: Բայց վերջապէս կակուղցաւ եւ զիս արտօնեց սփյուռներու միջոցով օգնելու դժբաղդներուն: Մեր բոլոր տեսակցութիւններուն մէջ, սա կեղծաւոր ինքնարդարացումը կ'ընէր թէ՛ ինք անկեղծապէս բարեկամ էր այդ խելակորոյս ազգին եւ նոյն իսկ իր ձեռք առած միջոցներուն խստութիւնը՝ քողարկուած գթութիւն էր: Որովհետեւ էնվէր միշտ կը վստահեցնէր թէ՛ կը փափաքէր Հայերուն հանդէպ արդարութիւնով վարուիլ, — եւ այս մասին ինձի ցուցուցած իր վարմունքը բոլորովին տարբեր էր Քալէադի վարմունքէն, որ բացէ-բաց Հայերը տարագրելու իր որոշումը կը յայտնէր, — յանձն առի խնամուած ծրագիր մը պատրաստել՝ Հայերու կացութիւնը բարելաւելու համար: Առաջարկեցի էնվէրի որ, եթէ կը փափաքէր արդար ըլլալ, պէտք է պաշտպանէր տարագիրները եւ այդ չարիքը հնար եղածին չափ նուազեցնէր, եւ այդ նպատակով պէտք է կարող Հայերէ մասնաւոր յանձնախումբ մը նշանակել՝ իրեն օգնելու համար, եւ պէտք է կարող Հայ մը՝ ինչպէս նախկին թղթատարական եւ հեռագրական նախարար Ոսկան Էֆէնտին՝ գաւառ ղրկէր, կացութիւնը ուսումնասիրելու եւ տիրող չարիքները դարմանելու առաջարկներ ներկայացնելու համար: Էնվէր առաջարկներէս ո՛չ մէկը գնահատեց: Առաջինին համար ըսաւ որ՝ իր պաշտօնակիցները յոռի մեկնութիւն պիտի տային անոր. գալով Ոսկանին, ըսաւ թէ՛ կը հիանար անոր վրայ՝ Դահլիճին մէջ եղած ատեն կատարած ընտիր աշխատանքին համար, եւ ինք անոր ուժ տուած էր ապիկար պաշտօնեաներու հանդէպ ցուցուցած խստութեան մէջ, բայց չէր կրնար անոր վրայ վստահիլ, որովհետեւ ան Հայկական Դաշնակցական Միութեան անդամ էր:

Էնվէրի հետ ուրիշ տեսակցութեան մը մէջ, խօսքս սկսայ ըսելով թէ՛ կեդրոնի Կառավարութիւնը հաւանօրէն պարսաւելի չէր ջարդերուն համար: Խորհեցայ որ՝ ասիկա իրեն անհաճոյ չպիտի ըլլար:

— Անշուշտ գիտե՛մ որ՝ Դահլիճը երբեք չպիտի հրահանգէր այն տեսակ սոսկալի բաներ՝ որոնք տեղի ունեցած են, ըսի: Դուք եւ Քալէադ եւ Քոմիթէին միւս անդամները չէք կրնար պատասխանատու բռնուիլ: Անկասկած ձեր ստորադասները ձեր որոշածը չափազանցած են: Կ'ըմբռնեմ որ՝ դիւրին չէ միշտ ձեր ստորակարգեալները ղեկավարել:

Էնվէր յանկարծ շտկուեցաւ: Զգացի որ՝ իմ դիտողութիւն-

ներս, հեռո՛ւ՝ խաղաղ եւ բարեկամական խօսակցութեան մը ճամբայ հարթելէ, մեծապէս վիրաւորած էին զինքը: Ես ակնարկած էի թէ՛ Քիւրքիայի մէջ կրնային պատահիլ դէպքեր, որոնց համար ինք եւ ընկերակիցները պատասխանատու չէին:

— Դուք մեծապէս կը սխալիք, ըսաւ էնվէր: Մենք այս երկիրին բացարձակ տէրերն ենք: Ես երբեք միտք չունիմ մեղադրանքը մեր ստորակարգեալներուն վրայ նետելու եւ ես ինքս պատրաստ եմ ստանձնելու պատասխանատուութիւնը ամէն բանի՝ որ տեղի ունեցած է: Դահլիճը ինքն է որ հրամայած է տարագրութիւնը: Ես համոզուած եմ որ՝ մենք այդ բանը ընելու կատարելապէս կ'արդարանանք, նկատի ունենալով Հայերու թշնամական վերաբերումը օսմանեան Կառավարութեան հանդէպ. ատկէ զատ, Քիւրքիայի իրական վարիչները մե՛նք ենք, եւ, ո՛չ մէկ ստորակարգեալ չկրնար յանդգնիլ այս տեսակ խնդիրի մը մէջ առանց մեր հրամաններուն գործել:

Էնվէր ջանաց իր ընդհանուր ընթացքին բարբարոսութիւնը թեթեւցնել մասնաւոր պարագաներու գուժ ցուցնելով: Զանգուածային ջարդի ծրագիրը կասեցնելու համար թափած ջանքերուս մէջ չյաջողեցայ. բայց յաջողեցայ մէկ քանի Հայեր մահէ ազատել: Օր մը Իզմիրի ամերիկեան Հիւպատոսէն տեղեկութիւն առի թէ՛ եօթը Հայեր դատապարտուած էին կախուելու: Այս անձերը ամբաստանուած էին իր գործիչ քաղաքական յանցանքի մը՝ որ յաւէտ անորոշ կը մնար 1909էն ի վեր. նաեւ, ո՛չ Իզմիրի կառավարիչ Բահմի պէյ, ո՛չ ալ զինուորական հրամանատարը կը հաւատային թէ՛ անոնք յանձաւոր էին: Երբ մահապատիժին գործադրութեան հրամանը Իզմիր հասաւ, այդ իշխանութիւնները Պոլիս հեռագրեցին թէ՛ օսմանեան օրէնքով՝ ամբաստանուած մը իրաւունք ունէր Սուլթանին բարեգթութեանը կոչ ընելու: Այս հեռագիրին տրուած պատասխանը սքանչելապէս կը պատկերացնէ թէ՛ ինչ չափով կը յարգուէին այդ ատեն Հայերու իրաւունքները:

— Օրինականօրէն՝ իրաւունք ունիք: Նախ կախեցէք զանոնք եւ ետքէն ղրկեցէք ներումի աղերսանքը:

Այս անձերուն համար էնվէրի այցելեցի Պայրամի օրը, որ Մահմետականներու կրօնական մեծագոյն տօնն է. ծովապահութեան ամիսին՝ Բամազանի յաջորդող օրն է ադ: Պայրամը Մնունդի հետ նմանութիւն մը ունի, որովհետեւ այդ օրը Մահմետականները սովորութիւն ունին պզտիկ նուէրներ փոխանակելու, ընդհանրապէս շաքարեղէն: Ծնորհաւորական սովորական մաղթանքներէ ետքը, ըսի էնվէրին.

—Այսօր Պայրամ է, եւ տակաւին ինծի նուէր մը չէք դրկած: Էնվէր խնդաց:

—Ի՞նչ կ'ուզէք, տուփ մը շաքարեղէն դրկե՞մ:

—Օ՛հ, ո՛չ, պատասխանեցի: Զիս ա՛յդչափ մի աժանցնէք: Ներում շնորհուիլը կ'ուզեմ այն եօթը Հայերուն, զորս Իզմիրի պատերազմական ատեանը դատապարտած է:

Առաջարկս յայտնապէս չափազանց զուարճալի թուեցաւ Էնվէրի:

—Ատիկա ներում խնդրելու հնարամիտ կերպ մըն է, ըսաւ: Բայց, քանի որ այդ կերպով կը ներկայացնէք զայն, չեմ կրնար մերժել:

Անմիջապէս իր թիկնապահը կանչել տուաւ եւ հեռագրեց Իզմիր՝ դատապարտեալները ազատ արձակել:

Ահա թէ ի՛նչպէս դիպուածաբար արդարութիւնը կը գործադրուի եւ մարդկային կեանքիբու վերաբերող որոշում կը տրուի Թիւրքիայի մէջ: Ոչինչ կրնայ աւելի լուսաբանել այն թեթեւ գնահատութիւնը՝ որով Թիւրքերը կ'ըմբռնեն կեանքը, ինչպէս նաեւ այն թեթեւ չափը սկզբունքին՝ որ կ'իշխէ իրենց վարքին: Էնվէր խնայեց այդ մարդոց՝ ո՛չ թէ որովհետեւ ամենաթեթեւ չափով կը շահագրգռուէր անոնց պարագայովը, այլ պարզապէս իբր շնորհ մը ինծի, եւ զլիսաւորաբար այն տարօրինակ կերպին համար՝ որով խնդրած էի ներումը: Հայերու մասին իմ բոլոր խօսակցութիւններուս մէջ, պատերազմական Նախարարը ամբողջ նիւթին հանդէպ կը վերաբերուէր քիչ կամ շատ դիպուածակա՛նորէն. փակագիծի մը մէջ կը խօսէր ցեղի մը նակատագիրին վրայ եւ մանուկներու ջարդին կ'ակնարկէր ա՛յնչափ անփութօրէն, ո՛րչափ մենք պիտի խօսէինք օդին վրայ:

Օր մը Էնվէր ինծի առաջարկեց որ ձի հեծնեմ իրեն հետ Պելկրատի անտառին մէջ: Որովհետեւ իր վրայ ազդեցութիւն գործելու համար առիթ չէի կորսնցնէր. ընդունեցի իր հրաւէրը: Ինքնաշարժով Պէօյիւք-Տէրէ գացինք, ուր չորս հետեւորդներ ձիերով մեզ դիմաւորեցին: Գեղեցիկ անտառին մէջ մեր ձիավարութեան միջոցին, Էնվէր խօսակցութեան մէջ ա՛յլ աւելի դիւրահաղորդ դարձաւ, քան երբեք եղած էր առաջ: Գորովանքով խօսեցաւ իր հօրը եւ մօրը վրայ. անոնց ամուսնացած ատեն, ըսաւ, հայրը տասներկեց տարեկան էր, մինչ մայրը հազիւ տասներմէկ: Իր ծնած ատեն՝ մայրը տասներհինգ տարեկան էր: Իր կնոջը կայսերազուն Իշխանուհին վրայ խօսած ատեն, Էնվէր պարզեց իր նկարագիրին աւելի՛ փափկագգած մէկ կողմը՝ զոր մինչեւ այդ ատեն չէի նշմարած: Խօսեցաւ այն ազնուականութեան մասին՝ որով Իշխա-

նուհին կը շնորհագարդէր իր ընտանեկան յարկը. ցաւ յայտնեց որ՝ մահմետական կենցաղագիտութեան ըմբռնումները կ'արգիլէին Իշխանուհին՝ ընկերային կեանքի մէջ մտնելէ. բայց փափաք յայտնեց որ՝ Իշխանուհին եւ Տկն. Մօրկընթաու ծանօթանան: Այդ միջոցին Վոսփորի վրայ կը կահաւորէր նոր շքեղ պալատ մը. երբ ատաւարտի, ըսաւ, Իշխանուհին Նախաճաշի պիտի հրաւիրէ ձեր տիկինը: Ծիշդ այդ միջոցին, կ'անցնէինք տունին եւ հողերուն քովէն ծերակուտական Աբրահամ փաշայի, որ շատ հարուստ Հայ մըն է: Այս անձնաւորութիւնը Սուլթան Ապտիւլ-Ազիզի մտերիմ բարեկամը եղած էր, եւ որովհետեւ Թիւրքիայի մէջ մարդ կը ժառանգէ ինչպէս իր հօրը ստացուածքները՝ նոյնպէս անոր բարեկամները, Թիւրքիայի զահաժառանգ Իշխանը, Ապտիւլ-Ազիզի որդին, ամէն շաբթու այցելութիւն կու տար այս ականաւոր ծերակուտականին: «Փառք»էն անցած ատեննիս, Էնվէր դժգոհանքով նշմարեց որ՝ փայտահատներ ծառեր կը կտրէին. զանոնք կեցուց: Երբ ետքէն լսեցի որ՝ պատերազմական Նախարարը այս «փառք»ը գնած էր, հասկցայ իր բարկութեան պատճառներէն մէկը: Աբրահամ փաշայի Հայ մը ըլլալը՝ ինծի առիթ տուաւ նիւթը կրկին բանալու:

Էնվէրի խօսեցայ այն զարհուրելի վարմունքին մասին՝ որուն երեսէն հայ կիներ կը չարչարուէին:

—Դուք կ'ըսէիք թէ՛ կ'ուզէք կիները եւ մանուկները պաշտպանել, դիտել տուի. բայց կը տեսնեմ որ՝ ձեր հրահանգները չեն գործադրուիր:

—Այդ պատմութիւնները չեն կրնար ճիշդ ըլլալ, պատասխանեց: Չեմ կրնար ըմբռնել որ՝ Թիւրք զինուոր մը խոշտանգէ յդի կին մը:

Եթէ Էնվէր կարդացած ըլլար այն մանրամասն տեղեկագիրները՝ որոնք ամերիկեան Դեսպանատունի պաշտօնաթուղթերուն մէջ կը գտնուէին, թերեւս կարենար իր միտքը փոխել:

Անգամ մըն ալ խօսակցութեան նիւթը փոխելով, հարցում ըրաւ թամբիս մասին, որ «գօրավար Մաք Քլիլէն» հանրածանօթ տիպարէն էր: Էնվէր զայն փորձեց եւ ա՛յնչափ հաւնեցաւ որ՝ ետքէն զայն փոխ առաւ եւ հատ մը ճիշդ նմանը իրեն համար շինել տուաւ — նոյն իսկ անոր մէկ անկիւնը զտնուած թիւով— եւ զայն իր գօրագունդերէն մէկուն մէջ մտցուց: Խօսեցաւ այն երկաթուղիներուն մասին՝ զորս այդ միջոցին շինել կու տար Պաղեստինի մէջ. յայտնեց թէ՛ Դահլիճը ո՛րչափ լաւ կը գործէր, եւ դիտել տուաւ որ՝ այդ ատեն Թիւրքիայի մէջ մեծ առիթներ կային անշարժ կալուածներու շահագործութեան համար: Նոյն իսկ

առաջարկեց որ՝ ինք եւ ես միանանք՝ հողեր գնելու, որոնց ար-
ժէքին բարձրանալուն վստահ էր! Բայց ես կը յամառէի խօսիլ
Հայերուն վրայ: Եւ սակայն, առաջուրնէ աւելի չէի յաջողեր:

— Չպիտի թոյլ տանք Հայերուն. խմբուիլ այն տեղերը՝ ուր
կրնան դաւ նիւթել եւ մեր թշնամիներուն օգնել: Այդ պատճա-
ռով, իրենց նոր բնակավայրեր պիտի տանք:

Էնվէրի աչքին՝ այնչափ յաջող անցաւ այս ծիանեմը [ride],
որ քանի մը օր ետքը ուրիշ մըն ալ կատարեցինք եւ այս անգամ
Թալէադ եւ Թօպլըզ Գօլէնի Տնօրէն Տքթ. Կէլթս ալ մեզի ընկե-
րացան: Էնվէր եւ ես առջեւէն կը ծիավարէինք, մինչ մեր ընկեր-
ները ետեւէն կու գային: Թիւրք պաշտօնատարները չափազանց
նախանձախնդիր են իրենց առանձնաշնորհումներուն, եւ, որով-
հետեւ պատերազմական Նախարարը Դահլիճին առաջնակարգ
անդամը կը համարուի, Էնվէր կը ջանար պատշաճ անջրպետ մը
պահել մեր եւ միւս ծիավարներուն միջեւ: Ես քիչ մը կը զուար-
ճանայի ասով, որովհետեւ գիտէի թէ՝ Թալէադն էր աւելի ուժի
տէր քաղաքական վարիչը. բայց ան համակերպեցաւ այդ խտիրին
եւ միայն մէկ անգամ իր ծին Էնվէրէն եւ ինձմէ առաջ անցուց:
Իրաւունքի այդ բռնաբարութեան հանդէպ՝ Էնվէր իր տհաճու-
թիւնը ցուցուց, որուն վրայ, Թալէաթ կանգ առաւ, սանձեց
իր ծին եւ հպատակողաբար ետեւ անցաւ:

— Ես միայն Տքթ. Կէլթսի [Dr. Gaïtes] կ'ուզէի ցուցնել իմ
ծիուս գնացքը [gait*], ըսաւ Թալէադ գովասանական շեշտով մը:
Բայց ես շահագրգռուած էի աւելի կարեւոր խնդիրներով,
քան պաշտօնական կարգուծելի այս նուրբ զանազանութիւննե-
րով: Ես սրտած էի Հայերու մասին խօսիլ: Բայց նորէն ծախո-
ղեցայ որեւէ յաջողութիւն ունենալէ: Էնվէր խօսակցութեան
աւելի շահեկան նիւթեր գտաւ:

Սկսաւ խօսիլ իր ծիերուն վրայ, եւ ահա ուրիշ միջադէպ մը՝
պատկերացուց թիւրք միտքին սնդկային** յատկութիւնը — այն
դիւրապատրաստութիւնը՝ որով Թիւրք մը ճիւղային ոճրա-
կանութեան արարքներէ կ'անցնի անհատական բարութեան
արարքներու: Էնվէր ըսաւ թէ շատ չանցած ծիարշաւները տեղի
պիտի ունենային եւ ինք կը ցաւէր որ հեծարշաւ [jockey] չունէր

— Ես ձեզի անգլիացի հեծարշաւ մը կու տամ, ըսի: Սակար-
կութիւն մը կ'ընէ՞ք: Ան պատերազմական գերի է. եթէ յաղթական
ելլէ, ազատ կ'արձակէ՞ք զինքը:

* Հեղինակը բառախաղ մը կ'ընէ հոս:

** Յնդիտուկ:

— Այո՛, ազատ կ'արձակեմ, պատասխանեց Էնվէր:

Որով, այս մարդը, որուն անունը Ֆիլտս էր, ծիարշաւներուն
մասնակցեցաւ՝ իբր Էնվէրի հեծարշաւը եւ երրորդ ելաւ: Դէպի
իր ազատութիւնը ծիարշաւ մը կատարեց ան! Ինչպէս ըսաւ Մր.
Ֆիլիփ: Քանի որ առաջին ելած չէր, պատերազմական Նախարարը
իր համաձայնութեան պայմաններուն համեմատ՝ պարտաւոր չէր
թողուլ զայն որ Անգլիա դառնայ, բայց Էնվէր քայլ մըն ալ առաջ
գնաց եւ անոր ազատութիւն շնորհեց:

Այս նոյն ծիանեմի միջոցին, Էնվէր ապացոյցը տուաւ իբր
նշանառու իր տաղանդին:

Ճամբուն վրայ տեղ մը, յանկարծ լսեցի հրազէնի մը պայ-
թիւնը, որ օդին մէջ հնչեց: Էնվէրի թիկնապահն էր, որ մեզի մօտ
առարկայի մը նշան կ'առնէր: Էնվէր անմիջապէս ծիէն վար իջաւ,
քաշեց իր ատրճանակը, եւ, բազուկը շեշտակի եւ հորիզոնա-
կանօրէն ուղղելով՝ նշան առաւ:

— Կը տեսնէ՞ք ծաւիկն վրայի տա ոստը, հարցուց ինձի:
Երեսուն ոտքի չափ հեռուն էր ան:

Երբ գլուխով նշան ըրի, Էնվէր կրակեց — եւ ոստը գետին
ինկաւ:

Այն արագութիւնը, որով Էնվէր կրնար իր գէնքը գրպանէն
հանել, նշան առնել եւ կրակել, համոզիչ լուսաբանութիւն մը
տուաւ ինձի այն ազդեցութեան մասին՝ զոր կը գործէր այն
ծովահէնային խմբակին վրայ, որ այդ ատեն Թիւրքիան կը վարէր:
Շատ մը պատմութիւններ շրջան կ'ընէին թէ՝ Էնվէր չէր վարա-
նած համոզութեան այս մեթոդը գործածելու, իր ասպարէզին
զանազան տազնապալի վայրկեաններուն մէջ. չեմ գիտեր թէ՝
այդ մանրամասնութիւնը որչափ ճիշդ են, բայց ստուգապէս կրնամ
վկայել իր նշանառուի բարձր կարողութիւնը:

Թալէադ ալ սկսաւ նոյն կերպով զբօսնուլ, եւ վերջապէս եր-
կու պետական մարդիկը սկսան մրցողաբար նշան առնել եւ վար-
ուիլ այնչափ զուարթօրէն եւ անհոգաբար, որչափ դպրոցէն
արձակուած տղաք:

— Ձեր վրայ ձեր այցաբառդէն հատ մը ունի՞ք, հարցուց
Էնվէր: Խնդրեց որ յիտուն ոտք անդին գտնուող ծաւիկ մը փակ-
ցնեմ զայն գնդասեղով: Առաջին անգամ Էնվէր կրակեց: Իր ձեռ-
քը պնդասեղմ էր. աչքը շիտակ նշանին կ'ուղղուէր, եւ գնդակը
զարկաւ քառուղին ճիշդ մէջտեղը: Այս յաջողութիւնը Թալէադը
խայթեց: Ինք ալ նշան առաւ. բայց իր կոշտ ձեռքը եւ բա-
զուկը թեթեւօրէն կը շարժէին: — Ինք չէր մարգագէտ մը, ինչպէս
իր կրտսեր, ջլապինդ եւ ուղղահասակ ընկերակիցը: Բազմաթիւ

անգամներ Թալէադ զարկաւ քառդին եզերքներուն շուրջը, բայց չկրցաւ կրկնել էնվէրի տաղանդը:

— Եթէ մարդու մը նշան առած ըլլայի, բազմաթիւ անգամներ զարկած պիտի ըլլայի, ըսաւ այս թանձրամարմին Թիւրքը, կրկին ծիռն վրայ ցատկելով:

Ահա այսպէս վերջացան օրուան երկու ամէնէն հզօր Թիւրքերը Կայսրութեան ամէնէն արժէքաւոր տարրերէն մէկուն նակա-



Ս Ա Ի Տ Զ Ա Լ Ի Մ Փ Ա Շ Ա

Ն Ա Ե Կ Ի Ն Ե Պ Ա Ր Ք Ո Ս

(Կենսագրական նօթերը տեսնել էջ 103)

տագիրովը զբաղեցնելու ջանքերս! Ըսած եմ արդէն թէ՛ Եպարքոս Սախտ Հալիմ՝ ազդեցիկ անձնաւորութիւն մը չէր: Կայսրութեան մէջ իր պաշտօնը անուանապէս ամէնէն կարեւորն էր: Գործնականին մէջ, Եպարքոսը միայն տեղ տալով [place-warmer] մըն էր, եւ Թալէադ ու էնվէր կ'իշխէին գործերուն, ճիշդ ինչպէս

կ'իշխէին Սուլթանին վրայ: Օրինականօրէն, Դեսպանները իրենց յարաբերութիւնները պէտք էին մշակել Սախտ Հալիմի հետ, որովհետեւ ան արտաքին գործերու նախարար ալ էր. բայց ես կանուխէն նշմարեցի որ՝ այդ ճամբով ոչ մէկ բան կրնար կատարուիլ, եւ իբր քաղաքավարական պարտք շարունակելով մէկտեղ իմ երկուշաբթիի այցելութիւններս, նախընտրեցի ուղղակի բանակցիլ այն մարդոց հետ, որոնք իրական ուժին տէրն էին ամէն խնդիր վճռելու: Որպէսզի չամբաստանուիմ թէ՛ զանց առած եմ օսմանեան Կառավարութեան վրայ ազդելու որեւէ միջոց, շատ անգամներ Եպարքոսին ուշադրութեանը խնամեցի հայկական խնդիրը: Որովհետեւ Թիւրք չէր ան, այլ Եգիպտացի եւ դաստիարակուած ու կրթուած մարդ, անհաւանական չէր թուեր որ՝ հպատակ ժողովուրդներու հանդէպ քիչ մը տարբեր լերաբերմունք մը ունենար: Բայց կը սխալէի: Եպարքոսը Հայերուն ճիշդ ա՛յնչափ թշնամի էր, որչափ Թալէադ եւ էնվէր: Շուտով տեղեկացայ որ՝ միայն նիւթին յիշատակութիւնը՝ զինքը սաստկապէս կը զրգռէր: Կ'երեւայ թէ՛ ան չէր ուզեր որ՝ իր պերճաշուք հանգստաւէտութիւնը պղտորուէր այս տեսակ անհաճոյ եւ անկարեւոր նիւթերով: Եպարքոսը իր վերաբերմունքը երեսն քերաւ. երբ յոյն գործակատարը անոր խօսեցաւ Յոյներու հայաժանքներուն մասին: Սախտ Հալիմ պատասխանեց թէ՛ այդ տեսակ ցոյցեր Յոյներուն աւելի չարիք կը հասցնէին, քան բարիք:

— Մենք անոնց հետ պիտի վարուինք ճիշդ մեզմէ խնդրուածին հակառակ կերպովը, ըսաւ Եպարքոսը:

Իմ դիմումներուս՝ անուանական նախարարապետը պետական մարդու աւելի վայել կերպով չպատասխանեց: Անհաճոյ պաշտօնը ունէի բրիտանական, ֆրանսական եւ ռուսական Կառավարութիւններուն կողմէ իրեն ծանուցազիր մը ղրկելու թէ՛ այդ Տէրութիւնները հայկական վայրագութիւններուն համար անձնապէս պատասխանատու պիտի բռնէին այն մարդիկը՝ որոնք օսմանեան գործերը կը վարէին: Ասիկա անշուշտ կը նշանակէր որ՝ Դաշնակիցներու յաջողութեան պարագային՝ անոնք Եպարքոսը, Թալէադը, էնվէրը, ձէմալը եւ իրենց ընկերները պիտի դառնէին իբր պարզ մարդասպաններ: Երբ սենեակէն ներս մտայ, խօսելու համար այս քիչ մը շփոթեցուցիլ պատգամազիրին վրայ, եգիպտական արքայական տունի այս անդամին հետ, սովորականին պէս, ան հոն նստած էր, եւ ջղայնօրէն իր համրիչը կը քաշէր, եւ միտքի բնական վիճակի մը մէջ չէր երեւար երբեք: Յանկարծ այդ հեռագիրին վրայ խօսեցաւ. դէմքը բարկութենէն կարմրեցաւ եւ երկար պարսաւաճառ [diatribe] մը

սկսաւ՝ ամբողջ հայ ցեղին դէմ: Յայտարարեց թէ՛ հայ «ապստամբ»ներ 120,000 թիւրք սպաննած էին Վանի մէջ: Իր այս եւ ուրիշ յայտարարութիւնները այնչափ անհեթեթ էին որ սկսայ ոգելին պաշտպանել հայածուած ցեղը, ինչ որ եւպարբոսին զայրոյթը ա՛լ աւելի սաստկացուց: Հայերը մէկ կողմ թողելով, սկսաւ իմ երկիրիս վրայ յարձակում գործել, առաջ քշելով սա սովորական ամբաստանութիւնը թէ՛ Հայերու հանդէպ մեր համակրանքին կը վերաբերէր մեծագոյն պատասխանատուութիւնը՝ Հայերու բոլոր չարչարանքներուն:

Այս տեսակցութենէն քիչ փոքր, Սահտ Հալիմ դաղրիցաւ արտաքին գործերու նախարարութենէ: Իրեն յաջորդից Խալիլ պէյ, որ մէկ քանի տարիներ թրքական Խորհրդարանին նախագահը եղած էր: Խալիլ բոլորովին տարբեր տիպարէ անծ մըն էր: Ան շատ աւելի կենցաղագէտ, շատ աւելի ուշիմ եւ թրքական գործերու մէջ շատ աւելի ազդեցիկ էր: Նաեւ մեղմ եւ իւղոտ խօսող մըն էր, զուարթ ու գէր, եւ երբեք այնչափ զուրկ՝ ազնիւ զգացումներէ, ինչպէս այդ ժամանակին թիւրք քաղաքագէտներէն շատերը: Ընդհանրապէս կը խօսուէր թէ՛ Խալիլ համամիտ չէր Հայերու հանդէպ ցուցուած վարմունքին, սակայն իր պաշտօնական դիրքը կը ստիպէր զինքը համակերպիլ անոնց, եւ նոյն իսկ, ինչպէս կը զգայի, պաշտպանել զանոնք: Դահլիճին մէջ պաշտօն ստանալէ քիչ ետքը, Խալիլ ինծի այցելից եւ տեսակ մը պատիպատ բացատրութիւն տուաւ հայկական վայրագութիւններուն մասին: Ես արդէն ծանօթ էի զանազան պաշտօնատարներու վերաբերումին՝ հայկական հալածանքներուն մասին: Թալէադ ինքզինքը ցոյց տուած էր արիւնածարաւ եւ վայրագ. էնվէր ծածկամտօրէն հաշուեկշռող, մինչդեռ եւպարբոսը դէգ: Խալիլ այս ցեղին տարագրութեան վրայ կը նայէր վերջին ծայր պարզմտութիւնով: Ճուշուած վարմունքին ո՛չ մէկ ձեւը, ո՛չ իսկ ամէնէն անագնիւ իրողութիւնը՝ զոր ես անոր մասին կը յատնէի, չնչին չափով չէր վրդովեր իր միտքի անդորրութիւնը: Սկսաւ խոստովանիլ թէ՛ ոչինչ պիտի կրնար դարմանել այս ջարդերը, բայց, աւելցուց որ, զանոնք ըմբռնելու համար, ես պարտաւոր էի միտք պահել կարգ մը իրողութիւններ:

— Կ'ընդունիմ որ Կառավարութիւնը ծանրակշիռ սխալներ գործած է Հայերու հանդէպ իր վարմունքին մէջ, ըսաւ Խալիլ, բայց չարիքը արդէն գործուած է: Ի՞նչ կրնանք ընել հիմա: Սակայն, եթէ կան սխալներ՝ զորս կրնանք ուղղել, պիտի ուղղենք զանոնք: Ձեզի չափ ես ալ կը ցաւիմ այն ծայրայեղութիւններուն եւ չարաշահութիւններուն համար՝ որոնք գործուած են: Կ'ուզեմ ձեզի ներկայացնել Բ. Դուռին տեսակէտը: Կ'ընդունիմ

որ՝ արդարացում չէ ադ, բայց կը կարծեմ թէ՛ կան մեղմացուցիչ պարագաներ՝ զորս պէտք է նկատողութեան առնէք, օսմանեան Կառավարութիւնը դատելէ առաջ:

Յետոյ, բոլոր միւսներուն պէս, անդրադարձաւ Վանի դէպքերուն, Հայերու անկասկածեան տենչանքին եւ այն օգնութեան՝ զոր ընծեռած էին Ռուսերուն: Այդ բոլորը նախապէս շատ անգամներ լսած էի:

— Ես ըսի Վարդգէսին (հայ երեսփոխան մը, որ շատ մը ուրիշ հայ գործիչներու պէս, սպաննուեցաւ ետքէն) որ, եթէ իր ազգը իրականապէս կը տենչար անկախ կեանքի, պէտք է սպասէր յարմար պահին: Թերեւս Ռուսերը կարենան յաղթել թիւրք զօրագունդերուն եւ զրսուեն ամբողջ հայկական նահանգները: Այն ատեն կրնամ հասկնալ որ՝ Հայերն ալ փափաքին ինքնավար ըլլալ: Ինչո՞ւ չսպասել որ, ըսի Վարդգէսին, այդ տեսակ բարեբաղդ ժամ մը հասնի: Ձեկուցի իրեն թէ՛ մենք թոյլ չպիտի տայինք որ՝ Հայերը մեր կռնակէն յարձակէին, եւ թէ՛ եթէ անոնք թշնամական արարքներու սկսէին մեր զօրագունդերուն դէմ, մեր բանակին նտելը գտնուող բոլոր Հայերուն գործը պիտի կարգադրէինք, եւ մեր մէքոսը պիտի ըլլար՝ զանոնք դէպի հարաւ ապահով հեռաւորութիւնով վայր մը դրկել: Ինչպէս գիտէք, էնվէր ալ նման ազդարարութիւն մը ըրած էր Հայերու Պատրիարքին: Բայց հակառակ այս բարեկամական զգուշացումներուն՝ Հայերը յեղափոխութիւն մը յարուցին:

Նպաստի մէքոսներու վրայ հարցումներ ըրի Խալիլին եւ հաղորդեցի թէ՛ արդէն քսան հազար ոսկի (100,000 soğar) հասած էր ինծի Ամերիկայէն:

— Ատիկա օսմանեան Կառավարութեան գործն է, պատասխանեց Խալիլ փափկօրէն, ջանադիր ըլլալ որ՝ այդ մարդիկը տեղաւորուին, բնակարան եւ մնունդ ունենան, մինչեւ որ կարենան ինքզինքնին հոգալ: Բնականաբար Կառավարութիւնը պիտի կատարէ իր պարտքը! Իսկ ձեր ունեցած քսան հազար ոսկին իրապէս բոլորովին ոչինչ է:

— Ծիշդ է, պատասխանեցի, ատիկա միայն սկզբնաւորութիւն մըն է, բայց վստահ եմ որ՝ մեզի պէտք եղած բոլոր դրամը կրնամ ձեռք բերել:

— Էնվէր փաշայի կարծիքը ան է որ, պատասխանեց, օտարականները պէտք չէ օգնեն Հայերուն: Ես չեմ ըսեր թէ՛ իր պատճառաբանութիւնները շիտակ կամ սխալ են: Միայն զանոնք եղածին պէս ձեզի կը հաղորդեմ: Էնվէր կ'ըսէ թէ՛ Հայերը գաղափարապաշտներ են, եւ այն պարագային՝ երբ օտարականները

յարաբերութեան մտնեն եւ անոնց օգնեն, անոնք պիտի բազա-
լերուին իրենց ազգային ցանկութիւններուն մէջ: Էնվէր բացար-
ձակապէս որոշած է ընդմիջտ խզել ամէն յարաբերութիւն
Հայերուն եւ օտարականներուն միջեւ:

— Էնվէրի միջոցը ա՛տ է՝ Հայերու կողմէ որեւէ նոր գործու-
նէութիւն կասեցնելու համար, հարցուցի:

Նայիլ չափազանց բարեմոյն կերպով ժպտեցաւ՝ այս քիչ մը
կծու հարցումին եւ պատասխանեց.

— Հայերը որեւէ գործունէութեան միջոց չունին ա՛յլ!

Որովհետեւ ոչ նուազ քան 500,000 Հայեր սպաննուած էին
մինչեւ այդ ատեն, նայիլի հնարամիտ պատրաստաբանութիւնը
փտահօրէն ունէր առաւելութիւն մը, որմէ զուրկ էին այս
տեսակցութեան մէջ ըրած իր միւս յայտարարութիւնները —
ատիկա ճշմարտութիւնն էր:

— Հարաւային նահանգներուն մէջ քանի՞ Հայեր օգնութեան
կը կարօտին, հարցուցի:

— Չեմ գիտեր, չեմ կրնար նոյն իսկ մօտաւոր թիւ մը
յայտնել ձեզի:

— Մէկ քանի հարիւր հազար հոգի կա՞ն:

— Կարծեմ թէ, խոստովանեցաւ նայիլ, բայց չեմ կրնար ըսել
ձեզի թէ՛ քանի՞ հարիւր հազար:

— Շատերը տառապեցան, աւելցուց, պարզապէս անոր
համար որ՝ Էնվէր չկրցաւ զինուոր տրամադրել՝ զանոնք պաշտ-
պանելու: Կանոնաւոր բանակէն զինուորներ ընկերացան անոնց
եւ անոնք շատ լաւ վարուեցան. նոյն իսկ անոնցմէ քառասունը
մեռան՝ Հայերը պաշտպանելու միջոցին: Բայց մենք պարտաւոր-
ուեցանք բանակին մէջ ծառայող ոստիկան-զինուորներէն շատերը
ետ քաշել եւ Հայերու ընկերանալու նոր պաշտօնի մը յատկա-
ցնել: Ճիշդ է որ այս ոստիկան-զինուորները շատ մը ողբալի
ծայրայեղութիւններ գործեցին:

— Շատ մը թիւրքեր համամիտ չեն այս ջարդերուն, ըսի:

— Չեմ ժխտեր ատիկա, պատասխանեց մշտահաւան նայիլ,
մինչ խոնարհութիւն ընելով դուրս կ'ելլէր:

Էնվէր, նայիլ եւ միւսները միշտ կը պնդէին իրենց շարու-
նակ յուզած այն տեսակէտին վրայ թէ՛ օտարականները պէտք
չէին նպաստ հայթայթել Հայերուն: Այս այցելութենէն քանի մը
օր ետքը, նախարարութեան խորհրդականը ամերիկեան Դեսպա-
նատուն եկաւ: Ան եկաւ ինծի ցուցնելու, ձէմայի՛ Էնվէրի ուղղած
մէկ հեռագիրը: Ձէմայ, որուն իրաւասութեանը տակ կը գտնուէին
այդ ատեն Սուրիայի Քրիստոնեաները, չափազանց կը նեղանար

այն շահագրգռութենէն՝ զոր ամերիկեան Հիւպատոսները կը ցուց-
նէին Հայերուն: Որով, կը խնդրէր ինծմէ որ՝ հրահանգ տամ
այդ պաշտօնատարներուն՝ «դադրելու հայկական խնդիրներով
զբաղելէ»: Թղթաբերը ըսաւ թէ՛ ձէմայ չէր կրնար անմեղը յան-
ցաւորէն զանազանել որով պիտի պարտաւորուէր ամէնքն ալ
պատժել! Քիչ ատեն ետքը, նայիլ կը զանգատէր ինծի թէ՛
ամերիկեան Հիւպատոսները Հայերու մասին Ամերիկա տեղեկա-
գիրներ կը դրկեն, եւ թէ՛ Կառավարութիւնը կը պահանջէր որ
անոնք դադրեցուէին:

Իրողութիւնը ան էր որ՝ ես ինքս էի որ կը դրկէի այդ տեղե-
կագիրներէն շատերը — եւ ես չդադրեցուցի:



Ճ Ա Վ Ի Տ Պ Է Յ

ՍԼԵՒՄՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԹՐԲԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՆ ՄԷՋ

Ցեղով Հրեայ, բայց կրօնով Մահմետական մը: Ժեօն Թիւրք
Կուսակցութեան ազդեցիկ անդամներէն մէկը: Իր յարումներովը՝
Համաձայնասէր [pro-Ally] էր: Սրբ Թիւրքիա Գերմանիայի կողմին
պատերազմի մօտ, ինք հրաժարեցաւ, քեւ ետէն նորէն պաշտօն
ստանձնեց:

Ի՛՛Է. ԳԼՈՒԽ

„ՀԱՅԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՈԶԻՆՉ ԶՊԻՏԻ ԸՆԵՄ”

Կ'ՐԱՒ ԳԵՐՄԱՆ ԴԵՍՊԱՆԸ

Կը կարծեմ թէ՛ հայկական հարցին մէջ չկայ փուլ մը, որ աւելի շահագրգռութիւն առթած ըլլայ, քան սա՛ . — Գերմանները բաժին ունէին անոր մէջ: Գայզերը ո՞ր աստիճան պատասխանատու էր այս ազգին միահաղոյն սպանութեան: Գերմանները խրախուսեցին. միայն ա՛նք գոցեցին, թէ հայաժամերուն ընդդիմացան: — Գերմանիա, վերջին չորս տարիներու ընթացքին, պատասխանատու դարձաւ պատմութեան մէջ շատ մը խիստ սեւ էջերու . Գերմանիա պատասխանատու է հայկական էջին համար ալ, որ անվիճելիօրէն ամէնէն սեւ էջն է:

Կ'ենթադրեմ որ շատեր՝ Թիւրք առաջնորդներու նկատողութիւններուն մէջ զանազան նմանութիւններ պիտի գտնեն գերման պատերազմական փիլիսոփայութեան հետ: Կրկնե՛մ՝ հայկական ջարդերու վրայ խօսած ատեն էնվէրի եւ ուրիշ Թիւրքերու կողմէ արտասանուած յատկանշական խօսքեր. «Հայերը ի՛րենք հրաւիրեցին այդ աղէտը իրենց զխտուն»: «Իրենց պատահելիքներուն մասին զգուշացուցիչ որոշ ազդարարութիւն եղած էր»: «Մենք կը կռուէինք մեր ազգային գոյութեան համար»: «Մենք իրաւունք ունէինք դիմելու այն բոլոր միջոցներուն, որոնք կրնային մեր նպատակները իրագործել»: «Մենք ժամանակ չունինք անմեղը մեղաւորէն զատելու»: «Մեր միտքին մէջ տիրող միակ բանը՝ պատերազմի մէջ յաղթական ելլելն է»:

Այս խօսքերը տեսակ մը ընտանի շեշտ ունին, չէ՞: Իրաւցնէ՛, ես կրնայի էնվէրի հետ այս տեսակցութիւնները կրկին գրել, փոխան Հայաստանի՝ Պեյնիքա բառը գործածել, փոխան էնվէրի՝ խօսքերը գերման զօրավարի մը բերանը դնել: որով գրեթէ կատարեալ պատկեր մը պիտի ունենայինք գերման վերաբերմունքին մասին՝ հանդէպ հպատակ ժողովուրդներու: Բայց Իրուսիացիներու ուսուցումները ասկէ գերազանց են: Հայերու հանդէպ ցուցուած վարմունքին մէջ կար երեւոյթ մը՝ որ նոր էր — ատիկա երբեք թրքական չէր: Թիւրքերը, դարերով խոշտանդած են իրենց հայ եւ ուրիշ հպատակ ժողովուրդները՝ աներեւակայելի բարբարոսութիւնով: Սակայն իրենց մէքոսները միշտ տհաս, բիրտ եւ



„ՔՐԵՍՍԻՆԻՍՈՓԼ ԳՕԼԷՃ”Ի ՈՒՍԱՆՈՂՈՒՂԻՆԵՐԸ

ԱՄԵՐԻԿԵԱՆ, ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԻ ՊԱՏԵԳԱՄԻՆ ՎՐԱՅ ՄՐ. ՄՐԿ.ՆԹԱՌԻԻ ԶԱԵ ԿՈՂՄԸ ԳՏՆՈՒՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ԹԻՐԻՔԻԱՅԻ ՊՈՒԼԿԱՐ ԴԵՍՊԱՆ Մ. ԳՕԼՈՒԶԷՅՆ Է

ոչ-գիտական եղած են: Անոնք գերազանցած են՝ Հայու մը ուղեղը ճոկանով մը դուրս թափելուն մէջ. այս անհանոյ պատկերը՝ կատարեալ ցուցում մըն է այն կոշտ ու նախնական մէքոսներուն . զորս անոնք կիրարկած են հայկական խնդիրին: Թիւրքերը գիտէին սպանութեան կիրառումը, բայց ո՛չ սպանութեան՝ իբր նրբարուեստ: Բայց 1915ին եւ 1916ին, Հայերուն հանդէպ ցուցուած վարմունքները՝ երեւան բերին կատարելապէս նոր մտայնութիւն մը: Այդ նոր յղացումն էր սարսօրութիւնը: Թիւրքերը, հինգ հարիւր տարիներու ընթացքին, անհամար ձեւեր հնարած էին քրիստոնեայ հպատակները ֆիզիքապէս չարչարելու, բայց վերջին թուականներէն առաջ, երբեք իրենց միտքէն անցած չէր Քրիստոնեաները զանգուածօրէն տեղահանել իրենց բնակավայրերէն, ուր հազարաւոր տարիներէ ի վեր ապրած էին, եւ զանոնք հարիւրաւոր մղոն հեռու անապատները բռնել: Թիւրքերը ուրկէ՞ առին այս զաղափարը: Արդէն նկարագրած եմ՝ թէ ի՛նչպէս, 1914ին, եւրոպական պատերազմէն քիչ առաջ, Կառավարութիւնը ոչ նուազ քան 100,000 Յոյներ ասիական ծովափունքին երկայնքը գտնուող իրենց տարեւոր բնակավայրերէն տարագրեց դէպի Եգէականի զանազան կղզիները: Ըսած եմ նաեւ թէ՛ Թիւրքիա գտնուող գերման ծովային ականաւոր փորձագէտներէն մէկը՝ ծովակալ Իւզէտով, յայտնած էր ինձի որ՝ Գերմանները թելադրած էին

Թիւրքերուն՝ այս տարագրութիւնը : Բայց ամենակարեւոր կէտը սա՛ չ թէ՛ ժողովուրդները խմբովին [en masse*] տարագրելու այս գաղափարը, արդի ժամանակներու մէջ, տարամերժօրէն գերմանական է : Ո՛վ որ կը կարդայ Համագերմանութեան վրայ գրուածները, միշտ կը հանդիպի անոր : Գերման աշխարհի մը ստեղծումին այս մոլեռանդները՝ իբր իրենց ծրագիրին մաս՝ խորհրդածաբար առաջադրած են Ֆրանսացիներու արտաքսումը Ֆրանսայի զանազան մասերէն, Պելճիքացիներունը՝ Պելճիքայէն, Փօլօնիացիներունը՝ Փօլօնիայէն, Ալաւներունը՝ Ռուսիայէն եւ ուրիշ բնիկ ժողովուրդներունը՝ այն երկիրներէն, ուր հազարաւոր տարիներով ապրած են, եւ պարպուած երկիրներուն մէջ գետեղումը քաջ եւ պարկեշտ Գերմաններուն : Բայց անհրաժեշտ իսկ չէ ապացուցանել որ՝ Գերմանները այս գաղափարը ջատագոված են իբր պետական քաղաքականութիւն մը. անոնք վերջին չորս տարիներու ընթացքին զայն գործնականապէս կը կիրարկեն : Անոնք տարագրեցին, չենք գիտեր քանի հազար Պելճիքացիներ եւ Ֆրանսացիներ՝ իրենց հայրենի երկիրներէն : Աւստր-եւ-Հունգարիա սերպ ընակչութեան մէկ մեծ մասը կոտորեց եւ հազարաւոր սերպ մանուկներ տարագրեց իր երկիրներուն մէջ, նպատակ ունենալով զանոնք մեծցնել իբր Կայսրութեան օրինաւոր հպատակներ : Մինչեւ պատերազմին վախճանը չպիտի գիտնանք թէ՛ ժողովուրդներու այս տեղափոխութիւնը ի՞նչ չափով տեղի ունեցած է : Բայց վստահաբար խիստ լայն սահմանով կատարուած է ան :

Կարգ մը գերման գրագէտներ նոյն իսկ ջատագովեցին այս քաղաքականութեան կիրառումը Հայերու վրայ : Փարիզի Tempsին գրածին համաձայն, Փաուլ Ռօուպախ, «Ասկէ առաջ Պերլին գումարուած համաժողովի մը մէջ, կը յանձնարարէր որ՝ Հայաստանը Հայերէն պարպուի : Հայերը Միջագետքի կողմերը պէտք էր ցրուել եւ անոնց տեղերը Թիւրքեր գետեղուելու էին, այնպէս մը որ՝ Հայաստան փրկուէր ռուսական ո՛րեւէ ազդեցութենէ եւ Միջագետքին ալ հայթայթուէին հողամշակներ՝ որոնցմէ զուրկ էր ներկայիս» : Այս բոլորին նպատակը բաւականաչափ յայտնի էր : Գերմանիա Միջագետքի անապատին մէջէն Պաղտատի երկաթուղին կը շինէր : Ասիկա էական մէկ մասն էր՝ Համպուրկէն Պարսկական Մոց տարածուող գերման մեծ նոր Կայսրութեան իրագործումին : Բայց այս երկաթուղին նպատակին չէր ծառայեր, եթէ զայն ապրեցնող խնայասէր եւ ճարտարագործ ժողովուրդ մը չծաղկէր շուրջը : Մոյլ Թիւրքը երբեք այդ տեսակ գաղութ մը

* Բնագիրին մէջ Ֆրանսերէն :

չպիտի կրնար հանդիսանալ : Բայց Հայը շինուած էր այն տեսակ ատարճով մը՝ որուն այս ձեռնարկը կը կարօտէր : Գերման աշխարհավարութեան ծրագիրին բոլորովին համապատասխան էր՝ վերցնել այս ժողովուրդը այն երկիրներէն՝ ուր տարիներէ ի վեր ապրած էր, եւ բունի փոխադրել դէպի ամայի եւ հրակէզ անապատը : Գերման տեսակէտին դէմ արգելք չէր կրնար ըլլալ մինչեւ անգամ այն իրողութիւնը որ՝ Հայերը շարունակ բարեխառն կլիմայի մը տակ ապրած էին : Ես զգացի որ՝ Գերմանիա այս գաղափարները տարիներով ամէն կողմ տարածած էր . ես նոյն իսկ տեղեկացայ թէ՛ գերման գիտուններ այս նիւթին վրայ բանախօսած էին Արեւելքի մէջ : «Կը յիշեմ ներկայ գտնուած ըլլալ գերման քաջածանօթ փռօֆէսէսօրի մը բանախօսութեան, կ'ըսէր ինծի Հայ մը : Իր գլխաւոր հիմնակէտը սա՛ էր թէ՛ պատմութեան ամբողջ ընթացքին, Թիւրքերը մեծ սխալ մը գործած էին, չափազանց զթոտ զտնուելով ոչ-Թիւրք ազգաբնակչութեան : Այս ճառախօսին կարծիքին համաձայն, Կայսրութեան բարգաւաճումը ապահովելու միակ միջոցն էր՝ առանց որեւէ զգայավարութեան գործել՝ Թիւրքիա գտնուող այն բոլոր հպատակ ազգութիւններուն եւ ցեղերուն հանդէպ, որոնք Թիւրքերու ծրագիրներուն հաշտ չէին» :

Հայաստանի խնդիրին մէջ համագերմաններն ալ ծայն ունեցած են : Պիտի բաւականանամ յիշելով խօսքերը Mittel-Europաի հեղինակին՝ Ֆրիտրիխ Նաումանի*, որ վատահօրէն համագերմանական գաղափարներու կարողագոյն տարածիչն է : Ասիայի վրայ իր երկին մէջ, Նաուման, որ իր ասպարէզը սկսած է իբր քրիստոնեայ կրօնաւոր, խիստ մանրամասնօրէն կը զբաղի 1895-96ի. հայկական ջարդերով : Բաւական է որ յիշատակեմ միայն քանի մը անցքեր, ցուցնելու համար այդ տեսակ խայտառակութիւններու հանդէպ՝ գերմանական քաղաքականութեան վերաբերումը : «Եթէ միայն նկատողութեան առնենք 80,000 էն 100,000 Հայերու կատաղի ջարդը, կ'ըսէ Նաուման, մէկ կարծիքի մը միայն կրնանք յանգիլ — մեր բովանդակ զայրոյթովը եւ ուժգնութիւնովը պէտք է բացարձակօրէն դատապարտենք թէ՛ մարդասպանները եւ թէ անոնց զրգուիչները : Անոնք ժողովուրդի զանգուածներու վրայ ամէնէն զարշիլ ջարդերը կատարած են, աւելի՛ մեծաթիւ եւ աւելի՛ վատթար ջարդեր՝ քան Շարլմանեի կողմէ Սաքսոններու վրայ կատարուածը : Այն չարչարանքները՝ զորս Լէփցիուս կը նկարագրէ՝ կը գերազանցեն ամէն ինչ որ գիտենք մենք երբեք : Ուրեմն ի՞նչ բան կ'արգիլէ մեզ Թիւրքին վրայ

* Ֆրիտրիխ Նաուման, անգամ Ռայխարպի, Կեղրոնակաճ Սւրոպա, Ա. Հատր :

յարձակելէ եւ ըսելէ . «Կորսուէ՛, անզգամ» : Միայն մէկ բան կ'արգելէ մեզ, որովհետեւ Թիւրքը կը պատասխանէ . «Ե՛ս ալ իմ գոյութեանս համար կը պայքարիմ» : Եւ իրաւցնէ՛, մենք կը հաւատանք իրեն : Մենք կը հաւատանք, — հակառակ այն զայրոյթին՝ զոր մեր մէջ կ'արթնցնէ մահմետական արիւնոտ բարբարոսութիւնը, — որ Թիւրքերը ինքզինքնին կը պաշտպանեն օրինաւորապէս, եւ հայկական խնդիրին եւ հայկական ջարդերուն մէջ ամէն բանէ առաջ մենք կը տեսնենք թրքական ներքին քաղաքականութեան խնդիր մը, միայն դուռագ մը այն ճգնաժամէն՝ որմէ կ'անցնի մեծ Կայսրութիւն մը, որ չուզեր մեռնիլ՝ առանց վերջին փորձ մը ընելու՝ արիւն թափելով ինքզինքը փրկելու համար : Բացի Գերմանիայէն, բոլոր մեծ տէրութիւնները որդեգրած են քաղաքականութիւն մը՝ որ կը ձգտի տապալել իրերու ներկայ կացութիւնը Թիւրքիայի մէջ : Այս ձգտումին համեմատ, Թիւրքիայի հպատակ ժողովուրդներուն համար անոնք կը պահանջեն իրաւունքները մարդուն, կամ մարդկութեան, կամ քաղաքակրթութեան, կամ քաղաքական ազատութեան — մէկ խօսքով, բան մը՝ որ զանոնք Թիւրքերուն հաւասարներ դարձնէ : Բայց, հին հռոմէական բռնաւորական պետութիւնը ո՛րչափ քիչ որ կրնար հանդուրժել Նազովրեցիին կրօնքին, նո՛յնչափ քիչ կրնայ թիւրք Կայսրութիւնը, — որ իրապէս հռոմէական արեւելեան Կայսրութեան քաղաքական յաջորդն է, — հանդուրժել արեւմտեան ազատ Քրիստոնէութեան որեւէ ներկայացուցչութեան, իր հպատակներուն մէջ : Թիւրքիայի համար հայկական խնդիրին վտանգը՝ շիջումի վտանգն է : Այս պատճառով, Թիւրքիա կը դիմէ ասիական բարբարոս պետութեան արարքներուն : Թիւրքիա Հայերը բնաջնջած է ա՛յն աստիճան լայն չափով որ՝ անոնք երկար շրջանի մը ընթացքին կարող չափտի ըլլան արտայայտուիլ՝ իբր քաղաքական ուժ : Գործուածը, անշուշտ զարհուրելի արարք մըն է, քաղաքական յուսահատութեան արարք մը, իր մանրամասնութիւններովը ամօթալի, բայց դարձեալ քաղաքական պատմութեան ասիական ձեւով մէկ հատուածն է Հակառակ այն տհաճութեան՝ զոր գերման քրիստոնեան կը զգայ գործուած այս արարքներէն, ան ուրիշ բան չունի ընելիք, բայց եթէ խաղաղօրէն կրցածին չափ բուժել վէրքերը եւ թողուլ որ՝ իրերը իրենց քնթացքը առնեն : Երկար ատենէ իվեր, Արեւելքի մէջ, մեր քաղաքականութիւնը որոշուած է. մենք կը պատկանինք տէրութիւններու այն խմբակին՝ որ կը պաշտպանէ Թիւրքիան . այդ կացութեանէն է որ՝ մենք պէտք է ճշդենք մեր ընթացքը Մենք չենք արգելիք որեւէ եռանդուն Քրիստոնեայ՝ այս զարհուրելի

ոճիրներուն զոհերը խնամելէ, մանուկները մեծցնելէ եւ չափահասները սնուցանելէ : Թող Աստուած օրհնէ այս բարի գործքերը, նման ուրիշ բոլոր հաւատքի գործքերու : Միայն թէ, մենք պէտք է զգուշանանք որ՝ մեր գթութեան զործերը չառնեն ձեւը քաղաքական արարքներու, որոնք ընդունակ ըլլան շեղեցնելու մեր գերման քաղաքականութիւնը : Միջազգայնականը, ան որ կը պատկանի գաղափարապաշտ անգլիական դպրոցին, կրնայ պաշտպանել Հայերը : Ազգայնականը, ան որ չփափաքիր Գերմանիայի ապագան Անգլիայի զոհել, արտաքին քաղաքականութեան խնդիրներու մէջ, պէտք է հետեւի Պիզմարքի կողմէ գծուած համբուճ, եթէ նոյն իսկ անգութ զգացումներով ըլլայ Ազգային քաղաքականութիւն . ահա՛ այն բարոյական խոր պատճառը՝ որուն համար մենք՝ իբր պետական մարդեր՝ պէտք է անտարբեր դառնանք Թիւրքիայի քրիստոնեայ ժողովուրդներու տառապանքներուն հանդէպ, ո՛րչափ ալ անոնք մեր մարդկային զգացումները խոցոտող կարենան ըլլալ Ա՛յդ է մեր պարտականութիւնը, զոր մենք պէտք է ճանչնանք եւ խոստովանինք Աստուծոյ եւ մարդուն առջեւ : Եթէ այս պատճառով մենք կը պահպանենք թիւրք Պետութեան գոյութիւնը, մենք այդ բանը կ'ընենք մեր սեփական շահախնդրութեանը համար, որովհետեւ ինչ որ նկատի ունինք մենք, մեր մեծ ապագան է Մէկ կողմը կը գտնուին մեր պարտականութիւնները՝ իբր ազգ, միւս կողմը՝ մեր պարտականութիւնները՝ քոր անհատ : Պահեր կան, երբ, պարտականութիւններու պայքարի մը մէջ, մենք կրնանք ընտրել միջին գետին մը : Ատիկա շիտակ է՝ մարդկային տեսակէտէ, բայց քիչ անգամ շիտակ՝ բարոյական իմաստով : Այս պարագային, ինչպէս բոլոր նման վիճակներու մէջ, մենք պէտք է որոշակի ճանչնանք թէ՛ ո՞ր կողմը կը գտնուի մեծագոյն եւ կարեւորագոյն բարոյական պարտականութիւնը : Անգամ մը այդ տեսակ ընտրանք մը ընելէ ետքը, ա՛լ պէտք չէ վարանինք : Վիլհելմ Բ. իր ընտրանքը կատարած է : Ան Սուլթանին բարեկամը եղած է, որովհետեւ մտահոգուած է աւելի մեծ եւ աւելի անկախ Գերմանիայով մը :

Ա՛ս էր Հայերուն դէմ գործադրուած գերման պետական քաղաքականութիւնը, եւ ես առիթը ունեցայ նաեւ տեսնելու Գերմաններու կողմէ ատոր գործնականացումը : Առաջին տեղեկագիրները Պոլիս հասնելուն պէս, խորհեցայ որ՝ բոլոր երկիրներու դիւանագիտական ներկայացուցիչներուն համար՝ բռնագործութիւնները դադրեցնելու ամէնէն յարմար միջոցը պիտի ըլլար՝ միացած դիմում մը կատարել օսմանեան Կառավարութեան :

Մարտի վերջերը, այս խնդիրին մասին խօսք բացի Վանկէնհայմի: Հայերուն հանդէպ իր հակակրօթիւնը անմիջապէս յայտնի եղաւ: Սկսաւ զանոնք ամբաստանել ապերասան բացատրութիւններով: Թալէադի եւ էնվէրի պէս ուզեց Վանի դէպքը առանց պատճառ տրուելու բմբոստութիւն մը նկատել. Հայերը՝ իր եւ իրենցիններուն աչքին՝ պարզապէս դաւադիր անպիտաններ էին:

— Ես Սիոնականներուն պիտի օգնեմ, ըսաւ, խորհելով որ այս յայտարարութիւնը ինծի անձնապէս հաճելի պիտի ըլլար, բայց ո՛չ մէկ բան չպիտի ընեմ Հայերուն համար:

Վանկէնհայմ հայկական հարցը կ'ուզէր նկատել խնդիր մը՝ որ գլխաւորաբար կը զբաղեցնէր Միաց.-Նահանգները: Հայերու համար իմ մշտական բարեխօսութիւններս իր գերմանիկ միտքին մէջ յայտնապէս այն տպաւորութիւնը ստեղծած էին որ՝ այդ ժողովուրդին հանդէպ ցուցուած ամէն գութ՝ շնորհի մը պիտի ըլլար ամերիկեան Կառավարութեան: Եւ այդ միջոցին, ան տրամադիր չէր ամերիկեան ժողովուրդին հանոյ եղող ո՛րեւէ բան ընելու:

— Ամերիկա յայտնապէս այն միակ երկիրն է, որ Հայերով շատ կը շահագրգռուի, ըսաւ: Ձեր միսիօնարները անոնց բարեկամներն են եւ ձեր ժողովուրդը անոնց պաշտպանը եղած է: Հետեւաբար, անոնց օգնելու խնդիրը ամբողջապէս ամերիկեան հարց մըն է: Ուրեմն, ի՞նչպէս կրնաք ակնկալել ինձմէ որ՝ որեւէ բան ընեմ, երբ Միաց.-Նահանգները ռազմանիւթ կը ծախեն Գերմանիայի թշնամիներուն: Մը. Պրայըն վերջերս յայտարարութիւն մը հրատարակեց, ըսելով թէ՛ չճգորութենէ դադրիլ պիտի նշանակէր Անգլիայի եւ Ֆրանսայի ռազմանիւթ չծախելը: Ո՛րչափ ատեն որ ձեր Կառավարութիւնը այդ դիրքը պահէ, մենք Հայերուն համար ոչինչ չենք կրնար ընել:

Բացի գերման տրամաբանէ մը, հաւանօրէն ո՛չ մէկը ո՛րեւէ կապակցութիւն պիտի գտնէր՝ Դաշնակիցներուն մեր պատերազմական նիւթեր ծախելուն եւ հարիւր հազարաւոր հայ կիներու եւ մանուկներու վրայ Թիւրքիայի կատարած յարձակումներուն միջեւ: Ահա գրեթէ այդչափ էր Վանկէնհայմի մօտ մինչեւ այն ատեն ունեցած յաջողութիւնս: Յաճախ խօսեցայ իրեն, բայց անփոփոխելիօրէն Հայերուն գթալու իմ պաշտպանողականներս կը խափանէր՝ Տարտանէլի մէջ տեսնուած ամերիկեան ռումբերուն գործածութիւնը յիշատակելով: Շատ չանցած, ցրտութիւն մը առաջ եկաւ մեր միջեւ, իբր արդիւնք իրեն զլանալուս այն «պատիւ» ընել թէ՛ ի՛նք դադրեցուցած ըլլայ անգլիացի եւ ֆրանսացի քաղաքային անձերու Կէլիպօլուի թերակղզին տարագրու-

թիւնը: Հեռածայնով մեր քիչ մը կծու խօսակցութենէն ետքը, որուն միջոցին ինձմէ խնդրած էր որ Ուաշինգթըն հեռագրեմ թէ՛ այդ խնդիրին մէջ ինք Թիւրքերը helzed [գրգռած] չէր ըրած, մեր փոխադարձ այցելութիւնները շարաթններով դադրեցան:

Պոլիսի մէջ, կային կարգ մը ազդեցիկ Գերմաններ, որոնք համամիտ չէին Վանկէնհայմի տեսակէտին: Արդէն խօսած եմ Փաուլ Վայցի մասին, Ֆրանսիոյ Զայրուկի երեսուն տարուան թղթակիցը, որ հաւանօրէն շատ աւելի բան գիտէր Մօտաւոր Արեւելքի գործերուն մասին, քան ուրիշ որեւէ Գերման: Թէեւ Վանկէնհայմ շարունակ Վայցի կը դիմէր զանազան տեղեկութիւններու համար, բայց միշտ անոր խորհուրդին չէր անսար: Վայց համամիտ չէր՝ հանդէպ Հայաստանի կայսերական ուղղափառ վերաբերումին, որովհետեւ այն հաւատքը ունէր թէ՛ գործնակաւ նապէս միջամտելու մերժումը՝ իր հայրենիքին յաւիտենական չարիք մը կը հասցնէր: Վայց իր այս տեսութիւնը կը ներկայացուէր Վանկէնհայմի, բայց աննշան արդիւնքի կը տիրանար: Վայց այս մասին անձնապէս խօսեցաւ ինձի, 1916 Յունիսիսին, Թիւրքիայէն մեկնելէս քանի մը շաբաթ առաջ: Այս նիւթին: մասին կը յիշատակեմ իր իսկ խօսքերը:

— Կը յիշեմ որ՝ դուք նախապէս ինձի ըսիք թէ՛ Գերմանիա ի՞նչ մեծ սխալ մը կը գործէ հայկական հարցերուն մէջ: Ես կատարելապէս համամիտ էի ձեզի: Բայց երբ այդ տեսութիւնը պաշտպանեցի Վանկէնհայմի ներկայութեանը, զիս երկու անգամ սենեակէն վռնտեց!

Ուրիշ Գերմանացի մը. որ դէմ էր խուժուժութիւններուն, Նէօյուաթն էր, գերման Դեսպանատունի խորհրդականը: Իր զայրոյթը անանկ աստիճանի մը հասած էր որ՝ Թալէադի եւ էնվէրի դէմ իր լեզուն գրեթէ ոչ-դիւանագիտական դարձած էր: Ինք ալ յայտնեց ինձի թէ՛ չէր յաջողած անոնց վրայ ազդել:

— Անոնք անզգայ են եւ որոշած են իրենց ներկայ ընթացքը շարունակել, ըսաւ Նէօյուաթ:

Անշուշտ ո՛չ մէկ Գերման կրնար աւելի ազդեցութիւն գործել թիւրք Կառավարութեան վրայ, ո՛րչափ ատեն որ՝ գերման Դեսպանը մերժէր միջամտել: Եւ, քանի՛ ժամանակ անցնէր, հետզհետէ աւելի որոշ կը դառնար որ՝ Վանկէնհայմ փափաք չունէր տարագրութիւնները դադրեցնելու: Սակայն, յայտնի էր որ կրկին բարեկամական յարաբերութիւն հաստատել կ'ուզէր ինձի հետ: Շատ չանցած, երրորդ անձի դրկեց ինձի՝ հարցնելու թէ՛ ինչո՞ւ երբեք չի երթար զինքը տեսնել: Չեմ գիտեր թէ՛ այս ուժացումը ո՛րչափ երկար պիտի տեւէր, եթէ անձնական մեծ վիշտ մը հար-

ուածած չըլար զինքը: Յունիսի մէջ, տեղակայ զնդապետ Լայփ-
ցիկ, գերման գինուորական կցորդը: Լիւլէ-Պուրկազի երկաթուղիի
կայարանին մէջ մեռաւ: Խիստ եղբրական եւ խորհրդաւոր պա-
րագաներու տակ: Ան սպաննուեցաւ ատրճանակի հարուածէ մը.
պատմութիւն մը կ'ըսէր թէ՛ հրագէնը դիպուածով պարպուած
էր. ուրիշ մը կ'ըսէր թէ՛ Գնդապետը անծնասպան եղած չէր. իսկ
ուրիշ մըն ալ թէ՛ Թիւրքերը սպաննած էին զայն, շփոթելով Լի-
ման փօն Չամտէրսին հետ: Լայփցիկ՝ Վանկէնհայմի մտերիմ բա-
րեկամներէն մէկն էր. երիտասարդութեան ատեն՝ սպայ եղած էին
նոյն զօրագունդին մէջ. իսկ Պոլիսի մէջ ալ գրեթէ անբաժան
էին: Անմիջապէս Դեսպանին գացի, ցաւակցութիւններս յայտնե-
լու: Չինքը շատ վշտահար եւ մտահոգ գտայ: Ինծի յայտնեց թէ՛
սիրտի հիւանդութիւն ունէր, թէ՛ գրեթէ ուժերը սպառած էին
եւ թէ՛ շաքաթուան մը բացակայութեան առտօնութիւն խնդրած
էր: Ես գիտէի թէ՛ մի՛այն իր ընկերոջ մահը չէր որ Վանկէնհայմի
միտքը կը չարարէր: Գերման միսիօնարները Հայերու մասին տե-
ղեկագիրներ կը տեղացնէին Գերմանիա եւ Կառավարութենէն կը
պահանջէին զաղբեցնել ջարդերը: Բայց, այդ օրը, ո՛րչափ ալ
ընկճուած եւ ջղայնուած ըլլար Վանկէնհայմ, շատ մը նշաննե-
րով ապացուցուց որ՝ տակաւին նո՛յն անդրուելի գերման զօրա-
պաշտն էր: Քանի մը օր ետքը, այցելութիւնս փոխադարձելու
եկած ըլլալով, հարցուց .

— Ո՞ւր է Քիւնէրի բանակը: Մենք հիմա տրամադիր ենք Պել-
ճիբան յանձնելու, շարունակեց: Գերմանիա մտադիր է շինել
ընդարձակ սահմանի վրայ շարժիլ կրցող ընդժովեաներու հսկայա-
կան նաւատորմիդ մը: Հետեւաբար, յաջորդ պատերազմին, մենք
կարող պիտի ըլլանք կատարելապէս պաշարել Անգլիան: Որով,
մենք Պելճիբային պէտք չունինք, ընդժովեաներու իր խարխա-
ներուն համար: Չայն Պելճիբացիներուն պիտի վերադարձնենք,
փոխարէն առնելով Գօնկօն:

Ես կրկին հալածուած Քրիստոնեաներու անունով պաշտպա-
նողական մը կատարեցի: Կրկին այս նիւթին վրայ երկարօրէն
վիճաբանեցանք:

— Հայերը, ըսաւ Վանկէնհայմ, այս պատերազմին մէջ ապա-
ցուցին Թիւրքերուն թշնամի ըլլալին: Կատարելապէս ակներեւ է
որ՝ այդ երկու ժողովուրդները չեն կրնար երբեք նոյն երկիրին
մէջ մէկտեղ ապրիլ: Ամերիկացիները պէտք է որ անոնց մէկ մասը
Միաց.-Նահանգները փոխադրեն. մենք Գերմանացիներս ալ մաս
մը Լեհաստան պիտի դրկենք եւ իրենց տեղը Լեհ Հրեաներ պիտի
փոխադրենք հայկական նահանգները — միայն եթէ խոստանան
հրաժարիլ իրենց Սիոնական ծրագիրներէն:

Թէեւ անսուրբ պահանջկոտութիւնով խօսեցայ, բայց նորէն
Դեսպանը մերժեց Հայերուն օգնել:

Եւ սակայն, Յուլիս 4ին, Վանկէնհայմ բողոքի պաշտօնական
ծանուցագիր մը ներկայացուց: Բայց իր խօսքը չուղղեց Թալէադի
կամ Էնվէրի, որոնք հեղինակութիւն ունեցող միակ անձերն էին,
այլ Եպարքոսին, որ շուք մըն էր միայն: Այս դիմումը ունէր ճիշդ
նոյն բնոյթը իր ձեռի համար [pro-forma] բողոքին, ընդդէմ
Ֆրանսացի եւ անգլիացի քաղաքային անձերու կէլիպօլու դրկուե-
լուն, նշանակէտ ծառայելու համար Դաշնակից նաւատորմիդին:
Ատոր միակ նպատակն էր՝ Գերմանները պաշտօնապէս գործին
միջամուխ ձեւացնել: Հաւանօրէն այս բողոքին կեղծուպատիրու-
թիւնը աւելի ինծի՛ յայտնի էր, քան ուրիշներու, որովհետեւ,
ճիշդ այն պահուն, երբ Վանկէնհայմ այդ կարծեցեայ բողոքը կը
ներկայացնէր, ինծի կը բացատրէր այն պատճառները թէ՛ ինչո՞ւ
Գերմանիա չէր կրնար իրականապէս գործնական քայլեր առնել
ջարդերը վերջացնելու համար: Այս տեսակցութենէն քիչ ետքը,
Վանկէնհայմ արձակուրդ ստացաւ եւ Գերմանիա գնաց:

Թէեւ անզգայ, ինչպէս ինքզինքը հանդիսացուց Վանկէնհայմ,
բայց ան Հայերու հանդէպ չէր այնչափ ոխերիմ, որչափ Պոլիսի
գերման ծովային կցորդը՝ Հուժան: Այս անձը ընդհանրապէս մեծ
ազդեցութեան տէր մարդ մը նկատուած էր. իր դիրքը կը համա-
պատասխանէր Միաց.-Նահանգներու մէջ Պոյ-էտի դիրքին: Գեր-
ման դիւանագէտ մը անգամ մը ինծի ըսաւ թէ՛ Հուժան էնվէ-
րէն կամ Թալէադէն ա՛լ աւելի Թիւրք էր: Հակառակ այս հռչա-
կին, ես ջանացի իր ազդեցութիւնը օգտագործել: Իրեն զիմեցի
մասնաւորաբար անոր համար որ՝ էնվէրի բարեկամն էր եւ ընդ-
հանրապէս նկատուած էր հաղորդակցութեան օղակ մը՝ գերման
Դեսպանատունի եւ Թիւրք գինուորական իշխանութիւններու
միջեւ: Հուժան Քայգէրին անծնական գաղտնի պատուիրակն էր,
Պերլինի հետ մշտական յարաբերութեան մէջ էր եւ անկասկած
ինք կը ցոլացնէր Գերմանիայի տիրող իշխանութիւններու վերա-
բերումը: Հուժան հայկական հարցին վրայ խօսեցաւ ծայրայեղ
անկեղծութիւնով եւ քրտութիւնով:

— Ես կեանքիս մեծագոյն մասը Թիւրքիա ապրած եմ, ըսաւ
ան ինծի, եւ ես կը ճանչնամ Հայերը: Ես գիտեմ նաեւ թէ՛ թէ՛
Հայերը թէ՛ Թիւրքերը այս երկիրին մէջ մէկտեղ չեն կրնար ապրիլ:
Այս երկու ցեղերէն մէկը պէտք է անհետանայ, որով, չեմ պար-
սաւեր Թիւրքերը՝ Հայերուն իրենց ըրածներուն համար: Կը կար-
ծեմ թէ՛ Թիւրքերը կատարելապէս իրաւունք ունին: Տկարագոյն
ազգը պէտք է զոհուի: Հայերը կ'ուզեն Թիւրքիան անդամահատել:

Անոնք այս պատերազմին մէջ դէմ են Թիւրքերուն եւ Գերմաններուն, եւ հետեւաբար իրաւունք չունին հոս ապրելու: Ես կը կարծեմ նաեւ որ՝ Վանկէնհայմ շատ առաջ գնաց բողոք ներկայացնելով. ես իմ մասին՝ այդ բանը չպիտի ընէի:

— Ես սուկումս յայտնեցի այս տեսակ զգացումներու հանդէպ, բայց Հուման շարունակեց ամբաստանել հայ ժողովուրդը եւ սրբացնել Թիւրքերը ամէն մեղքի:

— Ապահովութեան խնդիր մըն է, պատասխանեց. Թիւրքերը պարտաւորուած են ինքզինքնին պաշտպանել, եւ, այս տեսակէտին համաձայն, անոնք կատարելապէս իրաւունք ունին իրենց ըրածներուն համար: Ինչո՞ւ Գատր-Քէօյի մէջ Հայերու պատկանող 7,000 հրացան կը գտնուի: Նախապէս էնվէր ուզեց Հայերու հետ ծայրայեղ չափաւորութիւնով վարուիլ, եւ վեց ամիս առաջ պահանջեց որ՝ անոնց նոր առիթ մը տրուի իրենց ուղղամտութիւնը ապացուցանելու: Բայց, Հայերուն Վանի մէջ ըրածէն ետքը, էնվէր պարտաւորուեցաւ տեղի տալ բանակին, որ անդադար կը պահանջէր որ՝ իր կռնակը պաշտպանուի: Քօմիթէն որոշեց տարագրութիւնները եւ էնվէր ակամայ համակերպեցաւ: Բոլոր Հայերը կ'աշխատին Թիւրքիայի ուժին խորտակումին. ուրեմն մէկ բան կը մնայ ընելիք. զանոնք տարագրել: Էնվէր իրականապէս շատ բարեսիրտ մարդ մըն է. անիկա անձնապէս կարող չէ նոյն իսկ ճանճի մը վնաս հասցնել: Բայց երբ կարգը կու գայ պաշտպանելու գաղափար մը՝ որուն հաւատքը ունի, կը պաշտպանէ անվախօրէն եւ առանց օջր ծախը հաշուելու: Ասկէ զատ, Ժէօն-Թիւրքերը Հայերէն ազատուելու են՝ միայն իբր ինքնապաշտպանութեան խնդիր: Քօմիթէն ուժով է միայն Պոլիսի եւ ուրիշ մէկ քանի մեծ քաղաքներու մէջ: Ուրիշ ամէն կողմ, ժողովուրդը անդրդուելիօրէն «Հին Թիւրք» է. եւ այդ «Հին Թիւրք»երը ամէնքն ալ մոլեռանդ են: Հին Թիւրքերը ներկայ Կառավարութեան համախոհ չեն, որով Քօմիթէն ստիպուած է իր ուժին սահմանին մէջ եղող ամէն բան ընել՝ ինքզինքը պաշտպանելու համար: Բայց մի կարծէք որ՝ ուրիշ Գրիստոնեաներու ճրեւէ վնաս պիտի հասնի: Թիւրք մը դիւրին կերպով կրնայ երեք Հայ գատել, հազար Թիւրքերու մէջէն!

Հուման միակ կարեւոր Գերմանը չէր որ այս վերջին զգացումը կ'արտայայտէր: Շատ մը աղբիւրներէ սկսան տեղեկութիւններ հասնիլ ինձի թէ՛ Հայերու նպաստին իմ միջամտութիւնս հետզհետէ իմ անունս կը նսեմացնէր գերման պաշտօնական շրջանակներու մէջ: Հոկտեմբերի մէջ օր մը, Նէօյուաթ, գերման խորհրդականը, ինձի եկաւ եւ ցուցուց հեռագիր մը՝ զոր

նոր ստացած էր գերման արտաքին գործերու նախարարութեան կողմէ: Այդ հեռագիրը կը պարունակէր այն տեղեկութիւնը թէ՛ Լօստերու ժողովին մէջ Լօստ Ֆրիու եւ Լօստ Քրօւըր Հայերու վրայ խօսած էին, ջարդերու պատասխանատուութիւնը Գերմաններուն վրայ ձգած էին, եւ յայտարարած էին որ՝ այդ տեղեկութիւնը իրենց հաղորդուած էր ամերիկացի վկայի մը կողմէ: Հեռագիրը կ'ակնարկէր նաեւ Ռեպուբլիկանրըր Կեզքի մէկ յօդուածին, որ կ'ըսէր թէ՛ զանազան տեղերու մէջ գերման հիւպատոսները նիւթած եւ նոյն իսկ վարած էին հայաժանսերը, եւ մասնաւորաբար կը յիշէր Հալէպի Ռէզլէրը: Նէօյուաթ ըսաւ թէ՛ իր Կառավարութիւնը զինքը դրկած էր՝ Պոլիսի ամերիկեան Դեսպանէն հերքում մը ստանալու: Ես մերժեցի այդ հերքումը տալ, ըսելով որ ես զիս իրաւասու չէի զգար պաշտօնապէս որոշելու թէ՛ գործուած չարիքներուն պատասխանատուն Թիւրքիա՞ էր թէ՛ Գերմանիա:

Ասկէ զատ, ամէն կողմ, պաշտօնական շրջանակներու մէջ, կարծես այն համոզումը կը տիրէր թէ՛ ամերիկեան Դեսպանին գործն էին եւրոպայի եւ Միաց.-Նահանգներու մէջ հայկական ջարդերու մասին լոյս տեսած ընդարձակ հրատարակութիւնները: Չեմ վարանիր ըսել թէ՛ այդ մասին իրաւունք ունէին: Դեկտեմբերին, որդիս, Հէնրի Մօրկընթաու, այցելեց Կլիպօլուի Թերակոզին, ուր հիւրընկալուեցաւ զօրավար Լիման Ֆօն Չանտէրսի եւ ուրիշ գերման սպաներու կողմէ: Հազիւ թէ ոտք դրած էր գերման սպայակոյտի կայանը, երբ սպայ մը մօտենայ անոր եւ կ'ըսէ.

— Ամերիկեան Թերթերուն մէջ հայկական խնդիրին վրայ ձեր հօրը գրած յօդուածները խիստ շահեկան են:

— Հայրս որեւէ յօդուած գրած չէ. կը պատասխանէ որդիս:

— Օ՛հ, կ'ըսէ սպան, այդ յօդուածներուն ստորագրուած ջրլալը չի նշանակեր որ՝ ինք չէ զանոնք գրողը!

Ձօն Չանտէրս ալ կը խօսի այդ նիւթին վրայ:

— Ձեր հայրը մեծ սխալ մը կը գործէ, կ'ըսէ, հրապարակելով դէպքեր՝ Թիւրքերու կողմէ Հայերուն եղածներուն մասին: Ատիկա բնաւ իրեն վերաբերող գործ չէ:

Որովհետեւ այդ տեսակ ակնարկութիւններ ազդեցութիւն չեն ընել իմ վրայ, Գերմանները յայտնապէս որոշեցին սպառնալիքներու դիմում ընել: Աշունի սկիզբը, Տքթ. Նօսիկ անունով մէկը եկաւ Պերլինէն Պոլիս: Տքթ. Նօսիկ գերման Հրեայ մըն էր, որ յայտնի էր թէ՛ Պոլիս եկած էր Սիոնականներու դէմ գործելու: Ինձի հետ քանի մը վայրկեան տեսակցելէ ետքը, որուն միջոցին նկարագրեց իր հրէական գործունէութիւնը, եւ անմիջ-

պէս հասկցայ թէ՛ գերման քաղաքական գործակալ մըն էր ան : Երկու անգամ ինծի հետ տեսակցելու եկաւ : Առաջին անգամ իր խօսակցութիւնը քիչ մը անկապակից էր . որոշապէս իր այցելութեան նպատակն էր ինծի ծանօթանալ եւ իմ բարեացակամութիւնս շահիլ ծածկամտօրէն : Երկրորդ անգամ, զանազան նիւթերու վրայ տարտամօրէն ճառելէ ետքը, ուղղակի կանգ առաւ բուն նպատակին շուրջը : Իր աթոռը ինծի մօտեցուց եւ սկսաւ խօսիլ խիստ բարեկամական եւ մտերմական կերպով մը :

—Պրն. Դեսպան, ըսաւ, մենք երկուքս ալ Հրեայ ենք եւ ես կ'ուզեմ ձեզի խօսիլ ինչպէս Հրեայ մը՝ Հրեայի մը հետ: Կը յուսամ որ՝ դուք չպիտի վիրաւորուիք, եթէ այս պարագայէն քաջախրուիմ, ձեզի պզտիկ խորհուրդ մը տալու : Դուք Հայերու դատին շատ նուիրուած էք եւ չեմ կարծեր որ տեղեակ ըլլաք թէ՛ այդ պատճառով որչափ կը կորսնցնէք ժողովրդականութիւննիդ՝ տիրող իշխանութիւններու աչքին: Իրաւ որ, կը մտածեմ թէ՛ պարտաւոր եմ ձեզի տեղեկացնել որ՝ թիւրք Կառավարութիւնը մտադիր է ձեր ետ կանչուիլը պահանջելու: Հայերու համար ձեր բողոքները անօգուտ պիտի ըլլան : Գերմանները զանոնք չպիտի պաշտպանեն եւ դուք օգտակար ըլլալու ձեր պատեհութիւնը իրապէս կը փճացնէք եւ ինքզինքնիդ կ'ենթարկէք այն վտանգին որ՝ ձեր ասպարէզը ամօթալի կերպով մը վերջ գտնէ :

—Իմ անձին բարիքովը իրապէս շահագրգռուած ըլլալնուդ համար է որ՝ այդ խորհուրդը կու տաք ինծի, հարցուցի :

—Անշուշտ, պատասխանեց ան, մենք բոլոր Հրեաներս հպարտ ենք ձեր կատարած գործերուն համար եւ պիտի չսխորժէինք տեսնել որ՝ ձեր ասպարէզը աղէտալիօրէն վերջ գտնէ :

—Ուրեմն գերման Դեսպանատունը վերադարձէք, յարեցի, եւ Վանկէնհայմին յայտնեցէք ինչ որ կ'ըսեմ—Թող գլուխ կանգնի եւ զիս ետ կանչել տայ : Եթէ ես մարտիրոսութեան պիտի ենթարկուիմ, չեմ կրնար երեւակայել լաւագոյն դատ մը՝ որուն համար զոհուիմ : Ճշմարտապէս, հաճոյքով պիտի նուիրուէի այդ զոհաբերութեան, որովհետեւ չեմ կրնար երեւակայել աւելի մեծ պատիւ մը՝ քան ետ կանչուիլս անոր համար որ, ես՝ Հրեայ մը, իմ բոլոր ուժս գործադրած եմ՝ հարիւր հազարաւոր Քրիստոնեաներու կեանքը փրկելու :

Տքթ. Նօսիկ աճապարանքով մեկնեցաւ գրասենեակէս եւ անկէ իվեր ա՛լ զինքը տեսած չեմ : Շատ չանցած, երբ էնվէրին պատահեցայ, ըսի իրեն թէ՛ զրոյցներ կային որ՝ օսմանեան Կառավարութիւնը իմ ետ կանչուիլս պահանջելու վրայ է : Էնվէր շատ ճոռովաբանեց՝ հերքելու համար որ՝ այդ ամբողջ պատմութիւնը ստախօսութիւն մըն էր :

—Մենք այդ տեսակ ծիծաղելի սխալ մը գործելու յանցանքը չպիտի ունենայինք, ըսաւ :

Ուրեմն ամենաթեթեւ կասկածը իսկ չկար թէ՛ զիս ահաբեկելու այդ փորձը թխտուած էր գերման Դեսպանատունին մէջ :

Հոկտեմբերի սկիզբը, Վանկէնհայմ Պոլիս դարձաւ : Չարմացայ այն փոփոխութիւններուն՝ որոնք առաջ եկեր էին իր անձին մէջ : Ինչպէս որ կը գրէի օրագիրիս մէջ, «անիկա կատարելապէս Վօթանի պատկերին կը նմանէր» : Իր դէմքը գրեթէ մլշտ կը խաղար . իր աջ աչքին վրայ կը կրէր սեւ ծածկոց մը, եւ անսովոր կերպով ջղայնացած եւ ընկճուած կ'երեւար : Ըսաւ ինծի թէ՛ կարճ հանգիստ մը վայելած էր, թէ՛ պարտաւորուած էր ժամանակին մեծ մասը Պերլին անցրնել, գործի սպասելով : Իր վերադարձէն քանի մը օր ետքը, իրեն պատահեցայ Հաս-Քէօյ զացած ատենս . ըսաւ որ՝ ամերիկեան Դեսպանատուն կ'երթար . մէկտեղ Դեսպանատուն դարձանք : Վերջերս Քալէադ ինծի յայտնած էր թէ՛ մտադիր էր թիւրքիս մնացած բոլոր Հայերը տարագրել . այս յայտարարութիւնը զիս մղած էր վերջին խնդրանք մը կատարել Պոլիս գտնուող այն միակ մարդուն, որ այդ սարսափներուն վերջ դնելու կարող էր : Վանկէնհայմը առաջնորդեցի Դեսպանատունին երկրորդ յարկը, ուր կրնայինք բոլորովին առանձին ըլլալ եւ չընդմիջուիլ . հոն, ժամէ մը աւելի, թէյի սեղանին շուրջը, այս խնդիրին վրայ մեր վերջին տեսակցութիւնը կատարեցինք :

—Պերլինէն ինծի հեռագրուած է թէ՛, ըսաւ, ձեր արտաքին գործերու նախարարը ձեր տեղեկատուութեան համեմատ յայտնած է թէ՛ Պուլկարիայի մեր կողմը անցնելէն ետքը, ամէն ատենէ աւելի Հայեր ջարդուած են :

—Ո՛չ, ես այդ տեսակ հեռագիր տուած չեմ, պատասխանեցի : Կ'ընդունիմ որ շատ մը տեղեկութիւններ հաղորդած եմ Ուաշինգտոն : Արտաքին գործերու նախարարութեան ղրկած եմ ամէն տեղեկագիրի եւ ամէն յայտարարութեան օրինակները : Անոնք ապահով կերպով պահուած են հոն, եւ ինծի ինչ որ ալ պատահի, մերկացումը կատարեալ է, որով, ամերիկեան ժողովուրդը իմ բերանացի տեղեկատուութեանս չի կարօտիր ճշմարտութեան ծանօթանալու համար : Բայց ձեր ըրած այս մասնաւոր յայտարարութիւնը բոլորովին ճիշդ չէ : Ես միայն Սր. Լէնսինկի ծանուցի թէ՛ Պուլկարիա ներկայիս թիւրքիայի զինակիցը դարձած ըլլալով, ա՛յ կորսուած էր անոր գործ դնել կրցած ազդեցութեան ամէն յոյս՝ ջարդերը դադարեցնելու համար :

Կրկին խօսեցանք տարագրութիւններուն վրայ : Գերմանիա ատոնց պատասխանատու չէ, ըսաւ Վանկէնհայմ :

Դուք կրնաք յաւիտեան պնդել ատոր վրայ, պատասխանեցի, բայց ո՛չ մէկը չպիտի հաւատայ: Աշխարհ շարունակ պատասխանատու պիտի նկատէ Գերմանիան. այդ ոճիրներուն մեղքը մշտնջենապէս ձեր դատապարտութիւնը պիտի ըլլայ: Ես գիտեմ որ՝ բողոքի թղթածրար մը ունիք դուք: Բայց ինչի՞ կը ծառայէ ադ: Դուք ինձմէ աղէկ գիտէք որ՝ այդ տեսակ բողոք մը որեւէ արդիւնք չպիտի ունենայ: Ես չեմ պնդեր որ՝ Գերմանիա պատասխանատու է այդ ջարդերուն՝ այն իմաստով որ ինք եղած է անոնց դրդիչը: Բայց Գերմանիա պատասխանատու է այն իմաստով որ՝ ինք կարող էր ջարդերը դադրեցնել եւ չգործածեց այդ ուժը: Եւ միայն Ամերիկա եւ ներկայի ձեր թշնամիները չեն որ՝ ձեզ պատասխանատու պիտի բռնեն: Օր մը գերման ժողովուրդն է որ ձեր Կառավարութիւնը հաշիւի պիտի կանչէ: Դուք քրիստոնեայ ժողովուրդ մըն էք, եւ պիտի գա՛յ օր՝ երբ Գերմանները պիտի ըմբռնեն որ՝ դուք թոյլ տուիք մահմտական ժողովուրդի մը որ բնաջնջ ուրիշ քրիստոնեայ ազգ մը: Մ՛րչափ այլանդակ է ձեր բողոքը թէ՛ ես տեղեկութիւններ հաղորդած ըլլամ ամերիկեան Կառավարութեան: Դուք կը հաւատա՞ք որ՝ գաղտնի կրնաք պահել ասոնց նման դիւային խուժուժութիւններ: Այդ տեսակ յիմարական եւ ջայամամիտ գաղափարի մի՛ ծառայէք — մի՛ կարծէք որ այդ խժուժութիւնները դուք չգիտնալ ձեւացնելով՝ կրնաք աշխարհն ալ անգէտ պահել: Այս տեսակ ոճիրներու աղաղակը մինչեւ երկինք կը բարձրանայ: Կը կարծէ՞ք որ՝ ասոնց նման դէպքերու ծանօթ ըլլալէ ետքը, կրնայի Կառավարութեանս չտեղեկագրել: Եւ մի՛ մոռնաք որ՝ ինչպէս ամերիկացի, նոյնպէս գերման միսիօնարներ ալ ինձի տեղեկութիւններ կը ղրկեն Հայերու մասին:

— Ինչ որ կ'ըսէք՝ կրնայ ճիշդ ըլլալ, պատասխանեց գերման Դեսպանը, բայց մեծագոյն խնդիրը՝ որուն դեմ կը գտնուիմք մենք՝ այս պատերազմը շահի՞նք ե: Թիւրքիա իր հաշիւը կարգադրեց իր արտաքին թշնամիներուն հետ, Տարտանէլի եւ Կէլիպօլուի մէջ: Հիմա կը ջանայ իր ներքին գործերը կարգադրել: Թիւրքերը տակաւին շատ կը վախնան որ՝ ֆալիթիւրապիօսները կրկին կը պարտադրուին իրենց: Այս ճնշումին ենթարկուելէ առաջ, կ'ուզեն իրենց ներքին խնդիրներուն այն տեսակ ձեւ մը տալ որ՝ ալ առիթ չմնայ օտար ազգերու կողմէ որեւէ միջամտութեան: Թալէադ ինձի յայտնեց թէ՛ որոշած է այդ գործը աւարտել՝ հաշտութեան հռչակումէն առաջ: Թիւրքերը չեն կարծեր որ՝ ապագային Ռուսերը պիտի գտնուին այն տեսակ դիրքի մը մէջ՝ որ ըսեն թէ՛ հայկական խնդիրներու միջամտելու իրաւունք ունին,

անոր համար որ՝ Ռուսիա մեծ թիւով Հայեր կան, որոնք Թիւրքիայի իրենց կրօնակիցներուն կրած տառապանքներէն վրդովուած են: Կիրս շարունակ կ'ընէր այդ բանը. հիմա Թիւրքերը չեն ուզեր որ՝ ռուս կամ ուրիշ որեւէ երկրի Դեսպան ապագային ատանկ առիթ ունենայ: Հայերը ինքնին շատ խեղճ արժէք մը կը ներկայացնեն: Դուք Պոլիս շփումի մէջ էք զարգացած դասակարգէ Հայերու հետ, եւ այդ մարդոց վրայէն կը կազմէք ձեր գաղափարը. բայց բոլոր Հայերը այդ տիպարէն չեն: Իրաւ է որ, կ'ընդունիմ թէ անոնք զարհուրելի վարմունքներու ենթարկուեցան: Ես մէկը ղրկեցի՝ հետազօտութիւններ կատարելու համար, եւ ան ինձի տեղեկագրեց թէ՛ ամենալայրագ խուժուժութիւնները կատարուած էին ո՛չ թէ Թիւրք պաշտօնեաներու, այլ աւագակներու կողմէ:

Վանկէնհայմ կրկին թելադրեց որ՝ Հայերը Միաց.-Նահանգները փոխադրուին. իսկ ես, անգամ մըն ալ թուեցի այն պատճառները՝ թէ ինչո՞ւ անգործադրելի էր ադ:

— Այս բոլոր նկատողութիւնները մէկ կողմ թողունք, ըսի: Նկատի չառնենք ո՛չ մէկ բան — զինուորական պահանջք, պետական քաղաքականութիւն եւ ուրիշ ամէն ինչ եւ խնդիրին վրայ նայինք պարզապէս իբր մարդկային հարց: Յիշեցէք որ՝ մեծ մասը այն մարդոց՝ որոնք ծանօթ վարմունքներուն կ'ենթարկուին, ծերունիներէ, պառաւներ եւ անպաշտպան մանուկներ են: Ինչո՞ւ իբր մարդկային էակ՝ չէք կրնար ընդունիլ թէ՛ այդ մարդիկը ամէնքն ալ իրաւունք ունին ապրելու:

— Թիւրքիայի ներքին գործերու ներկայ վիճակին մէջ, չպիտի միջամտեմ, պատասխանեց Վանկէնհայմ:

Տեսայ որ՝ անօգուտ էր նիւթը աւելի երկար ծեծել: Գորովանքէ եւ մարդկային գութէ՛ զուրկ մարդ մըն էր ան. զգուանքով երեսս անդին դարձուցի: Վանկէնհայմ ոտքի ելաւ մեկնելու. ծցուելուն պէս՝ շունչը բռնուեցաւ եւ յանկարծ ծուկկերը կթոտեցան: Ցատկեցի եւ զինքը բռնեցի ճիշդ այն պահուն՝ երբ իյնալու վրայ էր: Պահ մը բոլորովին շմորած մնաց ցնորած կերպարանքով մը ինձի կը նայէր. յետոյ անմիջապէս ինքզինքը ժողովեց եւ իր հաւասարակշռութիւնը վերագտաւ: Դեսպանին թելը մտայ, սանդուղներէն վար առաջնորդեցի զայն եւ իր ինքնաշարժին մէջ գետեղեցի: Մինչեւ այդ պահը իր նուաղումի նոպան զգալապէս անցուց եւ ապահով տուն հասաւ: Երկու օր ետքը, ճաշասեղան նստելու ատեն, կաթուածի հարուած մը կ'ունենայ: Վեր՝ իր անկողինը կը տարուի, բայց ալ գիտակցութիւնը չի վերագտներ: Հոկտեմբեր 24ին, պաշտօնապէս ծանուցուեցաւ ինձի թէ՛ Վան-

կէնհայտ մեռած էր : Վանկէնհայտէն իմ վերջին յիշատակս եղաւ
 ան , երբ Դեսպանը ամերիկեան Դեսպանատունի իմ գրասենեակս
 նստած , բացարձակապէս կը մերժէր որնէ ազդեցութիւն բանե-
 ցնել՝ ազգի մը ջարդուիլը արգելելու համար : Ինք այն միակ
 մարդն էր՝ որ կրնար դադրեցնել այդ ոճիրները , եւ իր Կառա-
 վարութիւնը՝ այդ բանին կարող միակ Կառավարութիւնը , բայց ,
 Վանկէնհայտ շատ անգամներ ըսած էր ինձի . «Մեր միակ նպա-
 տակակէտն է՝ այս պատերազմը շահիլ» :

Քանի մը օր ետքը , պաշտօնական թիւրքիա եւ դիւանագի-
 տական աշխարհը իրենց վերջին մեծարանքը հատուցին բրու-
 սիական աշխարհավարութեան այս կատարեայ անձնաւորումին :
 Յուզարկաւորութիւնը տեղի ունեցաւ Բերայի գերմանական Դես-



“ԿԵՕՊԷՆ,,Ի ԳԵՐՄԱՆ ԵՒ ՅԻՒՐԲ ՍՊԱՆԵՐԸ

Աջ եւ ձախ ծայրիներէն զատ , միւս բոլոր սպաները գերման
 են : Թիւրքիայի՝ եւրոպական պատերազմին մէջ մտնելէն ետեւ ամիս
 առաջ , ծովակալ Զուխօն , որ խմբանկատին կեդրոնը գտնուող դէմքն
 է—հրամանատարն էր թիւրք ճաւաղատիկին : Ամբողջ այդ շրջանին ,
 գերման Կառավարութիւնը կը հաւատարմէր թէ՛ Կոպիկնր եւ Պրեզիտուն
 Թիւրքիայի «ձախած» էր :



ՈՒՐՖԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՆԵՐՔՆԱԿՈՂՍԸ

Ուր բազմաթիւ Հայեր այրուեցան : Հայ եկեղեցին հիմնուած է
 Զորրոզ Դարուն : Հայ եկեղեցին նկատուած է ամենէն հին քրիս-
 տոնեայ պետական եկեղեցին :

պանատունի պարտէզին մէջ : Շրջափակը ծաղիկներով լեցուած էր :
 Բացի հանգուցեալին ընտանիքէն , Դեսպաններէն եւ Սուլթանին
 ներկայացուցիչներէն , գրեթէ ամբողջ բազմութիւնը ոտքի վրայ
 մնաց , պարզ բայց տպաւորիչ արարողութեան միջոցին : Յետոյ
 կազմուեցաւ թափօրը : Գերման նաւազներ իրենց ուսերուն վրայ
 կրեցին դազաղը . ուրիշ գերման նաւազներ կրեցին հսկայ ծաղ-
 կեպսակները . դիւանագիտական մարմինի բոլոր անդամները ,
 ինչպէս նաեւ թիւրք Կառավարութեան պաշտօնեաները , հետիոտն
 հետեւեցան թափօրին :

Թափօրին առջեւէն կ'երթար Եպարքոսը : Ես ամբողջ ճամ-
 բուն ընթացքին էնվէրի բովէն կը քալէի : Կոպիկնր եւ Պրեզիտուն

բոլոր սպաները, ինչպէս նաեւ բոլոր գերման զօրավարները, մեծ համազգեստով հետեւեցան թափօրին :

Կարծես ամբողջ Պոլիսը ճամբաներուն վրայ շարք կազմած էր եւ տեսարանը տօնի օրուան մը երեւոյթը առած էր : Առաջացանք դէպի Տօլմա-Պաղչէի պարտէզը, անցնելով մեծ դուռէն, ուրկէ Դեսպանները կը մտնեն, երբ կու գան իրենց յանձնարարագիրները ներկայացնել Սուլթանին : Ծովափը շոգեմակոյկ մը կը կենար, սպասելով մեր ժամանումին, եւ որուն մէջ, Նէօյուաթ, գերման խորհրդականը կը գտնուէր, պատրաստ ընդունելու իր պետին անշնչացած մարմինը : Դագաղը, ամբողջովին ծաղիկներով ծածկուած, նաեւ մէջ դրուեցաւ : Մինչ շոգեմակոյկը դէպի Վոսփոր բացուեցաւ, Նէօյուաթ, բարձրահասակ Բրուսիացի մը, զինուորական համազգեստ հագած, ճերմակ փետուրներու ծփացող խորձով սաղաւարտը գլուխը, անշարժ եւ լուռ ցցուած էր : Վանկէնհայմ թաղուեցաւ Թարսպիայի ամառնային Դեսպանատունին պարտէզը, իր ընկերոջ գնդապետ Լայիցիկի քով : Ուրիշ ոչ մէկ հանգստավայր աւելի յարմար պիտի ըլլար, որովհետեւ այդ տեղը թատրը եղած էր իր դիւանագիտական յաջողութիւններուն, եւ այդ տեղէն է որ, երկու տարիէն քիչ աւելի առաջ, ան ղեկավարած էր Կոպեհը եւ Պրեզաւուն եւ ապահով կերպով զանոնք Պոլիս բերած, ատով անխուսափելի դարձնելով որ՝ Թիւրքիա իր ուժերը միացնէ Գերմանիայի, եւ հարթելով ճամբան այն բոլոր յաղթանակներուն եւ բոլոր սարսափներուն՝ որոնք անտեղիտալի կերպով յաջորդեցին այդ դէպքին :



ԻՐ ԳԼՈՒԽ

ԷՆՎԷՐ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ

ՀՐԱԺԵՇՏ ՍՈՒԼԹԱՆԻՆ ԵՒ ԹԻՒՐԲԻԱՅԻ

Հայերու բնազնջումը կասեցնելու իմ անյաջողութիւնս՝ Թիւրքիան իմ աչքիս սոսկումի վայր մը դարձուցած էր, եւ ա՛լ անհանդուրժելի կը գտնէի իմ ամենօրեայ յարաբերութիւնս մարդոց հետ, որոնք ո՛րչափ ալ հաճոյակատար, կամակատար եւ բարեմտյն ըլլային, հանդէպ ամերիկեան Դեսպանին, բայց նորէն կը մխալին մէկ միլիոնի չափ մարդկային էակներու արիւնովը : Եթէ տակաւին բան մը կարենայի ընել. կա՛մ Ամերիկացիներուն եւ թշնամի օտարականներուն, կա՛մ Կայսրութեան հալածուած ժողովուրդներուն, յօժարակամ պիտի մնայի : Սակայն, Ամերիկացիներու եւ Եւրոպացիներու դիրքը ա՛լ ապահով դարձած էր : Իսկ հպատակ ժողովուրդներու մասին՝ իմ միջոցներուս վախճանին հասած էի : Ասկէ զատ, Միաց.-Նահանգներուն մէջ կը մօտենար դէպք մը, որ իմ կարծիքովս, անխուսափելիօրէն մեծագոյն ազդեցութիւնը պիտի ունենար աշխարհի եւ ժողովրդապետութեան ապագային վրայ. — Նախագահական պայքարն էր ադ : Կը զգայի թէ՛ միջազգային քաղաքականութեան մէջ ոչինչ ա՛յնչափ կարեւոր էր, որչափ նախագահ Ուիլսոնի վերընտրութիւնը : Միաց.-Նահանգներուն եւ ախարհի համար չէի կրնար երեւակայել աւելի՛ մեծ աղէտ մը, քան ամերիկեան ազգին՝ այդ մեծ պետական մարդուն սրտովին ուժ տալէ ձախողիլը : Եթէ կարենայի Մր. Ուիլսոնի վերընտրութեանը գործնականապէս օժանդակել, ես կարող եղած պիտի ըլլայի, այդ պահուն, իմ երկիրիս մէջ, լաւագոյն կերպով ծառայած ըլլալ հայրենիքիս :

Աս էր իմ վճիռս :

Ես երկիր վերադառնալու ուրիշ գործնական պատճառ մըն ալ ունէի : Այդ պատճառն էր՝ Նախագահին եւ Նախարարութեան բերանացի կերպով հաղորդել՝ եւրոպական կացութեան վրայ ունեցած ուղղակի աղբիւրէն քաղուած տեղեկութիւններս : Մասնաւորաբար կարեւոր էր անոնց հաղորդել՝ հաշտութեան հարցին վրայ վերջին մասնակի ծանօթութիւններս : 1915ի վերջերը եւ 1916ի

սկիզբները, Պոլիսի մէջ ամէնէն հրատապ նիւթը հաշտութիւնն էր: Էնվէր փաշա շարունակ կը խնդրէր ինծմէ՝ միջնորդել Նախազահին մօտ, պատերազմը վերջացնելու: Շատ անգամներ խոստովանեցաւ թէ՛ թիւրքիա պատերազմէն յոգնած էր եւ իր փրկութիւնը կախում ունէր շուտափոյթ հաշտութենէ մը: Արդէն նկարագրած եմ՝ պատերազմին պայթելէն քանի մը ամիս առաջ տիրող պայմանները: Բայց, 1915ի վերջերը կացութիւնը անհունապէս աւելի գէշ էր: Երբ թիւրքիա որոշած էր իր հպատակ ժողովուրդներուն՝ մասնաւորապէս Հայերուն եւ Յոյներուն տարագրումը եւ ջարդը, թիւրքիա ստորագրած էր իր իսկ տնտեսական մահափճիւրը: Ինչպէս արդէն ըսած եմ, ասոնք այն ժողովուրդներն էին՝ որոնք տէրն էին թիւրքիայի ճարտարարուեստներուն եւ տնտեսական ուժերուն եւ առաջացուցած էին անոր երկրագործութիւնը. եւ ահա՛. ազգային այդ մեծ ոճիրին նիւթական հետեւանքները սկսան ամէն կողմ երեւան գալ: Արտերը անմշակ մնացած էին, եւ ամէն օր հազարաւոր գիւղացիներ կը մեռնէին անօթութենէ: Որովհետեւ Հայերը եւ Յոյներն էին ամէնէն շատ տուրք վճարողները, անոնց ոչնչացումը մեծապէս նուազեցուց պետական եկամուտները. եւ թրքական բոլոր նաւահանգիստներուն դրապէս պաշարուած ըլլալուն պատճառով՝ մաքսային հասոյթները դադարած էին: Միայն այն պարագան որ՝ թիւրքիա իր պարտքին տոկոսը վճարելու հազիւ բաւականաչափ դրամ ձեռք կը բերէր, — դեռ չենք խօսիր սովորական եւ պատերազմական ծախքերուն վրայ, — կատարեալ գաղափար մը կու տայ իր շատ առաջ գացած հիւժուովն մասին: Այս պայմաններուն մէջ, թիւրքիա շատ պատճառներ ունէր անմիջական հաշտութեան մը փափաքելու: Ասկէ զատ, էնվէր եւ տիրող կուսակցութիւնը կը վախնային յեղափոխութենէ մը, եթէ պատերազմը շուտով չվերջանար: Հետեւաբար, Ամերիկայի արտաքին գործերու նախարարութեան զրեցի. «Այս մարդիկը պատրաստ են զրեթէ ամէն բան ընել, իրենց իշխանութիւնը պահպանելու համար»:

Եւ սակայն, հաշտութեան համար էնվէրի թախանձանքներուն շատ լուրջ կարեւորութիւն չընծայեցի:

— Դուք ձեզի եւ ձեր կուսակցութեան համար կը խօսիք այս նիւթին մասին, հարցուցի անոր, թէ իրաւ Գերմանիայի համար ալ կը խօսիք: Ես ձեր կողմէ առաջարկ չեմ կրնար ներկայացնել, եթէ Գերմանները ձեզի համախոհ չեն: Այս մասին անոնց խորհուրդ հարցուցի՞ք:

— Ո՛չ: պատասխանեց էնվէր, բայց գիտեմ թէ անոնք ինչ կը մտածեն:

— Ատիկա բաւական չէ, պատասխանեցի: Հաւազոյն էր որ՝ ուղղակի գերման Դեսպանատունին միջոցով հաղորդակցէիք անոնց հետ: Ես չեմ ուզեր ներկայացնել առաջարկ մը՝ որ ամբողջ տեւտոնեան զինակիցներուն վաւերացումը չկրեր:

Էնվէր կը մտածէր որ՝ զրեթէ անօգուտ էր այդ նիւթին մասին գերման Դեսպանին հետ տեսնուիլ: Սակայն, յայտնեց թէ՛ մօտ օրէն Օրսօվա պիտի մեկնէր, հունգարական եւ ռումանական սահմանազուխին վրայ գտնուող քաղաք մը, ուր խորհրդակցութիւն մը պիտի ունենար Ֆայքէնհայմի հետ, որ այդ միջոցին սպայակոյտի պետն էր: Էնվէր ըսաւ թէ՛ Ֆայքէնհայմ կարելոր անձնաւորութիւն մըն էր, որուն հետ պիտի բանակցէր հաշտութեան հարցին վրայ:

— Ինչո՞ւ կը կարծէք որ՝ հաշտութեան վրայ խորհրդակցելու յարմար պահն է հիմա, հարցուցի:

— Որովհետեւ երկու շաբաթէն Սերպիան ամբողջապէս ոչնչացուցած պիտի ըլլանք: Կը կարծենք որ՝ այդ բանը Դաշնակիցները պիտի համոզէ հաշտութեան մասին խորհրդակցելու: Ֆայքէնհայմի իմ այցելութեանս նպատակն է՝ Եգիպտոսի նուաճումին համար կարգադրութիւնները լրացնել: Մենք յոյս ունինք որ՝ քիչ օրէն Յունաստան մեզի պիտի միանայ: Մենք արդէն թօնօնորով պարէն եւ կենդանիի կեր կը պատրաստենք՝ Յունաստան ղրկելու: Երբ Յունաստանը շահինք, անշուշտ Ռումանիա մեզի պիտի միանայ: Երբ Յոյները եւ Ռումէնները մեզի միանան, մէկ միլիոն զինուորի թարմ ուժ մը պիտի ունենանք: Երկաթուղիի ուղղակի ճամբան բացուելուն պէս, մեզի պէտք եղած թնդանօթները եւ ռազմանիւթը պիտի ստանանք Գերմանիայէն: Այս բոլորը մեզի համար նպատաւոր պահ մը կը կազմեն՝ հաշտութեան հարցը ձեռք առնելու:

Պատերազմական նախարարին առաջարկեցի որ՝ իր առաջադրած տեսակցութեան մէջ Ֆայքէնհայմի հետ բանակցի այդ նիւթին վրայ եւ դարձին արդիւնքը ինձի տեղեկագրէ: Ով գիտէ ինչպէս՝ այս տեսակցութիւնը ականջը հասաւ գերման նոր Դեսպան՝ Կոմս Վօլֆ-Մէթթէրնիխի, որ անմիջապէս ինձի եկաւ՝ հարցին շուրջը տեսակցելու: Ան յայտնապէս կ'ուզէր երկու բաներու մասին ազդել իմ վրայ. թէ՛ Գերմանիա երբեք չպիտի յանձնէր Ալզաս-Լոռէնը, թէ՛ պիտի պահանջէր իր բոլոր գաղթավայրերուն վերադարձուիլը: Պատասխանեցի թէ՛ վստահաբար անօգուտ էր հաշտութեան վրայ խորհրդակցելի, մինչեւ որ նախ Անգլիա զինուորական մեծ յաղթանակ մը չահէր:

— Կրնա՞յ ատանկ ըլլալ, պատասխանեց Կոմսը, բայց մի՛

յուսաք որ Գերմանիա Անգլիայի թոյլ տայ այդ տեսակ յաղթանակ մը շահիլ , պարզապէս որպէսզի ան հաշտութեան վրայ մտածելու տրամադիր դառնայ : Բայց կարծեմ դուք կը սխալիք : Սխալ է ըսել թէ՛ Մեծ Բրիտանիա արդէն մեծ յաղթանակներ չէ շահած : Կարծեմ իրեն նպաստաւոր շատ մը խիստ հիմնական յաղթանակներ շահած է : Նկատի ունեցէք թէ ի՞նչ ըրած է : Մովորու իր անվիճելի գերիշխանութիւնը հաստատած է եւ բովանդակ գերման վաճառականութիւնը խափանած : Ոչ միայն իր հողամասէն ոտնաչափ մը չէ կորսնցուցած , այլ ահագին նոր հողեր շահած է : Կցած է Եգիպտոսը եւ Կիպրոսը եւ նուաճած գերման գաղթավայրերը : Տիրացած է Միջագետքի մէկ մեծ մասին : Որչափ անիրմաստ է ըսել թէ՛ Անգլիա ոչինչ չէ շահած պատերազմէն !

Դեկտեմբեր 1ին , էնվէր ամերիկեան Դեսպանատուն եկաւ եւ Ֆայլէնհայմի հետ իր տեսակցութեան արդիւնքը հաղորդեց : Գերման սպայակոյտի պետը ըսած էր թէ՛ Գերմանիա շատ պիտի փախաբէր հաշտութեան համար բանակցել , բայց Գերմանիա չէր կրնար առաջուրնէ իր պայմանները նշանակել . որովհետեւ այդ տեսակ արարք մը ամէն կողմէ իբր տկարութեան նշան պիտի մեկնուէր : Բայց կարելի էր վստահիլ սա՛ բանին .— Դաշնակիցները այդ պահուն շատ աւելի նպաստաւոր պայմաններ կրնային ձեռք բերել . քան ապագայ ուրիշ որեւէ ատեն : Էնվէր յայտնեց ինձի թէ՛ Գերմանները պատրաստ էին վերադարձնելու Ֆրանսացիներէն իրենց գրաւած բոլոր հողերը եւ գրեթէ ամբողջ Պելճիքան : Բայց միակ բանը՝ զոր վճռապէս որոշած էին , Սերպիայի վերջնական անդամահատութիւնն էր : Մակեդոնիայէն ոչ մէկ արտավար տեղ պիտի վերադարձուէր Սերպիայի , եւ նոյն իսկ հին Սերպիայէն մէկ բանի մասեր պիտի զրաւուէին . այսինքն , Սերպիա պալքանեան պատերազմներէն առաջուանէն շատ աւելի պզտիկ երկիր մը պիտի դառնար , եւ , իրականին մէջ , իբր անկախ պետութիւն , գրեթէ մէջտեղէն պիտի վերնար : Այս բոլորին իմաստը բացորոշ էր , նոյն իսկ այդ ատեն : Գերմանիա հասած էր այն նպատակին՝ որուն համար իրապէս պատերազմի մտած էր . — Պերլինէն դէպի Պոլիս եւ Արեւելք ուղղակի ճամբայ մը : Այսպէս , համագերմանական «Կեդրոնական Եւրոպա»ի [Mittel Europa] ծրագիրին մէկ մասը , եւ լաւագոյն մասը , զինուորական կատարուած իրողութիւն մը դարձած էր : Յայտնապէս , Գերմանիա պատրաստ էր վերադարձնել հիւսիսային Ֆրանսայի եւ Պելճիքայի նուաճուած նահանգները , պայմանով որ , Համաձայնութիւնը հաւանէր Գերմանիայի աշխարհակալութիւնները պահելուն : Ֆայլէնհայմի ըրած առաջարկը նիւթապէս չէր տարբերեր այն առաջարկու-

թենէն՝ զոր Գերմանիա 1918 *ի վերջերը ներկայացած էր : Այս էնվէր-Ֆայլէնհայմ տեսակցութիւնը , ինձի հաղորդուած ձևին մէջ , կը ցուցնէ որ՝ առաջարկը յանկարծ յղացուած գերման յատակագիծ մը չէր , այլ ան առաջուրնէ Գերմանիայի ծրագիրը եղած էր :

Այս բոլորին մէջ , կանխահաս հաշտութեան մը ո՛չ մէկ երաշխիք տեսայ ես : Եւ սակայն խորհեցայ որ՝ պէտք էր այս իրողութիւնները նախագահին պարզել : Հետեւաբար Ուաշինկղըն դիմում ըրի արծակուրդի արտօնութիւն ուզելով , ինչ որ տրուեցաւ :

Յունվար 13ին , հրաժեշտի այցելութիւն տուի էնվէրին եւ Թալէադին : Երկուքն ալ իրենց ամէնէն զուարթ վիճակին մէջն էին : Կերեւայ թէ երկուքն ալ՝ ինձի պէս՝ կը վերջիշէին այն ծանրակշիռ դէպքերը , որոնք տեղի ունեցած էին Թիւրքիայի եւ աշխարհի մէջ , երկու տարի առաջ իրենց հետ իմ առաջին հանդիպումէս իվեր : Այն ատեն , Թալէադ եւ էնվէր պարզապէս յուսահատ բաղդախնդիրներ էին , որոնք բարձր դիրքերու հասած էին սպանութիւնով եւ դաւով . իրենց դիրքը անհաստատ էր . որովհետեւ մէկ վարկեանէն միւսը՝ յեղափոխութիւնը կրնար զանոնք ընկղմել այն անշքութեան մէջ՝ ուրկէ մէջտեղ ելած էին : Բայց հիմա , անոնք օսմանեան կայսրութեան անվիճելի բռնաւորներն էին , աշխարհի մէջ զինուորական հզօրագոյն տէրութեան զինակիցները եւ բրիտանական նաւատորմիին յաղթականները — բաւական անհեթեթօրէն ինքզինքնին այդպէս կը նկատէին : Իրենց մեծ յաղթանակին այդ պահուն — Տարտանէլի արշաւանքին դաշնակից բանակը դեռ երկու շաբաթ առաջ պարպած էր իր դիրքերը — թէ՛ Թալէադ եւ թէ՛ էնվէր իրենց երկիրը կրկին աշխարհակալ տէրութիւն մը կը նկատէին :

— Կը լսեմ որ՝ դուք ձեր երկիրը կը վերադառնաք՝ մեծաքանակ դրամ վատնելով ձեր նախագահը վերընտրելու , ըսաւ Թալէադ . — հեզմական ակնարկութիւն մըն էր աս այն պարագային

* Հոս սեղև կ որ դիտել ռակս քե՛ մեմի կը հետեւին Մօրկընթաուի գիրքին երկու հրատարակութիւններուն միանգամայն , մէկը սպուած Եիւրօօր՝ , 1918ին , AMBASSADOR MORGENTHAU'S STORY , միւսը սպուած Լոնտօն , Լոյնպէս 1918ին , SECRETS OF THE BOSPHORUS յիշողով , երկուքն ալ դեսպան հեղի-նակին վաւերական քննադրները , անունով միայն օտարեր : Առայինին մէջ , այս քուականը 1914 արձանագրուած է , երկուորիին մէջ 1918 ? , հարցական նշանով մը : Ունինք նաեւ MÉMOIRES DE L'AMBASSADEUR MORGENTHAU յիշողով մը : 1919ին Փարիզ սպուած Ֆրանսերէն ազատ քարգանաութիւնը , որ այս քուականը 1919ին Փարիզ սպուած Ֆրանսերէն ազատ քարգանաութիւնը , որ այս քուականը 1916: Ինչպէս յայտնի է՝ մեմի կը հետեւին անգլիերէն քննադրին . հայ ընթերցողներուն ներկայացնելու համար աներկապի հեղինակին Լուս երկին հարագաւ եւ ամբողջական քարգանաութիւնը :

որ՝ ես նախագահն էի Ազգային ժողովրդական Յանձնաժողովին Ելեւմտական Յանձնախումբին :

—Շատ տարօրինակ է ադ , ինչո՞ւ հոս չէք մնար եւ այդ դրամը Քիւրքիայի չէք տար : Մենք ձեր ժողովուրդէն աւելի պէտք ունինք այդ դրամին : Բայց կը յուսանք որ՝ շուտով վերադառնաք , աւելցուց Քալէադ , արեւելքցիի քաղաքավար (եւ կեղծաւոր) ձեռով : Դուք եւ մենք իրապէս մէկտեղ մեծցանք . դուք հոս եկաք ճիշդ այն ատենները՝ երբ մենք պաշտօնի գլուխ անցանք , եւ չենք գիտեր թէ՛ պիտի կրնա՞նք երբեք ուրիշ մէկուն հետ զիրար ա՛յնչափ լաւ ճանչնալ : Մենք նաեւ ձեզի շատ համակրեցանք : Մենք ունեցանք մեր վէճերը , եւ երբեմն բաւական բուռն վէճեր , բայց մենք ձեզ միշտ ուղղամիտ գտանք , եւ մենք կը յարգենք ամերիկեան այն քաղաքականութիւնը՝ զոր դուք ներկայացուցիք : Մենք չենք փափաքիր որ դուք մեկնիք , նոյն իսկ մէկ քանի ամսուան համար :

Իմ գոհունակութիւնս յայտնեցի այդ խօսքերուն :

—Շատ հաճելի է ձեր այդ խօսքերը լսել , պատասխանեցի : Քանի որ զիս ա՛յդչափ կը փայփայէք , կը հաւատամ որ պիտի յօժարիք ինձի կարգ մը բաներ խոստանալ : Քանի որ ձեզ երկուքդ հոս ներկայ կը գտնեմ , ասիկա առիթ մըն է ինձի՝ ձեզմէ հաւաստիք առնելու : Իմ պաշտպանեալներուս հետ հոգածու կերպով պիտի վարուի՞ք , ճիշդ այնպէս՝ ինչպէս եթէ հոս ըլլայի :

—Ամերիկեան միսիոնարներուն , գօլէճներուն եւ վարժարաններուն համար ձեզի բացարձակ խոստում կու տանք , ըսաւ Քալէադ եւ էնվէր համամտութիւն յայտնեց : Անոնք ամենապզտիկ չափով իսկ չպիտի նեղուին եւ կրնան իրենց գործը շարունակել ճիշդ առաջուան պէս : Այդ մասին ձեր միտքը թող հանգիստ ըլլայ :

—Իսկ Անգլիացիները , հարցուցի :

—Օ՛ , անո՞նք , ըսաւ Քալէադ խնդալով ; կրնայ ըլլալ որ ատեն-ատեն պզտիկ կատակներ ունենանք անոնց հետ , բայց մի՛ մտահոգուիք : Շատ հոգածու պիտի գտնուինք իրենց :

Ասոր վրայ , վերջին անգամը ըլլալով , խօսեցայ այն նիւթին մասին , որ ամիսներէ իվեր միտքս կը ճնշէր : Ճառով գիտէի թէ՛ նոր կոչ մը ապարդիւն պիտի ըլլար , բայց որոշեցի ընել :

—Իսկ Հայերը :

Քալէադի զուարթութիւնը վայրկենապէս անհետացաւ : Իր դէմքը դաժանացաւ եւ իր աչքերուն մէջ անգամ մըն ալ բոցավառեցաւ գազանային կրակը :

—Ի՞նչ է օգուտը անոնց մասին խօսելուն , ըսաւ , ձեռքի շար-

ժուռով մը : Մենք անոնց հաշիւը փակած ենք : Ադ խնդիրը լմնցած է :

Աս եղաւ իմ հրաժեշտս Քալէադին : «Ադ խնդիրը լմնցած է» , եղան իր վերջին խօսքերը ինձի :

Յաջորդ օրը , իմ հրաժեշտի տեսակցութիւնս ունեցայ Սուլթանին հետ : Նոյն քաղցրահաճոյ ու բարեմոյն ձերունին էր , որուն ծանօթացած էի երկու տարի առաջ : Չիս ընդունեց անպաշտօն կերպով , եւրոպական քաղաքային տարազով եւ խնդրեց ինձմէ իր մօտը նստիլ : Քսան վայրկեանի չափ տեսակցեցանք , կարգ մը ուրիշ նիւթերու ընթացքին՝ խօսելով նաեւ Ամերիկայի եւ Քիւրքիայի միջեւ տիրող բարուք յարաբերութիւններուն մասին : Շնորհակալութիւն յայտնեց ինձի , իր նրկիրով շահագրգռուելուս համար եւ մաղթեց որ շուտով վերադառնամ : Յետոյ խօսեցաւ պատերազմի եւ հաշտութեան խնդիրին վրայ :

—Ամէն ինքնակալ բնականաբար խաղաղութեան բաղձացող է , ըսաւ : Մեզմէ ո՛չ մէկը համամիտ է արիւն թափուելուն : Բայց կան ատեններ՝ երբ պատերազմը անտեղիտալի կը թուի : Մենք կը փափաքինք մեր վէճերը բարեկամաբար կարգադրել , բայց միշտ կարող չենք ըլլար : Կ'երեւայ այդ պարագաներէն մէկուն մէջ կը գտնուինք : Ես բրիտանական Դեսպանին յայտնեցի որ՝ մենք կը փափաքիր իր նրկիրին դէմ պատերազմի մտնել : Նոյն բանը չենք փափաքիր իր նրկիրին դէմ պարտաւոր էր իր իրաւունք-կ'ըսեմ հիմա ձեզի : Բայց Քիւրքիա պարտաւոր էր իր իրաւունք-կ'ըսեմ հիմա ձեզի : Բայց Քիւրքիա մեր վրայ յարձակեցաւ . բնականա-նեքը պաշտպանել : Ռուսիա մեր վրայ յարձակեցաւ . բնականա-նեքը պաշտպանել : Ռուսիա մեր վրայ յարձակեցաւ . բնականա-նեքը պաշտպանել : Ռուսիա մեր վրայ յարձակեցաւ . բնականա-նեքը պաշտպանել : Ռուսիա մեր վրայ յարձակեցաւ . բնականա-նեքը պաշտպանել : Ռուսիա մեր վրայ յարձակեցաւ . բնականա-նեքը պաշտպանել :

Մաղթեցի որ շուտով պատերազմը վերջ գտնէ :

—Այո՛ , մենք ալ խաղաղութեան բաղձացող ենք , պատասխանեց Նորին Վեհափառութիւնը : Բայց պէտք է ըլլայ անանկ խաղաղութիւն մը , որ երաշխաւորէ մեր կայսրութեան իրաւունքները : Վստահ եմ որ՝ Ամերիկայի պէս քաղաքակիրթ եւ բարգաւաճ երկիր մը՝ խաղաղութեան կը բաղձայ եւ ան իր բոլոր ջանքերը պիտի գործադրէ՝ առաջ բերելու խաղաղութիւն մը՝ որ տեւական ըլլայ :

Այս տեսակցութեան մէջ , Սուլթանին յայտարարութիւններէն մէկը խոր տպաւորութիւն թողուց վրաս : Իր սա՛ հաստատումն էր ադ . «Ռուսիա մեր վրայ յարձակեցաւ» : Յայտնի էր որ՝ պարզամիտ ձերունին կը հաւատար ատոր . բացայայտ էր նաեւ որ՝ իրական դէպքերէն բա՛ն չէր գիտեր — թէ թրքական մարտանաւերը , գերման սպաններուն հրամանատարութեանը տակ

Թիւրքիան պատերազմի մղած էին, ումբակոծելով ռուսական նաւահանգիստներ: Ժէօն Թիւրք գործիչները, փոխանակ ճշմարտութիւնը յայտնելու Սուլթանին, սա սուսպելը յերիւրած էին թէ՛ Ռուսիա է նախայարձակը: Մեր տեսակցութիւնը որոշակի ապացուցուց որ՝ Թիւրքիայի քաջայայտ պետը ինչ չափով ծանօթ էր իր Կայսրութեան մէջ տիրող կառավարական ծանրակշիռ դէպքերուն:

Մեր տեսակցութեան մէջ, Քալէադ եւ էնվէր իրենց վերջին հրածեշտը տուած չէին, յայտնելով ինծի թէ՛ պիտի գային զիս կայարանը տեսնել: Կառախումբին մեկնումէն քանի մը վայրկեան առաջ, Պէտրի բովս եկաւ, տժգունած դէմքով եւ յուզուած, նախարարներուն կողմէ՛ ներողամտութիւն խնդրելու:

— Անոնք չպիտի կրնան գալ, ըսաւ ան, որովհետեւ Գահաժառանգը անձնասպան եղած է:

Գահաժառանգը լաւ կը ճանչնայի. ես կը սպասէի որ՝ ան մինչեւ Պերլին ճամբու ընկեր ըլլայ ինծի. ան պատրաստուած էր դէպի Գերմանիա պտոյտ մը կատարել, եւ իր մասնաւոր «վակօն»ը կապուած էր կառախումբին: Ես շատ անգամներ տեսած էի եռուսուֆ Իզզէտտինը. ան զիս բազմաթիւ անգամներ հրաւիրած էր իրեն այցելել, եւ մէկտեղ շատ ժամեր անցուցած էինք, խօսելով Միաց.-նահանգներու եւ ամերիկեան հաստատութիւններու վրայ. այս նիւթերուն մասին մեծ շահագրգռութիւն ցուցուցած էր միշտ: Շատ անգամներ ինծի յայտնած էր թէ՛ կը փափաքէր ամերիկեան կարգ մը կառավարական գաղափարներ մտցնել Թիւրքիա: Այդ առտուն, երբ մենք դէպի Պերլին կը մեկնէինք, Գահաժառանգը իր «վիլլա»ին տախտակամածին վրայ դիակնացած գտնուած էր, արիւնի ճապաղիքի մը մէջ թաթխուած, իր շնչերակները կտրուած: Եռուսուֆ որդին էր Ապտիւլ-Ազիզի, Սուլթան 1861էն 1876, որ, բաւական եղերականօրէն, իր օրերուն վերջ տուած էր՝ կտրելով իր շնչերակները. քառասուն տարի առաջ: Այսպէս, հօր եւ զակին մահը շրջապատող պարագաները ճիշդ նոյնն էին: Այն պարագան թէ՛ եռուսուֆ անդրդուելի Համաձայնասէր մըն էր, թէ՛ ընդդիմացած էր Գերմանիայի կողքին՝ Թիւրքիայի պատերազմի մասնակցութեանը, թէ՛ ինք վերջին ծայր. հակառակ էր Միութիւն եւ Առաջդիմութիւն Քօմիթէին, ծնունդ տուած էր շատ մը կասկածներու: Ես բան մը չեմ գիտեր այն պատմութիւններուն մասին, որոնք յաջորդաբար յեղյեղուեցան. ես միայն կը յիշատակեմ թէ՛ իր մահուանը շուրջը տրուած տեղեկագիրը «անձնասպանութեան» դէպք մը կը հռչակէր գայն: «On l'a suicidé!» [Անձնասպան ըրին զինքը!], դիտել տուաւ

սրամիտ Ֆրանսացի մը, երբ այս վճիռը զեկուցուեցաւ: Այս եղերական լուրը բնականաբար տխրութիւն մը սփռեց մեր խումբին վրայ, երբ կառախումբը կը շարժէր Պոլիսէն, բայց ճամբորդութիւնը խիստ ախորժելի եղաւ: Հիմա համբաւաւոր Balkanzugին մէջն էի: Եւ այս երկրորդ գնացքն էր որ կը կատարէր ան դէպի Պերլին: Իմ մասնախումբս թիւ 13ն էր. շատեր եկան տեսնել զայն, ըսելով ինծի թէ՛ քաղաքէն դուրս գնացքի ատեն, կառախումբին վրայ կրակ ըրած էին եւ իմ մասնաբաժինիս պատուհաններէն մէկը խորտակուած էր:

Մեր մեկնումէն քիչ ետքը տեսայ որ՝ ծովակալ Ուզէտօմ մեր ճամբու ընկերներէն մէկն էր: Ուզէտօմ նաւատորմիդին մէջ նշանակելի գործունէութիւն մը ունեցած էր: Ուրիշ բաներու կարգին՝ ան Քայզերին զբօսանաւին՝ Նոնկեցօղոնի նաւապետ եղած էր, եւ այդ պատճառով նորին Վեհափառութեան հետ բարեկամական յարաբերութեան մէջ էր: Ես Ուզէտօմը վերջին անգամ տեսած էի Տարտանէլ այցելութեանս ատեն, ուր օսմանեան պաշտպանողական դրութեան ընդհանուր քննիչն էր: Կրկին զիրար տեսնելուս պէս, ծովակալը սկսաւ խօսիլ Դաշնակիցներուն վիժած յարծակումին վրայ: Կրկին չժածկեց այն վախերը՝ զորս ունեցած էր ատենով, թէ այդ յարծակումը պիտի յաջողէր:

— Շատ անգամներ, ըսաւ, մենք կարծեցինք թէ՛ անոնք անցնելու վրայ էին: Հոն, մենք ամէնքս ալ շատ յուսաբեկ եւ վհատած էինք ապագայի մասին: Մենք շատ բան կը պարտինք Թիւրքերու դիւցազնութեանը եւ անսահման թիւով մարդկային կեանքեր զոհելու իրենց պատրաստակամութեանը: Հիմա վտանգը անցած է — այդ կողմէն մեր գործը վերջացած է:

Մովակալը այն կարծիքէն էր թէ՛ բրիտանական ցամաքահանումը գէշ պատրաստուած էր, թէ՛ եւ հիացումով կը խօսէր այն հնարագիտութեան վրայ, որով Դաշնակիցները վարած էին իրենց նահանջը: Ես նոր լուսաբանութիւններ ալ ստացայ գերման վերաբերումին մասին՝ հանդէպ հայկական ջարդերուն: Ուզէտօմ վիտրձեց արդարացնել ջարդերը, ոչ ալ պարսաւել Թիւրքերը: Մովակալը ամբողջ նիւթին վրայ խօսեցաւ հանդարտօրէն, առանց կիրքի, իբր պարզ զինուորական խնդիր մը վրայ. իր տեսութիւնները պարզած ատեն, մարդ չպիտի կարծէր թէ՛ միլիոնաւոր մարդկային էակներու կեանքերը խնդիրի առարկայ էին: Ան պարզապէս ըսաւ թէ՛ Հայերը գերման յաջողութիւններու ճամբուն վրայ արգելք մըն էին, հետեւաբար անհրաժեշտ դարձած էր զանոնք հեռացնել, ճիշդ ինչպէս այնչափ ուրիշ անօգուտ իրեր: Մովակալը ասոնց մասին կը խօսէր այնչափ անտարբերօրէն.

որչափ մարդ պիտի խօսէր խումբ մը տուներ քանդելուն վրայ, քաղաք մը ռմբակոծելու համար:

— Ե՛նչո՞ւ ՍԼրպիա! Մինչ կառախումբը կ'արշաւէր անոր աւերուած հողերէն, աչքիս պատկերացաւ թէ՛ պատերազմը ի՞նչ արժամ էր այս պզտիկ քաղ երկիրին: Վերջին երկու տարիներու ընթացքին, այս ազգը մինակը մնացած էր, գրեթէ առանց օժանդակուելու իր դաշնակիցներէն, ջանալով դիմակայել համագերման աշխարհակալութեան գրոհին, ճիշդ ինչպէս որ դարերով իբր պատնէշ կանգնած էր՝ Թիւրքերու յարձակումներուն դէմ, եւ այդ դերին պատիժը կրած էր: Շատերը այն ազարակներէն, ուրկէ կ'անցնէինք, լքուած էին, արհամարհուած եւ վայրի խոտերու յորդ անուժով ծածկուած. շէնքերը յաճախ տանիք չունէին եւ երբեմն ալ հիմնակործան հողին հաւասարցուած էին: Ամէն անգամ որ գետէ մը կ'անցնէինք, կը տեսնէինք ուժանակով օղբ հանուած կամուրջի մը մնացորդները. միշտ ալ Գերմանները նորեր շինած էին քանդուածներուն տեղ: Կը տեսնէինք մեզ դիտող բազմաթիւ կիներ եւ մանուկներ, ցնցոտիապատ ու կիսովին սովամահ. բայց նշանակալից էր որ՝ շատ քիչ այրեր կը տեսնէինք, որովհետեւ ամէնքն ալ կամ սպաննուած էին, կամ կը գտնուէին Սերպիայի դեռ կենդանի եւ քաջամարտ պզտիկ բանակին շարքերուն մէջ: Միշտ կառախումբը լեցուն գերման զինուորներ կ'անցնէին մեր առջեւէն, կամ կը կենային կայարաններու արժաններուն վրայ, ուր կը յամենայինք: Ասոնք բաւականաչափ կը բացատրէին ամբողջ այն թշուառութիւնը եւ աւերումը՝ զոր կը տեսնէինք մեր ճամբուն վրայ:



ՍԻՒԼԷՅՄԱՆ ԷԼՊԻՒՍԹԱՆԻ

Թիւրք Դահլիճին մեզ նախկին առեւտրական եւ երկրագործական նախարար: 1914ի Յունվարին, Մր. Մօրկրնքաուի դիմեց, Թիւրքիան ելմսականապէս վերականգնելու համար ամերիկեան օգնութիւն խնդրելու:

ԻԹ. ԳԼՈՒԽ

ՖՕՆ ԵԱԿՕՎ. ՑԻՄՄԷՐՄԱՆ ԵՒ ԳԵՐՄԱՆ-ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ

Մեր կառախումբը Պերլինի կայարանը հասաւ 1916 Փետրվար 2ի իրիկունը: Կ'արժէ յիշատակել այս թուականը, որովհետեւ ան գերման եւ ամերիկեան յարաբերութիւններուն մէջ կարեւոր տազնապ մը կը նշանադրէ: Գրեթէ առաջին անձը՝ որուն հանդիպեցայ, իմ վաղեմի բարեկամս եւ պաշտօնակիցս՝ դեսպան ձէյմըս Ո. ձէրըրտն էր: Մր. ձէրըրտ ինծի յայտնեց թէ՛ գոյքերը կը կապէր եւ վայրկեանէ-վայրկեան կը սպասէր Պերլինէն մեկնելու, որովհետեւ իր կարծիքով Գերմանիայի եւ Միաց.-Նահանգներու միջեւ խզումը օրերու խնդիր մըն էր միայն, թերեւս ժամերու: Այդ միջոցին, Գերմանիա եւ Միաց.-Նահանգները կը բանակցէին Լըսիթհեյմի ընկղմուելուն շուրջը համաձայնելու: Բանակցութիւնները հասած էին այն կէտին որ՝ կայսերական Կառավարութիւնը պատրաստակամութիւն ցուցուցած էր ցաւ յայտնելու, տուգանք մը վճարելու եւ այդ արարքը չկրկնել խոստանալու: Բայց նախամը վճարելու եւ այդ արարքը չկրկնելու որ՝ Գերմանիա յայտարարեց եւ Մր. Լէնսինկ կը պահանջէին որ՝ Գերմանիա յայտարարէ թէ՛ Լըսիթհեյմի ընկղմումը ապօրէն արարք մըն էր: Ասիկա կը նշանակէր որ՝ Գերմանիա առաջիկային ալ երբեք ընդձովեայ պատերազմ չպիտի կրնար մղել, առանց ինքզինքին հակասելու գործելով արարք մը՝ զոր իր Կառավարութիւնը միջազգային օրէնքներու հակառակ հռչակած էր: Եւ մեր Կառավարութիւնը ո՛չ մէկ զիջում չպիտի ընէր. հետեւաբար երկու երկիրները կռիւի եզրն էին:

— Ես ալ բան չեմ կրնար ընել, ըսաւ Մր. ձէրըրտ: Ես կ'ուզեմ որ՝ դուք տեսնուիք Ցիմմէրմանի եւ Ֆօն Եակօվի հետ. թերեւս դուք կարենաք նոր տեսակէտի մը հաւանեցնել զանոնք:

Ինծի տրուած բազմաթիւ այցելութիւններէն շուտով կռահեցի որ՝ Պերլինի մէջ միտքերը լարուած եւ չափազանց հակահեցի որ՝ Պերլինի մէջ միտքերը լարուած եւ չափազանց հակամերկեան էին: Ամէնքը մեր երկիրը կը նկատէին Համաձայնութեան իրական զինակիցը, եւ զգացի որ՝ Անգլիայի հետ մեր յարաբերութիւններուն սերտ ըլլալուն մասին այլանդակ գաղափարներ կը տիրէին: Օրինակի համար, ընդհանրապէս կը կարծուէր թէ՛ Սըր Սէսիլ Սփրինկ-Ռայս, Ուաշինկոնթոնի բրիտանական Դեսպանը, նախագահ Ուիլսոնի Դահլիճին հետ կանոնաւոր յարաբերութեան մէջ էր եւ մեր ազգային քաղաքականութեան բոլոր հարցերուն մասին իրմէ խորհուրդ կ'առնուէր:

Ժամը Յին, Մր. ձէրըրտ զիս Ֆօն Եակօվին տունը տարաւ, ուր մէկ ժամէ աւելի տեսակցեցանք արտաքին գործերու նախարարին հետ: Ֆօն Եակօվ մանրուկ, նրբամարմին եւ ջղային մարդ մըն էր: Մեր տեսակցութեան ընթացքին, սիկտոք-սիկտոքի ետեւէ կը վառէր. Յայտնի էր որ՝ մեծապէս մտատանջ էր Ամերիկայի ընթացքէն: Թող չկարծուի թէ՛ գերման Կառավարութիւնը թեթեւօրէն կը նայէր Միաց.-Նահանգներու հետ խզումի մը վրայ: Այդ միջոցին, գերման թերթերը կը ծաղրէին եւ կը նախատէին մեզ եւ կը զուարճանային այն գաղափարին համար թէ՛ «Մէմ Աղբար»ը [Uncle Sam] պատերազմ պիտի ընէր: Ես շատ ազդուեցայ այն հակադրութենէն՝ որ կար լրագրական պոռոտախօսութիւններուն եւ այն անձուութեան — եւ նոյն իսկ վախին — միջեւ, զոր այս գերման բարձրաստիճան պաշտօնատարը կը ցուցնէր: Պերլինի մամուլը ինչ որ ալ ըսէր, Եակօվ անտարբեր աչքով չէր նայեր մեր զինուորները եւ մեր միջոցները Համաձայնութեան կողմը անցընելու հեռանկարին վրայ:

— Անպատուիչ կը գտնենք Մր. Լէնինկի մեզմէ պահանջելը որ՝ յայտարարենք թէ՛ Լրսիթեկի ընկղմումը ապօրէն է, սկսաւ Ֆօն Եակօվ: Ընդդ դատաւորի մը պէս կը վարուի ան:

— Եթէ բուն նշմարութիւնը կ'ուզէք, պատասխանեցի, չեմ կարծեր որ Միաց.-Նահանգները ձեր գործածելիք որոշ բացատրութիւններուն շուրջը մասնաւոր կամ մասնագիտական վճիռ ունին: Բայց դուք պէտք է որոշ հաւաստիքներ տաք թէ՛ գործուածին համար ցաւ կը զգաք, ըսէք թէ՛ զայն անպատշաճ բան մը կը նկատէք, եւ թէ՛ ա՛յ չպիտի ընէք ուրիշ անգամ: Եթէ չընէք աս, Միաց.-Նահանգները չպիտի գոհացում գտնեն:

— Մենք չենք կրնար այդ բանը ընել, պատասխանեց: Իերմանիայի մէջ հանրային կարծիքը չի հանդուրժեր ատոր: Եթէ մենք ձեր ուրուագծածին նման յայտարարութիւն մը ընենք, ներկայ Դահլիճը կ'իյնայ:

— Բայց ես կը կարծէի թէ՛ հանրային կարծիքը կատարելապէս ձեր իշխանութեան տակ կը գտնուի, պատասխանեցի: Կրնայ քիչ մը ժամանակի կարօտիլ, բայց անկասկած դուք կրնաք հանրային զգացումը յեղաշրջել այնպէս մը որ՝ գնահատէ այդ կարգադրութիւնը:

— Որչափ ատեն որ խնդիրը օրաթերթերուն վրայ է, ճիշդ է ադ, ըսաւ Ֆօն Եակօվ: Մենք կրնանք բացարձակօրէն մեր իշխանութեան տակ պահել զանոնք: Սակայն, ատիկա քիչ մը ժամանակի կը կարօտի: Թերթերը չեն կրնար յանկարծ լեզուներն փոխել. անոնք աստիճանաբար պիտի ընեն այդ բանը, ինչ որ

երկու-երեք շաբաթի կը կարօտի: Մենք կրնանք զանոնք կառավարել: Բայց կան Խորհրդարանի անդամներ, որոնց վրայ չենք կրնար իշխել, եւ անոնք ա՛յնչափ աղմուկ պիտի յարուցանեն որ՝ մենք ամէնքս պիտի պարտաւորուինք հրաժարիլ:

— Եւ սակայն, աւելցուցի, կը կարծեմ որ՝ դուք կրնաք այդ անդամները հաւաքել, անոնց բացատրել Միաց.-Նահանգները պատերազմէն հեռու պահելու անհրաժեշտութիւնը, եւ անոնք պիտի համոզուին: Կնճիւրը ա՛ն է որ՝ դուք Գերմանները չէք կրնար հասկնալ իմ երկիրիս պայմանները: Դուք չէք կրնար հասկնալ նախագահ Ուիլսոնը: Դուք կը կարծէք թէ՛ ան գաղափարապաշտ մըն է, եւ, որեւէ պարագայի, ան զէնքի չպիտի դիմէ: Դուք կը գործէք ամէնէն մեծ ու ամէնէն ծանրակշիռ սխալը՝ զոր ազգ մը կրնայ: Նախագահը ընաւորութեան երկու կողմեր ունի: Մի՛ մոռնաք որ՝ ան իր երակներուն մէջ սկովտական-իռլանտական արիւն կը կրէ: Մինչեւ հիմա դուք միայն իր ընութեան սկովտական կողմը տեսած էք: Այդ կողմը զինքը խոհեմ, ամէն արարք կշռող, համբերատար եւ յարատեւող կը հանդիսացնէ: Բայց ան ունի նաեւ Իռլանտացիին ամբողջ եռանդը եւ մարտական ոգին: Եթէ անգամ մը միտքը բան մը դնէ, ոչինչ կրնայ զինքը ատկէ ետ կեցնել: Եթէ անգամ մը որոշէ պատերազմիլ, կը պատերազմի իր բոլոր հոգիովը եւ մինչեւ վերջին կէտը: Դուք կրնաք ձեր գրգռակոչիքը առաջ տանիլ, բայց ա՛յդչափ: Դուք մեծապէս կը սխալիք, հաշուելով որ Քօնկրէի կարգ մը անդամներ, թերեւս նոյն իսկ Դահլիճին մէկ անդամը, խաղաղութեան կողմնակից եղած են: Միայն մէկ մարդ կայ որ՝ պիտի կարգադրէ այս խնդիրը — Նախագահն է ան: Ան պիտի տնօրինէ ինչ որ շիտակ ու ճիշդ կը դաւանի, առանց նկատի ունենալու թէ՛ ուրիշները ի՛նչ կ'ըսեն կամ կ'ընեն:

Ֆօն Եակօվ ըսաւ թէ՛ Նախագահին մասին նոր գաղափար մը տուած էի իրեն: Բայց տակաւին ուրիշ պատճառ մըն ալ ունէր կարծելու թէ՛ Միաց.-Նահանգները պատերազմի չպիտի սկսէին:

— Ի՞նչ պիտի ըսէք Գերման-Ամերիկացիներուն համար, հարցուց:

— Կրնամ ամէն տեղեկութիւն տալ անոնց մասին, պատասխանեցի, որովհետեւ ես ինքս ալ անոնցմէ մէկն եմ: Ես Գերմանիա ծնած եմ եւ հոս անցուցած եմ կեանքիս առաջին ինը տարիները: Ես միշտ սիրած եմ շատ մը գերման բաներ, ինչպէս օրինակի համար իր երաժշտութիւնը եւ իր գրականութիւնը: Բայց իմ ծնողքս հեռացած են այս երկիրէն, որովհետեւ դժգոհ եւ ապերջանիկ էին հոս: Միաց.-Նահանգները մեզի ընծայեցին

համակիր ընդունելութիւն մը եւ ընտանեկան յարկ մը , եւ մեզ բարգաւաճեցուցին եւ երջանկացուցին : Մեզի նման միլիոնաւորներ կան : Ձի կայ գործի ասպարէզ եւ ընկերային դիրք՝ որ գոց ըլլայ մեզի դէմ : Ձեմ կարծեր որ՝ աշխարհի վրայ կայ աւելի գոհ ժողովուրդ մը՝ քան Գերման-Ամերիկացիները :

Ես չէի կրնար իմ բուն մտայնութիւնս յայտնել , քանի որ տակաւին դեսպան էի , բայց կրնայի ըսել հետեւեալը եւ ըսի .

— Առէ՛ք իմ գաւակներս : Այս պատերազմին մէջ անոնց համակրութիւնը Անգլիայի եւ իր դաշնակիցներուն կողմն է : Իմ տղաս հոս քովս կը գտնուի . կ'ըսէ ինծի թէ՛ եթէ Միաց.-Նահանգները պատերազմի մտնեն , ինք անմիջապէս զինուոր պիտի արձանագրուի : Կը կարծէ՞ք որ , այն պարագային՝ երբ մենք Գերմանիայի հետ պատերազմի բռնուինք , Գերման-Ամերիկացիները ձեր կողմը պիտի անցնին : Այդ գաղափարը պարզապէս այլանդակ է : Եւ Գերման-Ամերիկացիներուն գերակշիռ մեծամասնութիւնը ճիշդ նոյն զգացումը կը կրէ :

— Բայց կ'ըսուի թէ՛ , ըսաւ Ֆոն Եակով , եթէ ձեր երկիրը մեզի դէմ պատերազմ յայտարարէ , Գերման-Ամերիկացիներու ապստամբութիւն մը պիտի ծագի :

— Վանէցէ՛ք ձեր միտքէն այդ տեսակ ո՛րեւէ գաղափար , պատասխանեցի : Առաջին մարդը որ այդ բանը փորձէ՝ պիտի պատժուի այնչափ վայրկեանաբար եւ այնչափ ազդուապէս որ՝ այդ տեսակ շարժում մը չպիտի կրնայ ծաւալիլ : Եւ ես կը կարծեմ թէ՛ ուղղամիտ Գերման-Ամերիկացիները ի՛րենք առաջինը պիտի ըլլան այդ պատիժը գործադրող :

— Մենք կը փափաքինք խուսափիլ Միաց.-Նահանգներու հետ խզումէ մը , ըսաւ Ֆոն Եակով : Բայց պէտք է ժամանակ ունենանք հանրային զգացումը շրջափոխելու մեր երկիրին մէջ : Հոս երկու կուսակցութիւններ կան , որոնք տրամագծապէս հակառակ տեսութիւններ կը պաշտպանեն՝ ընդծովեայ պատերազմին մասին : Անոնցմէ մէկը կողմնակից է ընդծովեայ պատերազմը մինչեւ ծայրը առաջ տանելու , առանց նկատի ունենալու անոր հետեւանքները Միաց.-Նահանգներուն , կամ ուրիշ որեւէ տէրութեան համար : Ներկայ Դահիլեր հակառակ տեսութեան կողմնակից է : Մենք կ'ուզենք գոհացում տալ ձեր Նախագահին յարուցած խնդիրին : Բայց զօրապաշտ խմբակցութիւնը մեզ նեղը կը դնէ : Ան մեզ պաշտօնէ կը ձգէ , եթէ մենք յայտարարենք թէ՛ Լըպի-թեմիսի ընկղմումը ապօրէն եւ անպատշաճ է : Ես կը կարծեմ որ՝ նախագահ Ուիլսոն պիտի ուզէ հասկնալ ասիկա : Մենք անոր համախոհ ենք , բայց պէտք է շրջահայեցութիւնով գործենք :

ներու մէջ : Յետոյ , տուներէն զէնք փնտրելու սատար աւակով , թալանեցին զիւղացիներուն գոյքերը : Բանակին պիտոյքներուն համար , Հայերէն գրաւեցին ինչ որ կրնային , առանց փոխարժէքը վճարելու : Պահանջեցին արտակարգ նուէրներ տալ՝ Ազգային Պաշտպանութեան Բոմիթէի նպաստին :

ՉԱՆԳՈՒՍՏԱՅԻՆ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայերու հանդէպ գործադրուած միջոցներուն վերջինը եւ ամէնէն ստակալին էր՝ բովանդակ ազգաբնակչութեան զանգուածային տարագրութիւնը՝ իրենց հայրենի բոյներէն եւ անոնց դէպի անապատ արքարումը . յարակից բոլոր արհաւիրքներով , ճամբուն ընթացքին : Ասոնց տեղափոխութեանը կամ անունդին համար ո՛չ մէկ միջոց հոգացուած էր : Այս զոհերը , որոնց մէջ կային զարգացած այրեր եւ դիրքի տէր կիներ , պարտաւոր էին քալելով ճամբորդել , ենթարկուած ոճրագործ աւազակախումբերու յարձակումներուն , որոնք յատկապէս այդ նպատակին համար կազմակերպուած էին : Տուները բառին բուն իմաստովը հիմէն քանդուեցան . ընտանիքները անջատուեցան . այրերը սպաննուեցան . կիները եւ աղջիկները ճամբուն վրայ շարունակ բռնաբարուեցան կամ «հարէմ»ները տարուեցան : Մայրերը՝ իրենց մանուկները գետերուն մէջ նետեցին կամ օտարներուն ծախեցին , զանոնք անօթութենէ փրկելու համար : Բաւարձակապէս փստանեջի ակաճառ-վիպերու կողմէ Դեսպանատեղին ստացած տեղեկագիրներուն մէջ յիշուած դէպքերը՝ կը գերազանցեն ամենեւնի անասնական եւ ամենեւնի դիւային ամե՛ն վայրագութիւններ՝ ու ուրիշ երբեք գործուած կամ ետեւակայուած բոլոր սոցիալիստիկ պատմութեան մէջ : Թիւրք իշխանութիւնները՝ գաւառներու եւ մայրաքաղաքին միջեւ ամէն հաղորդակցութիւն դադարեցուցած էին , այն միամիտ հաւատքով որ՝ կարենային այս աննախընթաց ոճիրները լրացնել , արտաքին աշխարհը զայն լսելէ առաջ : Բայց տեղեկութիւնը հասաւ հիւպատոսներու , միսիօնարներու , օտար ճամբորդներու եւ նոյն իսկ Թիւրքերու միջոցով : Եւ տո՛ով տեղեկացանք որ՝ գաւառներու կառավարիչներուն հրահանգներ տրուած էին՝ իրենց իրաւասութեան տակ գտնուող բովանդակ հայ ազգաբնակչութիւնը արքար դրկելու , առանց տարիքի եւ սեռի խտրութեան : Տեղական պաշտօնատարները , քիչ բացառութիւնով , տառապէս գործադրեցին այդ հրահանգները : Բոլոր քաջակամ մարդիկը՝ կամ բանակին մէջ առնուած էին , կամ զինաթափ եղած էին : Մնացած ժողովուրդը , ծերունիներ , կիներ եւ մանուկներ , ենթարկուեցան ամէնէն վայրագ եւ խուժուժ վարմունքներուն :

Որպէսզի դէպքերը ճշգրտօրէն տեղեկագրուին, միջոցներ ձեռք առի որ՝ խնամուած տեղեկագիրներ պահուին ջարդերու ակնատես-վկաներու կողմէ ինծի եղած յայտարարութիւններուն մասին: Այդ յայտարարութիւնները կը բովանդակէին ամէն կարգի փախստականներու, քրիստոնեայ միսիօնարներու եւ ուրիշներու տեղեկագիրները: Ասոնց ամբողջութիւնը կը կազմէ զանազան փութերուն պատմութիւնը այն մեծ ջարդին, որ վէճի չկրնար ենթարկուիլ եւ որ այս ցեղին զազանային ոճրագործները կը դատապարտէ բովանդակ աշխարհի առջեւ: Իմ հաւաքած նիւթերուս մեծ մասը հրատարակուած է արդէն Դերկոմս Պրայսի կողմէ հաւաքուած վաւերական փաստանիւթերու սքանչելի հատորին մէջ:

ԳԵՐՄԱՆ «ՄԻՍԻՕՆԱՐ»Ի ՄԸ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ես հոս միակ վաւերաթուղթէ մը յիշատակութիւն մը ընելու չափ տեղ ունիմ: Զարմանալի է ըսել որ՝ այս տեղեկատուութիւնը ինծի եղած է գերման «միսիօնար»ի մը կողմէ: Յայտարարութիւնը անձնապէս ինծի կատարուեցաւ եւ Դեսպանատունին մէջ գիրի առնուեցաւ:

«Յաճախ մենք չէինք գիտեր թէ՛ ո՛ւր ծածկուելու էինք: Ամէն կողմէ դրացիները կարող էին մեր պատուհաններուն վրայ կրակել. գիշերը, ա՛յ աւելի գէշ էր: Գնդակներէն խուսափելու համար, հիւանդ հիւանդապահուհին եւ ես տախտակամածին վրայ կը պառկէինք: Որբանոցին պատերը թնդանօթի ռուսերէ ծակ-ծկուած էին: Պարտաւորուած էի որբերը բոլորովին առանձին թողուլ: Կառավարութեանէն հրաման մը եկաւ թէ՛ մենք պէտք էինք յաճնակ Որբանոցին մէջ բոլոր գտնուողները, մեծ կամ պոտիկ: Իմ բոլոր խնդրանքներս եւ աղաչանքներս զուր եղան. Թիւրքերը մեզ պատիւի խօսքով կը վստահեցնէին թէ՛ պատսպարեալները ամէն հանգստութիւն պիտի վայելէին եւ Ուրիա պիտի դրկուէին: Այն ատեն, Միւթէսարընիին դիմեցի: Վերին հրամանատարի մը պէս, թնդանօթի մը քովը կը կենար ան: Մինչեւ անգամ ըսածիս ականջ չէր տար. կատարեալ հրէշ մը դարձած էր: Երբ իրեն թախանձեցի որ՝ զոնէ մանուկներուն խնայէ, ան պատասխանեց. «Մի՛ յուսաք որ՝ հայ մանուկները կարենան Մահմետականներուն հետ առանձին մնալ. անոնք պէտք է իրենց ազգին հետ հեռանան»: Մեզի թոյլատրեց միայն պահել երեք աղջիկներ, իբր ծառայ:

ԱՐՈՒՆԵՐՈՒ ԱՆՃԻՏՈՒՄ

«Ճիշդ այդ օրն էր որ ստացայ զարհուրելի տեղեկագիրները, բայց լիովին չհաւատացի անոնց: Բանի մը աղօրեպաններ եւ հացազործներ, որոնց ծառայութիւններուն կը կարօտէր Կառավա-

րութիւնը, մնացած էին եւ անոնք էին որ ստացան առաջին լուրերը: Բոլոր այրերը իրարու կապուած եւ զնդակահար եղած էին քաղաքին դուրսը: Կիները եւ մանուկները մօտակայ գիւղերը տարուած էին, հարիւրներով տուներու մէջ լեցուած, եւ կամ տղջ-տղջ այրուած էին, կամ գետը նետուած (Մեր շէնքերը քաղաքին գլխաւոր թաղին մէջ գտնուելուն, կրցանք լուրերը անմիջապէս լսել): Ետքէն, տեսնուեցաւ արիւնաթաթաւ եւ արտասուալից կիներու եւ տղոց անցնիլը . . . Ռ՞վ կրնայ նկարագրել այս տեսակ տեսարաններ: Այս ամէնուն վրայ աւելցուցէք հրկիզուող տուներուն տեսարանը եւ բազմաթիւ այրող դիակներու հոտը:

ԿԻՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՍՊԱՆՈՒԹԻՒՆ

«Շաքաթուան մը մէջ, գրեթէ ամէն բան վերջացած էր: Հիմա սպանները կը պարծէին իրենց քաջագործութիւններով, անոր համար որ յաջողած էին ամբողջ հայ ցեղը բնաջնջել: Երեք շաբաթ ետքը, երբ Մուշէն կը մեկնէինք, գիւղերը տակաւին կ'այրէին: Հայերու վերաբերող բաներէն ոչինչ պէտք էր մնալ, ո՛չ քաղաքին, ո՛չ ալ գիւղերուն մէջ:

«Միայն Մուշի մէջ, 25,000 Հայեր կային. ասկէ զատ, հայ հոծ բնակչութիւնով 300 գիւղեր ունէր Մուշ:

«Մենք Մէզրէ մեկնեցանք: Մեզի ընկերացոյ զինուորները հպարտանքով մեզի ցուցուցին թէ՛ ո՛ւր եւ ի՛նչպէս եւ ո՛րչափ կիներ եւ մանուկներ սպաննած էին իրենք:

«Երբ Խարբերդ հասանք, շատ հանոյք զգացինք տեսնելով որ՝ որբանոցները լեցուն էին: Սակայն, ինչ որ կրնայ ըսուիլ՝ ա՛ս է բոլորը: Մամուրէթ-իւ-Ազիզ բոլոր Հայերուն գերեզմաննոցը դարձած էր: Զանազան «վիլայէթ»ներէ բոլոր Հայերը հոն դրկուած էին. եւ անոնք որ ճամբան չէին մեռած, եկան հոն պարզապէս իրենց գերեզմանը գտնել:

ՁՈՂԵՐՈՒՆ ՏՐՈՒԱԾ ՏԱՆՁԱՆՔՆԵՐԸ

Մամուրէթ-իւ-Ազիզի մէջ, ուրիշ զարհուրելի բան մը՝ այն տանջանքներն էին, որոնց ենթարկուեցաւ ժողովուրդը երկու ամիս. Թիւրքերը ընդհանրապէս չափազանց վայրագութիւնով վարուեցան բարեկեցիկ դասակարգի ընտանիքներու հանդէպ: Ոտքեր, ձեռքեր, կուրծքեր՝ փայտի կտորի մը կը գամուէին. ձեռքերու եւ ոտքերու լիղունգները կը քաշուէին. մօրուքները եւ յօնքերը կը փեթտուէին. ոտքերու՝ պայտեր կը գամուէին, ինչպէս կ'ընեն ձիերուն: Ուրիշներ՝ ոտքերնին վեր եւ գլուխնին վա՛ր՝

հեմիշներու մէջ կը կախուէին . . . Մե, մարդ որչափ պիտի ուզէր որ՝ այս ղէպքերը ճշմարիտ չըլլային: Որպէսզի դուրսը գտնուող ժողովուրդը չկարենայ լսել խեղճ զոհերուն հոգեվարքի ճիշերը, թմբուկ ու սուլիչ գողացնող մարդեր կը կենային բանտերուն շուրջը՝ ուր այս վայրագութիւնները կը գործուէին:

ՃԱՄԲՈՒ ՎՐԱՅ ԶԱՐԴԵՐ

«Յուլիս 1ին, առաջին 2,000 անձերը զրկուեցան խարբերէին: Անոնք զինուորներ էին եւ կը խօսուէր թէ՛ անոնք համբայ պիտի շինէին: Ժողովուրդը սարսափահար եղաւ: Ասոր վրայ, Վալին կանչեց գերման միսիօնարը, Մր. —, եւ խնդրեց անկէ՛ որ ժողովուրդը հանդարտուցնէ. շատ կը ցաւէր որ՝ ամէնքը այդ տեսակ կասկածներ կ'ունենային, եւլն. եւլն: Հագիւ օրուան մը համբայ հեռացած էին, երբ ամէնքն ալ լեռան կիրճի մը մէջ սպանուեցան: Անոնք իրարու կապուած էին, եւ երբ Քիւրտերը եւ զինուորները զանոնք հրացանի բռնելու սկսան, անոնցմէ ոմանք մութին մէջ յաջողեցան փախչիլ: Յաջորդ օրը, ուրիշ 2,000 հոգիներ զրկուեցան ղէպի Տիարպէքիւր: Այս տարագրուածներուն մէջ կը գտնուէին մեր որբերէն (մանչ) շատերը, որոնք ամբողջ տարին կառավարութեան հաշիւին աշխատած էին: Նոյն իսկ Քիւրտերուն կիները դանակներով եկան եւ սպաննեցին Հայերը: Վերջիներէն ոմանք յաջողեցան փախչիլ: Երբ կառավարութիւնը լսեց թէ՛ Հայերէ ոմանք ճարտարորած էին խոյս տալ, երկու օր առանց սնունդի թողուց տարագրուելիքները, որպէսզի այնչափ տկարանան՝ որ փախչելու կարող չըլլան:

«Բոլոր բարձր դասակարգի կաթոլիկ Հայերը, հետ ըլլալով իրենց Արքեպիսկոպոսը, սպաննուեցան:

«Մինչեւ այդ ատեն, տակաւին կը մնային կարգ մը վաճառականներ՝ որոնց պէտք ունէր կառավարութիւնը եւ հետեւաբար զանոնք տարագրած էր. հիմա, ասոնք ալ հրաման ստացան մեկնելու եւ սպաննուեցան»:

Որովհետեւ Հայերու՝ այս ջարդը, դատուած թէ՛ ընդգրկած թիւին եւ թէ՛ գործադրուած մեքոսներուն տեսակէտէն, միակ մեծագոյն արհաւիրքն է, որ երբեք մարդկութեան պատմութեան մէջ գործուած ըլլայ, յաճախ պիտի յուզուին սա հարցերը թէ՛ իրապէս բանի՞ Հայեր սպաննուեցան, կամ մեռան անթութենէ կամ մերկութենէ: Քանի՞ հոգի մատնուեցան տաժանագին աշխատանքի: Դերկոմս Պրայսի վաւերացութեան կարեւոր հաւաքածոն խնամուած ամիտօրոյք մըն է ղէպքերու: 1912ին, թիւրք վայսրութեան մէջ հայ ազգաբնակչութեան ամբողջութիւնը հոն նշանակուած է 1,600,000ի եւ 2,000,000ի միջեւ թիւ մը: Ասոնց 182,000ը փախան ուռւական Կովկաս եւ 4,200ը Եգիպտոս: Իսկ

150,000 Հայեր դեռ կը մնան Պոլիս: Այս թիւին վրայ պէտք է աւելցուի համեմատապէս պզտիկ թիւը վերապրողներուն, որոնք խուսափեցան մահէն եւ հիմա պահոււտած կ'ապրին կամ ցրուած են հեռաւոր նահանգներու մէջ*: Մենք պէտք է եզրակացնենք թէ՛ մէկ միլիոն Հայեր վտարուած են Փոքր Ասիայի խաղաղ գիւղերու եւ բազմաբնակիչ քաղաքներու իրենց տուներէն: Սպաննուածները կը հաշուուին 600,000էն 800,000: Մնացածները կենքի ամենապարզ անհրաժեշտութիւններու գթալի կարօտութեան մէջ, իրենց ձեռքերը կը կարկառեն Ամերիկացի քրիստոնեայ եղբայրներուն:

Հիմա կու գանք դժնդակ շահեկանութիւն ունեցող նիւթի մը: Գերման կառավարութիւնը մինչեւ ո՛ր աստիճան պատասխանատու է Հայերու սպանումին եւ տարագրութեան: Թոյշ տուի ինձի խիս բարձրադաս կերպով շտեյթե՛ գերման կառավարութիւնը կրնար արգիլել գանձի: Իմ ժրջան եւ կրկնակ ճիգերս՝ գերման Դեսպանին՝ հանգուցեայ Պառոն Վանկէնհայմի շահագրգռութիւնը Հայերու նպաստին արթնցնելու համար, ապարդիւն մնացին: Իրեն հետ իմ բազմաթիւ տեսակցութիւններուս մէջ, ես ջանացի այն գաղափարը դրոշմել իր միտքին մէջ թէ՛ աշխարհ Գերմանիան բարոյապէս պատասխանատու պիտի նկատէր իր զինակիցին ոմիրներուն համար: Ես փաստեցի թէ՛ նոյն իսկ տնտեսական տեսակէտով, Գերմանիայի շահին չէր յարմարեր որ՝ Թիւրքերը ընաճեցէին երկիրին շինարար տարրերը, քանի որ ադ կը նշանակէր թիւրք կայսրութեան տնտեսական քայքայումը: Յետոյ, այն պարագային, երբ Գերմանիա թիւրքիայի տէր դառնար, զայն դատարկ խեցի մը պիտի գտնէր! Երբ տեսայ որ՝ իմ փաստերս անօգուտ կը դառնային, թելադրեցի իմ կառավարութեանս թէ՛ փափաքելի է որ ճնշում բանեցուի Պերլինի արտաքին գործերու նախարարութեան վրայ, որպէսզի հրահանգներ զրկուին Պոլիսի գերման Դեսպանին՝ պահանջելու վայրագութիւններուն դադրիլը: Ասոր հետեւանքը եղաւ միայն՝ գերման Դեսպանատունէն Բրժ. Դուռ ուղղուած ծանուցագիր մը, որ բողոք կը բառնար Թիւրքերու կողմէ գործուած վայրագութիւններուն դէմ: Այս ծանուցագիրին նպատակն էր միայն, գերման կառավարութիւնը ամէն պատասխանատուութենէ սրբացնել: Ան ո՛րեւէ գործնական արդիւնք չունեցաւ:

Միտքիս մէջ կասկածի նշոյլը իսկ չկայ թէ՛ Գերմանները կրնային իր սկզբնաւորութեանը մէջ իսկ դադրեցնել այս խուժուժութիւնները:

* Այս տղերք գրուելէն իվեր, Ռուսիա սպասուողներուն թիւը կրկինէն աւելի եղած է. մեծապէս աճած է նաեւ թիւը անոնց՝ որոնք դեպի զանազան ուղղութիւններ փախուս տուած են:

Թիւրքիայի մէջ Ամերիկեան Կարմիր Խաչի գործը շատ ազդեցիկ եղաւ: Ան սահմանափակուած էր միայն իրեն տրամադրելի գումարին մէջ: Երբ տակաւին Թիւրքիա կը գտնուէի, մեր ազգային կազմակերպութիւնը, բացի մեր գործը առաջ տանելու համար մեզի դրամ հայթայթելէ, մեզի դրկեց ամէն տեսակ դեղորէի եւ զգեստեղէնի պաշարի առատ մթերք մը: Արովհետեւ ներկայիս հոգացուելու կարօտ քիչ թիւով վերաւոր զինուորներ կան, Թիւրքիայի Կարմիր Խաչի կազմակերպութիւնը ազատ է իր գլխաւոր ջանքերը նուիրելու անձկութեան մէջ գտնուող քաղաքային անձերու, մէջը ըլլալով Հայ տարագիրները: Ամերիկեան Կարմիր Խաչը մինչեւ այսօր 1,800,000 տօնա յատկացուցած է Հայաստանի եւ Սուրիայի նպաստի գործին:

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԷՏԲ Է ԱՆՁԱՏՈՒԻ ԹԻՒՐԿԻԱՅԷՆ

Հայկական Խնդիրին տակաւին չկրնար վերջնական լուծում մը բաղդորոշուիլ: Միակ բան մը ստոյգ պէտք է ըլլայ. Հայերը պէտք է ազատագրուին թիւրք տիրապետութեան լուծէն:

Ես կը զարմանամ, եթէ չորս հարիւր միլիոն Քրիստոնեաներ, որոնք կատարելապէս տէր են Եւրոպայի եւ Ամերիկայի բոլոր կառավարութիւններուն, կրկին անպատիժ թողուն թիւրք կառավարութեան յանցագործութիւնները: Եւրոպական կառավարութիւնները, Քերմանիայի պէս, պիտի բռնեն Թիւրքին արիւնտ ձեռքը. պիտի ներսն անոր. եւ ամենաբարձր աստիճանի շքանշաններով պիտի զարդարնին զայն, ինչպէս ըրաւ Քայզեր Վիլհէլմ: Խուժուժ ահաբեկումները, վայրագ չարչարանքները, կիներու դէպի «հարէմ»ները փախցուիլը, անմեղ աղջիկներու պոռնկացուիլը, աղջիկներէ շատերուն հատը ութսուն սենի ծախուիլը, հարիւր հազարաւորներու խողխողումը եւ ուրիշ հարիւր հազարաւորներու դէպի անապատները արսորումը եւ հոն անօթութենէ մահացումը, հարիւրաւոր գիւղերու եւ քաղաքներու քանդումը, Թիւրքիայի Հայ, Գոյն եւ Սուրիացի քրիստոնեաները բնաջնջելու ամբողջ դժոխային կանխամտածուած ծրագիրին գործադրութիւնը — այս բոլորը արդեօք անպատիժ պիտի մնան: Թիւրքերը պիտի թողատրուին, այո՛, մինչեւ անգամ զիրենք չջախջախելու մեր վատութեանը երեսէն՝ պիտի քաջալերուին իրենց իշխանութեանը տակ գտնուող բոլոր Քրիստոնեաներուն հանդէպ վարուիլ շարունակել իբր «անհաւատ շուն»երու հետ: Թէ անմիջապէս վճռական քայլեր պիտի առնուին՝ հայ ազնիւ, վաղընչական եւ քաղաքակրթուած Քրիստոնեայ ժողովուրդին բեկորները տեւականապէս փրկելու համար Թիւրքին հետ աններէն:



MRS. H. MORGENTHAU
Տ Կ Ն . Ն . Մ Օ Ր Կ Ը Ն Թ Ա Ո Ւ

Ա. ԳԼ. - Գերագույն Գերման մը Պոլիսի մեջ :	52
Բ. ԳԼ. - «Գործապետի յրուքին»ը օսմ. Կայսրութեան մեջ . - Ինչո՞ւ ոչ օգտակար եղաւ ան Գերմանիայի :	7
Գ. ԳԼ. - Բայցիբին անձնական ներկայացուցիչը. - Վանկինհայն կ'ընդդիմանայ աներկեան ռազմականութեան Բունաւստիքի ծախուելուն :	22
Դ. ԳԼ. - Գերմանիա կը զօրաշարժ քիւրք բանակը :	40
Ե. ԳԼ. - Միջազգային դաշնայնորոշումներու հակառակ՝ «Կեօպէն»ը եւ «Գրեգոր»ն Տարսակեղն կ'անցնին :	56
Զ. ԳԼ. - Վանկինհայն ինձի կը պատմէ թէ՛ ի՛նչպէս Բայցիբը պատերազմի որոշում տուաւ :	61
Է. ԳԼ. - Գերմանիայի պատերազմին նպասակները :	71
Ը. ԳԼ. - Գերմանական «փոփոխական»ի դասական օրինակ :	77
Թ. ԳԼ. - Գերմանիա կը փակէ Տարսակեղն եւ Ռուսիան կ'անցուցէ իր դաշնակիցներին :	82
Ժ. ԳԼ. - Թիւրքիա կը ջնջի «Կալիփոլոսիտ»ները, Էնկեր պաշտի մեջ կ'ապրի, ստատ դրամով եւ կայսերական կենդ հետ :	89
ԺԱ. ԳԼ. Գերմանիա Թիւրքիան պատերազմի կը մղէ :	95
ԺԲ. ԳԼ. Թիւրքերը կը բանակ ազնուորէն վարուիչ օտարական բնակիչներու հետ, բայց Գերմանները կը պնդեն զանոնք հարածել :	104
ԺԳ. ԳԼ. «Եօրր սաւ սը Միօն»ի վրայ արշաւանք :	110
ԺԴ. ԳԼ. Վանկինհայն եւ «Բեքլեիկ պողոտայի ընկերութիւնը. Գերմանիայի մեջ յայտարարում» կրօնական պատերազմը :	124
ԺԵ. ԳԼ. Ճեմալ վրդովիչը Մարկոս Անտոնիոս մը. - Գերմանիայի՝ հաշտութիւն ձեռք բերելու ստացին փորձը :	132
ԺԶ. ԳԼ. - Թիւրքերը կը պարտաւորին Պոլսուկն փախչիլ եւ Փոքր Ասիայի մեջ նոր մայրաքաղաք մը հաստատել. - Համաձայնական նախաձեռնութիւնը կը ունենայ Տարսակեղնը :	141
ԺԷ. ԳԼ. - Ինչպէս Էնկեր հաստատեց քրիստոնէական նախաձեռնութիւնը. Տարսակեղն կ'իյն ձեռնով անորոշութիւնները :	153
ԺԸ. ԳԼ. - Բաշկալից նախաձեռնութիւնը կը հետանայ, թէեւ յաղթանակի եզրը հասած :	170
ԺԹ. ԳԼ. - Երեւ հազար հազարային անձերու հաւար պայքար մը :	182
Ի. ԳԼ. - Օստրալիականներու ուրիշ պատահարներ :	194
ԻԱ. ԳԼ. - Պոլսուի սանտրոյի հանում :	211
ԻԲ. ԳԼ. - Թիւրքը նախնական տպարիւն կը վերադառնայ :	219
ԻԳ. ԳԼ. - «Յնդախտութիւն»ը Վանի մեջ :	227
ԻԴ. ԳԼ. Ազգի մը սպանումը :	244
ԻԵ. ԳԼ. Թաղապ կը յայտնէ թէ՛ ինչո՞ւ «Լը սարագրե» Հայերը :	251
ԻԶ. ԳԼ. - Էնկեր փաշա Հայերու վրայ կը խօսի :	271
ԻԷ. ԳԼ. - «Հայերու հաւար ոչինչ չպիտի ընեն», կ'ըսէ գերման Գեապանը :	285
ԻԸ. ԳԼ. - Էնկեր հաշտութիւն կ'ստացարիկ. - Հրածեչ Սուրբանին եւ Թիւրքիայի :	304
ԻԹ. ԳԼ. - Դոն Եսկոյ, Յիսմեքման եւ Գերման-Ամերիկացիները :	323
	333

Յ Ա Ի Ե Լ ՈՒ Ա Մ

Հայաստանի եղեռները.— Պատմության մեջ մեծագույն արհաւիրքը: 342

Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր ՈՒ Ն Ց Ա Ն Կ Ը

ՆԱԽԱԳԱՀ ՈՒՑԻՑ ՈՒՐԱԸՆՆ
ԴԵՍՊՈՆ ՀԵՆՐԻ ՄՕՐԿԸՆԹԱՈՒ
ՑԿՆ. 2. ՄՕՐԿԸՆԹԱՈՒ

Պատուի ֆոն Հանկինհայն :	է2
Ճեմար փաշա :	144
Տկն. Հենրի Մօրկընթաու եւ ֆոյր ժամն :	145
Սրբ Լուիզ Մեյք :	161
Զօրափար Լիւսնի ֆոն Չանսկրու :	177
Պեքրի պեյ :	193
Բայգեր Վիլհելմ Բ. :	209
Հենրի Մօրկընթաու, թոռները եւ շուքսական Դեսպանին երկուսը :	225
սղջիկները :	241
Թաշխաշ փաշա :	243
Տարագիրներ Վանի մեջ :	257
Էնպեր փաշա :	270
Մաոֆի Կատոնի :	273
Թօշեֆ :	273
Խալիզ պեյ :	284
Տ. Չառեն Արք. Եպիսոսան :	286
Ամերիկեան Դեսպանատանի պաշտօնակառնիւնը :	289
Սայիտ Հալիմ փաշա :	298
Ճապիտ պեյ :	303
«Բօնափհրիկուփիլ Գօյեհն» ռուսանորոհիկները :	305
«Կհօպեն» զերման եւ թիւրք սպաները :	320
Ուրֆայի հայ եկեղեցիին ներխուժողը :	321
Սիւրիյան Էրպիսրանի :	332
Հասորին Թարգմանիչը :	341

ՈՒՂՂԵԼԻ

Էջ	Ցող	Կարողալ
5	12	միտիօնար
»	»	գօլէճ
10	30	170,000,000
21	10	boss (գործապետ)
118	32	չպիտի
296	22	Gaites

Այս գիրքին նիւթէն ու պապիրուսէն տրամապում չբայլաբուրի:

Ստորագրված է տպագրության 26.03.90 թ.:

Չափսը՝ 60x90¹/₁₆: Թուղթ՝ տպ. № 1: Տպագրությունը՝ օֆսեթ: Նկարահանված է: Տպագր. 22,0 մամ., տպ. 22,0 գուն. թ. օտ., հրատ. 20,0 մամ.: Տպաքանակը՝ 500: Պատվեր՝ 647: Գինը՝ 5 ռուբ.:

«Լույս» հրատարակչություն, Երևան-9, Կիրովի 19ա:
Издательство «Луйс», Ереван-9, ул. Кирова 19а.

ՀԽՄՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի ԳՈՒՆԱՎՈՐ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ
Երևան — 82, Ծովակալ Իսակովի պող. 48:

ТИПОГРАФИЯ ЦВЕТНОЙ ПЕЧАТИ
Госкомитета Армянской ССР по делам
издательства, полиграфии и книжной торговли.
Ереван-82, пр. Адмирала Исакова, 48.